ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԱՄԲԻՈՆ
THE ARMENIAN DEPARTMENT OF HAIGAZIAN UNIVERSITY

Հայկազեան Հայագիտական Հանդես

هايكازيان
مجلّة الدّراسات الأرمنيّة

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW

Volume 42/2

ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ
Առաքելութիւն եւ Տեսլական

Հրատարակել հայութեան անցեալի ժառանգի, այժմու կենսագործունէութեան եւ ապագայի տեսլականին վերաբերող գիտական հիմքերով, կարծիքի ազատութեան վրայ կառուցուած բազմաուսմունքային եւ բազմալեզու աշխատութիւններ:
Այժմէականացնել հայագիտութեան վաղեմի աւանդը. գիտական նորագոյն իրագործումներով ամրապնդել հայագիտութեան տեղն ու դերը համաշխարհային հասարակագիտութեան քարտէսին վրայ:
Կարեւորել եւ զարգացնել հայագիտութեան ռազմավարական նշանակութիւնը, քանի որ ան կը նպաստէ ազգային ինքնաճանաչողութեան եւ հաւաքական յանձնառութեան բարձրացման: Համագործակցական ամբիոն դառնալ՝ Միջին Արեւելքէն, եւ սատարել երիտասարդ ուժերու, ինչպէս նաեւ՝ գիտական հայերէնի, մանաւանդ արեւմտահայերէնի զարգացման:

HAIGAZIAN ARMENOLOGICAL REVIEW
Mission Statement

To publish research articles related to the heritage, current output and future prospects of the Armenian nation. These multidisciplinary papers should be based on freedom of thought and can be written in diverse languages.
To revisit past accomplishments of the Armenian Studies; to consolidate the place and role of Armenian Studies on the map of world social sciences through modern technological means.
To drive forward the importance of Armenian Studies and develop its strategic role, as it contributes to national identity and the promotion of collective commitment.
To be a forum of cooperation in the Middle East; to support young scholars and to stimulate the development of Western Armenian scientific language in particular.

ԱՐԵՒԵԼԱՀԱՅԵՐԷՆ-ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆ ՄԵՐՁԵՑՈՒՄԻ ՀԱՐՑԵՐ

Փրոֆեսոր Եուրի Աւետիսեանի պատասխանները.-

1. Ինչպէ՞ս կը հասկնաք արեւելահայերէն-արեւմտահայերէն մերձեցումը:

Հայոց լեզուի երկու տարբերակների՝ արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի մերձեցումի հարցը մշտապէս եղել է մասնագիտական քննարկումների առանցքում: Եթէ փորձենք շրջանաբաժանել այդ քննարկումների ընթացքը, ապա հնարաւոր կը լինի թերեւս առանձնացնել երեք հիմնական շրջափուլ. -

***Ա. շրջափուլ,* 19րդ դարի կէսերից մինչեւ 20րդ դարավերջ.** երկու տար-բերակների ընդգծուած տարբերութիւնների ամրագրման շրջանում *Հիւսի-սափայլի* խմբագրատան եւ Լազարեան ճեմարանի «տղաների» ուղղոր-դուած ջանքերով գրական արեւելահայերէնի մշակումը սկսուեց արեւմտա-հայ գրականի զարգացումից փոքր-ինչ տարանջատ[1]: Այս շրջանում մերձե-ցումի կամ միասնական զարգացման հարցերը լուրջ քննարկութիւնների ա-ռարկայ չդարձան:

***Բ. շրջափուլ*, 19րդ դարի 90ականներից մինչեւ 1920ականներ.** արեւ-մտահայ եւ արեւելահայ պատմաաշխարհագրական հատուածների քաղա-քական-մշակութային շփումների որոշ աշխուժացման ընդհանուր յենքի վրայ գրական հայերէնի կանոնարկման այս շրջանում առիթներ ստեղծուե-ցին երկու գրական տարբերակների մերձեցման հնարաւորութիւնների ար-ծարծումների, նոյնիսկ հարցադրումներ արուեցին միասնական հայերէնի ստեղծման[2]: Քննարկումները, որ ծաւալուեցին *Ազատամարտի* հարցարա-նի շուրջ, իվերջոյ բերեցին շատ տրամաբանական եզրայանգումի. երկու տարբերակների «ձուլումը», մէկ միասնական հայերէնի ստեղծումը պատ-

---

[1] Կարծիք կայ, որ 19րդ դարի 50ականներին, երբ մեր լեզուի երկու ճիւղերի միջեւ անջրպետը խորացած չէր, եթէ գրական լեզուն մշակուէր մէկ ազգային լեզուի տե-սանկիւնից, ապա մի շարք կարեւոր կէտերում, մասնաւորապէս քերականութեան մէջ, պատկերը փոքր-ինչ այլ կը լինէր (Հ. Աճառեան, *Հայոց լեզուի պատմութիւն, մաս 2*, Երեւան, 1951, էջ 497), եւ որ այն, ինչ «*այժմ (19րդ դարավերջին - Ե.Ա.) անհնարին ենք համարում անել, 1850ական թուականներին ոչ միայն հնարաւոր էր, այլեւ ամենայն հեշտութեամբ կարելի էր*» (Մ. Աբեղեան, «Մեր երկու գրական լեզուների միութեան խնդիրը», *Արարատ*, Էջմիածին, 1897, թիւ 11-12, էջ 494): Լեզ-ուի պատմական զարգացման այսպիսի առանցքային հարցերում, սակայն, դժուար է պատասխանատուութեան մեծ բաժին յատկացնել անհատներին:

[2] Դանիէլ Վարուժան, «Հայ լեզուի խնդիրը», *Ազատամարտ*, Կ. Պոլիս, Մայիս 22/4 Յունիս 1911, էջ 705-10:

ման-քաղաքական հեռանկարի հարց է, եւ քննարկուող խնդրի լուծման ողջամիտ ընթացքը կարող է լինել երկու գրականների մերձեցումը կամ դրան տանող իրական ուղիների փնտռտուքը[3]:

Գ. Հրջափուլ. 1920ականներից մինչեւ այսօր՝ շուրջ հարիւրամեայ մի ժամանակաշրջան, որն ընթացել է հարցի վերաբերեալ վերաբերմունքի եւ քիչ թէ շատ լուծումների հնարաւորութեան վայրիվերումներով: Հարցի քննարկումները զգալի չափով ակտիւացան, օրինակ, 1940ականների վերջից սկսած՝ մեծ հայրենադարձութեանը յաջորդած մէկ-երկու տասնամեակներին: Ապա շատ աւելի մեծ հնարաւորութիւններ եւ աշխուժ քննարկումների առիթներ ստեղծուեցին 1990ականներից՝ անկախութեան տարիներին. քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլատեսակ շփումները արեւմտահայերէնով հաղորդակցուող հայկական Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ աննախադէպ պայմաններ ձեւաւորեցին իրական մերձեցումի համար:

Եթէ կարճ ձեւակերպենք հարցումի պատասխանը, ապա այն կը լինի հետեւեալ կերպ. *մերձեցման խնդիրը բոլոր փուլերում էլ հիմնականում նոյն կամ նոյնական լուծում է ենթադրել, այն է՝ մերձեցումը պէտք է լինի իրապէս բնական զարգացման եւ օրինաչափ ազդեցութիւնների արգասիք:*

2. Ինչպէ՞ս կը պատկերացնէք այդ մերձեցումը:

Մերձեցման իրական հնարաւորութիւններ առաւել կամ պակաս չափով առկայ են լեզուի բոլոր մակարդակներում.

1. **ՀՆՉԻՒՆԱԿԱՆ-ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՒ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆ**

ա) Մեր դիտարկումներով՝ վերջին տասնամեակներին Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը, փոխադարձ շփումները, հաւանաբար նաեւ լեզուի բնականոն ընթացքը արեւմտահայերէնի **խօսակցական տարբերակում նկատելիօրէն նուազեցրել են ձայնեղ-խուլ արտասանական հակադրութիւնը**, որը արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի հնչիւնական բաղաձայնական համակարգի էական տարբերութիւններից մէկն է:

բ) Արտասանութեան եւ գրութեան մերձեցման էական հնարաւորութիւններ կան օտար յատուկ անունների եւ անուանումների տառադարձութեան մէջ. արեւելահայերէնը վերջին շրջանում հակուած է նշուած բառաշերտը տառադարձելու՝ հաւատարիմ մնալով բնագրային (փոխատու) լեզուի արտասանութեանը (*Այնշթայն, Մանչեսթեր, Թրամփ, հիփոթեք, վինչեսթեր* եւն.), որը շատ կէտերում համընկնում կամ նոյնանում է (կամ ուղղորդման պարագային կարող է այդպիսին լինել) արեւմտահայերէն տարբերակին:

Մերձեցումի իրական հնարաւորութիւններ կան **ուղղագրութեան մէջ**: Այն կարող է ձեւակերպուել եւ իրականանալ միքանի կէտերով.

---

[3] Մանրամասն տե՛ս՝ Եուրի Աւտիսեան, *Հայագիտութեան զուգահեռականներում*, Երեւան, 2021, էջ 206-20:

ա) Արեւմտահայերէնում մի շարք բառեր եւ բառաձեւեր ունեն ուղղագրական տարբերակներ: Դրանք գործածական միաւորներ են, եւ դրանց թիւը մեր հաշուարկներով հասնում է միքանի հարիւրի: Կանոնական քերականութեան գրքերում կարելի է նախապատուութիւնը տալ արեւելահայերէնին համընկնող տարբերակին կամ դրանք համարել միակ ճիշտ տարբերակ: Բառերի ու բառաձեւերի այդպիսի խմբեր են (սկզբում տրւում են արեւելահայերէնին համընկնող տարբերակները)՝

1. արտասանական-ուղղագրական տարբերակներ՝ *անբիծ//ամբիծ, ամբիոն//ամպիոն, թակարդ//թակարթ, գմբեթաձեւ//գմբէթաձեւ, բամբակ//բամպակ, անուշ//անոյշ, խենթ//խենդ, փափագ//փափաք, փնտրել//փնտռել, աղեւրալի//աղէտալի//աղիտալի, եղեգ//եղէգ, ամեն//ամէն, պարեն//պարէն, ոհմակ//վոհմակ, քող//քօղ, բացականչել//բացագանչել* եւն;

2. հնչիւնափոխական եւ բառակազմական տարբերակներ՝ *արիւնակից//արենակից, գյուղացիութիւն//գիւղացութիւն, հասկանալ//հասկնալ, խոշորանալ//խոշորնալ, մանուշակագոյն//մանիշակագոյն, իրարահաւասար//իրերահաւասար, նմուշ//նմոյշ, անուշ//անոյշ, ուժ//ոյժ, սպանել//սպաննել, ծալել//ծալլել, օդանավակայան//օդակայան* եւն.);

3. փոխառեալ մի շարք յատուկ եւ հասարակ անուններ՝ *Կարո//Կարօ, Արփեմ//Արփէմ, Սիլվա//Սիլուա, Կահիրէ//Քէ/Գահիրէ, Բոսֆոր//Վոսփոր, Կանադա//Քէ/Գանատա, մեթրո//մեթրօ, զենիթ//զէնիթ, թեզ//թէզ* եւն.;

4. առանձին քերականական ձեւեր՝ *ձմռան//ձմրան, ձմեռել//ձմերել, ամռան//ամրան, լեռան//լերան* եւն.:

բ) Դարձը դէպի դասական/աւանդական ուղղագրութիւն կը լինէր նոյնքան անպատեհ եւ անճիշտ, որքան եղաւ ինքնին 1920ի ուղղագրական բարեփոխութիւնը: Բայց տարբերակուած մեր ուղղագրութիւններում կան մի շարք կէտեր, որոնց շուրջ կարելի է գալ ընդհանուր որոշումների: Դրանք շատ չեն, բայց կարեւոր անդրադարձներ են: Ինչպէս, օրինակ՝ արեւելահայերէնում կարելի է վերականգնել՝

- հնչիւնափոխուող **էի** ուղղագրութինը, որը նաեւ հնարաւորութիւն կը տայ արեւելահայերէնում խուսափել անհարկի համանունութիւնից (**սէր/սեր, գէտ/գետ, պէտ/պետ** եւն.);
- **յա** երկհնչիւնի **եա** գրութիւնը՝ **մատյան>մատեան, Անանյան> Անանեան, ուրախության>ուրախութեան** (արտասանութեան մէջ կը խուսափենք հայերէնին ոչ յատուկ եւ անհարկի քմայնացուած արտասանութիւնից) եւն.:

Այս եւ նման այլ կէտերի շուրջ կարելի է քննարկումներ ծաւալել:

2. ԲԱՌԱՅԻՆ ԿԱԶՄ: Մերձեցման հնարաւորութիւնները այս ոլորտում անհամեմատ մեծ են: Փոխազդեցութիւնները ընթանում են միքանի հիմնական ուղղութիւններով: Ազդեցութեան կրողի դերում գերազանցապէս հանդէս է գալիս արեւելահայերէնը:

Նախ՝ **օտար բառերի հայերէն համարժէքների՝ նորակազմութիւններ եւ իմաստային համարժէքների փոխանցում** արեւմտահայերէնից արեւելահայերէն՝ *տարածաշրջան, ապենախօսութիւն, ինքնածիգ, ամբոխավար, համայնավար, հանրահաւաք, համոյթ, երգահան, համացանց, արժէնիշ, հեռավար, նախարար, նախագահ, ոստիկանութիւն* եւն.:

Երկրորդ՝ **բառակազմական տարբեր կաղապարներով ստեղծուած բառերի ոչ միայն զուտ ոճական, այլեւ «համագործածական» կիրառութիւնը երկու տարբերակներում՝** *յանձնաժողով//յանձնախումբ, ինքնաթիռ//օդանաւ, գործադուլ//բանդուլ, հրապարախօս//հրապարակագիր, շրջանաւարտ//ընթացաւարտ, խմբագրութիւն//խմբագրատուն, հեռուստացոյց//հեռատեսիլ, ընթերցարան//ընթերցատուն* եւն.:

Երրորդ՝ **արեւմտահայերէն բառային այնպիսի միաւորների փոխանցում արեւելահայերէնին, որոնք արեւելահայերէնում արտայայտւում են բառակապակցութեամբ՝ ճչակ** – *ձայնային ազդանշան,* **տանողչէք** – *տանելու վարձ,* **վերաքաղ** – *անցած նիւթի կրկնութիւն,* **կուսակցել** – *կուսակից լինել,* **կուսակցապետ** – *կուսակցութեան ղեկավար,* **շաբաթավերջ** – *շաբաթուայ վերջին օրերը* եւն.:

Բառային մակարդակում մերձեցման ամենից ազդեցիկ ուղին առաջինն է՝ օտար բառերի փոխարէն արեւմտահայերէնում ստեղծուած նորակազմութիւների հոսքը արեւելահայերէն. առանց մտավախութեան կարելի է պնդել, որ դրանց թիւը հասնում է միքանի հազարի:

3. ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՈՃԱԿԱՆ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄՆԵՐ:

Քերականական փոխանցումները տարբեր լեզուներում բացառիկ իրողութիւններ են: Դրանք աւելի յաճախադէպ են մէկ լեզուի տարբերակներում՝ յատկապէս բարբառ-խօսակցական-գրական լեզու ճանապարհով: Հայերէնում ազդեցութեան այս դաշտում առաւելապէս արեւմտահայերէնն է. քերականական առանձին իրողութիւններ գրական արեւելահայերէնից անցնում են արեւմտահայերէնին, ինչպէս, օրինակ՝

- **ով** դերանուան յոգնակին՝ **ովքեր**;
- **մեզի, քեզի, ձեզի** տրականներին զուգահեռ՝ **մեզ, քեզ, ձեզ** *(«մեզ այցելեցին խումբ մը սփիւռքահայեր»* (*Ակօս*, Կ. Պոլիս, 2008, թիւ 657));
- բուն յատկացուցիչի եւ կապերի հետ բուն սեռականի անյօդ գործածութիւնը (*«փօնավաճառի վայրը», «գարի փոպրակը», «ջուրի մէջ», «սրահի մէջ»* (նոյն տեղը));
- անձի առում ուղիղ խնդրի տրականաձեւ գործածութիւնը (*«…ուսուցիչները անզօր կը մնան երեխաներին* դաստիարակելու հին օրերու ժամանակավրէպ տրամաբանութեամբ եւ մօտեցումով» http://abakanews.org);
- արեւելահայերէնի ձեւերին համընկնող որոշ հոլովական զուգաձեւերի (*պատուի (պատիւի), շան (շունի), ծովի (ծովու), անուան (անունի* եւն.) գործածական յաճախութիւնը արեւմտահայերէնում, եւ հակառակը՝ արեւմտահայերէնին յատուկ որոշ ձեւերի ակտիւացումը արեւելահայերէնում

(*շարժումի (շարժման), հարցումի (հարցման), մերձեցումի (մերձեցման* եւն.);

- կրկնակի ժխտումի գործածութիւնը արեւմտահայերէնում («Եւ ոչ մէկուն բան չի տար» (Զարեհ Խրախունի), «...որ ոչ ոք չսկսի» (Շահան Շահնուր)) եւն.:

3. Ի՞նչ թելադրանքներ-գործնական քայլեր կ'առաջարկէք: Կամ՝ ի՞նչ հանգամանքներ եւ պարագաներ կարող են նպաստել մերձեցման:

ա. ՀՀում դասական կամ հին շրջանի հայ գրականութեան էջերը հրատարակել աւանդական ուղղագրութեամբ, իսկ արեւմտահայ/սփիւռքահայ գրականութիւնը՝ «արեւմտահայ» ուղղագրութեամբ:

բ. ՀՀում Հայոց լեզուի դպրոցական դասագրքերի՝ արեւմտահայերէնին վերաբերող հատուածները ներկայացնել արեւմտահայերէնով եւ միայն «արեւմտահայ» ուղղագրութեամբ, իսկ արեւմտահայերէնի բուհական ձեռնարկներն ու դասագրքերը շարադրել եւ ուղղագրել միայն արեւմտահայերէնով:

գ. Ստեղծել սփիւռքահայ եւ հայաստանեան մասնագէտներից կազմուած մէկ ընդհանուր յանձնախումբ, որը կը զբաղուի մերձեցման հնարաւոր ուղիների եւ ձեւերի մշակմամբ որոշակի ոլորտներում՝ նոր բառերի գործածութիւն, փոխառեալ անունների եւ անուանումների տառադարձութիւն, կէտադրութիւն, բաղադրեալ յատուկ անունների գրութիւն եւն.:

դ. Ընդլայնել մշակութային-կրթական անմիջական գործակցութիւնը:

4. Նման մերձեցում մը դրակա՞ն, թէ՞ ժխտական ներգործութիւն պիտի ունենայ երկու լեզուներուն վրայ, ինչու՞:

Մեր մէկ լեզուի երկու տարբերակները փոխադարձաբար ընկալելի են: Երկուսն էլ զատ-զատ գեղեցկութիւններ են (Ա. Չօպանեան): Փոխադարձ մերձեցումը ոչ միայն աւելի կը դիւրացնի հաղորդակցումը եւ ընկալումը, այլեւ էապէս կը հարստացնի երկու տարբերակները: Մերձեցումը ցանկալի է եւ հնարաւոր է: Բայց պէտք է խուսափել մասնագիտական չափազանցող եւ անհարկի միջամտութիւններից:

Տոքթոր Արմենակ Եղիայեանի պատասխանները.-

1) **Ինչպէ՞ս կը հասկնաք արեւելահայերէն-արեւմտահայերէն մերձեցումը:**

Նոր չէ, որ կը դրուի այս հարցը:

Չայն առաջին արծարծողներէն յիշատակութեան արժանի է մասնաւորաբար Մանուկ Աբեղեանը, որ *Արարատի* 1897ի թողարկումին մէջ երկու

առիթով քննած է զայն (էջեր 424–31 եւ 494–503)՝ թէ՛ միութեան, թէ՛ մերձեցման զոյգ տեսանկիւններէն:

Աբեղեան նկատել կու տայ, որ «*մերինին պէս ցրուած ազգի մէջ մէկ լեզու ունենալը անհրաժեշտ միջոց է ազգային միութեան համար*» (էջ 427): Եւ կը շարունակէ. «*Եթէ այժմ մենք երկու գրական լեզու ունինք, այդ յատկապէս արեւելեան հայոց անցեալ գրագէտների* ***անհեռատեսութեան*** *(թաւագրումը իմս է - Ա.Ե.) շնորհիւ է*»:

Միութեան գաղափարէն հարկադրաբար հրաժարելով՝ Աբեղեան կը գոհանայ մերձեցման հեռանկարով եւ առ այս կը բերէ արեւելահայերէնին յատուկ առաջարկներ, որ արեւմտահայերէնը պարտէր իւրացնել իրենիններուն փոխարէն:

Մերձեցման ուրիշ առաջարկ մը բերուեցաւ՝ այս անգամ սփիւռքի մէջ եւ արեւմտահայու մը կողմէ, որ կը կոչուէր Խ. Պ. Վէմեան, որ *Ծիածան*ի 1946ի նոյ.-դեկտ. թիւին մէջ կը ներկայացնէր իր առաջարկները..., կարճ ժամանակ մը անց Վէմեան Հայաստան հայրենադարձուեցաւ, եւ իր բերած առաջարկները ընդմիշտ մոռացութեան մատնուեցան:

Իսկ հիմա ահաւասիկ կը վերարծարծուի այդ հարցը:

* * *

Նախաձեռնութեան մը գոհացում տալէ առաջ պարտինք մտածել անոր օգտակարութեան ու անհրաժեշտութեան մասին. այսպէս է «լեզուական մերձեցումի» վարկածը: Ու հարցնենք՝ ինչո՞ւ կ'ուզենք մերձեցնել մեր երկու լեզուները, ու մանաւանդ՝ իրապէս մերձեցումի կը կարօտի՞ն անոնք, եւ վերջապէս իրապա՞շտ է այդ ակնկալութիւնը մանաւանդ հիմա, որ աշխարհագրական անջրպետը շատ լայն է մեր երկու հատուածներուն միջեւ:

Մեր զոյգ աշխարհաբարները, իրենց կազմաւորման առաջին մէկ օրէն,- պայմանականօրէն ըսենք՝ 19րդ դարու կէսերէն,- երկուստեք որեւէ ատեն ըմբռնելի դառնալու դժուարութեան առջեւ չեն դրած հայութեան երկու հատուածները: Արեւելահայ հեղինակներու երկերն ու մամուլը ազատօրէն մուտք գործած են Պոլիս ու Արեւմտահայաստան եւ իւրացուած, այնպէս ալ արեւմտահայ հեղինակներն ու մամուլը լայնօրէն հասանելի եղած են արեւելահայութեան՝ ի Թիֆլիս, նաեւ Մոսկուա եւ Երեւան:

Աւելի ուշ, սփիւռքեան պայմաններուն մէջ, արեւմտահայ բոլոր դպրոցներուն մէջ արեւելահայերէնը մատղաշ տարիքէն եւ գրեթէ արեւմտահայերէնի տարողութեամբ՝ նախակարթարանի երկրորդ կամ երրորդ տարիէն մատուցուած է արեւմտահայ փոքրիկներուն, եւ անոնք շատ շուտով ընտելացած են անոր Թումանեանի, Աղայեանի, Շիրազի ու Մահարիի հատուածներու ընդմէջէն՝ առանց նոյնիսկ անդրադառնալու, թէ հայերէնի տարբեր որակ մը կը հրամցուէր իրենց. մեր ուսուցիչները որեւէ ատեն չեն ըսած, թէ Թումանեան ու միւսները այլ կարգի հայեր են եւ անոնց լեզուն տարբեր է մերինէն: Այս մօտեցումին արդիւնքը եղած է այն, որ ընթերցասէր արեւ-

մտահայը ազատօրէն կարդայ ու ըմբռշխնէ Ռաֆֆին, Մահարին, Ստեփան Զօրեանը եւ մնացեալները:

Այս մօտեցումն ալ պատճառ դարձած է, որ արեւմտահայը որեւէ դժուարութիւն չունենայ դիմագրաւելու արեւելահայն ու արեւելահայերէնը: Այս բոլորը ձեւով մը կը նսեմացնեն մեր երկու բարբառները մերձեցնելու անհաժեշտութիւնը, որ այժմէականութեան մը դրդումը չունի եւ կը մնայ... պերճանքի մակարդակին:

2) Ինչպէ՞ս կը պատկերացնէք այդ մերձեցումը՝ 1) քերականութեան, 2) բառապաշար/բառիմաստի, 3) եզրոյթներու, 4) ուղղագրութեան ոլորտներուն պարագային:

1. Հնչիւնական համակարգ

Մեր երկու բարբառները զատորոշող հիմնական երկփեղկումը հնչիւնաբանութիւնն է, որու մակարդակին եւ անյիշելի ժամանակներէ տեղի ունեցած են ամենամեծ եւ հաւանաբար ամենէն անյաղթահարելի շեղումները: Հարցը կը վերաբերի յատկապէս եռաշարք բաղաձաններուն՝ **բ-պ-փ, գ-կ-ք, դ-տ-թ, ձ-ծ-ց, ջ-ճ-չ**, բայց նաեւ **ր** ձայնորդին ու **ռ** ձայնեղին նոյնացումին, իմա՝ շփոթին: Այս 17 բաղաձայնները, այսինքն՝ մեր հնչիւնական համակարգի գրեթէ կէսը, մեր երկու բարբառներուն միջեւ կը յառաջացնեն քաոսային հակադրութիւններ, ուր շատ մը բառեր, գոգցես կառոյցներ, բոլորովին հակադիր իմաստ կ'արտայայտեն արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի մէջ:

Օրինակ՝ «բադը պատի վրայ է» կառոյցը կու տայ՝

--Արեւելահայերէն՝ badը patin վրայ է:

--Արեւմտահայերէն՝ p՛at՛ը badin վրայ է:

Այսպիսիները բացառութիւն չեն:

Ահաւասիկ երեւոյթ մը, որ պիտի արժէր չէզոքացնել ու, այս պարագային, արեւմտահաերէնը վերադարձնել իր վաղեմի ու հայեցի վիճակին. բայց... կարելի՞ է: Ո՛չ, կարելի չէ: Եւ այս ուղղութեամբ գործադրուելիք ամէն ճիգ ի յառաջագունէ դատապարտուած է ձախողութեան: Նման փորձ պէտք չէ կատարուի, վասնզի ժամանակի ու ճիգերու յումպէտս վատնում պիտի ըլլայ ան:

2. Բառային կազմ

Մեր բառամթերքի հիմքը երկուստեք գրաբարեան է, այն որ միջին հայերէնի ճամբով փոխանցուեցաւ աշխարհաբարին՝ թօթափելով աղաւաղումներն ու ռամկաբանութիւնները՝ դառնալու համար գրական արեւելահայերէնն ու գրական արեւմտահայերէնը: Այդ հիմքին վրայ է, որ եկան աւելնալ բարբառային տարրեր եւ հերթական նորակազմութիւնները, որոնք երբեք կանգ չեն առած ու չեն առներ:

Մինչեւ խորհրդային կարգերու հաստատումը մեր երկու գրական լեզուներու բառապաշարը մեծ տարբերութիւն մը չունէր, սակայն այն օրէն ուր

արեւելահայերէնը դարձաւ պետական լեզու, ան պարտաւորուեցաւ իր ունեցածին վրայ աւելցնել մեծաթիւ բառեր՝ ռազմական, իրաւաբանական, բժշկագիտական, ճարտարապետական, մեքենագիտական եւ այլն, որոնց անհրաժեշտութիւնը փաստօրէն զգալի չէ երբեք արեւմտահայուն:

Մնացեալին համար ի վաղուց անտի գոյութիւն ունեցած է մերձեցումի մնայուն գործընթաց մը,– յատկապէս գեղարուեստական գրականութեան ճամբով,– որ երբեք կանգ չէ առած եւ չի կրնար առնել: Փոխներթափանցումները եղած են երկուստեք եւ յօգուտ երկու կողմերուն, անշուշտ բոլորովին տարբեր համեմատութեամբ. արեւմտահայերէնը շատ աւելի հակամէտ է փոխառելու արեւելահայ նորաբանութիւնները, մինչ արեւելահայերէն թափանցած արեւմտահայ բառերը զգալիօրէն սակաւ են ըմբռնելի պատճառներով:

Այս փոխառութիւնը, որ յոյժ գովելի ու քաջալերելի է, տեղի ունեցած է ընդհանրապէս շատ ճիշդ սկզբունքով, այն է՝ պահել փոխառեալ բառերու հայեցի դիմագիծը ու չտարուիլ երբեք արեւելահայերէնը աղարտող օտարաբանութիւններէն

Բաց աստի, արեւմտահայերէնը յաջողած է բոլորովին ինքնաբաւ դառնալու հրապարակագրական լեզուին ու բառապաշարին մէջ՝ առանց երբեք տարուելու արեւելահայերէնի օտարաբանութիւններէն, որոնց ներկայութիւնը շատ ճնշիչ է հայրենի ԶԼՄներու մէջ:

Նորաբանութեանց կերտումին մէջ արեւմտահայերէնը կը մնայ յառաջապահի դիրքերուն վրայ՝ յաճախ շատ ետ ձգելով արեւելահայերէնը, որ, դժբախտաբար, ցաւագին ու ընդվզեցուցիչ հետեւողականութեամբ մը ու անտեղիտալիօրէն անփոփոխ կ'որդեգրէ օտար եզրերը. կը բաւէ քանի մը էջ կարդալ՝ անդրադառնալու համար այս վերջիններուն:

3. Քերականութիւն

Ծանօթ իրողութիւն է, որ լեզուի մը էութիւնը հիմնուած է իր քերականութեան (իմա՝ **ձեւաբանութիւն** եւ **շարահիւսութիւն**) վրայ, որ անոր ամենատոկուն շերտն է, այս պատճառով ալ քերականութեան տեսակէտէ մասնաւոր մերձեցում կարելի չէ ակնկալել, թող որ այնքան ալ անհրաժեշտ չէ նման մերձեցում մը. այսինքն՝ ի՞նչ պիտի շահինք **ծառերու** ըսելու փոխարէն **ծառերի** ըսելով կամ **խօսեցայ** ըսելու փոխարէն **խօսեցի** ըսելով:

Շարահիւսութեան մակարդակին՝ շատ բնական հակումով մը արեւմտահայութիւնն ալ վերջին տասնամեակներուն հակամէտ է իր ուղիղ խնդիրը հետզհետէ կազմելու տրական հոլովով. օրինակ՝

-Աւագ եղբայրը տասը տարեկան **Կոստանին** տարաւ Փարիզ:

-Նալբանդեան ընդունեց տնօրէնի **տեղակալին**:

-**Սպառողներուն** կը քաջալերեն:

Կամ թէ կարգ մը անուղղակի խնդիրներուն տալ հայցական հոլով՝ տրականի փոխարէն, ինչպէս սովոր է ընել արեւելահայերէնը. օրինակ՝

-Կ'ամչնային **յիշեցնել** անոր պարտքը:

-Մեր ընկերները ստիպուած են **պահանջել**:

-Համբարձում աղա ժամացոյցը մէջտեղ կը հանէր երբ հարկ տեսնուէր զայն **լարել** կամ **ուղղել** (Յ. Պարոնեան, «Համբարձում աղա»):

Եւ ոչ միայն ասոնք: Ուրեմն ձգենք, որ քերականական մերձեցումը տեղի ունենայ իր բնական կշռոյթով՝ առանց բռնազբօսիկ նախաձեռնութիւններու, բայց նաեւ առանց հակադրուելու այդպիսիներուն:

4. Ուղղագրութիւն

Ահա մարզ մը, ուր պէտք է ամէն միջոցի դիմել՝ վերահաստատելու համար այն միասնական ուղղագրութիւնը, որ ընդհանուր հայութեանն էր եւ կամայականօրէն ու բռնազբօսաբար խլուեցաւ արեւելահայերէնէն 1922ի չարաշուք «ռեֆորմ»ի հետեւանքով եւ աննախընթաց խրամատ մը յառաջացուց մեր երկու գրական լեզուներու, այլեւ գրաբարի միջեւ:

Այլ անանցանելի խրամատ մը յառաջացաւ միջաշխարհաբարեան մակարդակի վրայ, ուր **յօդ**ը դարձաւ **հոդ**, **յօդուած**ը՝ **հոդված**, նոյնացան **յետ** եւ **հետ**՝ տալով **հետ**, **հօտ** եւ **հոտ**՝ տալով **հոտ**, **յարկ** եւ **հարկ**՝ տալով **հարկ** ... այս շարքը չափ ու սահման չունի:

Չհաշուած բոլորովին լեզուական-իմացաբանական այն մեծ թերութիւնները, որոնք յատուկ են աբեղեանական ուղղագրութեան: **Յանուն**ը աւանդական ուղղագրութեան համար կը նշանակէ **ի+անուն**, **յոտնկայսը**՝ **ի-ոտն+կայս** է (**կայս**ին հայցականը), մինչ ոչինչ կը թելադրեն **հանուն**ը եւ **հոտնկայս**ը: Նոյն տրամաբանութեամբ բաղդատել՝ **կ'ոռնայ** եւ **կոռնա**, **կ'առնէ** եւ **կառնե** եւ հազարաւոր այսպիսիները:

5. Տառադարձութիւն

Մեր մէկ լեզու եւ մէկ ու միասնական ուղղագրութիւն ունենալուն կը խանգարեն նաեւ տառադարձական այն նորագոյն տարբերութիւնները, յատկապէս յատուկ անուններու պարագային, որոնք ուղիղ ու անմիջական հետեւանքն են գլխաւորաբար հչիւնական համակարգի տարբերութեան, որուն ակնարկուեցաւ վերը՝ թիւ 1ի մէջ. բաղդատել՝ **Քանատա** եւ **Կանադա, Կալիֆոռնիա** ու **Քալիֆորնիա**, **Գահիրէ** ու **Կահիրե**, **Զուիցերիա** եւ **Շվեյցարիա**, **Արժանթին** ու **Արգենտինա:** Այսպիսիներու յառաջացման մէջ դեր ունեցած են նաեւ այն բնորդները, որոնց հետեւած է մեզմէ իւրաքանչիւրը. արեւելահայերը ընդհանրապէս յենած են ռուսական եւ գերմանական անուանումներու վրայ, օրինակ՝ **Շվեյցարիա**, **Արգենտինա**, մինչ արեւմտահայերը յենած են ֆրանսերէնի կամ իտալերէնի, երբեմն ալ անգլերէնի վրայ եւ ըսած ու գրած են **Զուիցերիա**, **Արժանթին**(ա):

Ինծի կը թուի, թէ մենք պիտի չկարենանք տառադարձական նոյնութիւն հաստատել մեր երկու լեզուներուն միջեւ, որքան ալ ցանկալի ըլլար այդ նոյնութիւնը: Վասնզի դժուար է, եթէ ոչ անկարելի, ակնկալել, որ միջին արեւմտահայը յաղթահարէ եռաշարք բաղաձայններու մեսրոպեան արտասանութեան եւ արեւմտահայ արտասանութեան միջեւ գտնուող ահարկու անհամապատասխանութիւնը. այսինքն՝ արտասանէ P՛(Փ), K՛(Ք), Th (Թ) եւ

գրէ Պ(B), Կ(G), Տ(D). օրինակ՝ **Canada**ն արեւմտահայուն համար **Քանատա** է, եւ ան երբեք պիտի չըմբռնէ, թէ ինչ որ տառադարձական միութեան մը ծիրէն ներս պարտի գրել **Կանադա**, որ իրեն համար **Ganata** կը հնչէ:

Passadenaն արեւելահայուն համար Պասադենա է, սակայն այս վերջինը արեւմտահայուն համար Bassatena է:

Աւելի մեծ բարդութեանց առջեւ պիտի գտնուի ան Ձ-Ծ-Ց եւ Ջ-Ճ-Չ եռեակներուն առթիւ:

Նոյնիսկ եթէ հազուագիւտ ազգայիններ յաջողին այս դժուարութիւնը յաղթահարել, ապա 99%ը պիտի ձախողի ու մանաւանդ խրտչի:

Տակաւին կայ բառասկիզբի Յ տառի արտասանութեան տարբերութիւնը. օրինակ՝ արեւելահայը կը գրէ **Յագո** ու կ'արտասանէ **Iago**, մինչ արեւմտահայը Hako կ'արտասանէ զայն, իսկ ինք պիտի գրէր Եակո, որ ըմբռնելի չէ արեւելահայուն համար:

Լուծո՞ւմ…

Կը հաշտուինք տառադարձութեան երկուութեամբ եւ արեւմտահայերէնին համար կը մշակենք կանոններու պարզ ցանկ մը, ուրկէ կ'արտաքսուին Բ, Գ, Դ, Ձ, Ջ, որոնք դարձած են Փ, Ք, Թ, Ց, Չ: Այս վերջին հինգ հնչիւններուն համար հինգ տառը բաւարար է, պէտք չունինք իւրաքանչիւրէն զոյգ օրինակներ ունենալու՝ Բ-Փ, Գ-Ք, Դ-Թ, Ձ-Ց, Ջ-Չ:

Կը մշակուին քանի մը պարզ կանոններ Ռ-Ր զոյգին, ինչպէս նաեւ Ե-Է եւ Ո-Օ տառերու կիրարկութեան կանոնները տառադարձելի օտար բառերու մէջ:

Բացարձակ միօրինակութեան ամէն փորձ պիտի դժոխքի վերածէ հայերէնի ուսուցումը, ուստի պէտք է հաշտուիլ մեր կացութեամբ:

Եթէ շնորհիւ այս բոլորին յաջողեցանք միօրինակութիւն մը ստեղծել գոնէ սփիւռքի մէջ, ըսել կ'ուզեմ՝ արեւմտահայութեան համար, այս եւս բարիք մըն է: Որովհետեւ այդ միօրինակութիւնը կը պակսի տակաւին մեզի:

Դոկտոր Յակոբ Կիւլլիւճեանի պատասխանները.-

1) Ինչպէ՞ս կը հասկնաք արեւելահայերէն-արեւմտահայերէն մերձեցումը:

Այս հարցումին պատասխանած է Դանիէլ Վարուժան ասկէ 111 տարի առաջ, ու իր պատասխանները, առարկութիւնները եւ առաջարկները գրեթէ ամբողջութեամբ կը մնան կիրառելի այսօր[4]:

Սեփական կարճ ու անպաճոյճ պատասխանս պիտի ըլլար՝ յղացքային դժուարութիւն ունիմ ատիկա հասկնալու: Չեմ ըմբռներ թէ ո՞րն է կարիքը մերձեցման, կամ թէ ո՞վ կրնար կամ ի՞նչ կրնար շահիլ «մերձեցումով» մը:

[4] Վարուժան, նոյն:

Հարց պիտի ըլլար եթէ երկու ճիւղերու հայախօսները չհասկնային զիրար: Երկուքէն որեւէ մէկուն գիտակ *եւ* գրաճանաչ անձ մը ոչ միայն դիւրաւ կրնայ «հասկնալ», այլեւ լիակատար ընկալել միւսին խօսածը կամ գրածը: Գրաճանաչ ըսելով կը հասկնանք սեփական լեզուաճիւղով գիրք մը կամ երկու կարդացած եւ կարդալու ճարտարութիւնը ունեցող անձ մը: Անձնական օրինակս սկզբունքով ընդհանրանալի կրնայ չըլլալ, սակայն լուսաբանիչ է. կարդացած առաջին ամբողջական գիրքերս արեւելահայերէն էին, երբ դեռ ոչ մէկ արեւելահայախօս լսեր էի անձնապէս: Ոչ ոք ըսաւ թէ այդ գրութիւնները «արեւելահայերէն» էին. ոչ իսկ լսեր էի իմ լեզուաճիւղիս վերջերս քիչ մը չափազանց հոլովուող անունը՝ «արեւմտահայերէն»: Խնդիր չէի ունեցեր այն ատեն:

Այնուամենայնիւ, սփիւռքացուած հայախօսներու համար գրաճանաչ չըլլալու հաւանականութիւնը մեծ է վերջին տասնամեակներուն, ու աւելի շեշտուելու միտում կը ցուցաբերէ, յատկապէս՝ հայ համաշխարհային հաստատութիւններու կողմէ դպրոցներու հանդէպ անտեսող ու որոշ պարագաներու խափանողական կեցուածքներու այս ժամանակաշրջանին: Այդ պարագային, այսինքն գրաճանաչութեան բացակայութեան է որ հասկնալիութեան դժուարութիւններ կը յառաջանան, որովհետեւ միւսին ունկնդրողը իր լսած նախադասութիւնը չ'անցըներ գրութենական հոլովոյթէ մը, մտքով չի՛ «տեսներ» բառերուն տառերը եւ չի վերընթերցեր զանոնք իր սեփական հնչիւնական համակարգով: Փոխանակուողները միայն ձայնային պատառիկներ է որ կ'ըլլան, ու միւսի ձայնային կամ հնչիւնական համակարգին չվարժուած անձ մը զանոնք կ'ընկալէ իր համակարգէն, այսինքն թիւր կերպով, եւ հասկնալիութեան իւրաքանչիւր խոչընդոտ կամ դժուարութիւն՝ հոգեբանօրէն կը խափանէ նոյնիսկ շրջակայ հասկնալի բառերու ընկալումը, յոռի շրջանակ մը կազմելով:

Գրաճանաչութեան բացակայութեան՝ լեզուաճիւղերու պարագայէն աւելի մեծ հարցեր կը յառաջանան այլ տեղ մը, որ բարբառներն են: Բարբառները ետ մղելու եւ անտեսանելի դարձնելու ճիգեր գոյութիւն ունեցած են երկար ատեն, մասնաւորաբար արեւմտահայ եւ արեւելահայ հիմնօրինակներու գրաճանաչութիւնը համատարած դարձնելու յաջող արշաւներու ատեն՝ թէ՛ վերապրող համայնքներու, եւ թէ՛ Հայաստանի մէջ, անցնող դարու առաջին կէսին: Այդ թափը շարունակուած է ու կը շարունակուի մինչեւ հիմա, «ճշգրտութեան» եւ ուղղագրական անթերիութեան վրայ կիզակիտելով ճիգերու սպառիչ մասը, սակայն ընդունելիութեան, յարգելիութեան (մասամբ prestige) եւ գործածականութեան ոլորտներէն դուրս մղելով դարաւոր եւ հարազատ արտայայտչաձեւեր, իրենց ամբողջ հարստութեամբ: Անշուշտ ոչ ոք պիտի առաջարկէր այսօր հրովարտակով մը ջնջել բոլոր բարբառները, մանաւանդ երբ աշխարհին ամբողջ կը փառաբանէ բազմազանութիւնը, իսկ միւս կողմէ նահանջի մէջ է արդիականութեան (եւ սովետականութեան) ի վերուստ կարգեալ միատեսակարար, պարտադիր կանոնականութիւնը:

Մերձեցումի կարելիութենէն աւելի՝ հեռաւորումի առկայութեան խնդիր մը կայ, որ կարողականութիւնը ունի օտարելու «ազգ»ի հատուածները իրարմէ: Ուշագրաւ է, որ առաջին ընթերցումներուս փորձառութիւնը մերթ դժուար է ունենալ վերջին մէկ-երկու տասնամեակներուն, երբ հայաստանեան մամուլ կը կարդամ: «Օտար» լեզու կարդալու տպաւորութիւնը դժուար է անգիտանալ, ու ոչ այնքան՝ օտար բառերու առատութեան, այլ նոյնինքն լեզուամտածողութեան եւ քերականական ու բառակազմական փոխադրումներու պատճառով: Նոյն տպաւորութիւնը ունենալու է հաւանաբար պարսկահայ արեւելահայախօս մը: Խնդիրը ուրեմն արեւելահայերէնի ու արեւմտահայերէնի միջեւ չէ, այլ այն, որ հայաստանեան լեզուաճիւղը կը հեռանայ նոյնինքն արեւելահայերէնէն աւելի արագ, քան լեզուի «մարսելի» բնաշրջում մը պիտի ենթադրէր: Իսկ այդ պարագային մնացեալ արեւելահայախօսներու թէ արեւմտահայախօսներու կողմէ «մերձենալ»ը պիտի նշանակէր սոսկ միւսին ետեւէն վազել, «զիս մի՛ թողուր» գոչելով, երբ յայտնի չէ թէ միւսը արդեօք հետաքրքրուած պիտի ըլլա՞ր այդ տեսլականով:

Մերձեցումին մասին հարկ է մտածել լեզուաճիւղերէն աւելի՝ անձերու եւ հաւաքականութիւններու լեզուական արտադրութիւններուն միջեւ անոր կարելիութեան մասին: Մերձեցումը հիմնականին մէջ ծանօթացումն է: Երբ ծանօթ ենք, մերձ ենք նաեւ տրամադրութեամբ, հանդուրժողութեամբ:

Կարելի է առաջադրել, որ խնդիրը գլխաւորաբար հանդուրժողութեան հարց մըն է, այսինքն բազմազանութեան կարելիութեան ընդունուիլն ու հանդուրժուիլը՝ աչքառու կերպով անհանդուրժող հաւաքականութեան մը կողմէ, որ դժուարութիւնը ունինք ընդունելու որ մերն է: Այս տրամադրութիւնները գրեթէ բացառաբար կը հպատակին մշակութային քաղաքականութեան դերակատարներու կողմէ յառաջ մղուած միջավայրային պայմանաւորումներու: Հակառակ անոր, որ այդ կեցուածքները տիրական ըլլալ կը թուին մէկ հատուածին մէջ, միւսները եւս զերծ չեն ատկէ: Մոռնալով անգամ բազմացող թիւը այն մարդոց, որոնք հայերէնի արեւմտեան ճիւղը «գրաբար» կը կարծեն (կամ գիտակից մոլորութեամբ զայն այդպէս կ'որակեն), որեւէ լեզուաճիւղի պատկանող դպրոցներու մէջ չեն պակսիր միւսին քերականական ձեւերուն կամ բառապաշարին վերաբերող դիտողութիւնները՝ «ատիկա սխալ է», «գեղեցիկ խօսէ» եւն., որոնք դեռ աւելի կը շեշտուին հայերէնին հարազատ բարբառային ձեւերու պարագային ու քննադատուողյանդիմանուողը կը մղեն՝ յատկապէս արեւմտեան սփիւռքի մէջ, լեզուական ոստում կատարելու դէպի տիրական (օտար) լեզուն:

Կարեւոր է երկու խօսք ըսել յիշեալ խնդրին մասին, որ համատարած է յատկապէս հարաւային Քալիֆորնիոյ մէջ. շրջան մը, որուն բաւարար չափով ուշադրութիւն չէ դարձուած կիրառական լեզուաբանութեան կողմէ՝ նկատի առնելով որ այնտեղ է որ կեդրոնացած է Հայաստանէն դուրս հա-

յախօսներու ամենախիտ խմբաւորումը[5]: Մեր դիտարկումներուն համաձայն, լեզուական նահանջի՝ աւելի ճիշտը լեզուական տեղաշարժի (language shift) գլխաւոր դրդիչը լեզուի չգիտութիւնը չէ այս համայնքներուն մէջ, գոնէ առայժմ՝ երբ դեռ հայախօսները մեծամասնութիւն կը թուին ըլլալ: Այդ տեղաշարժը կը հպատակի յատկապէս արեւելահայ թէ արեւմտահայ զուգալեզուական (diglossic) գործընթացներու յառաջացուցած բախումին[6]: Երբ սեփական ընկալումով լեզուական «ցած» տարբերակ մը խօսողը դէմ դիմաց կու գայ նոյն խօսողի ընկալումով «բարձր» տարբերակ խօսողի մը, պիտի չփորձէ խօսակցիլ կամ կամրջել լեզուն մէկ տարբերակէն միւսը, այլ «ամօթ» զգալով՝ պիտի պարտկէ կամ գաղտնի պիտի պահէ իր հայախօսութիւնը եւ ոստում կատարէ դէպի տիրական (օտար) լեզուն, ուր երկուքը ենթադրաբար նոյն յարաբերական մակարդակը ունին կամ կը կարծեն ունենալ: Տարբերակները կրնան ըլլալ հարաւային Իրանի գիւղական բարբառներ, Թեհրանի, Պուրճ Համուտի, Հայաստանի տարբեր շրջաններու եւ նոյնիսկ Երեւանի խօսակցականը, միջինարեւելեան դպրոցական գրականը, հայաստանեան կամ պարսկահայ գրականները եւն.: Իդէպ, արեւմտահայ խօսակցականը ոչ-գրաճանաչ գրեթէ բոլոր արեւելահայախօսներու կողմէ կ'ընկալուի որպէս «բարձր» տարբերակ, պարզ այն պատճառով, որ դպրոցական գրասեղաններու ետին քանի մը տասնամեակ առաջ հայախօս դարձած արեւմտահայերը ժամանակ չեն ունեցած լրիւ «ցած» տարբերակ մը յառաջացնելու, եթէ զեղչենք պուրճհամուտեան *«ակա»յական* սահմանափակ արտայայտութիւնները: Բոլոր պարագաներուն ալ այս հարցերը կ'անհետանան գրաճանաչութեան ներկայութեան, որ կը ծանօթացնէ, կը մերձեցնէ, ինք իր խօսելաձեւի գրութենականացած միջնորդութեամբ զայն յարգելի տեղ մը բարձրացնելով՝ խօսողը կը փրկէ միւսէն փախուստ տալու մղումէն:

2) Ինչպէ՞ս կը պատկերացնէք այդ մերձեցումը:

Կը յղեմ նախորդ պատասխանիս յղացքային հիմնաւորումին: Որեւէ պարագայի՝ քերականական, բառապաշարային, եզրաբանական եւ ուղղագրական ոլորտներու մէջ որոշ՝ դոյզն ներդաշնակում մը դրական պիտի ըլլար: Ատով կը հասկնամ կարգ մը բացառութիւններու հարթում՝ հակելով միւս լեզուաճիւղի լուծումներուն վրայ (օրինակ՝ գրականի մէջ դիւրաւ կարելի է որդեգրել արեւելահայերէնի սեռականի եւ տրականի որոշիչ յօդով

[5] Տե՛ս՝ Sh. Karapetian and H. Gulludjian, "Armenian in Greater Los Angeles: Negotiating Intralinguistic Diversity in a Diaspora Epicenter," in C.H. Chik (Ed.), *Multilingual La La Land: Language Use in Sixteen Greater Los Angeles Communities,* Routledge, 2021, էջ 28-46:

[6] Տե՛ս՝ H. Gulludjian, "Language Vitality through Creative Literacy," in B. Der Matossian & B. Der Mugrdechian (Eds.), *Western Armenian in the 21st Century: Challenges and New Approaches*, The Press at Fresno State, 2019, էջ 103-132:

տարբերակումը. թերեւս ոչ պայմանադրական ձեւով, այլ որպէս այլընտրանքային ընդունելի կարելիութիւն): Բառապաշարի պարագային դժուար է նախատեսել այն հոլովոյթները, որոնց համաձայն տեղատուութիւն կամ յառաջընթաց կը տեսնուի կարգ մը բնագաւառներու մէջ: Տասնհինգ տարի առաջ կը ծիծաղէին կամ կը գրգռուէին «ժողովրդավարութիւն» հայերէն բառի սոսկ յիշատակումին դիմաց, իսկ հինգ-վեց տարիէ իվեր բոլորին բերանն է: Շարք մը բառեր այսպիսով ներմուծուած են ու յաջողապէս որդեգրուած արեւելահայերէնէն, ուրիշներ՝ նահանջած ու տեղ տուած օտարաբանութիւններու: Երրորդ խումբ մըն ալ կայ, որ անտեսելով դար մը աւելի գործածութիւնը որոշ եզրերու՝ կը փորձէ ամբողջովին նոր բառեր ստեղծել, ինչ որ մերձեցումին հակառակը կը կատարէ:

Այս բնագաւառին մէջ յուժ կարեւոր է արեւմտահայ գրողներու գործերու հրատարակութիւնը Երեւանի մէջ, թէ՛ հիները, եւ թէ՛ մանաւանդ ժամանակակիցները, որոնց բառապաշարը, բարդ մտածողութիւն առաջադրող շարահիւսութիւնը եւ արդի լուծումները կրնան հետեւողականօրէն ու բնականօրէն (առանց ստիպողութեան եւ պայմանադրականութեան) մտնել արեւելահայերէնի մէջ: Միւս կողմէ, սփիւռքահայ մամուլը եւս փոխառութիւններ կը կատարէ հայաստանեանէն. միքանին՝ շքեղ լուծումներ (օրինակ՝ «շրջայց»), իսկ մեծամասնութիւնը դժբախտաբար խաթարումներ («արդիւնքով» եւն.): Այստեղ ալ թերեւս որոշ զիջումներ պէտք է կատարել, զոհելով տասնամեակներու գործածութիւն ունեցող սփիւռքահայ լուծումներ՝ որդեգրելու համար այնպիսի մասնագիտական եզրեր, որոնք պետական կառոյցներու կարիքով արդէն որդեգրուած ու տարածուած են Հայաստանի մէջ, ըլլայ դիւանակալական, պետական եւ ռազմական, ելեւմտական, հարկային ու այլ մարզերու մէջ, որքան ալ զոհուողը գերադաս թուի ըլլալ:

Ուղղագրութեան մասին կարելի չէ կարճ խօսիլ, մանաւանդ որ ատիկա է որ կանգնած է հայաստանեան լեզուի՝ իր բառարմատներուն հետ ճկունօրէն յարաբերելու եւ լուծումներ տալու դժուարութեան խորքը, եւ ատոր համար ալ գլխաւոր պատճառն է օտարաբանութիւններու բազմացումին եւ մերձեցման հակառակ ընթացքի շեշտուելուն: Անձնական կարծիքս այն է, որ արհեստագիտութեան այս դարաշրջանին անիկա կրնայ մասամբ շրջանցել մասնագէտներու եւ ղեկավարութեան կամակորութիւնը. թուային ընթերցանութեան տարածման զուգահեռ բաւական դիւրին է կոճակի մը վստահիլ ուղղագրութեան անմիջական փոխարկումը ընթերցողին համար (օրինակ մըն է Ուիքիփետիայի արեւելահայ տարբերակի ընտրովի ուղղագրութեան կոճակը):

3) Նման մերձեցում մը դրակա՞ն, թէ՞ ժխտական ներգործութիւն պիտի ունենայ երկու լեզուներուն վրայ, ինչու՞:

Փոխադարձ ընթերցումի, միւսինը իւրացնելու կամ ճանչնալու հոլովոյթին բնական հետեւանքը պիտի ըլլայ դուրսին բացուիլ մը, ուր արեւմտա-

հայերէնը միջնորդ մըն է ուրիշ ձեւով ապրուած ու ընկալուած աշխարհի մը, իսկ արեւելահայերէնը գլխաւորաբար միջնորդ մը կ'ըլլայ հողին ու անոր վրայ բուսած անցեալ ու ներկայ մշակոյթին: Կը շեշտեմ այստեղ՝ վերջերս հրապարակուող գործերու մեծապէս դրական ազդեցութիւնը այս գծով: Միւս լեզուաճիւղով գիրքեր կարդացած մէկը անկարելի է որ արհամարհական կամ միւսի գոյութեան հանդէպ մերժողական կեցուածք որդեգրէ, թէեւ այդպիսի բացառութիւններ միշտ պիտի ըլլան, նոյնիսկ գրական եւ ենթադրաբար «մտաւորական» շրջանակներու մէջ:

4) Ի՞նչ թելադրանքներ-գործնական քայլեր կ'առաջարկէք՝ իրականացնելու այդ մերձեցումը (եթէ անհրաժեշտ կը նկատէք զայն):

Ինչպէս ըսի՝ եթէ մերձեցումը հասկնանք զիրար լսելու, զիրար կարդալու, երբեմն՝ իրարու հիանալու կարելիութեամբ, անոր կը հետեւի հանդուրժողութիւնը: Ծանօթացումը կը կատարուի զիրար լսելով, աւելի ճիշտը՝ կարդալով, որուն համար պէտք է հրատարակութիւնները բազմացնել, բնական հոլովոյթի վերածել դպրոցներու մէջ երկուքին ընթերցումը, որմէ առաջ սակայն, ցաւալիօրէն, հարկ է աշխատիլ ի խնդիր որեւէ ընթերցումի առկայութեան, որ անհետացած կը թուի ըլլալ վերջերս: Ամենէն կղզիացած արեւելախօսն անգամ, երբ դասընթացքներու ընթացքին կը ծանօթանայ որակաւոր (ո՛չ սոսկ նշանախօսքային) արեւմտահայ գրականութեան, ոչ միայն կը սիրահարի լեզուական այդ արտայայտութեան, այլեւ շատ անգամ կը փորձէ մասամբ որդեգրել զայն: Ահա՛ մերձեցումը: Իսկ հակառակ ուղղութեամբ՝ փաստարկելու շատ հարկ չկայ. բոլոր անոնք, որոնք միջինարեւելեան դպրոցներու մէջ կարդացած են արեւելահայերէն՝ նոյն փորձառութիւնը ապրած են: Այսինքն գրաճանաչութեան՝ ու քայլ մը անդին՝ գրքաճանաչութեան մէջ է բանալին: Հակառակ պարագային՝ որու՞ն պէտք մերձեցումը չգործածուող գրականներու: Այս իմաստով է որ էական են փոխադարձ հանդուրժողութիւնն ու ծանօթութիւնը, որոնց բացակայութեան՝ անշուշտ բնական զարգացում մը պիտի ըլլար լեզուաճիւղերու աստիճանական անջատումը եւ տարբեր լեզուներու վերածումը: Եթէ անշուշտ մէկը կամ միւսը բախտը ունենային վերապրելու՝ հոն հասնելու համար:

Դոկտոր Յակոբ Չոլաքեանի պատասխանները.-

1) Ինչպէ՞ս կը հասկնաք արեւելահայերէն-արեւմտահայերէն մերձեցումը:

Գրաբարի փոխարէն մեր գրական լեզուի երկու տարբերակները ձեւաւորուեցան աշխարհագրական, քաղաքական եւ բարբառային տարբեր հիմքերու վրայ: Արեւմտահայերէնը ծնունդը եղաւ արեւմտահայ միջավայրին (Կ. Պոլիս, Զմիւռնիա, Վենետիկ-Վիեննա) եւ տարածուեցաւ Օսմանեան

Կայսրութեան սահմաններէն ներս ու Եւրոպա: Արեւելահայերէնը ծնունդ առաւ արեւելահայոց միջավայրին մէջ (Թիֆլիս, Մոսկուա) եւ տարածուեցաւ Ռուսական Կայսրութեան եւ պարսկահայոց միջավայրին մէջ:

Երկու գրականները տարբեր էին բարբառային հիմքով եւ օտար լեզուներու հետ շփման իրենց կարելիութիւններով. արեւմտահայերէնը ստեղծուեցաւ Կ. Պոլսոյ բարբառի (կը ճիւղ, բաղաձայնական խլազուրկ երկաստիճան համակարգ) հիման վրայ ու բառապաշարի հարստացման համար օգտուեցաւ ֆրանսերէնէ, իսկ արեւելահայերէնը՝ Արարատեան դաշտի բարբառին (ում ճիւղ, բաղաձայնական եռաստիճան համակարգ) հիման վրայ եւ բառապաշարի հարստացման համար օգտուեցաւ ռուսերէնէ:

Կար նաեւ լեզուական հին որակներու տարբերութիւնը. արեւմտահայերէնը առաւելաբար միջին հայերէնի շարունակութիւնն էր, իսկ արեւելահայերէնը կը պահէր գրաբարի հնչիւնական համակարգը:

Վերջին հաշուով ստեղծուած երկու գրական տարբերակները լեզուական տարբեր որակներ էին՝ ունենալով հնչիւնական, բառապաշարային եւ քերականական համակարգերու իրենց իւրայատկութիւնները: Երկու գրական լեզուներու նոյնացման անհատական ճիգերն ու առաջարկները ապարդիւն անցան, բայց զանոնք մերձ պահելու եւ անոնց զարգացման մէջ բարբառային կամ օտարամուտ հիմքեր ունեցող տարրերը դուրս մղելու եւ ընդհանուր հայերէնեանը ընդունելու միտում ստեղծուեցաւ: Ասիկա կ'ենթադրէր հետեւիլ մէկը միւսին ու խուսափիլ լեզուի զարգացման մէջ իրարամերժ ընթացք ունենալէ:

Դժբախտաբար, խորհրդային իշխանութեան տարիներուն արեւելահայերէնին տրուեցաւ զարգացման ամբողջապէս հակոտնեայ ընթացք: 1922ին ընդունուած հնչիւնական ուղղագրութիւնը (1940ի մասնակի ետդարձով հանդերձ), ռուսերէնին տրուած գերակայ լեզուի հանգամանքը եւ արեւմտահայերէնը մինչեւ իսկ բարբառ նկատող մօտեցումը մերձեցման հնարաւորութիւնները նուազագոյնի իջեցուցին: 1970ականներուն՝ վերաբերմունքին մէջ բան մը փոխուեցաւ ու հետզհետէ աւելի սրեցաւ մերձեցման անհրաժեշտութիւնը:

2) Ինչպէ՞ս կը պատկերացնէք այդ մերձեցումը՝ 1) քերականութեան, 2) բառապաշար/բառիմաստի, 3) եզրոյթներու, 4) ուղղագրութեան ոլորտներուն պարագային:

Քերականութեան մէջ հիմնական տարբերութիւնները կ'երեւին բացառական հոլովի կազմութեան *(է/մէ/կէ>ից/ուց)*, արեւելահայերէնի ներգոյական հոլովին *(ում)*, խոնարհման համակարգէն՝ ժամանակներու *կազմութեան (գրում եմ, գրում էի, գալիս եմ. գալիս էի>կը գրեմ, կը գրէի, կու գամ, կու գայի. գրել եմ, գրել էի>գրած եմ, գրեր եմ, գրած էի, գրեր էի)*, քերականական իմաստներու *(պիտի գրեմ. արեւլ.՝ հարկադրական եղանակ, արեւմտ.՝ բացարձակ ապառնի, կը գրեմ՝ արեւլ. պայմանական եղանակ, մինչ*

արեւմտ.՝ նաեւ ներկայ բոլոր երանգներով), ժխտական դերբայի կազմութեան եւ ժխտական խոնարհումի մէջ *(չի գրում>չի գրեր)*: Արեւելահայերէնը ունի բայական երկու լծորդութիւն *ել, ալ,* մինչ արեւմտահայերէնը երեք՝ *ել, իլ, ալ:* Արեւելահայերէնի ներգործական բոլոր բայերը կրաւորական կ'ըլլան *ուել* վերջաւորութեամբ՝ *սիրել-սիրուել,* մինչ արեւմտահայերէնը (ուիլ) տակաւին կը պահէ գրաբարակերպ կրաւորականով բայերու երկար շարք՝ *վառել-վառուել՝ արեւլ., վառել-վառիլ՝ արեւմտ.*: Ստեղծուած է շարահիւսական տարբերութիւն, արեւմտահայերէնը ունի միայն հայցական հոլովով ուղիղ խնդիր, մինչ արեւելահայերէնի մէջ անոր կողքին անձի առման պարագային ստեղծուած է տրականաձեւ ուղիղ խնդիր մը եւս *(կը սիրեմ մայրս>սիրում եմ մօրս)* եւն.:

Կարելի է զսպանակել լեզուական հակոտնեայ երեւոյթները: Այդտեղ դրական շատ բան կատարուած է յանուն մերձեցման, օրինակ *կոր* ձեւոյթը արեւմտահայերէնը չէ ընդունած գրականին մէջ, երկու տարբերակներն ալ մերժած են յոգնակի ստացականութեան ձեւերը՝ *գիրքերնիս-գրպաննիս> հոգներս,* երկու գրականներն ալ մերժած են մակբայանիշ ցուցական դերանուններու իրենց ձեւերը՝ *սանց, նենց, դենց>ասանկ, ատանկ, անանկ* եւ անցած ընդհանուր հայերէնեանին՝ այսպէս, այդպէս, այնպէս, արեւմտահայերէնը գրականին մէջ կը փորձէ խուսափիլ *հոս-հոսկէ, հոն-հոնկէ* ձեւերէն ու որդեգրել ընդհանուր հայերէնեանը՝ *այստեղ, այդտեղ, այնտեղ* եւն.: Արեւելահայերէնի մէջ էական բայի եզակի Գ. դէմքի խօսակցական ա տարբերակը փորձ կը կատարուի հեռու պահել գրականէն՝ *գրում է>գրում ա:*

Բառապաշարային տարբերութիւնները կարելի է խմբաւորել հետեւեալ կերպ՝ ա) հնչիւնափոխական տարբերակներով՝ *ճանչնալ-ճանաչել, մսիլ> մրսել* բ) միայն մէկին յատուկ բառերով՝ *արեւմ. աղէկ, աղուոր, արեւլ.՝ հենց,* գ) առաւելաբար անոնցմէ մէկուն հարազատ բառերով՝ *ճերմակ-սպիտակ,* դ) իմաստային տարբերութեամբ՝ *ձգել. արեւլ.՝ քաշել, արեւմտ, թող տալ:* Արեւելահայերէնը աւելի բաց եղած է ռուսերէն, վերջերս նաեւ անգլերէն եզրոյթներու տառադարձմամբ օգտագործման եղանակին, իսկ արեւմտահայերէնը անհրաժեշտութեան պարագային դիմած է ֆրանսերէնին, նաեւ անգլերէնին, բայց առաւելաբար տարբեր եղանակներով ինքնաստեղծ հայերէն եզրոյթներ առաջարկած: Բաղաձայնական համակարգերու տարբերութիւնը օտար եզրոյթներու պարագային մեծ պատնէշ կը ստեղծէ մեր գրականներուն միջեւ՝ *պանք-բանկ, ամպիոն-ամբիոն:* Զգօն մարդիկ ճիգ կը թափեն արեւմտահայերէնի ստեղծած բառապաշարէն օգտուելու:

Պէտք է ըսել, որ միասնական ուղղագրութեան հարցով կիրքերը աւելի կը խօսին, քան միտքերը: Միասնական ուղղագրութեան անցնելու ճիգերը չեն արդիւնաւորուած: Արեւելահայը կը սարսափի աւանդական ուղղագրութեան վերականգնելու խօսակցութենէն, մինչ ուղղագրական համակարգերու տարբերութիւնը մեծագոյն խոչընդոտ է երկու գրականներու մերձեց-

ման առջեւ: Երբեք չէ քննուած կամ լսելի չեն եղած, թէ աւանդական ուղղագրութեան ո՛ր տարրերը կարելի է վերականգնել տակաւին եւ որո՛նք մերժել միասնական ուղղագրութեան մը պարագային:

3) Նման մերձեցում մը դրակա՞ն, թէ՞ ժխտական ներգործութիւն պիտի ունենայ երկու լեզուներուն վրայ, ինչու՞:

Անկասկած դրական է:

Ես չեմ հասկնար, թէ ընդհանուր հայերէնեան տարրերու պահպանումը եւ նոր տարրերու որդեգրումը ինչպէ՛ս կրնայ ժխտական ներգործութիւն ունենալ գրական երկու տարբերակներուն վրայ: Այդպէս բան չի կրնար ունենալ, եթէ անհրաժեշտութեան պարագային ճիշտ ընտրութիւն կատարուի ու ընթացք տրուի մամուլի եւ հաղորդակցութեան այլ միջոցներու միջոցով:

4) Ի՞նչ թելադրանքներ-գործնական քայլեր կ'առաջարկէք՝ իրականացնելու այդ մերձեցումը (եթէ անհրաժեշտ կը նկատէք զայն):

Հակառակ արեւելահայերէն-արեւմտահայերէն մերձեցման շուրջ ծաւալած մեծ աղմուկին եւ հակառակ անոր որ ներկայիս երկու զանգուածներու շփումը շատ սերտ է եւ ամէնօրեայ, մերձեցման ուղղութեամբ հիմնարար աշխատանքներ գրեթէ չեն երեւիր: Այստեղ բաներ կան, որ պէտք է շարունակուին, բաներ կան, որ պէտք է սկսիլ:

-Ցանկալի է, որ ինչպէս Սփիւռքի մէջ, այդպէս ալ հայրենիքի մէջ երկու գրական լեզուները շարունակեն հնչել թատերական եւ գրական ձեռնարկներու բեմերուն վրայ, դասագիրքերու մէջ, լրատուական միջոցներու խողովակով;

- Բանասիրական հիմնարկի արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի զուգադրական քերականութեան առկայ կէս տարեշրջանի ուսուցման եղանակը հիմնովին փոխել: Երկուքը միասնաբար տալ ի սկզբանէ՝ իբրեւ արդի հայերէնի քերականութիւն: Նոյնը ընել Սփիւռքի հայագիտական ամբիոններու մէջ:

- Տարածել արեւմտահայ մամուլն ու գիրքը հայրենի շրջանակներուն մէջ:

- Արեւմտահայերէնի առջեւ ահմանափակումներ չդնել հայրենի գիտական մամուլին մէջ:

- Հայաստանի մէջ մեծ արտօնութիւններ տալ լեզուի գերագոյն տեսչութեան մը: Տեսչութեան մէջ հաւասար հիմունքներով զբաղիլ նաեւ արեւմտահայերէնի հարցերով. կազմին մէջ ապահովել արեւմտահայերէնի մասնագէտներու առկայութիւնը:

- Հայաստանի հանրակրթական դպրոցներու, նախակրթարանէն սկսեալ, արեւմտահայերէնը պէտք է իր բաժինը ունենայ, ինչպէս արեւելահայերէնը ունեցած է եւ ունի սփիւռքահայ դասագիրքերու մէջ: Դպրոցականը նախակրթարանին մէջ քայլ առ քայլ պէտք է վարժուի կարդալ ա-

ւանդական ուղղագրութեամբ հակիրճ գրութիւնը, ճանչնալ օրինաչափութիւնները, ճանչնալ արեւմտահայերէնի տարբերութիւնները, վերածումներ կատարել: Ասիկա պիտի օգնէ որ արեւմտահայ հրատարակութիւնը չօտարուի հայրենիքին մէջ: Միջնակարգի վերի կարգերուն արեւմտահայերէն գրական դէմքերու յատկացումը (նոր ուղղագրութեամբ) շատ ուշ է: Արեւմտահայաերէնը Հայաստանի դպրոցականին համար օտար լեզու պէտք չէ նկատուի:

- Սփիւռքի կարգ մը գաղութներու մէջ նկատուած է արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը կրող աշակերտութեան բաժանում: Տխուր ու անճարակ փաստ է: Հոս է որ ելք կը սպասուի դասագիրքի հեղինակներէն եւ ուսուցիչներէն:

- Հասարակական, բնական եւ ճարտարագիտական գիտութիւններու համար հրատարակուած հայերէն բուհական եւ դպրոցական բոլոր դասագիրքերը, մեծաւ մասամբ թարգմանաբար, կը վխտան օտար բառերով: Թարգմանիչ-հեղինակ մասնագէտը իբրեւ եզրոյթ բառը կը բերէ տառադարձմամբ ու շատ քիչ անգամ կը նկատուի անոր հայերէն համարժէքը գտնելու ճիգ: Կը խորհիմ, որ հայերէն համարժէքներու բացատրական բառարանները անհրաժեշտ արդիւնքը տալ չեն կրցած: Անհրաժեշտ են **օտար լեզուներ-հայերէն** մասնագիտական բառարաններ, մինչեւ իսկ **բազմալեզու** (ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն...ապա հայերէն հոմանիշեր՝ համարժէք քննութեամբ): Նման առցանց բառարանները մեծապէս պիտի օգնեն դասագիրքերու հեղինակներուն, ուսումնասիրողներուն եւ լրատուներուն ճիշտ կողմնորոշուիլ ու ընտրել յարմարագոյնը: Եղածները անբաւարար են:

-Մենք տակաւին չենք իրագործած ընդհանուր հայերէնեան (գրաբար, միջին հայերէն, արեւելահայերէն, արեւմտահայերէն) բառապաշարի համահաւաք առցանց բառարան մը, ուր իւրաքանչիւր բառ տրուած ըլլայ իր պատկանելիութեամբ. հնչիւնաբանական, բառագիտական, իմաստաբանական, ձեւաբանական եւ շարահիւսական լրիւ պատկերով եւ կիրառութիւններով: Սա լեզուաբաններու մեծ խմբակի մը գործն է, եւ սպասելի է, որ նեցուկ ունենայ:

ISSUES RELATED TO CLOSING UP/REDUCING THE GAP BETWEEN THE EASTERN AND WESTERN ARMENIAN LANGUAGES

(Summary)

In an attempt to better focus on the main issues concerning the gap between the Eastern and Western Armenian languages and to highlight the steps needed to reduce this gap the *Haigazian Armeniological Review* interviewed four outstanding Armenian linguists.

This paper is a compilation of the answers Drs. Yuri Avetissyan, Hagop Cholakian, Hagop Gulludjian and Armenag Yeghiayan gave to the following four questions: a) How do you define the drawing together of the Eastern and Western Armenian languages? b) How do you envision this proximation in terms of grammar, vocabulary/sementics meaning, terminology, and orthography? c) Do you think such a proximation may have a negative or positive impact on both languages, why? d) What suggestions/practical steps do you propose to realize this proximation (in case you find it necessary)?

LETTERS TO DIGNITARIES AND PUBLICATIONS ON THE ARMENIAN GENOCIDE ISSUE AND THEIR RESPONSES (PART II)[1]

ZAVEN MESSERLIAN

22.

Honorary Principal

February 28, 2020

The Rt. Honourable
Boris Johnson
Prime Minister of the United Kingdom
of Great Britain and Northern Ireland
10 Downing Street
London

Your Excellency,

Recently the U.S.A Senate and before it the House of Representatives recognized the Genocide of Armenians perpetrated by the Ottoman Turkish government during 1915-1923. The USA thus joined Canada, France, Germany, Italy, Poland, Portugal, Netherlands, Belgium, Luxembourg, Greece, Vatican, Sweden, Switzerland, Austria, Russia and 15 other European, Middle Eastern and South American states, all of whom have recognized the Armenian Genocide.

Among the major states of the world the United Kingdom is singled out, among those who have not yet recognized the veracity of the Genocide perpetrated on the Armenians.

In my opinion there are legal and moral reasons, as to why the United Kingdom should be among those states which have recognized the Genocide perpetrated on the Armenians.

Legal reasons:

a) The Armenian genocide was termed as "Crimes against humanity" in 1915, in an Allied warning to the Ottoman government on May 24, 1915. This Allied warning and Article 230 of the Treaty of Sevres, constituted the legal basis of articles 6 (c) and 5 (c) of the Nuremberg and Tokyo charters for trying the World War II criminals (U.N. restricted document E/CN.E/W.20 and F.O. 371/72810).

b) The genocide perpetrated on the Armenians was exposed to the world, essentially by the British *Blue Book. The Treatment of Armenians in the Ottoman Empire* (Miscellaneous No. 31. (1916).

[1] For the first part of this paper refer to Zaven Messerlian, "Letters to Dignitaries and Publications on the Armenian Genocide Issue and their Responses (Part I)", *Haigazian Armenological Review*, 42/1:2022, pp. 81-112.

The genocide was successful in that there are no Armenians left on the Armenian plateau, (now within Turkey) our ancestral homeland for three millenniums. The native Armenians were either massacred, starved to death, burnt alive, and deported. Former British Pr. Minister, Sir Winston Churchill, wrote: "In 1915, the Turkish government began and ruthlessly carried out the infamous general massacre and deportation of Armenians in Asia Minor ... the clearance of the race from Asia Minor was about as complete as such an act, on a scale so great, could well be ... There is no reasonable doubt that the crime was planned and executed for political reasons." (W. Churchill, *The World Crisis; The Aftermath*, (London, 1929), p. 405).

c) The Ottoman Turkish government officially promulgated the Deportation Law on May 26, 1915, after the massacres had already begun and continued after the above law. British intelligence found out from an Ottoman prisoner of war, Lt. Sayied Ahmed Moukhtar Ba'aj that "deportation" meant "massacre" (F.O. 371/2781/264888 Secret Arabian Report of the Foreign Office dated December 27, 1916). In a letter dated October 3, 1918 and addressed to Lord Bryce, Robert Cecil, British Assistant, Secretary of State for Foreign Affairs, wrote: "The Ottoman Armenians were systematically murdered by the Turkish Government in 1915. Two-thirds of the population were exterminated by the most cold blooded and fiendish methods ... "

d) The post-war Ottoman government set up the Mezher Parliamentary Committee to investigate the mass murder of Armenians and tried the Young Turkish leaders in the Imperial Military War Tribunal and condemned the chief perpetrators to death in absentia for the "premeditated mass murder" of Armenian subjects of the Ottoman Empire, and had 3 of their subordinates executed after their condemnations to death.

e) Even the ambassadors of the war time allies of the Ottoman Empire, Imperial Germany and the Austria-Hungarian Empire sent secret reports respectively to Berlin and Vienna clearly stating the terrible premeditated plan of the extermination of a subject people of the Ottoman Empire. Below is such a report by Ambassador Hohenlohe "The systematic butchery of the uprooted and deported Armenians have assumed such a scope ... It wasn't only tolerated but openly promoted by the government. It meant extermination of the Armenians" (Die Ausrottung der Armenier) Turkei 183/38. A 24507, 12 August 1915). The Austro-Hungarian Ambassador Pallavicini, informed Vienna, "The Armenian population which is being expelled from its homeland is not only being subjected to the greatest misery but also to a total extermination" (12 Turkei/209/, No. 50/P.C. 27 June 1915).

[38] Թղթակից, «Ֆրանսահայ շրջաններու մէջ "Երեւանի նոր թութակը"», *Ասպարէզ,* 25 Սեպտեմբեր 1931, էջ 1-2:

նը յիշելու) եւ Զապէլ Եսայեանի պատասխանին մասին: Արդարեւ, յօդուածագիրը դիտումնաւոր կերպով անոնց խառնած էր Հայաստանի կարգ մը գրողներու (Դերենիկ Դեմիրճեան, Ստեփան Զօրեան, Գուրգէն Մահարի, Վահրամ Ալազան եւ Ակսէլ Բակունց) արտասահման յղած բողոքագիրերը, որոնք կը դատապարտէին դաշնակցական թերթերու կողմէ անոնց գործերուն արտատպումը: Մէջբերելէ ետք *Յառաջի* ենթադրեալ արդարացումը («*հարկադրանքի եւ ճնշման տակ եղած է այդ բողոքը*»), անոր ճարպիկ կերպով խառնած էր Իսահակեանին դէմ ուղղուած Արծրունիի յօդուածին հետեւեալ խօսքերը, ստեղծելով այն տպաւորութիւնը, թէ անոնք կապ ունէին այդ բողոքագիրերուն հետ. «*Ապա ինչպէ՞ս բացատրել [sic][39] մի Աւետիք Իսահակեանի արարքը, որը գործում է ազատ պայմաններում միանգամայն զերծ լինելով հարկադրանքից ու ճնշումից*»[40]:

Իսահակեանի ու Վրացեանի անձնական յարաբերութեան ամբողջական խզումին խօսուն վկայութիւն մըն է Իսահակեանի՝ 1933ին Կարէն Միքայէլեանին ուղղուած նամակի մը մէկ պարբերութիւնը, որ կ'ակնարկէր 1931-33ին *Հայրենիք* ամսագրին մէջ լոյս տեսնող Կոստան Զարեանի *Բանկօօպը եւ մամութի ոսկորները* վէպին: Այս պարբերութիւնը միայն վերջերս վերականգնուած է նամակի նոր հրատարակութեան մէջ. «*Կոստան Զարեանը շարունակում է ծաղրել, հայհոյել Խ[որհրդային] Հայաստանի, նրա գործիչներին, նրա բարեկամներին, եւ Դաշնակցութիւնը հիացած է նրանով: **Բոլոր սրիկաների մեծ սրիկան՝ Ս. Վրացեանը**, նրան հանճար է անւանում*»[41]:

Այս միջադէպին ուրիշ արձագանգներ եղած ըլլալու են Ֆրանսայի թէ այլ համայնքներու մամուլին մէջ: Օրինակ՝ «Մամուլ» սիւնակին մէջ, Գահիրէի *Արեւը* արտատպած է Արծրունիի յօդուածին Իսահակեանի վերաբերող մասը հետեւեալ ծանօթագրութեամբ. «*Զգուանքով կը կարդանք հետեւեալ տողերը որ ուղղուած են Դաշնակցութեան նախկին փառքերէն Աբու Լալա Մահարիի հեղինակին՝ Աւետիք Իսահակեանի դէմ որ “մեղքը” գործեց Հայաստանի իշխանութիւնը ճանչնալու...*»[42]:

Ինչպէս յայտնի է, տարուէ-տարի իր մեկնումին ակնարկելէ ու ինչ-ինչ պատճառներով յետաձգելէ ետք, 1936ին Իսահակեան իր ընտանիքին հետ

---

[39] Արծրունի գրած էր՝ «արդարացնել»:

[40] Կարմիր, «Կարմիր կայծեր», *Բանւոր,* 19 Սեպտեմբեր 1931, էջ 3: Սիւնակագիրը Խարբերդ ծնած յոյն լրագրող Վասիլ Եորկիատիսն էր (1902-85), որ *Բանւորի* մէջ նաեւ երեւցած է Վ. Զաւէն ծածկանունով (Բ. Մ. Յովակիմեան, *Հայոց ծածկանունների բառարան,* ԵՊՀ հրատ., Երեւան, 2005, էջ 216):

[41] *Աւետիք Իսահակեանի նամակները,* էջ 273 (ընդգծումը մերն է): Նամակի առաջին հրատարակութեան համար, տե՛ս՝ Ա. Ադամեան, «Աւետիք Իսահակեանի նամակները Կարէն Միքայէլեանին», *Պատմաբանասիրական հանդէս,* 2:1973, էջ 240:

[42] «Այլեւս կը բաւէ», *Արեւ,* 12 Օգոստոս 1931, էջ 2, ուր Արծրունիի յօդուածը սխալմամբ թուագրուած է 28 Յուլիս:

վերջնականապէս վերադարձած է Հայաստան, ուր պարբերաբար հաւատարմութեան տուրքեր պիտի վճարէր ստալինեան վարչակարգին: Իր կարգին, 1937ի սկիզբներուն Արծրունի - իբրեւ գործիչ ղրկուած Արժանթին – այնտեղ շարունակած է հանրային եւ հրապարակագրական գործունէութիւնը մինչեւ կեանքին վերջը, ըլլալով Պուենոս Այրէսի *Արմենիա* երկօրեայի (1941) եւ օրաթերթին (1968-71) խմբագիրը եւ 1943ին հրատարակելով *Հարաւ. ամերիկահայոց տարեցոյցը*՝ շրջանի համայնքներուն մասին արժէքաւոր տեղեկութիւններով:

Իսահակեանի ու Արծրունիի ճանապարհները նորէն պիտի խաչաձեւէին առաջինի տուրքերէն մէկուն առիթով: Արդարեւ, Բ. աշխարհամարտի օրերուն, կարգ մը դաշնակցական գործիչներու կապերը Գերմանիոյ նացիական վարչակարգին հետ պատճառ հանդիսացած են, որ 1943ի սկիզբին, Մոսկուայէն արտասահման ուղարկուէր Իսահակեանի ստորագրութիւնը կրող յօդուած մը: Յօդուածը առաքուած էր Նիւ Եորքի Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան *Լրաբեր* երկօրեային, ուր լոյս տեսած է «*Մասնաւոր անթել Մոսկվաէն Լրաբերին*» վերտառութեամբ[43], ՌԱԿ Ֆրեզնոյի *Նոր օր* շաբաթաթերթին[44] եւ Պէյրութի յառաջդիմական *Ժողովուրդի ձայն* օրաթերթին[45]: Առաջին երկու թերթերը յօդուածը եւ անոր յարակից նիւթեր հրատարակած են նաեւ առանձին գրքոյկներով[46]:

Երեք ամիս ետք, ՀՅԴ Բիւրոյի անդամ տոքթ. Համօ Օհանջանեան *Յուսաբեր*ի մէջ տպուած բաց նամակով պատասխանած է Իսահակեանին[47], եւ յօդուածը այնուհետեւ կուսակցական գրավէճի նիւթ դարձած է: Նոյն տարուան Դեկտեմբերին, Արծրունի, որ Պուենոս Այրէս հաստատուելէ ետք անցած էր արեւմտահայերէնի գործածութեան իր հրապարակագրութեան մէջ, անդրադարձած է Իսահակեանի նամակին *Արմենիա*յի մէջ, կատարելով նաեւ անոր 1920-30ականներու գործունէութեան ամփոփումը, որ սկսած է հետեւեալ ծանրակշիռ մեղադրանքով.

> Ա.- 1924-1925ին Փարիզի մէջ տեղի ունեցաւ Հ. Յ. Դաշնակցութեան 10րդ Ընդհանուր Ժողովը, որուն կը մասնակցէի որպէս Հայաստանի պատգամաւոր: Այդ ժողովին մէջ քննութեան առնուեցաւ Աւետիք Իսահակեանի խնդիրը, որ պետական եւ կուսակցական խոշոր գումարներ իւրացուցած էր եւ կը հրաժարէր վերադարձնելու առ որ անկ է: Այդ անպատուաբեր արարքին համար Ա. Իսա-հակեան

---

[43] Աւետիք Իսահակեան, «Արկածախնդիրները», *Լրաբեր,* 8 եւ 12 Յունուար 1943:

[44] Աւետիք Իսահակեան, «Արկածախնդիրները», *Նոր օր,* 15 եւ 22 Յունուար 1943:

[45] *Ժողովուրդի ձայն,* 27 եւ 28 Յունուար 1943 (Զաւէն Մսըրլեան, *Հայերը համաշխարհային Բ. պատերազմին,* «Սիփան» հրատ., Պէյրութ, 2020, էջ 294):

[46] Աւետիք Իսահակեան, *Արկածախնդիրները,* հրատ.՝ Ամերիկահայ Յառաջդիմական Միութեան, Նիւ Եորք, 1943 (յօդուածը՝ էջ 3-12). Նոյն, *Արկածախնդիրները,* տպ. «Նոր օր», Ֆրեզնօ, 1943 (յօդուածը՝ էջ 5-13): *Նոր օր*ի հրատարակութեան մէջ տպուած է 24 էջնոց հեռագրին առաջին էջը:

[47] Մսըրլեան, էջ 295:

հինգ տարիով կախակայուեցաւ կուսակցական շարքերէն: Եւ եթէ կուսակցութիւնը այդքան մեղմ գտնուեցաւ, պարզ այն պատճառով, որ հայ ժողովուրդին խնայուեցաւ իր բանաստեղծը[48]:

Այս մեղադրանքը թերեւս 1918-20 ժամանակաշրջանին կապուած էր, իսկ վկայութեան ստուգումը կը սպասէ վաւերաթուղթերու լոյսին, քանի որ մեզի յայտնի տպագիր այլ աղբիւրներ ամբողջութեամբ լուռ են: Շարունակութեան մէջ, Արծրունի որոշ մանրամասնութիւններ հայթայթած է 1930-31ի Իսահակեանի եւ իր անձնական դիրքորոշումներուն մասին, մերժելով, որ *Յառաջի* յօդուածը գրուած ըլլար պատուէրով եւ յիշելով անոր հանդէպ եղած ներքին հակազդեցութիւնը.

Բ.- Այդ որոշումէն վերջ, Ա. Իսահակեան մեկնեցաւ Հայաստան, ուր որոշ ժամանակ մը մնալէն յետոյ, կրկին վերադարձաւ Փարիզ: Այդ ատեն ես ալ Փարիզ կը գտնուէի: Չեմ ուզեր հրապարակել բոլոր այն կարծիքները, որ Ա. Իսահակեան կը յայտնէր Հայաստանի մէջ տիրող կարգերու եւ խորհրդային վարիչներու մասին: Միայն այսքանը մատնանշեմ, որ գրեթէ ամէն օր կ'այցելէր կուսակցութեան կեդրոնը եւ կը համոզէր մեր ղեկավար ընկերները, որ նիւթական պայմաններ ստեղծեն իրեն արտասահման մնալու, քանի որ այլեւս չուզեր վերադառնալ Հայաստան[49]:

Շատ բնական էր, որ Ա. Իսահակեան մտահոգուէր իր ապրուստով: Սակայն անբնականը այն էր, որ նոյն միջոցին Իսահակեան յար եւ նման բանակցութիւններ կը վարէր նաեւ Խորհրդային Հայաստանի ներկայացուցիչներուն հետ: Երբ այդ բանը յայտնի դարձաւ, այլեւս չկրցայ հանդուրժել եւ "Յառաջ"ի մէջ յօդուածով մը պատռեցի անոր դիմակը: Այդ գրութեան համար որոշ ընկերներէ եւ կարգ մը ղեկավարներէ ալ խիստ յանդիմանութեան արժանացայ:

Ա. Իսահակեան ենթադրելով թէ այդ յօդուածը գրուած է մեր ղեկավարներու թելադրութեամբ (ինչ որ հիմնովին սխալ էր), նամակներով խիստ բողոքեց կուսակցութեան վարիչներուն եւ "Յառաջ"ի խմբագրութեան: Այդ օրէն իսկ ան իր բոլոր կապերը խզեց Դաշնակցութեան հետ եւ շուտով վերադարձաւ Հայաստան[50]:

---

[48] Աշոտ Արծրունի, «Աւետիք Իսահակեանի մասին», *Արմենիա,* 14 Դեկտեմբեր 1943, էջ 2:

[49] 1960ականներուն, Վրացեան գրած է, թէ «*նա չէր ծածկում, որ եթէ կարողանայ արտասահմանում մնայուն եկամուտ ունենալ, չի երթայ Երեւան*» (Վրացեան, էջ 336), մինչ Ռ. Դարբինեան պնդած է, թէ *«Աւետիք Իսահակեանը պիտի չվերադառնար Հայաստան, եթէ ամսական 30-40 փոլար խոստանայի իրեն, Ամսագրին բերած իր աշխատակցութեան համար: Գումար մը, զոր չէի կրնար երաշխաւորել, այդ օրերուն»* (Խոսրով Ներսէսեան, «Ռուբէն Դարբինեան (Արտաշէս Չիլինգարեան)», *Հայրենիք,* 8 Դեկտեմբեր 1979, էջ 1):

[50] Արծրունի, «Աւետիք Իսահակեանի», էջ 2: Սեպտեմբեր 1933ին, Իսահակեան գրած է Ժողկոմխորհի քարտուղար Արմենակ Թոքմաջեանին. «*Միակ մարդն եմ Խորհրդային Հայաստանը ներկայացնող, իբրեւ սովետական քաղաքացի, իբրեւ Կենտգործկոմի անդամ եւ իբրեւ բնիկ Խորհրդային Հայաստանցի: ՀՕԿ-ի վարչութեան փոխնախագահն եմ, Ներգաղթի ֆոնդի մարմնի փոխնախագահն եմ եւ*

Իսահակեանի վերոյիշեալ բողոքի նամակներէն միայն յայտնի է 29 Օգոստոս 1931ի նամակը Վահան Նաւասարդեանին.

Ինձ ասացին, որ իմ դէմ բան ես գրել թերթիդ մէջ. դեռ չեմ կարդացել: Սակայն, ցաւում եմ, որ դու էլ ընկար "Յառաջ"ի պրովոկացիայի մէջ՝ Ս...ի կողմից յիմարաբար եւ նենգաբար կազմուած:

Մանրամասների մասին գրիր իմացիր Ռուբէնից, Աբրահամից, Ջամալեանից[51]:

Ս...ը գլուխը կորցրել է՝ ձգտելով զանազան ուղիներով կուսակցութեան գլուխ դառնալ[52]:

Թերեւս Իսահակեան աչառու տեղեկատուներու զոհը գացած է, քանի որ *Յուսաբեր*ի Յուլիս եւ Օգոստոս 1931ի թիւերուն մէջ անոր մասին որեւէ յօդուած չկայ: Ան իրարու կապած ըլլալու էր Վրացեանի բանաձեւած պահանջը եւ, իր խուսափողական պատասխանէն ետք, անոր յաջորդած Արծրունիի յօդուածը, վերջինը վերագրելով Վրացեանի դրդումին[53], որուն անունը, մեծ հաւանականութեամբ, «Ս...»ի վերածուած էր նամակի տպագրութեան ընթացքին:

Իր հրապարակագրական գործունէութեան կողքին, Արժանթին տեղափոխուելէ ետք Արծրունի վառ պահած էր իր հետաքրքրութիւնը հայոց պատմութեան հանդէպ, յօդուածներ հրատարակելով *Արմենիայ*ի, ինչպէս եւ *Հայրենիք* ամսագրին եւ օրաթերթին մէջ: Աւելի՛ն. ձեռնարկած է գրելու հայոց պատմութեան հատոր մը, որմէ հատուածներ լոյս տեսած են *Հայրենիք* ամսագրին մէջ 1950ականներուն, եւ *Historia del pueblo armenio* (Հայ ժողովուրդի պատմութիւն) խորագրով հրատարակուած է 1965ին, հեղինակի որդիին՝ Ռուբէն Արծրունիի (Սիրուեան) սպաներէն թարգմանութեամբ[54]: Գիրքը լայն ժողովրդականութիւն վայելած է, հանդիսանալով հայոց պատմութիւնը սպանախօս ընթերցողին ներկայացնելու համապարփակ ու միաժամանակ հանրամատչելի բնոյթ ունեցող առաջին փորձ մը: Մանր յաւելումներով, յաջորդաբար երկու անգամ վերատպուած է (1971 եւ 1978), ինչպէս եւ փորթուկալերէնի թարգմանուած (1976): 2010ին, Ռ. Արծրունի գիրքը լոյս ընծայած է իր կողմէ կատարուած թարմացումով[55]:

ուրիշ մանր ու խոշոր բաների նախագահ, գանձապահ, "ՀՕԿ" ամսագրի խմբագրական կոլեգիայի անդամ եւ այլն եւ այլն» (Բեհբուդեան, Յովսէփեան, էջ 29):

[51] Նկատի ունի դաշնակցական գործիչներ Ռուբէն Տէրմինասեանը (1882-1951), Աբրահամ Գիւլխանդանեանը (1874-1945) եւ Արշակ Ջամալեանը (1882-1940):

[52] *Աւետիք Իսահակեանի նամակները Վ. Նաւասարդեանին,* էջ 25:

[53] 1931ին, Արծրունի երկու նամակ գրած է Վրացեանին, որոնց մէջ որեւէ ակնարկութիւն չկայ այս հարցին (Համազգայինի կեդրոնական արխիւ, Սիմոն Վրացեանի թողօն, հաւաքածոյ 3, ցուցակ 1, թ. 112):

[54] Ashot Artzruní, *Historia del pueblo armenio,* traducción de Rubén Sirouyán, Fundación Ararat, Buenos Aires, 1965:

[55] Ashot Artzruní, *Historia del pueblo armenio,* traducción y actualización de Rubén Sirouyán, Barcelona, Sirar Ediciones, 2010.

Այդ հետազօտական ծրագրին առնչութեամբ, Արծրունի գրած է Իսահակեանին ուղղուած նամակները, զորս ստորեւ կը հրատարակենք անհրաժեշտ ծանօթագրութիւններով: Ան դիմած էր իր երբեմնի մտերիմ աւագ կուսակցական ընկերոջ, ակնկալելով ձեռք բերել խորհրդահայ պատմաբան Գրիգոր Միքայէլեանի՝ Կիլիկիոյ հայկական պետութեան մասին ռուսերէն աշխատութիւնը, որ իրեն անհասանելի մնացած էր: Դատելով երկրորդ նամակի բովանդակութենէն, հաւանական է, որ իր կեանքի վերջին տարին թեւակոխած Իսահակեանը որեւէ գրաւոր պատասխան ղրկած չըլլայ, ուր ապահովութեան նկատառումներ ալ կրնան դեր ունեցած ըլլան:

Կ'ենթադրենք, որ պատերազմական վիճակէն բխած հաղորդակցութեան խզումին պատճառով, Արծրունիի 1943ի յօդուածը անծանօթ մնացած էր Իսահակեանին (եւ թերեւս հայաշխարհին ընդհանրապէս): Սակայն, ծերունազարդ բանաստեղծին կողմէ անոր գործնական խնդրանքին լուռ ընդառաջումը՝ Միքայէլեանի գիրքին ուղարկումով, արժանթինաբնակ հրապարակագրին հայցած «բարութեան եւ ներողամտութեան» լռելեայն դրսեւորում մըն էր նաեւ, որ ցոյց կու տար, թէ ժամանակը յաջողած էր դարմանել կամ ամոքել անցեալի վէրքերը:

Ա.

18 Սեպտեմբեր 1956
Բուէնոս Այրէս

Յարգելի վարպետ,

Ծերութիւնը, մարմնացումն է բարութեան եւ ներողամտութեան: Հետեւաբար խորապէս համոզուած եմ, որ մոռացել էք այն միջադէպը, որ քսան տարի առաջ տեղի ունեցաւ Փարիզում: Եւ աւելի քան հաւատացած եմ, որ պիտի չմերժէք խնդրանքս:

Կարծեմ 1952-ին լոյս տեսաւ Միքայէլեանի[56] «Истории Армянское Киликийское Государство»[57] պատմական ուսումնասիրութիւնը: Բուռն փափաք ունեմ այդ գրքից մէկ օրինակ ձեռքիս տակ ունենալ: Քանիցս Հայաստան եկող վերադարձողներին խնդրել եմ այդ երկը բերել, բայց չեն կարողացել գտնել: Միակ յոյսս դուք էք: Ուստի թախանձագին խնդրում եմ որեւէ կերպ մէկ օրինակ ճարել եւ մեր շատ սիրելի եւ համակրելի Սրբազանի հետ[58] ուղարկել: Փոխարէնը պատրաստ եմ Ձեր ուզած գիրքը կամ որեւէ բան ուղարկել:

---

[56] Գրիգոր Միքայէլեան (1893-1953), խորհրդահայ պատմաբան:

[57] Г. Г. Микаелян, *Истории Армянское Киликийское Государство* (Պատմութիւն Կիլիկիոյ հայկական պետութեան), ՀՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի հրատ., Երեւան, 1952 (հայերէն թարգմանութիւն՝ Երեւան, 2007):

[58] Կ'ակնարկէ Սիոն արք. Մանուկեանին (1908-86), որ այդ տարիներուն Հարաւային Ամերիկայի հայրապետական պատուիրակն էր (1952-59):

Օգտուելով առիթից, պիտի խնդրէի յայտնել իմ խորին յարգանքներս տիկ. Սոֆիային[59] եւ ամուր գրկել Վիգէնին[60]: Ձեզ էլ մաղթում եմ երկար տարիների կեանք եւ առողջութիւն, որպէսզի հայ բանաստեղծութեան արքայական գահը թափուր չմնայ:

Մեր մասին կը պատմի Ս[րբազան] Հայրը: Լիան[61] դասաւանդում է Պետական կոնսերվատորիայում, իսկ Ռուբէնն[62] էլ իրաւաբանութիւն ուսանելուց յետոյ պաշտօնավարում է ֆրանս[ական] բանկում:

Յարգանօք՝ ԱՇՈՏ-ԱՐԾՐՈՒՆԻ

Բ.

31 Դեկտեմբեր 1956
Բուէնոս Այրէս

Սիրելի վարպետ,

Սիոն արք[եպիսկոպոս] Մանուկեանի միջոցով ստացայ[63] ուղարկածդ գիրքը՝ Ист[ории] Арм[янское] Килик[ийское] Государство: Անչափ շնորհակալ եմ եւ մեծապէս երախտապարտ: Փոխարէնը ուղարկում եմ մէկ նկար, որ նոյնչափ պիտի ուրախացնէ Ձեզ: Ինչպէս գիտէք, Լիայի հայրը[64] Ջաւոյի[65] եղբայրն է: Քրոջ մահից յետոյ, աներհայրս ներփակ նկարը ուղարկեց ինձ որպէս յիշատակ: Ենթադրում եմ, որ կէս դար առաջ լուսանկարուած էք[66]: Եթէ Դուք էլ ունէք այդ նկարից, ուրեմն այս մէկը յանձնեցէք այնտեղ, ուր որ յարմար նկատէք:

Դերենիկ Դեմիրճեանի[67] մահուան լուրը ցնցող տպաւորութիւն թողեց[68]: Անյայտացաւ հայ ժամանակակից մեծագոյն գրողներից մէկը: «ՎԱՐԴԱՆԱՆՔ»ը[69] գլուխ գործոց պատմավէպ է: Ըստ իս՝ լաւագոյնը մեր ամբողջ գրականութեան մէջ: Որքա՜ն հարուստ ու ճոխ բովանդակութիւն եւ ի՜նչ հոյակապ կառուցում: Միակ թերութիւնը ինձ համար՝ Վասակի նկարագիրը չափից աւելի վայրագ ու դաժան է

---

[59] Սոֆիա Իսահակեան (1882-1966), Ա. Իսահակեանի կինը:

[60] Վիգէն Իսահակեան (1910-2005), շարժապատկերի մասնագէտ, Ա. Իսահակեանի որդին:

[61] Լիա Ներսիսեան-Արծրունի (Սիրուեան) (1908-2000), մանկավարժ: Ժաք Տալքրոզի մեթոտը մուծած է Արժանթին:

[62] Ռուբէն Արծրունի (Սիրուեան) (ծն. 1931), հրապարակագիր, թարգմանիչ: Ա. Արծրունիի աւագ որդին: Կրտսերը՝ Րաֆֆի, մահացած է 1955ին, տասնհինգ տարեկանին:

[63] Սիոն արք. 12 Նոյեմբերին Ս. Էջմիածինէն հասած էր Սան Փաւլօ (Պրազիլ) (Յովհ. Տէօքմէճեան, «Տեսակցութիւն մը Սիոն արք.ի հետ», *Արմենիա,* 8 Դեկտեմբեր 1956, էջ 2), որմէ քանի մը օր ետք վերադարձած է իր նստավայրը՝ Պուենոս Այրէս:

[64] Արամ (Ալեքսանդր) Ներսիսեան (1874-1959), Լեւոն Շանթի աներձագը:

[65] Ջաւօ (Ջաւահիր) Ներսիսեան-Շանթ (1882-1945), հանրային գործիչ, Լեւոն Շանթի կինը:

[66] Կ'ենթադրենք, որ Իսահակեան եւ Ջաւօ Շանթ մաս կը կազմէին նկարին:

[67] Դերենիկ Դեմիրճեան (Դեմիրջօղլեան, 1877-1956), խորհրդահայ գրող:

[68] «Մահ Դերենիկ Դեմիրճեանի (1877-1956)», *Արմենիա,* 18 Դեկտեմբեր 1956, էջ 1:

[69] Դերենիկ Դեմիրճեան, *Վարդանանք,* Հայպետհրատ, Երեւան, 1943:

ցուցադրել, ինչ որ մարդկայնօրէն անբնական է դուրս եկել: Արդեօք, լրացրե՞լ էր «Մեսրոպ Մաշ-տոց»ը[70]...

Գալով Միքայէլեանի Կիլիկիոյ պատմութեան, անպայման արժէքաւոր եւ գիտական լուրջ ուսումնասիրութիւն է: Երկու պակասաւոր կողմեր նկատեցի.- Ա. Կիլիկիոյ բուն հայկական պատմութիւնը կորչում է արտաքին քաղաքական հարցերի առատութեան մէջ. Բ. Կիլիկիոյ հայկ. պետութեան տեղը խաչակրաց արշաւանքների ընթացքին չէ լուսաբանուած: Այն ինչ այդ մասին բաւարար նիւթ է մատակարարում René Grousset-ը[71] իր Histoire des Croisades[72] եռահատոր ուսումնասիրութեան մէջ: Որքա՜ն ցաւալի է, որ Միքայէլեանի նման մէկ գիտական ուժ վաղաժամ կնքեց իր մահկանացուն:

Ի սրտէ կը շնորհաւորեմ Ձեր, տ. Սոֆիկի եւ Վիգէնի նոր տարին, մաղթելով սիրելի վարպետին առողջութիւն եւ երկար կեանք:

ԱՇՈՏ-ԱՐԾՐՈՒՆԻ

ON THE TRAIL OF TWO LETTERS ADDRESSED TO AVETIK ISAHAKIAN

(Summary)

VARTAN MATIOSSIAN (varny1@yahoo.com)

The author publishes two annotated letters addressed by Argentinean Armenian journalist and historian Ashot Artzruni (1902-1979) to Soviet Armenian poet Avetik Isahakian (1875-1957) in 1956. The first letter contains Artzruni's passing reference to an incident related to Isahakian a quarter of a century before, which was part of the final chapter of the protracted relation of Isahakian and the Armenian Revolutionary Federation, which the article reconstructs in detail.

Isahakian, a longtime member of the Armenian Revolutionary Federation, returned for the first time to Soviet Armenia in 1926. In 1930, after returning to Paris, where his family lived, he adopted a friendly stance towards the Soviet Armenian regime and started collaboration with pro-Soviet Armenian initiatives. This created friction with his fellow party members, which which was exacerbated in June 1931 in June 1931, when Artzruni, a junior member of the party who had emigrated from Soviet Armenia in 1929, wrote a piece in the French Armenian daily *Haratch,* castigating Isahakian for his pro-Soviet stance. The article generated a brief, yet violent exchange in the French Armenian press.

---

[70] Դերենիկ Դեմիրճեանի «Մեսրոպ Մաշտոց» վէպը անաւարտ մնացած է:

[71] Ռընէ Կրուսէ (1885-1952), ֆրանսացի պատմաբան:

[72] René Grousset, *Histoire des Croisades et du royaume franc de Jerusalem, 3 vols.*, Plon, Paris, 1934-36:

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920ԱԿԱՆՆԵՐԻՆ

ԱՐՏԱՇԷՍ ՂԱԶԱՐԵԱՆ (artashes.ghazaryan@rambler.ru)

ՄՈՒՏՔ

ԺԹ. դարավերջ-1900ականների սկզբից աւետարանականութեան կենտրոնը Արեւելեան Հայաստանում դառնում է Երեւանը, որտեղ Հայաստանի առաջին Հանրապետութեան տարիներին (1918-20) եւ Հայաստանի խորհրդայնացումից (1920) յետոյ գործում էին բազմաթիւ փորձառու հայ աւետարանական հովիւներ, քարոզիչներ, հայ աւետարանական յայտնի գործիչներ: Նրանք քայլեր ձեռնարկեցին Արեւելեան Հայաստանի հայ աւետարանականներին եւ առանձին գործող համայնքները մէկ միութեան մէջ միաւորելու ուղղութեամբ: Դրա արդիւնքը եղաւ Հայ Աւետարանականների Արարատեան Միութեան (ՀԱԱՄ) կամ համայնքի կազմաւորումը, որը ցարական Ռուսաստանի կառավարութիւնը N 4150 գրութեամբ պաշտօնապէս ճանաչեց 1914 Յունուարի 31ին[1]: 1918 Մայիսի 28ին Հայաստանի Հանրապետութեան հռչակումով հայ աւետարանական համայնքները եւ ՀԱԱՄը նոր կեանք վերապրեցին արդէն ազգային պետականութեան գոյութեան պայմաններում: Գաղթած արեւմտահայ աւետարանականները, իրենց հերթին, նոր լիցք հաղորդեցին աւետարանական գործին Հայաստանի Հանրապետութիւնում:

Խորհրդային Հայաստանում մինչեւ 1920ականների վերջը, երբ ստալինեան բռնաճնշումների հետեւանքով փակուեցին եւ արգելուեցին բոլոր եկեղեցիներն ու կրօնական կազմակերպութիւնները, գործում էին հայ աւետարանական կազմակերպուած համայնքներ եւ եկեղեցիներ, որոնք պաշտօնապէս ճանաչուել էին խորհրդային կառավարութեան կողմից եւ գործունէութիւն էին ծաւալում իրենց կանոնադրութեան ու խորհրդային օրէնքների շրջանակներում[2]:

Յօդուածում, հիմնուած հիմնականում արխիւային տուեալների վրայ, կը ներկայացնենք հայ աւետարանական համայնքների գործունէութիւնը

[1] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 2. նաեւ՝ Վ. Միքայէլեան, *Կրօնական սահմանադրութիւն հայ աւետարանականաց Արարատեան համայնքի*, Երեւան, ա.հ., 1923, էջ 5:

[2] Ա. Ղազարեան, «Հայ աւետարանական համայնքները Խորհրդային Հայաստանում 1920-60-ական թթ.», *Հայ Աւետարանական Եկեղեցի եռամսեայ հանդէս*, Երեւան, 1:2010, էջ 7:

Խորհրդային Հայաստանում 1920ականներին: Նիւթի մեծ մասն առաջին անգամ է դրւում գիտական շրջանառութեան մէջ:

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920ԱԿԱՆՆԵՐԻՆ

Խորհրդային Հայաստանում, մինչեւ 1920ականների վերջը թոյլատրուել է ՀԱԱՄի եւ հայ աւետարանական եկեղեցիների պաշտօնական գործունէութիւնը: ՀԱԱ միութիւն կամ ՀԱԱ համայնք անուան ներքոյ միաւորուած էին նախկին Երեւանի նահանգի (որն ընդգրկում էր գրեթէ ողջ Արեւելեան Հայաստանը) հայ աւետարանականները: ՀԱԱՄը միաւորում էր հիմնականում Երեւանի, Վաղարշապատի, Ալեքսանդրապոլի (Ալեքպոլ, 1924-90՝ Լենինական, 1990-92՝ Կումայրի, 1992ից՝ Գիւմրի), Նոր Բայազէտի եւ նրանց շրջակայ գիւղերի, իսկ մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը նաեւ՝ Կարսի հայ աւետարանական համայնքները[3]: ՀԱԱՄն ամբողջովին կազմաւորուել եւ գործունէութիւն էր ծաւալում տեղացի աւետարանական ղեկավարների ուժերով ու առաջնորդութեամբ: ՀԱԱՄի անփոփոխ նախագահն էր վեր. Վահան Միքայէլեանը: 1928ին նա ձերբակալուեց Երեւանում եւ աքսորուեց Սիբիր, որտեղ էլ կնքեց իր մահկանացուն: Միքայէլեանը Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանի շրջանաւարտներից էր[4]:

Ըստ 1920ի «թռուցիկ»[5] ցուցակագրութեան, ՀԱԱՄի անդամների թիւը Երեւանում, Վաղարշապատում, Գիւմրիում, Ղարաքիլիսայում, Նոր Բայազէտում, Ղամարլուում (Արտաշատ), Նախիջեւանում եւ շրջաններում հասնում էր մօտ 1000ի, որոնցից հաղորդական անդամները՝ մօտ 200 էին: Համայնքի եկեղեցիները երկու տեսակ էին՝ ա) կազմակերպեալ եւ բ) անկազմակերպ[6]: Ըստ ՀԱԱՄի 1922ին պատրաստած տեղեկագիր-վիճակագոյցի, աւետարանական համայնքների տարածման շրջանակը հիմնականում ընդգրկում էր Երեւան, Էջմիածին, Գիւմրի քաղաքները եւ նրանց շրջակայ գիւղերն ու աւանները: Վիճակացոյցում տրուած է նաեւ հայ աւետարանական գործիչների ցանկը: Չորս ձեռնադրեալ հովիւներն էին՝ Վահան Միքայէլեանը, Սարգիս Լեւոնեանը, Յովհաննէս Բզնունին եւ Արսէն Կէօրկիզեանը[7]: Քարոզիչներն էին Տիտոս (Տիտղոս) Մանուկեանը, Սուրէն Աւետիս-

---

[3] Ա. Ղազարեան, «Հայ աւետարանական համայնքներն Արեւելեան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կէսին--20-րդ դարի սկզբին», *Պատմութիւն եւ քաղաքակա-նութիւն գիտական հանդէս*, Երեւան, 4:2020, էջ 84:

[4] Վ. Միքայէլեանի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ա. Ղազարեան, Ռ. Լեւոնեան, *Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի (Հայաստան-Կովկաս)*, Երեւան, «Հայկական Հանրագիտարան» հրատ., 1999, էջ 154-55:

[5] Այսինքն՝ նախնական, ոչ-ամբողջական եւ ոչ-վերջնական:

[6] ՀԱԱ, ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 2 (1922 թ.):

[7] Վեր. Բզնունու մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ա. Ղազարեան, Ռ. Լեւոնեան, էջ 156-7: Վեր. Լեւոնեանը 1890-1900ականներին եղել է Կարսի հայ աւետարանա-

եանը, յիսնապետ Սարգիս Սարգսեանը, Եփրէմ Մկրտչեանը, Յոլակ Պապիկեանը, Աշոտ Մելիքսարգսեանը, Արսէն Խաչիկեանը եւ Յակոբ Մուդոյեանը: Հայ աւետարանականների ընդհանուր թիւը շուրջ 1100 էր, իսկ հաղորդական անդամներինը՝ 180 (110 արեւելահայ եւ 70 արեւմտահայ), կային վեց կազմակերպուած եկեղեցի եւ չորս կարեւոր համայնքներ: 1921ին բոլոր վայրերում միասին 29 նոր հաղորդական անդամներ են ընդունուել հաւատքի դաւանութեամբ[8]:

Ըստ ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի նախագահ Միքայէլեանի 1923 Մայիսին Անդրկովկասում աւետարանական քրիստոնեաների (մկրտչականների)[9] համառուսաստանեան խորհրդի լիազօր ներկայացուցիչ Եոսիֆ (Յովսէփ) Մակարի Խանոյեանին ներկայացրած ցուցակի, ՀԱԱՄի եկեղեցիների հաղորդական անդամները 144 հոգի էին (100 ընտանիք), որոնցից՝ 68ը՝ Երեւանի եկեղեցու անդամներն էին (50 ընտանիք), 4ը՝ Էջմիածնի (2 ընտանիք), 26ը՝ Սամաղար (այժմ՝ Գեղակերտ) գիւղի (16 ընտանիք), 2ը՝ Քէօրփալու (այժմ՝ Արշալոյս) գիւղի (2 ընտանիք), 16ը՝ Հաջիղարա (այժմ՝ Լեռնապատ) գիւղի (10 ընտանիք), 6ը՝ Ֆրանգանոց (այժմ՝ Ամբերդ) գիւղի (4 ընտանիք), 6ը՝ Կոշ գիւղի (4 ընտանիք), 6ը՝ Ղամարլուի շրջանի (6 ընտանիք), 10ը՝ Նոր Բայազէտ քաղաքի (6 ընտանիք): Ցուցակում ասւում է, որ եթէ հաշուենք իւրաքանչիւր ընտանիքում միջին հաշուով 5 շունչ, ապա ՀԱԱՄի համայնքի 9 վայրերում հաւատացեալների թիւը եկեղեցու անդամների ընտանիքների հետ միասին կազմում է 500 մարդ[10]:

Արխիւային վաւերագրերից մէկը, «Հայ աւետարանական-բողոքականների ցուցակ» անուան ներքոյ ներկայացրել է 1925ի տուեալներ Գիւմրու, Երեւանի եւ Էջմիածնի գաւառներում հայ աւետարանականների թուի, ղեկավարների եւ աղօթատների քանակի մասին: Ըստ այդ ցուցակի, Գիւմրու գաւառում կար 55 հաւատացեալ, 5 ղեկավար, 1 աղօթատուն, Երեւանի գաւառում՝ 220 հաւատացեալ, 5 ղեկավար (աղօթատունը պետութիւնը առգրաւել էր), Էջմիածնի գաւառում՝ 270 հաւատացեալ, 5 ղեկավար, 2 աղօթատուն: Այսպիսով, հաւատացեալների ընդհանուր թիւը 545 էր, ղեկավարներինը՝ 15, աղօթատները՝ 3ն էին: Նաեւ ասւում է, որ այնտեղ, որտեղ չկան աղօթատներ, հաւատացեալները հաւաքւում են ղեկավարների բնակարաններում[11]: Պէտք է հաւաստել, որ այսեղ նշուած է միայն հաղորդական անդամների թիւը, քանի որ մեր ձեռքի տակ եղած արխիւային փաստաթղ-

---

կան եկեղեցու քարոզիչը, իսկ 1920ականներին քարոզել է Ալեքսանդրապոլի գիւղերում: Վեր. Կէօրկիզեանը եղել է Ալեքսանդրապոլի հայ աւետարանական եկեղեցու քարոզիչը, պաշտօնավարել եւ աշխատել է Ամերկոմում:

[8] Եղիա Քասունի, *Լուսաշաւիղ. պատմութիւն հայ աւետարանական շարժման. 1846-1946*, տպ. Շնորհօքեան, Պէյրութ, 1947, էջ 458:

[9] Ռուսաստանի աւետարանական քրիստոնեաները մկրտչականներ էին:

[10] ՀԱԱ, ֆ, 1, ց. 3, գ. 230, թ. 9:

[11] ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 132, թ. 17:

թերը վկայում են այդ շրջանում եւ դրանից վաղ անհամեմատ աւելի մեծ թուով աւետարանականների գոյութեան մասին: Այսպէս, «Խորհրդային Հայաստանի ներքին հակայեղափոխութեան, բանդիտիզմի եւ սպեկուլիացիայի (շահադիտութիւն, չարաշահում – Ա.Ղ.) դէմ պայքարի Արտակարգ Յանձնաժողով»ը (Չեկա) իր 1924 Ապրիլի 5ի «խիստ գաղտնի» թիւ 6 զեկուցագրում նշում է, որ ՀԱԱՄի համայնքի կենտրոնական խորհրդի 1919ի վիճակագրութեամբ անդամների թիւը 3000 է (հաղորդական եւ ոչ-հաղորդական անդամները, յարողները, համակիրները ներառեալ), բայց աւելացնում, որ ներկայումս այն միքանի տոկոսով կարող է աւելի շատ լինել[12]: Արխիւային մէկ այլ փաստաթղթի տուեալով 1927ին Հայաստանում աւետարանականների թիւը 5000 է, իսկ Երեւանի գաւառում՝ 800, իր 13 գիւղական համայնքներով: Երեւանում կար մէկ համայնք[13]:

ՀԱԱՄի «Կրօնական սահմանադրութեան» նախագիծը դեռեւս անտիպ (ինչպէս նշուած է արխիւային փաստաթղթում՝ ձեռագիր) համայնքի խորհրդի նախագահ վեր. Միքայէլեանի ստորագրութեամբ Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ է ներկայացուել 1922 Դեկտեմբեր 12ին[14], իսկ 1923 Դեկտեմբեր 23ին Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը վաւերացրել է այն, որը տպագրուել է նոյն թուականին[15]:

ՀԱԱՄ համայնքի կենտրոնը գտնւում էր Երեւանում: Ղեկավար մարմինը կենտրոնական խորհուրդն էր, որը բաղկացած էր 7 անդամից.- Վահան Միքայէլեան (կենտր. խորհրդի նախագահ), Յովհաննէս Բզնունի (փոխնախագահ), Սարգիս Սարգսեան (քարտուղար), Տիտղոս (Տիտոս) Մանուկեան (անդամ եւ Սամաղարի համայնքի ներկայացուցիչ), Ցոլակ Պապիկեան (անդամ եւ Գիւմրու համայնքի ներկայացուցիչ), Սահակ Մկրտչեան (ազատ անդամ), Մարտիրոս Տէրյակոբեան (գտնւում էր Թիֆլիսում): Կենտր. խորհրդին կից գործում էին.- 1) Հոգաբարձուների խորհուրդը, 2) Բարեգործական յանձնաժողովը, 3) Արտաքին պրոպագանդայի յանձնաժողովը, 4) Ներքին պրոպագանդայի յանձնաժողովը, 5) Ընկերակցութիւնների յանձնաժողովը, 6) Կիրակնօրեայ դպրոցների յանձնաժողովը, 7) Պաշտօնական քարոզիչների յանձնաժողովը:

Բացի պաշտօնական քարոզիչներից, կային նաեւ ոչ-պաշտօնական 15 քարոզիչներ: Կենտրոնական խորհրդին ենթարկւում էին բոլոր խորհուրդներն ու յանձնաժողովները, ինչպէս նաեւ բոլոր աւետարանական համայնքները: Ոչ-ամբողջական կազմակերպուած համայնքներ կային Լօռի-Փամբակի եւ Ներքին Բայազէտի գաւառներում[16]:

---

[12] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13 շրջ.:

[13] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 192, թ. 73:

[14] ՀԱԱ, ֆ. 1562, ց. 1, գ. 1, թ. 1-4:

[15] Վ. Միքայէլեան, *Կրօնական սահմանադրութիւն հայ աւետարանականաց Արարատեան համայնքի*, Երեւան, 1923:

[16] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13 շրջ.:

Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագրում ասւում է, որ ՀԱԱՄը Հայաստանից դուրս պաշտօնական ներկայացուցիչներ չունի, բայց սերտ կապեր ունի Ամերիկայի հայ աւետարանականների հետ[17]: Այս առումով հետաքրքիր է ՀԱԱում պահպանուած Միքայէլեանի նամակագրութիւնը ԱՄՆի հայ աւետարանականների հետ: Նա կապեր է ունեցել դեռեւս 1902ին ԱՄՆում (Ուստրում) ստեղծուած հայ աւետարանականների հայկական միութեան (նախագահ՝ Գ. Պետրոսեան, փոխնախագահ՝ Բ.Ս. Լեւոնեան) հետ: 1923ին Պետրոսեանը ԱՄՆից Միքայէլեանին գրած նամակում ցանկանում էր իմանալ, թէ ինչ կարծիք ունի այն մասին, որ Հայաստան ուղարկեն մարդկանց՝ եկեղեցու ամրապնդման եւ որպէս Աւետարանի ծառայող աշխատելու համար: Նա առաջարկում էր նաեւ նիւթական օգնութիւն նրանց, ովքեր աշխատելու են տեղերում: Պետրոսեանը գրում էր, որ յառաջիկայ ժողովի առիթով Ամերիկայի հայ աւետարանականների միութիւնը խնդիր է դրել տեղեկութիւններ հաւաքել աշխարհասփիւռ աւետարանականների, այդ թւում՝ Հայաստանի եկեղեցիների մասին: Վերջում յիշեցնում է, որ Երեւանի աւետարանականներից շատերը վանեցիներ են, ինչպէս ինքը[18]:

1923 Օգոստոսի 30ին Միքայէլեանը ԱՄՆի հայ աւետարանականներին գրած իր նամակում տեղեկացրել է Երեւանի աւետարանականների համայնքում տիրող իրավիճակի մասին: Նա յայտնում է, որ աւետարանական քարոզչութիւնը շարունակւում է մեծ թափով, չնայած տիրող իրավիճակին, եւ՝ որ աւետարանական եկեղեցին ընդունել է 136 անդամ ինչպէս տեղացիներից, այնպէս էլ՝ գաղթականներից[19]:

Մէկ այլ արխիւային փաստաթղթում՝ 1923 Օգոստոսի 10ի Չեկայի թիւ 3 «խիստ գաղտնի» զեկուցագրում, խօսւում է Հայաստանի աւետարանականների՝ Ամերիկայի իրենց հաւատակիցների հետ կապի մասին: Ասւում է, որ նրանք Ամերիկայից ստանում են նամակներ, թերթեր, դրամ: Այդ կապն ապահովում էր վեր. Միքայէլեանը, որը նամակագրութիւն ունէր ԱՄՆի հայ աւետարանականների հայկական միութեան հետ, նրանցից խնդրում էր Հայաստան ուղարկել գրականութիւն, քարոզիչներ, նիւթական միջոցներ[20]:

[17] Նոյն:
[18] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 28-28 շրջ.:
[19] Նոյն, թ. 30:
[20] Նոյն, թ. 37 շրջ :

ՀԱԱՄը սերտ կապեր ունէր Ամերկոմի[21] եւ ամերիկեան Բորդ միսիոնարական ընկերութեան հետ[22]: Այդ աշխատանքը տարւում էր 1919ից Ամերկոմի Հայաստանի ներկայացուցիչ վեր. Հարիսոն Մէյնարտի միջոցով, որը հայ աւետարանականների շրջանում շարունակում էր իր աշխատանքը Բորդի լուծարումից յետոյ[23]: Նոյն աղբիւրը յայտնում է, որ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատուելուց յետոյ ՀԱԱՄն ուժեղացրել է իր գործունէութիւնը, որը պայմանաւորուած էր խորհրդային իշխանութիւններից կուլակների եւ թուրքահայ փախստականների դժգոհութեամբ, ինչպէս նաեւ՝ հայ առաքելական հոգեւորականութեան «քաոսային» դրութեամբ[24]:

Արխիւային վաւերագրերը տեղեկութիւններ են հաղորդում Թիֆլիսից, Բաքուից, Բաթումից եւ այլ վայրերից Հայաստան այցելած աւետարանա-

---

[21] Մերձաւոր Արեւելքում Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէ (American Committee for Relief in the Near East, կրճատ՝ Նպաստամատոյց կամ Ամերկոմ, NER): Ամերիկեան բարեգործական հաստատութիւն, որը ստեղծուել է 1916ին Մերձաւոր Արեւելքի երկրների պատերազմից տուժած բնակչութեանը օգնելու նպատակով: Հայաստանի կառավարութեան հետ կնքուած համաձայնագրով 1919 Մայիսի 1ից Հայաստանում եւ Վրաստանում գտնուող բոլոր որբանոցները եւ մանկական հիւանդանոցները փոխանցուեցին Ամերկոմին: 1923ին սահմանափակուեց Ամերկոմի գործունէութիւնը եւ հսկողութիւն սահմանուեց նրա աշխատակիցների, Բորդ ընկերութեան միսիոնարների, Ամերկոմի հետ համագործակցող հայ աւետարանականների վրայ: Նպաստամատոյցում պաշտօնավարել եւ աշխատել են բազմաթիւ հայ աւետարանական ղեկավար գործիչներ, որոնք եղել են թարգմանիչներ, տեսուչներ, տարբեր յանձնախմբերի ղեկավարներ, քարոզիչներ եւ աւետարանիչներ Ալեքսանդրապոլի ամերիկեան որբանոցներում: Խորհրդային Հայաստանի եւ Նպաստամատոյցի միջեւ կնքուած համաձայնութեամբ Հայաստանում նրա գործունէութիւնը դադարեցուել է 1931 Յունուարի 1ին (աւելի մանրամասն տե՛ս՝ Ղազարեան-Լեւոնեան, էջ 172-83):

[22] Ամերիկեան Բորդի քարոզիչները դեռեւս 1870ականների վերջին Արեւմտեան Հայաստանից այցելում էին Ալեքսանդրապոլ, Կարս եւ շրջակայ գիւղեր, փորձում կազմակերպել տեղի աւետարանական համայնքները: 1916ին Բորդն իր գործունէութիւնը տեղափոխեց Արեւելեան Հայաստան եւ Կովկաս: Հայաստանում այն մինչեւ 1923 գործում էր պաշտօնապէս, նրա միսիոնարները եւ հայ աւետարանական հոգեւոր պաշտօնեաները Նպաստամատոյցի աշխատակիցներ էին, վարում էին նաեւ պատասխանատու պաշտօններ, զբաղւում որբախնամ եւ բարեգործական աշխատանքներով, օգնում հայ աւետարանական համայնքներին: Բորդի անմիջական ջանքերով եւ մասնակցութեամբ է ստեղծուել Ամերկոմը: Խորհրդային Հայաստանում Բորդի դէմ արգելքներն իվերջոյ յանգեցրեցին նրա գործունէութեան դադարեցմանը: 1923 Յունուարին փակուեց Բորդի դպրոցը, իսկ Փետրուարի սկզբին արգելուեց նրա գործունէութիւնը Հայաստանում: 1924 ամռանը վերջին միսիոնարները հեռացան Հայաստանից: Պարսկաստան արտաքսուեցին միքանի հայ աւետարանական գործիչներ, որոնք գործակցում էին Բորդի հետ:

[23] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13-14:

[24] Նոյն:

կանների մասին, որոնք քարոզչական գործունէութիւն էին տանում բոլոր աւետարանական քրիստոնեաների միաւորման եւ մէկ միութիւն ստեղծելու համար: 1924 Փետրուար-Մարտին Հայաստան են այցելել Ռուսաստանի աւետարանականներից Խանոյեանը՝ Թիֆլիսից, Կարապետ Վարդանեանը՝ Բաթումից[25], Թառայեանը՝ Բաքուից[26]: Հայ աւետարանականների գործունէութիւնում չկարողանալով գտնել հակաօրինական որեւէ դրսեւորում, Չեկան առանց փաստերի նրանց մեղադրում էր իբր ֆաշիզմին յարելու, իտալական ֆաշիզմին հակուած լինելու[27] եւ իրենց քարոզներում ժողովրդի շրջանում ֆաշիստական տրամադրութիւններ սերմանելու մէջ[28]:

Արխիւային փաստաթղթերը հնարաւորութիւն են տալիս եզրակացնել, որ Խորհրդային Հայաստանում աւետարանականութեան տարածումը մեծ թափ է ստացել 1923ից: Չեկայի վերոյիշեալ թիւ 3 զեկուցագիրը հաստատում է, որ աւետարանականութիւնը շատ արագ տարածւում է հայ գիւղական բնակչութեան մէջ: Այն տեղի է ունենում ինչպէս բնական աճի, այնպէս էլ՝ քարոզչութեան շնորհիւ, որ ՀԱԱՄի գործուն անդամները տանում են Հայաստանի բոլոր անկիւններում, յատկապէս՝ Էջմիածնի, Գիւմրու, Երեւանի, Լօռիի գաւառներում: Նշւում է, որ աւետարանականները ՀԱԱՄի նախագահ Միքայէլեանի եւ նրա գործընկերների՝ Սարգսեանի, Բզնունու, Մանուկեանի, Անուշ Նիկողոսովայի գլխաւորութեամբ մեծ թափով քարոզչութիւն են անում՝ համալրելով համայնքը նոր անդամներով յատկապէս՝ Երեւանում, Գիւմրիում, Սամաղար, Ֆրանգանոց, Կոշ, Հաջիղարա, Քէօրփալու գիւղերում: Ասւում է, որ նրանց *պրոպագանդան* այնքան ուժեղ է եւ լուրջ, որ շատ գիւղերում ներգրաււում են կոմերիտական (համայնավար երիտասարդական միութեան անդամ) բջիջները, կոմերիտականները, կուսակցականները: Բերւում է Ֆրանգանոց գիւղի օրինակը, որտեղի կոմերիտական բջիջը լուծարուել էր կրօնական համոզմունքների պատճառով[29]:

---

[25] Նոյն, թ. 13, տես նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 23:

[26] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36 շրջ.:

[27] Դա պայմանաւորուած է նրանով, որ 1922ին Իտալիայում իշխանութեան եկան ֆաշիստները Մուսոլինիի գլխաւորութեամբ, որոնք աննախադէպ հալածանքներ սկսեցին իտալացի համայնավարների եւ ընկերվարականների դէմ, իսկ Խորհրդային Միութեան հանդէպ վարում էին թշնամական քաղաքականութիւն: Իսկ քանի որ խորհրդային իշխանութիւնները հայ աւետարանականներին համարում էին թշնամի խորհրդային կարգերին եւ համայնավար գաղափարախօսութեանը, նրանց մեղադրում էին ֆաշիզմի մէջ, որն այդ ժամանակ շատ տարածուած էր խորհրդային երկրում:

[28] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13-14. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 23:

[29] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36:

Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագիրը տեղեկութիւններ է տալիս ՀԱԱՄի 4 գլխաւոր համայնքների գործունէութեան մասին[30]: Այդ համայնքներն էին.

1. Կենտրոնական-Երեւանի համայնք,
2. Լենինականի համայնք,
3. Արարատի համայնք (Ղամարլուի տեղամաս),
4. Սամաղարի համայնք (Էջմիածնի գաւառ):

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ-ԵՐԵՒԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

Հայ աւետարանականների ՀԱԱՄի Երեւանի համայնքի «Կրօնական կանոնադրութիւնը» Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը հաստատել է 1926 Մայիսի 20ին եւ պաշտօնապէս գրանցել նոյն թուականի Մայիսի 29ին: Կանոնադրութիւնում ասւում է, որ Երեւանի համայնքը կազմաւորուել է 1914ին եւ կազմում է ՀԱԱՄի մէկ ճիւղը, ընդունում է ՀԱԱՄի սահմանադրութիւնը, որը ՀԽՍՀ ներքգործժողկոմի կողմից հաստատուել է 1923ին[31]: Երեւանի համայնքի նախագահն էր վեր. Յովհաննէս Բզնունին, ղեկավար կազմի անդամ էին Նիկողոսեանը, Աւետիսեանը, Փ. Պետրոսեանը, Միքայէլեանը[32]: Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագրում ասւում է, որ բողոքական շարժումը Հայաստանում աշխուժացել է, որին նպաստել են ա) հայ առաքելականների հետ հակասութիւնները Աւետարանի հասկացութեան եւ աւետարանական ուսմունքի քարոզչութեան շուրջ, բ) հայ բնակչութեան շրջանում առաքելական հոգեւորականութեան հեղինակազրկումը եւ գ) Արարատեան համայնքի կապերը Ամերկոմի հետ: Նշւում է, որ չնայած աղօթատունը վերցրել են Երեւանի աւետարանականներից, բայց նրանք աղօթաժողովներ են անում համայնքի անդամների բնակարաններում: ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի նախկին քարտուղար վեր. Յակոբ Մուդոյեանին Իրան արտաքսելուց (1924 Փետրուար) եւ նրա բնակարանը կորցնելուց յետոյ Երեւանի աւետարանականները հաւաքւում են միւս քարոզիչների տներում, որտեղ էլ կենտրոնացուած էր ամբողջ աշխատանքը, որ տանում էին Մուդոյեանի մօտ՝ Ամերկոմի հովանու ներքոյ[33]:

Երեւանի աւետարանականների աղօթատունը, որը գտնւում էր Պետկինոյի շէնքում, կառավարութիւնն առգրաւել էր[34], բայց այն վերադարձնելու հարցը դարձել էր քննարկման առարկայ, ինչն այդպէս էլ լուծում չստացաւ: Աղօթատունը վերադարձնելու որոշումները կրում էին ձեւական բնոյթ եւ չէին իրագործւում հենց խորհրդային իշխանութիւնների կողմից: Այսպէս,

---

[30] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12-14:
[31] ՀԱԱ, ֆ. 828, ց. 1, գ. 7, թ. 1:
[32] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 229, թ. 52:
[33] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12:
[34] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 72:

1924 Մարտի 22ի ՀԽՍՀ Կոմկուսի կենտկոմի նախագահութեան նիստում կենտկոմի նախագահութեան անդամ Ա. Շահգելդեանին պարտաւորեցրել էին երկու շաբաթուայ ընթացքում աւետարանականների համայնքին տրամադրել համապատասխան շինութիւն՝ որպէս աղօթատուն[35]: Իսկ 1924 Ապրիլի 10ի ՀԽՍՀ Կոմկուսի կենտկոմի նախագահութեան նիստում ընդունուեց «Աւետարանական քրիստոնեաներին շինութիւն յատկացնելու մասին» որոշումը (Արձանագրութիւն N46), ինչպէս նաեւ որոշուեց՝ ա) մերժել աւետարանական քրիստոնեաների համայնքի ենթակայութիւնից Պետկինոյի շէնքը առգրաւելու մասին Կենտկոմի նախագահութեան անդամ Շահգելդեանի առաջարկութիւնը, բ) յանձնարարել Երեւան քաղաքի գործկոմին շտապ կերպով համայնքի տրամադրութեան տակ դնել համապատասխան շինութիւնը, կանգ չառնելով դրանից բխող ծախսերի առաջ եւ գ) տարածքը տրամադրել համայնքին վարձակալական հիմունքներով[36]:

Ըստ Չեկայի «խիստ գաղտնի» թիւ 5 զեկուցագրի, Երեւանի, ընդհանրապէս հայ աւետարանականների ամենայայտնի եւ «խիստ վտանգաւոր» ներկայացուցիչը ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի նախկին քարտուղար վեր. Մուդոյեանն էր[37], ով ամերիկեան Բորդի նախկին նախագահ, Երեւանում Ամերկոմի ներկայացուցիչ վեր. Մէյնարտի թարգմանիչն էր: Մուդոյեանի բնակարանը 1923ից, երբ կառավարութիւնը Երեւանի աւետարանականներից վերցրել էր աղօթատունը, դարձել էր նրանց գլխաւոր հաւաքատեղին եւ աղօթատունը: Մուդոյեանի բնակարանը ծառայում էր որպէս գլխաւոր հաւաքատեղի, որտեղ այցելում էին Հայաստանի բոլոր շրջանների համայնքների ներկայացուցիչները եւ ստանում տարբեր յանձնարարութիւններ, գրականութիւն, կրօնական նկարներ եւն.: Այդ հաւաքներին մասնակցում էր նաեւ Մէյնարտը, որը նրանց տալիս էր արտասահմանեան կրօնական թերթեր, հանդէսներ: Երեւանում աշխուժ գործունէութիւն էին ծաւալում Մուդոյեանի եղբայր Գարեգին Մուդոյեանը, Արբակ Մարտիրոսեանը, Շահբօղլեանը եւ ուրիշներ[38]: Մուդոյեանի արտաքսումից եւ նրա բնակարանի առգրաւումից յետոյ, Երեւանի աւետարանականներն աղօթաժողովներ էին անում Միքայէլեանի տանը՝ 2րդ Գնունի փ., 17ա հասցէում, որը պաշտօնապէս գրանցուած էր որպէս Երեւանի համայնքի աղօթարան[39]:

Արխիւային վաւերագրերը վկայում են, որ Երեւանի համայնքում 1923ից շատ եռանդուն աշխատանք է տարւում, ընդ որում ոչ միայն իրենց աղօթատներուն, այլ նաեւ՝ դրանցից դուրս, յատկապէս կանանց եւ երեխաների շրջանում: Այդ առումով աչքի էր ընկնում Անուշ Նիկողոսովան, որն աւետա-

---

[35] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 10, թ. 23:
[36] Նոյն, թ. 24:
[37] Մուդոյեանի մասին աւելի մանրամասն տե՛ս՝ Ղազարեան-Լեւոնեան, էջ 158-59:
[38] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 4:
[39] ՀԱԱ, ֆ. 1, ց. 7, գ. 229, թ. 52:

րանականութեան տարածման նպատակով շրջում էր բակերով, յորդորում ծանօթներին, որոնք աւետարանականներ չեն՝ լսեն աւետարանականների քարոզները: Հաւաքները տեղի էին ունենում բաց տարածքներում կամ մասնաւոր բնակարաններում[40]: 1923ին ներքգործժողկոմը Երեւանի աւետարանական հինգ շրջիկ քարոզիչներին՝ Միքայէլեանին, Բզնունուն, Մանուկեանին, Սարգսեանին եւ Աւետիսեանին, թոյլատրել էր առանց խոչընդոտների գիւղերում կատարել կրօնական քարոզչութիւն[41]: Երեւանում Միքայէլեանի քարոզների ժամանակ ներկայ էին լինում աւելի քան 200 հաւատացեալներ[42]:

Մինչեւ Խորհրդային Հայաստանում ՀԱԱՄի գործունէութեան արգելումը Երեւանի աւետարանականների մասին վերջին յիշատակումներից մէկը վերաբերում է 1927ին: Արխիւային փաստաթղթում ասւում է, որ 1927ին հայ աւետարանական համայնքը իրեն կից Երեւանում ստեղծում է երիտասարդական եւ կանանց բջիջներ: Երեւանում կայ մէկ համայնք, իսկ Երեւանի գաւառում՝ 13 գիւղական համայնքներ: Գիւղերում համայնքի ժողովները լինում են շաբաթը մէկ անգամ, իսկ Երեւանում՝ երկու, երբեմն՝ մէկ անգամ: Արարողութիւնները լինում են Աւետարանի շուրջ՝ պատուելիների կողմից, քարոզներով եւ երգեցողութեամբ: Երեւանում հաւաքները լինում են մասնաւոր տներում, ծիսակատարութիւնը կատարւում է երգեհոնով եւ գրամաֆոնով: Սեփական նիւթական միջոցները գոյանում են անդամավճարներից եւ կամաւոր նուիրատուութիւններից: Ամէն հաւատացեալ անդամավճար է տալիս ամսական 50 կոպէկ: Նիւթական միջոցները ստացւում են Ամերիկայից՝ միսիոնարների միջոցով, քարոզիչները վճարւում են, գնւում են երաժշտական գործիքներ, տպագրւում կտակարաններ, Աւետարաններ, որոնք բաժանւում են համայնքի անդամներին: Փաստաթղթում ասւում է, որ հայ աւետարանականներն ընդունակ են իրենց կողմը գրաւել նոր հաւատացեալների, մանաւանդ, երբ փակւում են գիւղական եկեղեցիները եւ հաւատացեալ գիւղացիները սկսում են դառնալ բողոքական համայնքների համակիրներ[43]:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ

1920ականներին Գիւմրու եւ շրջակայ գիւղերի աւետարանական համայնքների, քարոզիչների, նրանց ծաւալած գործունէութեան մասին արխիւային նիւթերը հարուստ տեղեկութիւններ են հաղորդում, նշելով տեղի բոլոր քարոզիչների եւ ղեկավարների անունները:

---

[40] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 37:
[41] Նոյն, թ. 72:
[42] Նոյն, թ. 72 շրջ.:
[43] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 192, թ. 73:

Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագիրը հաղորդում է, որ 1921ի սկզբից մինչեւ 1922ի սկիզբը Ալեքսանդրապոլի համայնքը կազմաւորման փուլում էր եւ չկային ղեկավար կադրեր, որ կարողանային իրականացնել կենտրոնական խորհրդի առաքելութիւնը տեղի համայնքում: 1923ից, երբ Ամերկոմի բոլոր բաժանմունքները կենտրոնանում են Ալեքսանդրապոլում եւ սկսում են նիւթական օգնութիւն ցոյց տալ համայնքի անդամներին, Ալեքսանդրապոլի համայնքի գործունէութիւնն աշխուժանում է: Դա նպաստաւոր պայմաններ է ստեղծում լաւ պատրաստուած քարոզիչների աշխատանքի համար, որոնք ուժեղացնում են քարոզչութիւնը աւետարանականների շրջանում՝ կոչ անելով ամրապնդել հաւատացեալ քրիստոնեաների շարքերը: Ալեքսանդրապոլում աղօթաժողովներին մասնակցում էր միջինը 70 մարդ[44]: Մէկ այլ փաստաթղթում նշւում է, որ աղօթաժողովներից մէկի ժամանակ տեղի քարոզիչներ Աբգար Մելիքջանեանը եւ Մեսրոպը առաջարկութիւն են արել ընդլայնել տեղի համայնքի գործունէութիւնը եւ ընդգրկել նոր անդամներ, կոչ անելով չվախենալ իշխանութիւնների հետապնդումներից, լինել խիզախ եւ անդրդուելի: Որպէս եզրայանգում, ասւում է, որ շնորհիւ այդպիսի ջանքերի եւ աշխատանքի, հաւատացեալների թիւն աւելանում է[45]: 1923ին Ալեքսանդրապոլում ստեղծուել էր տեղի համայնքի գործուն անդամների յատուկ միութիւն, որի նպատակն էր աշխուժացնել համայնքի կեանքը: Այդ նախաձեռնութիւնը գալիս էր կենտրոնից, այսինքն՝ Երեւանից եւ Անդրկովկասում աւետարանական քրիստոնեաների համառուսաստանեան խորհրդի լիազօր ներկայացուցիչ Խանոյեանից[46]: Նոյն փաստաթղթում ասւում է, որ չնայած Ալեքսանդրապոլի համայնքը կոչւում է «Հայկական», նրանք աշխատում են նաեւ ռուս հաւատացեալների շրջանում, որոնց թոյլ են տալիս իրենց հաւաքների ժամանակ աղօթել եւ ընթերցել գրքեր ռուսերէն լեզուով: Ըստ Չեկայի գաղտնի զեկուցագրի, դա բացատրւում էր նրանով, որ Ալեքսանդրապոլի բողոքականներն աւելի շատ յարում էին մկրտչականներին եւ գտնւում էին Թիֆլիսի մկրտչական համայնքի անմիջական ազդեցութեան ներքոյ: Ռուս հաւատացեալների թիւը հասնում էր 20ի, որոնց գլուխ կանգնած էր Ալեքսանդրապոլի *դեպո*յի (շոգեքարշերի եւ վագոնների նորոգման կայան երկաթուղիներում) բանուոր, քարոզիչ Դմիտրի Վինուժդենկօն[47]: Վերջինս նշուած է Ալեքսանդրապոլի գաւառի աւետարանական ղեկավարների շարքում Աբրահամ (Աբգար) Մելիքջանեանի, Յոլակ Պապիկեանի, Մեսրոպ Աւետիսեանի, Խանոյեանի հետ միասին[48]: Ալեքսանդրապոլում ուժեղանում էր կրօնական քարոզչութիւնը, իսկ

[44] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12-12 շրջ.:
[45] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 36 շրջ.:
[46] Նոյն:
[47] Նոյն, թ. 37:
[48] Նոյն, թ. 72 շրջ.:

համայնքին օգնում էր Բաքուից եկած աւետարանական Թառայեանը: Նա Ալեքսանդրապոլում մնացել էր 2 շաբաթ եւ Գերմանիայից եկած բողոքական Արմենակ Պարոնիկեանի հետ ամէն օր անց էր կացնում աղօթաժողովներ: Վերջինս, որպէս Գերմանիայի եւ Զուիցերիայի հայերի բարեգործական ընկերութեան պատգամաւոր, Հայաստան էր եկել Հայաստանի օգնութեան ընկերութեան համագումարին մասնակցելու[49]: Գիւմրու համայնքը, բացի Երեւանից, անմիջական կապեր ունէր Թիֆլիսի հետ, որտեղից այցելում էին թիֆլիսեան քարոզիչներ Խանոյեանը, Մեսրոպ Աւետիսեանը՝ նրանց շրջանում կրօնական քարոզչութիւն տանելու եւ տեղի աւետարանականների աշխատանքին ծանօթանալու համար: Ալեքսանդրապոլի համայնքը, բացի քաղաքից, զգալի թուով անդամներ ունէր նաեւ շրջակայ գիւղերում՝ Կուլիջանում (այժմ՝ Սարահարթ) եւ Խանլիճանում (այժմ՝ Մարմաշէն), որոնց շրջանում տարւում էր որոշակի կրօնական աշխատանք[50]: Կուլիջան գիւղում 1924ի տուեալներով կար 25 աւետարանական[51]:

Ալեքսանդրապոլի համայնքում աւետարանական գործի յաջողութիւնը Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները բացատրում էին հիմնականում Ամերկոմի հետ սերտ կապերով եւ համագործակցութեամբ, ինչպէս նաեւ՝ Ամերկոմի միսիոնարների եռանդուն գործունէութեամբ: Ալեքսանդրապոլի Ամերկոմում կային յատուկ աղօթատեղիներ, որտեղ հայ աւետարանական քարոզիչները՝ Մանուկեանը, Շահբօղլեանը, Պապիկեանը եւ ուրիշներ, ամերիկացի միսիոնարների հետ երեխաների, որբերի եւ ծառայողների շրջանում անց էին կացնում աղօթաժողովներ: Ամերկոմից տեղացի քարոզիչները ստանում էին թռուցիկներ, դիմումներ, նամակներ, որոնցում նրանց կոչ էր արւում կազմակերպուել եւ Հայաստանում ստեղծել տարբեր կրօնական խմբեր[52]:

Ամերկոմի հետ համագործակցում էին Մելիքջանեանը, որը քարոզչութիւն էր անում Կազաչի Պոստի ամերիկեան որբանոցներում, Ռաֆայէլ Մելիքադամեանը[53] եւ Պապիկեանը (Պոլիգոնի որբանոցներում), Սուրէն Հայրէդեանը եւ Մուշեղ Սահակեանը՝ նորվեգացի միսիոնարուհի Բոնդէի որ-

---

[49] Նոյն:

[50] Նոյն, թ. 37:

[51] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 65, թ. 81:

[52] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 73:

[53] Մինչեւ 1907, նա Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետ էր՝ հայր Մամբրէ անունով, աւարտել է Էջմիածնի Գէորգեան հոգեւոր ճեմարանը, դասաւանդել նոյն ճեմարանում, ուսանել Գերմանիայի համալսարաններում, եղել Լենինականի հայ մկրտչականների համայնքի ղեկավար եւ քարոզիչ (առաւել մանրամասն տե՛ս՝ Ստեփան Կերտող, *Գիրք տառապելոց. 1920-1950ական թուականների բռնութիւնների զոհ հայ հոգեւորականները*, «Մուղնի» հրատ., Երեւան, 2002, էջ 211-220. նաեւ՝ Ստեփան Ստեփանեանց, *Հայ Առաքելական Եկեղեցին սփալինեան բռնապետութեան օրօք*, «Ապոլոն» հրատ., Երեւան, 1994, էջ 45-46, 112):

բանոցում[54], ինչպէս նաեւ՝ Սուրէն Խանգելդեանը, Ամերկոմի Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ միսիոնար Պատրիչը[55]: 1923ին Ալեքսանդրապոլում եռանդուն քարոզչական աշխատանք էր տարւում նաեւ ամերիկացի միսիոնար Օգդէնի եւ Մելիքադամեանի գլխաւորութեամբ: Զեկուցագրերից մէկում ասւում էր, որ Ալեքսանդրապոլի աւետարանական համայնքը ֆինանսաւորւում է ամերիկացիների կողմից, քարոզիչների մեծ մասը եւ ընդհանրապէս՝ հաւատացեալները մեծմասամբ ծառայում են Ամերկոմում, որը մեծ յարգանք է վայելում ինչպէս աշխատակիցների, այնպէս էլ՝ որբերի շրջանում[56]:

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՅՆՔ (ՂԱՄԱՐԼՈՒԻ ՏԵՂԱՄԱՍ)

Երեւանի գաւառի Ղամարլուի (Արտաշատ) համայնքի կենտրոնը Արտաշատ գիւղն էր, որտեղ էլ գտնւում էր շրջանային աղօթատունը: 1924ի տուեալներով հաղորդական անդամների թիւը հասնում էր 40ի, իսկ ոչ-հաղորդականներինը՝ 100ի: Համայնքի ղեկավարը Արշակ Տէրստեփանեանն էր, որը ժամանակաւորապէս բնակւում էր Արտաշատում: Նա սերտ կապեր ունէր ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի եւ Ամերկոմի հետ՝ իդէմս Մէյնարտի[57]: Դեռեւս 1923 Յուլիսին մի խումբ արտաշատցիներ դիմել էին կենտրոնական խորհրդին, խնդրելով իրենց մօտ ուղարկել մէկ յատուկ ղեկավար-քարոզիչ՝ համայնքի աշխատանքն աշխուժացնելու համար, ինչպէս նաեւ ցոյց տալ նիւթական օգնութիւն: Նրանք խնդրում էին նաեւ բացել կիրակնօրեայ դպրոց[58]: Կենտրոնական խորհուրդը համայնքն ամրապնդելու նպատակով Ղամարլուի տեղամաս է ուղարկում քարոզիչներ Սարգսեանին, Աւետիսեանին եւ Բզնունուն: Քանի որ բացի Տէրստեփանեանից այնտեղ չկային աչքի ընկնող աշխատակիցներ, իշխանութիւնները մտադիր էին մեկուսացնել միայն նրան[59]: ՀԱԱՄի կենտրոնական խորհուրդը Արտաշատի եւ Ղամարլուի շրջանների բոլոր համայնքների ղեկավար է նշանակել Բզնունուն[60]:

Քանի որ Ղամարլուում շատ էին արեւմտահայ գաղթականները, յատկապէս այստեղ յատուկ աշխատանք էր տարւում նրանց շրջանում: 1923ի գաղտնի զեկուցագրերից մէկում ասւում է, որ քարոզիչ Մարիանա Նիկողոսեանին աքսորելուց յետոյ նրա տեղը զբաղեցրեց Սալմաստից գաղթած Արմենակ Տէրսիմոնեանը, որը կարճ ժամանակում ձեռք բերեց մեծ յարգանք եւ ժողովրդականութիւն յատկապէս թուրքահայ գաղթականների

[54] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 14:
[55] Նոյն, թ. 4 շրջ.:
[56] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 37 շրջ.:
[57] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12 շրջ.:
[58] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թթ. 31, 36 շրջ.:
[59] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 12:
[60] ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 230, թ. 73:

շրջանում: Մեծ ուշադրութիւն էր դարձուում Երեւանի գաւառի Արտաշատ եւ Դարղալու (այժմ՝ Այգեզարդ) գիւղերի բնակչութեանը: Նոյն զեկուցագրում ասւում է, որ այդ համայնքներում անդամագրւում են հաւատացեալներ, որոնք նախկին դաշնակցականներ էին, իսկ համայնքի անդամներ Արտուշ Բադալեանը, Արսէն Յակոբեանը, Խաչատուր Յակոբեանը եւ Արտաշատի այլ բնակիչներ, զուգահեռաբար գաղտնի աշխատանք էին տանում դաշնակցութեան օգտին[61]:

ՍԱՄԱՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔ (ԷՋՄԻԱԾՆԻ ԳԱՒԱՌ)

Էջմիածնի գաւառի Սամաղար համայնքը, ըստ Չեկայի վերոյիշեալ թիւ 6 զեկուցագրի, ամենաուժեղ աւետարանական համայնքներից էր: Դա բացատրւում է նրանով, որ Սամաղարը եղել է Արեւելեան Հայաստանում աւետարանականութեան սկզբնաւորման օջախը, նաեւ այն հանգամանքով, որ Էջմիածնի գաւառի բնակչութեան շրջանում հեղինակազրկուել էր հայ առաքելական հոգեւորականութիւնը: Այս հանգամանքները պարարտ հող են ստեղծել աւետարանականութեան տարածման, որն, ըստ զեկուցագրի, առանձնապէս ուժեղացել է 1924ին: Կենտրոնական խորհրդի քարոզիչներն այցելում էին ոչ միայն այն գիւղերը, որտեղ կային աւետարանական համայնքներ, այլեւ այնտեղ, որտեղ չկային: Երբ ներքգործժողկոմը թոյլատրեց բաց քարոզչութիւնը, աւետարանականներն աշխուժացրեցին իրենց ազդեցութիւնը բնակչութեան վրայ ամբողջ շրջանում: Նշւում է, որ աւետարանականների ազդեցութեան տակ էին ընկնում նաեւ համայնավարները, որոնք հեռանում էին կուսակցութիւնից եւ դառնում աւետարանականներ: Դա եղել է յատկապէս Ֆրանգանոց եւ Սամաղար գիւղերում[62]: Աւետարանականութիւնը մեծ տարածում ունէր Էջմիածնի գաւառի նաեւ Քէօրփալու, Կոշ եւ այլ գիւղերում, Վաղարշապատ քաղաքում: Սամաղարի գիւղկոմբջջի հաշուետուութիւնները, Սամաղարի կուսշրջկոմի անդամական ժողովների արձանագրութիւնները հաստատում են, որ 1924-27՝ գիւղում գործել է աւետարանական աշխուժ խմբակ, ունեցել են աւետարանական քարոզիչներ, ժողովարան, որը գործել է միայն տօն օրերին, իսկ աւետարանականները գաղտնի հաւաքւում էին իրենց տներում[63]: Իսկ ըստ Կոմկուսի Սամաղարի շրջկոմի վարչական ժողովի 1927ի Հոկտեմբերի 8ի նիստի արձանագրութեան, կրօնական համայնքի անդամ գրուող կոմերիտականների դէմ ձեռնարկւում է հակակրօնական քարոզչութիւն, որի նպատակով Սամաղարում կազմակերպուել է անաստուածների խմբակ, խրճիթներին կից կազմակեր-

[61] Նոյն, թ. 36 շրջ.:
[62] ՀԱԱ, ֆ. 1, ց. 4, գ. 141, թ. 13:
[63] ՀԱԱ, ֆ. 1453, ց. 1, գ. 2, թթ. 2-3ա, 6-7ա, 18-19ա, 27-28ա, 36-37ա, 56-57ա, 80-81ա, 150-150ա:

պուել են բանգիտական զրոյցներ[64]: Էջմիածնի գաւառում աշխուժ աշխատանք էին տանում Բենիամին Քոչարեանը, Տիտղոս Մանուկեանը, Սահակ Մկրտչեանը, Եփրէմ Մկրտչեանը[65], իսկ որպէս Էջմիածնի գաւառի աւետարանական ղեկավարներ յիշատակւում են Բ. Քոչարեանը, Յովհաննէս Իսրայէլեանը եւ Մանուկեանը: Տեղի աւետարանականներին Երեւանից յաճախ էին այցելում քարոզիչներ Լեւոն Սարգսեանը, Բզնունին[66]: Վաղարշապատում քարոզել է նաեւ ՀԱԱՄի կենտրոնական խորհրդի քարտուղար, յիսնապետ Սարգիս Սարգսեանը[67]:

1926ին միայն Երեւանում եւ Էջմիածնում ու նրանց շրջակայ գիւղերում կային ՀԱԱՄի 10 աւետարանական համայնքներ: Կառավարական տոմարում նշուած է նրանց գրանցման եւ կանոնադրութիւնների հաստատման ամսաթիւը, ղեկավարների ազգանունները, աղօթատների վայրը, բայց աւետարանականների թուի վերաբերեալ տուեալներ չեն հաղորդւում[68]: Իսկ 1927ին նշուած գաւառներում արդէն կային 11 աւետարանական համայնքներ[69]:

ՀԱԱՄի ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՅԼ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԵՏ

Ծանօթագրութեան մէջ իրաւացիօրէն նշւում է, որ տրամադրութիւնը համահունչ է միքանի օր յետոյ գրուած «Գիշերային առաջին աստղի դիմաց» բանաստեղծութեանը (*հտր. 9*, էջ 481)՝ յատկապէս նկատի ունենալով նամակում բերուած հատուածի առաջին տողի հետ նմանութիւնը.

Արեւը թռաւ. երկինք ու երկիր Դուն, փայլուն աստղիկ, դարձեալ շողացիր
Առաւ խաւարը գիրկն համատարած. Արդեօք այս գիշեր ի՞նչ բերիր մարդկանց[5]:

Այս բանաստեղծական փոքրիկ կտորը մեզ յուշում է Թումանեանի ստեղծագործական յատկանիշերից մէկը եւս՝ նիւթը երկարատեւ, նոյնիսկ տասնամեակներով մշակելու նախասիրութիւնը: Եթէ ուշադիր լինենք, պատկերը մեզ կը տանի շատ աւելի ուշ, կեանքի մայրամուտին գրուած «Սիրիուսի հրաժեշտը» (1922) յայտնի քերթուածին.

Ի՜նչքան աչք են վըրադ յառել, Եւ կամ ի՜նչքան
Նայում են քեզ Դեռ պիտի գան,
Հիմի մեզ պէս, Որ **անյայտից** կեանք չեն առել[6]:
Ի՜նչքան աչք է նայել, մարել,

Իհա՛րկէ, եթէ նայելու լինենք նամակից մինչեւ վերջին քերթուածն ընկած պատկերակառուցումին, տեսանելի կը լինի, որ մի դէպքում գործ ունենք զուտ մտայղացման հետ, այն էլ՝ անձնական շարժառիթից եկող, միւս դէպքում՝ առանձին բանաստեղծութեան, որը ուղղւում է «մարդկանց»: Իսկ արդէն վերջին՝ «Սիրիուսի հրաժեշտը» քերթուածում գործողութիւնը դառ-

[3] Նոյն, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ (նամակներ. 1905-1922)*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1999, էջ 420:

[4] Նոյն, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին (բանաստեղծութիւններ)*, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 2018, էջ 11-12:

[5] Նոյն, էջ 64:

[6] Նոյն, էջ 330:

նում է ետընթաց. այդ սերունդնե՛րն են նայում պայծառ աստղին: Աւելին՝ ասելիքը ստանում է փիլիսոփայական շեշտադրութիւն՝ բերելով թումանեանական գեղագիտութեանն այնքան բնորոշ «անյայտ»ի խաղարկումը[7], յաւերժութեան այնպիսի խորհրդով, ինչպիսին բացուել է Իսահակեանի «Ռաւեննայում» յայտնի քերթուածում:

Նամակներում յաճախ ենք հանդիպում ձեւակերպումների եւ մտքերի, որոնք յետագայում գրեթէ բառացի կամ բառացիօրէն տեղ են գտնում գեղարուեստական խօսքում, գրական փոխանցումների հետ կապուած մի երեւոյթ, որ Ի. դարի երկրորդ կէսին ստացաւ միջտեքստայնութիւն բնորոշումը[8]: Յաճախ այդ մտքերը նամակներում եւ գեղարուեստական խօսքում հանդիպում են ժամանակային հեռաւորութեան վրայ, ինչը փաստում է, որ նամակներում, այսպէս ասած մտերմական զրոյցներում, դրանք աւելի շատ խմորումի մէջ են եւ միայն յետագայում պիտի գեղարուեստական ձեւի տակ մտնեն, ինչպէս օրինակ 1900ին բարեկամին՝ հասարակական գործիչ, հրատարակիչ Փիլիպոս Վարդազարեանին ուղղուած նամակի «*Եւ ապարդիւն ու անպտուղ կ'անցնեն իմ օրերն, ինչպէս անցնում են արդէն*» դատողութիւնը՝ որպէս ներկայի ու ապագայի կանխազգացում, եւ արդէն 1921ին գրուած յայտնի քառեակում երեւոյթի արձանագրումը իբրեւ իրողութիւն, իհա՛րկէ, գեղարուեստօրէն աւելի խտացուած.

Կեանքըս արի հըրապարակ, ոտքի կոխան ամէնքի.
Խափան, խոպան ու անպըտուղ, անցաւ առանց արդիւնքի[9]:

գ) ***Տեսաբանական հարցադրումներ***: Սրանք հանդէս են գալիս միքանի ուղղութիւններով՝ ձեւի ու բովանդակութեան, գրական սեռերի, նախասիրութիւնների, երբեմն էլ՝ առանձին հասկացութիւնների մեկնութիւններ:

Ձեւի եւ բովանդակութեան այդքան չարչրկուած ու բանավէճերի առիթ տուած թնճուկը Թումանեանը լուծում է Շեքսպիրի ստեղծագործութեան գնահատման ճանապարհով. «*Ասելս այն է, որ դու* (խօսքը Վարդազարեա-

---

[7] Իդէպ, այս բանաստեղծութեան գրութեան շարժառիթի մասին կ'ուզենայինք բերել մէկ նկատառում. թէ՛ հատորի ակադեմիական առաջին (1988, էջ 641), թէ՛ նոր (2018, էջ 717) հրատարակութիւններում նշւում է, որ ազդակը գալիս է տասնչորսամեայ Վիկտոր Համբարձումեանի հետ հանդիպումից (1922ի ամառ): Մեր կարծիքով, սակայն - եւ բերուած օրինակներն էլ այդ են փաստում - նիւթը Թումանեանին հետաքրքրել է շատ վաղուց:

[8] Julia Kristeva, *Desire in Language: A Semiotic Approach to Literature and Art*, Columbia University Press, New York, 1980, էջ 36:

[9] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր երկրորդ (քառեակներ, բալլադներ, թարգմանութիւններ)*, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 2018, էջ 59:
Պիտի արձանագրել, որ նմանօրինակ դատողութիւնները աւելի են ուժգնանում 1909ին եւ դրանից յետոյ. սա մի տեսակ բանաստեղծի աշխարհում վերաճում է կայուն անբաւարարութեան (*հմմտ. 10*, էջ 85, 90):

նի մասին է – Ք.Ա.) *զուր ես ասում, թէ այս կամ այն միտքը յայտնած է արդէն: …Ո՞ր բանաստեղծն է մի նոր միտք յայտնել: Ես, որ աստուածացնում եմ Շեքսպիրին, իսկի չեմ էլ մտածում, թէ նա ինչ միտք է յայտնել, դրա վրայ չեմ հիանում, այլ թէ ինչպէս է յայտնել*» (*հտր. 9*, էջ 233)՝ եզրակացնում է տեսաբանական ուժով՝ խնդիրը լուծելով ասելիքի ձեւի օգտին, հաւաստելով, որ բովանդակութիւնը միշտ նոյնն է: Եւ ամենակարեւորը, որ հնչում է հանգանակի նման. «*Այս է մրցութեան դաշտը – մտքերը, որ արդէն կան (եւ անկարելի էր, որ չլինէին առաջուց) առնել, կենդանագործել ու (աւելի պարզ, բայց շքեղ) պատկերացնել, ներկայացնել հասարակութեանը*» (*հտր. 9*, էջ 237-38):

Այս տեսանկիւնից հետաքրքրական է դատողութիւնը իր ստեղծագործական երազանքի՝ *Հազարան բլբուլի* առումով, մի բան, որ կարմիր թելի պէս անցնում է նրա նամակագրութեան միջով: Միայն նիւթի շուրջ նրա ձեւակերպումներն ընթերցողի համար բաւական են չափելու այն գորովը, որ տածում էր այս թեմայի հանդէպ, ինչպէս օրինակ՝ «*ման եմ գալիս իմ հեքիաթը*» (*հտր. 9*, էջ 204): Նրան անգամ չէր վախեցնում այն, որ նիւթը զուտ տեղական նշանակութիւն կամ ծագում չունի: Այս մասին ինքնատիպ բացատրութիւն է տալիս. «…Ես մի (իսկապէս երկու հեքիաթ միացրած) հեքիաթ «Հազարան բիւլբիւլը» եւ «*Սինամ թագաւորի գաղտնիքը» նիւթ առած ուզում եմ յօրինել մի արեւելեան պոէմա: Դրանով հետաքրքրուելով գտայ, որ շատ անգամ տպուած է, բոլոր ազգերն ունեն, պատմուած է հազար ու մի ձեւով… բայց այդ բոլորից յետոյ ես ոչ միայն չթողի իմ հեքիաթը, այլ աւելի պինդ բռնեցի, աւելի ոգեւորուեցի այդ նիւթով. ով ինչպէս ուզում է գրած լինի, ես էլ **ինձպէս** եմ ասելու*» (*հտր. 9*, էջ 238, ընգծումը մերն է - Ք.Ա.):

Ուշագրաւ է նաեւ մէկ այլ ոլորտի՝ ժանրին տրուած բնորոշումը, հենց նոյն *Հազարան բլբուլի* օրինակով. նա խորհուրդ է տալիս խուսափել հեքիաթին տրուած պարզունակ դերակատարութիւնից, քանի որ «*դա գրականութեան մէջ ամենաբարձր արտայայտութիւնն է, ուր ամբողջը յաւիտենական սիմվոլներ են*» (*հտր. 10*, էջ 424): Սա ժանրատեսակի ընդլայնումի միտում էր, որ իր ծաւալումները պիտի ստանար Յակոբ Օշականի դատողութիւններում եւ ստեղծագործութեան մէջ[10]:

---

[10] «*Հեքիաթները դարաւոր փորձառութեանց հանգանակներ են: Երբեմն, անոնք խլեակի մը ձեւին տակ մեծ, հեռաւոր, ա՛լ մոռցուած համարուող նաւաբեկութեանց չարաշուք, բայց սթափեցնող յիշատակը կը պտպտցնեն սերնդէ սերունդ: …Ժողովուրդի մը երեւակայութիւնը, հոգեկան աշխարհը իր խորագոյն ալքերուն մէջ վրդովող այդ դրուագները դարերով կը դիմանան, նոյնիսկ իրենց սփուերներովը, որոնք կերպով մը կախուած կը մնան արդէն անոր ճակատագրի ճամբաներուն: Ու սերունդները միշտ ջնջելիք կամ աւելցնելիք բաներ կ'ունենան նախնական տեսիլքներուն վրայով*» (Յակոբ Օշական, *Համապատկեր արեւմտահայ գրականութեան, եօթներորդ հատոր (Արուեստագէտ սերունդ)*, Անթիլիաս, 1979, էջ 258-59):

Նիւթին անմիջապէս կապւում է մանկական գրականութեան խնդիրներին անդրադարձը, որը վերաբերում է բանաստեղծի շատ աւելի հասուն տարիքին եւ եւս մէկ անգամ գալիս է հաստատելու, որ մանկական գրականութիւնը դժուարին տարածք է, գրականութեան մի ոլորտ, «*որ աւելի հաճոյքով կ'անեմ*»՝ խոստովանում է բանաստեղծը (*հտր. 10*, էջ 104), մանաւանդ «մանկական գրականութեան սովի» պայմաններում: Պատահական չէ, որ մանկական, այդ թւում՝ եւ հայրենագիտական բնոյթի խաղեր է կազմել (*հտր. 10*, էջ 222):

Հեղինակն այս առթիւ կարեւոր զգուշացում ունի. չպէտք է ելնել այն հանգամանքից, թէ «*հենց անունը հեքիաթ է, վերջացաւ: Գրիմմի անունն էլ վրէն: Կարծում են հեշտ բան է հէքեաթ մշակելը: Գրիմմները հազիւ մի քանի հեքիաթ ունեն մշակուած: Մնացածը ժողովրդական հեքիաթներ են, խառնած, աղաւաղած ու փչացրած*» (*հտր. 10*, էջ 423-24):

Այս վերաբերմունքի ուղղակի շարունակութիւնը կարող ենք նկատել նաեւ դատողութիւնը, որ բերում է Ռուբէն Դրամբեանի յարձակումին ի պատասխան գրուած «Ոչ-գրական ոչնչութիւնները քննադատ» յօդուածում, թէ «*Դուք* (իմա՝ Դրամբեանը – Ք.Ա.) *էնքան տգէտ էք, չէք էլ իմանում, որ հեքիաթները գրական մարդիկ չեն յօրինում, այլ առնում են ժողովրդականը ու պատմում: Եւ շնորհքը հենց էդ պատմելու մէջն է, որ իմանան ինչը փոխեն, ինչը դուրս գցեն, ինչը պահեն, ինչ լեզուով, ինչ ոճով ու ինչպէս պատմեն, որ ե՛ւ գեղեցիկ դուրս գայ, ե՛ւ ժողովրդականի համն ու հոտը չկորցնի*»[11]:

Իսկ որպէսզի գրողը պատկերացում կազմի ժողովրդական աւանդոյթների ու պատումների մասին, մի բան, որ իրեն յաճախ չէր յաջողւում, պէտք է «*գրողը կարողանայ ճանապարհորդել, ուսումնասիրել իր ժողովուրդն, ուսումնասիրել նրա աւանդութիւնները, լեզուն, ադաթները: Սաստիկ զգում եմ այս կարիքը ամէն անգամ, երբ լինում եմ ժողովրդի մէջ – ծո՛վ է, ծո՛վ*» (*հտր. 9*, էջ 264):

Վերոնշեալ մէջբերումները խօսում են այն ընդհանրական մօտեցման մասին, որ որդեգրում է հեղինակը թէ՛ հրապարակային խօսքում, թէ՛ մտերմիկ հաղորդակցութիւններում:

Եթէ խօսելու լինենք առհասարակ ժանրային հարցադրումների մասին, պիտի նկատել, որ առաջին հայեացքից թւում է, որ Թումանեանը առանձին նախապատուութիւններ չունի: Յամենայն դէպս, ծաւալուն ժանրերին իր քիչ հակուածութիւնը նա բացատրում է հասարակական գործօնից ելնելով. «*Բանաստեղծը միայն խաղաղութեան մէջ կարող է ամփոփուել, ոգեւորուել ու սրտեղծագործել - մանաւանդ մեծ գործեր, օրինակ պոէմ, դրամա եւ այլն: Ես այսքան բան որ ունեմ կիսապ-պռապ ընկած՝ նրանից հո չի,* [որ] *ուժս*

[11] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ* (Քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1887-1912), ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 1994, էջ 161:

չի պատրել, այլ նրանից, որ խանգարուել եմ: …Խանգարել որ ասում եմ, ես դժուարութիւնը չեմ հասկանում, …ես այն արգելքներն եմ ասում, որ մարդու հնարաւորութիւն չեն տալիս, չեն թողնում պարապի, ուշքն իրան հաւաքի…» (*հտր. 9*, էջ 203): Հաւատա՞նք բանաստեղծի՝ ի՛ր իսկ ստեղծագործութեանը տրուած խիստ գնահատականին. թերեւս վերապահումով: Եւ սա հաստատելու համար բաւական է միայն սեւեռուն միտքը, որ ստեղծագործական կեանքի սկզբից ուղեկցել է իրեն, այն է՝ դրամատուրգիային հակումը. «*…Ուզում էի դրամա գրող դառնալ…*» (*հտր. 9*, էջ 229), ինչի փորձերը հեղինակային վկայութիւններում կան[12]:

Թումանեանի ստեղծագործութեան մէջ կարելի է առանձնացնել նրա գեղագիտական համակարգը բնորոշող առանձին բանալի բառեր, որոնցից առնուազն երեքը՝ **Վերը, Անյայտը, Հեռուն**, հեղինակային մեկնութիւնների առիթ են տուել. բանաստեղծը մէկ տողով է բացատրել առանձին ստեղծագործութիւններում ցրուած այս երեք դասակարգումները՝

«*…**Անյայտը**, որ պէտք է ունենայ ոգեւորուած գրողը, դեռ խաւար է, մութ է ինձ համար, ու… թափառում է իմ հոգին* (յիշենք թէկուզ «Հայրենիքիս հետ» քերթուածի սկզբնամասը – Ք.Ա.):

Այդ անյայտը, կամ աւելի ճիշդ՝ իմ անյայտը, գուցէ հենց այն «Վերն է», որ ես մեծապառով յիշատակել եմ «Ընկերիս» ոտանաւորի մէջ…: Բայց հենց դա էլ շատ է անորոշ, կամ ինչպէս ոտանաւորն ինքն է ասում.

Բայց, ա՜խ, նա այնքան, այնքա՜ն է հեռու…

*Այդ **հեռու**-ին հասնելը կամ այդ խաւարը պարզելը հնարաւոր է, ի հա՛րկէ, միայն զարգացումով, այնպիսի զարգացումով, որ ես երբեք ունենալու չեմ եւ միշտ **թափառելու է իմ հոգին***» (ընդգծումները հեղինակինն են – Ք.Ա., *հտր. 9*, էջ 439):

Նկատենք, որ յետագայ գեղարուեստական բնագրերում այս հասկացութիւնները շատ աւելի բազմաբովանդակ են, քան նկատառումներն են նամակներում:

դ) ***Ժողովրդական բանահիւսութեան, գրական դէմքերի եւ գրապատմական երեւոյթների գնահատութիւններ***: Թումանեանի դատողութիւնների մէջ առանձին մեծ բաժին են կազմում ժողովրդական բանահիւսութեան հետ աղերսներն ու դրա իմաստաւորման փորձը: Իդէպ, սա հեղինակը կատարել է առնուազն երեք ճանապարհով՝ զուտ գեղարուեստական անդրադարձներում (յիշենք թէկուզ լեգենդներն ու բալլադները, ինչպէս

---

[12] Թիֆլիսի նահանգային ժանդաստիկանական վարչութեանն ուղղած դիմումի մէջ Թումանեանը յայտնում է, որ «*Յունուարի 19-ի բնակարանիս խուզարկութեան ժամանակ ժանդարմական վարչութեան գրաւոր կարգադրութեամբ բռնագրաւուել են իմ ձեռագրերը: Նոյն ամսի 27-ին ես եւթ ստացայ ձեռագրերի պարկը, որից երկու փաթեթը իմս չէին…, իսկ իմ ձեռագրերից պակասում էին մի քանի անփիպ, անաւարտ պոէմներ, հեքիաթներ եւ մի դրամա, **որոնք շատ թանկ են ինձ համար***» (*հտր. 10*, էջ 517, ընդգծումը մերն է – Ք.Ա.):

«Լուսաւորչի կանթեղը», «Փարաւանա»ն, «Աղաւնու վանքը», «Աղթամար»ը, «Սասունցի Դաւիթ» դիւցազնավէպի համանուն ճիւղի մշակումը), յօդուածներում («Ղազարոս Աղայեանի *Անահիտ*ը» եւ ուրիշներ) եւ նամակներում, որոնցում պարզաբանւում են այն շեշտադրումները, որոնցով պայմանաւորւում է ազգային գրականութեան ծագումնաբանութիւնն ու ինքնուրոյնութիւնը (*հտր. 9*, էջ 212):

Բնութագրական է Տիգրան Չիթունու «Արեւելեան խաղաշխարհ»[13] աշխատութեան առանձնացնումը. «*Սակայն աչքի առաջ ունենալով նիւթի կարեւորութիւնն ու հաւաքողի, գրի առնողի հմտութիւնը, որպէս ընկերութեան անդամ (խօսքը Կովկասի հայոց հրատարակչական ընկերութեան մասին է – Ք.Ա.), հայոց գրականութեամբ պարապող մէկը՝ կը ցանկանայի տպագրուած տեսնել պ. Չիթունու ինչպէս յիշեալ աշխատութիւնը, այնպէս էլ նրա միւս աշխատութիւնները՝ «Սասմանց տուն», «Հերան-Թուրան», «Վանի նահանգ», «Հեքիաթներ», «Բուսաբանութիւն» (հայկական), «Բառարան Վասպուրականի բարբառի» եւ այլն*» (*հտր. 10*, էջ 167-68): Նոյն գնահատանքով է նա արտայայտւում նաեւ Սահակ Ամատունու *Բառ ու բան*[14] աշխատութեան մասին (*հտր. 10*, էջ 169):

Թումանեանի գնահատականները հասնում են մինչեւ «*Նարեկն ու Խորենացին, մեր հոգեբուխ շարականներն ու մեղեդիները*» (*հտր. 9*, էջ 290), մինչեւ Մխիթարեաններ, որոնց առաքելութիւնը տեսնում էր հայրենիքը պատմելու եւ մայրենի լեզուով եւրոպական արժէքները մեզ առաջինը ծանօթացնելու մէջ (*հտր. 9*, էջ 279): Նա յայտնի է իր «*նախորդ շրջանի բանաստեղծներին*», առանձին հեղինակներին տրուած բնորոշումներով (Խաչատուր Աբովեան, Աղայեան, Ռափայէլ Պատկանեան, Լեւոն Շանթ եւ շատ ուրիշներ), որոնք առաջին հերթին երեւան են գալիս ծրագրային յօդուածներում, ելոյթներում, ապա ոչ-երկրորդական հանգամանք ստանում նամակներում:

Այս առթիւ նշանակալի է 1907ի Յունիսի 10ին Թիֆլիսում կարդացած «Կեանք եւ գրականութիւն» դասախօսութեան մէջ Ռ. Պատկանեանին տրուած գնահատականը, ուր նրան անուանելով «հայոց ազգային երգիչ» եւ վկայաբերելով «Իմ երգը» եւ «Շինականի երեկոյեան երգը» բանաստեղծութիւններից հատուածներ, որսալով որոշակի արհեստականութիւն այս կարգի գործերում, այնուամենայնիւ, գտնում է. «*Ուրիշ բան է, երբ Գամառ-Քաթիպան իր ռազմական երգերն է երգում, այստեղ է երեւան գալիս նրա ամբողջ ուժը, եւ վիթխարի հսկայի նման ծառանում մեր առաջ*»[15]:

---

[13] Տե՛ս՝ *Արեւելեան խաղաշխարհ: Տոհմիկ խաղեր եւ ժամանցներ, Ա. հատոր*, Կ. Պոլիս, 1919. նաեւ՝ *Հայկական խաղեր եւ ժամանցներ կամ Արեւելեան խաղաշխարհ, Բ. հատոր*, Կ. Պոլիս, 1919:

[14] Տե՛ս՝ *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912:

[15] Յովհաննէս Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր վեցերորդ*, էջ 532-33:

Իսկ արդէն նամակագրութեան մէջ նշանակալի է Նոր Նախիջեւանում Պատկանեանի արձանի կանգնեցման առթիւ աւելի վաղ՝ 1901ին, յղած գրութիւնը, ուր տեղ են գտել վերոնշեալ «Իմ երգը» բանաստեղծութեան քառատողի իր փոփոխած տարբերակը եւ հաւաստումը, որ «*Մենք, ժամանակակիցներս գիտակից ենք բանաստեղծի մեծութեանը…*» (*հտր. 9*, էջ 283-84): Միաժամանակ ընդգծենք, որ շատ աւելի ուշ գրում է, որ մոռացութեան է տուել այս կտորը եւ հակասելով ինքն իրեն՝ գտնում է, որ շատ աւելի հակուած է այն մտքին, որ «*նա* (իմա՝ Պատկանեանը - Ք.Ա.) *էն չի, ինչ որ կարծում են, այսինքն՝* ***հայոց ազգային մեծ բանաստեղծը*** *չի*», միաժամանակ վերջնական գնահատականի պայման համարելով «*օբյեկտիւ ու յարգալից վերաբերմունքը, կիրթ, գեղարուեստական ճաշակն ու առողջ գրական հասկացողութիւնը*» (*հտր. 10*, էջ 249-50, ընդգծումը մերն է – Ք.Ա.):

Գրականութեանն ու գրողների մասին այս դրուագային դատողութիւնների կողքին Թումանեանը պահանջ էր դնում նաեւ գրականութեան պատմութիւն ունենալու եւ այդ ուղղութեամբ գնահատելի է համարում Լէոյի *Հայ նոր գրականութեան պատմութիւն*[16] փորձը՝ անկախ հեղինակի հանդէպ իր վերապահումներից (*հտր. 10*, էջ 216):

ե) Պակաս կարեւոր չեն ***ինքնագնահատութիւնները***, որոնք աչքի են ընկնում սթափ մօտեցումներով, երբեմն ստեղծագործական ընթացքի ամբողջական ուրուագծումներով, ինչպէս *Լոռեցի Սաքօն* պոէմի պատմութիւնը: Նկատելի է այս կարգի դատողութիւններում նաեւ այլ հեղինակների գնահատականների հետ փոխներթափանցուածութիւնը: Այսպէս, Աղայեանի վրայ պոէմի թողած ազդեցութիւնը առիթ է գնահատելու նաեւ հենց Աղայեանին: Անգամ մէկ պարբերութեան տիրոյթում կողք կողքի երեւում են երկուսն էլ. «*Աղայեանցը նոյնիսկ առաջին տողերից շատ բծախնդիր լինելով, ես սրիպուեցայ պահպանողական դիրք բռնել. միմեանց չզիջանք. այնպէս որ բանը վիճաբանութեան փոխուեց (բայց, ի հա՛րկէ, մեղմ): Այս մարդու յատկանիշն է միշտ նախապաշարուած վերաբերուել դէպի ուրիշները: Դեռ կէսը չհասած մի գոռգոռոց սարքեց, թէ բոլորովին հոգեբանութեանը հակառակ է Սաքոյին խելագարեցնելը: Ես հակառակն ապացուցեցի…*» (*հտր. 9*, էջ 23):

Բաւական տպաւորիչ է առաջին *Բանաստեղծութիւններ* ժողովածուի շուրջ ստեղծուած մթնոլորտի հեղինակային իմաստաւորում-բնութագրութիւնը Ա. Աբովեանին ուղղած 1890ի Նոյեմբերի 29 թուակիր նամակում, թէ՝ «*Ահա ընդհանուր կարծիքն իմ գրքիս մասին, կան մարդիկ, որ ասում են, թէ բոլորը լաւն է, սրանք սուտ են ասում կամ չեն կարողանում ջոկել, կան մարդիկ, որ պոէմաներն են շատ գովում, կան՝ որոնք փոքրիկ ոտանաւորները*» (*հտր. 9*, էջ 54), եւ անմիջապէս վերադարձը *Լոռեցի Սաքօ*ին. «*Բայց*

[16] Հաւանաբար նկատի ունի «*Ռուսահայոց գրականութիւնն սկզբից մինչեւ մեր օրերը*» աշխատութիւնը (Վենետիկ, 1904):

*մի շատ յամառ կարծիք կայ (սրանց թիւը մեծ է, եւ առ հասարակ լուսաւորուածներն են) «Լոռեցի Սաքոյի» մասին, թէ նա լինելով առողջ եւ աներկիւղ «**իգիթ**» չէր կարող վախենալ քաջքերից եւ **խելագարուել**: Ես թէեւ շատ պակասութիւն եմ խոստովանում իմ գրքում, բայց այս կարծիքին ես հաւան չեմ*» (*հտր. 9*, էջ 54-55): Սա միքանի կողմից է մեր առջեւ բացում Թումանեանի կերպարը. առաջին հերթին երեւում է «ինքնադատութեան փորձ»ը, ինչպէս կ'ասէր Միսաք Մեծարենցը, եւ երկրորդ, ընթերցողի հանդէպ բացարձակ յարգալից վերաբերմունքը եւ նոյն անաչառութեան ակնկալիքը:

զ) ***Գրական ազդեցութիւններ***: Այս տեսանկիւնից բնութագրական է Եուրի Վեսելովսկուն եւ Լէոյին ուղղած նամակների բովանդակութիւնը, որոնցում հետաքրքրականը ոչ միայն հեղինակային խոստովանութիւններն են, այլեւ այն տարածութիւնը, որի վրայ ծաւալւում են իր գրական դասերի արմատները. «*Ռուս բանաստեղծներից ամէնից շատ ինձ վրայ ազդել է Լերմոնտովը, ապա՝ Պուշկինը, եւ, [այժմ] ես կարծում եմ, նրանց ազդեցութիւնն է եղել երեւի, որ գրել եմ ես այն պոէմաները, ուր երգուած են մեր լեռնական ժողովրդի կեանքը, սովորութիւններն ու բնութիւնը*» (*հտր. 9*, էջ 344-45): Այդ ազդեցութիւնը նաեւ պայմանաւորում է նոյն գրողներից արած իր թարգմանութիւններով, որոնք նոյնպէս չէին կարող բանաստեղծի հոգեաշխարհում անհետեւանք անցնել (*հտր. 9*, էջ 380): Շարունակելով աշխարհագրականօրէն ընդլայնել ազդեցութիւնների ոլորտը՝ բացատրում է. «*Դրանցից յետոյ ծանօթացել ու սիրել եմ Բայրոն, Գէօթէ, Շեքսպիր*[17]*: Սրանք, կարծում եմ, անպայման ազդել են իմ գրուածքների վրայ, բայց այնպիսի գրուածքների, որ տակաւին չեն տպուած, [մինչեւ անգամ չեն վերջացած]*» (*հտր. 9*, էջ 345)[18]: Սակայն միաժամանակ լրջագոյնս յորդորում է ու-

---

[17] Եթէ խօսելու լինենք թումանեանական գրական «ուսումնառութեան» մասին, առաջին հերթին պիտի նկատի առնենք Շեքսպիրի հանգամանքը: Միքանի արտայայտութիւններ անգամ բաւարար են հասկանալու այն մեծ ակնածանքը, որ նա ունէր Շեքսպիրի գրականութեան նկատմամբ: Հարցին, թէ՝ «Դու ինչ ես մտածում քո զարգացման մասին», պատասխանում է կարճ ու հատու. «*Ուզում եմ Շեքսպիրը լաւ ուսումնասիրեմ*» (*հտր. 9*, էջ 146): Բացի այս ուղիղ խոստովանութիւնից՝ տասնեակ նամակներում - անգամ կենցաղային բնոյթի - ուղղակի կամ անուղղակի վկայակոչում է հեղինակին կամ նրա գործերից հատուածներ, գնահատութիւններ տալիս անգամ հասուն տարիքում (տե՛ս՝ Ջորջ Ալեքսանդերին գրած նամակը, *հտր. 10*, էջ 238):

Առհասարակ Թումանեանի նամականին բնակեցուած է նաեւ օտար հեղինակների գնահատութիւններով՝ Շեքսպիրից մինչեւ Պուշկին ու Լերմոնտով, մինչեւ վրացի գրողներ՝ Դաւիթ Կլդիաշվիլի, Սիկօ Փաշալիշվիլի, մինչեւ լեհական ոգու «*մեծ կրողներ եւ պատգամախօսներ*» Միցկեւիչ եւ Սենկեւիչ (*հտր. 10*, էջ 259):

[18] Թերեւս հենց սրանով պիտի պայմանաւորել այն հետեւողականութիւնը, որ նա դրսեւորում էր թատերական արուեստի, թատրերգութեան եւ այս ճանապարհով՝ Շանթի դրամաների նկատմամբ, միաժամանակ գորով տածելով արեւմտահայ

շադիր լինել այս նուրբ ու սայթաքուն նիւթի հանդէպ. «*Ես որ ասում եմ ազդուած եմ..., ազդեցութիւնները ես ոչ թէ իմ գործերի, փողերի մէջ եմ նկատում, այլ որովհետեւ զգում եմ իմ հոգու, իմ երեւակայութեան, իմ բարոյական ամբողջութեան վրայ...*» (*հտր. 9*, էջ 345)[19]:

Սրանք համեմատական գրականագիտութեան համար առատ նիւթ տուող վկայութիւններ են՝ արժանի համակողմանի ուսումնասիրութեան:

է) ***Թումանեանը՝ քննադատութեան մասին***: Այստեղ նա մի կողմից զուսպ ու հաւաք լինելու կողմնակից է, միւս կողմից՝ անաչառութիւնը կարգախօս դարձրած արուեստագէտ: «*Քննադատը թարգմանիչ է: Նա պէտք է թարգմանի բանաստեղծին եւ թարգմանի ոչ թէ նրա բառերը, այլ նրա սիրտը: Աստծու նման սրտագէտ լինի ու խորաթափանց, գտնի ամէն բանի աղբիւրն ու արմատը, որ կարողանայ ճշմարիտ գնալ ու արդար դատել: Այնժամ կը պարզուեն մթութիւնները, հասկանալի ու բնական կ'երեւան ըստ երեւոյթին* (նկատի ունի արտաքինը, խաբուսիկութիւնը – Ք.Ա.) *հակասութիւնները եւ քաոսի մէջ կը յայտնուի ներդաշնակութիւնը՝ եթէ կայ*» (*հտր. 9*, էջ 442-43)՝ յայտարարում է նա, բացարձակ շնորհ ու իրաւունք վերապահելով քննադատին: Բայց իբրեւ երեւոյթի կարեւորութիւնը խորապէս ըմբռնող արուեստագէտ՝ նա նաեւ դնում է միւս կողմի՝ քննադատուողի տաղանդի պահանջը. «*Ամէնից առաջ հարկաւոր է, որ մէկը բանաստեղծ լինի բառի լուրջ իմաստով: Նրանից յետոյ պէտք է նրան հասկանալ: Եւ այս դժուար բան է: Նա ինքն էլ յաճախ իրեն չի հասկանում, կարող է սխալ մեկնութիւն տալ իր այս կամ այն երգին ու երկին, ճիշտ այնպէս, ինչպէս մայրը կարող է գլխի չընկնել, թէ ինչ շնորհք ունի այն որդին, որ ինքն է ծնել*» (*հտր. 9*, էջ 443): Սա արդէն գրական երկի ինքնուրոյն կեանքով ապրելու իրաւունքի, շարունակականութեան դատողութիւնն է, որի շուրջ շատ յաճախ ծաւալւում են ժամանակակից գրականագիտութեան հարցադրումները:

Մեզ համար ուշագրաւ են նաեւ այս կարգի դատողութիւններում ռուս գրականագէտ Վիսարիոն Բելինսկուն կատարուած յղումները, ինչի շնորհիւ է (մասնաւորաբար նկատի ունի «*բանաստեղծի մեծութիւնը կայանում է*

գրողի հանդէպ. «*Երանի թէ մեր Շանթից մի բան դուրս գայ, եւ իր դրամայով չփչացնի դրամատուրգի այն հռչակը, որ մենք առանց դրամայի վաստակել ենք նրան համար: Շատ ուրախացայ, որ նրան այդքան հաւանել էք* (խօսքը Մարիամ Թումանեանի մասին է – Ք.Ա.) *եւ այդքան մօտիկ էք ընդունում*» (*հտր. 9*, էջ 375):

[19] Այստեղ տեղին է վկայաբերել նաեւ բանաստեղծի «Խօսք սկսնակ բանաստեղծներին» յօդուածը, որտեղ նրա ուղղորդումը հանգանակի արժէք ունի. «*Մի՛ շփոթուէք... էն ժամանակ, երբ ազդեցութիւների խօսք են ասում: Համաշխարհային գրականութեան մէջ ոչ մի բանաստեղծ չկայ, որ շատ կամ քիչ ազդուած չլինի իր նախորդներից: Ազդեցութիւնը էն սանդուղքն է, որով սկսնակը բարձրանում է դէպի ինքնուրոյնութիւնը*» (Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր եօթերորդ (Քննադատութիւն եւ հրապարակախօսութիւն. 1913-1922)*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1995, էջ 302):

նրա ժողովրդեան լինելու մէջ (“народность”») հաստատումը (*հտր. 9*, էջ 448) բանաստեղծը լուծում իր կերպարի խնդիրը[20]:

Առանձին դրուագներում Թումանեանը նաեւ բերում է անձերի, մասնաւորաբար հայ քննադատներին, որոնցից ամէնից յաճախ հեղինակի տեսադաշտում յայտնւում է Էէօն. ահա մի դատողութիւն 1904ի Յուլիսին Մարիամ Թումանեանին ուղուած նամակից. «*Կարդացի Էէոյի յօդուածը «Ոսպիկի» մասին եւ Ձեր, չգիտեմ ընչի ասեմ, վէպիկի, պատկերի, մի խօսքով Ձեր գրածի: Առ հասարակ բոլոր քնքոյշներդ շատ բախտաւոր պրծաք Էէոյի ճանկից. մարդը գովում է կարգին եւ, մինչեւ անգամ, հրաւիրում է միասին աշխատելու*» (*հտր. 9*, էջ 434) կամ «*Երեւակայիր, որ Էէօն մի շատ միամիտ ու բնաւորութեամբ էլ մի խեղճ մարդ է: Շատ շատերից աւելի լաւ ընկեր, իսկ ինչ վերաբերում է զանազան հայեացքների - էդ առանձին: Շատ բաների մասին էլ, եւ մանաւանդ, մեր «Վերնատան» մասին, նա ուրիշ կարծիք ունի այժմ: Բայց էդ երկրորդական բան է*» (*հտր. 10*, էջ 41):

ը) ***Թումանեանը թարգմանութիւնների մասին***: Այս դիտարկումները բացւում են միքանի կողմերով, որոնցից առաջինը վերաբերում է ինքնուրոյն գրականութեան եւ թարգմանութեան յարաբերակցութեանը: Գրողի պահանջը ելնում է ինքնուրոյն գրականութեան հանդէպ յարգանքի գործօնից. Խօսելով վարձատրութեան եղանակի մասին՝ Թումանեանը գրում է. «*Թարգմանութեանը տալիս են 20-25, ինքնուրոյնին 25-30. զանազանութիւնը 5 ռ. են գտել: Ամէն մարդ ձեռնհաս լինելով՝ թարգմանութիւն է անում եւ փող սպանում, եւ հեղինակը, որ կարող էր ինքնուրոյն բան գրել մտածում է՝ մի վէպ գրելու համար պէտք է նստեմ ամիսներով չարչարուեմ, որ սպանամ, ենթադրենք, 100 ռուբլի, աւելի լաւ չի լինիլ՝ մի շաբաթ նստեմ, մի բան թարգմանեմ՝ աւելի շատ կը սպանամ: Այսպիսով փուժում է ինքնուրոյն գրականութիւնը...*» (*հտր. 9*, էջ 132):

---

[20] Այդ կերպարը առաւել ցայտուն երեւում է բանտում եղած ժամանակահատուածում. այստեղ էլ նա չի մոռանում իր բուն առաքելութիւնը՝ ցանկացած պարագայում մնալ «բարձրում»: Պատահական չենք համարում, որ այդ բոլոր գրութիւններում նա շեշտում է իր «բանաստեղծ» լինելու հանգամանքը եւ այդ հանգամանքից բխեցնում իր գործողութիւնները. «*Դուք* (Թիֆլիսի ոստիկանական վարչութեան ռոտմիստր Եւգենի Պրիգարան – Ք.Ա.) *ենթադրում էք, որ ես կարող եմ այդ ճանապարհին յեղափոխականների նման զէնք օգտագործել: Իսկ ինչպէ՞ս կարող էր պատահել, որ ես չօգտուէի մի այլ զէնքից, իմ բանաստեղծական տաղանդից եւ իմ գրչից, որոնք, Դուք էլ կը համաձայնէք, աւելի զօրեղ են ամէն մի ապրճանակից...*» (*հտր. 10*, էջ 483), մի բան, որ ապացուցել էր տարիներ առաջ գրուած *Թմկաբերդի առումը* պոէմի նախերգանքում՝ «*Խօսքըս, տեսէք, ո՞ւր է գնում / Քաջ որսկանի գիւղի պէս*» (Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր չորրորդ (պոէմներ)*, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտ, Երեւան, 2020, էջ 48):

Թումանեանը բարձր նշաձող էր սահմանում թարգմանութեան նկատմամբ: Վարդազարեանին ուղղած 1895ի Օգոստոսի 21ի նամակում գրում է. «*Եւր եմ ուղարկում «Դեւը». այդ թարգմանիչը ոչ թէ բանաստեղծ չի, ինչպէս երեւում է բանաստեղծի էլ ծանօթ չի*» (*հտր. 9*, էջ 158): Այսինքն՝ թարգմանչից պահանջւում է նաեւ բանաստեղծական ներքին տեսողութիւն, մի բան, որ ինքը լաւագոյնս է իրացրել եւ կարեւոր հանգամանք է թումանեանական թարգմանութիւնների երեւոյթը հասկանալու համար: Բնորոշ է այս առիթով նրա մէկ բացատրականը. «*Անցեալ օրը տեղում (առաւօրը) թարգմանեցի Колъцов-ի մի ոտանաւորը - «Сяду я за стол»* (բառացի՝ «Նստել եմ սեղան» - Ք.Ա.)[21] *- ուղարկեցի «Տարազին»: Стол-ը շինել եմ գիտես ինչ - պատի տակ, եւ այս ոչ թէ յանգի համար, այլ աւելի լուրջ խորհրդով: Եթէ սեղան թարգմանէի - նստել եմ սեղան - այդ հայերէն կը նշանակէր նստել եմ սուփրա: Եթէ գրէի սեղանի մօտ - տգեղ էր: Վերջապէս, բանաստեղծութիւնը հայերէն չէր լինի: Խեղճ հայ մարդու տարակուսանքի ու մտածմունքի տեղը - պատի տակն է*» (*հտր. 9*, էջ 235)[22]: Հենց սա է բանալին, որ Թումանեանի ընթերցողը երբեմն նրա թարգմանութիւնները դժուարութեամբ է տարբերակում ինքնուրոյն գործերից:

Իբրեւ մտաւորական՝ նա իր պարտքն է համարում կասեցնել անորակ թարգմանութիւնների շրջանառումը. «*...Ձեզ ամենայն անկեղծութեամբ ասում եմ, որ Ձեր լեզուն վատ է, կարգին հայերէն չգիտէք: Էդ հայերէնով չի կարելի գեղարուեստական գործեր թարգմանել* (խօսքը Տուրգենեւի *Ռուդին* վէպի մասին է - Ք.Ա.): *...Ի հա՛րկէ, էս տեսակ լեզուով տպած շատ գրքեր ունենք ու դեռ էլի կ՛ունենանք, բայց էդպէս չի կարելի*»՝ շիտակ գրում է Սաթենիկ Արտեմեանին ուղղած 1911ի Սեպտեմբերի 17 թուակիր նամակում (*հտր. 10*, էջ 125):

թ) ***Ազգայինի ու համամարդկայինի խաչմերուկներում***: Կարելի է անվերապահօրէն պնդել, որ Թումանեանը լաւագոյնս էր գիտակցում այս երկու չափումներին բաւարարելու նախապայմանը: Համամարդկայինի մէջ առաջին հերթին տեսնում էր փիլիսոփայական խոհը: Արդէն ստեղծագործական երկրորդ շրջանում (1900ականներ) բանաստեղծը աւելի է հակւում դրան. «*Ես էլ հետզհետէ փիլիսոփայութիւնն եմ սիրում եւ բանաստեղծութեան մէջ էլ այն, որ ոչ արտասուք ունի, ոչ յուզմունք, այլ մի վեհափառ խաղաղութիւն*[23]*, մի ոլիմպիական, վսեմ, արհամարհոտ թռիչք դէպի լաւագոյն*

---

[21] Խօսքը վերաբերում է «Գեղջուկի մտորմունքներից» («Նըստել եմ շըւար» սկսուածքով) բանաստեղծութեան մասին է, որ լոյս է տեսել՝ *Տարազի*, 19 Նոյեմբեր 1895ի համարի մասին է, էջ 66: Տպագրուած տարբերակում, սակայն, բացակայում է նշուած «պատի տակ» կապակցութիւնը:

[22] Բանաստեղծութիւնը բերում է արդէն Վարդազարեանին ուղղած 1900ի Հոկտեմբերի կէսերին գրած նամակում (*հտր. 9*, էջ 239-40):

[23] Առհասարակ պիտի նկատել, որ «խաղաղութիւն»ը փիլիսոփայական հասկացութիւն է, Թումանեան հեղինակի կերպարի ու բանաստեղծութեան ընկալման բա-

աշխարհները եւ աւելի ջինջ ու մաքուր մթնոլորտները» (*հտր. 9*, էջ 289)։ Սա, կարելի է ասել, բանաստեղծի բաղձանքն է՝ «*ընթրիքի նստել օտարների հետ*», բայց այդ «*լաւագոյն աշխարհներից*» նա, իբրեւ հա՛յ բանաստեղծ, պարտաւոր է վերադարձ կատարել, ինչը նրան նորից նետում է երկուութիւնների գիրկը. «*Զարմանք. Հայնէն ասում է՝ բանաստեղծի սիրտը աշխարհի կենտրոնն է։ Վա՜յ մեր աշխարհի բանաստեղծին ու նրա սրտին, եւ, յիրաւի, իմ սրտի վրայ չափազանց սաստիկ ծանրանում են մեր աշխարքի ամէն ցաւերը, գուցէ այդ արդէն ապացոյց է, որ ես էլ եմ բանաստեղծ, …ես առանց երգելու յոգնած եմ այդ ցաւերից ու սիրում եմ բոլորովին ուրիշ ցաւեր, աւելի անուշ, աւելի աստուածային, երջանիկ ցաւեր*» (*հտր. 9*, էջ 289-90)։

Սրանք այն մտահոգութիւններն են, որոնք մէկուկէս տասնամեակ անց, ժողովրդի համար ճակատագրական օրերին պիտի բանաստեղծական մարմնաւորում ստանային «Հայրենիքիս հետ» բանաստեղծութեան սկըզբնատողերում.

Վաղուց թէեւ իմ հայեացքը անյայտին է ու հեռում
Ու իմ սիրտը իմ մտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարօտով ամէն անգամ երբ դառնում եմ դէպի քեզ՝
Մղկտում է սիրտս անվերջ քո թառանչից աղեկէզ[24]։

Եւ ապա կեանքի վերջին տարիներին գրուած քառեակներում վերածուէին բանաստեղծի՝ աստուածայինի հետ նոյնացման խորհրդին.

Առատ, անհատ՝ Աստծու նըման՝ միշտ տեղալուց յոգնել եմ ես…[25]։

Կամ՝

Տիեզերքում աստուածային մի ճամբորդ է իմ հոգին[26]։

ժ) ***Ոճական եւ*** կառուցողական ***յատկանիշներ***։ Դրանց մէջ մասնաւորւում է յատկապէս երգիծանքը, որը ոչ-երկրորդական դերակատարութիւն ունի Թումանեանի նամակագրութեան մէջ։ Գրականագէտ Ջրբաշեանը, որը մի ամբողջ ուսումնասիրութիւն է նուիրել Թումանեանի ստեղծագործութեան մէջ երգիծանքի բնագծերին՝ իրաւացիօրէն զգուշացնում է երգիծաբանութեան եւ երգիծական տարրի առկայութեան տարբերակման մասին, երեւոյթը տարածելով գրողի ստեղծագործութեան գրեթէ բոլոր ժանրերի, այդ

նալի բառերից մէկը։ Եւ սա աւելի է շեշտւում 1910ականներից. «*Ես էլ թէեւ կեանքին ու աշխարհքին շատ փիլիսոփայաբար եմ վերաբերւում եւ մի հաստատուած խաղաղ վերաբերմունք ունեմ դէպի մահն էլ, բայց, այսուամենայնիւ, էս ամէնը վրէս շատ են ազդել*» (*հտր. 10*, էջ 290)։ Չմոռանանք, որ սա 1916 թուականն է եւ անմիջապէս մեզ բերում է քառեակների խորհրդին։

[24] Թումանեան, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (վերախմբագրուած հրատարակութիւն), հատոր առաջին,* էջ 288։

[25] Նոյն, *Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, հատոր երկրորդ*, էջ 49։

[26] Նոյն, էջ 63։

թում՝ նամակների վրայ. «*Հումորն ու երգիծանքի միւս երանգները լայնօրէն տեղ են գտել նաեւ Թումանեանի նամակների մէջ, եւ դա, ի դէպ, նրանց ընթերցանութեան ընթացքում մեր ստացած իսկական գեղագիտական բաւականութեան հիմքերից մէկն է*»[27]: Նկատենք, որ նմանօրինակ ոճաւորումը բնորոշ է ոչ միայն կենցաղային բնոյթի, այլեւ գրական հարցադրումներով առանձնացող նամակներին եւ տարածւում է նամակագրութեան ամբողջ ընթացքի վրայ: Դեռ ստեղծագործական արշալոյսին յայտարարում էր. «*Այսուամենայնիւ այն էլ գիտես* (խօսքը Ա. Աբովեանի մասին է - Ք.Ա.), *որ ես ինձանից խելօքների հետ եմ ընկնում. ասած ա է, թէ քոսոտ էծը պարզ աղբրի ակնիցը կը խմի: Վերջապէս սրանք ինձ ասում են, հաւատացնում են, որ ես շատ բանջարեղ (հանճարեղ) բանաստեղծ եմ. մի քանի ուրիշ մարդկանց հաւատացրել են, բայց ես չեմ հաւատում: Դուն էլ չէիր պակաս ծգել նամակումդ*» (*հտր. 9*, էջ 16), «*…սրա-նրա մօտ այնքան է գովել* (Աղայեանը - Ք.Ա.), *որ խալխը հենց գիտեն՝ Բայրոնի ազգականն եմ*» (*հտր. 9*, էջ 26) կամ «*Մեր վարդապետացու Եղիշէն եւս այստեղ է. նա ու տէր Մուշեղը (որ այժմ անդամ է կոնսիստորում* (խօսքը Թիֆլիսի հայոց ժողովատեղիի մասին է - Ք.Ա.) *ինձ առաջ **մալենկի*** (փոքր - Ք.Ա.) *պոէտ էին անուանում, հիմա **վելիկի*** (մեծ - Ք.Ա.) *ծեռնադրեցին*» (*հտր. 9*, էջ 45), «մի խօսքով, շուտով տարածուեց, որ ես ազգային մի ջոջ եմ» (*հտր. 9*, էջ 250): Մանաւանդ վերջինը յատկանշական է նրանով, որ յղում է կատարում Յակոբ Պարոնեանին: Կարեւոր մի հանգամանք եւս. հեղինակի երգիծանքը նախ եւ առաջ իրեն է վերաբերում, ապա նաեւ իր ճանապարհով շուրջիններին. տիպիկ օրինակը մեզ տալիս են Աղայեանին 1893ի Նոյեմբեր 18ին եւ 1894ի Յունուար 27ին ուղղած նամակները եւ դրանցում արտացոլուած բնութագրումները: «*Գրել էք, թէ կուսակցութեան կարօտը քաշում էք եւ տխուր էք: Տխրում ենք Ձեր տխրութեան համար, իսկ ինչ վերաբերում է կարօտին, կարող եմ հաւատացնել, որ կուսակցութիւնը չի մոռանում իւր սիրելի Քէօրօղլուն. յիշում է ամէն խնճոյքում, մանաւանդ, երբ տողերիս գրողն է վեր անում իւր գազարակերի ձայնը եւ յանդգնում է Քէօրօղլու երգը երգել…*» (*հտր. 9*, էջ 122):

Նամակները երգիծական տարրերից զատ բացատրական նիւթ են տալիս երգիծանքի այնպիսի մի տեսակի մասին, ինչպիսին պարոդիան է, յարերգութիւնը: Յատկապէս Վարդազարեանին ուղղած[28] մի շարք նամակներում նկատում ենք, որ երեւոյթը ստանում է գրական բանավէճի խորք. «*Այժմ խօսենք քո բանաստեղծութիւններից: Ինձ շատ դուր է գալիս, որ այդպիսի նամակներ եմ ստանում քեզանից: Քո այդ մխմխուքներից ու խոհերից, որոնք լաւն են կամ նիւթ են դառնալու ինձ համար, կամ դրդելու են մի*

[27] «*Թումանեան. ուսումնասիրութիւններ եւ հրապարակումներ*», *հտր. 5*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1998, էջ 22:

[28] Տե՛ս՝ 1900ի Օգոստոս թուագրուած նամակները (*հտր. 9*, էջեր 226-27 եւ 323):

ուրիշ բանի: Գլխաւորապէս քեզ պատասխանելու եւ քեզ համար: Ահա, օրինակ, քո «Կուռքի» հետեւանքը, նրա ներհակը սիրեցի ես էլ, որ այս է: Իսկական էլ կը գրեմ երեւի եւ մի շարք այդպիսի բաներ կը թխեմ, առայժմ այս» (*հտր. 9*, էջ 232): Նկատենք, որ «պարոդիա» հասկացութեան դիմաց հեղինակն օգտագործում է «ներհակ» ձեւակերպումը: Իհա՛րկէ, մէկ տասնամեակ անց արդէն, 1910ին, ասուածի լաւագոյն օրինակը տալիս է Յովհաննէս Յովհաննիսեանի «Իմ հայրենիքը տեսել ես, ասա՛» բանաստեղծութեան առթիւ գրուած "Parodia"ն:

Ոճական յատկանիշերի մէջ կարող ենք առանձնացնել եւս մէկ էական գիծ՝ գեղարուեստականութիւնը, ինչի առկայութիւնը նրա նամակների մի մասին հաղորդում է փորձագրութեան բնոյթ (Վարիա Խանդամիրեանին, Մարիամ Թումանեանին եւ այլոց ուղղուած գրութիւնները): Լաւագոյն օրինակներից մէկը հայրենի բնաշխարհի մասին գրեթէ բանաստեղծական տողերն են Խանդամիրեանին Ս. Էջմիածնից ուղղուած 1904 Մայիս 4 թուակիր նամակում, ուր նկատում է՝ «*Արշալոյսին երեւացին Անիի աւերակները, ապա թէ ծաւալուեց Արարատեան դաշտը, մի կողմում՝ սրբազան Մասիսը՝ վեհափառ համարձակութեամբ մտած երկնքի ծոցը, միւս կողմը՝ չքնաղ Արագածը՝ իր լայն փէշերը փռած ու բազմած լէն ու բոլ:*

Բիբլիական, խորհրդաւոր ու համարձակ են Արարատեան աշխարհի գեղեցկութիւնները» (*հտր. 9*, էջ 42): Պատկերն առաւել ամբողջական են դարձնում նոյն հատուածում Աբովեանով եւ Ալիշանով ամբողջացող հայոց գրական աւանդոյթի վկայակոչումները:

ժա) ***Թումանեանը եւ իր «Վերնատուն»ը***: «Վերնատան» արժէքը ոչ միայն բուն գործունէութեան շրջանի մէջ է, այլեւ բերած օրինակի: Պատահական չէ այն տեւական խանդաղատանքն ու կարօտը, որ տածել են հայ գրողները այդ ընկերութեան նկատմամբ նրա դադարելուց յետոյ: Սա վերաբերում է նաեւ ի՛ր իսկ բառերով գրչի հանդէպ այն պատկառանքին, որ առթել է կառոյցը: «*Առանց «Վերնատան», ի հա՛րկէ, ապրել չի լինիլ*»՝ խոստովանում է Իսահակեանին ուղղած նամակում, միաժամանակ գնահատելով այն կազմող մտաւորականների համախմբումի անհրաժեշտութիւնը. «*Երբոր դու կը գաս, Նիկոլն* (Աղբալեան - Ք.Ա.) *էլ այստեղ է, Դերենիկն* (Դեմիրճեան - Ք.Ա.) *էլ կը գայ - կը սկսենք*» (*հտր. 9*, էջ 282): Մի ուրիշ տեղ նորից իր գորովանքն է արտայայտում. «*Թիֆլիսն եմ ուզում, բայց այնպէս, որ շոգ չլինի, ես էլ սարքուած, տեղաւորուած լինէի, «Վերնատունս» կարգն ընկած ու մի գրական եռանդուն կեանք, նոր տենչերով, նոր շնչերով*» (*հտր. 9*, էջ 296): «Վերնատան» դադարեցումից դեռ տասնամեակներ անց էլ, 1921ին, նա շարունակում էր փայփայել նրա վերաբացման յոյսը. Իսահակեանին Վենետիկ հասցէագրած մէկ այլ նամակում հրաւէր էր կարդում բանաստեղծին եւ յոյս յայտնում, որ «*Թերեւս այժմ կազմենք մեր «Վերնատունը» մեր երկրում ու վերջին օրներս միասին անցկացնենք*» (*հտր. 10*, էջ 396):

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԷՆ

1916ին, ժողովրդի պատմութեան ծանրագոյն հանգրուանին, Թումանեանը յայտարարում էր, որ ինքը «*հանդիսաւոր երդում է արել… երբեք յոբելեան չփօնել*»: Թումանեանը նմանօրինակ հանդիսութիւնները պարզապէս «ղալմաղալ» էր անուանում (*հտր. 10*, էջ 247): Բայց միքանի տարի անց, Հայաստանի առաջին Հանրապետութեան ծնունդով խանդավառ բանաստեղծը խորը յուզավառութիւն էր ապրում իր յիսնամեակի առթիւ Հայաստանի առաջին Հանրապետութեան կառավարութեան հեռագրին ի պատասխան Ալեքսանդր Խատիսեանին ուղղած նամակում. «*Հայրենի երկրի անդրանիկ կառավարութեան անդրանիկ գրական ողջոյնն ու բարեմաղթութիւնները յուզեցին ինձ մինչեւ արտասուք*» (*հտր. 10*, էջ 659-60): Նկատենք, որ «ղալմաղալները» գուցէ բանաստեղծին շատ բան չեն տալիս. նա մնում է իր այնքան նուիրական «բարձրում», որի գիտակցման ամփոփումն է նրա վերջին նամակներից մէկի նկատառումը. «*Եւ մեծ հաճոյքով նկատեցի, որ իմ վերջին շրջանի փիլիսոփայական տրամադրութիւնը թեթեւ ու անցողակի մի երեւոյթ չի: Մահի հետ էլ եմ հաշտուել: …Համոզուած եմ, որ եթէ մի հրաշք չպատահի, արդէն մօտիկ է խորհրդաւոր ժամը, եւ ամենայն հանգստութեամբ անցեալ օրերը բոլոր, կիսատ-պռատ ձեռագիրներս ոչնչացրի, մտածելով, թէ վերջացնելու ժամանակ չեմ ունենալու, էսպէս էլ չեմ ուզում մնան: Վերջապէս մեր կեանքը հո սրանով չի վերջանում*» (*հտր. 10*, էջ 427-28, Մեսրոպ եպս. Տէրմովսիսեանին, 22 Օգոստոս 1922): Սա հեղինակի մի քիչ թախծալի հրաժեշտն է, բայց սթափ ու խորագնայ ինքնադիտարկումով. սա մի դէպքում կեանքի վրայ փիլիսոփայական, վերերկրային բարձունքից հայող հոգու խոստովանութիւն է, միւս կողմից՝ սեփական գործի անմահութեան, անժամանցելիութեան գիտակցում:

AN ESSAY ON LITERARY AND THEORETICAL INTERPRETATION (BASED ON HOVHANNES TOUMANIAN'S LETTERS)

(Summary)

KNARIK ABRAHAMYAN (spyurkka@gmail.com)

Hovhannes Toumanian's letters cover diverse aspects of literary arts and criticism, form vs. content, characters, linguistic tricks, his views on different authors, his approaches and understanding of different genres of literature, the messages he conveys, etc. This paper, however, highlights the literary and theoretical perceptions of Toumanian as they are elaborated in his letters and puts them in a framework. In certain cases, the views are underpinned by extracts from articles Toumanian wrote and published in a number of newspapers of the time. Interestingly, Toumanian expressed some of his views on literature while commenting on his works as well as the works of a number of Armenian authors. In several cases while remarking on the influences a particular Armenian author had from Shakespeare, Goethe, Pushkin, Lermontov, etc., Toumanian also mentions the way he was influenced by them.

ՕՏԱՐ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱՍՆ Է. – ՌՈՒՍԵՐԷՆ (ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՄԲ ՍԼԱՒՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐԻ)[1]

ԱՐՄԷՆ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ (armen_michaelian@yahoo.com)

ՆԱԽԱԲԱՆ

Ներկայ յօդուածով շարունակում ենք օտար լեզուների տառադարձութեան կանոնները լուսաբանող յօդուածաշարքը[2], որի սոյն՝ եօթներորդ մասը, նուիրում ենք ռուսերէնի (եւ սլաւոնական միքանի այլ լեզուների) յատուկ անուններին:

Ինչպէս շարքի նախորդ յօդուածներում, այստեղ վերանայելու ենք գոյութիւն ունեցող իրավիճակը, փորձելու ենք գիտական հիմքերի վրայ դնել ռուսերէնի տառադարձութիւնը եւ քննութեան ենթարկել դրա մի շարք նրբութիւններ: Մեր այս մօտեցումը բնականաբար չի ենթադրում վերջնական լուծում: Այն միեւնոյն ժամանակ նպատակ ունի մասնագէտ հասարակութեան ուշադրութիւնը սեւեռել խնդրի վրայ:

Յօդուածները չծանրաբեռնելու եւ միեւնոյն բանը միքանի անգամ չկրկնելու համար՝ յօդուածների նախաբաններն ու ամփոփումները լինելու են հակիրճ: Այդուամենայնիւ, մեր ձեռնարկութեան տեսական գաղափարներին ծանօթանալու համար, ընթերցողին հրաւիրում ենք աչքի անցկացնել նախորդ (մասնաւորապէս՝ առաջին երեք) յօդուածների նախաբանները, տեսական մասերն ու ամփոփումները:

Ռուսերէնից կատարած տառադարձութեանը խորհրդային եւ այնուհետեւ անկախութեան տարիներին յաճախ են անդրադարձել Հայաստանի «Տերմինաբանական կոմիտէ (Եզրաբանական յանձնաժողով)» կամ «Լե-

[1] Ելլելով յօդուածին տրամաբանութենէն եւ ուղղագրական առաջարկներէն, յօդուածին ուղղագրութիւնը բացառաբար կը պահենք հեղինակային վիճակով:

[2] Տե՛ս՝ Արմէն Միքայէլեան, «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (մասն Ա. - մերձաւորարեւելեան լեզուներ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, Խ:2020, էջ 341-64. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (մասն Բ. – դասական լեզուներ, հին յունարէն եւ լատիներէն)», *Բազմավէպ*, ՃՀԸ:2020, էջ 304-36. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (մասն Գ. – ֆրանսերէն)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԽԱ:2021, էջ 443-66. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (մասն Դ. – անգլերէն)», *Հանդէս ամսօրեայ*, ՃԼԵ:2021, էջ 197-246. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (մասն Ե. – գերմաներէն)», *Բազմավէպ*, մամուլի տակ. նաեւ նոյնի՝ «Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները (մասն Զ. – իտալերէն եւ սպաներէն)», *Բազմավէպ*, մամուլի տակ:

զուի պետական տեսչութիւն» անունը կրող զանազան մարմինները[3]: Իրենց դրական ու բացասական բոլոր կողմերով հանդերձ, յանձնաժողովների ընդունած որոշումները երկու խոշոր բաց ունեն. դրանք նախ՝ մէկ կամ երկու անձանց ներկայացրած նախագծերն են, եւ ապա՝ իրենց վրայ կրում են «սովետահայերէն»ի[4] շունչը: Յանձնաժողովները չեն անդրադարձել սկզբունքային խնդիրների, այն է՝ գիտական հիմքերի վրայ դնել տառադարձագիտութիւնը (տառադարձութեան տեսութիւնը), կարգաւորել դրա կանոնները եւ մասնաւորապէս՝ ուսումնասիրել ռուսերէնի հնչիւնաբանութիւնը՝ գիտական հայկաբան տառադարձութիւն մշակելու նպատակով:

ՌՈՒՍԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Հին Ռուսիան, ընդհուպ մինչեւ ԺԸ. դարը, ունէր զուգակեաց երկու գրաւոր լեզու: Սրանցից հեղինակաւորը եւ կանոնակարգուածը *սլաւոներէն* կոչուած լեզուն էր (որ այսօր անուանում են նաեւ *եկեղեցական սլաւոներէն*): Սա Բուլգարիայից Ռուսիա մուտք գործած Աստուածաշնչի թարգմանութիւնների լեզուի՝ հին սլաւոներէնի հիման վրայ ձեւաւորուած ռուսական տարբերակն էր: Միւսը՝ նուազ հեղինակաւոր եւ չկանոնակարգուած, բնիկ ժողովրդի լեզուի գրաւոր տարբերակն էր: Այս երկրորդ լեզուն երկար դարեր չունէր իր անուանումը, եւ այն չէին գիտակցում որպէս առանձին մի լեզու: ԺԷ.-ԺԸ. դարերից՝ Ռուսաստանի տէրութեան պետական այդ գրաւոր լեզուն սկսեցին անուանել *ռուսերէն*:[5]

Առաւել՝ մինչեւ ԺԷ.-ԺԸ. դարերը արեւելասլաւոնական երեք ժողովուրդները (այսօրուայ ռուսները, ուկրայինացիները եւ բելառուսները) չէին գիտակցում, որ իրենք տարբեր ազգեր են եւ իրենց լեզուները համարում էին

---

[3] *Տերմինաբանական եւ ուղղագրական տեղեկատու (1956-2006)*, խմբ.՝ Յ.Խ. Բարսեղեան, «9-րդ հրաշալիք» հրատ., Երեւան, 2006:

[4] «Սովետահայերէն» ասելով նկատի ունենք արեւելահայերէնի՝ 1920-30ականներից Հայաստանում հաստատուած մի լեզուավիճակը, որը մինչեւ 1990ականները ռուսերէնի անմիջական, իսկ այժմ՝ շարունակական ազդեցութեան տակ է եղել եւ է: Խօսքը ոչ միայն (եւ այնքան) ուղղագրութեան, որքան բառապաշարի ու շարահիւսական օտարաբանութիւններով յագեցած եւ հայերէնի հարազատ տարրերին խորթ լեզուի մասին է (առաւելապէս տարածուած վարչական, հրապարակախօսական եւ իրաւաբանական խօսքի ու գրականութեան մէջ):

[5] Ռուսերէն գրական լեզուի պատմութեան, հին սլաւոներէնի ու եկեղեցական սլաւոներէնի հետ նրա ունեցած առնչութիւնների մասին տե՛ս մասնաւորապէս՝ Б.А. Успенский, *История русского литературного языка (XI-XVII вв.)* (Ռուսերէն գրական լեզուի պատմութիւն (ԺԱ.-ԺԷ. դդ.), 3րդ հրատ., Մոսկուա, 2002. նաեւ՝ А.И. Изотов, *Старославянский и церковнославянский языки*, (Հին սլաւոներէն եւ եկեղեցական սլաւոներէն լեզուներ), Մոսկուա, ИОСО Росс. Акад. Образования, 2001. նաեւ՝ М.В. Иванова, *Историческая грамматика русского языка* (Ռուսերէն լեզուի պատմական քերականութիւն), Բ. հրատ., Ակադեմիա հրատ., Մոսկուա, 2013:

միեւնոյն ազգային լեզուի տարբերակներ: Ուստի պէտք է զգուշ[6] լինել «հին ռուսերէն» անունների վերաբերեալ. նրանք կարող են պատկանել այսօրուայ երեք ազգերից մէկին, կամ միաժամանակ՝ երկուսին կամ երեքին: Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել, մասնաւորապէս՝ մի կողմից՝ ռուսերէնի, միւս կողմից՝ ուկրայիներէնի ու բելառուսերէնի յարաբերութեան խնդրի վրայ: Ռուսաստանի պատմական շատ դէմքեր ու աշխարհագրական անուններ գալիս են Կիեւեան Ռուսիայի ժամանակներից: Ո՞ր լեզուն պէտք է հիմք ընդունենք այդպիսի անունների համար. գուցէ նախընտրենք երեք լեզուների հնչիւնաբանութիւնները յարգող մի ընդհանուր մօտեցո՞ւմ:

Մի այլ խնդիր են ռուսերէնի եւ սլաւոնական միւս երկու (արեւմտասլաւոնական ու հարաւսլաւոնական) ճիւղերի զուգահեռները: Անուններ կան, որ ընդհանուր են, անձնանուններ՝ որ ազգային խառը ծագում ունեն: Սոյն յօդուածի քննութիւնը նախ եւ առաջ ռուսերէնի վերաբերեալ է, սակայն մենք հաշուի ենք առել նաեւ սլաւոնական միքանի այլ լեզուներ:

Ռուսերէնը մեզ ծառայում եւ ծառայելու է իբրեւ «տարանցիկ» լեզու՝ Ռուսաստանի հարիւրից աւելի զանազան ազգերի անձնանուններն ու աշխարհագրական անունները հայերէն տառադարձելու համար: Ռուսաստանի Դաշնապետութիւնը[7] եւ նրա բաղկացուցիչ երկրները բազմազգ են՝ տարացեղ ու տարալեզու: Հայ լեզուաբանութիւնը ծանօթ չէ այդ լեզուների մեծ մասին. չունենք մասնագէտներ եւ չենք էլ կարող յուսալ, որ մի օր դրանց բոլորի մասնագէտը ունենանք: Ուստի՝ Ռուսաստանում բնակող ազգերի մի զգալի մասի համար որպէս տառադարձութեան լեզու ստիպուած ենք ընդունելու ռուսերէնը:

Հետեւաբար, պէտք է ուշադիր լինել եւ ճիշտ ընտրել տառադարձութեան աղբիւր լեզուն: Հարցը միշտ չէ որ յստակ է, եւ տառադարձողը պէտք է գոնէ տարրական գիտելիքներ ունենայ անունների ու անձնաւորութիւնների վերաբերեալ (պատմութիւն, աշխարհագրութիւն, ազգային պատկանելութիւն, մայրենի լեզու…):

ՀԱՅԵՐԷՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ ՀՆՉԻՒՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ինչպէս արդէն քանիցս խօսել ենք, հայերէնի հնչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը ունեն սկզբունքներ, որոնք անհրաժեշտ է կիրարկել իւրաքանչիւր լեզուից կատարելիք տառադարձութեան ժամանակ: Յիշեցման

[6] *Հանդէս*ին ուղղագրութիւնն է, հեղինակը կը գրէ «զգոյշ»:

[7] Ռուսաստանը (եւ նման այլ երկրներ) դաշնութիւն (դաշինք) չէ, ինչպէս սխալաբար գրում են այսօր ե՛ւ արեւմտահայերէնը, ե՛ւ արեւելահայերէնը, այլ դաշնակցութիւն կամ աւելի լաւ է՝ դաշնապետութիւն, այն է՝ պետութիւն հիմնուած փոխադարձ դաշինքի (դաշնութեան) վրայ:

համար՝ ստորեւ ամփոփ ներկայացնում ենք հայերէն տառադարձութեան՝ մեր առաջին երեք յօդուածներում արծարծած սկզբունքները[8]:

Ա) Պայթական («բ-պ-փ», «գ-կ-ք», «դ-տ-թ») եւ պայթաշփական («ջ-ճ-չ», «ձ-ծ-ց») բաղաձայնների եռաստիճան կարգը հայկաբան տառադարձութեան ողնասիւներից մէկն է: **Բ)** Տառադարձութիւններում «է»ն գրում ենք միայն բառավերջին, կամ այլուր՝ ձայնաւորից առաջ: «Ե»ը հայերէնի [e] հնչոյթն է եւ այն գրում ենք մնացած դիրքերում՝ բառամիջում թէ բառասկզբին (բաղաձայններից առաջ): Բառասկզբի «ե»ը պարտադիր չէ [յե] արտասանել. օտար անունների մեծ մասում այն գերադասելի է իր մաքուր հնչումով՝ [e] արտասանել: **Գ)** Օտար [o] հնչիւնը տառադարձութիւնների մէջ ամենուր արտայայտում ենք մեսրոպեան «ո» տառով: Բառասկզբին, ինչպէս եւ «ե»ի պարագայում, պարտադիր չէ «ո»ն [վո] ընթերցել: Կիլիկեան ժամանակներից մուտք գործած կլոր «օ» տառը տառադարձութեան համար չէ: **Դ)** Բառամիջում եւ բառավերջին խուսափում ենք «ը» գրելուց: **Ե)** Օտար [v] (նաեւ [w]) հնչիւնը հայերէն արտայայտում ենք «վ, ւ, ու» տառերից մէկով, ըստ հայոց դասական ուղղագրութեան կանոնների: Բառասկզբում գրում ենք միմիայն «վ»: Ըստ հնարաւորութեան՝ օգտագործում ենք հայերէնի «աւ, եւ, իւ» երկբարբառները: Բառամիջում՝ բաղաձայնից յետոյ եւ ձայնաւորից առաջ, գերադասում ենք գրել (այնտեղ ուր դա թոյլ է տալիս ստուգաբանութիւնը) «ու»: **Զ)** Օտար «ia (ja), ie (je), ii (ji), io (jo), iu (ju)» համակցութիւնները արտայայտում ենք բառասկզբին «յա, յե, յի, յո, յու» կապակցութիւններով, բառամիջում՝ «իա, իե, ի (կրկնակ «իի»ն պարզւում է մէկ «ի»ի), իո, իու» (եւ ոչ թէ մեր երկբարբառներով): Բառասկզբի «յ» տառի արտասանութիւնը անհրաժեշտաբար [h] չէ: Աւանդական անուններում այն [h] է հնչում, սակայն նոր տառադարձութիւնների մէջ այն պէտք է իր ձայնով՝ [j] արտասանենք: **Է)** Հայերէնի երկբարբառներն ու եռաբարբառներն են. «այ, ոյ, աւ (օ), եւ, իւ, եա, ւո, եայ, եաւ (եօ), ւոյ»: Որեւէ տառադարձութեան ժամանակ կարեւոր է յարգել սրանց գրութեան կանոնները եւ չյօրինել նոր կապակցութիւններ: **Ը)** Նոր լեզուների տառադարձութիւնների մէջ օտար [r] հնչիւնը ամենուր գրում ենք «ր», բացառութեամբ բառասկզբի, ուր գրում ենք «ռ»: «Ռ»ի գրութիւնը «ն»ից եւ «լ»ից առաջ պարտադիր չէ[9]:

Այսօր փաստօրէն ունենք տառադարձութեան երեք սկզբունք՝ մեսրոպեան կամ հայկաբան, կիլիկեան (կամ երբեմն՝ արեւմտահայ, սփիւռքահայ) եւ սովետահայ (կամ հայաստանեան): Մենք դէմ ենք ե՛ւ սովետահայ, ե՛ւ կի-

[8] Յօդուածները չծանրաբեռնելու համար մանրամասները չենք կրկնում, եւ ընթերցողին հրաւիրում ենք, նախքան որեւէ լեզուի տառադարձութեանն անդրադառնալը, անպայման ծանօթանալ այդ սկզբունքներին, առանց որոնց դժուար է ըմբռնել մեր տեսակէտերը:

[9] Հիմնարար այս սկզբունքների մասին աւելի մանրամասն տե՛ս՝ մեր առաջին երեք յօդուածների համանուն բաժիններում (*Հայերէն տառադարձութեան հնչիւնա(բան)ական սկզբունքները*):

լիկեան տառադարձութիւններին: Նրանք մի կողմից՝ օտար լեզուների ազդեցութեան, միւս կողմից՝ մեսրոպեան կանոնները զանց առնելու հետեւանք են: Աւելորդ չենք համարում կրկնել, որ օտար լեզուներին յարմարուելու փորձերը կերպարանափոխում են հայերէնը եւ ոտնակոխ անում մայրենին ամրապնդելու ու միասնական լեզու շինելու ջանքերը:

ՌՈՒՍԵՐԷՆԻ ՀՆՉՈՅԹՆԵՐՆ ՈՒ ՀՆՉԻՒՆՆԵՐԸ

Ռուսերէնի պարագայում (ի տարբերութիւն, օրինակ՝ անգլերէնի կամ ֆրանսերէնի), տառադարձութեան ելակէտ ենք ընդունում գրութիւնը, այն բնականաբար հնարաւորինս ճշտելով կենդանի հնչողութեամբ ու ստուգաբանութեամբ: Դա անում ենք ոչ թէ այն պատճառով որ ռուսերէն գրութիւնը շատ մօտ է արտասանութեանը (ընդհակառակը՝ նրանք բաւական տարբեր են), այլ ստուգաբանական ու գործնական նկատառումներով:

Գրական ռուսերէնի արդի հնչողութիւնը հիմնուած է գլխաւորապէս մայրաքաղաք Մոսկովի[10], եւ շրջակայ գաւառների արտասանութեան վրայ: Հին ռուսերէնի արտասանութիւնը շատ աւելի մօտ էր բառի գրաւոր տեսքին, քան այսօրուայ մոսկովեան արտասանութիւնն է: Աւելին՝ ռուսերէնն ունի անկայուն շեշտադրութիւն, եւ բառը ածանցուելիս, հոլովուելիս կամ խոնարհուելիս կարող է շեշտի տեղը փոխել ու դրանով իսկ փոխել հնչիւնների սկզբնական արտասանութիւնը (ե՛ւ ձայնաւորների, ե՛ւ բաղաձայնների պարագայում):

Մի այլ հանգամանք. ռուսերէնը (հայերէն տառադարձութեան աչքերով նայած) չենք կարող համարել սլաւոնական միւս լեզուներից «անկախ» լեզու: Սլաւոնական լեզուների հնչիւնաբանութիւնը սերտօրէն փոխկապակցուած է, աւելի, քան այլ ընտանիքներին ու ճիւղերին պատկանող ցեղակից լեզուներինը: Ռուսերէնը, ուկրայիներէնը եւ բելառուսերէնը մէկ միասնական լեզու էին մինչեւ ԺԴ.-ԺԵ. դարերը եւ այժմ էլ շատ ընդհանրութիւններ ունեն: Անձնանունների ու աշխարհագրական անունների հարցում որոշ դէպքերում դժուար է որոշել, թէ դրանք ռուսերէնից, ուկրայիներէնից թէ բելառուսերէնից պէտք է տառադարձել: Անհրաժեշտ է գտնել մի ընդհանուր տառադարձութիւն, որը կը բաւարարէր սլաւոնական լեզուների մեծ մասին:

Սրանք են այն պատճառները, որոնք աւանդական տառադարձութեանը (ե՛ւ հայ, ե՛ւ օտարալեզու) ստիպում են ելակէտ ունենալ հենց գրութիւնը՝ լեզ-

[10] Մենք նախընտրում ենք քաղաքի պատմական, նաեւ՝ հայկական աւանդական, տարբերակը՝ Մոսկով: Յիրաւի, ռուսերէն Москва անուան արմատը «москов» է, եւ քաղաքի անունը հնագոյն գրութեամբ Московь էր: Լիաձայն տարբերակը երեւում է նաեւ ածականի մէջ՝ москов-ский մոսկով-եան: Արդի տարբերակի ուղղական հոլովի մէջ երկրորդ «о»ն սղուած է՝ Моск(о)ва: Մի շարք լեզուներ (վրացերէնը, թաթարերէնը, անգլերէնը, տաճկերէնը եւ ուրիշներ) պահպանել են անուան արմատական ձեւը:

ուի *գրաւոր* օրինակը: Մենք նոյնպէս յարելու ենք այդ սկզբունքին եւ շարունակելու ընդունուած աւանդոյթը:

Հայ ռուսախօս հանրութեան մէջ կան անձինք, որ կողմնակից են ռուսերէնի (եւ այլ լեզուների) հնչիւնական տառադարձութեանը, այն է՝ ինչպէս լսում ենք, այնպէս էլ գրենք: Զուտ հնչիւնական տառադարձումը խառնաշփոթ կը մտցնէր ոչ միայն ռուսերէնի եւ սլաւոնական միւս լեզուների միջեւ, այլեւ հենց ռուսաց լեզուի ներսում: Петро**в** գրելու էինք Պիտռո**ֆ** («ֆ»ով), իսկ Петро**ва**՝ Պիտռո**վը** («վ»ով): Նմանապէս՝ Алл**а** լինելու էր Ալլ**ը**, Ал**е**ксандр Ալ**ի**կսանդ(**ը**)ռ, Викт**ор** Վիկտ(**ը**)**ռ**, **Де**мид **Ձի**մի**տ**, С**те**пан Ս**ծի**պան, **Яро**слав**а Յիռա**սլավ**ը**, П**етер**бу**рг** Պ**իծի**ռբու**ռկ** եւն.:

Ելնելով նշած պատճառներից, այստեղ բերում ենք ոչ թէ *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութեան* (IPA[11]) այբուբենի նշանագրերը (ինչպէս որոշ այլ լեզուների պարագայում էր), այլ ռուսերէնի՝ սլաւոնական տառերով արտայայտած հնչիւնները, մի բան որ աւելի է ընդունուած ռուսագիտական գրականութեան մէջ: Հնչոյթի կամ հնչիւնի[12] նշանը ընդունուած է դնել անկիւնաւոր փակագծերի մէջ, իսկ տառ արտայայտելու համար նշանագիրը դնում ենք չակերտների մէջ՝ «ա», «բ», «գ» եւն.: Տառադարձութեան համար մեզ հետաքրքրող համակարգը հետեւեալն է (օրինակների մէջ, թաւ ընդգծել ենք տուեալ հնչոյթը արտայայտող տառերը):

Ռուսերէնը տարբերում է «կոշտ» եւ «փափուկ» կոչուած բաղաձայններ.

Կոշտ բաղաձայնները (թուով 18) ընդունուած է նշանակել այդ նոյն տառերով՝ առանց որեւէ այլ նշանների. [б] **б**рат, [п] **п**амять, [м] **м**ать, [в] **в**ас, [ф] **ф**азан, [д] **д**ом, [т] **т**ам, [з] **з**уб, [с] **с**он, [н] **н**ас, [р] **р**ука, [л] **л**об, [г] **г**ород, [к] **к**от, [х] **х**од, [ж] **ж**ар, **ж**ир, [ш] **ш**ар, **ш**ить, [ц] **ц**арь, **ц**ирк: Վերջին երեքը միշտ կոշտ են՝ չունեն փափուկ զուգահեռներ:

Փափուկ բաղաձայն (թուով 17) նշանակելու համար (խօսքը հնչիւնագրութեան մասին է) միեւնոյն տառերից յետոյ դնում են ապաթարցի նշան. [б’] **б**ить, [п’] **п**ить, [м’] **м**ять, [в’] **в**есь, [ф’] **ф**илин, [д’] **д**ети, [т’] **т**ень, [з’] **з**има, [с’] **с**иний, [н’] **н**из, [р’] **р**епа, [л’] **л**ипа, [г’] **г**ибель, [к’] **к**исть, [х’] **х**итрый, [ч(’)] **ч**ервь, **ч**асто, [щ(’)] **щ**ит, **щ**ука: Վերջին երկուսը միշտ փափուկ են, եւ ռուսագիտութիւնը սրանցից յետոյ յաճախ ապաթարց չի դնում, համարելով որ դրանք առանց այդ էլ փափուկ են: Թիւրիմացութիւնից խուսափելու համար մենք այս յօդուածում հնչումը արտայայտելիս [անկիւնաւոր փակագծերի մէջ] միշտ կը դնենք այդ ապաթարցը:

---

[11] International Phonetic Association, *Հնչիւնաբանութեան Միջազգային Ընկերութիւն*, որի հնչական «այբուբենով» է ընդունուած գրի առնել զանազան լեզուների հնչոյթները: Միջազգայնօրէն ընդունուած է կա՛մ ֆրանսերէն (API), կա՛մ անգլերէն (IPA) յապաւումը:

[12] «Հնչոյթ» եւ «հնչիւն» եզրոյթների տարբերութիւնը քաջ յայտնի է լեզուաբանութեանը (Հ. Զ. Պետրոսեան, Ս. Ա. Գալստեան, Թ. Ա. Ղարագիւլեան, *Լեզուաբանական բառարան*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975:

Փափուկների շարքում երբեմն յիշում են նաեւ [ж’ж’ / ժ’ժ’] հնչիւնը (փափուկ երկայն [ժ]), սակայն նա լիարժէք հնչոյթ չէ եւ մենք այստեղ անտեսում ենք այդ մէկը:

Ռուսերէնն ունի մէկ կիսաձայն հնչոյթ՝ [й] կամ [j] արտայայտմամբ (հայերէն [յ], IPA [j]), որը կարող է ունենալ միքանի գրաւոր արտայայտութիւն՝ трамва**й**, **й**ога, бу**ль**он, яма = **j**ама, ель = **j**ель, ёж = **j**ож, юг = **j**уг (տե՛ս ստորեւ):

Ձայնաւոր հնչոյթներն են (թուով 7). [а], [е(э)], [и], [ы], [о], [у], [ъ] (հայերէն [ը], IPA [ə]): Որոշ լեզուաբաններ [ы]ն չեն համարում անկախ հնչոյթ, այլ [и]ի «այլահնչոյթը» (կամ ենթահնչոյթը՝ միեւնոյն հնչոյթի այլահնչուն տարբերակը): Շեշտափոխութիւնը մեծ ազդեցութիւն ունի ձայնաւորների արտասանութեան վրայ. աւելի մանրամասնօրէն կը քննենք ստորեւ:

Ռուսերէնի ձայնաւորների արտասանութիւնը բաւական տարբեր է գաւառէ գաւառ, եւ գիտական գրականութեան մէջ ռուսագիտութիւնը առանձնացնում է յաճախ այլ ձայնաւորներ: Դրանցից յիշատակենք միայն մէկը՝ IPA [ʌ], երբեմն նշանակում են եւ [ă] նշանով: Սա հանդիպում է նախաշեշտ վանկի մէջ կամ բառի բացարձակ սկզբում: Սակայն քանի որ այն սոսկ հնչիւն է եւ ոչ թէ հնչոյթ, մեր տառադարձութեան համար նա էական չէ, եւ այս յօդուածի մէջ այն նշանակելու ենք ռուսերէնի սովորական [а] տառով: Հայի ականջը լաւ չի ընկալում այդ երկուսի նրբութեան տարբերութիւնը: Նոյն բանը կարող ենք ասել նաեւ [ы] («փափուկ» [ը]) հնչիւնի համար, որի կոշտ զոյգը [ъ]ն է («կոշտ» [ը]):

Յօդուածիս տառադարձութեան ելակէտը լինելու է, ուրեմն՝ բառի գրութիւնը, այլ կերպ ասած՝ սլաւոնական («կիւրեղեան»[13] կոչուած) տառերը:

ՌՈՒՍԵՐԷՆԻՑ ՏԱՌԱԴԱՐՁԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ ԵՒ ՆՐԲՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռուսերէնն ուրեմն ունի[14] 43 պարզ հնչոյթ (երկբարբառները չհաշուած)՝ 7 ձայնաւոր, 1 կիսաձայն, 35 բաղաձայն (որոնցից 18ը՝ կոշտ եւ 17ը՝ փափուկ): Հայերէնն ունի 36 պարզ հնչոյթ՝ 6 ձայնաւոր, 1 կիսաձայն, 29 բաղաձայն: Հայերէնը չի տարբերում ռուսերէնին յատուկ կոշտ ու փափուկ բաղաձայն հնչոյթները:

Ստորեւ անդրադառնում ենք ռուսերէն տառադարձութեան գլխաւոր կանոններին ու նրբութիւններին:

ա) կոշտ եւ փափուկ բաղաձայններ

---

[13] Այստեղ տեղը չէ անդրադառնալու «կիւրեղեան» ու «գլագոլեան» անուանումների, նրանց ժամանակագրական առաջնութեան եւ Կիւրեղի ու Մեթոդիոսի հեղինակութեան վէճերի քննարկմանը: Ռուսագիտական գրականութեան մէջ դրանք լայնօրէն լուսաբանուած խնդիրներ են:

[14] Խօսքը այստեղ մեր տառադարձութեան վերաբերեալ է: Ինչպէս տեսանք՝ հնչոյթների հարցը բարդ խնդիր է, եւ ռուսերէնի, ինչպէս նաեւ շատ ուրիշ լեզուների հնչոյթների թիւը տարբեր է տարբեր հեղինակների գործերում:

Արդի ռուսերէնը (եւ սլաւոնական մի շարք այլ լեզուներ) տարբերում է, ինչպէս ասացինք, կոշտ եւ փափուկ բաղաձայններ: Ռուսերէնի բաղաձայնական գրեթէ ողջ համակարգը պայմանաւորուած է այս զուգադրութեամբ, եւ կոշտութիւնն ու փափկութիւնը իմաստորոշ դեր ունեն: Քանի որ բաղաձայններն ու ձայնաւորները սերտօրէն կապուած ու սերտաճած են իրար, բաւական դժուար է քննել մէկի ինչիւնաբանութիւնն առանց միւսի: Բաղաձայնների կոշտութիւնն ու փափկութիւնը կա՛մ ձայնաւորներից անկախ են, կա՛մ կախուած են յաջորդող ձայնաւորից: Մենք նախ կը քննենք բաղաձայնների անկախ փափկութիւնը, այնուհետեւ, ձայնաւորներին ծանօթանալուց յետոյ, ձայնաւորներով պայմանաւորուածը:

Ստորեւ մի աղիւսակ բաղաձայն հնչիւնների, որոնք կարող են ե՛ւ կոշտ լինել, ե՛ւ փափուկ բոլոր դիրքերում (մնացած միքանիսի համար տե՛ս՝ վարը).

կոշտ	б	п	м	в	ф	д	т	з	с	н	л	р
փափուկ	бь	пь	мь	вь	фь	дь	ть	зь	сь	нь	ль	рь
հայերէն	բ	պ	մ	վ,ւ,ու	ֆ	դ	տ	զ	ս	ն	լ	ր,ռ

Ռուսերէնի ուղղագրութիւնը մի ժամանակ (մինչեւ 1917-18ի բարեփոխումները) կոշտ բաղաձայններից յետոյ բառավերջին դնում էր կոշտի նշան՝ «ъ»: Այսօր, առանց փափուկի նշանի՝ բաղաձայնները անկախ դիրքում համարւում են կոշտ, այդ պատճառով վերի աղիւսակի մէջ կոշտի որեւէ նշան չենք դրել: Բաղաձայնի փափկութիւնը արտայայտելու հնարներից մէկը փափուկի նշան («ь») դնելն է:

Փաստօրէն՝ ռուսերէնի զոյգ երկու հնչոյթներին հայերէնում (եւ բազմաթիւ այլ լեզուներում) համապատասխանում է մէկ միասնական հնչոյթ: Այսպիսի տառադարձում է որդեգրել լատինագիր ու արաբագիր լեզուների մեծագոյն մասը: Հայերէնն ուրեմն առանձնայատուկ վերաբերմունք չունի այս հարցում, եւ այդ զուգադրութիւնը տառադարձութեան մէջ զանց ենք առնում՝ հայերէնը կոշտ ու փափուկ չտարբերելու պատճառով[15]: Բաղաձայնների մեծ մասի տառադարձումն ուրեմն՝ ընդհանուր առմամբ դժուարութիւններ չի յարուցում:

Ինչպէս եւ հայերէնը՝ սլաւոնական լեզուները ի սկզբանէ չեն ունեցել [ֆ] հնչիւնը. այդպիսի անունները մեծ մասամբ գալիս են կա՛մ յունարէնից (նոր յունարէն արտասանութեամբ)[16], կա՛մ արեւմտաեւրոպական լեզուներից: Սլաւոնական լեզուների, այդ թւում ռուսերէնի, [ֆ] հնչիւնը, թէեւ հայերէն

[15] Ուշադրութիւն. իրականօրէն հայերէնը տարբերո՛ւմ է կոշտ ու փափուկ բաղաձայն հնչիւններ: Սակայն դրանք տարբեր հնչոյթներ չեն, այլ միեւնոյն հնչոյթի երկու տարբերակ հնչիւններ (ենթահնչոյթներ). օրինակ՝ **ձ**ուն/**ձ**իւն, **բ**ոյր/**բ**իւր, հնչ**ո**ւն/հնչ**ի**ւն, **ս**ան/**ս**եան:

[16] Դրա վերաբերեալ տե՛ս՝ յօդուածաշարքիս Բ. մասը՝ հին յունարէն եւ լատիներէն լեզուներ:

մեծ մասամբ տառադարձում ենք մեր «կիլիկեան» «ֆ» տառով, հին յունարէնից սերած անունների համար երբեմն գերադասելի կարող ենք համարել «փ» կամ «թ» տառերը:

Օրինակներ կոշտ բաղաձայների (ձայնաւորներից անկախ դիրքերում. այստեղ առայժմ բերում ենք կոշտութեան միայն այն օրինակները, որտեղ կոշտութիւնը չի պայմանաւորուած յաջորդ ձայնաւորով: Կոշտութեան միւս արտայայտութիւնների համար, ինչպէս նաեւ բառավերջի խլացման մասին, տե՛ս ստորեւ). Гле**б** Գլե**բ**, **П**сков **Պ**սկով, Днепр Դնե**պր**, То**м**ск Տո**մ**սկ, Кли**м** Կլի**մ**, Боро**в**ск Բորո**վ**սկ, **Д**митро**в** **Դ**միտրո**վ**, Ле**в** Լե**ւ**, Гурзу**ф** Գուրզու**ֆ**, Иль**ф** Իլ**ֆ**, Волгогра**д** Վոլգոգրա**դ**, Сергие**в** Посa**д** Սերգիե**ւ** Պոսա**դ**, Леони**д** Լէոնի**դ**, Бра**т**ск Բրա**տ**սկ, Филаре**т** Ֆիլարե**տ**, Игна**т** Իգնա**տ**, Кама**з** Կամա**զ**, Лаба**з** Լաբա**զ**, Та**з** Տա**զ**, По**с**тник Պո**ս**տնիկ, О**с**тровский О**ս**տրովսկի, Знамен**с**к Զնամե**ն**սկ, Ко**с**трома Կո**ս**տրոմա, Пле**с** Պլե**ս**, Тихо**н** Տիխո**ն**, Курга**н** Կուրգա**ն**, Кли**н** Կլի**ն**, До**н** Դո**ն**, Во**л**жск Վո**լ**ժսկ, Соко**л** Սոկո**լ**, Ура**л** Ուրա**լ**, Тобо**л** Տոբո**լ**, И**р**кутск Ի**ր**կուտսկ, Бо**р** Բո**ր**, Выбо**р**г Վիբո**ր**գ, Прохо**р** Պրոխո**ր**, Яроми**р** Յարոմի**ր**, Аму**р** Ամու**ր**:

Օրինակներ փափուկ բաղաձայների (ձայնաւորներից անկախ դիրքերում. այստեղ առայժմ բերում ենք փափկութեան միայն այն օրինակները, որտեղ փափկութիւնը արտայայտուած է փափուկի նշանով՝ «ь»: Փափկութեան միւս արտայայտութիւնների համար տե՛ս ստորեւ). О**бь** О**բ**, Во**пь** Վո**պ**, О**мь** О**մ**, Пер**мь** Պեր**մ**, Любо**вь** Լուբո**վ**/Լիւբո**վ**, «Я**вь**, пра**вь** и на**вь**» «Յա**ւ**, պրա**ւ** եւ նա**ւ**», Судовер**фь** Սուդովեր**ֆ**, Площа**дь** Պլոշչա**դ** (գիւղի անուն է), Уса**дь**ба Ուսա**դբա**, Кере**ть** Կերե**տ**, То**ть**ма Տո**տ**մա, Вя**зь**ма Վա**զ**մա, Ку**зь**ма Կո**զ**մա, Лы**сь**ва Լի**ս**ուա, Але**сь** Ալե**ս**, Мезе**нь** Մեզե**ն**, Боло**нь** Բոլո**ն**, О**ль**га Ո**լգա**, И**льм**е**нь** Ի**լմե**ն, **Ль**вов **Լ**ուով, Иго**рь** Իգո**ր**, Анады**рь** Անադի**ր**:

բ) բաղաձայների խլացումը բառավերջին

Ռուսերէնում վեց զոյգ ձայնեղ բաղաձայններ բառավերջին խլանում են (այդ երեւոյթը նկատելի է զանազան լեզուներում). այսպէս՝ [б] > [п], [в] > [ф], [д] > [т], [з] > [с], [ж] > [ш], [г] > [к]: Օրինակ՝ «лук» եւ «луг» բառերը միեւնոյն հնչումն ունեն, «Петербург»ի վերջում հնչում է [կ], «Волгоград»ի վերջում՝ [տ] եւն.: Արեւմտաեւրոպական լեզուները ռուսական ազգանուններին համար մի ժամանակ ընդունել էին բառավերջի «в» տառի «f/ff» գրութիւն՝ Тургенев Tourguén(i)eff, Рахманинов Rachmaninoff, Дурасов Dourassof(f), Давыдов Davidoff: Այսօր, սակայն, բառավերջի խլացումը ընդունուած է գրել ձայնեղ բաղաձայնով՝ «v/w», այսինքն՝ այնպէս, ինչպէս եւ բառի գրաւոր տեսքն է:

Հայերէնը բառավերջի ձայնեղների խլացումը երբեք բանի տեղ չի դրել եւ հայ հասարակութեան մեծ մասը չի էլ գիտակցում, որ ռուսերէնը իր ձայնեղները բառավերջին խուլ է արտասանում (հայ ռուսախօսների մի զգալի մասը դրանք ձայնեղ է արտասանում):

Ձայնեղների ձայնեղ տառադարձութիւնը ոչ միայն ստուգաբանական պատճառաբանութիւն ունի, այլեւ ինչիւնաբանական, քանի որ հոլովման, խոնարհման կամ բառածանցման ժամանակ խլացած այդ ինչիւնները վերականգնում են իրենց ձայնեղութիւնը, ասել է թէ՝ մերթ անցնում են ձայնեղից խուլին, մերթ՝ ընդհակառակը: Օրինակ՝ Петербур**г** [կ] / Петербур**г**а [գ], лу**г** [կ] / на лу**г**у [գ], хо**д** [տ] / хо**д**ить [դ'], Петро**в** [ֆ] / Петро**в**а [վ] եւն.: Այսպիսի պարագայում բնականաբար աւելի նպատակայարմար է պահպանել հնչոյթի միեւնոյն տեսքը ածանցեալ բոլոր ձեւերի մէջ: Աւելին՝ սլաւոնական ոչ բոլոր լեզուներն են բառավերջին խլացնում իրենց ձայնեղ բաղաձայնները: Ուկրայիներէնը, օրինակ՝ չի ճանաչում այդ օրէնքը, եւ երկու լեզուների միատեսակ տառադարձութեան ձգտումը նոյնպէս խօսում է ձայնեղների օգտին:

Օրինակներ. Гле**б** Գլե**բ**, О**бь** Օ**բ**, Ростисла**в** Ռոստիսլա**ւ**, Любо**вь** Լուբո**վ** /Լիւբո**վ**, Волгогра**д** Վոլգոգրա**դ**, Лаба**з** Լաբա**զ**, Чи**ж** Չի**ժ**, Оле**г** Ոլե**գ**, Оренбур**г** Որենբուր**գ**:

գ) ռուսերէն ձայնաւոր տառերի համակարգը

Ռուսերէնն ունի պատմականօրէն ձեւաւորուած երկու տեսակի (տեսքի, գծագրութեան) ձայնաւոր տառեր (ընդգծում ենք՝ տառեր, ոչ թէ հնչիւններ): Առաջինը նախամայր, գծագրական առումով պարզ ձայնաւորներն են, որ սերում են յունարէն այբուբենից՝ «А, Е, И, О, У» (գծագրական որոշակի փոփոխութիւններով): Միւս տեսակը՝ *ածանցեալ* ձայնաւոր տառերը, առաջացել են նախամայր տառերի ինչ-ինչ ձեւափոխումներից: «Я, Ю, Ы» ձայնաւորները առաջացել են երկու ձայնաւոր տառերի միաձուլումից, որոնցից առաջին երկուսը յովտի (յունարէն յոտա տառի) յաւելումով («І-А, І-ОУ»[17], սլաւոնական՝ «, І »), իսկ երրորդը՝ կոշտ նշանի եւ «и» տառի միաձուլումով («Ъ-І»՝ սլաւոնական «ЪІ»): «Э» ձայնաւորը «Е»ի հայելային պատկերն է (շատ աւելի հազուադէպ կիրարկութեամբ, անուանում են շրջած «Е»): Եւ վերջապէս՝ «Ё» ձայնաւորը ի յայտ է եկել ԺԸ. դարի վերջին, յատուկ է միայն ռուսերէնին ու բելառուսերէնին (ուկրայիներէնը եւ սլաւոնագիր միւս լեզուները չունեն այդ տառը) եւ մինչեւ այժմ էլ հետեւողական գրութիւն չունի ռուսերէնում՝ նոյնիսկ տպագիր երկերի մէջ:

Այսպիսով՝ ռուսերէնի նախամայր ձայնաւոր տառերն են «А, Е, И, О, У», իսկ ածանցեալ են «Я, Э, Ы, Ё, Ю» տառերը: Այս հանգամանքը կարեւոր է հաշուի առնել ռուսերէնի ինչիւնաբանութիւնն ու ուղղագրութիւնը քննելիս, ինչպէս նաեւ տառադարձութեան սկզբունքները որոշելու համար (տե՛ս ստորեւ՝ աւելի մանրամասն):

Ահա մի աղիւսակ բոլոր ձայնաւոր տառերի (եւ ոչ թէ հնչոյթների կամ հնչիւնների):

---

[17] Հին սլաւոներէնը (ինչպէս եւ հայերէնն ու հին վրացերէնը) [ու] հնչիւնը, յունարէնի օրինակով, արտայայտում էր երկու տառով:

նախամայր պարզ տառեր	а	е	и	о	у
ածանցեալ տառեր	я (іа)	э	ы (ъі)	ё	ю (іоу)
հայերէն համարժէքը	ա	ե/է	ի	ո	ու

դ) «կոշտ» ու «փափուկ» ձայնաւորներ

Ռուսերէն ձայնաւորները լինում են երկու կարգի՝ «կոշտ» եւ «փափուկ», աւելի ճիշտ՝ կոշտացնող եւ փափկացնող:

կոշտացնող (կամ «կոշտ»)	а	{э}	{ы}	о	у
փափկացնող (կամ «փափուկ»)	{я}	е	и	{ё}	{ю}
հայերէն համարժէքը	ա	ե/է	ի	ո	ու

{Ձեւաւոր փակագծերի} մէջ դրել ենք ածանցեալ ձայնաւոր տառերը: Ինչպէս տեսնում ենք, նախամայր եւ ածանցեալ տառերը միակերպ չեն բաշխուած ըստ «կոշտ» ու «փափուկ» ձայնաւորների: Նախամայր ձայնաւոր տառերից «а»ն, «о»ն եւ «у»ն յետնալեզուային ձայնաւոր հնչիւններ են արտայայտում, իսկ «е»ն եւ «и»ն՝ առաջնալեզուային: Ռուսերէնի ուղղագրութիւնը եւ ուղղախօսութիւնը մեծապէս պայմանաւորուած են այդ երկակի զուգակցութեամբ:

Բաղաձայնները «կոշտ» ձայնաւոր տառերից առաջ հնչում են կոշտ, «փափուկներից» առաջ՝ փափուկ: Հետեւաբար՝ [а] հնչիւն արտայայտելու համար ռուսերէնը գրում է կա՛մ «а» (կոշտ բաղաձայն ստանալու համար), կա՛մ «я» (փափուկ բաղաձայն ստանալու համար): Ձայնաւոր հնչիւնը երկու դէպքում էլ [а] է: Այս կէտը, որքան էլ յայտնի եւ հիմնաւորուած է ռուսագիտութեան մէջ, շատ անգամ անյայտ եւ անտեսուած է հայ (նոյնիսկ ռուսախօս հայ) իրականութեան մէջ: Դիցուք՝ ռուսերէն пятница (Ուրբաթ) եւ пьяница (հարբեցող) բառերը: Առաջին բառի առաջին վանկը հնչում է [п’а], այն է՝ փափուկ բաղաձայն եւ [а] ձայնաւոր: Երկրորդ բառի առաջին վանկը հնչում է [п’йа], այսինքն՝ փափուկ բաղաձայն, այնուհետեւ՝ [j] հնչիւն, այնուհետեւ՝ [а] ձայնաւոր: Քանի որ հայերէնը չի տարբերում կոշտ ու փափուկ բաղաձայն հնչոյթներ, առաջին դէպքում պէտք է գրէինք «պա-», երկրորդ դէպքում՝ «պիա-»[18]:

Արեւմտաեւրոպական լեզուները ինչ-ինչ բառերի համար որդեգրել են «i/j»ով տառադարձութիւն. անգլ. Soviet, ֆրանս. soviétique, գերմ. Sowjet: Սա հետեւանք է ռուսերէնի հնչիւնաբանութեան թիւր հասկացութեան (անծանօթ մարդու ականջը «совет» բառի մէջ լսում է [–վյետ]): Լատինատառ լեհերէնը, որը միքանի դար միջնորդ է եղել ռուսերէնի ու արեւմտաեւրոպական լեզուների միջեւ, փափկացնելու պարագայում «կոշտ» ձայնաւորից ա-

[18] Յիշեցնենք, որ բառամիջում, բաղաձայնից յետոյ, [іа] կամ [ја] հնչումները հայերէն դասական տառադարձութեամբ գրում ենք «իա»: Սովետահայ «յա» գրութիւնը դասական «եա» երկբարբառի պարզեցրած տարբերակն է, որը այսպիսի տառադարձութեան դէպքում գործածելի չէ:

ռաջ որոշակի դիրքերում գրում է «i». հմմտ. ռուսերէն եւ լեհերէն հետեւեալ բառերը՝ ка**ме**нь ka**mie**ń, **bie**dny **бе**дный, и**ме**ть **mie**ć, **неме**ц **Niemie**c, **не**сти **nie**ść, **бе**лый **bia**ły, **гне**здо **gnia**zdo, **пе**ро **pio**ro, **пёс pie**s, **се**стра **sio**stra, **ве**сна **wio**sna, **Пёт**р **Pio**tr: Հնարաւոր է, որ լեհերէնի այս գրութիւնը նոյնպէս ազդած լինի ռուսերէն փափկացնող ձայնաւորների «i/j»ով տառադարձութեան վրայ: Այսօր, սակայն, լատինագիր լեզուները աշխատում են խուսափել այդպիսի գրութիւնից, յատկապէս «e» եւ «и» նախամայր տառերից առաջ:

Հայ տառադարձութեան աւանդոյթը (ե՛ւ սովետահայ, ե՛ւ սփիւռքահայ) նախամայր «e» եւ «и» ձայնաւորներից առաջ երբեք չի արտայայտում բաղաձայնների փափկութիւնը. սո**վե**տ, **Че**խով, Բ**рեժ**нев, **Ти**тов, Վլա**դիմի**ր: Սակայն աւանդոյթն այլ է ածանցեալ «я», «ю» եւ «ё» ձայնաւորների պարագայում: Սովետահայ պարզեցրած ուղղագրութիւնը առաջին երկուսի համար գրում է «յա» եւ «յու» (իսկ արեւմտահայ տառադարձութիւնը դասական ուղղագրութեան երկբարբառներով՝ «եա» եւ «իւ»). Ху**дя**ков Խու**դյա**կով, Че**ля**бинск Չե**լյա**բինսկ, К**лю**ч Կ**լյու**չ, **Тю**мень Տ**յու**մեն: Ինչ վերաբերում է «ё» ձայնաւորին, դրա տառադարձութիւնը երկակի է՝ մերթ գրում են «յո» (սովետահայ) կամ «եօ/են» (սփիւռքահայ), մերթ՝ «ո», մերթ՝ «ե/է». О**рё**л Օ**ր-յո**լ, **Щё**лкино **Շչյո**լկինո, Хру**щё**в Խրու**շչո**վ/Խրու**շչե**ւ:

Ռուսագիտութեան մօտեցումը հնչիւնաբանական այս հարցին միանշանակ է. ռուսի ականջին բաղաձայնն է փափուկ հնչում, եւ բաղաձայնից յետոյ [j] հնչիւն լսելի չէ եւ տառադարձութեան մէջ պէտք է չլինի: Այդուհանդերձ՝ առօրեայ գործնական սովորոյթը անձնանուններն ու աշխարհագրական անունները լատիներէն տառադարձում է կա՛մ առանց «i» տառի («e» եւ «и» ձայնաւորներից առաջ), կա՛մ «i/j/y» տառերից մէկի յաւելումով («я, ю» ձայնաւորներից առաջ, երբեմն՝ եւ «ё»ից առաջ). Fyodor / Fiodor / Fjodor / Fedor, Oryol / Oriol / Orjol / Orel:

Ռուսերէնն ինքը լատինագիր բառերի «la, lu» կապակցութիւնները դարձնում է «ля, лю»՝ համարելով, որ արեւմտաեւրոպական լեզուների [l] հնչիւնը աւելի շատ ռուսերէն փափուկ [ль]ին է մօտ. **Lu**dovicus **Лю**довик, **La** Rochelle **Ля** Рошель, A**la**ska A**ля**ска, Pierre Abé**la**rd Абе**ля**р, a**lu**minium a**лю**миний, **la** (երաժշտական ձայնանիշի անունը) **ля**, **lu**x (լուսաւորութեան միաւոր) **лю**кс: Դրա հետեւանքն է, որ «սովետահայերէն»ը որդեգրել է թիւրիմաց նման մի տառադարձութիւն՝ **Լյու**դովիկոս, **Լյու**քսեմբուրգ, Աբե**լյա**ր, а**լյու**մին, А**лля**ска, **лля**, **лю**кс[19]:

[19] Աւելի վաղ սովետահայերէնը փափկացման համար որդեգրել էր ապաթարցը. սօլ՛-լ՛ա-սի-դօ (Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան*, Հայկական ՍՍՌ Պետական հրատ., Երեւան 1944–45, «3.ԼԱ՛» բառի տակ բերած օրինակը (*հտր. 2*, էջ 178) [ակներեւաբար պէտք է տպագրուած լինէր «3.Լ՛Ա»]):

Սա մի խնդիր է, որ պէտք է լուծել լեզուաբանների համատեղ քննարկմամբ: Հնարաւոր է կա՛մ բոլորովին չարտայայտել բաղաձայնի փափկութիւնը, ինչպէս որ դա չենք անում մնացած դէպքերի մեծագոյն մասում, կա՛մ արտայայտել այդ փափկութիւնը («я», «ю», նաեւ՝ «ё» տառերից առաջ) «і» տառի յաւելումով (դասական տառադարձութեան կանոններով): Երկրորդ լուծման դէպքում փափկութիւնը փաստօրէն արտայայտելու ենք միմիայն նշած երկու կամ երեք ձայնաւորներից առաջ: Հարց է՝ ունի՞ արդեօք իմաստ խտրութիւն դնել միայն այդ երեքի համար (որի «պատճառը» վերջին հաշուով միայն այն է, որ այդ ձայնաւորները նախամայր չեն իրենց գծագրութեամբ):

Մեր նախապատուութիւնը հայկաբան տառադարձութեան համար հետեւեալը կը լինի: Քանի որ հայերէնը չի տարբերում կոշտ ու փափուկ բաղաձայններ, քանի որ ռուսերէնի այդ փափկութիւնը մենք մնացած բոլոր դիրքերում բոլորովին չենք արտայայտում, եւ քանի որ ռուս լեզուաբանութիւնը համարում է որ փափուկ բաղաձայնի ու յաջորդող ձայնաւորի միջեւ չկայ [j] հնչիւն, առաջարկում ենք, որ հայերէնը անտեսի նաեւ «я», «ю» եւ «ё» տառերից առաջ ընկած բաղաձայնների փափկացումը եւ դրանց միջեւ չտեղադրի աւելորդ այդ [j] հնչիւնը (լինի այն դասական տառադարձութեան «і» տառի տեսքով, սովետահայ «յ»ի, թէ «կիլիկեան» «ե»ի): Այսպիսով՝ «п**ь**яница»ի դիմաց կ'ունենանք «պ**ի**անիցա», սակայն «**пя**тница»ի դիմաց՝ «**պա**տնիցա» (ինչպէս եւ ունենք միւս ձայնաւորների համար՝ Պ**ե**նզա եւ ոչ թէ Պ**յե**նզա/Պ**իե**նզա, Լ**ի**պեցկ եւ ոչ թէ Լ**յի**պեցկ, Նադ**ե**ժդա եւ ոչ թէ Նադ**յե**ժդա/Նադ**իե**ժդա): Նորէն՝ սա միայն առաջարկութիւն է, եւ վերջին խօսքը լեզուաբանների խորհրդինն է:

Օրինակներ «а, о, у» կոշտացնող ձայնաւորներից առաջ ընկած բաղաձայնների.- **Б**алашиха **Բ**ալաշիխա, **Б**улгаков **Բ**ուլգակով, **П**апанин **Պ**ապանին, **П**авловск **Պ**ալովսկ, **М**агадан **Մ**ագադան, **М**урманск **Մ**ուրմանսկ, **В**ологда **Վ**ոլոգդա, **В**учетич **Վ**ուչետիչ, **Ф**омин **Ֆ**ոմին, **Ф**рунзе **Ֆ**րունզէ, **Д**он **Դ**ոն, **Д**уров **Դ**ուրով, **Т**амбов **Տ**ամբով, **Т**ула **Տ**ուլա, **З**ахар **Զ**ախար, **З**айцев **Զ**այցեւ, **С**аратов **Ս**արատով, **С**очи **Ս**ոչի, **Н**овосибирск **Ն**ովոսիբիրսկ, **Н**адежда **Ն**ադեժդա, **Л**адога **Լ**ադոգա, **Л**ада **Լ**ադա, **Р**остов **Ռ**ոստով, **Р**услан **Ռ**ուսլան, Б**р**атск Բ**ր**ատսկ:

Օրինակներ «я, ю» փափկացնող ձայնաւորներից առաջ ընկած բաղաձայնների.- Го**бя**то Գո**բա**տո, Ос**лябя** Ու**լաբա**, **П**ятигорск **Պ**ատիգորսկ, **П**ясино **Պ**ասինո, Ру**мя**ницев Ռու**մա**նցեւ, За**мя**тин Զա**մա**տին, **Вя**тка **Վա**տկա, С**вя**тослав Ս**ուա**տոսլաւ, **Дя**гилев **Դա**գիլեւ, Ху**дя**ков Խու**դա**կով, **Дю**жев **Դու**ժեւ (հնարաւոր է նաեւ **Դի**ժեւ), **Тю**тчев **Տու**տչեւ/**Տի**տչեւ, **Тю**мень **Տու**մեն/**Տի**մեն, И**зя**слав Ի**զա**սլաւ, **Зю**ганов **Զու**գանով/**Զի**գանով, **Ся**мозеро **Սա**մոզերո, Ва**сю**ган Վա**սու**գան/ Վա**սի**գան, Со**ня** Ս**ոնա**, Ста**ню**кович Ստա**նու**կովիչ/Ստա**նի**կովիչ, Берез**ня**к Բերեզ**նա**կ, Че**ля**бинск Չե**լա**բինսկ, **Лю**дмила **Լու**դմիլա/ **Լի**դմիլա, **Рю**рик **Ռու**րիկ

(հնարաւոր է միայն Ռու–, քանզի «ռ»ից յետոյ է), **Ря**зань **Ра**зան, **Ря**бушкин **Ра**բուշկին, Тими**ря**зев Տիմի**ра**զեւ, Б**рю**сов Բ**рю**սով (հնարաւոր է նաեւ Բ**ри**սով, քանզի «р»ից յետոյ է):

Փափկացնող «ё» տառով օրինակներ.- Се**мё**н Սե**մե**ն/Սե**մո**ն, Дежн**ёв** Դեժ**նե**ւ/Դեժ**նո**վ, **Фё**дор **Фե**դոր/**Фո**դոր(Թոդոր), **Пё**тр **Пե**տր/**Պո**տր (հաշուի առնելով անուան տարածուած լինելը, բացառութեան կարգով հնարաւոր է եւ **Պիո**տր ձեւը[20]), Е**рё**менко (Յ)е**ре**մենկո/(Յ)е**ро**մենկո, Лиха**чёв** Լիխա**չե**ւ/Լիխա**չո**վ, А**лё**на Ա**լե**նա/Ա**լո**նա, Горба**чёв** Գորբա**չե**ւ/Գորբա**չո**վ, О**рё**л Ո**րե**լ/Ո**րո**լ[21]:

Կոշտ «ы» տառով օրինակներ.- Стол**ы**пин Ստոլ**ի**պին, Горд**ый** Գորդ**ի**, Будённ**ый** Բուդեն**ի**/Բուդոն**ի**, Голиц**ын** Գոլից**ին**, Черном**ы**рдин Չերնոմ**իր**դին, Келд**ыш** Կելդ**իշ**, Кр**ы**лов Կր**իլ**ով, Ирт**ыш** Իրտ**իշ**:

Միւս ձայնաւորները դժուարութիւն չեն ներկայացնում:

ե) «Э» տառը

Ռուսերէնի «Э» տառը սահմանափակ գործածութիւն ունի: Հանդիպում է կա՛մ բառասկզբին (этот, эта, это, эти դերանունների եւ միքանի այլ բառերի մէջ, առաւելապէս՝ ձայնարկութիւններ), կա՛մ (գլխաւորապէս) օտար փոխառութիւնների մէջ՝ նախորդ բաղաձայնը կոշտ պահելու կամ բառասկզբին ու ձայնաւորից յետոյ առանց «յ» հնչելու համար (мэр, экономика, поэт): Ռուսերէն բառերի համար խորթ է բառասկզբի մաքուր [ե] հնչումը, բառերի մեծ մասն ունի երկձայն [յե] հնչում (հմմտ. հայերէնը): Երկար դարեր «Э» տառը փոխադարձ գործածութեան մէջ է եղել «Е» եւ «Є» տառաձեւերի հետ եւ միայն Պետրոս Մեծի օրօք (ԺԸ. դարի սկզբին) մտել այբուբեն: Այսօր այն գործածում են միայն ռուսերէնն ու բելառուսերէնը:

Հայերէն տառադարձում ենք մեր «ե/է» զոյգով՝ համաձայն հայկաբան տառադարձութեան կանոնների. **Эль**дар **Е**лդար, **Э**ренбург **Е**րենբուրգ, **Э**лектросталь **Е**լեկտրոստալ, Улан-Уд**э** Ուլան-Ուդ**է**, բելառուսերէն՝ Шч**э**рба (ռուս. Щерба) Շչ**ե**րբա:

զ) շեշտադրութիւն եւ շեշտափոխութիւն

Ինչպէս ասացինք վերը, ռուսերէնի շեշտադրութիւնն անկանոն է, եւ շեշտափոխութիւնը այլեւայլ հետեւանքներ է ունենում ձայնաւորների արտասանութեան վրայ: Շեշտի տակ ձայնաւոր տառերը հնչում են այնպէս, ինչպէս գրուած են, սակայն շեշտազուրկ դիրքերում նրանք յաճախ այլ հնչում են ստանում: Շեշտի հետ կապուած՝ պէտք է տարբերել երեք դիրք. ա) շեշտի տակ, բ) նախաշեշտ վանկ (այսինքն՝ շեշտ կրող վանկին անմիջապէս նախորդող), ինչպէս նաեւ բառասկիզբ (բառի առաջին տառը), գ) անշեշտ այլ վանկեր (ինչպէս շեշտից առաջ ընկած, այնպէս էլ յետոյ):

---

[20] Թէեւ սլաւոնական միւս լեզուներն ունեն՝ ուկր. Пе**т**ро, չեխ. Pe**t**r, բուլգ. Пе**т**ър, սերբ. Пе**т**ар:

[21] Ուկր. Ор**е**л, լեհ. Orz**e**ł, բուլգ. Ор**е**л, սերբ. Ор**е**л:

Ահա մի պարզ աղիւսակ ձայնաւոր տառերի արտասանութեան[22].

շեշտի տակ	**а**	**о**	**и**	**е**	**э**	**ё**	**я**	**ы**	**у**	**ю**
նախաշեշտ, նաեւ բառասկզբին	[а]		[и]					[ы]	[у]	[ю]
անշեշտ այլ վանկերի մէջ	[ъ]		[и/ь]					[ы]	[у]	[ю]
հայերէն տառադարձութիւնը	ա	ո	ի	ե/է		ե/է, ո	ա	ի	ու	ու, (իւ)

Աղիւսակը ցոյց է տալիս թէ ինչպէս է իրեն դրսեւորում ամէն մի ձայնաւոր: Օրինակ՝ «о» տառը շեշտազուրկ դիրքերում իրեն պահում է ճիշտ ինչպէս «а» տառը, եւ երկու տառերը միանում են իրենց հնչողութեան մէջ (նախաշեշտ եւ բառասկզբին՝ [а], այլուր՝ [ъ]):

Հայերէնը (ինչպէս եւ այլ լեզուներ) անտեսում է շեշտազուրկ դիրքերի իւրայատուկ այդ հնչումները, եւ անունները տառադարձում է ըստ գրելաձեւի, ասել է թէ՝ շեշտի հնչիւնափոխութիւնը տառադարձութեան մէջ երբեք չենք արտայայտում: Օրինակ՝ Шахматов անունը (շեշտը առաջին վանկի վրայ է) չենք տառադարձում ըստ հնչողութեան՝ Շախմըտով, այլ տառադարձում ենք լիաձայն, ըստ գրութեան՝ Շախմատով, եւ հայերէնում շեշտը դնում ենք վերջին վանկի վրայ՝ Շախմատո՛վ: Ընդգծենք, որ ռուսերէնի [ъ] ձայնը (եւ նրա փափուկ տեսակը՝ [ь], հայերէն երկուսն էլ [ը]ին հաւասարազօր) ոչ թէ հնչոյթ է, այլ ընդամէնը շեշտակորոյս լիարժէք ձայնաւորներից ածանցեալ մի ենթահնչիւն:

Շեշտադրութիւնը կարեւոր հանգամանք է ոչ միայն տառադարձութեան, այլեւ հայերէնի ուղղախօսութեան համար, քանզի այսօր հայաստանցի ու ռուսաստանցի բազմաթիւ հայեր ռուսերէն շատ անունների մէջ հայերէնի ձայնաւոր հնչիւնները ռուսական հնչումով են արտասանում (թէեւ հայերէն այդպէս երբեք չենք գրում): Այսպէս՝ Լերմոնտով բանաստեղծի անունը շեշտում են առաջին վանկի վրայ (ինչպէս ռուսերէն է) եւ ամբողջ բառը արտասանում [լե՛ռմընտով]: Ռուսախօսների շրջանում տարածուած սխալներից է մասնաւորապէս ռուսական ազգանունների անշեշտ «-ով» վերջաւորութիւնը [-ըվ] արտասանելը, օր.՝ Папанов [պապա՛նով]: Ճշմարիտ հայերէն պէտք է հնչի [պապանո՛վ]:

Այս յօդուածում մէկ անգամ եւս ցանկանում ենք ընդգծել, որ խիստ կարեւոր է հայերէն տառերով գրած անունը (ինչպիսի ծագում էլ ունենայ) հայերէն արտասանել *վերջավանկ* շեշտով: Գրական հայերէն[23] բոլոր բառերը (մի բուռ բացառութիւններով հանդերձ) վերջավանկ շեշտ ունեն: Ամէն լեզու օտար անունները շեշտաւորում է ըստ ի՛ր լեզուի կանոնների: Եթէ լեզուն փոփոխական շեշտ ունի, նա աշխատում է վերարտադրել օտար շեշտերը

[22] Լեզուաբանութեան աչքերով դիտած՝ հնչիւնափոխութիւնն աւելի բարդ երեւոյթ է:

[23] Բարբառներում շեշտը այլ դրսեւորումներ կարող է ունենալ: Ամէն բարբառ իւրովի է մօտենում դրան:

(թէեւ ոչ միշտ հարազատօրէն): Եթէ լեզուն կայուն շեշտ ունի (առաջին, վերջին, նախավերջին կամ այլ վանկերի վրայ), ապա օտար շեշտի տեղը փոխւում է՝ ենթարկուելով փոխառու լեզուի շեշտադրութեանը: Նոյնիսկ փոփոխական եւ ճկուն շեշտ ունեցող ռուսերէնը օտար անունների շեշտադրութիւնը ճշտիւ չի վերարտադրում: Օրինակ (շեշտակիր վանկը թաւ է)՝ **Ὅ**μηρος Гом**е**р, Ἀλέξανδρος Алекс**а**ндр, თბ**о**ლისი Тбил**и**си, **A**nkara Анкар**а**, Br**n**o Брн**о**, Sh**a**kespeare Шекспи**р**, W**a**shington Вашингт**о**н եւ բազմաթիւ այլ անունների մէջ ռուսերէնի շեշտը տարբեր է փոխատու լեզուների շեշտերից: Ասել է թէ՝ ռուսը յարմարեցնում է օտար շեշտերը ի՛ր լեզուի սովորութիւններին (թէեւ իր լեզուն ունի գրեթէ բոլոր հնարաւորութիւնները շեշտը դնելու այնտեղ, ուր դնում է օտարը):

Հայը չի կարող, եւ պարտաւոր էլ չէ, ամէն անուան դէպքում գուշակել, թէ ուր պէտք է ընկնի օտար շեշտը: С**у**харевская (площадь) անուան մէջ ռուսը շեշտում է առաջին վանկը, սակայն «անտեղեակ» հայը (թէեւ ռուսախօս) կարող է շեշտել մի այլ վանկ: Ռուսախօս հայը կարող է գիտենալ ռուսերէն անունների շեշտերի տեղերը, բայց չգիտէ չինարէն կամ հնդկերէն անուններինը, անգլիախօս հայը կարող է գուշակել անգլերէնի շեշտերը, բայց չգիտէ վրացերէնինը կամ արաբերէնինը: Ի վերջոյ՝ օտար անունները, խօսակցական հայերէն մտնելով, իրենց օտար շեշտերը աստիճանաբար կորցնում են եւ դրանք բնականօրէն տեղափոխում վերջին վանկ: Ո՞ր հայի հոգն է, թէ ինչպիսին է շեշտադրութիւնը չինարէնում, ճապոներէնում, հնդկերէնում, վրացերէնում կամ էլ սպաներէնում:

Եզրակացութիւնս այն է, որ հայերէնում օտար անունների միակ ճիշտ շեշտադրութիւնը վերջավանկն է[24]: Ինչպէս արդէն դրա մասին խօսել ենք անգլերէնին նուիրած յօդուածում, հայերէն տառադարձած օտար *բոլոր* անունները *հայերէն* բառերի նման պէտք է արտասանել, այսինքն՝ վերջաշեշտ: Անհրաժեշտ է յարգել հայոց շեշտադրութիւնը եւ հայերէն լեզուի կանոնները:

է) յովտաւոր[25] ձայնաւոր տառեր, յովտաւորում (յովտացում)

Ռուսերէնի «я, е, ё, ю» տառերն ունեն մէկ այլ յատկութիւն. իրենց մէջ պարունակում են [j] հնչիւնը՝ [ja, je, jo, ju]: Յովտաւորման այդ յատկութիւնը ի յայտ է գալիս կա՛մ բառասկզբին, կա՛մ մի որեւէ ձայնաւորից յետոյ:

Ստորեւ աղիւսակ՝ ռուսերէնի յովտաւոր տառերի եւ դրանց տառադարձութեան: «И» տառը այստեղ դրել ենք պայմանականօրէն, աղիւսակին լի-

[24] Տերմինաբանական կոմիտէն 1957ին որոշել էր «ռուսական եւ օտարազգի յատուկ անձնանունների շեշտը հայերէնում նոյնութեամբ պահպանել միայն ուղղական ձեւում», օր.՝ Էե՛րմոնտով, բայց Էրմոնտովի՛ (*Տերմինաբանական եւ ուղղագրական փեղեկատու (1956-2006)*, էջ 195):

[25] Եբրայեցերէն այբուբենի «յովտ» (յունարէն՝ յոտա) տառի անունից: Հայերէն կարող էինք ասել յիաձայն կամ յիաւոր տառեր, յիաւորում:

ակատար տեսք տալու համար: Այդ տառը չունի յովտ յաւելուած (իր մէջ [յ] նախաձայն երբեք չի ունենում), եւ նոյնիսկ երբ հնչիւնափոխութեան ինչ-ինչ դէպքերում նրան նախորդում է [յ] հնչիւնը, վերջինս սղւում է, ինչպէս՝ трамвай [–ай] / трамваи [–аи], бой [–ой], бои [–аи]:

յովտաւոր ձայնաւորներ	я	е	(и)	ё	ю
բառասկզբին	յա	(յ)е	и	յо	յու
ձայնաւորից յետոյ	(յ)а	(յ)е/է	(յ)и	(յ)о, (յе)	(յ)у
բաղաձայնից յետոյ (փափկացում)	*а*	*е/է*	*и*	*е/է, о*	*у, (иу)*

Բաղաձայնից յետոյ ընկած դէպքերը (փափկացում) քննարկել ենք կոշտ ու փափուկ բաղաձայնների բաժնում (տե՛ս վերը):

Հայկաբան տառադարձութեան մէջ բառասկզբին [յ] հնչիւն արտայայտելու համար գրում ենք «յ» տառը, մի բան որ արդէն քանիցս հիմնաւորել ենք յօդուածաշարքի տեսական բաժիններում: Բառամիջում, ձայնաւորից յետոյ, «յ» գրում ենք ըստ հայերէնի պահանջի (եւ ոչ թէ նրա համար, որ ռուսերէնում այդ դիրքերում լսում ենք [յ]): Սա *հայերէնի* ուղղագրական պահանջն է: Հայերէնում «յ» գրում ենք միայն «ա» եւ «ո» ձայնաւորներից յետոյ, եւ աղիւսակում այդ պատճառով բոլոր ձայնաւորներից առաջ դրած «յ»երը փակագծերի մէջ են: Որպէս յիշեցում՝ բառասկզբի «յ»երը, եթէ չունեն աւանդական՝ հաստատուած [h] արտասանութիւն, հնչելու են [յ] եւ ոչ թէ [h]:

Օրինակներ. **Я**кутск **Эа**կուտսկ, **Я**рославль **Эա**րոսլաւլ, **Е**лец **Эե**լեց, **Е**нисейск **Эե**նիսեսկ, Ёд **Эո**դ, Ёл **Эո**լ, **Ю**жа **Эու**ժա, **Ю**рий **Эու**րի (արեւմտահայերէնում այսօր ընդունուած կիլիկեան տառադարձութեամբ՝ Իւրի կամ Եուրի. երկուսն էլ հակառակ են մեսրոպեան տրամաբանութեանը), Красн**оя**рск Կրասն**յա**րսկ, З**оя** Զ**ոյա**, Л**ия** Լ**իա**, Соф**ия** եւ Соф**ья** Սոֆ**իա** (առաջինը՝ Սոֆի-ա, երկրորդը՝ Սոֆ-իա), Никол**ае**вич Նիկոլ**այե**ւիչ, Серг**ее**вич Սերգ**էե**ւիչ, Георг**ие**вич Գէորգ**իե**ւիչ, Гриб**оед**ов Գրիբ**ոյե**դով, **Аю Аյու**:

ը) բառասկզբում «е» թէ՞ «յե» տառադարձութիւն

Որպէս նախորդ կէտի շարունակութիւն՝ ռուսերէն «е» տառի դիմաց բառասկզբին տեսականօրէն կարող ենք ընդունել երկու տեսակի գրութիւն, մէկը «յ»ով, միւսը՝ առանց «յ»ի (**Е**катеринбург **Յե**կատերինբուրգ կամ **Ե**կատերինբուրգ): Իսկապէս՝ ռուսերէն լեզուն անցել է նման մի հոլովոյթ ինչ եւ հայերէն գրական լեզուի երկու ճիւղերը, եւ ռուսները այսօր «е» տառը բառասկզբին արտասանում են [յե]՝ ճիշտ ինչպէս մենք՝ հայերէնում: Մենք կարող ենք օգտուել այդ հանգամանքից (ե՛ւ սովետական, ե՛ւ կիլիկեան տառադարձութիւնները այդպէս են անում) ու բառասկզբին չգրենք յաւելեալ այդ «յ»ն (եւ «ե»ը կարդանք [յե]): Սա պայմանականութիւն է՝ հիմնուած արտասանութեան դպրոցական կանոնների վրայ:

Սակայն արդեօ՞ք օրինաւոր է նման մօտեցումը, արդեօ՞ք մենք իրաւունք ունենք ռուսերէնի, թէկուզ եւ նման, օրէնքը տարածել հայերէն տառադար-

ձութեան վրայ: Չէ՞ որ հայկաբան տառադարձութիւնը այդպէս չի վարւում այլ լեզուների պարագայում (գերադասելի են՝ **J**ena **Յ**ենա, **Y**emen **Յ**եմեն, **J**ensen **Յ**ենսեն…): Անձամբ մենք կը նախընտրէինք «յե» գրելու տարբերակը (**Е**нисей **Յե**նիսէ), որը կը նպաստէր նախ՝ այլ լեզուների տառադարձութեան հետ միօրինակութիւն հաստատելու, երկրորդ՝ հրաժարուելու հայերէնի դպրոցական, ինչ-որ տեղ բռնազբօսիկ այն կանոնից, թէ իբր «е» տառը բառասկզբին ամէնուրեք [յե] պէտք է արտասանել:

Նոյն խնդիրը յառաջ է գալիս բառասկզբի օտար «vo / во» տառադարձութեան ժամանակ: Ե՛ւ կիլիկեան, ե՛ւ սովետական տառադարձութիւնները լռելեայն ընդունել են, որ դա հայերէն պէտք է գրել «վո», թէեւ արդի հայերէն դպրոցական (նոյնպէս բռնազբօսիկ) կանոնը դասաւանդում է, որ բառասկզբին «ո» տառը արդէ՛ն արտասանում ենք [վո]: Արդ, ինչո՞ւ ենք մենք երկու տարբեր մօտեցում ցուցաբերում. **Во**лга անունը գրում ենք **Վո**լգա («ո»ից առաջ յաւելեալ «վ»), սակայն **Е**льцин անունը՝ **Ե**լցին, երբ նոյն սկզբունքը պահանջում էր գրել **Յե**լցին, ինչպէս եւ ի դէպ վարւում են արեւմտեան լեզուները՝ անգլ. **Ye**ltsin, գերմ. **Je**lzin, ֆրանս. **Ie**ltsine կամ նոյնիսկ՝ **E**ltsine (առանց յովտաւորման): Առանց յովտաւորման են նաեւ բուլգ. **Е**лцин եւ վրաց. ელცინი ձեւերը:

Միակ բացատրութիւնն այն է, որ ռուսերէնը բառասկզբի [je] հնչումը հայերէնի նման մէկ տառով է արտայայտում, իսկ [vo] հնչումը՝ երկու տառով: Արդ՝ մի՞թէ հայերէնը պէտք է առաջնորդուի օտար կանոններով: Հարցը արժանի է մասնագիտական քննարկման:

թ) ըստ դիրքի կոշտ կամ փափուկ բաղաձայններ

Յետնաքմային «г, к, х» բաղաձայնները հանդիպում են միայն նախամայր ձայնաւորներից առաջ (ռուսերէնն ուղղագրութիւնը չի ընդունում սրանցից յետոյ ածանցեալ ձայնաւորների գրութիւն[26]): Դրանք հետեւաբար կոշտ են «а, о, у» ձայնաւորներից առաջ եւ փափուկ՝ «е, и»ից առաջ: Հայերէն բոլոր դէպքերում տառադարձում ենք համապատասխանաբար «գ, կ, խ»՝ անտեսելով, ինչպէս եւ այլուր, կոշտի ու փափուկի գաղափարը: Օրինակներ. **Га**йдар **Գա**յդար, **Ги**жига **Գի**ժիգա, **Ге**ннадий **Գե**նադի, **Го**родец **Գո**րոդեց, **Гу**милёв **Գու**միլեւ/**Գու**միլով, **Ка**лашников **Կա**լաշնիկով, **Ке**мерово **Կե**մերովո, **Ки**рилл **Կի**րիլ, **Ко**лыма **Կո**լիմա, **Ку**зьма **Կու**զմա, **Ха**баровск **Խա**բարովսկ, **Хе**та **Խե**տա, **Хи**нчин **Խի**նչին, **Хо**мяков **Խո**մակով, **Ху**дяков **Խու**դակով:

ժ) միշտ կոշտ բաղաձայններ

Ռուսերէնի «ж, ш, ц» բաղաձայնները միշտ կոշտ են, ինչպիսի ձայնաւոր էլ նրանցից յետոյ լինի: Ուստի տառադարձում ենք ամէնուր «ժ, շ, ց», («ё»ի տառադարձութեան համար տե՛ս նաեւ դ. կէտը):

[26] Ռուսերէնում առկայ օտար անունները չեն ենթարկւում այդ սահմանափակմանը:

Օրինակներ. **Жа**ров **жа**рով, **Же**лезногорск **жե**լեզնոգորսկ, **Жи**риновский **жի**րինովսկի, **Жё**лтый **жո**լտի, Тор**жо**к Տոր**жո**կ, **Жу**ковский **жու**կովսկի, **Ша**ляпин **Ша**լապին, Черны**ше**вский Չերնի**շե**ւսկի, **Ши**котан **Շի**կոտան, Карда**шё**в Կարդա**շե**ւ/Կարդա**շո**վ, **Шо**лохов **Շո**լոխով, **Шу**кшин **Շու**կ**շի**ն, Капи**ца** Կապի**ցա**, Ярце**ве** Յար**ցե**ւո, Арци**ховский** Ար**ցի**խովսկի, Арцы**ба**шев Ար**ցի**բաշեւ, Солжени**цы**н Սոլժենի**ցի**ն, **Цо**й **Ցո**յ, **Цу**бин **Ցու**բին:

ժա) միշտ փափուկ բաղաձայններ

Միշտ փափուկ են «ч» եւ «щ» բաղաձայնները: Առաջինը տառադարձում ենք «չ»: Օրինակներ. **Ча**плыгин **Չա**պլիգին, Кам**ча**тка Կամ**չա**տկա, **Че**хов **Չե**խով, **Чи**та **Չի**տա, Пуга**чёв** Պուգա**չե**ւ/Պուգա**չո**վ, Пе**чо**ра Պե**չո**րա, **Чу**ковский **Չու**կովսկի:

Երկրորդ՝ «щ» բաղաձայնի համար տե՛ս յաջորդ կէտը:

ժբ) «щ» տառի հնչումը եւ տառադարձումը

Ռուսերէնի «щ» տառը աւանդաբար հնչում էր փափուկ [շ’չ’] (երկհնչիւն): Այդպիսի հնչում ունի նաեւ եկեղեցական սլաւոներէնի ռուսական տարբերակը եւ Ս. Պետերբուրգի արդի արտասանութիւնը: Մոսկովեան արդի արտասանութիւնը փափուկ երկայն [շ’շ’] է: Ըստ այդմ՝ ռուսերէնի գրական արտասանութիւնը թոյլ է տալիս երկակի հնչում:

Այդ նոյն տառը ուկրայիներէն հնչում է կոշտ [շչ], բուլգարերէն եւ հին սլաւոներէն[27] [շտ], իսկ լեհերէնի համապատասխան լատինատառ գիրն է «szcz»՝ կոշտ [շչ]: Սլաւոնական լեզուների տառադարձութիւնը միաձեւելու նպատակով, ինչպէս նաեւ հայ տառադարձութեան աւանդոյթը յարգելով, սլաւոնական այդ տառը առաջարկում ենք սլաւոնական բոլոր լեզուներով ամէնուրեք տառադարձել «շչ» (նոյնիսկ բուլգարերէն[28]):

Օրինակներ. Вере**ща**гин Վերե**շչա**գին, Тати**ще**в Տատի**շչե**ւ, Полев**щи**кова Պոլեւ**շչի**կովա, **Щу**ко **Շչու**կո, **Що**рс **Շչո**րս, **Щё**лкино (ուկր. **Що**лкіне) **Շչո**լկինո («սովետահայերէն» Շչոլկինո ձեւը բռնանում է հայերէնի ե՛ւ ուղղագրութեան, ե՛ւ արտասանութեան վրայ):

ժգ) «й» տառը որպէս [յ] կիսաձայնի արտայայտման միջոց

[Յ] հնչիւնը, բացի վերը քննարկած դէպքերից, ռուսերէն արտայայտում են նաեւ «й» տառով (անուանումը՝ «կարճ ի»): Այն հանդէս է գալիս գլխաւորապէս որպէս երկբարբառների երկրորդ տարր. «ай (яй), ей, ий (ый), ой (ёй), уй (юй)»: Հաշուի առնելով, որ հայերէնի ուղղագրութիւնը «յ» տառը ընդունում է միայն «ա» եւ «ո» ձայնաւորներից յետոյ, ռուսերէնի նշած երկբարբառները հայերէն կը տառադարձենք «ай (яй) այ», «ей ե/է», «ий (ый) ի», «ой (ёй) ոյ/ե/է», «уй (юй) ու/ոյ»: Այսինքն՝ այնտեղ, ուր թոյլ է տալիս մեր ուղ-

[27] Շշփոթէ՛ք հին (ԺԱ.-ԺԲ. դարերի) սլաւոներէնը եւ եկեղեցական (արդի) սլաւոներէնը (իր զանազան տարբերակներով՝ ռուսական, բուլգարական, սերբական, ուկրայինական եւ այլ):

[28] Արժանի է քննութեան:

ղագրութիւնը, «յ» տառը գրում ենք, իսկ այնտեղ, ուր դա հնարաւոր չէ, գրում ենք պարզ ձայնաւոր՝ առանց [յ] ձայնի:

Սովետահայ եւ կիլիկեան տառադարձութիւնները առանց «յ»ի գրութիւն որդեգրել են միայն «ի» տառից յետոյ (հետեւելով, ըստ երեւոյթին, լատինագիր լեզուների օրինակին)՝ Горьк**ий** Գորկ**ի**/Կորք**ի** Gork**i**/Gork**y**[29]: Սակայն «յ»ն գրում են «ե/է» եւ «ու» տառերից յետոյ (Ենիսեյ, Սերգեյ, Շույսկի), մի բան որ հակասում է հայերէնի դասական ուղղագրութեան տրամաբանութեանը («յ» գրել միայն «ա» եւ «ո» ձայնաւորներից յետոյ):

Օրինակներ հայկաբան տառադարձութեան. «ий/ый – ի»՝ Дмитр**ий** Դմիտր**ի**, Евген**ий** Եւգեն**ի**, Юр**ий** Յուր**ի**, Григор**ий** Գրիգոր**ի**, Георг**ий** Գէորգ**ի**, Анатол**ий** Անատոլ**ի**, Витал**ий** Վիտալ**ի**, Аркад**ий** Արկադ**ի**, Касп**ий**ск Կասպ**ի**սկ («սովետահայերէն»ը գրում է Կասպիյսկ), Балт**ий**ск Բալտ**ի**սկ, Грозн**ый** Գրոզն**ի**, Мирн**ый** Միրն**ի**, Тёпл**ый** Ключ Տեպլ**ի**/Տոպլ**ի** Կլուչ, Железнодорожн**ый** Ժելեզնոդորոժն**ի**, նոյն տրամաբանութեամբ՝ «ей – ե/է»՝ Серг**ей** Սերգ**է**, Андр**ей** Անդր**է**, Алекс**ей** Ալեքս**է**, Енис**ей** Յենիս**է**, Гвард**ей**ск Գուարդ**է**սկ, նաեւ՝ «уй – ու/ույ»՝ Хол**уй** Խոլ**ու**, Кад**уй** Կադ**ու**, Б**уй**накск Բ**ույ**նակսկ, բայց՝ «ай – այ»՝ Никол**ай** Նիկոլ**այ**, Валд**ай** Վալդ**այ**, Б**ай**кал Բ**այ**կալ, Алт**ай** Ալթ**այ**[30], «ой – ոյ»՝ Уренг**ой** Ուրենգ**ոյ**, **Ой**мякон **Ոյ**մակոն:

Պէտք է նշել, որ յունալատինական ծագման շատ անուններում ռուսերէնն ինքն է «սխալ». ռուսերէնն է որ ներմուծել է այդ «աւելորդ» «ի» տառը՝ համաձայն ռուսերէնի կանոնների ու բարեհնչութեան: Հմմտ. յունարէն կամ լատիներէն հետեւեալ անունները.- Γρηγόριος Gregor**i**us Григор**ий** Գրիգոր(-իոս), Γεώργιος Georg**i**us Георг**ий** Գէորգ/Գեւորգ, Ἀνατόλιος Anatol**i**us Анатол**ий** Անատոլ, Ἀρκάδιος Arcad**i**us Аркад**ий** Արկադ(իոս), Νικόλαος Nicol**a**us Никол**ай** Նիկողոս/Նիկողայոս, Serg**i**us Серг**ей** Սարգիս, Ἀνδρέας Andr**e**us Андр**ей** Անդրէաս, Ἀλέξιος Alex**i**us Алекс**ий** /Алекс**ей** Ալեքսիոս: Ոչ մէկի սկզբնական ձեւերի մէջ յաւելեալ [յ] հնչիւն գոյութիւն չունի:

ժդ) փափուկ եւ կոշտ նշանները [յ] ձայն արտայայտելու գործում

Ռուսերէնի [յ] հնչիւնը կարող է արտայայտուած լինել նաեւ «ь» (փափուկ) եւ «ъ» (կոշտ) նշաններով: Փափուկ նշանով արտայայտում են նախորդող բաղաձայնի եւ յաջորդող ձայնաւորի միջեւ ընկած [յ]ն: Աւելի հազուադէպ հանդիպում է նաեւ կոշտ նշանը՝ նախաբայ ածանցի եւ բայական հիմքի միջեւ, նաեւ՝ օտար փոխառութիւններում: Հայերէն երկուսն էլ տառադարձում ենք «ի» տառով (քանի որ այն միշտ բառամիջում է՝ ընկած բաղաձայնի եւ ձայնաւորի միջեւ): Բացառութիւն է «-ьи»ի տառադարձումը, որը տառացիօրէն տալու էր «իի». այս դէպքում «իի»ն պարզւում է մէկ «ի»ի:

[29] Նոյնիսկ բուլգարերէն՝ Горки:

[30] Թիւրքական «թ», տե՛ս՝ կէտ ժէ.:

Օրինակներ. Тат**ья**на Ѕатѕ**иа**ша, Дем**ья**н Դեմ**իա**ն, Ил**ья** Իլ**իա**, Нар**ья**н-Мар Նար**իա**ն-Մար, Ул**ья**новск Ուլ**իա**նովսկ, Натал**ья** (նաեւ Натал**ия**) Նատալ**իա**, Кондрат**ье**в Կոնդրատ**իե**ւ, Ил**ьи**ч Իլ**իչ** (երկու «и»ից մնում է մէկը), Солов**ьёв**ск Սոլով**իե**ւսկ/Սոլով**իո**վսկ, Воробь**ёв** Վորոբ**իե**ւ/Վորոբ**իո**վ, Ил**ью**шин Իլ**իու**շին (ոչ Իլիւ–), Под**ъя**чев Պոդ**իա**չեւ, От**ъя**ссы Ոտ**իա**սի:

Աւելորդ չէ մէկ անգամ եւս ընդգծել, որ սովետահայերէն «յ»երով գրութիւնը (Իլյա, Տատյանա, Նատալյա…) խորթ է հայկաբան տառադարձութեանը:

ժե) կրկնակ բաղաձայնների տառադարձումը

Ռուսերէնի (ինչպէս եւ որեւէ այլ օտար լեզուի) կրկնակ բաղաձայնները հայերէն գերադասելի է արտայայտել մէկ բաղաձայնով՝ օտար լեզուներում դրանք հնչեն մէկ (կարճ), թէ երկու (երկայն) ձայնով. Кра**бб**е Կրա**բէ**, Са**вв**атий Սա**ւ**ատի, Фа**дд**ей Ֆա**դէ**, Га**кк**ель Գա**կ**ել, Кири**лл** Կիրի**լ**[31], Кири**лл**ов Կիրի**լ**ով, Гасте**лл**о Գաստե**լ**ո, Гру**мм**-Гржимайло Գրու**մ**-Գրիմայլո («рж»ի համար տե՛ս ստորեւ՝ լեհերէնի ու չեխերէնի բաժինը), Ботви**нн**ик Բոտուի**նի**կ, Фили**пп** Ֆիլի**պ**, Спа**сс**кий Սպա**ս**կի, У**сс**урийск Ու**ս**ուրիսկ, Ви**тт**е Վի**տ**է, Ио**фф**е Յո**ֆ**է:

ժզ) յունարէն եւ եւրոպական այլ լեզուներից սերող բառերի ու անունների տառադարձումը

Ռուսերէնը, ինչպէս եւ սլաւոնական լեզուներն ընդհանրապէս, լի է հին յունարէն, լատիներէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն, իտալերէն բազմաթիւ փոխառութիւններով: Ինչպէս եւ նախորդ յօդուածներում ենք ընդգծել, դրանց տառադարձութիւնը (յատկապէս հին յունարէնից ու լատիներէնից սերած անուններինը) պէտք է մօտեցնել մայր լեզուի հնչիւնաբանութեանը եւ հայկաբան գրութեան աւանդական ձեւերին: Անպայմանօրէն հայերէն ենք գրում (այսինքն՝ «թարգմանում ենք» եւ ոչ թէ տառադարձում) դիցաբանական կամ աստուածաշնչական անունները (եթէ դրանք հենց այդ իմաստով են հանդէս գալիս). Հերակլէս, Ապողոն/Ապոլոն, Նոյ, Մովսէս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս եւն.: Օրինակ՝ Петропавловский собор (Սուրբ) Պետրոսի եւ Պօղոսի (մայր) տաճար, կամ՝ հայերէն ոճով՝ Պօղոս-Պետրոս տաճար (եւ ոչ թէ Պետրոպաւլովսկի տաճար):

ժէ) թիւրք-թաթարական ծագման բառեր ու անուններ

Ռուսերէնը առատ է նաեւ թիւրք-թաթարական ծագում ունեցող անուններով (որոնք իրենց կարգին յաճախ փոխառութիւններ են արաբերէնից կամ պարսկերէնից): Քանի որ սրանց համար հայերէնն ունի իւրայատուկ մօտեցում (տե՛ս մասնաւորապէս յօդուածաշարքիս Ա. յօդուածը), մեզ համար աւելի տրամաբանական կը լինէր այդ անունների ձեւերը համեմատել թիւրքական, իրանական ու արաբական արմատներին, եւ ըստ այդմ ճշտել

[31] Հմմտ.՝ բուլգարերէն Кири**л** (մէկ «լ»ով):

ռուսերէնից կատարելիք տառադարձումը: Օրինակ՝ Булат Բուլա**թ**, Махмуд Ма**հ**մուд, **Т**имур **Թ**իմուր, Ибраг**հ**им Իբրա**հ**իմ, **Х**асанов **Հ**ասանով: Նոյնը սակայն չենք ասելու վաղուց արդէն ռուսացած անձնաւորութիւնների անունների համար: Սրանք պէտք է տառադարձել ռուսերէնի հնչիւններով, նոյնիսկ եթէ ակնյայտ է անուան թիւրքական (պարսկական, արաբական) ծագումը: Օրինակ. А**к**са**к**ов, Ах**х**ма**т**ова, **К**арамзин, Бас**к**а**к**ов, **Т**а**т**аринов, Бу**г**аев գրելու ենք А**կ**са**կ**ով, А**խ**ма**տ**ովա, **Կ**արամզին, Բաս**կ**ա**կ**ով, **S**а-**տ**արինով, Բու**գ**այեւ եւն.: Հարցը, ինչ խօսք, վիճելի է:

ժը) հայկական ծագման անուններ

Ռուսաստանաբնակ ներկայ ու անցեալ հայազգի անձանց անունների տառադարձութիւնը նոյնպէս պէտք է դուրս մնայ ռուսերէնի շրջանակներից: Դրանք, կարծում ենք, գերադասելի է հայահունչ ու հայկական ձեւերով տեսնել: Անթոյլատրելի են, օրինակ՝ Оганесеан, Ованесеан, Аванесеан, Բագդասարեան եւ նման տառադարձումները:

ժթ) թարգմանութիւն

Ինչպէս եւ ամէն օտար լեզուի պարագայում, հնարաւոր եւ նախընտրելի ենք համարում աշխարհագրական անունների որոշ մասնիկների թարգմանութիւն (դա գուցէ պէտք է անել ամէն հնարաւոր պարագայում): Օրինակ՝ գետերի ափերին տեղակայուած քաղաքները, ինչպէս աւանդոյթ է, հայերէն քերականութեամբ մատուցում ենք գետի անուան սեռական հոլովով, օր.՝ Ростов-**на**-Дону Դոն**ի** Ռոստով: Կարելի է թարգմանել նաեւ յաճախ հանդիպող այլեւայլ ածականներ. **Новый** Уренгой **Նոր** Ուրենգոյ, **Старая** Ладога **Հին** Լադոգա, **Нижний** Новгород **Ներքին** Նովգորոդ (քան թէ Նիժնի Նովգորոդ), **Верхняя** Пышма **Վերին** Պիշմա եւն.:

Նշենք նաեւ, որ այլ լեզուներից հայերէն մտած, նոյնիսկ եւ Ռուսաստանի Դաշնապետութեան այսօրուայ տարածքում գտնուող անունները պէտք է հայկական աւանդական տեսքն ունենան, օրինակ՝ Дербент քաղաքի անունը պարսկերէնից մենք ժամանակին փոխ ենք առել Դարբանդ ձեւով. սա է ճիշտ տառադարձութիւնը, եւ այսօրուայ սովետահայերէն «Դերբենդ»ը խոտելի ձեւ է:

ՍԼԱՒՈՆԱԿԱՆ ԱՅԼ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Այս յօդուածում երբեմն համեմատութեան մէջ ենք դրել ուկրայիներէն, լեհերէն, չեխերէն ու բուլգարերէն ձեւեր եւ դրանց կապը ռուսերէն անունների հետ[32]: Մենք կը ցանկանայինք, որ հայերէնը սկզբունքային միատեսակ

[32] Սլաւոնական կարեւոր լեզուներից է նաեւ սերբախորուաթերէնը, որը սակայն, նրա հնչիւնաբանութիւնը մեզ բաւարար ծանօթ չլինելու պատճառով, այստեղ զանց ենք արել: Հարկաւոր է եւ ա՛յդ լեզուն նկատի ունենալ՝ սլաւոնական լեզուների ընդհանուր համայնապատկերը ճշտելու համար (սլաւոնական ամէն ենթախմբից գոնէ երկու կարեւոր ներկայացուցիչ ունենալու համար):

մօտեցում ունենար ցեղակից լեզուներից սերող անունների նկատմամբ եւ փորձէր իրար կապել այդ լեզուների տառադարձութիւնները: Բնականաբար հնարաւոր չէ ամէն ինչ մերձեցնել, սակայն մեր տառադարձութիւնը պէտք է աշխատի միատեսակ հնչողութիւն հաղորդել նոյնարմատ անուններին: Պատճառը ոչ միայն տառադարձութեան դիւրութիւնն է, այլ առաւել եւս այն, որ սլաւոնական բազմաթիւ անուններ դարէդար մի լեզուից միւսին են անցել ու անցնում, եւ յաճախ դժուար է որոշել անուանակրի (թէ՛ անձանց, թէ՛ տեղանունների) ազգային ծագումը:

Ստորեւ՝ միքանի խնդիրներ եւ զանազան հնչիւնների նրբութիւններ:

ա) дж եւ дз բաղաձայնները

Բուլգարերէնն ու ուկրայիներէնը (նաեւ բելառուսերէնը) ունեն երկտառ երկու համակցութիւն, մէկը՝ «дж», որին լեհերէն համապատասխանում է «dż»ն, սլաւոնատառ սերբերէն՝ «џ»ն եւ լատինատառ խորուաթերէն՝ «dž»ն, միւսը՝ «дз», որին լեհերէն համապատասխանում է «dz»ն: Դրանք տառադարձում ենք մեր «ջ» եւ «ձ» տառերով: Օրինակներ. բուլգարերէն՝ Гло**дж**ево Գլո**ջ**եւո, Ма**дж**арово Մա**ջ**արովո, Пазар**дж**ик Պազար**ջ**իկ (թիւրքական ստուգաբանութեամբ), լեհերէն՝ Bo**dz**entyn Բո**ձ**ենտին, Grudzią**dz** Գրուդո**ձ** (նկատեցէ՛ք որ բառավերջի խուլը տառադարձում ենք ձայնեղով, միւս տառերի համար տե՛ս՝ վարը), Kło**dz**ko Կլո**ձ**կո, ուկրայիներէն՝ **дж**ерело **ջ**երելո, **дз**еркало **ձ**երկալո:

բ) ուկրայիներէն г / չեխերէն h, լեհերէն ch / h

Չեխերէնն ու ուկրայիներէնը համասլաւոնական [գ] հնչոյթը հնչում են ինչպէս հայերէն [հ]ն: Չեխերէն այն արտայայտում են լատինական «Hh» տառով, իսկ ուկրայիներէն՝ սլաւոնական «Г»ով: Չեխերէնը օտար փոխառութիւնները գրում եւ արտասանում է լատինական «g» տառով (եւ հնչիւնով), ըստ այդմ «Hh» եւ «Gg» տառերը զուգահեռ եւ իրար լրացնող կիրարկութեան մէջ են (չկան բառեր որ տարբեր լինեն միայն այդ հնչիւնով): Ուկրայիներէնը նոյնպէս ունի մի հազուագիւտ «Ґ» տառ (գլխին փշիկ, հնչում է [գ]):

Ուկրայիներէն (եւ մասամբ չեխերէն) անունները երկար տարիներ տառադարձել ենք (ռուսերէնի միջնորդութեամբ) «г»ով: Վերջին տասնամեակներին զանազան անուններ փորձում են գրել «h»ով, օր.՝ Պրահա, ցանկանալով մօտենալ արտասանութեանը: Այդուհանդերձ, մենք գտնում ենք, որ ստուգաբանօրէն ճիշտ կը լինի այդ հնչոյթը շարունակել տառադարձել «г»ով (եւ ոչ թէ փոխել «h»ի[33]): Այս հանգամանքը կարեւոր է սլաւոնական լեզուների միօրինակութիւնը պահպանելու համար:

[33] Գրական ռուսերէնում եւս՝ դարեր շարունակ «Г» տառի հնչումը տատանուել է [հ] եւ [գ] արտասանութիւնների միջեւ, եւ միայն Ի. դարի երկրորդ կէսից սկսած [հ] հնչումը համարւում է բարբառային: Հմմտ. հին տառադարձումները՝ **Г**омер, **Г**юго, **Г**онконг եւ նորերը՝ **Х**емингуэй, **Х**епбёрн, **Х**олокост:

Ուստի Պրագա/Պրահա զոյգ տառադարձութեան մէջ նախընտրում ենք Պրագա ձեւը, իսկ լաւագոյն է՝ «Պրագ», քանզի վերջին «ա»ն (իգական սեռի վերջաւորութիւնը) կարելի է հանգիստ դուրս նետել (ինչպէս վարւում են գերմաներէնը՝ Prag եւ անգլերէնն ու ֆրանսերէնը՝ Prague, ինչպէս եւ տառադարձած ունենք արեւմտահայերէն՝ Փրակ)[34]: Հմմտ. նաեւ լեհ. Praga, հունգ. Prága եւն.: Այլ օրինակներ՝ չեխ. Ji**h**lava Յի**գ**լաւա (ռուս. Йи**г**лава, լեհ. I**g**ława, գերմ. I**g**lau), **H**radec Králové **Գ**րադեց Կրալովէ (գերմ. Köni**gg**rätz, խորուաթ. Kraljičin **G**radac), Zábře**h** Զաբրե**գ**:

Ուկրայիներէնի «Ґ»ն (փշիկով) նոյնպէս տառադարձում ենք «գ». **ґ**ава **գ**աւա (ագռաւ), дзи**ґ**а ձի**գ**ա (հոլ): Յատուկ անունների մէջ չի հանդիպում:

Գալով լեհերէնի «Hh» տառին, այն ինչում է [խ] եւ հանդիպում է գլխաւորապէս օտար փոխառութիւնների մէջ (մասնաւորապէս լատինական «h»ի տեղը), իսկ համապատասխանում է «ch» երկնիշը (ինչպէս եւ չեխերէնում): «Ch»ն ուրեմն տառադարձում ենք «խ», իսկ լեհերէնի «օտար» «Hh»երը՝ ըստ ստուգաբանութեան. **Ch**ełm **խ**ելմ, Ty**ch**y Տի**խ**ի, **Ch**ocz **խ**ոչ, **Ch**oroszcz **խ**որոշչ, Cie**ch**anowiec Տե**խ**անովեց, Między**ch**ód Մենձի**խ**ոդ: Սակայն **H**ajnówka քաղաքի անունը գերադասելի է գրել **Գ**այնովկա (հմմտ. բելառուս. Гайнаўка, ուկր. Гайнівка), որտեղ լեհերէնի «H» տառը ակնյայտօրէն համապատասխանում է «գ»ն է:

գ) սլաւոնական այլ լեզուների փափուկ բաղաձայնները

Արդի բոլոր սլաւոնական լեզուները չէ որ ունեն կոշտ ու փափուկ բաղաձայնների բացարձակ զուգադրութիւն (նոյնիսկ ռուսերէնը ունի բաղաձայններ, որոնք կա՛մ միայն կոշտ են, կա՛մ միայն փափուկ): Սլաւոնական շատ լեզուների կոշտ ու փափուկ զուգադրութիւնը կիսատ է՝ արտայայտուած սոսկ միքանի բաղաձայններով: Ստորեւ՝ սլաւոնական այդպիսի բաղաձայնների համադրական մի աղիւսակ:

լեհերէն	կոշտ	d	t	z	s	r	ł	n
	փափուկ	dź	ć	ź	ś	rz	l	ń
չեխերէն	կոշտ	d	t	z	s	r	l	n
	փափուկ	d’	t’			ř		ň
ռուսերէն եւ ուկրայիներէն	կոշտ	д	т	з	с	р	л	н
	փափուկ	дь	ть	зь	сь	рь	ль	нь
բուլգարերէն		д	т	з	с	р	л	н
հայերէն		**դ**	**տ**	**զ**	**ս**	**ր,ռ**	**լ**	**ն**

Բուլգարերէնը գրութեան մէջ այս երեւոյթը բնաւ չի արտայայտում (թէեւ արտասանութեան մէջ այս կամ այն բաղաձայններ կարող են կիսափափուկ հնչել):

[34] Իգական սեռի «ա» վերջաւորութիւնը դուրս նետելը պարտադիր չէ, սակայն այն ցանկալի է այնտեղ որտեղ հնարաւոր է, քանի որ անուան հայերէն «պատկերը» դրանից աւելի է շահում: Քննելի հարց է:

Այստեղ չենք անդրադառնում տառերի կենդանի արտասանութեանը. փափուկը կարող է շատ տարբեր լինել կոշտից: Օրինակ՝ լեհերէնի «ć» փափուկը փափուկ [չ] եւ [g] ձայների միջեւ մի ինչիւն է՝ բաւական հեռու իր «t» կոշտ բաղաձայնից (ինչպէս եւ, իդէպ, հեռու է ռուսերէն փափուկ «ть»ն կոշտ «т»ից): Չեխերէն «ř» տառը «r»ի ստուգաբանական փափուկն է, սակայն դրա արտասանութիւնը տատանւում է [րժ] եւ [ժ] հնչիւնների միջեւ: Ուզում ենք ասել, որ այս պարագայում ոչ թէ հնչողութիւնն է մեզ համար կարեւորը, այլ ստուգաբանութիւնը: Եւ մենք գերադասում ենք վերոնշեալ հնչոյթների հենց ստուգաբանական տառադարձութիւնը, որի հայերէն համարժէքները արտայայտուած են աղիւսակի վերջին տողին (կոշտն ու փափուկը միեւնոյն տառի վերածած):

Հետեւաբար՝ լեհական Łódź քաղաքի անունը աւելի գրագէտ կը լինէր տառադարձել Լո**դ**, քանզի «dź»ն լեհերէն «d»ի փափուկն է: Սովետահայերէն Լոձ ձեւը ռուսերէն Лодзь թերի տառադարձութեան պատճէնն է[35]: Նմանապէս՝ Szczec**i**n անունը պէտք է գրել Շչե**տ**ին (եւ ոչ թէ Շչեցին, հմմտ. գերմ. Ste**tt**in), քանզի «c» տառը («i»ից առաջ) «t»ի փափուկ տարբերակն է:

Լեհերէնի «rz» եւ չեխերէնի «ř» տառերը պէտք է տառադարձել «ր» (կամ «ռ») (եւ ոչ թէ «րժ»), քանզի դրանք կոշտ «r»ի փափուկն են: Ուստի՝ P**rz**ewalski Պ**ր**եւալսկի (եւ ոչ թէ Պ**րժ**եւալսկի):

Այլ օրինակներ.- լեհերէն՝ Zamo**ś**ć Զամո**ստ**, Kę**dz**ie**rz**yn-Ko**ź**le Կեն**դ**ե**ր**ին-Կո**զլէ**, Bę**dz**in Բեն**դ**ին, **Ś**widnica **S**ուիդնիցա, P**rz**emy**ś**l Պ**ր**եմի**ս**լ, Wałb**rz**ych Վալբ**ր**իխ, Zgie**rz** Զգե**ր**, Białystok Բալիստոկ, Płock Պլոցկ, չեխերէն՝ P**ř**erov Պ**ր**երով, T**ř**eš**t’** S**ր**եշ**տ**, B**ř**eclav Բ**ր**եցլաւ, Ž**d’**ár Ժ**դ**ար, Unhoš**t’** Ունգոշ**տ**, Koš**t’**any Կոշ**տ**անի:

դ) լեհերէնի ռնգային «ę» եւ «ą» տառերը

Լեհերէնի «ę» եւ «ą» ռնգայինները տառադարձում ենք համապատասխանաբար «են» եւ «ոն»: Երկրորդը ռնգային [ոն] է եւ ոչ թէ [ան], եւ համապատասխանում է հին սլաւոնական «ѫ» («մեծ յուս») տառին (ռնգային [ոն] արտասանութեամբ): Օրինակներ. Cz**ę**stochowa Չե**ն**ստոխովա, Ostro**ł**ęka Ոստրոլե**ն**կա, Nowy Są**cz** Նովի Ս**ոնչ**, Ruda Śląska Ռուդա Սլ**ոն**սկա:

ե) լեհերէնի «ó»ն եւ չեխերէնի «ů»ն

Լեհերէնի «ó» եւ չեխերէնի «ů» տառերը, թէեւ երկուսն էլ այսօր ունեն [ու] հնչում, գերադասում ենք տառադարձել հայերէն «ո»՝ համաձայն ստուգաբանութեանը: Օրինակ՝ Ł**ó**dź (սեռ. հոլով՝ Ł**o**dzi) L**o**դ (նոյնիսկ այսօրուայ տառադարձութեամբ՝ L**o**ձ), Krak**ó**w (սեռ. հոլով՝ Krak**o**wa) Կրակ**ով**, Zielona G**ó**ra Զելոնա Գ**ո**րա, Rzesz**ó**w Ռեշ**ով** (չեխ. Řešov, ռուս. նախկին անունը Рышев , ուկր. Рашів): Հմմտ. նաեւ լեհ. Lw**ó**w (սեռ. հոլով՝ Lw**o**wa), Chark**ó**w (սեռ. հոլով՝ Chark**o**wa), ուկր. Львів (սեռ. հոլով՝ Льв**о**ва), Харк**і**в (սեռ. հոլով՝

[35] Տե՛ս՝ *Տերմինաբանական եւ ուղղագրական փեղեկատու (1956-2006),* էջ 51: Զուտ հնչիւնային տառադարձումը կը տար «Ուուչ» կամ «Վուչ»:

Харк**о**ва), ռուս. Льв**о**в, Харьк**о**в: Չեխերէն. B**ů**h պէտք է տառադարձել Բ**n**գ, d**ů**m դ**n**մ, D**ů**m u Turk**ů** Դ**n**մ ու Տուրկ**n**, Kr**á**l**ů**v Dv**ů**r Կրալ**n**վ Դու**n**ր:

զ) բուլգարերէնի [ъ] հնչիւնը

Բուլգարերէնի [ъ] հնչիւնը, թէեւ համապատասխանում է հայերէն [ը]ին, պահանջում է աւելի նուրբ մօտեցում, քանի որ հայերէնում գերադասում ենք բառամիջում «ը» տառը չգրել: Ուստի՝ այն պէտք է կա՛մ բոլորովին չգրել, կա՛մ հնարաւորինս փոխարինել այլ՝ նախընտրաբար ստուգաբանական, ձայնաւորներով: Օրինակ՝ Кърджали Կրջալի, Търново Տրնովո[36], Търговище Տրգովիշչէ («щ»ի համար տե՛ս վերը, կէտ ժբ.), նոյնիսկ բառավերջին՝ Нови Искър Նովի Իսկր, Несебър Նեսեբր, սակայն՝ Казанлък Կազանլ**ի**կ կամ Կազանլ**ու**կ (համաձայն թիւրքական ստուգաբանութեան[37]): Кр**ъ**н գերադասելի է տառադարձել ոչ թէ Կր**ը**ն (ոչ էլ ռուսերէնի նմանութեամբ՝ Кр**ы**н Կր**ի**ն), այլ գուցէ Կր**ու**ն կամ մի այլ ձեւ (հարկաւոր է գտնել «ъ» ձայնաւորի սլաւոնական ստուգաբանութիւնը):

է) Україна/Украина երկրանուան եւ Київ/Киев քաղաքի տառադարձման շուրջ

Սովետահայ ուղղագրութիւնն այս երկրի անունը ժամանակին տառադարձել է ռուսերէնից (Украина) եւ այժմ էլ յամառօրէն շարունակում է գրել «Ուկրաինա» (առանց «յ»ի): Այդպիսի տառադարձութիւնը արհամարհում է երկու սկզբունք: Նախ՝ հայերէնի ուղղագրութիւնը (եւ նոյնիսկ եթէ չլինէր երկրորդ հանգամանքը, միայն հայերէնի ուղղագրութիւնն արդէն բաւարար էր, որ «а» տառից յետոյ «յ» գրուէր): Այդպիսի տառադարձումը արհամարհում է նաեւ ուկրայիներէնի գրութիւնը (Україна) եւ հնչումը, որտեղ ե՛ւ գրւում, ե՛ւ յստակ հնչում է [–аyi–] (ուկրայիներէն «ї» տառը հնչում է [yi]): Աւելի բնական է, որ երկրի անունը մենք ուկրայիներէնից, քան թէ ռուսերէնից տառադարձենք:

Սակայն մենք պէտք է գիտակցենք նաեւ, որ ռուսերէնը «յ» չի գրում ելնելով ուղղագրութեան եւ ուղղախօսութեան ի՛ր կանոններից. ռուսերէն «и» տառից առաջ «й» հնչիւնը (եւ տառը) դուրս է ընկնում: Հմմտ. трамв**ай**/трамв**аи**, кр**ай**/окр**аи**на, б**ой**/б**ои**, сл**ой**/сл**ои**ться, змея/змеи: Հմմտ. նաեւ չեխերէն եւ սերբախորուաթերէն Ukrajina, սակայն լեհերէն Ukraina, բելառուսերէն Украіна (ասել է թէ՝ ամէն լեզու ի՛ր յարմարութեանն է նայում):

Ուստի՝ մենք աներկբայօրէն առաջարկում ենք Ուկրա**յ**ինա ձեւը («յ»ով)[38], նոյնիսկ որ հայերէնում «յ» տառը «ի»ից առաջ սովորաբար համր է:

---

[36] Սովետահայերէն՝ S**ի**ռնովո, ռուսերէն T**ы**рново ձեւից:

[37] Տե՛ս՝ յօդուածաշարքի Ա. յօդուածը (մերձաւորարեւելեան լեզուներ):

[38] Մենք հաւանութիւն չենք տալիս արեւմտահայերէնում գոյութիւն ունեցող Ուքր**անիա** տարբերակին:

Ինչ վերաբերում է ուկրայինական մայրաքաղաքի տառադարձութեանը, արեւելահայերէնը ռուսերէնից ունէր Կիեւ ձեւը (միանգամայն իրաւացիօրէն «ի»ից յետոյ «յ» տառ չդնելով), արեւմտահայերէնը՝ Քիեւ: Այսօր ուկրայիներէնի ուղղական հոլովն է Київ[39], եւ եթէ մենք տառացի գրէինք, ապա պիտի գրէինք «Կի(յ)իւ»: Սակայն մի կողմից՝ ուկրայիներէնի արմատը [e] հնչիւնով է (օր.՝ սեռ. հոլով՝ Києва), եւ հին գրութիւններն էլ բոլորը [e]ով են՝ Кыєвъ, Києвъ, Кіевъ, Кыѣвъ, Киѣвъ, Кіѣвъ: Ուստի մենք հակուած ենք կարծելու, որ «е» ձայնաւորով ձեւը աւելի ճիշտ է՝ Կիեւ, եւ որ հայերէնը պէտք չունի տուրք տալու «քաղաքականապէս ճիշտ երեւալու» մոլուցքին:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մեր նախորդ յօդուածների տեսական ամփոփիչ մտքերի մեծ մասը հաւասարապէս վերաբերում է եւ ռուսերէնին (ու մնացած սլաւոնական լեզուներին), եւ այստեղ դրանք չենք կրկնում:

Ռուսերէնի տառադարձումը, որը թւում էր թէ խորհրդային տարիների եզրաբանական կոմիտէների երկարատեւ գործունէութեան հետեւանքով առ յաւէտ արդէն ամրագրուած երեւոյթ է Հայաստանում, այսօր ցոյց է տալիս իր բացերն ու թերութիւնները, եւ ռուսերէնի ու մանաւանդ հայերէնի կանոնները չյարգելու իր թուլութիւնը: Ճշմարիտ հայերէնը պէտք է հրաժարուի ե՛ւ սովետական տառադարձումից (որ գերիշխում է Հայաստանում), ե՛ւ կիլիկեան (որ գերիշխում է Սփիւռքի արեւմտահայախօս գաղութներում ու դասական ուղղագրութեան հայաստանաբնակ հետեւորդների շրջանակներում):

Կարծում ենք որ ռուսերէնի գիտութիւնը աստիճանաբար մարելու է Հայաստանում, եւ ռուսերէնը դառնալու է մնացած բոլոր օտար լեզուների նման օտար մի լեզու: Ոմանք շարունակելու են այն սովորել ու գործածել, բայց քանի որ ժողովրդի մեծամասնութեան համար այն լինելու է անծանօթ, ռուսագէտ ու ռուսախօս հատուածն այլեւս չի կարողանալու իր օրէնքները թելադրել հայոց լեզուին, եւ հայերէնը վարուելու է ռուսերէնի հետ այնպէս, ինչպէս իրեն է դա յարմար ու ձեռնտու: Ժողովրդի մեծ մասը, եւ մասնաւորապէս կիրթ մասը, բոլոր օտար անունները արտասանելու է *հայերէն* առոգանութեամբ, առանց հաշուի առնելու դրանց ծագումն ու օտար հնչումը:

Դա է նաեւ (մասնաւորապէս) պատճառը, որ մենք այսօր՝ մեր յօդուածներում, բոլորովին չենք առաջնորդւում օտար լեզուներին հաճոյանալու ու յարմարուելու նկատառումներով, այլ առաջնորդւում ենք միայն ու միայն հայոց լեզուի պահանջներով: Համոզուած ենք, որ հայ կիրթ հասարակութիւնը տարիների հետ աւելի ու աւելի կը յարի մեր տեսակէտերին[40]:

---

[39] Պաշտօնական անգլերէնը, օրինակ՝ շտապել է գրել Kyiv: Սակայն ֆրանսերէնը (Kiev), գերմաներէնը (Kiew), լեհերէնը (Kijów), չեխերէնը (Kyjev), բելառուսերէնը (Kіeў) եւ այլ լեզուներ չեն շտապում փոխել իրենց աւանդական ձեւերը:

[40] Ըստ հեղինակի՝ յոգնակին պէտք է ըլլայ «տեսակէտներ»:

Տառադարձութիւնը, ինչպէս բազմիցս նշել ենք, մէկ մարդու գործ չէ, եւ ազգովին ընդունելի տառադարձութիւն մշակելու համար պետական ու գիտական հաստատութիւնները իրենց մասնակցութիւնը պէտք է ունենան: Ռուսերէնի պարագայում՝ տառադարձութիւնը պէտք է անշուշտ յանձնարարուի Հայաստանի ու Սփիւռքի *ռուսագէտ* մասնագէտներին: Սակայն այսօրուայ ռուսագէտ մասնագէտների մի զգալի մասը մի մեծ թերութիւն ունի. նա աւելի լաւ տիրապետում է *ռուսաց* լեզուին քան իր մայրենի՝ հայոց լեզուին: Այդպիսի մասնագէտները, վախենամ, աւելի խառնաշփոթ քան պարզեցում մտցնեն տառադարձութեան մէջ:

Հեռու չեն սակայն այն օրերը, երբ Հայաստանում ի յայտ կը գան հայկաբան մասնագէտներ, այդ թւում եւ հայկաբան ռուսագէտներ, որոնք եւ իրենց գիտելիքը ի սպաս կը դնեն տառադարձութեան կարեւոր գործին: Մեր դատողութիւնները մենք առաւել եւս նրանց ենք ուղղում:

ՅԱՒԵԼՈՒԱԾ – ԱՂԻՒՍԱԿ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ

Ծ.Թ. Կլոր փակագծերի մէջ աւելի հազուադէպ հանդիպող տարբերակներն են: Անկիւնաւոր փակագծերի մէջ արտայայտուած են հնչիւններ: Թեք գիծը (/) բաժանում է (լեհերէնի ու չեխերէնի պարագայում) միեւնոյն հնչոյթի կոշտ ու փափուկ ենթահնչիւնները, կամ (հայերէնի պարագայում) ըստ դիրքի տառադարձութեան տարբերակները: Ստորակէտով բաժանած են գրութեան ձեւերը կամ (հայերէնի պարագայում) տառադարձութեան հնարաւոր տարբերակները:

սլաւոն.	ռուսերէն	ուկրային.	լեհերէն	չեխերէն	բուլգար.	հայերէն
а	а	а	a	a, á	а	ա
б	б	б	b	b	б	բ
в	в	в	w, (v)	v, (w)	в	վ/ւ/ու
г	г	г, ґ	g	h, (g)	г	գ
д	д	д	d / dź	d / d’	д	դ
е, є	е, э	е, є	e	e, é	е	ե/է
—	ё	—	—	—	—	ե/է, ո
ж	ж	ж	ż	ž	ж	ժ
—	—	дж	dż	—	дж	ջ
ѕ	—	дз	dz	—	дз	ձ
з, ⍉	з	з	z / ź	z	з	զ
и	и	и	—	—	и	ի
й	й	й	j	j	й	յ, ի
і, ї	—	і, ї	i	i, í	—	ի
к	к	к	k	k	к	կ
л	л	л	ł / l	l	л	լ
м	м	м	m	m	м	մ
н	н	н	n / ń	n / ň	н	ն

սլաւոն.	ռուսերէն	ուկրային.	լեհերէն	չեխերէն	բուլգար.	հայերէն
о	о	о	o, ó	o, ó, ů	о	ո
п	п	п	p	p	п	պ
р	р	р	r / rz	r / ř	р	ր/ռ
с	с	с	s / ś	s	с	ս
т	т	т	t / ć	t / ť	т	տ
оу, (у)	у	у	u	u, ú	у	ու
ѵ	—	—	—	—	—	ւ, ի
ф	ф	ф	f	f	ф	փ, ֆ
х	х	х	ch, h	ch	х	խ, (հ)
ѡ	—	—	—	—	—	ո, (ով)
ѿ	—	—	—	—	—	ոտ
ц	ц	ц	c	c	ц	ց
ч	ч	ч	cz	č	ч	չ
ш	ш	ш	sz	š	ш	շ
щ	щ	щ	szcz	—	щ [шт]	շչ
ъ	ъ	—	—	—	ъ	[ը], —
ы, ꙑ	ы	и	y	y, ý	и	ի
ь	ь	ь	—	—	ь	[ը], —
ѣ	е	і	ia, ie	ě, í	я, е	ե/է, ի, ա
—	э	е	e	e, é	е	ե/է
ю, юу	ю	ю	ju, iu	ju, u	ю	յու, ու/(իւ)
ꙗ	я	я	ja, ia	ja, a	я	յա, ա
є	—	—	je, ie	je, ě	—	(յ)ե, ե/է
ѧ	—	—	ę	—	—	են
ѫ	—	—	ą	ou	—	ոն, (ու/ով)
ѩ	—	—	—	—	—	[յեն], [’են]
ѭ	—	—	—	—	—	[յոն], [’ոն]
ѯ	кс	кс	ks	x	кс	քս
ѱ	пс	пс	ps	ps	пс	փս
ѳ	ф	ф	t	t(h)	т	թ, ֆ

THE PRINCIPLES OF TRANSLITERATING (TRANSCRIBING) FOREIGN PROPER NAMES INTO ARMENIAN
PART VII – RUSSIAN (COMPARED TO OTHER SLAV(ON)IC LANGUAGES)
(Summary)

ARMEN MICHAELIAN (armen_michaelian@yahoo.com)

This article is one of the series that deals with the transliteration (transcription) of foreign proper names into Armenian (the way to transcribe foreign names in Armenian characters).

1) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part I – Middle Eastern Languages [in Armenian], *Haigazian Armenological Review*, 40:2020, Haigazian University Press, Beirut, pp. 341-64.

2) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part II – Classical Languages (Ancient Greek and Latin) [in Armenian], *Bazmavep*, CLXXVIII:2020, pp. 304-36.

3) The Principles of Transliterating Foreign Proper Names into Armenian, Part III – French Language [in Armenian], *Haigazian Armenological Review*, 41:2021, Haigazian University Press, Beirut, pp. 443-66.

4) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part IV – English Language [in Armenian], *Handes Amsorya*, CXXXV:2021, Vienna, pp. 197-246.

5) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part V – German Language [in Armenian], *Handes Amsorya*, in press.

6) The Principles of Transliterating (Transcribing) Foreign Proper Names into Armenian, Part VI – Italian and Spanish Languages [in Armenian], *Bazmavep*, in press.

The present part of the series is devoted to the transliteration (transcription) of names of Russian and sometimes of Slavic origin. The principle of transliteration is based (as in the whole series) on classical Armenian spelling, definitely ruling out the "Soviet" transliteration on one side and the "Cilician" one on the other. After a reminder of the phonological and orthographic principles of Armenian transliteration mentioned in the first articles of the series, the author scrutinizes the most problematic Russian (and some other Slavic) sounds and phonemes and confirms or proposes (based on numerous examples) a coherent and principled transliteration for each of them. The Russian transliteration serves also as a medium to transcribe many vernacular languages of the Russian Federation to which the Armenian language cannot immediately have access.

ԴԵՐԲԱՅ. ԲԱ՞Ն, ԹԷ՞ ԲԱՌԱՁԵՒ

ԱՇՈՏ ՄԿՐԵԱՆ (ashot.mkrian@outlook.com)

ՄՈՒՏՔ

Բառի եւ բառածեւի որոշման եւ տարբերակման խնդիրը՝ որոշ լեզուական միաւորների հետ կապուած, մէկն է այն կնճռոտ հարցերից, որի վերջնական պատասխանը մինչ օրս չի տրուել ոչ միայն հայ, այլեւ ընդհանուր լեզուաբանութեան մէջ:

Կա՞յ արդեօք մի այնպիսի սկզբունք, որի միջոցով հնարաւոր լինի լուծել այդ խնդիրը:

Բառի եւ բառածեւի սահմանագծման ամենամեծ խնդիրն առաջանում է, երբ որոշակի շփման կէտեր են ի յայտ գալիս բառակազմութեան եւ ձեւակազմութեան միջեւ[1]:

Ի՞նչ կարգի միաւորներ են դերբայներն իվերջոյ, եւ ըստ այդմ՝ ո՞րն է դրանց իրական տեղն արդի արեւելահայերէնի քերականական համակարգում:

Այստեղ մենք կը փորձենք համեմատել եւ համադրել մասնագիտական գրականութեան մէջ եղած մեկնաբանութիւնները, որոնք յաճախ հակասական են եւ ոչ-միանշանակ: Վեր կը հանենք նաեւ բոլոր այն դրոյթները, որոնք կ'օգնեն մօտենալ հարցի լուծմանը:

ԴԵՐԲԱՅԻ ԸՄԲՌՆՈՒՄՆ ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայերէնագիտութեան մէջ *դերբայի* ըմբռնումը միանշանակ չէ եւ մինչ օրս էլ բազմաթիւ վէճերի տեղիք է տալիս՝ ընդհանուր սահմանման ճշտումից մինչեւ խօսքիմասային պատկանելութեան հարցը:

Դեռեւս արեւելահայ քերականագիտութեան սկզբնաւորման առաջին շրջանից մի շարք հակասութիւններ են ի յայտ եկել *դերբայ* հասկացութեան առնչութեամբ:

Հարցի շուրջ տարակարծութիւնները նախ եւ առաջ պէտք է կապել *բայ* հասկացութեան քերականական տարբեր ըմբռնումների հետ:

Ըստ իշխող ըմբռնման՝ բայն իբրեւ խօսքի մաս ունի իրար հակադրուող երկու դրսեւորում՝ դիմաւոր (խոնարհուած բայ) եւ անդէմ (դերբայ): Ընդ որում՝ «դերբայ» եզրի տակ միաւորւում են թէ՛ անկախ գործածութիւն ունեցող միաւորները (*գրել, գրող, գրած, գրելիս, գրելիք*) եւ թէ՛ այսպէս կոչ-

[1] Հրանտ Պետրոսեան, *Հայերէնագիտական բառարան*, Հայաստան հրատ., Երեւան, 1987:

ուած ձեւաբայերը (*կախեալ դերբայներ*), որոնք, ըստ էութեան, ոչ-աւելին են, քան բայահիմքեր բայի ժամանակներից մի քանիսի համար[2]:

Արեւելահայերէնի քերականութեան առաջին տեսաբան Մանուկ Աբեղեանը, *բայ* ասելով, հասկանում է «*միայն մի առանձին խմբի կամ տեսակի բառերը*», որոնցով «*ստորոգումն է արտայայտւում*»[3], ասել է թէ՝ բայական յարացոյցը կազմող ձեւերը՝ բառաձեւերը, ինչպէս՝ *գրում եմ/էի, գրեցի, գրել եմ/էի, գրեմ/-էի* եւն.: Յիշենք, որ բառափոխութեան ձեւերը կամ բառաձեւերը, ըստ լեզուաբանի, բառափոխութեան ձեւական մասերով (մասնիկներ) կամ վերջաւորութիւններով կազմուած ձեւերն են[4], այսինքն՝ թեքուած բայն ու գոյականը, ինչպէս՝ *գր**եմ**-գր**ես**-գր**ի*** եւն.; *գիր**ք**(**ը**/**ն**/**դ**/**ս**)-գրք**ի***(-/**ն**/**դ**/**ս**)-գրք**ից**(-/-/**ս**/**դ**) եւն.: Եւ պատահական չէ, որ *Հայոց լեզուի տեսութեան* հինգերորդ մասը՝ «Բառաձեւեր (Ձեւաբանութիւն)», նուիրուած է բացառապէս խոնարհման եւ հոլովման համակարգերին[5]:

Քանի որ Աբեղեանը *բայ* է համարում միայն դիմաւոր ձեւերը, որոնք արտայայտում են ժամանակ, դէմք, թիւ, հետեւաբար նաեւ ստորոգում, դրանից ինքնին հետեւում է, որ պէտք է բայական համակարգից դուրս դիտարկէր դերբայները, որ հետեւեալ կերպ է բնորոշում. «*այն անունները եւ ածականները, որոնք ցոյց են տալիս բայական իմաստ առանց դէմքի*», ապա շարունակում. «*....Դերբայներն իսկապէս բայ չեն, այլ բայի հիմքից կազմուած անուն կամ ածական (մականուն, մակբայ)*»[6]:

Աբեղեանը տարբերակում է դերբայի հետեւեալ տեսակները.- անորոշ (*գնալ*), ենթակայական (*գնացող*), անկատար (*գնում, գնալիս*), անցեալ (*գնացել, գնացած*) եւ ապառնի, որ «*կազմւում է ՈՒ, Ի, ԻՔ վերջաւորութիւններով* (նկատի ունի ածանցները - Ա.Մ.), *որոնք աւելանում են անորոշ դերբայի վերջից, օրինակ՝ գրել - գրելու, գրելի, գրելիք»,* ապա աւելացնում է. «*Ի, ԻՔ ածանցներով կազմութիւններն առնւում են իբրեւ գոյական եւ ածական անուններ, ուստի դրուած են վերեւում անուանական ածանցների մէջ...: Բայական ձեւերի կազմութեան համար առնւում է միայն ՈՒ վերջացած ապառնի դերբայը...*»[7]: Այսպիսով, լեզուաբանի առանձնացրած *անկատար, անցեալ* (*վաղակատար* ենթատեսակը - Ա.Մ.) եւ *ապառնի դերբայները* համապատասխանում են յետաբեղեանական շրջանում «ներմուծուած» *կախեալ դերբայներին*՝ բացառութեամբ *ժխտականի*

---

[2] Գէորգ Ջահուկեան, *Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցուածքը*, Միտք հրատ., Երեւան, 1969, էջ 266:

[3] Մանուկ Աբեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն*, Միտք հրատ., Երեւան, 1965, էջ 361:

[4] Նոյն, էջ 6-8:

[5] Նոյն, էջ 297-348:

[6] Մ. Աբեղեան, *Աշխարհաբարի քերականութիւն*, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1906, էջ 100:

[7] Աբեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն*, էջ 282-94:

(*ժխտման*)[8]: Եթէ *գնալ, գնացող, գնացած* միաւորներն անկախ գործածութիւն ունեցող բառեր են, ապա մի՞թէ արդարացուած է լեզուաբանի այն մօտեցումը, որով վերջիններիս հետ նոյն հարթութեան վրայ են դրւում *գնում*, *գնացել* անկախ գործածութիւն չունեցող «դերբայները» եւ *գնալուն*, որ բազմաթիւ տարակարծութիւններ է առաջ բերում:

Աբեղեանն *անկախ* դերբայները ըստ գործառութեան տարբեր խօսքի մասերի է բաշխում. *անորոշը* համարում է գոյական (*դերբայ գոյական/-բայանուն*), *յարակատար, ենթակայական, ապառնի դերբայները*՝ ածական (*դերբայ ածական/բայածական*), իսկ *անկատարի երկրորդ ձեւը*[9]՝ մակբայ (*բայական մակբայ*)[10]: Սակայն, ինչպէս նկատում է Ջահուկեանը, դրանով հանդերձ, Աբեղեանը հակասութիւն է թոյլ տալիս՝ պահպանելով աւանդական ընդհանուր «դերբայներ» անուանումը[11]:

Հարցի շուրջ յատկապէս Աբեղեանի այս տեսակէտը քննադատութեան թիրախ է դառնում խորհրդային շրջանի մի շարք քերականների համար:

Եթէ Ստեփանոս Պալասանեանը դերբայները համարում էր առանձին խօսքի մաս[12], իսկ Աբեղեանը բաշխում դրանք տարբեր խօսքի մասերի մէջ, ապա Արարատ Ղարիբեանը եւ Գուրգէն Սեւակը լիովին նոր մօտեցում են որդեգրում. դերբայները բայի սահմաններում քննելով՝ փաստօրէն ընդունում են բայի երկու դրսեւորում՝ *դիմաւոր* եւ *անդէմ*[13]: Բայի այսպէս կոչուած *անդէմ ձեւերի* մէջ առանձնացուում եւ նոյն հարթութեան վրայ են դրւում անորոշ, անկատար[14], վաղակատար, յարակատար, ապառնի, ենթակայական, ժխտական: Ընդգծելի է, որ Սեւակը քննուող միաւորների կազմութեան մասին խօսելիս օգտագործում է «ածանց» եզրը, ինչպէս՝

---

[8] *Ժխտման* կամ *ժխտական դերբայը* գրական արեւելահայերէնում առաջինը ճանաչել եւ շրջանառութեան մէջ է դրել Արարատ Ղարիբեանը (Ա. Ղարիբեան, *Հայոց լեզուի քերականութեան դասագիրք*, Հայպետհրատ, Երեւան, 1941, էջ 167):

[9] *Անկատար երկրորդի* մասին խօսելիս Աբեղեանը նշում է, որ այն ունի մակբայական նշանակութիւն՝ այդպիսով չանդրադառնալով *գալիս, լալիս, տալիս* միաւորներին, որոնք նաեւ հանդէս են գալիս որպէս բայահիմքեր անկատարի երկու ժամանակների համար: Նոյն միտումը տեսնում ենք նաեւ յետագայ շրջանի հայերէնագէտների աշխատանքներում:

[10] Աբեղեան, *Հայոց լեզուի տեսութիւն*, էջ 365:

[11] Գ. Ջահուկեան, «Ժամանակակից հայոց լեզուի անդէմ բայածեւերը («դերբայներ»)», *Հայոց լեզուի տեսութեան եւ պատմութեան հիմնահարցերը*, Համազգային հրատ., Պէյրութ, 2000, էջ 57:

[12] Ստեփանոս Պալասանեան, *Քերականութիւն մայրենի լեզուի հայոց*, տպարան Մ. Շարաձէի, Թիֆլիս, 1874, էջ 70-72:

[13] Գուրգէն Սեւակ, *Ժամանակակից հայոց լեզուի դասընթաց*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2009, էջ 275:

[14] Սեւակը *գալ, լալ, տալ* բայերի անկատարի երկու ժամանակները կազմող բայահիմքերը եւ *գրելիս, վազելիս* միաւորները միեւնոյն տեսակի՝ *անկատար դերբայի* մէջ է դնում, ինչն ուղղակի մերժելի է (Սեւակ, էջ 284):

«*Անկատար դերբայը ձեւաւորւում է երկու տարբեր ածանցներով՝* ***ում*** *եւ* ***իս***» կամ «*Ենթակայական դերբայը ձեւաւորւում է* ***ող*** *ածանցով…*»[15]:

Աշոտ Աբրահամեանն իր *Հայերէնի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակութիւնը*[16] եւ *Բայը ժամանակակից հայերէնում*[17] մեծարժէք ուսումնասիրութիւններում բայը եւ դերբայը, որոշակի վերապահումներով, ըմբռնում է ինչպէս Սեւակը: Նա նշում է, որ թէեւ դերբայները դիմաւոր ձեւերից տարբերւում են նրանով, որ չունեն դէմքի, թուի, եղանակի, ժամանակի քերականական կարգեր, սակայն բայեր են, քանի որ նրանց բնորոշ են բայական հետեւեալ յատկանիշները՝ բայիմաստ, սեռ, խնդրառութիւն եւ մասամբ՝ կերպ: Դրանց աւելացնում է նաեւ այսպէս կոչուած *դերբայական յատուկ իմաստը*: Աբրահամեանը գրում է, որ դա «*դերբայի մէջ դրսեւորուող գործողութեան կամ եղելութեան վիճակն է, որ առանձին դերբայների մէջ (ապառնի, վաղակատար, յարակատար) առաւել ցայտուն լինելով՝ մօտենում է ժամանակի կատեգորիային, սակայն չի ստանում ժամանակի կատեգորիայի որոշակիութիւն*»[18]:

Հարցի շուրջ այսպիսի մօտեցում ունենալով՝ լեզուաբանը տալիս է հետեւեալ սահմանումը. «*…բայի դերբայական ձեւեր կամ դերբայներ են կոչւում բայի անդէմ ձեւերը, որոնք բայական մի շարք յատկանիշների հետ գործողութիւնը կամ եղելութիւնը դրսեւորում են տարբեր վիճակներում*»[19]:

Էդուարդ Աղայեանը, իր նախորդների՝ յետաբեղեանական շրջանի քերականների նման, արեւելահայերէնի բայածեւերի մէջ տեսնում է երկու կարգ՝ *դերբայներ եւ եղանակային ձեւեր*[20]:

Մանուէլ Ասատրեանը դերբայները բաժանում է երկու խմբի՝ *կախեալ* (անկատար՝ *կարդում*, ապառնի՝ *կարդալու*, վաղակատար՝ *կարդացել*, ժխտման՝ *կարդայ*) եւ *անկախ* (անորոշ՝ *կարդալ*, անկատար II՝ *կարդալիս*, յարակատար՝ *կարդացած*, ենթակայական՝ *կարդացող*, ապառնի II՝ *կարդալիք*)[21]: Դերբայների մասին խօսելիս նա լեզուաբանների ուշադրութիւնը հրաւիրում է «*բառածեւ* հասկացութեան ըմբռնման եւ դրա ոլորտների սահմա-նագծման հարցի վրայ»[22]: Բերելով *գիրք-գրքի-գրքից-գրքով-*

---

[15] Սեւակ, էջ 283-90:

[16] Աշոտ Աբրահամեան, *Հայերէնի դերբայները եւ նրանց ձեւաբանական նշանակութիւնը*, ՀՍՍՌ ԳԱ, Երեւան, 1953, 443 էջ:

[17] Ա. Աբրահամեան, *Բայը ժամանակակից հայերէնում, Ա.*, ՀՍՍՌ ԳԱ, Երեւան, 1962, էջ 357-418:

[18] Աբրահամեան, *Հայերէնի դերբայները*, էջ 42:

[19] Նոյն, էջ 44:

[20] Էդուարդ Աղայեան, *Ժամանակակից հայերէնի հոլովումը եւ խոնարհումը*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1967, էջ 343:

[21] Մանուէլ Ասատրեան, *Ժամանակակից հայոց լեզուի ձեւաբանութեան հարցեր, Բ.*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1973, էջ 208:

[22] Նոյն, էջ 209:

գրքում-գրքեր-գրքերի-գրքերից-գրքերով-գրքերում յարացուցային շարքը, եւ՝ *կարդալ-կարդացած-կարդալիս, կարդացի-կարդացիր-կար-դաց, կարդամ-կարդաս-կարդայ* եւն., գալիս է այն համոզման, որ դրանք նոյն *գիրք* եւ *կարդալ* բառերի բառաձեւերն են[23]: Լեզուաբանը հարց է տալիս՝ արդեօ՞ք ճիշտ է այն ընդունուած մօտեցումը, թէ այնպիսի ձեւեր, ինչպիսիք են *կարդում, կարդալու, կարդացել եւ (չեմ) կարդայ,* նոյնպէս *բառաձեւեր* են համարւում: Դրանք, ըստ նրա, «*աւարտուած-վերջաւորուած իմաստ չեն արտայայտում, որի պատճառով էլ չունեն բառային անկախ ու ինքնուրոյն գործածութիւն եւ հետեւաբար լեզուի կառուցուածքում ունեցած դերով տարբերւում են վերեւում բերուած ձեւերից* (*կարդալ-կարդացած-կարդալիս...* - Ա.Մ.) *... խիստ ասած՝ դրանք բառաձեւեր էլ համարել չի կարելի*»[24]:

Ասատրեանը որոշ վերապահութեամբ համակարծիք է[25] Ջահուկեանի տեսակէտին, թէ «*...բաղադրեալ ձեւերի դերբայական մասը համապատասխանում է բայական հիմքին, օժանդակ բայը՝ վերջաւորութեանը*»[26]:

Ջահուկեանը բազմիցս է անդրադարձել դերբայների խնդրին: Այդ առումով մեծ արժէք ունեն յատկապէս *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքներ*[27], *Ժամանակակից հայոց լեզուի իմաստաբանութիւն եւ բառակազմութիւն* մենագրութիւնների համապատասխան մասերը[28], «Ժամանակակից հայոց լեզուի անդէմ բայաձեւերը («դերբայներ»)» յօդուածը[29]:

Առաջին գրքում շեշտը դրւում է յատկապէս փոխակերպումների, երկրորդում՝ բառակազմական՝ ածանցական կողմի վրայ, քանի որ նպատակը բառային-իմաստաբանական տարորոշումն է: Յօդուածում հեղինակը ներկայացնում է *դերբայի* մասին հայերէնագիտութեան մէջ եղած մեկնաբանութիւնները եւ փորձում որոշել նրա տեղը արդի արեւելահայերէնում:

Ռաֆայէլ Իշխանեանն իր փոքրածաւալ, սակայն մեծարժէք ուսումնասիրութեան մէջ, անդրադառնալով այսպէս կոչուած անդէմ բայերին, բաւական ինքնատիպ եւ հետաքրքիր մօտեցում է ցուցաբերում հարցին: Նա արդի արեւելահայերէնում առանձնացնում է «*անդէմ բայերի հինգ շարքեր (այսինքն՝ հինգ անդէմ բայեր), քանի որ հայերէնում վերջմասնիկների նոյնութեամբ միաւորուած բոլոր բառային շարքերից միայն այդ հինգի մէջ կան վ մասնիկ սպառնալու ընդունակ կամ վ մասնիկ ունեցող միաւորներ: Սակայն, եթէ հինգ շարքերից չորսի մէջ վ մասնիկ սպառնալու ընդունակ*

---

[23] Նոյն, էջ 209-10:

[24] Նոյն, էջ 210:

[25] Հմմտ.՝ Ասատրեան, *Ժամանակակից հայոց լեզուի*, էջ 210-13:

[26] Ջահուկեան, *Հայոց լեզուի զարգացումը*, էջ 266:

[27] Հմմտ.՝ Գ. Ջահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքներ*, ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1974, էջ 505-28:

[28] Հմմտ.՝ Գ. Ջահուկեան, *Ժամանակակից հայոց լեզուի իմաստաբանութիւն եւ բառակազմութիւն,* ՀՍՍՀ ԳԱ, Երեւան, 1989, էջ 174-84:

[29] Ջահուկեան, *Ժամանակակից հայոց լեզուի անդէմ*, էջ 57-74:

միաւորները կարող են ունենալ նաեւ ուղիղ խնդիր (գրել>գրուող, *նաեւ* նամակ գրող, գրել>գրուել, *նաեւ* նամակ գրել, գրելիս>գրուելիս, *նաեւ* նամակ գրելիս, գրած>գրուած, *նաեւ* նամակ գրած), *ապա հինգերորդ շարքի* (**իք***ով կազմուած*) վ *մասնիկ սպանալու ընդունակ որեւէ միաւոր ուղիղ խնդիր չի սպանում* (գրելիք>գրուելիք, տեսնելիք>տեսնուելիք, *բայց միշտ առանց ուղիղ խնդրի*)»[30]:

Այդպիսով, հինգերորդ շարքը «*կիսով չափ է անդէմ բայ*» համարում, քանի որ «*հեռացած է բայականութիւնից եւ այն անդէմ բայերի մէջ պէտք է դնել պայմանով*»[31]:

Խօսելով ***ած*** ձեւոյթով կազմուած միաւորների շարքի մասին՝ նա նշում է, որ այն բայականութիւնից հեռանալու այլ կարգի, սակայն աւելի թոյլ նշաններ այնուամենայնիւ ունի[32]:

Հայերէնագէտն ուշադրութիւն է դարձնում այն հանգամանքի վրայ, որ հայ քերականագիտութեան մէջ աւանդաբար «դերբայ» անուանումը, վերը նշուած անկախ բառային միաւորներից զատ, տարածւում է նաեւ անջատ բայահիմքերի վրայ (*կարդում, կարդացել, կարդալու, կարդայ*): Իշխանեանն իրաւացիօրէն այն համոզմունքն է յայտնում, որ չպէտք է կառչել աւանդական եզրից, երբ այն «*շփոթ է սրեղծում, սքօղում է լեզուական իրողութիւնը*,- եւ շարունակելով միտքը նշում.- *փուեալ դէպքում,* դերբայ *անունը կա՛մ անջատ բայահիմքերին պիտի տրուի, կա՛մ՝ անդէմ բայերին*»[33]:

ՋԱՀՈՒԿԵԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ

Այսպիսով, պարզ երեւում է, որ արեւելահայ քերականների՝ հարցի շուրջ ունեցած պատկերացումները խիստ բազմազան են, իրարամերժ եւ յաճախ ոչ-միանշանակ: Անկախ իրենց քերականագիտական ըմբռնումներից՝ բոլոր ուսումնասիրողներն էլ իրաւացիօրէն նշում են այսպէս կոչուած *անկախ դերբայների* ամենաընդհանրական յատկանիշերից մէկը, այն է՝ բառային անկախ գործածութիւնը: Սրանով հանդերձ, երբ որոշ մասնագէտներ շարունակում են պնդել, թէ վերը նշուած միաւորները, միեւնոյնն է, բայական բառաձեւեր են, ասել է թէ՝ թեքական ձեւեր, իրենց իսկ առաջ քաշած դրոյթների մէջ թոյլ են տալիս ամենալուրջ հակասութիւններից մէկը: Այս առումով պատահական չենք համարում այն, որ շատերը ***ող, ած, իս*** ձեւոյթների մասին խօսելիս յաճախ խոյս են տալիս «ածանց» եզրի կիրառումից՝ օգտագործելով «մասնիկ» չէզոք բնորոշումը: Յիշեալ ձեւոյթները բազմիցս ներկայացւում են որպէս «վերջաւորութիւն», ինչը, ի տար-

---

[30] Ռաֆայէլ Իշխանեան, *Արդի հայերէնի հոլովումն ու խոնարհումը*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1971, էջ 145:

[31] Նոյն, էջ 145:

[32] Նոյն, էջ 145:

[33] Նոյն, էջ 146:

բերութիւն *մասնիկի*, միանգամայն սխալ եւ մերժելի է, քանի որ վերջաւորութիւնները երկրորդական բառայարաբերական ձեւոյթներ են՝ թեքոյթներ (հոլովական, խոնարհական, յոգնակերտ մասնիկներ, յօդեր), եւ յստակ պէտք է սահմանազատել «դերբայակերտ» մասնիկներից: Ինչպէս յայտնի է, ածանցներով, կամ որ նոյնն է՝ երկրորդական **բառակազմական** ձեւոյթներով, ի տարբերութիւն երկրորդական **բառայարաբերականների**, բառեր են կազմւում եւ ոչ թէ նոյն բառի թեքական ձեւերը՝ բառաձեւերը: Դերբայների կազմութեան մէջ, սակայն, գործ ունենք միայն ու միայն ածանցների հետ[34], հետեւաբար դերբայները բառաձեւեր ներկայացնելն արդարացուած չէ:

Այստեղ հարկ ենք համարում խօսել ածանցների տեսակների մասին, որ տարբերակում է Ջահուկեանը: Նա առանձնացնում է ածանցների երեք տեսակ՝ **գործառական** (*հմմտ. փուն-փնային*), **իմաստայաւելական** (*հմմտ. փուն-փնակ*) եւ **գործառական-իմաստայաւելական** (*հմմտ. փուն-անփուն*): Փակագծերում բերուած օրինակներից երեւում է, որ երբ 1. *-ային*, 2. *-ակ*, 3. *ան-* երկրորդական բառակազմական ձեւոյթները միանում են միեւնոյն «տուն» հիմնական ձեւոյթին (այս պարագային՝ բառ-արմատին), առաջին դէպքում կատարւում է գործառական արժէքի փոփոխութիւն, այլ կերպ ասած՝ խօսքիմասային (բառակարգի) փոխանցում (գոյական>ածական), երկրորդ դէպքում՝ լրացուցիչ իմաստի յաւելում (հմմտ.՝ տուն-*փոքր* տուն), երրորդ դէպքում՝ առաջինի եւ երկրորդի համադրում (հմմտ.՝ *փուն-փանը վերաբերող / յատուկ* եւ միաժամանակ՝ *գոյական> ածական*)[35]:

Ջահուկեանն իր «Ժամանակակից հայոց լեզուի անդէմ …» յօդուածում, ինչպէս վերն ասուեց, անդրադարձել է «դերբայի» վերաբերեալ հայերէնագիտութեան մէջ տրուած մեկնաբանութիւններին: Մէկ միասնական սահմանում տալու աւանդական լեզուաբանութեան խոցելի կողմը հեղինակը համարում է այն, որ ե՛ւ դիմաւոր, ե՛ւ անդէմ տարբերակների համար ելակէտային են համարւում նոյն յատկանիշերը՝ առանց հաշուի առնելու բայանունների, բայածականների խօսքիմասային պատկանելութիւնը, ինչպէս նաեւ այն, որ բառային անկախ միաւորների կողքին՝ մէկ հարթութեան վրայ, դրւում են այնպիսի միաւորներ, որոնք ընդամէնը բայակազմական հիմքի արժէք ունեն (*կարդում, կարդացել, կարդայ*)[36]:

Սեւակին քննադատելիս լեզուաբանն իրաւացիօրէն նշում է. «*Գ. Սեւակը բայի երկու դրսեւորումների համար ընդհանուր է համարում բայի ի-*

[34] Բացառութիւն է կազմում միայն «***իս***»ը, որը, հնում հոլովայօդային արժէք ունենալով, այժմ վերածուել է ածանցի:

[35] Աւելի մանրամասն տե՛ս՝ Ջահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան*, էջ 151-58, 502-28:

[36] Հմմտ.՝ Ջահուկեան, *Ժամանակակից հայոց լեզուի անդէմ*, էջ 57-74:

մասփը, սեռը եւ խնդրառութիւնը: Սակայն եթէ նկատի առնենք, որ՝ ա) բայիմաստը Գ. Սեւակի ըմբռնմամբ բայարմատային իմաստն է եւ կարող է հանդէս գալ նաեւ բայանունների մէջ, բ) սեռը բուն արժէքով (ներգործական եւ կրաւորական իմաստների հակադրմամբ) յատուկ է միայն անցողական բայերին, իսկ գ) խնդրառութիւնը ոչ միշտ է բացայայտ արտայայտութիւն ստանում (թոյլ խնդրառութեան դէպքում), ապա կը տպացուի, որ այդ յատկանիշներն անբաւարար են եւ որոշ կարգի բայերից ածանցուած դերբայների ու բայանունների տարբերակման համար որոշակի հիմքեր չեն տալիս»[37]:

Անդրադառնալով անուանումների անմիասնականութեանն ու անհամակարգայնութեանը՝ Ջահուկեանը գրում է. «*'Դերբայների' ընդունուած անուանումները կամ աւանդոյթի անքննադատ օգտագործման, կամ էլ պատահական, խորը չմտածուած եզրայանգումների արդիւնք են*»[38]:

Նա իրաւացիօրէն նշում է. «*....չի կարելի ստեղծել միասնական տերմինաբանութիւն՝ առանց պարզելու համակարգը կազմող միաւորների ներքին փոխյարաբերութիւնների (հակադրութիւնների) բնոյթը: ...«դերբայներ» կոչուող բառերը մէկ ընդհանուր իմաստով միաւորուող բառակա՞րգ են, թէ՞ տարասեռ բառերի պատահական կուտակում (կոնգլոմերատ)՝ իրար մօտ դրուած միայն պատմական աւանդոյթի ուժով: ...այս հարցը լուծելու համար... բաւական է ընտրել այն բառակարգերը, որոնք նրանց հետ սերմամբ ընդհանուր են, այսինքն՝ ծագում են միեւնոյն արմատական եւ հիմքային ձեւերից. դրանք մի կողմից՝ դիմաւոր բայերն են եւ միւս կողմից՝ բայերից ածանցուած խօսքի մասերը, յատկապէս բայանունները՝ բայական գոյականները ու բայական ածականները: Ո՞ր բառակարգերի (խօսքի մասերի) հետ պէտք է դրուեն դերբայները՝ դիմաւոր բայերի՞, թէ՞ բայածանց այլ բառերի նման բաշխուեն ըստ տարբեր խօսքի մասերի*»[39]:

Հարցադրումից պարզ է դառնում, որ Ջահուկեանը փորձում է գտնել այն ընդհանրական յատկանիշերը, որոնցով հնարաւոր կը լինի բնութագրել, սահմանել ու մէկ միասնական համակարգի մէջ դնել բայահիմքերն ու բայերը: Միայն այդ դէպքում հնարաւոր կը լինի դրանք մէկ եզրի տակ միաւորել: Իսկ դա իրո՞ք հնարաւոր է: Կարծում ենք՝ ոչ, քանի որ հիմքերն ու բառերը համարժէք, համասեռ լեզուական միաւորներ չեն: Ինքը Ջահուկեանն է ասում. «*Բառային անկախ գործածութիւն ունեցող միաւորների կողքին նրանց մէջ տեղ են գտնում նաեւ այնպիսի միաւորներ, որոնք անկախ բառային արժէք չունեն եւ պայմանականօրէն ու աւանդաբար են բառեր համարւում* (գրում, գնում. գրել, գնացել. գրի, գնայ)»[40]: Յիշենք, որ

[37] Նոյն, էջ 58:
[38] Նոյն, էջ 61:
[39] Նոյն, էջ 62:
[40] Նոյն, էջ 61:

դրանք (իմա՝ բայահիմքերը՝ «կախեալ դերբայները») բառեր են համարւում եւ առանձին գրւում միայն այն պատճառով, որ *եմ* օժանդակ բայը կարող է՝ ա) գործածուել նաեւ անկախ բառերի հետ (հմմտ.՝ *Նամակը **գրուած** է-**գրուած** նամակ, Թուղթը **ճերմակ** է-**ճերմակ** թուղթ*), եւ բ) իր տեղը փոխել «կախեալ դերբայների» նկատմամբ (հմմտ.՝ *Նա **գրել է** գարիներ առաջ այդ նամակը քեզ-Նա **է** գարիներ առաջ այդ նամակը քեզ **գրել***):

Աւանդական մօտեցումը դրութիւնը չի փրկում, քանի որ *ոչ-բառը* բառ համարուել չի կարող. այն հակասում է բառի սահմանմանն ու առհասարակ տրամաբանութեանը:

Այն, որ *եմ* էական բայը գործածւում է անկախ բառերի հետ, բոլորովին այլ երեւոյթ է. այդտեղ ***եմ***ը հաստատում կամ ժխտում է առարկան, յատկանիշը, որ բառեր են՝ անկախ ամէն ինչից, օր.՝ *գրող է-գրող չէ*; *ծեր է-ծեր չէ:* Մինչդեռ «կախեալ դերբայների» հետ կիրառուելիս, անկախ իր ունեցած դիրքից, ոչ-բառը, այսինքն՝ *անջատ բայահիմքը* բառի մաս է դարձնում (հիմք+թեքոյթ), ինչպէս՝ *գրում+եմ*: Հետեւաբար բայահիմքը՝ ոչ-բառը, չի կարող սահմանուել, քննուել նոյն չափանիշերով, միեւնոյն էական, տարբերակիչ յատկանիշերով, ինչ որ բառը[41]:

Բայահիմքերի եւ բայածանցների միջեւ առկայ ընդհանրութիւնները պայմանաւորուած են բայարմատով եւ հիմքակազմութեամբ, այն էլ, երբ անցեալի հիմքով է կազմւում բառը (*ա* խոնարհման պատկանող բայերը, ինչպէս նաեւ *չ, ան, են, ցն, ացն, եցն* ածանց ունեցողները, օր.՝ *գնալ>գնացող, գնացած, թռչել>թռած, հեռանալ>հեռացող, հեռացած, մօտենալ>մօտեցող, մօտեցած, թռցնել>թռցրած, թարմացնել>թարմացրած, մօտեցնել>մօտեցրած*): Եւ դա միանգամայն օրինաչափ է, քանի որ բերուած բառային միաւորները սերում են բայերից, բաղադրւում են բայահիմքերից, այսինքն՝ բայանուններ են, բայածականներ, բայահիմքով ժամանականիշ բառեր՝ մակբայներ: Բառային արժէք ունեցող միաւորները տարբերւում են նրանով, որ համապատասխան ածանցներով՝ *ող, ած, իս*, ստեղծուած բառային լրիւ ինքնուրոյն միաւորներ են: Նշանակում է՝ ընդհանրական յատկանիշերով կարող են բնորոշուել միայն համադրական եւ վերլուծական ժամանակները կազմող բայահիմքերը (***մօտեց**այ*; ***մօտենում** եմ*), բայց ոչ՝ բայանունները, բայածականներն ու բայահիմքով մակբայները (*մօտեցող, մօտեցած, մօտենալիս*):

Ջահուկեանը, այնուամենայնիւ հակուած լինելով ընդունել դերբայական համակարգ (հաւատարիմ մնալով աւանդոյթի ուժին), առաջ է քաշում հարցերի մի ամբողջ փունջ եւ նշում, որ դրանք կարելի է լուծել՝ արդարացնելով գործառական մօտեցումը, այսինքն՝ ընդունելի համարելով Ա-բեղեանի սկզբունքը: Նախ «*....հարկ կը լինէր իրարից անջատել լոկ որ-*

[41] Մենք ընդունում ենք Բագրատ Ներսիսեանի այս մօտեցումը: Հեղինակը տուեալ կարծիքը յայտնել է մի անտիպ յօդուածում, որը տրամադրել է մեզ:

պէս վերլուծական բայահիմքեր հանդէս եկող «անկատար» (-ում), *«վաղակատար»* (-ել/-ացել) *եւ «ժխտական» («ժխտման» «դերբայները»)* (-ի/-ա) *հիմնականում գոյականի, ածականի (որոշչի) եւ մակբայի (մակորոշչի եւ պարագայի) գործառութիւն կատարող անորոշ* (-ել/-ալ), *«ենթակայական»* (-ող/-ացող), *«յարակատար»* (-ած/-ացած), *«ապառնի»* (*առաջին*՝ -ելու/-ալու, *երկրորդ*՝ -ելիք/-ալիք) *եւ «ընթացակցական» («անկատար երկրորդ»)* (-ելիս/-ալիս) *դերբայներից....*»[42]:

Կարծում ենք՝ առնուազն զարմանալի է, որ ***ող***ով բառերը հայերէնագիտութեան մէջ համարուել են բայածականներ: Պատճառն ըստ երեւոյթին այն է, որ այդ միաւորները դիտարկուել են միայն բառակապակցութեան շրջանակներում՝ որոշիչ-որոշեալ յարաբերութեան մէջ:

Առհասարակ բառն անհրաժեշտ է դիտարկել նախ որպէս բառային ինքնուրոյն հասկացութիւն՝ անկախ դիրքում: Այս դէպքում այն պատասխանում է անուանական՝ գոյականական իմաստը վերհանող հարցին՝ *ո՞վ/ի՞նչը*: Այսպէս, եթէ փորձենք *երգող* բառը «հայերէնէ ի հայերէն թարգմանել», ինչպէս ընդունուած է անել քերականութիւններում, կը ստացուի՝ *նա, ով երգում է*: Ուստի՝ ***նա***ն ինչպէ՞ս կարող է լինել ածական: Անհասկանալի է:

Այսպիսով, գոյականն ու բայանունը կարող են տարբերակուել հետեւեալ մօտեցմամբ՝ *գրող* (արձակագիր, բանաստեղծ)-գոյական, *քամուց ճօճուող, գիրք գրող, գրող գրիչ*-բայանուն գոյական: Ինչպէս տեսնում ենք, գերադաս դիրքում ձեռք են բերում խնդրառական եւ պարագայական յատկանիշեր, քանի որ բայահիմքով են կազմուած, իսկ ստորադաս դիրքում՝ որոշչային յատկանիշեր, բայց բնականաբար ոչ բայածականներ:

Ջահուկեանը հարկ է համարում բաժանում կատարել *գալ, լալ, տալ* բայերի անկատար ներկայ եւ անցեալ ժամանակները կազմող բայահիմքերի եւ նոյն ձեւն ունեցող այսպէս կոչուած համակատար դերբայի միջեւ[43], ինչը, կարծում ենք, արդարացուած մօտեցում է:

Ջահուկեանը թէեւ դերբայակերտ մասնիկները գործառական ածանցներ է համարում, այսպէս կոչուած անկախ դերբայները՝ նոր բառեր, իսկ կախեալները՝ վերլուծական բայահիմքեր, այնուամենայնիւ հակուած է մնում պահելու «դերբայական համակարգը», ինչն անհասկանալի է: Նա առաջարկում է եզրային փոփոխութիւնների երեք տարբերակ, ըստ որոնց՝ «անդէմ բայածեւերին» տրւում են հետեւեալ անուանումները.-
Առաջին՝

1. համընթացական բայահիմք՝ *-ում,*
2. նախընթացական բայահիմք՝ *-ել/-ացել,*
3. ապընթացական բայահիմք՝ -դերածական՝ *-ելու/-ալու,*

[42] Ջահուկեան, *Ժամանակակից հայոց լեզուի անդէմ*, էջ 67:
[43] Նոյն, էջ 67-68:

4. ապընթացական բայահիմք՝ *-ի/-այ,*
5. անորոշ (բայաձեւ, դերգոյական)՝ *-ել/-ալ,*
6. համընթացական դերածական՝ *-ող/-ացող,*
7. նախընթացական դերածական՝ *-ած/-ացած,*
8. ապընթացական դերածական՝ *-ելիք/-ալիք,*
9. (համընթացական) դերմակբայ՝ *-ելիս/-ալիս*:

Երկրորդ՝

1. անկատար առբայ՝ *-ում,*
2. նախակատար առբայ՝ *-ել/-ացել,*
3. ապակատար առդերբայ՝ *-ելու/-ալու,*
4. ապակատար դերբայ՝ *-ի/-այ,*
5. անորոշ (բայաձեւ)՝ *-ել/-ալ,*
6. անկատար դերբայ՝ *ող/-ացող,*
7. նախակատար դերբայ՝ *-ած/-ացած,*
8. ապակատար դերբայ՝ *-ելիք/-ալիք,*
9. (անկատար) մակդերբայ՝ *-ելիս/-ալիս*:

Երրորդ տարբերակում լեզուաբանը պահում է աւանդական «դերբայ» անուանումը: Որոշակի փոփոխութիւններ կատարելով՝ առաջարկում է հետեւեալ անուանումները (վերը տրուած յաջորդականութեամբ).- *անկատար, վաղակատար, ապառնական, ժխտական, անորոշ, համակատար, նախակատար, ապակատար* եւ *համընթացական*[44]:

Սրանից կարելի է եզրակացնել, որ լեզուաբանը, ծանրակշիռ դատողութիւններ անելով, այնուամենայնիւ յանգում է այն կէտին, որից սկսել էր վերլուծութիւնը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Հիմնուելով Ջահուկեանի առաջ քաշած դրոյթների վրայ, կարծում ենք, որ պէտք է լիովին հրաժարուել «դերբայական համակարգ» առանձնացնելու աւանդական մօտեցումից, քանի որ բայահիմքերն ու անկախ գործածութիւն ունեցող բառերը նոյն հարթութեան վրայ քննելն անտրամաբանական է:

Այսպէս կոչուած բուն դերբայները բայական համակարգում պէտք է քննել այնքանով, որքանով դրանք առնչւում են փոխակերպմանը՝ փոխկաղապարմանը:

«Դերբայակերտ» մասնիկները ոչ թէ վերջաւորութիւններ՝ թեքոյթներ, այլ ածանցներ են՝ երկրորդային բառակազմական ձեւոյթներ, որոնցով կազմւում են նոր բառեր՝ բայանուններ, բայածականներ, բայահիմքով ժամանականիշ մակբայներ:

Այսպէս, կարելի է առանձնացնել չորս խումբ.-

[44] Նոյն, էջ 73-74:

1. գործողութեան անուն ցոյց տուող բայանուն-գոյականներ՝ *-ելի/-ալի*.
2. գործողութիւն կատարող անձ կամ առարկայ ցոյց տուող բայանուն-գոյականներ՝ *-ող/-ացող*.
3. գործողութեան հետեւանք, վիճակ ցոյց տուող բայածականներ՝ *-ած/-ացած*.
4. բայահիմքով ժամանականիշ մակբայներ՝ *-ելիս/-ալիս*:

Այս միաւորները պէտք է բաշխել. առաջին երկուսը՝ գոյականների, երրորդը՝ ածականների, չորրորդը՝ մակբայների: Այն, որ բայահիմիքով են բաղադրւում, առիթ չի տալիս դրանք բայ համարելու այնպէս, ինչպէս ***ես***ից կազմուած *եսական* եւ *եսականութիւն* բառերը դերանուան մէջ չեն դրւում[45]:

PARTICIPLE: WORD OR WORD-FORM?

(Summary)

ASHOT MKRIAN (ashot.mkrian@outlook.com)

This paper examines the definition and differentiation of word and word-form in connection with a participle. The author notes that there have been diverse responses but no comprehensive answer has been given to this challenging question. Interestingly, one needs to note that the same is true for general linguistics too!!

Based on the points of view of Manouk Abeghian, Rafayel Ishkhanian, and, particularly, Gevork Jahoukian, the author concludes that the so-called "main participles" in the verbal system should be analyzed in association with grammatical transformation. Furthermore, the author notes that the particles that form the participles, and are affixes (derivational morphemes) rather than endings (inflectional affixes), according to which verbal nouns, verbal adjectives, and temporal adverbs consisting of verb stems are formed. Furthermore, the author confirms that the "dependent participles" are not words or word-forms, but simply are separate or analytical verb stems.

[45] Նոյն, էջ 66:

ԴԵՐԱՆՈՒԱՆ ԹՈՒԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ (lingualal51@mail.ru)

ՄՈՒՏՔ

Թուի քերականական կարգն արտայայտում է քանակայնութեան գաղափար եւ տարածւում է հաշուելի առարկաների վրայ. ընդ որում՝ այն արտայայտում է ոչ թէ հաշուելի առարկաներ, այլ մէկի (եզակիի) եւ մէկից աւելիի (յոգնակիի) քանակային յարաբերութեան գաղափար: Քանակի կամ թուի ըմբռնումը ներառում է եզակի (մէկ) եւ յոգնակի (մէկից աւելի) հասկացութիւններ, եզակի եւ յոգնակի յարաբերակցութեան ոլորտում եզակի թիւը ներկայացնում է յարաբերակցութեան առաջին եզրը եւ ցոյց է տալիս, որ դիտարկուող առարկան մէկն է, իսկ յոգնակին ներկայացնում է յարաբերակցութեան երկրորդ եզրը՝ ցոյց տալով, որ դիտարկուող առարկանեը քանակի տեսակէտից մէկից աւելին են:

Հայերէնում գոյականի եզակի թիւը նշոյթաւորուած չէ. իբրեւ քերականական իմաստի արտայայտման միջոց՝ հանդէս է գալիս բառի ուղիղ ձեւը, որ յատկանշւում է զրօ ձեւոյթով: Ի հակադրութիւն զրօ ձեւոյթի՝ յոգնակի թիւը նշոյթաւորուած է. յոգնակիութեան գաղափարն արտայայտւում է թուանիշ թեքոյթների միջոցով, որոնք բառը (բառոյթը) վերածում են բառաձեւի: Թուի քերականական կարգը յատուկ է հիմնականում գոյական անուններին[1], միւս խօսքի մասերն ունեն թուի շարահիւսական կարգ, ինչպէս ածականը[2], թուականը, դերանունը եւ բայը:

Հին հայերէնում թուականների եւ ածականների, ինչպէս նաեւ դրանց փոխարինող դերանունների արտայայտած յոգնակին յարաբերակից է գոյականներին, ընդ որում՝ ածականի եւ թուականի յոգնակի թուով գործածութիւնը պայմանաւորուած է յոգնակի կամ անեզական գոյականներին համաձայնելու շարահիւսական յատկանիշով: Բայի թիւն արտայայտում է գործողութիւն կատարողի քանակի գաղափար. գործողութիւն կատարողը կարող է լինել մէկը կամ մէկից աւելին:

Դերանունները, բացի ձեւակազմական իւրայատկութիւններից, այս հարցում որոշակի իւրայատկութիւն են դրսեւորում. թուի կարգի կարգա-

[1] Լ.Մ. Խաչատրեան, «Գոյականի թուի քերականական կարգի արտայայտութիւնը հին հայերէնում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 1:2022, էջ 125-40:

[2] Լ.Լ. Խաչատրեան, «Ածականի թուի քերականական կարգի արտայայտութիւնը հին հայերէնում», *Բանբեր հայագիտութեան, Հայագիտական միջազգային հանդէս*, 2:2021, էջ 197-212. նաեւ՝ Լ.Մ. Խաչատրեան, «Ածական // գոյական տարարժէք բառերի թուկազմութիւնը հին հայերէնում», *Պատմաբանասիրական հանդէս*, 2:2021, էջ 225-37:

յին անդամները քերականօրէն եւ բառայնօրէն տարբեր արտայայտութիւններ ունեն:

Թեքուող խօսքի մասերի համակարգում յոգնակերտութիւնը եւ հոլովակազմութիւնը համատեղւում են բառաձեւերի միեւնոյն կաղապարներում, հետեւաբար այդ միաւորները դիտւում են իբրեւ յոգնակիակազմ-հոլովակազմ հիմքերի եւ յոգնակերտ-հոլովակերտ վերջաւորութիւնների զուգորդումներ[3], ինչպէս՝ տիտան-աց, աստեղ-աց, բան-ից, երկու-ց, գեղեցկագուն-ից (յոգնակի թիւ, սեռական հոլով), տիտան-աւք, աստեղ-աւք, երկու-ք, գեղեցկագուն-իւք (յոգնակի թիւ, գործիական հոլով): Այս յատկանիշը կցական կառուցատիպի լեզուների տիպաբանական բնութագրիչներից է:

Մասնագիտական գրականութեան մէջ ընդունուած է այն տեսակէտը, որ թուի քերականական կարգը հիմք-լեզուում (նախալեզուում) արտայայտւում է ներքին թեքման միջոցով[4]: Սակայն դա չի նշանակում, որ հիմք-լեզուից ճիւղաւորուած բոլոր լեզուները պահպանել են քերականական իմաստի արտայայտման այդ միջոցը: Լեզուական իրողութիւնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ թուի քերականական կարգը հին հայերէնում այլ դրսեւորում ունի. եթէ հին հայերէնը հոլովման համակարգում իշխող ձեւով պահպանել է հին-նախալեզուի թեքականութեան յատկանիշը՝ ինչպէս՝ ձուկն--ձկան--ձկունք--ձկանց, մատն—մատին--մատունք—մատանց, ապա թուի քերականական իմաստի արտայայտման առումով նոր միջոց է ձեռք բերել՝ մասնիկաւորում կամ կցականութիւն, ինչպէս՝ Ի (բան-ի եւ բան-ից), Ո (գետ-ոյ եւ գետ-ոց), Ու (զարդ-ու եւ զարդ-ուց), Ի-Ա (քաղաք-ի եւ քաղաք-աց), Ո-Ա (պատանւ-ոյ եւ պատանե-աց) եւն.: Ինչպէս երեւում է բերուած օրինակներից, թուակազմութիւնը իր հիմնական արտայայտութիւններով համընկնում է հոլովակազմութեանը:

Մասնագիտական գրականութեան մէջ կայ նաեւ այն տեսակէտը, որ հին հայերէնը հիմնականում թեքական լեզու է՝ կցականութեան տարրերով: Սակայն այդ տեսակէտը միանշանակ չպէտք է ընդունել, քանի որ լեզուական որոշակի իրականութիւնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ որոշակի դէպքերում հին հայերէնում գերիշխում է կցականութիւնը (թեքականութեան տարրերով): Դա, մասնաւորապէս, երեւում է թուի քերականական կարգում. հին հայերէնում թուի քերականական կարգն արտայայտւում է հիմնականում մասնիկաւորմամբ, ուստի այդ ոլորտում նա ցուցաբերում է բացարձակ կցականութիւն[5]:

---

[3] Հ. Պետրոսեան, *Գոյականի թուի կարգը հայերէնում*, ԵՊՀ հրատ. Երեւան, 1972, էջ 119:

[4] Պետրոսեան, էջ 113:

[5] Թուի քերականական կարգը մասնիկաւորմամբ է արտայայտւում նաեւ-
ա) ռուսերէնում յոգնակերտ մասնիկների դերով հանդէս են գալիս ы կամ и, а կամ я վերջաւորութիւնները. парта-парты, стена–стены, стол-столы, конь–кони, пуля-пули, дом–дома, озеро-озёра, поле-поля, море-моря.

ԴԵՐԱՆՈՒԱՆ ԹՈՒԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Դիտարկենք դերանուան թուի քերականական կարգի տիպաբանութիւնը հին հայերէնում:

Դերանուն խօսքի մասի թուականզմութիւնը որոշակիօրէն տարբերւում է գոյական, ածական եւ թուական անունների թուականզմութեան օրինաչափութիւնից. դերանունը թուականզմական տարբեր դրսեւորումներ ունի, որոնք տիպաբանական տարբեր յատկանիշեր են ցուցաբերում եւ տարբեր տեսանկիւնից համապատասխանում են տարբեր կառուցատիպերի լեզուների տիպաբանական չափանիշերին[6]:

Դերանուան համակարգում թուի քերականական կարգը բնութագրւում է որոշակի առանձնայատկութիւններով. ա) եզակի-յոգնակի ձեւերի տարբերմատութեամբ եւ տարահիմքութեամբ, ինչպէս՝ ես--մեք, նա--նոքա, դա--դոքա, դոյն--դոքին, սոյն--սոքին եւն., բ) ուղիղ եւ թեք հոլովների թուային հակադրութեան տարբեր արտայայտութեամբ[7], ինչպէս՝ ես--իմ--ինձ, մեք--մեր--մեզ, դուք--ձեր--ձեզ, նա--նորա--նմա եւն., գ) յոգնակիի տարածուած տիպերից տարբեր ձեւաւորմամբ, ինչպէս՝ ոմն--ոմ-ա-նք, իւր--իւր-ե-անք, ամեն--եքին, ամեն--եքեան եւն.:

Դերանուան հոլովման եւ թուականզմութեան դէպքում քերականական իմաստների արտայայտման միջոցները որոշակիօրէն փոխւում են. բացի մասնիկաւորումից թուի եւ հոլովի իմաստներն արտայայտւում են նաեւ տարահիմքութեամբ (արմատափոխութեամբ), ինչպէս՝ ես--մեք, սա—սոքա, իմն // ինչ--իրիք--իմիք--իւիք, զի՞--է՞ր--ի՞մ, յիմէ՞--ի՞ւ եւն., ինչպէս նաեւ այս մարզում գործում է քերականական իմաստների արտայայտման խառը տիպը (տարահիմքութիւն-մասնիկաւորում եւն.), ինչպէս՝ նա--նորա--նմա--ի նմանէ--նովաւ, դա--դորա--դմա--ի դմանէ--դովաւ եւն.:

Թուականզմութեան *մասնիկաւորման եղանակը* բնորոշ է դերանուան որոշ տեսակների, որոնք յոգնակի թուի իմաստն արտայայտում են **ք** մասնիկով կամ այդ տարրն ունեցող *բաղադրյալ այլ մասնիկներով,* ինչպէս՝ դու--դուք, իմ--իմք, իւր--իւրք, մեր--մերք, ձեր--ձերք, ո՞--ոյք, ոմն-ոմանք, այս--այսք // այսոքիկ, նոյն--նոյնք // նոքին եւն., իսկ *տարահիմքութիւնը (արմատափոխութիւնը) եւ իմաստների արտայայտման խառը տիպը*՝ դերանուան այլ տեսակների, ինչպէս՝ անձնական (ես--իմ--ինձ--յինէն--ինեւ,

---

բ) անգլերէնում՝ book-books, map-maps, witch-witches, city-cities, leaf-leaves, child-children.

գ) Լատիներէնում՝ tabulă-tabul-ae, lupus–lup-ï, verbum–verb-a, orätor–orator-ës: (Լ. Խաչատրեան, *Ընդհանուր լեզուաբանութեան դասընթաց*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2016, էջ 206-207):

[6] Հր. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի՝ համեմատութեամբ 562 լեզուների, հտր. 2*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1954, էջ 1-18:

[7] Գէորգ Ջահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974, էջ 213:

նա--նորա--նմա--նմանէ--նովաւ եւն.), ցուցական (սա--սորա--սմա--ի սմանէ-սովաւ) հարցական (զի՞նչ--է՞ր--հի՞մ//էրո՞ւմ--առ իմէ՞--զմէ՞--ի՞ւ) եւն.:

Ա) Անձնական դերանուան թուականզմութիւնը

Անձնական դերանունները թուականզմական անմիօրինակութիւն են ցուցաբերում[8]. որոշակի դէպքերում յստակ է մասնիկների դերը (իւր-իւրմէ--իւրեւ // երեամբ, նա--ի նմանէ--նովաւ), երկրորդ դէպքում մասնիկաւորումն ուղեկցւում է տարահիմքութեամբ եւ տարարմատութեամբ (ես--իմ--ինձ--յինէն--ինեւ), երբեմն էլ թուականզմական մասնիկները զետեղւում են բառի կառուցուածքում՝ փոխանակ եզրափակելու բառաձեւի կաղապարը. հմմտ.՝ նո-ք-ա, նո-ց-ա, զնո-ս-ա եւն., հազուադէպ բառաձեւն ստանում է կրկնակի յոգնակի մասնիկ, ինչպէս՝ նո-ք-ա > նո-ք-աւ-ք եւն.:

Անձնական դերանուան յոգնակին ցոյց է տալիս, որ տուեալ դէմքով ներկայացողը մէկից աւելին է. մէկից աւելի քանակային (քերականական) յատկանիշը վերցւում է խօսողի եւ այն անձանց նկատմամբ, որոնց անուներից խօսողն արտայայտւում է, եւ այսպէս՝ միւս դէմքերի վերաբերեալ[9]:

Առաջին դէմքի *ես* անձնական դերանուան յոգնակին է *մեք*. ընդունուած է այդ ձեւը համարել տարահիմքութիւն, սակայն բառաձեւի արտայայտութեան պլանում յոգնակիակերտ **ք** մասնիկի առկայութիւնը ցոյց է տալիս, որ թուականզմական մակարդակում գործ ունենք նաեւ մասնիկաւորման եղանակի հետ: Յոգնակի թուի հոլովման յարացոյցում այլ օրինաչափութիւն է գործում (տարահիմքութիւն). սեռական՝ *մեր,* տրական՝ *մեզ,* սակայն յոգնակի գործիական հոլովում տարահիմքութեանը զուգորդում է մասնիկաւորման իրողութիւնը, ինչպէս՝ *մե-ք > մե-ւ-ք // մե-ա-ւ-ք (մեօք):*

Երկրորդ դէմքի *դու* անձնական դերանուան յոգնակին մասնիկաւոր է՝ *դու-ք,* յոգնակի թուի հոլովական համակարգում գործում է տարահիմքութիւն. սեռական՝ *ձեր,* տրական՝ *ձեզ,* յոգնակի գործիականում դարձեալ առկայ է մասնիկաւորման երեւոյթը՝ *ձե-ւ-ք // ձե-ա-ւ-ք (ձեօք):*

Երրորդ դէմքի *նա* դերանուան յոգնակին խառը կազմութիւն ունի, թեքականութեանը զուգահեռ նրա արտայայտութեան պլանում ակնյայտ է յոգնակիակերտ **ք** մասնիկի առկայութիւնը, ինչպէս՝ *նո-ք-ա:* Յոգնակի թուի թեք հոլովներում գործում է **ք-ց** հերթագայութիւնը՝ սեռ.-տր.՝ *նոցա,* հայցականում՝ **ք-ս** հերթագայութիւնը՝ *(զ)նոսա,* գործիականում հանդէս է գալիս **ք** մասնիկը՝ որպէս թուականզմական ցուցիչ՝ *նոքա-ւ-ք (նոքօ-ք):*

Երրորդ դէմքի անձնական դերանուան բառային տարբերակները՝ *ինքն* եւ *իւր,* յոգնակին կազմում են մասնիկաւորման եղանակով:

---

[8] Այս մասին տե՛ս՝ Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1852, էջ 85-86:

[9] Պետրոսեան, էջ 41-42:

Այդ դերանունների յոգնակիակազմութիւնը տարբերւում է անձնական միւս դերանունների յոգնակի ձեւակազմութիւնից. դա մասնաւորապէս երեւում է յոգնակի հոլովական յարացոյցում, որտեղ գործում է անուանական հոլովակազմութիւնը: Յոգնակի ուղղական եւ գործիական հոլովներում թուի գաղափարն արտայայտւում է **ք** մասնիկի միջոցով՝ *ինքեան-ք, ինքեամ-բ-ք* եւ *իւրեան-ք, իւրեամ-բ-ք:* Միւս թեք հոլովներում գործում է **ք-g** հերթագայութիւնը, իսկ հայցականում՝ **ք-u**, ինչպէս՝ *ինքեան-ց, յինքեան-ց, (զ)ինքեան-ս* եւ *իւրեան-ց, յիւրեան-ց, (զ)իւրեան-ս:* Հմմտ.՝

Եւ *ինքեանք* իսկ հարքն մեր հպարտացան եւ անօրինացան (Նէեմ., Թ. 16)[10]: Զայս արարեալ շիջուցին *յինքեանց* զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան[11]: Ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել *յինքեանս* (Խոր., 193): Զոր առ *իւրեանսն* տեսանէին[12]: Նահապետ ազգին Սլկունեաց ամրանայր յամրոցին... ապաւէն առնելով *իւրեանց* զբնակիչս Սիմն կոչեցեալ լերինն (Խոր., 228):

Բ) Յուցական դերանունների յոգնակերտութիւնը

Յուցական դերանունները յոգնակի թուի իմաստն արտայայտում են տարբեր ձեւերով: *Սա, դա, նա* դերանունների յոգնակի թուում կարելի է ցոյց տալ յոգնակիակերտ **ք** մասնիկի դերը՝ *սո-ք-ա, դո-ք-ա, նո-ք-ա*[13]*:*

Ք յոգնակիակերտ մասնիկը հանդէս է գալիս յոգնակի գործիականում՝ ստեղծելով միեւնոյն բառաձեւում կրկնակի յոգնակերտներ՝ *սո-ք-ա-ւ-ք (սոքօ-ք), դո-ք-ա-ւ-ք (դոքօ-ք), նո-ք-ա-ւ-ք (նոքօ-ք):* Միւս հոլովներում գործում է **ք-g** հերթագայութիւնը, իսկ հայցականում՝ **ք-u**, ինչպէս՝ *սո-g-ա, դո-g-ա, նո-g-ա* եւ *(զ)սոսա, (զ)դոսա, (զ)նոսա:*

Այս, այդ, այն ցուցական դերանունները յոգնակի թուում ունեն ձեւակազմական տարբերակներ, որոնց արտայայտութեան պլանում ակնյայտ է **ք** մասնիկի յոգնակիակազմ դերը, ինչպէս՝ *այս-ք // այս-ո-ք-իկ, այդ-ք // այդ-ո-ք-իկ, այն-ք // այն-ո-ք-իկ*[14]*:*

---

[10] Աստուածաշնչական բոլոր մէջբերումները կատարուած են՝ *Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց*ից, հրատ.՝ Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997:

[11] *Մովսիսի Խորէնացւոյ Պատմութիւն Հայոց*, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, Տփխիս, 1913, էջ 247: Այսուհետեւ բոլոր մէջբերումների էջերը կը նշուեն բնագրում, փակագծերի մէջ:

[12] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, Տփխիս, 1909, էջ 367:

[13] Հայր Արսէն Բագրատունին այդ դերանունների յոգնակի ձեւեր է համարում նաեւ *սայք, դայք, նայք* կազմութիւնները (Բագրատունի, էջ 88): Ակնյայտ է, որ այդ դերանունները եւս թուի իմաստն արտայայտում են մասնիկաւորման միջոցով:

[14] Հայագիտութեան մէջ *այս, այդ, այն* ցուցական դերանունների թուակազմութեան վերաբերեալ տարբեր տեսակէտեր կան: Բագրատունին նկատում է, որ «գտանին ուրեք ուրեք անսովոր հոլովքս ... յոգն. ուղ. *այսոք, այդոք, այնոք,* սեռ.

Յոգնակի թուի հոլովական իմաստներն արտայայտւում են **ք-g** եւ **ք-u** հերթագայութիւնների միջոցով, որ բնորոշ է անուանական հոլովման տիպին: Կարճ ձեւերը յոգնակի հայցականում թուակազմական **u** մասնիկ չեն ստանում ինչպէս՝ *այս-g//այս-ո-g-իկ, այդ-g//այդ-ո-g-իկ, այն-g//այն-ո-g-իկ, (զ)այս- // (զ)այս-ո-ս-իկ, (զ)այդ- // (զ)այդ-ո-ս-իկ, (զ)այն- // (զ)այն-ո-ս-իկ*[15]*:*

Յոգնակի գործիականում թուի քերականական իմաստն արտայայտւում է **ք** մասնիկով, որը եզրափակում է բառաձեւի կաղապարը. նկատենք, որ գործիականի հոլովահիմքում դարձեալ առկայ է յոգնակերտ -ք մասնիկ, ինչպէս՝ *այսոքի-ւ-ք // այսոքիմ-բ-ք, այդոքի-ւ-ք // այդոքիմ-բ-ք, այնոքի-ւ-ք // այնոքիմ-բ-ք:* Հմմտ.՝

Զի Աստուած *այսոքիւք* հաճեսցի ընդ մեզ[16]: Առ *այսոքիւք* եւ առասպելք աշխարհիս մերոյ զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն (Խոր., 56):

Ցուցական դերանունների յոգնակի թուով գործածութիւնը պէտք է դիտարկել շարահիւսական մակարդակում, քանի որ այն պայմանաւորուած է յոգնակի *լրացեալներին համաձայնելու շարահիւսական յատկանիշով:* Գոյականների հետ գործածւում են *այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն* դերանունները (*սա, դա, նա* դերանունները հանդէս են գալիս անկախ գործածութեամբ):

Վերոնշեալ դերանունները գոյականների հետ գործածւում են թէ՛ նախադաս եւ թէ՛ վերջադաս: Նախադաս գործածութեամբ յոգնակի ուղղական, հայցական, մասամբ էլ գործիական հոլովներում դերանունները մնում են եզակի[17]: Հմմտ.՝

Այս ագարակք – այսց ագարակաց – զայս ագարակս – յայսց ագարակաց – այսու ագարա–կաւք (օք) // այսոքիւք ագարակաւք (օք):

Եւ ոչ ինչ ընդհատ *յայսց պատուոց* տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն (Խոր., 174): *Զայսց* երկուց *պատուիրանաց* կախեալ կան օրէնք եւ մարգարէք[18]: Եւ ի բոլորեսին *յայսոսիկ թուղթսն* վաւերական մատանի Վասակայ եդեալ էր (Եղ., 132):

- Պահպանել են իրենց յատուկ լեզուական եւ մշակութային որոշ տարրեր, որոնք վերարտադրուել եւ կիրառուել են իրենց իսկ կողմից:
- Սա դարձել է սովետահայկական ընկերամշակութային միջավայրի ստեղծման յենք, որն առանձնանում է «զուտ» հայկական կամ ամերիկահայկական խմբերից[4]:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՐԱԻՄԱՍՏԱԽՈՐՈՒԱԾ ՎԵՐՍՏԵՂԾՈՒՄ

Տեղափոխութեան գործընթացում հայրենիքի վերաիմաստաւորումը եւ դրա վերստեղծումը ոչ միայն յիշողութիւնների, այլեւ երեւակայական հայրենիքի վերակառուցումն է: Գաղթեալները գտնւում են երեք «աշխարհնե-

[4] Այստեղ «զուտ» հայկական ասելով նկատի է առնւում խորհրդահայ ներգաղթեալների ինքնաընկալումը իրենց իսկ խմբի մասին, որը բնորոշւում է որպէս այլ մշակոյթներից աւելի նուազ ազդուած ընկերային խումբ:

րի» միջեւ՝ ներկայ, անցեալ եւ երեւակայական: Այս երեք միջավայրերը կամրջում են հայրենիքի գաղափարի բաղադրիչները, որոնք անհրաժեշտ ցուցիչներ են նոր միջավայրում խմբայնացման համար: Դրանք բիւրեղանալով յանգեցնում են որոշակի հաւաքական ինքնութեան, ընկերային նեղմիջավայրի ձեւաւորմանը, որի հիմնական նպատակն է իր գործառոյթներով փոխարինել գերադաս միջավայրը:

Հայրենիքը կազմում է սփիւռքեան հաւաքական ինքնութեան հիմքը[5], եւ տեղանքի հետ կապն ու դրան վերագրուող նշանակութիւնը կարեւորագոյն դեր է կատարում: Այդ կապը կարող է լինել երեւակայական հայրենիքի կամ կորուսեալ հայրենիքի, պատմական հայրենիքի կամ ազգային պետութեան հետ, իսկ հայրենիքի ընտրութիւնը կարող է լինել ըստ նպատակայարմարութեան ընտրուած, պատմականօրէն տրուած եւն.: Սակայն ինչպիսին էլ որ լինի հայրենիքի ընկալումը, Սփիւռքում էթնիկ ինքնութեան ձեւաւորման համար անհրաժեշտ է հայրենիքի առկայութիւնը եւ/կամ դրա ընկալումը:

Հայրենիքի վերստեղծման համար անհրաժեշտ է հետեւեալ բաղադրիչների առկայութիւնը.-

- Հայրենիքի ընկալում.
- Մշակութային տարբերակում, ընկերային տարածքներ.
- Ընկերային յիշողութիւն.
- Երեւակայական հայրենիք.
- Հայրենիքի ընկերամշակութային դրսեւորումներ:

Սրանք նպատակ ունեն իրենց նիւթական եւ հոգեւոր խորհրդանիշերով փոխանցել այն միջավայրը, որն առկայ է հայրենիքում:

Հայրենիքի ընկալում

Սփիւռքեան բազմակի ինքնութիւնը ներառում է երկու կամ աւելի էթնիկ մշակոյթներ եւ լրացւում տարածաշրջանային, լեզուական, կրօնական, քաղաքացիական եւ այլ յատկանիշերով: Ընդունող երկրի եւ պատմական հայրենիքի հանդէպ Սփիւռքի երկակի վիճակը ենթադրում է մասնակցութիւն երկու երկրների մշակութային կեանքում: Սեփական էթնիկ մշակոյթի պահպանման եւ զարգացման համար նրանք պահպանում են կապը (իրական կամ երեւակայական) հայրենիքի հետ: Սակայն նոր միջավայրում յարմարումը պահանջում է ընդունող հասարակութեան ընկերամշակութային նորմերի եւ արժէքների իւրացում:

Ընդունելով բազմազանութեան եւ տարբերութիւնների անհրաժեշտութիւնը՝ սփիւռքեան ինքնութիւնը կայուն ձեւով արտադրւում եւ վերարտադ-

[5] K. Butler, "Defining Diaspora, Refining a Discourse," *Diaspora: A Journal of Transnational Studies,* 10(2):2001, էջ 201:

րում է *գաղթող* նոր հոսքերին զուգահեռ, նաեւ վերարտադրում է անվերջանալի ցանկութիւնը՝ վերադառնալ «կորուսեալ ծագմանը»[6]:

Այստեղ ուսումնասիրուող խմբի դէպքում կարելի է նկատել, որ երբ խօսւում է հայրենիքի ընկալման մասին, ապա կարծիքները բաժանւում են: ԽՍՀՄից Լոս Անճելըս տեղափոխուած հայերի մի խումբ ունի յստակ, կողմնորոշուած պատկերացումներ, մի խումբ հնարաւոր է համարում, որ դրանք տարանջատել հնարաւոր չէ, միւս խումբն ընդհանրապէս մերժում է այդ գաղափարը՝ համարելով, որ իր հայրենիքն այլեւս գոյութիւն չունի:

Սակայն, երբ դիտարկում եւ քննարկում ենք ներկայացուած կարծիքները, դրսեւորումները, ապա պարզ է դառնում, որ մեծմասամբ գործ ունենք հայրենիքի խառը-համադրուած տիպի ընկալման հետ: Այս մոդէլի մէջ իւրայատուկ ձեւով են դրսեւորւում մնացած ցուցիչները՝ յիշողութիւն, ընկերային տարածքներ, ընկերամշակութային դրսեւորումներ:

Մշակութային տարբերակում, ընկերային տարածքներ

Ընկերային երեւոյթների դրսեւորումը օգնում է առաւել նկատելի եւ նիւթական դարձնել էթնիկ սահմանները, դրանով իսկ ընդգծել տարբերութիւնը տուեալ խմբի եւ ընդունող հասարակութեան միջեւ: Դրանք կարող են զարգանալ՝ ընդհուպ հասնելով մինչեւ *խորհրդանշանայնութեան*: Պայմանականօրէն այդ սահմանները «տարբերութեան տարածքներ»[7] անուանելով, կարելի է հասկանալ դրա բնոյթը եւ հիմնական գործառոյթները էթնիկ խմբի համար: Ինքնութեան բանակցութիւնների եւ էթնիկութեան սահմանների հաստատման համար անհրաժեշտ են տարածքներ, որտեղ Սփիւռքի ներկայացուցիչները/էթնիկ խմբի անդամները ինքնանոյնանում են իրենց համայնքի հետ: Տարբերութեան տարածքները ներգաղթող խմբերի կողմից ստեղծուող եւ նրանց սերունդների կողմից վերարտադրուող հաստատութենական եւ խօսոյթային միջավայրեր են: Դրանք պահպանում եւ շարունակական են դարձնում որեւէ երեւոյթ, որ համարւում է, որ պատկանում է միայն այդ համայնքին, խմբաւորմանը, ինչը միեւնոյն ժամանակ չի պատկանում տեղական բնակչութեանն առհասարակ (անկախ այն բանից, թէ այդպիսի պատկերացումները ճի՞շտ են, թէ՞ սխալ): Սահմանների պահպանման ուղղուած միքանի սերունդների ջանքներն են հենց տարբերակում աւանդական *զօրաշարժուած* Սփիւռքը դեռեւս սփիւռքացուող կամ բոլորովին նոր ինքնակազմակերպուող էթնիկ համայնքից: Ըստ Խաչիկ Թոլոլեանի «*Սփիւռքներն անդրազգայնութեան խորհրդա-*

---

[6] S. Hall, "Introduction: Who Needs Identity?," in *Questions of Cultural Identity*, S. Hall & P. du Gay (eds.), Sage, London, 1996, էջ 1-17:

[7] V. Sahakian, *Spaces of Difference, Spaces of Belonging, Negotiating Armenianness in Lebanon and France*, University of Michigan-Dearborn, Dearborn, MI, 2018, էջ 247-67:

նիշն են, քանի որ նրանք մարմնաւորում են սահմանների հարցը, ինչն ընկած է ազգային պետութեան այլընտրանքի ցանկացած համարժէք սահմանման հիմքում»[8]:

Ընկերային յիշողութիւն

Յաջորդ կարեւոր բաղադրիչը ընկերային յիշողութիւնն է: Ինչպէս գիտակցութիւնը, լեզուն, այնպէս էլ յիշողութիւնը ընկերային կողմ ունի: Յիշելու գործընթացում մենք ոչ թէ պարզապէս մտաբերում ենք երեւոյթներ, փորձելով վերականգնել մեր ներքին զգացողութիւնները, այլ վերականգնում ենք արտաքին ընկերային կեանքի դրուագները: Ընկերային յիշողութիւնը կիրառական է դառնում միայն հասարակութեան այլ անդամների հետ մեր շփումների հետեւանքով: Ընկերային յիշողութիւնը ազգային ինքնագիտակցութեան կառուցուածքի կարեւոր տարրերից է: Այն բարդ եւ բազմաբաղադրիչ երեւոյթ է (ժողովրդի պատմական յիշողութիւն, մշակութային յիշողութիւն, քաղաքական յիշողութիւն), որը հասարակութեան գոյութեան նախապայման է՝ հիմնուած ընկերային նշանակալի տեղեկատուութեան կուտակման, պահպանման եւ փոխանցման վրայ:

Ընկերային յիշողութեան հիմնական գործառոյթը ազգային համայնքի ինքնութեան պահպանումն ու փոխանցումն է[9]:

Ընկերային յիշողութիւնը որպէս «ընկերային փոխազդեցութեան աղբիւր» եւ «ինքնորոշման աղբիւր» սերտօրէն կապուած է մշակոյթի հետ, եւ որպէս այդպիսին, «ծառայում է ոչ այնքան անցեալի պահպանմանը, որքան խմբի, համայնքի ամբողջականութեանը եւ, իվերջոյ՝ ազգային ինքնութեանը»[10]:

Յիշողութիւնն այս աշխատանքի առանցքային կէտերից է: Այս ուսումնասիրութեան թիրախային խումբը՝ ԱՄՆ տեղափոխուած հայերը, ծնուել են Խորհրդային Հայաստանում, սակայն նրանց ընկալումները յենւում են ելքի երկրի, հասարակական կարգի, ազգութեան, համայնքի (community) եւ ընտանիքի մասին յիշողութիւնների վրայ:

Այս համապատկերում համայնքի գաղափարը ներառում է ինքնութեան եւ պատկանելիութեան, այլ հանրոյթների հետ ընդհանրութիւնների եւ տարբերութիւնների, տուեալ ընկերային միջավայր ներառման եւ արտա-

---

[8] K. Tololyan, "The Nation-state and its Others: In Lieu of a Preface" *Diaspora: A Journal of Transnational Studies,* 1(1): 1991, էջ 3-7:

[9] А. Рафиков, "Социальная память и механизмы ее воспроизводства" (ընկերաբանական յիշողութիւնը եւ դրա վերարտադրութեան մեխանիզմները), *Вестник Башкирского университета,* 2:2006, էջ 119:

[10] *Власть времени: социальные границы памяти* (Ժամանակի ուժը. յիշողութեան ընկերաբանական սահմանները) / В. Ярской и Е. Ярской-Смирновой (ред.), Մոսկուա, ԱՔԳՀԿ, 2011, էջ 9:

մղման հարցեր[11]: Այս հասկացութեան մէջ անհրաժեշտ է նախ եւ առաջ ընդգծել դրա համայնական բնոյթը. «*ընդհանուր պահանջները եւ նպատակները, ընդհանուր կենցաղը, կենսագործունէութեան, աշխարհայեացքների, մշակոյթի եւ հաւաքական գործողութեան ընդհանրութեան զգացումը*»[12]:

Նոր միջավայրում ինքնակազմակերպուելով, յետագայում նաեւ սփիւռքացուելով՝ յիշողութիւնները հայրենիքի, տան մասին վերանում են տեղանքից եւ դառնում անդրազգային երեւոյթ: Անդրազգային յիշողութիւնը արտայայտում է ազգի, հայրենիքի, սփիւռքեան համայնքների հետ կապերի բազմակողմ եւ տատանուող սահմանները կամ դրանց բացակայութիւնը:

Սփիւռքեան յիշողութեան առկայ մօտեցումներում առանձնայատուկ նշանակութիւն ունի Սալման Ռուշտիի գաղափարը «կոտրուած հայելու բեկման» վերաբերեալ, որտեղ նա ներկայացնում է յիշողութեան քարտէզագրման գաղափարը, քննարկում «յիշողութիւնների յաւելուածներ»ները: Վերջիններս խօսոյթային քննարկումների հատուածներ են, որոնք չեն ամրագրւում ընկերային յիշողութեան մէջ ընդհանուր պատկերով[13]:

Այս մօտեցումը ներկայացւում է ի հակադրութիւն Արճուն Ափատուրայի՝ «*սինքրոն* պահեստի» հայեցակարգին, որտեղ յիշողութիւնը քննարկւում է «անցեալի» հայեցակարգի շրջանակներում եւ ներկայացնում ոչ միայն զուտ վերադարձի գործընթաց, այլեւ առանձին փաստերի վերափոխման, ճշգրտման եւ խմբագրման իւրատեսակ տարածք: Այս տեսանկիւնից, հաւաքական յիշողութիւնները նախագծում են ազգի միքանի երեւակայական հեռանկարներ՝ վերաիմաստաւորելով բազում տեսարաններ[14]:

Մէկ այլ մօտեցմամբ սփիւռքեան յիշողութիւնը դիտարկւում է որպէս աւելի բարդ ընկերային երեւոյթ եւ կրում է անցելապաշտութեան յատկանիշեր: Սփիւռքում սրւում է անցելապաշտութեան բեւեռացուածութիւնը եւ դրսեւորւում երկկողմանի կերպով՝ անցեալի ձգտմամբ եւ ապագայի սպասումով: Որպէս ամերիկահայեր, ուսումնասիրուող խումբը զբաղեցնում է երկու մշակոյթների միջեւ առկայ *լուսանցքային* տարածութիւնը, ինչը հաստատում է այն միտքը, որ նրանց ինքնութիւնը հաստատուն եւ անփո-

---

[11] C. Bell, H. Newby, *Community Studies, An Introduction to the Sociology of Local Community*, Allen and Unwin, London, 1971. նաեւ՝ J. Cater, T. Jones, *Social Geography, An Introduction to Contemporary Issues,* Edward Arnold, London, 1989. նաեւ՝ G. Delanty, *Community*, Routledge, London, 2003:

[12] J. Silk, "Guest Editorial: The Dynamics of Community, Place and Identity," *Environment and Planning*, 31:1999, էջ 6:

[13] S. Rushdie, "Imaginary Homelands", *Imaginary Homelands: Essays and Criticism 1981-91*, Granta and Penguin, London, 1991, էջ 9-21:

[14] P. Shanthini, "Memory and the Diasporic Creative Imagination: Preeta Samarasan's Evening is the Whole Day," *Kritika Kultura*, Feb 18, 2012, էջ 44-56:

փոխ չէ, այլ խաչասերուած (hybrid) է եւ ճկուն: Հոմի Պապհան իր աշխատանքում նշում է, որ «*հաստատուն ինքնութիւնները մշակութային խաչասերման հնարաւորութիւն են ստեղծում, որը թոյլ է տալիս տարբերութիւնների գոյութիւն՝ առանց ենթադրեալ կամ պարտադրուած աստիճանակարգի*»[15]:

Իրենց սովետական մարդ համարողները, կարօտում են հենց սովետը՝ իր միջավայրով, որը բացի կարօտից նաեւ անցելապաշտ զգացումներ է առաջացնում կորսուած հայրենիքի հանդէպ: Այդ անցելապաշտ զգացումները նրանք ակնկալում են Հայաստանից, որպէս Սփիւռքի ընկերամշակութային, ազգային տարրերի բնական արտադրող: Սովետական անցելապաշտ զգացումների նորացումը, թարմացումը անուղղակիօրէն սնում է Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ կապը:

Միւս կողմից, քանի որ յիշողութիւնները հիմնականում ծնւում են մարդկային փոխյարաբերութիւններից, յոյզերն էական դեր ունեն դրանց ձեւաւորման գործընթացում:

Սէրը, հետաքրքրութիւնը, կապուածութեան զգացումը, (որեւէ խմբի) պատկանելութեան զգացողութիւն ունենալու ցանկութիւնը, ինչպէս նաեւ ատելութիւնը, թշնամանքը, վստահութեան պակասը, ցաւը, մեղքի զգացումը օգնում են որոշակիացնել յիշողութիւնները: Առանց այդպիսի բնութագրիչների յիշողութիւնները չեն կարող «արձանագրուել» մտքում եւ ունենալ սահմաններ:

Ի տարբերութիւն բազմաձայն ընկերային յիշողութեան, որը յիշողութիւն է «ներքեւից» եւ որը նորից ու նորից վերանայւում է սերունդների հերթափոխի հետ միասին, ազգային յիշողութիւնը երկարատեւ եւ շատ աւելի միասնական երեւոյթ է, որն ամրապնդւում է տարբեր հաստատութիւնների կողմից՝ ներազդելով հասարակութեան վրայ «վերեւից»:

Երեւակայական հայրենիք

Ընկերային, ազգային յիշողութիւնները, յենուելով հաւաքական ինքնութեան վրայ, ձեւաւորում են երեւակայական միջավայր, որը կառուցակցւում է հայրենիքի վերաբերեալ ընդհանուր յիշողութիւնների անցելապաշտ վերապրուկներով, խորհրդանշական դրսեւորումներով եւ ապագայի լաւագոյն տեսլականով: Դրա արդիւնքում, ըստ Ռուշտիի, երեւակայական հայրենիքը իդէալական է, քանի որ մարդիկ չեն կարող այն շօշափել, փոփոխել: Երեւակայական հայրենիքի բաղադրիչները խմբագրւում են կատարելութեան մակարդակի, եւ դրանց անհասանելութիւնը անձեռնմխելի եւ միաձոյլ է դարձնում երեւոյթը:

Ռուշտին յիշում է, թէ ինչպէս է փոխուել իր անցեալը ժամանակի ընթացքում եւ որքանով է այն տարբերւում իր երեւակայական աշխարհից եւ

[15] H. K. Bhabha, *The Location of Culture*, Routledge, London-New York, 1994, էջ 4:

իրական անցեալից[16]: Գաղթեալները, քանի դեռ չեն կարողանում ազատուել յիշողութիւններից, կառուցում են երրորդ աշխարհը (երեւակայական հայրենիք), որը բաւականաչափ իդէալականացուած է, որպէսզի գոյատեւի անցեալի եւ ներկայի միջեւ: Դա հայրենիքի երեւակայական կառուցումն է, որտեղ անձը դադարեցնում է իր դատողութիւնները ներկայի վերաբերեալ, եւ փախչում է կեանքի առօրէական բնոյթից՝ ժամանակաւոր անցելապաշտ հաճոյք ապրելու համար:

Հայրենիքի ընկերամշակութային դրսեւորումներ

Հայրենիքի ընկալման, վերարտադրման եւ վերստեղծման խորապատկերին վերը քննարկուած բոլոր ցուցիչներն ունեն առանձնայատուկ դրսեւորում: Դրանք ունեն երկակի ազդեցութիւն. անհատական՝ համայնքի ներկայացուցիչների առանձին պատմութիւնների վրայ, եւ ընդհանուր՝ երբ երեւակայական ընկալումները եւ հաւաքական յիշողութիւնները նիւթականացւում են եւ տարածւում պատումների տեսքով: Այս հարցերի պատասխանները խորութեամբ դուրս են բերուել կիրառական հետազօտութեան[17] արդիւնքերից, որն իրականացուել է ներկայացուցիչների հետ համայնքի խորին հարցազրոյցի, համայնքի չներգրաւուած դիտարկումի, երկրորդային վերլուծութեան մեթոդներով:

Ներկայացնենք համայնքի ներկայացուցիչների պատկերացումները հայրենիքի մասին՝ յենուելով քանակական տուեալների վրայ: Բերուած աղիւսակում ներկայացուած է հայրենիքի ընկալումների վերաբերեալ հարցի պատասխանները՝ ըստ յաճախականութեան: [աղ. 1] Հարցին պատասխանել են Լոս Անճելըսի հայ համայնքի ներկայացուցիչները, այնուհետեւ ամբողջից առանձնացուել են խորհրդային շրջանում Լոս Անճելըս տեղափոխուած հայերի պատասխանները: Երկու խմբի համար հարցը ինչեցուել է նոյն կերպ: Այս համեմատութիւնը կ'օգնի հասկանալ թէ ինչպէս է հայրենիքը ձեւակերպւում խորհրդային շրջանի գաղթեալների մօտ, եւ պատկերացումների ինչպիսի առանձնայատկութիւններ են դրսեւորւում:

Աղիւսակ 1.- Պատկերացումները հայրենիքի մասին (համեմատական պատկեր)

---

[16] Rushdie, էջ 195-9:

[17] Հետազօտութիւնը մաս է կազմում մէկ այլ խոշոր հետազօտութեան, որն իրականացուել է «Սեփական եւ այլազգի միջավայրում հայերի համեմատական հետազօտութեան հիմնական ուղղութիւնները. ուսումնասիրութեան խնդիրներն ու հեռանկարները» ծրագրով՝ ՀՀ ԿԳՄՍ Գիտութեան պետական կոմիտէի ֆինանսաւորմամբ: Իրականացուել է 2013ին, ՀՀ ԳԱԱ Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի Սփիւռքի հետազօտութիւնների բաժնի կողմից: Ծրագրի ղեկավարը Սփիւռքի հետազօտութիւնների բաժնի վարիչ, դոկտոր Ռուբէն Կարապետեանն է:

Լոս Անճելըսի հայ համայնքի ներկայացուցիչներ (ընդհանուր)	**Լոս Անճելըսի հայ համայնքի խորհրդային շրջանի ներգաղթեալ հայերի խումբ**
1. Ծննդավայր	1. ԽՍՀՄ
2. Որտեղ ապրում է	2. Խորհրդային Հայաստան
3. Որտեղից եկել է	3. Խորհրդային այլ երկիր
4. Ծնողների/նախնիների ծննդավայր	4. Հայաստան
5. Հայաստան	5. Լոս Անճելըս
6. Հոգեւոր հայրենիք	
7. Նախկին ԽՍՀՄ	
8. Որտեղ անվտանգ ու արժանապատիւ կեանք կայ	
9. Հայրենիքի գաղափար չկայ	

Առանձնացնելով խորհրդային շրջանի գաղթեալների պատասխաններն ընդհանուրից, կարելի է տեսնել, որ առաջին դէպքում դրանք աւելի բազմազան են, ունեն ընկալման աւելի լայն միջակայք, առաւելապէս բնութագրական յատկանիշեր են փոխանցում: Այնինչ երկրորդ խմբի պատասխաններում գերակշռում են տեղայնացուած, բայց եւ ընդհանրացուած պատասխաններ, որոնք հիմնականում կենրոնացած են սովետական թեմաների շուրջ:

Ներկայացուած պատկերը յուշում է ընկալումների խորը բովանդակային բնոյթը, որը հնարաւոր է դուրս բերել համադրելով որակական նիւթի հետ: Այս նպատակով քննարկենք նաեւ հարցազրոյցների եւ երկրորդային վերլուծութեան որոշ տուեալներ, որտեղ քննարկւում են ընկերային յիշողութեան, տարածութիւնների ընկերային երեւոյթների դրսեւորումներ:

> Ժամանակին կար «Սասուն» ակումբը, որտեղ հաւաքւում էին սովետից եկած հայերը: Միասին զրուցում էինք, խաղում էինք: Այդտեղ մենք կարող էին կարդալ Հայաստանից եկած թերթեր, լսել հայկական երաժշտութիւն եւ հայկական խօսք: Հօրս, մօրս, եղբայրներիս ու քոյրերիս թողել էի Վրաստանում: Այնպէս որ դա իմ ընտանիքն էր: Այդպէս էլ յաղթահարում էի կարօտս[18]:

Ահա այստեղ քննարկւում է որոշակիօրէն կազմակերպուած ընկերային տարածքի հարցը, դրա ֆիզիկական առկայութիւնը եւ դրա իրականացրած գործառոյթները, որոնք կատարում են ընկերային միջավայրի վերստեղծման դեր:

Ստորեւ կարող ենք տեսնել հայրենիքի կորստի դրսեւորում՝ հարցուողի ընկալումներում, սակայն դրա գաղափարի արժեւորումը դեռեւս առկայ է:

> Ինձ համար ամենածանրը գիտակցելն է, որ Սովետը չկայ, ոչ թէ նրա համար, որ դա ամենալաւ երկիրն էր, ի սէր Աստծոյ, ինձնից լաւ այդ երկրի թերու-

[18] Հարցուող N1, տղամարդ, 64տ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ Սփիւռքի հետազօտութիւնների արխիւ (ՍՀԱ), ԴԱՆ, Լոս Անճելըս, 2013:

թիւնները ոչ ոք էլ չգիտի, ուղղակի, հասկանում էք, քո հայրենիքը չկայ, դու միշտ հիւր ես, ամէն տեղ: Ես Մոսկուայից եմ, Հայաստան չեմ գնացել, մի անգամ [19]82 թուականին եմ եկել ու վերջ, բայց չեմ էլ ուզում գնալ, որովհետեւ, դա իմ երկիրը չի: Ինչու է հին հայերի (Արեւմտեան Հայաստանից գաղթած հայեր) համար նոյնպէս դժուար լինել Հայաստանում, նոյն պատճառով: Չնայած, իրենք գոնէ ֆիզիկապէս կարող են լինել հայրենի հողի վրայ. մենք դա էլ չենք կարող անել[19]:

Ահա այս զրոյցում հարցուողը նկարագրում է ԱՄՆի մասին վերաբերմունքի ձեւաւորման նախնական փուլը: Այն իրականանում է անձնական կապերի, միջնորդաւորուած գնահատականների միջոցով, ինչը խորհրդային ժամանակաշրջանում տարուող գաղափարախօսութեան եզակի հակակշիռներից կարելի է համարել: Ուստի նման որակումներն առաջացնում են որոշակի դիրքորոշում եւ սպասումներ:

Իմ հայրը միջուկային ֆիզիկոս էր եւ տեղափոխուել է ԱՄՆ դեռեւս 1980 թուականին: Այն ժամանակ Սովետից ԱՄՆ գալը դեռեւս խնդիր էր, բայց նա ունէր տարբեր աշխատանքային պայմանագրեր եւ դրա բերումով յաճախ լինում էր այնտեղ եւ շատ պատմում էր ամերիկեան կեանքից: Ես մանկուց իմեր լսել եմ հօրս պատմութիւնները այն մասին, թէ որքան գեղեցիկ է Ամերիկան եւ այնտեղ շատ աշխատողը մեծ բարձունքների կը հասնի[20]:

Ստորեւ նոյն հարցուողը մանրամասնում է արդէն իր հայրենիքի մասին պատկերացումները, կարօտը, որտեղ որպէս հայրենիք դեռեւս շարունակում է հանդէս գալ ԽՍՀՄը, սակայն հայրենիքի գործառոյթները վերագրուում են արդէն Լոս Անճելըսին:

Ես երկար ժամանակ ապրել եմ Լոս Անճելըսում, երբ ամուսնացայ տեղափոխուեցի Միչիկան: Երբ ես ապրում էի այնտեղ, իմ շրջապատում միայն հայեր էին: Նոյնիսկ խանութներում կարելի էր գտնել սովետական քաղցրաւենիք, պահածոներ, երշիկ, լաւաշ, հայկական ծիրան եւ դեղձ: Եղանակը Լոս Անճելըսում միշտ արեւոտ եւ տաք է: Երբ հնարաւորութիւն կ'ունենամ, ես տուն կը գնեմ եւ ընտանիքիս հետ կը տեղափոխուեմ այնտեղ, կարօտս առնելու[21]:

Յաջորդող զրոյցներում հարցուողի խօսքերում ներկայացւում են ԽՍՀՄ կարօտի նիւթականացման, խորհրդային մթնոլորտի վերստեղծման, հայրենիքի միաւորների վերականգնման շարունակական ջանքերը: Դրանք ունեն նաեւ խորհրդանշային դրսորումներ:

Մինչեւ հիմա պահում եմ սովետական փաստաթղթերս [նկ. 1][22]: Իհարկէ, դրանք այլեւս պէտք չեն, եւ պէտք չեն գալու, բայց պահում եմ նկարների ալ-

[19] Հարցուող N2, կին, 56տ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՍՀԱ, ԴԱՆ, Լոս Անճելըս, 2013:

[20] Հարցուող N3, տղամարդ, 49տ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՍՀԱ, ԴԱՆ, Լոս Անճելըս, 2013:

[21] Նոյն:

[22] Երկրորդ նկարախմբում ներկայացուած են Լոս Անճելըսի խանութներում ռուսական կամ յետխորհրդային երկրներում արտադրուող ապրանքներ, որոնք պահ-

բոմում: Երեւի դրանք էլ արդէն նկարի պէս բան են, յիշողութիւններ են արթնացնում: Երբ ես նայում եմ սրանց՝ ես Հայաստանում եմ, երբ նայում եմ ամերիկեան անձնագրիս՝ ես Ամերիկայում եմ: Ես չեմ ուզում մոռանալ Հայաստանը: Ես չեմ ուզում դադարել կարօտել[23]:



Նկար 1. Խորհրդային փաստաթղթերը՝ որպէս անցեալի վկայ *(Հարցուողի անձնական արխիւից, Լոս Անճելըս, 2013)*



ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Ամփոփելով, կարող ենք ասել թէ խորհրդային շրջանում ԱՄՆ մեկնած գաղթեալների խումբն առանձնանում է Լոս Անճելըսի հայ համայնքում հայրենիքի վերստեղծման իւրայատուկ փորձառութեամբ: Երկիրը, որը նրանք տեւապէս ընկալում էին որպէս հայրենիք, այլեւս գոյութիւն չունի համաշխարհային քարտէզի վրայ: Նրանք կորցրել են իրենց հայրենիքը ֆիզիկապէս, եւ արդիւնքում ունեն հայրենիքի գաղափարական փոխակերպում՝ ընկալման մակարդակում: Այս առանձնայատուկ խումբը կառուցակցում է հայրենիքի ընկերային տարածութիւններ եւ ինքը դառնում դրա սպառողը: Հայրենիքի այսպիսի երեւակայական բնոյթը խարսխւում է խորհրդային մնացորդային մշակոյթի վրայ, որը դեռեւս գոյութիւն ունի յետխորհրդային տարածքում: Խորհրդային շրջանում ԱՄՆ մեկնած հայերը փորձում են վերստեղծել այլեւս գոյութիւն չունեցող խորհրդային միջա-

---

պանել են խորհրդային աւանդոյթները, ինչը ձեւաւորում է խորհրդային կարօտ ունեցող յաճախորդների շրջանակ:

[23] Հարցուող N5, կին, 64տ., ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ՍՀԱ, ԴԱՆ, Լոս Անճելըս, 2013:

վայր՝ հաւաքական յիշողութեան, անցելապաշտ վերապրուկների խորհրդանշային դրսեւորումների միջոցով: Այս կերպ հայրենիքի վերստեղծման կառուցուածքների գործառնութիւնը որոշում է հայրենիքի ընկալման եւ երեւակայական գոյութեան կայունութիւնը: Վերջինս հնարաւորութիւն է ընձեռում այս խմբին ստեղծել իւրայատուկ միջավայր՝ խաչասերուած հայրենիք, որը չունի ֆիզիկական սահմաններ, անձեռնմխելի է, եւ լուծում է խմբի անդամների պատկանելիութեան եւ դիրքաւորման հարցը սփիւռք-եան համայնքում:

RECONSTRUCTING THE FATHERLAND IN THE DIASPORA: THE CASE OF THE LOS ANGELES ARMENIAN COMMUNITY

(Summary)

SONA NERSISYAN (sona.nersisyan2006@gmail.com)

In the panoramic picture of efforts to reconstruct the homeland in the Armenian community of Los Angeles, the Soviet Armenians who left during the Soviet period stand out.

The country which they perceived as homeland does not exist anymore; thus they try to reconstruct their past, rebuild social spaces, recreate their homeland environment in a new socio-cultural setting. In this context, the transformation of both ideas and perceptions of homeland is obvious.

The paper discusses how and why a homeland is recreated/reconstructed in a foreign environment. It argues that the need to create one's own environment in a new socio-cultural setting as well as to look for a source of cultural nourishment led to the activation and materialization of the past. Through a field survey, the paper brings out the most important factors and main actors for the re-creation of the homeland in the Diaspora.

The paper notes that discerning these factors would enable a better understanding of the main features of a homeland environment, which could be used as tools for reconstructing homelands in the Diaspora.

The data used in the survey are the results of ethno-sociological field work conducted among the Los Angeles Armenian community. The survey included observations, questionnaires and in-depth interviews with representatives of the community.

ԳԻՒՄՐԻ. ԴԱՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՐԴԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԻ ՈՒՐՈՒԱԳԻԾ

ԼԵՒՈՆ ԼԱՃԻԿԵԱՆ (levon.lachikyan55@gmail.com)

ՄՈՒՏՔ

Հազարամեակների պատմութիւն ունեցող հայկական այս բնակավայրի նորօրեայ ժամանակագրութիւնն ակամայ բաժանւում է երկու շրջանի. մինչեւ 1988 Դեկտեմբի երկրաշարժը եւ՝ դրանից յետոյ: Նոյնիսկ Հայաստանի անկախացումն ի զօրու չեղաւ փոփոխութիւն մտցնելու նշուած ջրբաժանի մէջ. այնքա՜ն խորն էր ցաւն ու անչափելի՝ պատճառուած վնասը ... Այո՛, 1988ի բնական աղէտը պատուհասեց Հայաստանի հիւսիսային ողջ հատուածը՝ որպէս կիզակէտ ունենալով Գիւմրի քաղաքն իր ենթակառոյցներով ու բնակելիներով: Աւերուեց վերջիններիս 70%ը՝ պատճառ դառնալով տասնեակ հազարաւոր զոհերի ու անհաշուելի ճակատագրերի խեղման:

17 Յուլիս 2022. Գիւմրիում կազմակերպուած փառատօն

Այդուհանդերձ Հայաստանի «մշակութային մայրաքաղաք» համարուող Գիւմրին երկրաշարժին յաջորդած տարիներին ոչ միայն տոկաց ու շտկեց իր մէջքը, այլեւ նոր յաջողութիւններ գրանցեց մարդկային գործունէութեան գեղարուեստական բնագաւառում: Աւելին, ի շարս այլեւայլ հանգամանքների՝ ոգու կորով, կենսասիրութիւն, նպատակասլացութիւն, աշխատասիրութիւն եւն., նաեւ մշակոյթն ու դրա առանցք հանդիսացող նորին մեծութիւն արուեստն օգնեցին գիւմրեցուն դիմագրաւելու անյաղթահարելի թուացող շատ դժուարութիւններ ու մարտահրաւէրներ:

Ականատեսն ու վկան, դոյզն-ինչ նաեւ մասնակիցը լինելով յետերկրաշարժեայ ու անկախութեանը յաջորդած այդ 30ամեայ ընթացքին (1991-2021)[1], ստորեւ կը փորձեմ ներկայացնել Գիւմրիի մշակութային կեանքի այդ ժամանակահատուածի համապատկերը, վերջինիս վայրիվերումներն ու ելեւէջները, կրած փոփոխութիւններն ու զարգացման միտումները:

ՄԻ ՔԻՉ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Գեղեցիկի հանդէպ անբացատրելի ու նախաստեղծ սէր կայ Կումայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական-Գիւմրիում[2]: Ի տարբերութիւն մայրաքաղաք Երեւանի՝ այստեղ պահպանուած են այդ գեղեցիկն իրենց մէջ կրող հնաոճ կառոյցները եւ քաղաքի պատմական միջուկն ընդհանրապէս: Վերջինս դէպի իրեն է ձգում հազարաւոր հայորդիների ու օտարերկրացիների ինչպէս աշխարհի բոլոր ծագերից, այնպէս էլ ՀՀ տարբեր մարզերից:

Արագածից դէպի հիւսիս ընկած Շիրակի սարահարթի այդ տարածքը բնակեցուած է եղել դեռեւս Ք.ա. Գ. հազարամեակում: «Կումայրի» անուանման յիշատակութիւն կայ թէ՛ Մարմաշէնից ոչ-հեռու գտնուած Ք.ա. Ը. դարի ուրարտական մի արձանագրութեան մէջ («Իրդանիունի»)[3], թէ՛ Ղեւոնդ պատմիչի մօտ (774թ.)[4] եւ թէ՛ յետագայ շրջանի բազմաթիւ գրաւոր աղբիւրներում ու տարեգրութիւններում[5]:

Գիւմրին քաղաքի կարգավիճակ ստացել է 1837ին միայն, երբ հաստատուել է նրա առաջին յատակագիծը, համահունչ՝ ժամանակի քաղաքաշինական սկզբունքներին եւ ի մասնաւորի «*ռուսական կայսրութիւնում տարածում ստացած ուղղանկիւն-կանոնաւոր յատակագծման քաղաքաշի-*

---

[1] 30ամեայ վաղեմութեան հայաստանեան մշակութային տարեգրութեան վաւերական շատ դրուագներ մէկտեղուած են մեր հրատարակած *Անլոյս օրերի ոգեղէն ղօղանջներ* գրքում (հրատ. ԳԱԹ, Երեւան, 2004):

[2] Սրանք քաղաքի տարբեր անուանաձեւերն են տարբեր ժամանակներում (հին եւ միջին դարերում՝ Կումայրի, մինչեւ 1837ը ու նաեւ հիմա՝ Գիւմրի, 1837-1924՝ Ալեքսանդրապոլ եւ 1924-90՝ Լենինական), *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 2*, Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութեան հրատ., Երեւան, 1995, էջ 750:

[3] *Գիւմրի. Gyumri. Гюмри* ալբոմը՝ հրատարակուած Գիւմրին ԱՊՀ երկրների 2013ի մշակութային մայրաքաղաք հռչակելու կապակցութեամբ, Գիւմրի, Էլդորադո հրատ., 2013, էջ 3:

[4] Կարինէ Բազէեան, Գրիգոր Աղանեան *Ալեքսանդրապոլ. ազգագրական էսքիզներ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)*, ՇՀՀ կենտրոնի հրատ., Գիւմրի, 2015, էջ 5:

[5] *Կումիրի* անուամբ բնակավայրի մասին տեղեկութիւն կայ, օրինակ, 1209 թուակիր մի ձեռագիր յիշատակարանի մէջ, որը թողել է Յովասափ անունով մի հոգեւորական. «*Ես մեղուցեալ եւ յեփինս ի կրօնաւորս Ովասափս, որ էի ազգաւ եւ տոհմիւ ի մեծ գեաւքաղաքէն Կումիրոյ...*» (Մաշտոցի անուան Մատենադարան, ձեռագիր թիւ 1886):

նական սկզբունքին»[6]: Նոյն տարուայ Հոկտեմբերին քաղաք է ժամանում Ռուսաստանի կայսր Նիկոլայ Ա.ը, որը ոչ միայն մասնակցում է սուրբ նահատակ Ալեքսանդրա թագուհու անունը կրող ռուսական ուղղափառ եկեղեցու հիմնարկէքին, այլեւ քաղաքը վերանուանում Ալեքսանդրապոլ:

Վերջինս նկատելի աշխուժութիւն է ապրում՝ շնորհիւ Ադրիանապոլսի պայմանագրի (1829 Սեպտեմբեր) կնքմանը յաջորդած Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերից՝ Կարինից, Կարսից, Մուշից, Բասէնից ու Բայազէտից գաղթած վերաբնակների[7]: Նրանք էլ, շարունակելով Արեւմտեան Հայաստանի շինարարական հարուստ աւանդոյթները, կազմաւորում են բնակավայրի անշփոթելի ճարտարապետական դիմագիծը[8]: Տարբեր առումներով այն ժառանգորդն է նաեւ քաղաքամայր Անիի[9], ուստի կորուսեալ ***Էրգիր***ի կարօտը մերօրեայ ՀՀում հենց նրանից ենք առնում…

Ընդհանրապէս, գիտական գրականութեան մէջ ընդունուած է Կումայրի-Ալեքսանդրապոլ-Լենինական-Գիւմրին դիտարկել մի կողմից իբրեւ «Արեւմտեան Հայաստանի մանրակերտ» կամ «արեւելահայ ու արեւմտահայ մշակոյթների իւրատեսակ խառնարան»[10], միւս կողմից՝ աւանդական-հայկականի եւ դրսեկ-միջազգայինի (առաւելապէս՝ ռուսական եւ եւրոպական) «արժէքների ու տարրերի յաջող խառնուրդի լաւագոյն օրինակ»[11]:

ԺԹ. դարակէսից Ալեքսանդրապոլ-Գիւմրին արդէն բարեկարգ քաղաք էր՝ իր մէկը միւսից տպաւորիչ կառոյցներով, եկեղեցիներով եւ լայն ու լուսաւորուած փողոցներով: Նոյն դարավերջին *«իր տնտեսական համախառն արդիւնքով ու քաղաքային եկամուտներով այն շրջանցում է նահանգային կենտրոններին (Երեւան, Ելիզաւէտպոլ, Բաքու)՝ ընդհուպ մօտենալով Թիֆլիսին»*[12]*:*

---

[6] Սաշուր Քալաշեան, «Կումայրի. պետական պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարան», *Ճարտարապետութիւն եւ շինարարութիւն*, 7-8:2021, էջ 16:

[7] Բազէեան, Աղանեան, էջ 3-4, 7:

[8] 1830ի գարնանը սկսուած եւ Յունիսին իր բարձրակէտին հասած արեւմտահայերի ներգաղթի ժամանակ Արեւմտեան Հայաստանից ներգաղթած 14,000 ընտանիքներից 3491ը հաստատուել է Շիրակում՝ դառնալով ապագայ Ալեքսանդրապոլի քաղաքային բնակչութեան հիմնական կորիզը (Ա. Հայրապետեան, *Արեւելեան Շիրակը XIX դարի առաջին կէսին*, Գիւմրի, 2005, էջ 80):

[9] Պատահական չէ, որ 2001ին հաստատուած Գիւմրիի նոր զինանշանի վերին հատուածում պատկերուած է Բագրատունիների մայրաքաղաք Անիի գլխաւոր մուտքից, ինչպէս նաեւ այս արքայատոհմի դրօշից յայտնի յովազի խորհրդանիշը՝ մէջքին խաչ ու վարգի պահին:

[10] Բազէեան, Աղանեան, էջ 5:

[11] Նոյն:

[12] Գրիգոր Աղանեան «Ալեքսանդրապոլի քաղաքային տնտեսութեան զարգացման հիմնական միտումները (XIX դարավերջ-XX դարասկիզբ)», *ՇՀՀ կենտրոնի Գիտական աշխատութիւններ,* X:2007, Գիւմրի, էջ 77:

Հարկ է ընդգծել, որ դարերի արձագանգը պահպանուել է այսօրուայ Գիւմրիում: Հին քաղաքն, իսկապէս, թանգարան է բաց երկնքի տակ: Այն եղել ու շարունակում է մնալ հարիւրից աւելի արհեստների եւ արուեստների կամ, ինչպէս ընդունուած է ասել, «Վարպետաց» քաղաք: Բարեբախտութիւն էր քաղաքիս համար ***«Կումայրի» պետական պատմաճարտարապետական արգելոց-թանգարանի*** ստեղծումը 1980ի Օգոստոսի 5ին՝ նպատակ ունենալով ուսումնասիրել ու վերականգնել հնօրեայ բնակավայրի պատմամշակութային հարուստ ժառանգութիւնը, ինչպէս նաեւ գիտականօրէն հետազօտել ու հանրահռչակել այն[13]: Ըստ 2004 Սեպտեմբերի 9ի ՀՀ կառավարութեան թիւ 1270 որոշման, 1170 շէնք ու շինութիւն է ներառուել յիշեալ արգելոցի պահպանման գօտու մէջ:

Այդ հնակառոյցներից մէկում՝ Արեւմտեան Հայաստանի Ձիթող գիւղից գաղթած Պետրոս Ձիթողցեանի կառուցած (1872) երկյարկանի շէնքում (Յաղթանակի պող., 47) 1984ից գործում է ***Գիւմրու ժողովրդական ճարտարապետութեան եւ քաղաքային կենցաղի թանգարան***ը, որի ցուցասրահներում ներկայացուած են 1860-1920ականներն ընկած ժամանակահատուածի Ալեքսանդրապոլի առաւել տարածում գտած արհեստները, հասարակական կենցաղն ու հոգեւոր մշակոյթը: Այդտեղ վերականգնուած են նաեւ գիւմրեցի արհեստաւորի եւ ունեւոր խաւի բնակարանների ներքնատեսքը: Իսկ ցուցասրահներից մէկում ցուցադրւում է ԺԹ. դարի Գիւմրիի հիմնական փոխադրամիջոցը՝ ֆայտոնը:

Վերոյիշեալ արգելոց-թանգարանի հիմքի վրայ ստեղծուած ***Գիւմրու պատմութեան թանգարան***ը[14] 2019ից սկսեց գործել համայնքապետարանի շէնքում՝ իր պահոցներում ներառելով 12,000 թանգարանային ցուցանմուշ: Ինքնատիպ ցուցադրութիւնը, ինչպէս թանգարանի տնօրէն Ինգա Աւագեանն է նշում[15], ընդգրկում է «*Քաղաքի պատմութիւնը՝ սկսած Ք.ա. Դ. հազարամեակից մինչեւ Ալեքսանդրապոլեան շրջանը*»: Այն ներառում է նմուշներ քաղաքի տարածքում պեղուած յուշարձանների պատմական նիւթերից, զանազան քարտէզների, հնատիպ գրքերի, ասեղնագործ, ոսկէ ու արծաթէ իրերի, գորգերի ու կարպետների հաւաքածուներից:

Հարկ է նշել, որ ՀՀ ԳԱԱ Շիրակի Հայագիտական Հետազօտութիւնների Կենտրոնի (ՇՀՀԿ) կողմից արդէն 10ից աւելի միջազգային գիտաժո-

---

[13] Աւելի մանրամասն՝ *Ճարտարապետութիւն եւ շինարարութիւն*, 7-8:2021, էջ 16-27:

[14] Թանգարանի մասին պատմող տեսանիւթը տե՛ս՝ https://www.facebook.com/206937043356877/videos/797744534362412 :

[15] http://ardi.am/%d5%bf%d5%a5%d5%bd%d5%a1%d5%a4%d5%a1%d5%b7%d5%bf%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a3%d5%b5%d5%b8%d6%82%d5%b4%d6%80%d5%b8%d6%82-%d5%af%d5%b8%d6%82%d5%b4%d5%a1%d5%b5%d6%80%d5%ab-%d5%b6-%d5%a7/?fbclid=IwAR2t7yWP465g0tN--buelxynXJg83BVC4F7CXGy_pTkonG9E6Sg8CK836VQ :

ղովներ են կազմակերպուել՝ նուիրուած Շիրակի երկրագիտութեանն ու հայագիտութեան արդի խնդիրներին[16]:

Ամէնեւին էլ պատահական չէ, որ հայկական կինօնկարների կարեւոր մէկ մասը՝ *Հեղնար աղբիւր*, *Եռանկիւնի*, *Կտոր մը երկինք*, *Մեր մանկութեան տանգօն*, *Հին օրերի երգը*, *Ուրախ աւտօբուս* եւն., նկարահանուել են հենց Գիւմրիում, նրա ինքնատիպ ու գունագեղ անկիւններում: Յատկանշական է նաեւ, որ այսօր կառուցուող նոր շինութիւնները եւս շարունակում են հին Գիւմրուայ ոճը, որում գիրկընդխառն են եւրոպական դասականութիւնն ու ռուսական նորդասականութիւնը, Ի. դարասկզբի արդիականութիւնն ու խորհրդային ճեւապաշտութիւնը: Եւ այդ բոլորը՝ գիւմրեցի հմուտ վարպետների ձեռամբ ու անուրանալի ճաշակով: Նրանք այնպիսի վարպետութեամբ են համադրել այդ ամէնը, որ ստեղծել են նոր ու անկրկնելի ազգային բնիկ միջավայր:

ԿԵՐՊԱՐՈՒԵՍՏ

Գեղարուեստական այդ միջավայրն է, որ ծնունդ է տուել բազում արուեստագէտների՝ բանաստեղծներ Աւետիք Իսահակեան եւ Յովհաննէս Շիրազ, աշուղներ Շերամ ու Ջիւանի, երաժիշտներ Նիկողայոս ու Արմէն Տիգրանեաններ, Գէորգի Գիւրջիեւ, բեմի նշանաւոր վարպետներ Վարդան Աճէմեան ու Մհեր Մկրտչեան եւ անթիւ նկարիչ-քանդակագործներ[17]:

Լինելով Հայաստանի ամենաբազմազգ բնակավայրը (գերակշռող հայերի հետ այս քաղաքում կողք-կողքի ապրել են թուրքեր, յոյներ, ռուսներ եւ հայ գնչուներ)՝ նոյն միջավայրն իր մէջ է առել նաեւ քաղաքի տարբեր ազգերի ներկայացուցիչներին՝ ճեւաւորելով «գիւմրեցի» կոչուող հաւաքական հանրոյթը: Լաւագոյն օրինակներից է Գիւմրիում ծնուած մեծ քանդակագործ, Երեւանում, Մոսկուայում եւ այլուր տեղադրուած բազմաթիւ յուշարձանների հեղինակ, ազգութեամբ յոյն Սերգէյ Մերկուրովի[18] կեանքն ու գործունէութիւնը: Նա իր կեանքի վերջում հետեւեալն է խոստովանել. «*Ես օխտը (եօթ - Լ.Լ.) պորտով գիւմրեցի եմ, ու մէջս ինչ հունար կայ, Գիւմրուայ հող ու ջրէն է: Ախր մեր էդ օրհնուած քաղաքը խուդոժնիկ (նկարիչ - Լ.Լ.) քաղաք է. ինտեղ առանց հունարի մարդ չես գտնի*»[19]:

---

[16] Իւրաքանչիւր գիտաժողովում ընթերցուած գիտական զեկուցումներն այնուհետեւ հրատարակուել են Կենտրոնի *Գիտական աշխատութիւններ*ում՝ խմբագրութեամբ Սերգօ Հայրապետեանի:

[17] Այդ միջավայրն էր նաեւ, որ ինձ մղեց ստեղծելու գծանկարչական թերթերի «Գիւմրի, իմ սէր» նկարաշարը, որտեղ փորձել եմ նոր հայեացք ապահովել հին քաղաքին (*Գիւմրի, իմ սէր*, «Էդիթ Պրինտ» հրատ., Երեւան, 2018. նաեւ՝ Մ. Բադալեան *«Հին քաղաքի նոր սէրը»*, *Զարթօնք բացառիկ*, 2009, էջ 34-36):

[18] Մանրամասն տե՛ս՝ *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 3*, Հայկական հանրագիտարանի գլխաւոր խմբագրութեան հրատ., Երեւան, 1999, էջ 691:

[19] Աղաւնի, *Միշտ կանչող ձայներ*, Սովետական գրող, Երեւան, 1983, էջ 183:

Գիւմրու նշանաւոր Եօթ վէրք եկեղեցին

Հենց Մերկուրովի անունն է կրում ***Գիւմրու նկարչական դպրոց***ը, որը հիմնադրուել է 1921ին եւ եղել Անդրկովկասի առաջին գեղարուեստական ուսումնական հաստատութիւնը[20]: Մինչ օրս տուած շուրջ 3000 շրջանաւարտներից թուարկենք միքանի անուն՝ Ռաֆայէլ Աթոյեան, Յակոբ Անանիկեան, Մարիամ ու Երանուհի Ասլամազեաններ, Էդուարդ Արծրունեան, Խաչատուր Եսայեան, Արտաշէս Հունանեան, Հրաչեայ Ռուխկեան, Կարապետ Տիրատուրեան եւն.: Նրանք եւ նրանց տաղանդաւոր աշակերտ-յետնորդները վրձնել եւ այսօր եւս վրձնում են այս անզուգական քաղաքի զգլխիչ պատկերները՝ անխառն սէր փոխանցելով դէպի այն:

Դպրոցի 100ամեայ յոբելեանին ընդառաջ քաղաքի համայնքային միջոցներով դպրոցական շէնքի նկուղային հատուածում ամիսներ տեւած շինարարական աշխատանքներից յետոյ բացուեց քանդակի դասարան, որը մերթընդմերթ կը ծառայի նաեւ որպէս ուսանողական ցուցասրահ: Վերջինիս մէջ 2021ի Դեկտեմբերին հանդիսաւորապէս նշուեց գեղարուեստական այդ դարբնոցի մէկդարեայ յոբելեանը:

1988ի երկրաշարժի օրերին նշեալ կրթական հաստատութեան տնօրէնն էր ՀՀ վաստակաւոր նկարիչ Սամուէլ Լաճիկեանը, որն ԱՄՆ տեղափոխուելուց 20 տարի անց վերադարձաւ հայրենի քաղաք՝ լծուելով նորահաս սերնդի գեղագիտական դաստիարակութեան գործին: Մեր զրոյցում[21], յիշելով 1988ի չարաբաստիկ Դեկտեմբերի 7ի օրը, նա նկատեց. «*Հիմնանորոգումից յետոյ նոր էինք մուտք գործել ընդարձակ ու լուսաւոր շէնք, երբ վրայ հասած սփորգետնեայ ցնցումները աւերեցին այն: Մինչ այդ մտածում էինք 10ամեայ գեղարուեստական ուսուցման անցնելու ուղղութեամբ եւ շէնքի բակում ազատել էինք լրացուցիչ տարածքներ խեցե-*

[20] *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 2*, էջ 758:

[21] Մէջբերում 2021 Օգոստոսի 10ին կայացած զրոյցից:

ղէնի ու քանդակի դասարանների համար»: Ուշագրաւն այն է եղել, որ ընդամէնը միքանի ամիս անց մերձակայքում գտնուող քաղաքային զբօսայգում՝ փայտեայ տնակների մէջ, վերսկսուել են նկարչութեան դասերը: Ընդ որում՝ աւելի շատ աշակերտներով…

Հետաքրքիր էր լսել գիւմրեցի գեղանկարիչ Սամուէլ Գալստեանին, ով միքանի տարի ղեկավարել է ուսումնական այդ կառոյցը եւ պաշտօնավարութեան աւարտից յետոյ եւս չի կարողացել կտրուել աշակերտներից: Քաղաքի ծայրամասի իր ժամանակաւոր տնակում, իր շուրջն է խմբել տասնեակ պարման-պարմանուհիների՝ անցկացնելով նկարչական պարապմունքներ: «*Դասերի ժամանակ յաճախ եմ դաշնամուր նուագում*,- պատմում է զրուցակիցս[22],- *թէ՛ երաժշտութիւնը, թէ՛ ընթերցանութիւնը փոխում են երեխաների կեանքը*»: Սամուէլի սաները 2018ին գեղարուեստական ցուցահանդէս են կազմակերպել՝ վաճառելով բոլոր նկարները: Թերեւս պատահական չէ, որ նրա կացարանը տեղացիները կատակով համարում են Հայաստանի «ամենամշակութային *դոմիկը* (տնակը - Լ.Լ.)»:

…Երկրաշարժից յետոյ քաղաքային պատկերասրահը դադարել էր գործելուց՝ վթարային լինելու պատճառով: Ու թէեւ շատ նկարիչներ էին անտուն մնացել՝ յարատեւել է գեղարուեստական կեանքը: Նրանք ոչ միայն շարունակել են ապրել կիսաւեր քաղաքում, այլ նաեւ արարել են: Այդ անկասելի մղումն էր, որ նրանցից շատերին բերեց-յանգեցրեց քաղաքի պատկերասրահի հին շէնքը վերականգնելու գաղափարին. «*Էլ չսպասեցին վերեւից ինչ-որ օգնութեան. իրենց սեփական ուժերով վերակառուցեցին եւ ճաշակով ձեւաւորեցին վթարուած շէնքի մի հատուածը՝ այն վերածելով գործող ցուցասրահի*»[23]:

Ուրախալի է, որ 2020 Սեպտեմբերի 5ի Գիւմրու օրը համայնքապետարանի առաջին յարկի ընդարձակ սրահը տրամադրուեց քաղաքի ստեղծագործողներին՝ որպէս համայնքային նոր ***Պատկերասրահ***[24]: Այդ աշխատանքները համակարգում է հաւաքորդ Արտուշ Մկրտչեանը, ով ցուցահանդէսների կազմակերպման եւ արուեստագէտների հետ աշխատանքի երկարամեայ փորձ ունի: Դեռ 1991ին նա հիմնեց նորանկախ ՀՀի առաջին մասնաւոր թանգարանը՝ «Սթիլ», փաստօրէն վերջ դնելով պետական մենաշնորհին նաեւ կերպարուեստի ոլորտում[25]: 2019ից այն վերածուեց ***գծանկարչութեան թանգարան***ի, որի մշտական ցուցադրութիւնը ներառում է 19 երկրների հայ նկարիչների 5-600 ստեղծագործութիւններ:

---

[22] Մէջբերում 2021 Յուլիսի 4ին կայացած զրոյցից:

[23] Լեւոն Լաճիկեան «Նոր ցուցասրահ Գիւմրիում», *Ազգ*, 10 Սեպտեմբերի 1992:

[24] Յղումը՝ https://www.facebook.com/206937043356877/videos/392008005117907 :

[25] Լեւոն Լաճիկեան «'Սթիլ'ը մայրաքաղաքում», *Ազգ*, 12 Յունիսի 1993:

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Գիւմրին իրապէս թանգարանային քաղաք է, որի միայն մէկ՝ Վարպետաց փողոցի վրայ ու դրա մերձակայքում գտնւում են գրչի ու խօսքի երեք վարպետների՝ Իսահակեանի, Շիրազի եւ Մկրտչեանի թանգարանները:

Մեծ վարպետի՝ ***Աւետիք Իսահակեանի տուն-թանգարան***ը (Վարպետաց փող., 91) հնագոյնն է: Այն գործում է 1975ից, մեծ քնարերգուի հայրական տանը, որտեղ վերականգնուած են բանաստեղծի աշխատասենեակը, Իսահակեանների հիւրասենեակը, ննջասենեակը, խոհանոցը, մառանը եւ թոնրատունը: Թանգարանում կարելի է ծանօթանալ ոչ միայն բանաստեղծին առնչուող մասունքներին, այլեւ ԺԹ. դարի վերջին քառորդի ունեւոր գիւմրեցու կենցաղին եւ նիստուկացին:

Յովհաննէս Շիրազի յուշատուն-թանգարանը հիմնադրուել է 1983ին՝ ԺԹ. դարում կառուցուած իւրատիպ միայարկ շէնքում: Այստեղ պահպանւում եւ ցուցադրւում են Գիւմրիում ծնուած մեծանուն բանաստեղծի անձնական իրերը, ձեռագրերը եւ տպագիր գործերը:

Իսկ ***Մեր Մկրտչեանի թանգարան***ը համեմատաբար նոր է եւ սկսել է գործել, 2006ից դարձեալ ԺԹ. դարավերջին կառուցուած պատմաճարտարապետական արժէք ներկայացնող շէնքում (Ռուսթաւելու փող., 30): Այստեղ ցուցադրւում են մեծ դերասանի բեմական հագուստներն ու տարբեր ֆիլմերում օգտագործած իրերը:

Այցելուների քանակով նրանց ամէնեւին չի զիջում ***«Մարիամ եւ Երանուհի Ասլամազեան քոյրեր» պատկերասրահ***ը՝ հիմնադրուած 1987ին: Այստեղ ցուցադրւում են երկու քոյր արուեստագէտների շուրջ 600 ստեղծագործութիւն՝ գեղանկար, խեցեղէն եւն.: Թանգարանի երկյարկանի շէնքը 1880ի կառոյց է, որտեղ մշտական ցուցադրութեանը զուգահեռ պարբերաբար կազմակերպւում են թեմատիկ ժամանակաւոր ցուցահանդէսներ: Այստեղ միաժամանակ անցկացւում են «Ասլամազեանական մոտիւներով» դասընթացներ՝ առանցքում ունենալով տաղանդաւոր քոյրերի խեցեգործական առարկաների պատրաստման հմտութիւնների ուսուցումը:

Իդէպ, վերջին շրջանում քաղաքում առանձնակի զարկ է տրւում խեցեգործութեանը, որի վկայութիւնը **Հայկական աւանդական խեցեգործութիւն** հետազօտական կենտրոնն է եւ նորաստեղծ ***խեցեգործութեան թանգարան***ը[26]:

Մշակութային այս քաղաքում գեղարուեստական աւանդոյթների պահպանման ու զարգացման առումով նշանակալի էր յատկապէս 1997 թուա-

[26] Այն ստեղծուել է՝ նախաձեռնութեամբ ու ջանքերով Գիւմրիում Իտալիայի Հանրապետութեան պատուոյ հիւպատոս Անտոնիօ Մոնտալդոյի: Նա անուրանալի վաստակ ունի Գիւմրու գեղեցկութիւնների յայտնաբերման ու արժեւորման գործում: Նա միաժամանակ հիմնադիրն ու սեփականատէրն է «Villa Kars» հիւրանոցի, որը սպասարկման նոր մշակոյթ հաստատեց Գիւմրիում:

կանը, երբ բացուեց տեղի ***Արուեստների ակադեմիան***: Այն արդիւնք էր նշանաւոր խմբավար, Գիւմրու պատուաւոր քաղաքացի Լորիս Ճգնաւորեանի՝ 1991ին կատարած աննախադէպ ուխտագնացութեան[27]: Այդպէս հնարաւոր եղաւ ժողովրդից հանգանակուած, ինչպէս եւ Հայաստան համահայկական հիմնադրամի ու ՀԲԸՄ տրամադրած գումարներով 1997ին հիմնել Երեւանի գեղարուեստի պետական ակադեմիայի, Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայի (ԿՊԿ) եւ Երեւանի կինոյի ու թատրոնի պետական ինստիտուտի (ԵԿԹՊԻ) Գիւմրու մասնաճիւղերը[28]:

Վերջինս, օրինակ, սկզբնապէս ունէր ընդամէնը մէկ՝ դերասանական բաժին, 11 սաներով: 2002ից սկսեալ այդտեղ բացուեցին բեմադրական, նկարչական ձեւաւորման, հեռուստատեսութեան եւ կինօնկարահանման արուեստ բաժինները, 2004ից՝ պարի բաժինը: Մեր զրուցակից, յիշեալ մասնաճիւղի դոցենտ, ՀՀ մշակոյթի վաստակաւոր գործիչ Սիրանուշ Ղուկասեանը բացատրեց. «*Մինչեւ 2020թ. Կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտի Գիւմրու մասնաճիւղն աւարտել է 450 ուսանող, որոնք աշխատում են ինչպէս Գիւմրիում ու յարակից բնակավայրերում, այնպէս էլ Երեւանում*»[29]: Իսկ ըստ ԿՊԿի Գիւմրու մասնաճիւղի տնօրէն Յասմիկ Յարութիւնեանի, իրենց «*ԲՈՒՀը պատրաստում է պրոֆեսիոնալ երաժիշտ կատարողներ, ինչպէս նաեւ մանկավարժներ՝ երաժշտական դպրոցների ու այդօրինակ տարբեր հաստատութիւնների համար: Շրջանաւարտները հիմնականում աշխատում են Շիրակի մարզի տարբեր կրթօջախներում եւ մշակութային կենտրոններում*»[30]:

2022ին լրանում է յիշեալ 3 մասնաճիւղերի հիմնադրութեան 25ամեակը, որի կապակցութեամբ ողջ տարուայ ընթացքում կազմակերպւում են յոբելենական տարաբնոյթ միջոցառումներ, համերգներ ու գիտաժողովներ:

ԹԱՏԵՐԱՐՈՒԵՍՏ

Գիւմրեցիների՝ թէ՛ հին եւ թէ՛ նոր, բնորոշ յատկանիշերից է թատերասիրութիւնը, անթաքոյց սէրն առ բեմարուեստը: Թատերական առաջին ներկայացումները Ալեքսանդրապոլում զուգադիպել են հայ նոր թատրոնի սկզբնաւորմանը: Ի հակառակ տարածուած այն տեսակէտի, թէ «*Մինչեւ խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում չի եղել ոչ մի մշտական թատերախումբ, էլ չենք խօսում թատրոնի՝ բառիս լայն իմաստով*

---

[27] Լաճիկեան, *Անլոյս օրերի* էջ 176:

[28] Յիշենք, որ այս քաղաքում է տեղի ունեցել հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի նորագոյն պատմութեան կարեւորագոյն իրադարձութիւններից մէկը. 1919ի Մայիսի 16ին հիմնադրուել է Հայաստանի համալսարանը (*ԵՊՀ կենսագրական հանրագիտարան*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2019, էջ 5):

[29] Մէջբերում 2021 Մայիսի 20ին կայացած զրոյցից:

[30] Մէջբերում 2021 Յունիսի 18ին կայացած զրոյցից:

գործունէութեան մասին»[31]՝ յայտնի թատերագէտ Ռազմիկ Մադոյեանը, յենուելով ժամանակի թերթերի ու այլ վկայութիւնների վրայ, ապացուցեց, որ նոր շրջանի հայ թատրոնի ծնունդը տեղի է ունեցել հենց Ալեքսանդրապոլում 1865 Մայիսի 23ին, երբ տեղի նորաստեղծ թատերախումբը հանդիսատեսին է ներկայացրել *Շուշանիկ* պատմական ողբերգութիւնը[32]:

Ուշագրաւն այն է, որ նախաձեռնողը եղել է ռուսական բանակի հրետանու սպայ Ալեքսանդր Մելիքհայկազեանցը, իսկ բեմադրիչը՝ քաղաքագլխի պաշտօնատար Վաղարշակ Շահխաթունեանը: Թատրոն ստեղծելու համար անհրաժեշտութիւն է զգացուել հանգանակութիւն կատարել. «*Այստեղ է, որ ակնյայտ դարձաւ փոքրիկ քաղաքի բնակչութեան սէրը դէպի բեմը: Եւ աշխատաւորութիւնը իր սուղ միջոցներից թատրոնական գործին տրամադրում է 117 ռուբլի: Մելիք-Հայկազեանցն էլ իր գրպանից դնում է մի պատկառելի գումար*»[33]: Աւելացնենք, որ 1873ին Ալեքսանդրապոլում ստեղծւում է ռուսական թատերախումբ, որի անդրանիկ ներկայացումը լինում է Նիկոլայ Գոգոլի *Ռեւիզոր* (քննիչը) յայտնի կատակերգութիւնը[34]:

Հետաքրքիր եւս մի փաստ. սկզբնաւորուող նոր հայ թատրոնում սիրուած են եղել յատկապէս պատմահայրենասիրական թատերախաղերը: Այդ մասին տեղեկանում ենք Քաջբերունու (Գաբրիէլ Տէրյովհաննիսեան) հետեւեալ վկայութիւնից. «*Մեր ժողովուրդը, այնուամէնայնիւ, առանձին եռանդով սիրում է տեսնել բեմի վրայ մեր անցեալի պատմութեան պատկերները, մեր նախահայրերի կեանքը: Այդ երեւոյթը ապացուցուած է խորապէս շատ անգամ՝ գոնէ Աղեքսանդրապոլի վերաբերութեամբ*»[35]:

Նշուած ժամանակներից սկսած թատերասէր այս քաղաքում ձեւաւորուել է ոչ միայն ազգային թատերական մշակոյթ, այլեւ թատրոն յաճախելու մշակոյթը: Այսօր, հայ նոր թատրոնի ստեղծումից դարուկէս անց էլ, Գիւմրիում շարունակւում է մեծով ու փոքրով, ողջ ընտանիքով թատրոն գնալու սովորոյթը: Թերեւս սա՛ է գլխաւոր պատճառը տեղի թատրոնի տեւական յաջողութիւնների, որոնք հիմք են տուել հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմի առաջնորդ Միքայէլ եպս. Աջապահեանին հետեւեալ կերպ արտայայտուելու. «*Վաղուց արդէն թատրոնը քաղաքի այցեքարտն է, ազատութեան ոգու կրողն ու արտայայտիչը, գիւմրեցու զգացմունքայնութեան եւ աննկուն հումորի ժառանգորդը*»[36]:

---

[31] *Թատրոնը ժողովրդին,* ՀԹԸ հրատ., Երեւան, 1960, էջ 5:

[32] Ռազմիկ Մադոյեան *Գիւմրու թատրոնը (1865-1965թթ.)*, «Դպիր» հրատ., Գիւմրի, 2017, էջ 10:

[33] Նոյն:

[34] Նոյն, էջ 11:

[35] Քաջբերունի, «Աղեքսանդրապօլ», *Մեղու Հայաստանի*, 19 Մարտի 1880:

[36] *Թատրոնը ժամանակի ափի մէջ*, կազմ.՝ Լիլիթ Թովմասեան, Տիգրան Գաբոյեան, Գիւմրի, 2015, էջ 5:

Տեղի թատերական կեանքի յիշատակելի դրուագներից առանձնացնենք նաեւ Արմէն Տիգրանեանի *Անուշ* օպերայի առաջնախաղը Ալեքսանդրապոլում 1912ի Օգոստոսի 4ին[37]: Դրան յաջորդել են անուանի դերասաններ Պետրոս Ադամեանի, Սիրանուշի, Յովհաննէս Աբէլեանի, Յովհաննէս Զարիֆեանի, Վահրամ Փափազեանի եւ շատ այլոց հիւրախաղերը: Ինչպէս կարդում ենք ***Գիւմրու պետական դրամատիկական թատրոն***ի 150ամեայ յոբելեանի առիթով հրատարակուած *Թատրոնը ժամանակի ափի մէջ* գրքոյկում՝ «*1930ականներին Լենինականի թատրոնն արդէն ձեւաւորուել էր որպէս սփեղծագործական առողջ օրգանիզմ, որը միաւորում էր փաղանդաւոր դերասան-դերասանուհիների՝ Արմէն Արմէնեան, Յոլակ Ամերիկեան, Լեւոն Զոհրաբեան, Գուրգէն Յակոբեան, Արուս Ասրեան, Արտաւազդ Փաշայեան եւ ուրիշներ*»[38]:

Անցած տարիներին թատերական այս օջախում իրար են յաջորդել նշանաւոր բեմադրիչներ Խորէն Աբրահամեանը, Վարդան Աճէմեանը, Նիկոլայ Ծատուրեանը, Երուանդ Ղազանչեանը, Ալբերտ Մկրտչեանը, Գրիգոր Մկրտչեանը, Յակոբ Ղազանչեանը, հրաւիրեալ այլ թատերական գործիչներ, որոնք նոր ձեռագրով ու հետաքրքիր թատերախաղերով լրացրել են թատրոնի խաղացանկը: Տարիներ շարունակ այն եղել եւ մնում է Երեւանի Գաբրիէլ Սունդուկեանի անուան ազգային ակադեմիական թատրոնի սնուցող երակը:

Այսօր թատրոնի գեղարուեստական ղեկավարն է Լիւդուիգ Յարութիւնեանը: Ըստ նրա, իրենց մօտ տարեկան 4-6 առաջնախաղ է տեղի ունենում, ամսական՝ 18 ներկայացում: Հետաքրքիր էր լսել, որ վերջին տասնամեակներին «*Թատրոնը մի՛շտ է աշխատել՝ թէկուզ նուազ հանդիսատեսով եւ ի հեճուկս մութ ու ցուրտ պայմանների*»[39]: Նոյնիսկ երկրաշարժից յետոյ այն չի դադարեցրել իր գործունէութիւնը՝ բեմ հանելով Սոփոկլէսի *Անտիգոնէ*, Շեքսպիրի *Սիրոյ ապարդիւն ճիգեր*, Դերենիկ Դեմիրճեանի *Քաջ Նազար*, Եուջին Օ՛Նիլի *Սէրը ծփիների տակ*, Լեւոն Շանթի *Շղթայուածը* եւ հայ ու արտասահմանեան այլ թատերագիրների թատերախաղերը: Յարութիւնեանն ուրախ էր, որ շնորհիւ նորեկ դերասանների ու բեմադրիչների եւ յատկապէս ԵԿԹՊԻի Գիւմրու մասնաճիւղի շրջանաւարտների՝ նոր շունչ է մտել թատրոն, ապահովելով սահուն սերնդափոխութիւն: Աւելին՝ այսօր իրենք չունեն հանդիսատեսի խնդիր, եւ գրեթէ բոլոր ներկայացումները տեղի են ունենում լեփ-լեցուն դահլիճում:

---

[37] Թատրոնի պատմական հին շէնքի հիմքի վրայ 2020ին վեր խոյացաւ Գիւմրու «Թումո» կրթական-արհեստագիտական կենտրոնի նոր կառոյցը:

[38] Թովմասեան, Գաբոյեան, էջ 15:

[39] Մէջբերում 2021 Փետրուար 28ին կայացած զրոյցից:



Ձիթողցեանների բնակարանը եւ Villa Kars պանդոկը

Վերջին շրջանում յաջողուել է նաեւ հիւրախաղերի մեկնել Լիբանան, Ռուսաստան ու ԱՄՆ՝ ներկայացնելով իրենց լաւագոյն բեմադրութիւնները: Covid-19 համավարակն ու Արցախեան 44-օրեայ պատերազմն, անշուշտ, իրենց կնիքը դրեցին թատրոնի գործունէութեան վրայ, բայց նոյնիսկ մարտական թէժ գործողութիւնների ընթացքում բեմ հանուեց տաղանդաւոր դերասան Վարդան Պետրոսեանի *Վերելք* ներկայացումը: Չմոռանանք նաեւ Լիւդուիգ Յարութիւնեանի բեմադրած *Հարսանիք թիկունքում* թատերախաղը: Այն այնքան սիրուեց հանդիսատեսի կողմից, որ ֆիլմի վերածուեց՝ ցուցադրուելով երկրի բոլոր կինօթատրոններում: Գեղարուեստական ղեկավարի համոզմամբ՝ «*Արուսրագէտն իրաւունք չունի յուսահատելու: Շարունակելու՛ ենք խաղալ…*», հաստատական այս նախադասութեամբ աւարտուեց մեր զրոյցը:

Իդէպ, 2021ի Դեկտեմբերին բեմադրուած *Մաուգլի* ներկայացումը - ըստ Ռադիըրդ Քիփլինգի *Ջունգլիների գիրքը* ստեղծագործութեան – հանդիսացաւ վերջին տարիներին արուած աշխատանքի փառապսակը եւ առանձնացաւ մասնակիցների աննախադէպ քանակով՝ 60 դերասան: Այն գրաւեց հանդիսատեսին նաեւ արդիական շեշտադրումներով՝ պատմելով մարդու ու բնութեան ներդաշնակութեան կորստի, մարդկային արատների՝ դաւաճանութեան ու անհանդուրժողութեան մասին եւ կոչ անելով միասնականութեան ու համախմբուածութեան: Պատահական չէր ուստի, որ սոյն բեմադրութիւնը 2022ին «Արտաւազդ» թատերական ԻԱ. մրցանակաբաշխութիւնում արժանացաւ յատուկ մրցանակի:

Աւելացնենք, որ 2022ին եւս նախատեսուած է 5 նոր բեմադրութիւն, ի շարս որոնց Շիրվանզադէի *Արտիստը* եւ Շիլլէրի *Սէր ու խարդաւանքը*:

Յիշատակելի մէկ այլ մշակութային իրադարձութիւն էր 2021 Նոյեմբերին Ֆրանսայում բնակութիւն հաստատած գիւմրեցի Նարինէ Սիմոնեանի նախաձեռնութեամբ ու երաժշտական ղեկավարութեամբ Գիւմրու մարզամշակութային կենտրոնի բեմ բարձրացուցած օպերային ներկայացումը՝ Անրի Պիւրսէլի *Էնէաս եւ Դիդօ*: Շատերն այդ առիթով յիշեցին, որ առաջին օպերային ներկայացման՝ *Անուշի* բեմադրութիւնից 109 տարի անց

երաժշտական այդ սեռը կրկին վերադարձաւ Գիւմրի՝ թատերասէրին ներկայացնելով բարոկկո ոճի երաժշտութեան այդ գլուխգործոցը:

Քաղաքի նորօրեայ թատերական համապատկերի կարեւոր դրուագներից յիշատակենք 2019ին Դրամատիկական թատրոնի **Միեր Մկրտչեան** փոքր դահլիճի բացումը եւ ՀՀ վաստակաւոր արտիստ Յովհաննէս Յովհաննիսեանի՝ 2020ին հիմնած ***Մտորումների թատրոն***ը:

Գիւմրեցի փոքրիկներին այսօր շարունակում է հեքիաթներ պարգեւել Հայաստանի մանկական հնագոյն՝ 1935ից գործող ***Տիկնիկային թատրոն***ը, որը Արցախեան վերջին պատերազմից յետոյ իր տանիքի տակ հիւրընկալեց Շուշիի թատրոնի դերասան-դերասանուհիներին:

ԵՐԱԺՇՏԱՐՈՒԵՍՏ

Շիրակը պատմական Հայաստանի նաեւ երաժշտական մշակոյթի շտեմարաններից մէկն է եղել, որտեղ հնուց անտի զարգացած են եղել ինչպէս ժողովրդական, այնպէս էլ գուսանական երգատեսակները:

Եթէ հին ժամանակներում եւ միջնադարում Անին է եղել հայ երաժշտութեան զարգացման բարձրակէտը, ապա դրա անկումից յետոյ դարեր անց արուեստի այդ տեսակը զարթօնք ապրեց Անիին մերձակայ Կումայրի-Ալեքսանդրապոլում: Այստեղ գոյութիւն են ունեցել *«շուրջ 200 տարուայ անընդմէջ երաժշտական հարուստ աւանդոյթներ»*[40]: Ինչպէս իր մի անտիպ յօդուածում գրում է երաժշտագէտ Յասմիկ Յարութիւնեանը՝ «*Աստիճանաբար քաղաքային կենցաղում կայունացաւ երգ-երաժշտութեան բազմաժանր համակարգ՝ 20րդ դարասկզբին ձեռք բերելով երաժշտաոճական տեղային յատկանիշեր: Կայունացաւ նաեւ Կարնոյ բարբառի Գիւմրու խօսուածքը, որը եղանակաւորուեց քնարական, հայրենասիրական, պատմական, օրօրոցային, կատակային, ինչպէս նաեւ ծիսական երգերում*»[41]:

Ալեքսանդրապոլն ապրում էր յագեցած երաժշտական կեանքով, որի անբաժան մասն էին աշուղները: Եւ եթէ աւանդաբար ու գերազանցապէս հայ աշուղները մինչ այդ ստեղծագործում էին թուրքերէն ու ադրբեջաներէն, ապա վարպետաց վարպետ (ուստաբաշի) ընտրուած Ջիւանին (1844-1909) յորդորում է բոլորին գրել գրական հայերէն երգեր՝ անձնապէս տալով դրա լաւագոյն օրինակը[42]: Ժամանակակիցները վկայում են, որ այդ գործում նրան աջակից է եղել հայ մեծանուն գրող Ղազարոս Աղայեանը, որն այդ տարիներին ուսուցչութիւն էր անում Գիւմրիում[43]:

---

[40] *Հայաստանի համառօտ հանրագիտարան, հտր. 2*, էջ 757:

[41] Յասմիկ Յարութիւնեան «Երաժշտական կեանքը Գիւմրիում» (անտիպ), էջ 1:

[42] Նոյն, էջ 17:

Ընդհանուր առմամբ, այս գործիքին հետ կապուած գրեթէ բոլոր ուսումնասիրութիւնները կը պնդեն, թէ հայերէն զուռնա կամ թրքերէն զուրնա ձեւերը կը բխին պարսկերէն ***sur-nay*** ձեւէն, ուր ***sur*** «տօնախմբութիւն, խրախճանք, խնճոյք» կը նշանակէ իսկ ***nay*՝** «եղէգ/սրինգ/փչողական նուագարան», եզրակացնելով՝ թէ «զուռնա» անուանումը «խնճոյքներու սրինգ» կը նշանակէ: Բազմիցս կրկնուած այս մեկնաբանութիւնը ո՛չ թէ գիտական, այլ ժողովրդական ստուգաբանութեան արդիւնք է:

Փիքըն կը մէջբերէ Անթոնի Ս. Պայնըզի (1958) ենթադրութիւնը, թէ՝ պարսկերէն **sūrnā(y)**ը կրնայ ծագած ըլլալ արաբերէն **sūr** (= եղջիւր) եւ պարսկերէն **nā(y)** (= եղէգ) բառերու բարդութեամբ, հետեւաբար **surna(y)** ձեւի սկզբնական նշանակութիւնը կրնայ եղած ըլլալ եղջիւր-սրինգ: Ան կը նշէ նաեւ, թէ Իլիա Կերշեւիչ առաջարկած է եւ Հարըլտ Պէյլի ընդունած, որ զուտ իրանական ստուգաբանութեամբ կարելի է ստանալ նոյն արդիւնքը: Հին պարսկերէն ***sru** կը նշանակէ «եղջիւր», այնպէս որ հին պարսկերէն ***sru-nāda** «եղջիւր-սրինգ»՝ լիովին հնարաւոր է, թէեւ աւանդուած չէ: Այս ձեւը կրնայ պարսկական **surnā(y)**ի բացատրութիւնը ըլլալ**:** Այլապէս, **sūrnā(y)**ը կրնայ ծագած ըլլալ արաբական **sūr**ի ազդեցութեան տակ **u**ի երկարացմամբ, կամ պարսկերէն **sūrnā(y)**ի «տօնախմբութեան եղէգ/սրինգ» ժողովրդական ստուգաբանութեան ճնշման տակ:

Աւելի հեռու երթալով, Մարսէլ Տիւշէն-Կիյէմէն[25] կը գրէ թէ պարսկերէն ***surnāy***ը կազմուած է ***nāy*** արմատէն, սրինգի անունը որ կը համապատասխանէ սանսկրիտ ***nāḍya*** ձեւին, նոյն նշանակութեամբ, (երաժշտական

---

[22] Վարդան Այգեկցի, *Ժողովածոյք առակաց Վարդանայ, մասն Բ*, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 252:

[23] Տե՛ս՝ ծանթ. 2:

[24] Ն. Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտութիւնը V-XVդդ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1985, էջ 36, մէջբերում. հմմտ.՝ *Գիրք սահմանաց սրբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի՝ հայոց իմաստասիրի: Եւ յետ ժամանակի արարեալ լուծումն սորին հոգեշահ մեկնութեամբ տեառն Առաքելի եռամեծ վարդապետի* ..., Մատրաս, 1797, էջ 615:

[25] Marcelle Duchesne-Guillemin, “Les Instruments de Musique dans l’Art Sassanide”, *Iranica Antiqua, Supplément VI*, 1993, էջ 13:

գործիք մը զոր կ'օգտագործէր Եամա **(Yama)** աստուածութիւնը), եւ ***sur*** որ կը վերյիշէ իր աւեստական նախնի ***suβrā*** ձեւը, որ եղջիւրի մը անունն էր զոր կ'օգտագործէր Եիմա **(Yima)** աստուածութիւնը (Եամայի պարսկական համապատասխանը):

Այս ***ṣūr*** բառը կը գտնենք Ղուրանի մէջ իբրեւ աշխարհի վերջի շեփորի անունը[26]: Զայն պիտի հնչեցնէ Իսրաֆիլ հրեշտակը, վերջ տալով ամբողջ կեանքին աշխարհի երեսէն:

Այսօր սակայն, զուռնայի մասին պարսկական կամ արաբական վերոյիշեալ ենթադրութիւններէն շատ աւելի հին աղբիւրներ կան, որոնք մեզ կը տանին հիթիթական աշխարհը:

Կրեփին այս եզրը յայտնաբերած է լուվիերէն գաղափարագրութիւններու մէջ, որպէս **śurna:** Բառին ստուգաբանութիւնը յստակ է, սակայն տարակուսանք կար, թէ ինչպէս կը հնչուէր. **śurna**՞ թէ՞ **surna**: Ան կը ծագի հին հնդեւրոպական արմատ ***korn-** ձեւէն (համեմատել լատիներէն **cornu**, յունարէն **κέρας** եւն.): Բառը յայտնի է նաեւ նշուլային (vestigial) ձեւով սեպագիր լուվիերէնի մէջ **Sl-na-** գրութեամբ, ուր **Sl** սումերագիրը «եղջիւր» կը նշանակէ իսկ **na** վերջնաձանցով եզրը կը կարդացուի «**śurna**» ինչպէս լուվիերէն վերոյիշեալ գաղափարագրութիւններու օրինակը: Նոյնինքն Կրեփին, տարիներ ետք, մատնանշած է, թէ տուեալ արձանագրութիւնը պէտք է կարդացուի **zurni**[27]:

Այս ձեւով բառ բուն հիթիթերէնի մէջ անյայտ է, ուր սակայն կը գտնենք նոյն բառի իմաստով **karawar** ձեւը: Այս բառը գրուած է նոյն սումերագրով **Sl-ar**: Ներկայացուած լուվիերէն եւ հիթիթերէն ձեւերը, իվերջոյ նման են եւ կը ծագին նոյն արմատէն՝ հին հնդեւրոպական * **k-r-n/w** ձեւէն:

Կրեփին կը զարմանայ եւ իրեն համար տարօրինակ կը թուի, թէ ինչու՛ հայկական մատենագրութեան մէջ զուռնան կը յիշատակուի միայն ուշ, այսինքն՝ ԺԹ. դարուն:

Նախ պէտք է նշել որ Կրեփինին անծանօթ էին հայերէնի միջնադարեան «սուռնա» ձեւի վկայութիւնները: Անծանօթ էր նաեւ որ «պատերազմական փող» կամ «փող» ձեւերը բազմանշանակ եղած են ընդգրկելով «զուռնա»ն եւս:

---

[26] Jacques Duchesne-Guillemin, "Cor de Yima et Trompette d'Israfil", *Comptes rendus de l'Académie des Inscriptions et Belles-Lettres*, juillet-octobre 1979, էջ 539-49. տե՛ս՝ նախորդ մէջբերումը:

[27] "Let us first consider the word that appears in Armenian as ***zuṙna***. The root ***z-r-n-*** clearly reflects the same source as Lat ***cornu***, and Goth. ***haúrn***, IE ****k-r-n-***. It is known in Hieroglyphic Luwian with palatalization, formely as ***śurna***, or ***surna***, but now as ***zurni*** with an initial [ts]" (John A. C. Greppin, "The survival of ancient Anatolian and Mesopotamian vocabulary until the present", *Journal of Near Eastern Studies*, 31:1991, էջ 205-06:

Զուռնան, իր զինուորական միջավայրէն աստիճանաբար դուրս գալով, ներթափանցած է գործածութեան այլ ոլորտներ: Մեր կարծիքով, զուռնան նախ մտած է կրօնաճիսական արարողակարգ: Նկատի ունենալով որ առկայ են կրօնական բնոյթի լրացուցիչ բացօթեայ ծէսեր եւ արարողութիւններ որոնց մաս կը կազմեն զանազան թափօրներ, զուռնայի մեծ տարածութեան վրայ լսելիութեան յատկութիւնը նպաստած է անոր որդեգրման. օրինակ՝ բոլորին ազդարարելու համար նոր ամուսնութիւն մը, հայոց գրեթէ բոլոր ազգագրական շրջաններուն մէջ աւանդական են թափօրները: Ասիկա ո՛չ միայն յարատեւած է դարեր այլեւ հասնելով մեր օրերը, կը կենցաղավարուի Հայաստանի ինչպէս նաեւ հայաբնակ յարակից շրջաններու մէջ: Այսպէս, զուռնան թափանցած է ժողովրդական այլեւայլ բնագաւառներէ ներս: Բայց ներթափանցումը եղած է դանդաղ եւ ոչ-ընդհանուր: Ներթափանցումը ընդհանուր չէ եղած, որովհետեւ՝ հայ ժողովրդական կենցաղի մէջ դարերու ընթացքին արմատացած է մարդկային խօսքի առաւելութիւնը երգի ու պարերգի ձեւով: Հայ մտածողութեան համար բնականօրէն նախամեծար եղած է երգը քան գործիքային կատարումը, որ ի միջի այլոց իրեն յատուկ արտայայտութեան միջավայր եւ առիթներ ունեցած է, ուստի իրարու չեն խոչընդոտած:

Պատկերը փոխուած է ԺԹ. դարու վերջ-Ի. դարու սկիզբին, մանաւանդ Արեւելեան Հայաստանի մէջ: Ռուսական տիրապետութեան հաստատումը 1828ին դրական փոփոխութիւն մը եղաւ հայերու կենցաղային պայմաններու բարելաւումին առումով: Մինչ այդ, երգ/պար/տօն կը կատարուէին գրեթէ ծածուկ, որպէսզի շատ հեռուները չլսուէր եւ մահմետական տարրերը չգրգռուէին: Մահմետական տիրապետութիւնը թօթափելէ ետք, թէեւ գեղջկական միջավայրը միշտ տնտեսական նեղութեան մէջ եղած է, բայց նոր կացութիւնը նպաստած է երաժիշտ մը հրաւիրելու/վարձելու եւ չվախնալու մահմետական անհանգստացումէ...: Այս երեւոյթը, աստիճանաբար մեծ թափ ստացաւ ու դհոլ-զուռնաները տարածուեցան եւ բազմացան:

Կոմիտաս ընդհանրապէս բացասական դիրքորոշում ունեցած է զուռնայի եւ զուռնահարներու հանդէպ, այն աստիճանի որ երբ մէկը հայհոյէր "զուռնաչի" կը կոչէր:

Այս երեւոյթը հասկնալու համար նախ պէտք է ճանչնալ Կոմիտասի գործը հայկական երգարուեստի մասին եւ ընդհանուր պատկերացում ունենալ այդ ժամանակաշրջանի հայ գեղջկական երգի վիճակին մասին: Ըստ Կոմիտասի, հայ արուեստի մէջ ամենատիպականը եւ ինքնօրինակը հայ երգարուեստն էր, մանաւանդ պարերգը: Իր համոզմամբ դհոլ-զուռնան մահացու հարուած մըն էր հայ պարերգին: Այս բոլորին պէտք է աւելցնել Կոմիտասի ուսումնասիրութեանց եզրակացութիւններն ու երգարուեստի ապագայի մասին իր մտահոգութիւնները: Պարզ է որ իր մտահոգութիւնները ճիշտ էին. ներկայիս, փաստօրէն, բոլոր հայկական շուրջպա-

րերը կ'ուղեկցուին զուռնաներով մինչ պարերգը դարձած է հազուագիւտ երեւոյթ:

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՓՈՂ

Դուդուկը միջնադարեան աղբիւրներու մէջ նշուած է իբրեւ «դամբանական փող» որովհետեւ կ'օգտագործուէր յուղարկաւորութեան ծէսերու ընթացքին: Այս սովորութիւնը յարատեւած է եւ հասած մինչեւ մեր օրերը: Բայց աղբիւրները կը վկայեն նաեւ, որ ան կ'օգտագործուէր բոլորովին այլ առիթներով՝ զուարճութեան, ուրախութեան, խնդութեան, ժամանցի եւն.: Դժուար թէ խնճոյքի մասնակցող նուագարանները «դամբանական փող» կոչուէին: Այլ պարագաներու, այսինքն յուղարկաւորութիւններէն զատ, նուագարանը պարզապէս «փող» կ'անուանէին ինչպէս կը վկայէ ԺԴ. դարու հետեւեալ նշումը.- *«… դարձեալ **փող** է յորժամ հնչեն **նա[յ]** թէ 'ի յուրախութեան եւ խնդութեան, եւ **նայ** ի սուգ եւ ի յարտասուս … որպէս գուսանացն ձայնքն»*[28]:

Մեզի հասած են «դամբանական փող»ի միջնադարեան հետաքրքրական վկայութիւններ: Օրինակ, Ստեփանոս Օրբէլեան (1250/60-1303) հետեւեալը կր նշէ իր «Ողբ ի Սուրբ կաթուղիկէն» բանաստեղծութեան մէջ, զոր գրած է 1300ին.

Տեսէն ի նմա զարքայուհին	Զայն Երկնաւոր Թագաւորէն,
Զխորան փառաց Տեառն Յիսուսին,	Զմայրն յուսոյ Հայկայ զարմի՛ն
Մերկ խայտառակ ի բաթրոնին	Զանձամբ արկեալ զքուրձ խաւարին,
Հերթն ճողեալ որպէս կնտին,	Ստինքն ցամաք զերդ ըսկնդկին,
Զկուրծքն բախէր քարամբ ուժգին.	Առուք արեանց իջանէին.
Մոխիր կուտէր նման բլրին,	Ցանէր ձեռամբն ի գազարին.
Երամք կանանց ճչող ջայլից	Շուրջանակի գնա սթարէին.
Դասք նրգողաց կանգնեալ կային,	Զ**դամբանական փողս** ածէին.
Աւաղական ողբովք լային,	Զգալարափողսն հնչէին.
Կէսքն շիւան մեծ քարշէին,	Կէսքն զվարսիցն փետէին[29]:

Նոյն հեղինակը, նկարագրելով Սիւնեաց Աշոտ իշխանի յուղարկաւորութիւնը, կը գրէ.

Իսկ մեծ բարեպաշտուհին եւ անհամեմատն ի կանայս Շուշան՝ կին նորա, զարդարեալ զդի նորա արքունական ձեւով. եւ աշխարհաժողով ամբոխիւ, **դամբանական փողովք** եւ ողբերգական քնարահարիւք տարեալ հանգուցին

[28] Տե՛ս՝ մէջբերում 2:

[29] Ստեփանոս Օրպէլեան, *Ողբ ի Սուրբ Կաթուղիկէն*, Թիֆլիս, տպարան Մովսէս Վարդանեան, 1885, էջ 25-26:

յեպիսկոպոսարանին Տաթեւ ի դրան սուրբ եկեղեցւոյն զոր իւր հրամանաւ շինեալ էր Տէր Յովհաննէս[30]:

Դամբանական փողը կը նշէ նաեւ Սիմէոն Ապարանեցին (շ.1540-1614), որ իր կեանքի մեծ մասը ապրած եւ գործած է Վասպուրական Աշխարհի մէջ[31]:

Հիմնուելով ԺԴ. դարու վերոյիշեալ նշումներուն վրայ, կարելի է ենթադրել որ ԺԴ.-ԺԵ. դարերուն, կամ միաոժամանակ առաջ, զուգահեռաբար սկսաւ «նայ» անուան գործածութիւնը որ տակաւ փոխարինեց «դամբանական փող»ը:

Հայկական ժողովրդական երաժշտական գործիքներու նուիրուած աշխատութիւնները ինչպէս նաեւ զանազան հանրագիտարանները[32], երբ կ'անդրադառնան «դուդուկ»ին, կը նշեն թէ գործիքը նաեւ կը կոչուի «նայ», առանց տալու որեւէ այլ մանրամասնութիւն: Ներկայիս, այս երկրորդ անուան գոյութիւնը գրեթէ անհետացած է, մասնաւորապէս գործիքին զանգուածային տարածման պատճառով «դուդուկ» անուան տակ: «Նայ» անուան մասին որեւէ խօսք՝ ժողովուրդի եւ երաժիշտներու մեծամասնութեան քով, նախ զարմանք կը պատճառէ յետոյ՝ կասկած ու մերժում: Գրականութեան պակասն ալ կ'օգնէ այս անորոշութեան:

Կոմիտաս իր *Հայ գեղջուկ երաժշտութիւն*ի[33] մէջ, գլուխ մը կը յատկացնէ գործիքային երաժշտութեան՝ «Նուագական երաժշտութիւն» վերտառութեամբ: Ան դուդուկին անդրադառնալով «**նայ**» եւ «**նայի**» անունները կ'օգտագործէ: Կոմիտասեան աղբիւրը անհերքելի փաստ է որ նախաեղեռնեան շրջանին արեւելահայերէնի, մասնաւորապէս Արարատեան բարբառի մէջ «դուդուկ» ձեւը անծանօթ էր, անոր փոխարէն տարածուած էին «նայ» եւ «նայի» ձեւերը:

Այստեղ կը մէջբերենք Կոմիտասի «նայ/նայի» մասին բոլոր անդրադարձները, որոնք ցոյց կու տան, որ անոնք պատահականութեան արդիւնք չեն.

---

[30] Ստեփանոս Օրպէլեան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Փարիզ, տպ. Կ. Վ. Շահնազարեանց, 1859, էջ 229:

[31] Ներսէս Մկրտչեան, *Երաժշտական բառարան,* Մշակոյթի հայկական ֆոնդ, Երեւան, 2000, էջ 60:

[32] Արամ Քոչարեան, «Դուդուկ», *Հայկական սովետական հանրագիտարան, հտր. 3*, հրատ.՝ Հայկ. ՍՍՀ ԳԱ, Հայկ. սովետական հանրագիտարանի գլխ. խմբ., 1977, էջ 459. նաեւ Константин А. Вертков, Георгий И. Благодатов, Эльза Э. Яазовищкая, *«Атлас музыкальных инструментов народов СССР»*, (ԽՍՀՄ ժողովուրդներու երաժշտական գործիքներու ատլաս), Պետական երաժշտական հրատ., Մոսկուա, 1963, էջ 88:

[33] Կոմիտաս Վարդապետ, *Հայ գեղջուկ երաժշտութիւն,* հրատ.՝ Կոմիտասեան յանձնաժողովի, Փարիզ, 1938:

Պարկապզուկով նուագում են առանձնապէս պարի եղանակներ: Այս նուագարանը, ժողովրդի միջից, կամաց կամաց, վերանում է եւ տեղն անցնում է զուռնան կամ **նայի**ն, որոնցից անբաժան է թմբուկը:

Զուռնաչիների նուագուրդը պարունակում է երկու զուռնայ եւ մի թմբուկ, կամ երկու **նայի** եւ մի թմբուկ: Մէկը նուագող, միւսը ձայնակցող, ձայնառութիւն պահող, իսկ թմբուկը՝ շեշտակցութիւնը կամ չափը:

Աւելի մաքուր ու գեղեցիկ են հնչում եղանակները, երբ գործ են ածում երկու **նայ**ից եւ մի թմբկից կազմած նուագուրդը[34]:

Նուագածութեան ժամանակ ձայն են պահում, երբ մի նուագարան մէնակ է նուագում, իսկ միւսը, շատ մեղմիկ, առանց գոյն տալու եւ միանուագի տպաւորութիւնը խանգարելու, մտքի հոսանքն է կապում: Զուռնաչիների նուագուրդի մէջ առաջին զուռնան կամ **նայի**ն նուագում են բուն եղանակը, իսկ երկրորդները եղանակի ուժին հաւասար զօրութեամբ ձայն պահում: **Նայ**ի ձայնառութիւնը հաճելի է, որովհետեւ գոգիկ, փափուկ եւ տկար է. իսկ զուռնայինը ձանձրացնող, յոգնեցնող եւ շշմեցնող է, որովհետեւ ձայնն էլ կարծր, սաստիկ եւ ուժեղ սուր է, մեղմ չունի[35]:

Իսկ նուագարաններու դասակարգման ցանկին մէջ կը գրէ՝ «Փչողական՝ ... զուռնա, **նայի** կամ **նայ** պիպիչաւոր»[36]: Արարատեան բարբառէն զատ, դուդուկը «նայ» կ'անուանէին Մշոյ հայերը:

ՎԱՆԱՅ «ՓՈՂ»Ը

1990ականներուն հնաերաժշտագէտ Էդուարդ Բարսեղեան[37] յայտնաբերեց, ուսումնասիրեց եւ գիտական շրջանառութեան դրաւ Փարիզի Լուվրի թանգարանը պահուող հնագոյն հայկական երաժիշտի մը արձանիկը:

Վանի երաժիշտը

Պրոնզէ արձանիկը աչքի կը զարնէ իր յատուկ մետաղամշակման ձեւով եւ քանդակագործութեան ոճով: Ան 6,50 սմ. բարձրութիւն ունի, պատկերն է նստած տղամարդու մը, որ փողային նուագարան մը կը նուագէ: Պեղուած է Վանայ լճի շրջանէն եւ թուագրուած Ք.ա. Բ. հազարամեակի վերջ-Ա. հազարամեակի սկիզբներուն[38]: Թանգարանի գոյքագրման մայր մատեանի

[34] Նոյն, էջ 14:

[35] Նոյն, էջ 15-16

[36] Նոյն, էջ 9

[37] Էդուարդ Բարսեղեան, ծնած է Պաքու, 1945ին: 1986-90՝ Երեւանի Կոմիտասի անուան պետական երաժշտանոցի «աւագ դասախօս», իսկ 2017էն՝ Օքսֆորտի պատուաւոր փրոֆեսոր: Ներկայիս հաստատուած է Ֆրանսա:

[38] *Կայծեր* (1883–84) գիրքին մէջ, Րաֆֆի նշած է, թէ Վանի եւ Ռուսախինիլիի շրջակայքը ապրող հայ գիւղացիները պղինձէ իրեր գտած էին, ներառեալ՝

արձանագրութեան մէջ յստակ կարելի է կարդալ՝ Civilisation du Lac de Van, Fin IIe mil.-début Ier av. J.C.: Կը պակսին այլ մանրամասնութիւններ:

Շատ զարմանալի է, որ Լուվրի թանգարանը, երկար տարիներ ցուցադրուող այս արձանիկին կից բացատրական քարտին վրայ «Վանափող»ի իբրեւ ծագման վայր սխալմամբ գրուած էր Սեւանայ լիճ: Բարսեղեան առաջինն է, որ նշմարած է այս սխալը եւ զայն մատնանշած շարք մը յօդուածներու մէջ[39]:

Արձանիկը Լուվրի թանգարանին կողմէ ձեռք բերուած է 1872 Յուլիսին եւ տարիներ շարունակ ցուցադրուած թանգարանի Հին Արեւելքի ցուցասրահներէն մէկուն՝ «Հայաստան» ցուցափեղկին մէջ[40]: Գոյքագրման արձանագրութեան մէջ նշուած է «Acquisition Degournay 1872 (juillet)», գրանցուած՝ MNB-398 ցուցանիշին տակ:

Հիմնուելով նուագածուին մարմինի չափերուն վրայ, կարելի է ենթադրել որ նուագարանի երկարութիւնը շուրջ 47 սմ. է իսկ երաժիշտին դաստակներու եւ մատներու դրուածքէն՝ որ նուագարանը ունեցած է մօտաւորապէս 7-9 ձայնանցք:

Մարմինի, գլուխի, այտերու, շրթունքներու, դաստակներու եւ ձեռքերու դրուածքները զարմանալիօրէն պահպանուած են մինչեւ այսօր զուռնա եւ դուդուկ նուագող երաժիշներու քով[41]:

Մեծ հաւանաբար այդ նուագարանը, ներկայ դուդուկի հին ձեւերէն մէկը եղած ըլլալու է:

ԾԻՐԱՆԱՓՈՂ

Վերջերս ասպարէզ իջած է «ծիրանափող» անունը իբրեւ «դուդուկ»ի հոմանիշ: Թերեւս, ասոր նպատակն է հայերէն եզրով մը մթագնել Վանի բարբառի «դուդուկ»ը, որ ակնյայտօրէն թրքական ծագում ունի (düdük):

մարդկային արձանիկներ («պղնձէ մարդիկ»): Բոլոր այս հնագիտական գտածոները մինչեւ Եղեռնը, պահուած էին Վարագայ Ս. Խաչի վանքի թանգարանը (Րաֆֆի, *Երկերի ժողովածու, հտր. 6*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան 1986, էջ 64):

[39] Այս սխալը դեռ շրջանառութեան մէջ է, ինչ որ մեզ մղեց դիմել Լուվրի թանգարանը եւ ստանալ գոյքագրման արձանագրութեան լուսապատճէնը ուր գրուած են, այստեղ մէջբերուած ֆրանսերէն տեղեկութիւնները: Դիմումները կատարեց եղբայրս՝ Ռուբէն Կնեազեան որ հաստատուած է Ֆրանսա:

[40] Ներկայիս հանուած է, հաւանաբար քաղաքական խնդիրներ կանխելու համար:

[41] Եդուարդ Բարսեղեան, «Հայ հին երաժշտութեան պրոնզէ արձագանգը Լուվրի թանգարանում», *Յառաջ – Միտք եւ Արուեստ,* 5 Յունուար 1992. նաեւ՝ Edouard A. Barseghyan, “The bronze statuette from Van at the Louvre Museum”, *Fundamental Armenology*, 2:2015, էջ 344-52. նաեւ՝ Rapport aux Universitet de Liège "L'écho de bronze de la musique ancienne arménienne au Musée du Louvre", *Etudes et Recherches Archéologique de la Musée,* l'Université de Liège, 61:1994, Sons originels de la musique/: préhistoire de la musique:

«Ծիրանափող» բարդ բառը կազմուած է «ծիրան» եւ «փող» հայերէն արմատներու միացումով, ուր «ա»ն հանդէս կու գայ իբրեւ շաղկապ: «Ծիրանափող» բառը գործածողները կը մատնանշեն որ այս անուանումը շատ տեղին է որովհետեւ դուդուկը ընդհանրապէս կը պատրաստեն ծիրանենիի փայտէն: «Ծիրանափող» բառը ոչ միայն հայերէն է այլեւ կ'արտացոլացնէ նուագարանի պատրաստութեան հիմնական նիւթը՝ ծիրանենիի փայտը: Իսկ այս «հայաշունչ» անուան կառուցուածքը կը հետեւի հայկական մատենագրութեան մէջ գտնուող բազմաթիւ օդահունչ երաժշտական գործիքներու աւանդական դարձած բառակերտման կաղապարին:

Հակառակ որ «ծիրանափող» բառը յառաջացաւ ազնիւ նպատակի մը համար, իր գործածութիւնը քաոսի վերածեց նիւթը: Ընդհանրապէս այս անուանումը գործածելու սկսան մարդիկ որ ո՛չ լեզուաբան էին, ո՛չ ալ երաժշտագէտ, ուստի եւ ակամայ կատարուեցան կոպիտ սխալներ: Հայկական հարուստ եւ բազմազան երաժշտական գործիքադարանին մէջ արդէն գոյութիւն ունէր «ծիրանափող»ը որ «դուդուկ»էն բոլորովին տարբեր փչողական նուագարան մըն է:

1929ին Ակսել Բակունց գրեց «Ծիրանի փող» պատմուածքը, ուր կը նկարագրէ Հայաստան գաղթած սասունցիներու առօրեայէն ծիրանի փողի գործածութիւնն ու այլ մանրամասնութիւններ.

> Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ աւելի երկար էր մեր հովիւների սովորական սրինգից: Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դէպի գիւղի կողմը, եւ հետզհետէ, ինչպէս լուսաբացը լեռներում, զարթնեց «Եար խուշտան»: Նա սկսեց դանդաղ եւ մեղմ, յետոյ ձայները զօրացան, արագացաւ չափը: Յետոյ վայրենի կանչով վեր թռաւ ջրբաժանը, կանգնեց կտուրի մէջտեղ, նրան հետեւեց երկրորդը, երրորդը, եւ շուտով նրանց երկու շարքը, ինչպէս երկու վիթխարի ապառաժ, զարնուեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով եւ կրծքով: Նուագն աւելի թնդեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրայ արշաւում էին բանակներ: Նրանց ձեռքերի հարուածը պողպատի ձայն էր հանում, եւ կայծեր էին թռչում նրանց բորբոքուած աչքերից[42]:
>
> ...Նա հանեց ծիրանի փողը, այն կարմրաւուն սրինգը, որի վրայ նուագել էր կապոյտ լեռների երգերը, եւ նրա մատներր խաղացին ծիրանի փողի վրայ: Հազրօն շոգից խանձուած շրթունքներով գրկեց փողի բերանը, ինչպէս լեռնային գիւղերում ջուր են խմում կաւէ դորակներից: Ջրի նման գլգլում էր նրա նուագը, լեռների երգը՝ շոգ հարթավայրում[43]:

Յայտնի արձակագիր Մուշեղ Գալշոյեան նոյնպէս կ'անդրադառնայ սասունցիներուն իր *Մարութայ սարի ամպերը* ժողովածուի մէջ, ուր «Փողփուչ Մելօն» պատմուածքին մէջ կը նշէ ծիրանի փողը.

---

[42] Ակսէլ Բակունց, *Սպիտակ ձի, պատմուածքների ժողովածու*, ԽՍՀՄ ժող. կենտրոն, հրատ., Մոսկուա, 1929, էջ 18-19:

[43] Նոյն, էջ 16-17:

«Մելօ, բա քու փողն ո՞ւր է»:
Գիտէին, որ նա իր ծիրանի փողը հինգ տարի՝ թէ՛ կռիւների մէջ, թէ՛ փախեփախին գօտին խրած պահել է: Ո՞ւր է: Ծիրանի փողը ո՞ւր է:
«Քու ծիրանի փող կորե՞լ է, Մելօ»:
Մելօն, գործի հետ, գլխով արեց՝ կորել է:
«Նոր փո՞ղ կը շինիս»:
«Աստուծ էւելի շնորհ տայ, Մելօ, փող շինէ, փող փչէ, թող մեր հոգին քրքրուի...[44]:

Ինչպէս կը մատնանշէ ազգագրագէտ Եղիազար Կարապետեան՝ «*Սասունում դհոլ-զուռնա չկար երգերը եւ պարերը ուղեկցւում էին երգով եւ մասամբ էլ սրինգով*»[45]: Սասունցիները այս սրինգը կ'անուանէին «փող» իսկ նուագածուն՝ «փողփուչ»[46]: Սասունի փողը վասպուրականցիներուն նշած փողն է, որ ներկայիս Հայաստան «բլուլ» կը կոչուի: Ընդհանրապէս այս փողերը կը պատրաստէին տօսախի[47] փայտով որ տեղւոյն բարբառով կը կոչուէր «շիմշաթ». կ'օգտագործէին նաեւ ծիրանենիի փայտը: Ինչպէս ըսինք, գործիքի անունը պարզապէս «փող» էր, բայց երբեմն մատնանշելու համար պատրաստութեան նիւթը կը կոչէին «շիմշաթ փող» կամ «ծիրանի փող»:

Սասուն-Տարօն-Վասպուրական շրջաններուն մէջ «փող»ը քիչ մը աւելի երկայն կը պատրաստէին քան Արեւելեան Հայաստանի օրինակները:

Ստորեւ կը մէջբերենք նախաեղեռնեան սասունցի սրնգահարներուն մեզի հասած ցանկը.-

Վերջին մէկ դարու շրջանին, Սասնոյ նշանաւոր սրնգահարներն եղած են՝

1.- **Նատորու Արէն՝** որ հարազատ զաւակն է հռչակաւոր Թրքաշ Յակոբին, եւ որ Խարզանի շրջանին մէջ ապրելով՝ միշտ նուագած է Սուրբ Մարաթուկի ուխտին: Արէնին համար կ'ըսուի, թէ տարի մը Սուրբ Մարաթուկի ուխտին առթիւ՝ 24 ժամ անընդհատ նուագելու պայմանաւ, տօսախէ շինուած եօթը սրինգ պայթեցուցած է կովէնտ պարի մէջ: Նատորցիները կը համարուին Սաս-նոյ լաւագոյն պարողներն ու «փողփուչ»ները: Իրենց պարը ունի աւելի զուսպ ու առնական ընթացք մը, երբ մարդու ուսերն ու կուրծքը շատ աւելի պիտի յոգնին քան ոտքերը, որոնք յաճախ քառորդ ժամ կը մնան նոյն տեղը՝ առանց մէկ մատ առաջ երթալու:

2.- **Վանից կարճ Գրիգոր՝** որ Գոմուց Սուրբ Մատին Առաքելոց վանքին փայտահատն ըլլալով, ապրած է միեւնոյն վանքին մէջ եւ նուագած է զանազան ուխտավայրերու վրայ:

---

[44] Մուշեղ Գալշոյեան, *Մարութայ սարի ամպերը*, «Սովետական գրող» հրատ., Երեւան, 1981, էջ 84:

[45] Եղիազար Կարապետեան, *Սասուն. ազգագրական նիւթեր*, Հայպետհրատ, Երեւան, 1962, էջ 119:

[46] Մ. Արտակ, «Սասնոյ աշուղները», *Սասուն*, ձեռնարկ՝ Սասնոյ հայրենակցական միութեան, Հալէպ, 1948, էջ 65-67:

[47] **Տօսախ** *(Buxus sempervirens)*, մշտաթալար թուփ, դեղնաւուն՝ կարծր եւ ծանր փայտով: Շատ յարգի է փողային երաժշտական գործիքներու համար:

3.- Դալրձորու Մարգար՝ որ ապրած է Շիկոյենց շրջանը եւ միշտ նուագած է Անարեւ Արջոնց Սուրբ Քառասուն Մանկանց ուխտավայրին ու մեծ խրախճանութիւններու մէջ:
4.- Հաղտի Կենճոն՝ որ ապրած է Պտրի քիւրտ աշիրէթին մէջ եւ նուագած է զանազան ուխտավայրերու վրայ:
5.- Գոմուց Խաչոն՝ որ ապրած է Բսանաց գաւառի շրջանը եւ նուագած է Վարդինանց Սուրբ Քառասուն Մանկանց ու Սուրբ Խաչի ուխտավայրերը:
6.- Մզրու Կարպուշ՝ որ ապրած է Վանից մեծ տունը եւ նուագած է Ջրթնեց Օձասպան Ս. Գէորգի ուխտավայրը:
7.- Խնծորեց Մարգէն՝ որ ապրած է եօթը թաղ գաւառի շրջանը եւ նուագած ու երգած է Սուրբ Աստուածածնի եւ Տղամանուկի ուխտավայրերուն մէջ[48]:

1915ի Ցեղասպանութեան պատճառով ծիրանի փողը դարձած է հազուագիւտ նուագարան, գտնուելով միայն ներկայ Հայաստանի Հանրապետութեան սահմաններէն ներս Եղեռնէն փրկուած արեւմտահայերու քով: Այժմ հայաստանցի մասնագէտներն ալ երբեմն ծիրանի փողը կրճատ ձեւով կ'անուանեն՝ **ծիրանափող**:

Այս սրինգի հատուկենտ օրինակներ եւս փրկուելով աղէտէն հասած են Հայաստան, ինչպէս Սասունէն բերուած փողփուչ Սիմոն Յարութիւնեանի[49] գործիքը[50]:

ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ ՓՈՂ

Հին Հայաստանի արքայական արարողակարգին մէջ շատ կարեւոր տեղ ունէր Նոր Տարուան սկիզբի ազդարարումը: Ասիկա կը կատարուէր թագաւորի գլխաւորութեամբ, տեսակ մը փող հնչեցնելով, որուն կ'ուղեկցէին թմբուկներու խլացուցիչ հարուածները:

Ազդարարումը կը կատարուէր Նաւասարդեան եօթնօրեայ տօնակատարութեանց ծիրէն ներս: Տօնակատարութիւնները կը կատարուէին անսովոր ցուցադրութեամբ թէ՛ տօնական ու խրախճանային տեսանկիւնէն եւ թէ՛ ծէսերու հանդիսաւորութեան: Շաբթուան ընթացքին տեղի ունեցած գեղարուեստական, ռազմական, կրօնական, մարզական եւ ժամանցային գործունէութիւնը, աւելնալով հանդիսաւոր ծէսերուն, այդ շաբաթը անմոռանալի կը դարձնէին ամբողջ տարուան ընթացքին: Այդ փառահեղ եւ վե-

---

[48] Արտակ, էջ 65-67:

[49] Արուսեակ Սահակեան, «Ֆոլկլորային համերգ», Հայաստանի Կոմպոզիտորներիր Միութիւն, Պլենում նուիրուած ժողովրդական երաժշտական ստեղծագործութեանը, Երեւան, 25-29 Նոյեմբերի, 1987, էջ 17:

[50] Ան՝ գերազանց նուագածու, ծիրանափող նուագելու արուեստը եւ հինաւուրց մեղեդիները փոխանցած է իր որդիներուն՝ Խաչատուրին եւ Յարութիւնին, որոնք յաճախ կը մասնակցին այլաբնոյթ համերգերու, ներկայացնելով իրենց պապենական ժառանգը: Ընտանեկան աւանդը եւ անոր փոխանցումը սերունդէ-սերունդ հոգեւոր մշակոյթի պահպանման լաւագոյն ձեւն է:

հաշուք՝ տօնակատարութիւնները այն աստիճանի ցնցիչ պէտք է ըլլային, որ Արտաշէս[51] թագաւոր իր մահուան շէմին, ա՛յդ օրերն է յիշած.

Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի Եւ զառաւօտն նաւասարդի, Զվազելն եղանց եւ զվարգելն եղջերուաց.	Մեք փող հարուաք Եւ թմբկի հարկանէաք, Որպէս օրէնն է թագաւորաց:

Պատահակա՞ն է արդեօք որ Արտաշէս թագաւորը իր կեանքի բոլոր յիշատակելիներէն միայն ու միայն յիշած է Նաւասարդի տօնակատարութիւնը, մասնաւորապէս Նոր Տարին ազդարարելու պահը:

Գրիգոր Մագիստրոսի (990–1058) մէջբերած բանաստեղծական այդ տողերէն կը բխի նաեւ Առաւօտ ժամի նշանակութիւնը:

Հայոց տոմարական-ծիսական համակարգում մեծ կարեւորութիւն է ունեցել **Առաւօտ** ժամը: Միջնադարի նշանաւոր հայ գիտնական Անանիա Շիրակացուց մեզ հասած աշխատութիւնների մէջ պահպանուել են հին հայոց օգտագործած ցերեկային եւ գիշերային ժամերի անունները: Ըստ մեզ հասած այս անունների ցանկերի, **Առաւօտ** է կոչուել գիշերուայ 10րդ ժամը:

Տարին մի անգամ, Նաւասարդեան տօնի օրը խորհրդաւոր գիշերուայ Առաւօտ ժամին (կամ դրանից քիչ անց) դիտուել է Հայկ համաստղութեան գլխաւոր աստղի (Հայկի ուսն արեւելեան) արեգակնային ամբարձումը: Այդ խորհրդա-ւոր, հանդիսաւոր ժամին կատարուել է ծիսական փողահարութիւն թագաւորի գլխաւորութեամբ: Փողահարութեան հետ միասին կատարուել է նաեւ թմբկահարութիւն: Ծիսակատարութիւնն ուղեկցուել է զոհաբերութեամբ, ընդ որում ողջակէզի զոհարանից բարձրացող խնկաբոյր ծուխը հաւատացեալների պատկերացումների համաձայն ունեցել է բացարձակ կարեւորութիւն:

Յայտնի է նաեւ որ Առաւօտ ժամի համար վկայուած է նաեւ մի այլ անուն՝ **Փողահար**: Վերեւում ասուածը հաշուի առնելով, կարող ենք այս Փողահար անու-նը ընկալել, որպէս Առաւօտ սրբազան ժամին կատարուող ծիսական փողահարութեան վկայութիւն: Եթէ տարուան ամենակարեւոր տօնը Նաւասարդն էր, եւ Նաւասարդի տօնին մէջ էլ ամենակարեւոր ժամը հենց այդ օրուայ Առաւօտն էր, ապա լիովին սպասելի է, որ այդ ժամին լինէր հանդիսաւոր, ծիսական փողահարութիւն: Այսպէս հասկնալի է նաեւ Առաւօտ ժամի համար զուգահեռա-բար մեզ հասած Փողահար անունը[52]:

Մագիստրոսի պահպանած հատուածէն կը բխին քանի մը հետաքրքրական մանրամասնութիւններ.-

Սրանում պարզւում է Արտաշիսի յիշատակած փողահարութիւնը, որ ինքն անձամբ է կատարել: Ըստ երեւոյթին այդ փողահարութիւնը ունեցել է կարեւոր ծիսական (նաեւ տոմարական, քաղաքական) բովանդակութիւն: Թմբուկ հարկանելն էլ պէտք է սրան լրացնող մի գործողութիւն լինէր: Իդէպ, եթէ նկատի առ-

[51] Խօսքը Արտաշէս Ա.ի մասին է (Քա. մօտ 230-մօտ 160):

[52] Գրիգոր Բրուտեան, «Հայոց տոմարի որոշ հարցերի մասին՝ Գրիգոր Մագիստրոսի տոմարական հանելուկն ու Արտաշիսեան վէպի հատուածը», *Էջմիածին*, Դ-Ե:1992, էջ 95-118:

նենք Առաւօտ ժամի այս բացառիկ դերը հին Հայաստանում, լիովին հասկանալի է դառնում այն իրողութիւնը, որ այդ ժամի յատուկ անունը յետագայում իմաստի զարգացում ապրելով վերածուել է ցերեկուայ նաեւ օրուայ սկիզբը նշանակող բառի[53]:

Կրնանք ենթադրել որ այս հնագոյն շրջանի ծիսական փողահարութեան արձագանգ եղած է հետեւեալ ծանօթ յիշատակութիւնը.

«*… եւ փող է դարձեալ որ ի տարեկան տաւնքն հնչեն, որ ժողովին եւ ի տա-ճարն գան եւ Աստուծոյ երախտեացն տօն եւ յիշատակ կատարեն*»[54]:

ԴԻՑԱԲԱՆԱԿԱՆ/ԱՌԱՍՊԵԼԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՂԵՐ

Դիցաբանական/առասպելաբանական փողերու խումբին կը դասենք միայն երկու նուագարան՝ Պղլորի փողը եւ Գաբրիէլեան փողը:

Պղլորի փողը կը յիշատակուի *Սասնայ ծռեր* դիւցազնավէպին մէջ եւ ունի ռազմական բնոյթ: Դիւցազնավէպին մէջ հերոսներու «սարքը», այսինքն ձին, զէնքերն ու զգեստները նոյնպիսի գերբնական ծագում ունին, ինչպէս դիւցազնները եւ ժառանգաբար կ'անցնին որդոցորդի: Անոնք սկզբնապէս ժառանգուած են դիւցազներու նախնի Սանասարէն, որ – հարկաւոր է նշել - իր կարգին՝ զանոնք ձեռք բերած է կենսական ծովի յատակէն:

*Սասնայ ծռեր*ու մէջ, մանրամասն նկարագրուած են թէ՛ գործածուող զգեստները, թէ՛ զէնք ու զրահը: Ջոջանց տան ամենեն նշանաւոր զէնքն է *թուր կէծակի*ն, որուն անունն իսկ կը բացատրէ իր յատկութիւնները: Ուրիշ զէնքերէն կը յիշատակուին գուրզը, *ըռըմիկ ջոջանի*ն, *ռըմ*ը, *նետ-աղեղը*, *պարան*ը: Պաշտպանութեան համար ջոջերը ունին վահան, կը հագնին շապիկ զրահեղէն եւ իրենց գլուխը կը կրեն *թագը զրեխի*ն: Մարտակոչի համար ունին *փաղ պղլորի*ն եւ զանազան թմբուկներ: Թէեւ կը յիշատակուի պղլորի փողը, բայց անոր գործածութիւնը չկայ վէպին մէջ[55]:

Պղլորի փողին մասին առայժմ կը պակսին շատ տեղեկութիւններ թէ՛ կառուցուածքի եւ թէ՛ կատարողական առանձնայատկութիւններուն վերաբերող: Ուսումնասիրողները յանգած են այն եզրակացութեան, թէ պղլորի փող կը նշանակէ բիւրեղեայ փող: Լեզուաբանական տուեալները ցոյց կու տան թէ նուագարանին անունը կու գայ թրքերէն billorէն, որ կը ծագի արաբերէն billurէն: Երկու բառերը կը նշանակեն «բիւրեղ»: Ուստի, լեզուաբաններն ու երաժշտագէտները կ'եզրակացնեն, որ այս առեղծուածային գործիքը բիւրեղէ պատրաստուած եղջերափող մը եղած է, բայց՝ անծանօթ կը մնան յատկութիւնները այս արտասովոր փողին: Բաղդատելով զայն

---

[53] Նոյն:

[54] Տե՛ս՝ ծնթ. 2:

[55] *Սասունցի Դաւիթ, հայկական ժողովրդական էպոս (համահաւաք)*, Հայպետհրատ, Երեւան, 1939, էջ 261:

դիցաբանական ուրիշ վէպերու փողերուն հետ, ենթադրելի է, որ ամփոփէր գերբնական ուժեր, անշուշտ որոշ չափով կապուած իր բիւրեղեայ եւ գերբնական էութեան հետ:

Դաւիթ ելաւ հօր ձին հեծաւ, Իր հօր ջոջ սազ ետու զարկել,	Փչեց իր հօր պղլորի փող, Անգամ մի իր դրան առաջ գընաց, եկաւ[56]:

Դաւիթը այդ փողը փչում է Մելիքի դէմ կռիւ գնալուց առաջ: Փաստօրէն, այստեղ փողահարութիւնը նախորդում է ամենավճռական պահին, դիցավէպի գլխաւոր գործողութեանը, որ է Դաւթի եւ Մելիքի մենամարտը, բարու եւ չարի ամենավճռական կռիւը, որով նուաճուելու է յաղթանակը, փրկութիւնը: Ողջ դիցավէպում սա միակ դրուագն է, ուր խօսւում է այդ փողի կիրառման մասին: Ոչ որսորդութեան, ոչ էլ զանազան կռիւների ժամանակ փողահարութիւն չի նշւում: Այսինքն, այս փողը բացառիկ կարեւոր նպատակի համար է եւ կիրառւում է միայն ամենավճռական պահին: Այս փողահարութիւնը նաեւ աւետում է Դաւթի կատարելութեան հասնելը, լրիւ իր հօր տեղը բռնելը, սրանով է, որ Սասնայ Տան թափուր աթոռը նորից տէր է ստանում եւ Դաւթի մամիկը՝ Միհերի մայր Դեղձուն Ծամը սգից դուրս է գալիս: Այսինքն, ըստ մեր դիցավէպի, փողահարութիւնը ազդարարում է մեծ աւետիսն ու վճռական կռիւը[57]:

ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ՓՈՂ

«Գաբրիէլեան փող» կամ «Գալստեան փող» կը կոչուի այն փողը զոր պիտի հնչեցնէ Գաբրիէլ հրեշտակապետը Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ: Այս գործողութեան հետեւանքով բոլոր մեռեալները յարութիւն պիտի առնեն: Պարզ է, որ ան երկրորդ գործիքը ըլլալով հանդերձ դիցաբանական/առասպելաբանական խումբին մէջ, ռազմական բնոյթ չունի, ուստի առաջին հայեացքով դուրս կը մնայ «պատերազմական փող» հաւաքական իմաստէն: Գաբրիէլեան փողի աղբիւրը քրիստոնէական աւանդութիւններն են, որոնք ոչ մէկ մանրամասնութիւն կը հաղորդեն այս փողին մասին: Այս է պատճառը որ միջնադարեան հայ մանրանկարիչները Գաբրիէլեան փողը նկարելու անորոշութեան առջեւ պատկերած են իրենց միջավայրի այլեւայլ փողեր:

Նկատի ունենալով որ այս փողով ազդանշան մը պիտի տրուի, եւ ազդանշաններ արձակելու համար ընդհանրապէս ռազմաբնոյթ նուագարաններ գործածուած են, հայկական մանրանկարչութեան մէջ կը հանդիպինք Գաբրիէլ հրեշտակապետին՝ ուղիղ երկայն փող, կամ երկծնկանի գալարափող կամ մեծ զուռնա հնչեցնելով, որոնք «պատերազմական փող» հասկացութեան մէջ կ'ընդգրկուին:

[56] Նոյն:

[57] Բրուտեան, էջ 115:



Հրեշտակները (դ) տարատեսակի փողերով (Մատենադարան, ձեռ. 8965, 1675թ.). Գաբրիէլ հրեշտակապետ զուռնա կը հնչեցնէ (Walters Art Museum, Baltimore), ձեռ. W.543, fol. 14r, 1455թ.)

MILITARY HARDWARE *ՓՈՂ- P'OGH* AND *ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՓՈՂ- PATERAZMAKAN P'OGH* IN ANCIENT ARMENIAN LITERATURE

(Summary)

ZAVEN KNIAZIAN (zavenkniasian@yahoo.com.ar)

Ancient Armenian literature is rich in descriptions of military operations, which should not be surprising as the Armenian World has never had a long-lasting peaceful period. Historians' scripts about battles, wars and various conflicts often refer to the use of military equipment. At the same time, there are a lot of images with military themes in Armenian miniatures from different centuries, in which we can see a wealth of hardware of varied shapes.

Each item of hardware had its own name but together they were usually referred to as **"փող- p'ogh"** and **"պատերազմական փող - paterazmakan p'ogh".**

We have been able to conclude:

1) **"paterazmakan p'ogh** (military wind instrument)" is not only the name of an item of hardware but it also has a collective meaning, which includes a variety of at least 10 different items.

2) The name **"p'ogh** (wind instrument)" is usually an abbreviated form of the same name **"paterazmakan p'ogh** (military wind instrument)".

3) The name **"p'ogh** (wind instrument)" is also an abbreviated name of various wind instruments.

4) In some works, the name **"p'ogh"** is related to the "shepherd's flute", which is the case even today. During the period preceding the Armenian Genocide in Van, Sasun, Taron and other provinces, the "shepherd's flute" was in use, and it kept its ancient name **"p'ogh "**.

ARMENIANS AND ORIENTAL CARPETS IN THE LATE OTTOMAN EMPIRE (1890S–1910S)

ARTO TAVUKCIYAN (arto@armenianrugs.com)

ABSTRACT

Criticism of the Armenian contribution to rug weaving and design has often hinged on two related claims: first, that as a Christian nation, Armenians were not influential in the aesthetic design of oriental rugs, and two, that Armenians were not significantly involved in the manufacture and production of such woven artifacts. This paper addresses the second claim by focusing on a period spanning the 1890s to 1910s, generally considered key decades in the manufacture and global circulation of oriental rugs. The paper demonstrates that, contrary to the claim that Armenians were generally absent from the manufacture of oriental rugs, Armenians were significantly involved in every part of the oriental rug economy's value chain, as owners, managers, weavers, labourers, and traders. Violent persecution and pogroms against the Armenians, moreover, made many Armenians dependent on wages earned from oriental rug manufacture.

Rug provenance has always been a cultural issue. Today, however, it has become highly politicized. Turks and Azeris claim Armenians never engaged in carpet weaving, but only carpet trading. Denial of rug culture is a part of an overall strategy of denial of existence. After the 1915 Armenian Genocide, when the Armenians were expelled from their homeland, this view was also supported by leading western rug scholars including the prominent Arthur Upham-Pope, who wrote in 1920, "There is no record nor even any local tradition that weaving was ever carried on in Armenia to any extent...."[1]

Research today shows Upham-Pope's contentions could not be further from the truth. Armenians not only were some of the most dominant weavers in the Empire but they were integral to its growth. "The growth of the overall Ottoman economy and its re-industrialization in the early 20th century and the turning of oriental carpets into a globally sought-after commodity were enmeshed with the expansion of the labour market after anti-Armenian and gendered violence".[2]

For the purposes of this paper, I will confine my focus to the late Ottoman Empire 1890s-1910s. Specifically, I will concentrate on the research by Yaşar

[1] https://www.latimes.com/archives/la-xpm-1988-07-31-re-10523-story.html .

[2] Yaşar Tolga Cora, "The Market as a Means of Post-Violence Recovery: Armenians and Oriental Carpets in the Late Ottoman Empire (c.1890s–1910s)," *International Review of Social History* 66:2021, pp. 217-41.

Tolga Cora, Assistant Professor in the Department of History, Boğaziçi University in Istanbul, in his paper *"The Market as a Means of Post-Violence Recovery: Armenians and Oriental Carpets in the Late Ottoman Empire (c.1890s–1910s)"* and the archives of the Oriental Carpet Manufacturers (OCM), a dominant London-based company involved in the production of, and trade with, Oriental carpets in Eastern Anatolia. The company was founded in 1907 in Istanbul as an amalgamation of numerous existing Levantine carpet companies which were previously in competition with each other.[3]

There were three main reasons for the rapid rise in production of oriental carpets in the late Ottoman Empire and their emergence as a global commodity

1) The expansion of carpet weaving into eastern Anatolia (Armenian Plateau) due to more efficient production methods introduced by multinational foreign enterprises like the OCM in response to growing demand from the European and American markets.

2) The abundance of cheap labour in the Armenian communities of eastern Anatolia created by anti-Armenian violence in the mid-1890s and in 1909. Families had lost their husbands and fathers during numerous pogroms leaving widows and orphans without their main breadwinner and forcing them into the labour market.

3) Market-based efforts by European Missionaries and aid groups and the new Armenian mercantile bourgeoisie who worked to reconstruct the violence-stricken Armenian communities in eastern Anatolia.

Professor Tolga Cora writes:

> We shall see that the increases in production were firmly linked to market-based efforts to reconstruct those communities. Different actors, including local and regional merchant-entrepreneurs and multinational companies as well as individual transnational actors such as missionaries, all began to involve themselves in Armenian communities, both to promote trade in carpets and to offer the production of them as a solution to the post-violence ills. As a result, Armenian women and children in post violence communities became an integral part of the global market in oriental carpets as a vulnerable, organizationally weak but cost-efficient workforce. The whole process was justified in the name of assistance to the needy and was closely associated with changing definitions of the work ethic and morality in the late Ottoman Empire.[4]

---

[3] Antony Wynn, *Three Camels to Smyrna: Times of War and Peace in Turkey, Persia, India, Afghanistan & Nepal 1907–1986. The Story of the Oriental Carpet Manufacturers Company,* Hali Publications, 2008.

[4] Yaşar.



Traditional carpet production centres in the Ottoman Empire and the centres established in the Armenian inhabited districts following mass-violence in the late 19th and early 20th centuries (courtesy of Yaşar Tolga Cora)

THE EXPANSION OF CARPET WEAVING INTO EASTERN ANATOLIA (ARMENIAN PLATEAU)

Rugs were traditionally woven in Anatolia. Surviving carpets have been dated back to the 13th century Seljuk Sultanate of Rum. Their depiction in several Renaissance paintings demonstrates that carpets and rugs were already exported from the 14th century onwards to Western Europe, where they were regarded as highly prestigious luxury goods. The regions around the towns of Konya and Uşak were the traditional centres of carpet manufacturing in

the Ottoman Empire. According to the statistics of the Armenian Apostolic Patriarchate, in 1914 the Armenian population of the province was 24,000. The Greek Orthodox Diocese of Konya consisted of 42 communities with 50,800 Greek Orthodox inhabitants.[5] Until 1870-80, about 75%[6] of all carpets exported to Western Europe were manufactured in these regions. Carpets were woven either by home workers or in small workshops.

With the beginning of the second Industrial Revolution, the number of people in the Western world who could afford to buy oriental rugs increased. As the demand increased by the mid-19th century, Ottoman as well as European and U.S. American trading corporations expanded their commercial activities. European trading companies in Istanbul and Smyrna established their own manufacturing facilities in competition with the traditional Ottoman rug trading organizations based in Uşak.

New carpet-weaving centres emerged in several places in eastern Anatolia in the late 19th century and particularly in the early 20th. There was expansion of carpet weaving into new regions as the result of more efficient production methods introduced by multinational foreign enterprises in response to growing demand from the European and American markets. The largest of these companies was the OCM company, founded by the Spartali (Spartalian) family, who were originally Armenian. The firm was run by the Italian Aliotti family, who had married into them. They employed thousands of weavers all over central and eastern Anatolia. By the end of the two years following its foundation in January 1908, it was employing 100,000 weavers working on 20,000 looms in 27 towns and cities all over Turkey, with some 90% of all Ottoman production in its hands.[7]

OCM provided the materials, such as pre-dyed yarns, and issued detailed instructions about the patterns to be woven according to the buyers' taste and market demand. Working conditions and wages were poor even at that time. Workers in the OCM workshops were working faster and had lower wages compared to the Uşak manufacturers. By around 1910, the export from the traditional carpet-producing regions Konya and Uşak was reduced to merely 10% of the total volume of trade. Therefore, the centre of gravity of production shifted eastwards, away from western Anatolia, and there was unprecedented

---

[5] Ecumenical Patriarchate, *Persecution of the Greeks in Turkey, 1914-1918*, Constantinople [London, printed by the Hesperia Press], 1919, p. 94; https://archive.org/details/persecutionofgre00consrich/page/94/mode/2up?q=Karaman

[6] https://en.wikipedia.org/wiki/Oriental_Carpet_Manufacturers .

[7] Wynn.

growth of the labour force employed in carpet-making in central and eastern regions of the empire.

According to author Antony Wynn of *Three Camels to Smyrna: Times of War and Peace in Turkey, Persia, India, Afghanistan & Nepal 1907–1986. The Story of the Oriental Carpet Manufacturers Company,* the Company employed, almost without exception, Armenian or Greek weavers. Wynn explains in his book, "*The OCM, as it expanded its weaving further and further into Anatolia, employed, almost without exception, Greek or Armenian weavers. The problem was that the Muslims would not allow the company inspectors to enter their houses to check the work on the looms. Since the OCM had given the weavers the wool and had paid them an advance to start work, they had to insist on inspecting the quality. There was no solution other than to employ Christian weavers, who had no such prejudices.*"[8]

Another confirmation of who the weavers were was provided by Bruno Eckart, brother of the Director of Dr. Lepsius' German Orphanage and Carpet Factory, who wrote that in 1915, after the massacre of Armenians in Urfa, the rug production was shut down due to lack of qualified specialists, even though there were thousands of Muslim families living in the city and in the vicinity, among them Kurds, Yuruks, etc. who had also mastered rug-weaving skills.[9]

Yet, this explanation alone, which heavily prioritizes the role of foreign capital in the organization and stimulation of global interest in the trade in oriental carpets during the late 1890s and early 1900s, does not alone completely account for the sudden growth in carpet production. Was it a mere coincidence that newly emerging carpet-weaving cities like Sivas, Kayseri, Urfa, and the region of Cilicia in eastern-central and southern Anatolia were all heavily Armenian-populated regions, all of which were hit by anti-Armenian violence in the late 1890s and early 1900s?

THE ABUNDANCE OF CHEAP LABOUR IN THE ARMENIAN COMMUNITIES OF EASTERN ANATOLIA IN THE MID-1890S AND IN 1909 AND THE ROLE OF VIOLENCE IN THE CREATION OF A VULNERABLE FEMALE LABOUR FORCE AND NEW RELATIONSHIPS OF PRODUCTION

Rugs were the largest export of the Ottoman Empire. After the bankruptcy of the Ottoman Empire in 1875 and the subsequent economic malaise, rug production moved from the historical western Ottoman regions to the east (Armenian Plateau), where companies and aid groups found countless

---

[8] Wynn.

[9] Bruno Eckart, *The Days I Lived in Urfa*, Potsdam, 1922 (translation from German by A. Gasparian, introduction, annotations, editing and publication by, J. Avetisian), Yerevan, 1990, pp. 6, 15, 19, 47.

Armenian widows and orphans who were forced into the labour market as cheap labour due to mass violence which erupted several times due to Anti-Armenian sentiments in the late 19th and early 20th centuries. When, in 1894, the Armenians in the historical Sasun region refused to pay an oppressive tax, Ottoman troops and Kurdish tribesmen killed thousands of Armenians in the region.[10] Another series of mass killings began in the fall of 1895, when Ottoman authorities' suppression of an Armenian demonstration in Constantinople became a massacre.[11] In all, hundreds of thousands of Armenians were killed in massacres between 1894 and 1896, which later came to be known as the Hamidian massacres. Some 20,000 more Armenians were killed in urban riots and pogroms in the *vilayet* of Adana in 1909.[12] The massacres reached Sivas, too, where, according to official Ottoman figures, the violence cost the lives of 599 Armenian men and left 118 wounded, while 800 shops and four khans were plundered.[13] The immediate loss of those 599 men and the incapacity to work of many others directly resulted in many more young women needing to work, greatly accelerating the arrival of women onto the job market. For them, carpet weaving was the most accessible sector.

Carpet production in the late Ottoman Empire developed during the second half of the 19th century in a context of growing trade with Western markets, until, by the turn of the century, carpets had become the empire's leading manufacturing export. Armenian women and children in post-violence communities became an integral part of the global market in oriental carpets as a vulnerable, organizationally weak but cost-efficient workforce. The whole process was justified in the name of assistance to the needy and was closely associated with changing definitions of the work ethic and morality in the late Ottoman Empire.[14]

---

[10] For a detailed study on the issue, see Sdepan Boghossian, *Hayots Tesghasbanutian Badmutiun (History of the Armenian Genocide), Vol. 1*, Yerevan State University Press, Yerevan, 2008, pp. 451-717.

[11] *Ibid.*, pp. 582-90.

[12] Bedross Der Matossian, *The Horrors of Adana: Revolution and Violence in the Early Twentieth Century*, Stanford University Press, Stanford, CA, 2022. For the parliamentary report of these massacres see: Hagop Babiguian, *The Adana Massacres: An Eyewitness Account,* translated and annotated by Dr. A. B. Gureghian, foreword and overview by Dr. A. B. Gureghian, Haigazian University Press, Beirut, 2018.

[13] Ottoman State Archives, Istanbul, Y.EE., quoted in Edip Gölbas, "The Official Conceptualization of the Anti-Armenian Riots of 1895-1897", *Études arméniennes contemporaines,* 10:2018, pp. 33–62, 52.

[14] Yaşar.

Armenian girls weaving carpets in Van 1907 (Houshamadyan.org.)

MARKET-BASED EFFORTS BY EUROPEAN MISSIONARIES AND AID GROUPS AND THE NEW ARMENIAN MERCANTILE BOURGEOISIE WORKED TO RECONSTRUCT THE VIOLENCE-STRICKEN ARMENIAN COMMUNITIES IN ANATOLIA

In the late Ottoman Empire, the oriental carpet sector, which included various actors such as local and regional merchant-entrepreneurs, multinational companies, and missionaries, began to both promote trade and to offer solutions to the ills arising during post-violence reconstruction. What was observed for the period after 1896, and again after 1909, in Anatolia is what Professor Yasar called "disaster capitalism". In the Ottoman case, certainly, unregulated markets and rampant exploitation of human and material resources, coupled with economic and financial weakness, created both the material institutions and discourses for acceptance of the private sector's role in the recovery of post-disaster Armenian communities.[15]

However, craft production was not to be turned into mass production quite so easily as the costs could not be reduced sufficiently for production to be competitive in the world market. It was only in the early 1900s that other economic actors, both Armenian local entrepreneurs and owners of global capital, found it lucrative enough to invest in increased production, for by that time its labour market was overflowing with cheap labour in the form of girls and other survivors of the massacres.

In November 1895, Kesaria (Kayseri/Caesarea) was one of the centres hit by anti-Armenian violence, which, according to missionary reports, killed

[15] Yaşar.

approximately 1000 Armenians there.[16] Just as in Sivas, an immediate problem was provision of means for the survivors to secure their livelihoods, something naturally especially difficult for women and children. In the view of Earl Percy, who visited the town in about 1900, the solution was "the [carpet] industry [...] started after the massacres as a means of relief for the people".[17]

According to a letter published in the Armenian paper *Buzandion* in Constantinople, there were 2000 looms in 1898 and by 1901 one account was putting the number at around 5000 in the entire Keseria region. An Armenian mercantile bourgeoisie was on the rise. We can certainly be sure from various sources that each loom was operated by a young woman as chief weaver and that she had two or three children between the ages of six and ten to assist her.[18]

Name of the entrepreneur	No of looms
Harutyun Gürünlüyan	50
Kizilyan & Kizilyan company	60
Tigran Cakmakliyan and Harutyun Kalpakyan	50
Mkrtich Dökmeciyan	40
Teachers' Savings Association	30
Hagob Balyan	40
Daniel Sarafyan	20
Karabet Martayan	20
Hovhannes Kinaciyan	20
Ruben Yakupyan	20
Nazar Hacikizyan	20
Bedros Ispecerian	20
Beniamin Hamalyan	20
Tigran Kalpakyan	20
Mihran Yepremyan	20

Furthermore, according to Artur Telfeyan in the towns, cities and *vilayets* of Adana, Aintab, Alexandretta, Antioch, Diarbakir, Erzurum, Kayseri, Kharpert, Mersin, Mush, Nakhichevan, Sis, Sivas, Shusi-Karabagh, Van, and Zeitoun more than 50% of the looms were Armenian owned and working.[19]

---

[16] For a detailed study on the matter, see Arshag Alboyadjian, *Badmutiun Hay Gesaryo Deghakragan, Badmagan yev Azkakragan Usumnasirutiun (History of Armenian Gesaria, historic and ethnographic research), Vol. 2*, Catholicosate of the Cilicia Press, Antilias, pp. 1497-508.

[17] Henry A.G. Percy, *Highlands of Asiatic Turkey*, London, 1901, p. 61.

18 Alboyadjian, p. 1500.

[19] Excerpt from Artur Telfeyan's lecture entitled "1860 Gesaria (Kayser) to Los Angeles 2022: Mapping Culture and Sharing Stories." The lecture was given at the Ararat Eskijian Museum, LA, on February 27, 2022

In addition to the local and regional merchant-entrepreneurs, multinational companies and European and American missionaries were active as well.

Humanitarian involvement of the European Powers in the Ottoman Empire actually started as the West's earliest and most universal economic engagement to address a distant suffering, with the massacres, beginning in 1894 and continuing for more than two years, of Armenians in the Ottoman Empire. Observers were talking about 50,000 Armenian orphans below the age of 12 scattered all over Turkey. In a number of countries, "human rights of the Armenians" attracted significant political support. The place and importance of religious groups in this situation was also quite large. The attention that the Armenian massacres found in Germany was from Protestant Christians. These brought the events in Anatolia to the attention of the mainstream Protestant religious press, which eventually joined the cause. As defendants of the movement for Armenian relief in Germany, they organized rallies, took up collections for clinics and orphanages (amassing well over 600,000 marks by January 1897), 'adopted' children and paid the salaries of doctors and nurses.

One German, Dr. Johannes Lepsius, had been intimately familiar for many years with Urfa, the destination to which the inhabitants of Mamuret-ul-Aziz were to be sent. After the large-scale massacres of 1894 to 1896, in which the Turkish Sultan, Abdul Hamid, had thousands of his Armenian subjects killed, the Protestant vicar had built up a relief organization in Urfa by opening up a carpet factory which provided work for Armenian widows and a hospital that was headed by the Swiss deacon, Jakob Künzler.

However, Dr. Lepsius's carpet factory was not the only one. Other missionaries from Europe and the U.S. made similar attempts, although none as successfully as the German enterprise in Urfa.[20]

After the Armenian Massacres in Cilicia in September 1910, even the Armenian Patriarchate and the Administration of the Armenian Community in Constantinople got into the act and created a Committee for Widow Relief and Care (Ayriakhnam Handznajoghov) and sent it to the violence-stricken region. Its primary goal was to create jobs for widows by which they could support themselves and their fatherless children.[21] In this crisis, although it was the legitimate guardian of the Armenian orphans, the Armenian Patriarchate was

---

(https://www.youtube.com/watch?v=M7_8IvRII4w). Originally from Istanbul, the Telfeyan family moved to Vienna and established a rug gallery, *Klassiche Teppiche & Kelims - Georg and Aznif* (http://www.teppichundkultur.com/). Telfeyan is the vice president of the Armenian Rug Society.

[20] Yaşar.

[21] Yaşar.

weak in many ways, especially due to the catastrophic socio-economic situation of the Armenian population in the area. Yet, this venture required significant financial resources and those of the local charity organizations of the Armenian Patriarchate and community were insufficient in the face of the pressing needs in afflicted areas. Although the criticisms of the activity of the missionaries were strong, the patriarchate was actually dependent on the charities of these adversaries for the survival of the remnants of the massacres.[22] Still, the Patriarchate managed to establish around a dozen orphanages, thanks to the benevolent contributions of the Armenians of Istanbul and the areas spared from violence.



The weaving section of the "Industry House" of the German Orient Mission in Urfa. The carpet weaving section would soon begin to act independently from the Mission and expand its activities. (courtesy of Yaşar Tolga Cora)

The focus of the education in all the orphanages was shaped by the emphasis on industrial training. This was a new method of relief whose introduction was forced by the massacres of 1895-96 to aid the poor, especially the widows and orphans. In fact, the American missionaries were always underlining the importance of industrial self-help, instead of outright charity. In the words of Cyrus Hamlin, famous founder of the Robert College of Istanbul, "the object of the missionary must always be to help the needy to help themselves." The missionaries claimed that they relied on industrial work in order "not to tread on the self-respect of the people by unnecessary free distribution".[23]

Although the matter of financial gain from the workshops was declared as secondary, in a short while the missionaries were able to make local trade

[22] Nazan Maksudyan, *"Being saved to serve": Armenian Orphans of 1894-1896 and interested relief in Missionary Orphanages*, pp. 51-2.

[23] Maksudyan, p. 62.

agreements. Girls' industrial branches first met certain needs of the orphanages and the schools, such as cloth for the uniforms of the children, mattresses for their beds and towels. They accrued some profit by producing for local needs.[24] In Urfa, Dr. Lepsius established a company independent from the missionaries thereby relieving them of the financial pressure of supporting the factory. The new carpet company was called Deutsche Orient-Handels und Industrie-Gesellschaft (DOHIG); the Department of Needlework was busy meeting demands and even concluded agreements with entrepreneurs from abroad to export their carpets and entered the international market.[25]

CONCLUSION

This paper has aimed to demonstrate that, contrary to the claim that Armenians were not significantly involved in the weaving and manufacture of Oriental rugs, Armenians played a critical role in the rug economy at every level of the value chain: as owners, managers, weavers, labourers, and traders. I have sought to show this, first, by focusing on the late Ottoman period due to its critical influence in establishing initial and (stubbornly) persistent western narratives regarding the symbolic and material economy of rug exchange, and second, by demonstrating the extensive involvement of Armenians in the material processes of rug manufacture.

In this way, three factors were critical in ensuring the unprecedented increases in production of oriental carpets in the late Ottoman Empire, leading to their emergence as a global commodity: (1) Significant capital investment in east Anatolia (Armenian *vilayets*) which led to technological and organizational efficiencies; (2) the emergence of a new class of Armenian merchant-entrepreneur based in the empire's semi-peripheral regions and (3) the local presence of both European and American Christian aid groups which operated various forms of market based poor relief.

While these three factors were crucial pre-conditions in the expansion of the oriental rug industry during the late Ottoman period, without the catalysing presence of a significant labour pool of Armenian origin, the presence of the above conditions would have been insufficient to aid in the rise in production and circulation of oriental rugs. To this end, the size and availability of Armenian labour was greatly increased by numerous anti-Armenian pogroms during the late Ottoman period, forcing newly widowed women and orphaned children into a wage-labour relationship as their families' principal breadwinners were lost to violent persecution.

---

[24] Maksudyan, p. 64.

[25] Maksudyan, p. 63. For further reading on Urfa needlework, see: Hrazdan Tokmajian, *Ourfa Needlework, Part A, Bruno Ecard's Collection*, Aleppo, 2014.

While more research is necessary to further specify the exact numbers and composition of local labour markets in post-pogrom settings, one fact should be clear: claims that Armenians were never involved in the weaving of oriental rugs should be treated with a great deal of scepticism, if not as outrightly false. Not only were Armenians some of the most dominant weavers in the late Ottoman Empire, but they were also, despite the injustice perpetrated by the Empire against them, instrumental, at every level of the value chain, in the re-industrialization of the Empire until its final demise.

ՀԱՅԵՐԸ ԵՒ ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ, 1890–1910ԱԿԱՆՆԵՐՈՒՆ

(ԱՄՓՈՓՈՒՄ)

ԱՐԹՕ ԹԱՒՈՒՔՃԵԱՆ (arto@armenianrugs.com)

Յօդուածը կը զարգացնէ փրոֆեսոր Եաշար Թոլկա Քորայի վերջերս լոյս ընծայած տեսական յօդուածը եւ կը հարստացնէ զայն նոր աղբիւրներով, փաստարկներով ու երեսակներով:

Քորա իր տեսական յօդուածին մէջ (“The Market as a Means of Post-Violence Recovery: Armenians and Oriental Carpets in the Late Ottoman Empire (c.1890s–1910s)”), կը հաւաստէ թէ նիւթապէս խոցելի եւ խեղճ հաւաքականութիւններու համար գորգագործութիւնը էական աղբիւր մը եղած է եկամուտի եւ տնտեսական վերականգնումի: Այս վարկածին իբրեւ ապացոյց, Քորա կը բերէ օրինակը մանաւանդ համիտեան ջարդերու հետեւանքով արեւմտահայ ընտանիքներու տնտեսական խղճալի վիճակին, երբ այդ ընտանիքներուն այրերը՝ եկամտաբեր անձը, սպանուած էր ու ընտանիքը զրկուած՝ նիւթական աղբիւրէ, մատնուած անճարութեան: Քորա կը հաւաստէ, թէ այս պայմաններուն մէջ արեւմտեան միսիոնարները օժանդակեցին այրի հայ ընտանիքներուն որ լծուին գորգագործութեան, օգնեցին զարգացնել այդ արհեստը, որուն հետեւանքով ալ Օսմանեան կայսրութեան գորգագործական հակակշիռն ու ծանրութիւնը անցան արեւմտեան միքանի նահանգներէ արեւելեան նահանգներ, մանաւանդ հայկական վեց վիլայէթներ ու Կիլիկիա:

Թաւուքճեան կը զարգացնէ Քորայի այս գաղափարը, կը բերէ յաւելեալ ապացոյցներ Արշակ Ալպոյաճեանի եւ այլոց աշխատասիրութիւններէն, առաւել հիմնաւորելու համար զայն: Ան կը վիճարկէ թէ այրի հայ ընտանիքները մեծ կարիքն ունէին վերապրելու եւ գոյատեւելու: Այս պատճառով ալ անոնք լծուեցան աժան ձեռավարձքով գորգագործութեան: Ասոր հետեւանքով այրի հայ ընտանիքներու գորգերը մրցունակ դարձան՝ նիւթապէս: Պէտք է աւելցնել նաեւ, թէ գորգագործութեամբ բանեցան ոչ միայն այրի կանանց նուրբ ձեռքերը, այլեւ որբ մնացած աղջիկներու փոքր մատները՝ որով այս գորգերը հիւսուեցան աւելի խիտ ու դարձան որակապէս առաւել մրցունակ: Միւս կողմէ, բացատրելով թէ օտար մարդուն արգիլուած էր թուրք տուն մտնել եւ շփուիլ թուրք կնոջ հետ, Թաւուքճեան կը պնդէ թէ հետեւաբար թուրք կինը չէր կրնար գորգ գործել, մինչ հայ կինը չունէր գորգագործութեան խնդրով օտար մարդ ընդունելու արգելքը:

Ուսումնասիրութիւնը յաւելեալ թափ կու տայ մանաւանդ վերջին տասնամեակներուն 'օսմանեան' գորգերը 'թրքական' վերակոչելու հակագիտական համակարգուած ճիգերու հերքումին:

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԸ ԲԱՔՈՒԻ ՆԱՖԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԾՆԵՐ

(ԺԹ. դարի երկրորդ կէս–Ի. դարասկիզբ)[1]

ԳԷՈՐԳ ՍՏԵՓԱՆԵԱՆ (sasun-07@mail.ru)

ՄՈՒՏՔ

Յետխորհրդային Ադրբեջանում պետական մակարդակով տարուող հակահայ քարոզչութեան եւ նոր թափ ստացած պատմաշինարարութեան պայմաններում ադրբեջանցի պատմաբանները անցել են լայնածաւալ տեղեկատուական հետեւողական աւելի մեծ յարձակման: Ինչպէս իրաւամբ գրում է ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը. «*Անկախութեան հռչակումից յետոյ՝ ալիեւեան իշխանութեան անմիջական ուղղորդմամբ, ադրբեջանական պատմագրութիւնը յայտնուեց ամէն մի գիտական վերահսկողութիւնից դուրս եւ իր անսահման երեւակայութեամբ գերազանցեց անգամ թուրքական պատմագրութեանը*»[2]:

Բաքու քաղաքի տարբեր ժամանակաշրջանների պատմութեանը նուիրուած աշխատութիւններում ադրբեջանցի պատմաբանները (Ս. Աշուրբէյլի[3], Ֆ. Թաղիեւ[4] եւ այլք) աղբիւրների աղաւաղման ու կեղծման հակագիտական մօտեցումով, հետեւողականօրէն քօղարկել են Ապշերոնեան Թերակղզում, մասնաւորապէս՝ Բաքւում հայերի հնաբնակութիւնը եւ մշակութակերտ գործունէութիւնը փաստող հայ եւ օտար աղբիւրների տեղեկութիւնները[5]: Ընդսմին, «ադրբեջանցի ժողովրդի» պատմութիւնը հնացնելու մտասե-

---

[1] Հետազօտութիւնն իրականացուել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտութեան կոմիտէի տրամադրած ֆինանսաւորմամբ՝ 21T-6A163 ծածկագրով գիտական թեմայի շրջանակում:

[2] Ա. Մելքոնեան, «Պատմութեան կեղծարարութեան թուրք-ադրբեջանական պատմագրութեան մեթոդաբանական հիմքը», *Պատմութիւն եւ մշակոյթ. ընդդէմ կեղծիքի եւ ուրնձգութեան: Հանրապետական գիտաժողովի հիմնադրոյթներ (4-6 Մայիսի)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2011, էջ 13:

[3] С. Ашурбейли, *Очерк истории средневекового Баку (VIII-начало XIX вв.)* (Ակնարկ միջնադարեան Բաքուի պատմութիւնից), Ադր. ԽՍՀ ԳԱ հրատ., Բաքու, 1964. նոյնի՝ *История города Баку. Период средневековья* (Բաքու քաղաքի պատմութիւն. միջանադարեան ժամանակաշրջան), «Ազերնեշր», Բաքու, 1992:

[4] Ф. Тагиев, *История города Баку в первой половине XIX веке (1806-1859)* (Բաքու քաղաքի ԺԹ. դարի առաջին կէսի պատմութիւնը), «ԷԼՄ», Բաքու, 1999:

[5] Տեղին է նշել, որ ադրբեջանցի պատմակեղծարարներից ետ չեն մնում նաեւ ադրբեջանամէտ գրչակները: Ինչպէս, օրինակ, 2005ից Բաքւում բնակութիւն հաստատած մոսկուացի լրագրող Օքսաննա Բուլանովան «О “вкладе” армян в развитие нефтяной промышленности Баку» (Բաքուի նաւթարդիւնաբերութեան զարգացման գործում հայերի «աւանդի» մասին) էլեկտրոնային յօդուածում կեղծելով պատմական հաւաստի փաստերը, միտումնաւոր կերպով լռութեան է մատնում հայ առեւտրաարդիւնաբերողների, մասնաւորապէս արցախահայերի ունեցած

ւեռումով «ադրբեջանցիներ», «ադրբեջանական ցեղեր» կամ «ադրբեջանական ռասա» փնտռելու նպատակով շարունակաբար իւրացրել են Բաքու քաղաքի էթնօմշակութային եւ քաղաքական պատմութիւնը: Մինչդեռ քաջ յայտնի է, որ Բաքուն Ի. դարասկզբի ծնունդ «Ազերբայջան»[6] կազմաւորման վարչական կենտրոն է դարձել 1918 Սեպտեմբերի 15ից յետոյ, երբ թուրքմուսաւաթական սուիններով բռնազաւթուեց քաղաքը եւ այն նուիրաբերուեց Բաքուի էթնօհոգեւոր ակունքների, քաղաքաշինութեան եւ առհասարակ քաղաքակրթական գործընթացների հետ բացարձակապէս որեւէ աղերս չունեցող, «Ազերբայջան» երկրանունը որպէս էթնօնիմ սեփականելու

նշանակալի աւանդը Բաքուի նաւթարդիւնաբերութեան սկզբնաւորման եւ զարգացման գործում (https://azerhistory.com/?p=10963):

[6] Արեւելեան Այսրկովկասում երբեւէ գոյութիւն չի ունեցել «Ադրբեջան» անուամբ որեւէ աշխարհագրական վայր կամ պետութիւն: Արտաշէս Աբեղեանի դիպուկ բնորոշմամբ՝ «*Ադրբէջան եւ ադրբէջանցի անունով երկիր ու ժողովուրդ գոյութիւն չունէին պատերազմից* (առաջին աշխարհամարտից - Գ.Ս.) *առաջ: Ռուսական հին վիճակագրութիւնը գիտէր միայն «Արեւելեան Անդրկովկաս», «Բագուի նահանգ» եւն., փոխարինելով նոյնանուն խանութիւններին՝ պարսկական տիրապետութեան տակ: Այդ երկրամասի մեծամասնութիւն կազմող ցեղն էլ հին վիճակագրութիւններում թաթար եւ կամ պարզապէս մահմեդական յորջորջումով էին յայտնի*» (Արտ. Աբեղեան, «Մենք եւ մեր հարեւանները (ազգային քաղաքականութեան խնդիրներ)», *Հայրենիք*, Պոստոն, Զ. տարի, Մայիս, 7:1928, էջ 135): 1918 Մայիսի 26ին՝ Անդրկովկասեան Սէյմի լուծարումից յետոյ, երբ կովկասեան թաթարների «ազգային» խորհուրդը (նախագահ՝ Մամէդ Էմին Ռասուլզադէ) երիտթուրքերի թելադրանքով Մայիսի 28ին Թիֆլիսում հռչակեց արհեստածին նոր «պետութեան» ստեղծումը, նպատակ ունենալով նոյն անուան միջոցով յաւակնել Պարսկաստանի հիւսիսարեւմտեան պատմական Ատրպատական-Ազարբայջան երկրամասին, հակառակ Պարսկաստանի բողոքների այն յորջորջուեց «Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետութիւն» (յետագայում՝ Ադրբեջանական ԽՍՀ, ներկայումս՝ Ադրբեջանական Հանրապետութիւն): Մանրամասն տե՛ս՝ В. Бартольд, *Место прикаспийских областей в истории мусульман-ского мира, Сочинение* (Մերձկասպեան շրջանների տեղը մահմեդական աշխարհի պատմութեան մէջ. ծողոածու), *հ. II, մաս I,* Մոսկուա, 1963, Մոսկուա, 1963, էջ 703. նաեւ՝ Էնայէթոլլահ Ռեզա, *Ազարբայջան եւ Առան (Կովկասեան Ալբանիա)*, «Փիւնիկ», Երեւան, 1994, էջ 151-52. նաեւ՝ T. Swietochowski, *Russian Azerbaijan. 1905-1920. The Shaping of National Identity in a Muslim Community*, Cambridge University Press, Cambridge,1985, էջ 129. նաեւ՝ Գ. Ասատրեան, Ն. Գէորգեան, *Ադրբեջան. իւրացման սկզբունքը եւ իրանական աշխարհը*, «Գիտելիք», Երեւան, 1990. նաեւ՝ R. Galichian, *The Invention of History. Azerbaijan, Armenia and the Showcasing of Imagination* (Second, revised and expanded edition), London/Yerevan, 2010, էջ 35. նաեւ՝ Կարէն Խանլարեան, «'Ադրբեջան' աշխարհագրական հասկացութեան սահմանումները օսմանեան քարտէզներում, հանրագիտարանային նշանակութեան հրատարակութիւններում եւ դասագրքերում», *Վէմ*, 4(40):2012, էջ 145-60):

հնարքով 1930ականների վերջերից նոր միայն «ադրբեջանցի» յորջորջուած եւ ցայսօր էթնիկ ինքնութեան եւ պատկանելութեան փնտռտուքի մէջ խարխափող անդրալթայեան տափաստաններից արշաւած վաչկատուն թիւրք-օղուզական ցեղերի յետնորդներին՝ կովկասեան թաթարներին: Իսկ վերջիններս Բաքւում «ինքնահաստատուել» են տեղաբնիկ ժողովուրդների (հայեր, թաթեր, թալիշներ, լեզգիներ եւն.) դէմ վարած ցեղասպանական քաղաքականութեան, էթնիկ զտումների, ուծացման, քաղաքակրթական արժէքների կողոպտման ու ոչնչացման միջոցով:

ՀԱՅԷԹՆԻԿ ՏԱՐՐԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Վաղ ժամանակներից Հայաստանը սերտ յարաբերութիւնների մէջ է գտնուել Կուր գետով սահմանակից Բուն Աղուանքի հետ[7]: Պատմական հաւաստի յիշատակութիւնները վկայում են, որ Արեւելեան Այսրկովկասում՝ Կուրի դաշտավայրից մինչեւ Ապշերոն Թերակղզի ընկած տարէթնիկ տարածքում վաղ ժամանակներից բնակուել են ոչ միայն աղուաններ[8], այլեւ որոշակի հայկական էթնիկ տարր[9], որն ուրոյն դերակատարութիւն է ունե-

[7] Բուն Աղուանքի աշխարհագրական սահմանների եւ առընթեր հարցերի մանրամասն քննութիւնը տե՛ս՝ А. А Акопян, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках* (Ալբանիա-Աղուանքը յունա-լատինական եւ հին հայկական աղբիւրներում), Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1987. նաեւ՝ Հ. Սվազեան, *Աղուանից Աշխարհի պատմութիւն (հնագոյն շրջանից VIII դարը ներառեալ)*, ՀՀ ԳԱԱ հրատ., Երեւան, 2006. նաեւ՝ Ա. Վարդանեան, *Աղուանքի պատմաաշխարհագրական քննութիւն*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2013. նաեւ՝ Ա. Յակոբեան, *Արքայատոհմերն ու իշխանատոհմերը Բուն Աղուանքում եւ Հայոց Արեւելից կողմանքում անտիկից մինչեւ ԺԳ. դար*, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2020:

[8] Ըստ Ստրաբոնի՝ Բուն Աղուանքում ապրել են 26 տարալեզու ցեղեր (Страбон, *География*, пер., статья н комментарии Г. А. Стратановского, (Աշխարհագրութիւն), Մոսկուա, 1964, գիրք. XI, գլուխ. IV, § 6, էջ 476): Բուն Աղուանքի թագաւորութեան գոյութեան ընթացքում (Ք.ա. Ա.- Ք.ե. Ե. դդ.) նրա կազմի մէջ մտած ցեղերի էթնոհամախմբման գործընթացի թուլութեան հետեւանքով Կուրի ստորին հոսանքի ձախափնեակում այդպէս էլ չձեւաւորուեց «աղուան» էթնոս՝ միասնական լեզուով, մշակոյթով, ինքնագիտակցութեամբ եւ, հետեւաբար, ինքնանուանմամբ: Հարցի մանրամասն քննութիւնը տե՛ս՝ Акопян, *Албания-Алуанк*, էջ 148, 273. նաեւ՝ Սվազեան, *Աղուանից աշխարհի պատմութիւն*, էջ 84:

[9] Հ. Գալստեան, Ա. Յակոբեան, «Էթնալեզուական գործընթացները Բուն Աղուանքում» (Հ. Գալստեան, *Յօդուածներ, յուշագրութիւններ, հարցազրոյցներ (ժողովածու)*, կազմ.՝ Յ. Մարութեան, հրատ. Նոյեան տապան, Երեւան, 2003, էջ 91-92):

ցել երկրամասի մշակութային եւ քաղաքական զարգացումներում[10]: Կուրի ձախափնեակում եւ մերձկասպեան շրջաններում հայ էթնիկ տարրի վաղեմութիւնը փաստող բազմաթիւ ապացոյցներ կան հայկական աղբիւրներում: Օրինակ, ԺԸ. դարի պատմագիր կաթողիկոս Սիմէոն Ա. Երեւանցին իր յիշատակարանում գրում է. «*Իսկ բազմութիւնք հայալեզու եւ հայակրօն ժողովրդոցն, որք այժմ գոն ի յերկիրն Աղուանից, հայք են ի բնէ*»[11]: Այդ իմաստով յատկապէս ակնառու է կովկասագէտ Եու. Գագեմէյստէրի տեղեկութիւնը. «*Նախկին Կասպիական մարզի ամբողջ բնակչութիւնից իրենց նախաբնակութիւնը կարող են ապացուցել միայն հայերն ու ուդիները*»[12]: Հրաչեայ Աճառեանը, բարձր գնահատելով հայոց քաղաքակրթական նշանակութիւնը երկրամասում, գրել է. «*Աղուանից երկրին մէջ կը գտնուէին հայկական ծագում ունեցող ցեղեր... Ասոնք այնպէս ուժեղ էին եւ այնպէս հաստատուն կերպով տեղաւորուած երկրին մէջ, որ ոչ թէ միայն իրենց ինքնուրոյնութիւնը կորցրած չէին, այլ եւ ընդհակառակը, զանազան յաջող հանգամանքներու պատճառաւ... ազդեր էին երկրի վրայ...*»[13]: Աղբիւրները փաստում են, որ Կուրի ձախափնեակի քաղաքակրթական զարգացումներում հայկական ազդեցութիւնն առաւելապէս դրսեւորուել է Մեծ Հայքի հիւսիս-արեւելեան՝ Արցախ եւ Ուտիք նահանգներից[14]:

Որպէս երկրամասի տեղաբնակ եւ մշակութակերտ ժողովուրդ, հայերը մասնակցեցին այդ տարածաշրջանի հասարակական-քաղաքական, ընկերատնտեսական, կրթամշակութային կեանքին ստեղծելով հարուստ պատ-

---

[10] Բաքուի նահանգի հայութեան պատմութեան մանրամասն քննութիւնը տե՛ս՝ Գ. Ստեփանեան, *Բաքուի նահանգի հայութիւնը XIX դարի երկրորդ կէսին (պատմա-ժողովրդագրական ուսումնասիրութիւն)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2010. նաեւ նոյնի՝ *Armenians of Baku Province in the Second Half of the 19th Century (Historical-Demographic Study)*, «Լուսակն», Yerevan, 2013:

[11] *Դիւան հայոց պատմութեան, Գ գիրք, մասն Բ, Սիմէոն կաթուղիկոսի յիշատակարանը*, հրատ.՝ Գիւտ քահանայ Աղանեանց, տպ. Մ. Շարաձէ, Թիֆլիս, 1894, էջ 417-18:

[12] Ю. Гагемейстер, "Хозяйственный очерк Закавказскаго края: народонаселение", *Сборник газеты «Кавказ»*, (Այսրկովկասի տարածքի տնտեսական ուրուագիծ»՝ *Ազգաբնակչութիւն «Կովկաս» թերթի ժողվածու*), հրատ. О. Ն. Կոնստանտինով, Թիֆլիս, 1847, էջ 58):

[13] Հ. Աճառեան, *Հայ գաղթականութեան պատմութիւն*, «Զանգակ-97», Երեւան, 2002, էջ 44:

[14] Տե՛ս՝ Գ. Ատեփանեան, «Արցախահայերի քաղաքակրթական աւանդը Շիրվանի եւ Ապշերոնի զարգացման գործում (համառօտ ակնարկ)», *Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարեանի 90ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2019, էջ 26-57:

մութիւն[15]: Պատմական աղբիւրները վկայում են, որ միջնադարում երկրամասի ողջ տարածքում՝ Կուրից մինչեւ Կասպից ծով, բնակւում էին մեծ թուով հայեր. հայաբնակ բնակավայրերի թիւը հասնում էր աւելի քան 200ի[16]:

Հայաբնակ բնակավայրեր են եղել նաեւ Ապշերոնեան Թերակղզում, որտեղ հայերն ունեցել են իրենց պաշտամունքային օջախները[17]: Թերակղզում հայաբնակ գիւղեր էին Բալախանը, Սաբունչին, Մաշթաղան, Շաղանը, Սուրախանին, Բուզովնան եւ Մարդաքեանը[18]: *Մշակ* թերթի խմբագիր

---

[15] Կուրի ձախափնեակում հայաբնակ գիւղերի մշակութակերտ գործունէութեան անվիճելի վկայութիւններն են հայ ճարտարապետութեան յօրինուածքներով կառուցուած բազմաթիւ եկեղեցիները, վանքերը (Քիշի Ս. Եղիշա Առաքեալ, Ճալէթի Ս. Աստուածածին, Սաղիանի Ս. Ստեփաննոս Նախավկայ, Մէյսարիի Ս. Աստուածածին) եւ մատուռները, հնավայրերի հայերէն բազմաբնոյթ արձանագրութիւններ ունեցող հարիւրաւոր խաչքարերն ու տապանաքարերը, որոնցով հարուստ են Նիժ, Վարդաշէն, Ճալէթ, Ամուրաւան, Գանձակ, Ղալակա, Վանք, Ռուշանաշէն, Հնղար, Սաղիան, Մատրասա եւ այլ գիւղերի գերեզմանատները (Ս. Կարապետեան, *Բուն Աղուանքի հայերէն վիմագրերը*, «Գիտութիւն», Երեւան, 1997): Պատմական բացառիկ արժէք ունեն նաեւ երկրամասի տասնեակ գրչօջախներում (Բաքու, Շամախի, Սաղիան, Մէյսարի, Ճալէթ, Մատրասա եւն.) ԺԴ.-ԺԸ. դարերում ընդօրինակուած հայերէն ձեռագիր բազմաթիւ մատեանները (Աւետարաններ, սաղմոսարաններ, քարոզգրքեր, ճաշոցներ, եկեղեցական-ծիսական այլ ժողովածուներ՝ մաշտոցներ, ժամագրքեր, խորհրդատետրեր եւն.) (Օ. Եգանեան, Մեսրոպ արք. Սմբատեանի «Նկարագիր Շամախւոյ թեմի' գրքում յիշատակուած ձեռագրերը», *Էջմիածին*, Ա:1970, էջ 45-48. նաեւ նոյնի՝ *Աշխատութիւններ*, հրատ. պատրաստեց՝ Գ. Տէրվարդանեան, «Նայիրի», հրատ., Երեւան, 2014, էջ 72-75): Երկրամասի գրչութեան կենտրոններում ոչ միայն ընդօրինակուել են մատեաններ, այլեւ գրատներում պահուել, կորստից փրկուել եւ մեզ են հասել այլ վայրերում (Սպահան, Թիֆլիս, Բաբերդ, Արցախ, Գողթն, Նոր Ջուղա, Սիւնիք, Մոկս, Կաֆա եւն.) ԺԴ.-ԺԹ. դդ. ընդօրինակուած, նուիրատուութիւնների կամ այլ ճանապարհներով ձեռք բերուած մեծաքանակ արժէքաւոր ձեռագրեր, որոնց մի մասն այժմ պահպանւում է Մաշտոցեան Մատենադարանում եւ Նոր Ջուղայի Ս. Ամէնափրկիչ վանքի գրատանը (Գ. Ստեփանեան, «Շամախու հայոց թեմի գրչութեան այլ վայրերում գրչագրուած եկեղեցապատկան եւ վանքապատկան մատեանները (XIV-XIX դդ.)», *Էջմիածին*, ԺԲ:2005, էջ 67-73):

[16] Ս. Կարապետեան, «Շամախու գաւառի գիւղերի պատմութիւնից», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 2:1989, էջ 57:

[17] G. Stepanyan, "On the History of the Armenian Sancturies of Absheron Peninsula (an overview)", *Բանբեր հայագիտութեան*, 1:2021, էջ 5-32:

[18] Մանրամասն տե՛ս՝ Գ. Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան պատմութիւնը (պատմաժողովրդագրական ուսումնասիրութիւն)*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2011, էջ 30-31: Բաքուի շրջակայքում գոյութիւն ունեցած հայկական գիւղական համայնքների մասին ուշագրաւ տեղեկութիւն է հաղորդում ԺԵ. դարասկզբի տեղացի արաբ աշխարհագրագէտ եւ ճանապարհորդ Աբդ Ալ-Հաշիդ Ալ-Բաքուվին՝ աւանդաբար նրանց բնակիչներին կոչելով քրիստոնեաներ: «*Բաքուի... մերձակայքում*,- գրում է Բաքուվին,- *կան շատ գիւղեր եւ իւրաքանչիւրն ու-*

Ալեքսանդր Քալանթարեանը «Նամակ Բուզովնայից» յօդուածում գրում էր, որ այդ գիւղերը վաղ ժամանակներից բնակեցուած են եղել հայերով: Յօդուածագիրը տեղեկացնում է նաեւ Բալախանի եւ Բուզովնա գիւղերի անհետացած եկեղեցիների եւ այդ տարածքում հանդիպող հայկական զանազան գերեզմանաքարերի մասին: Ըստ նրա՝ հայ կնոջ մի գերեզմանաքարի թուագրումից պարզւում է, որ կինը մահացել է մօտ 400 տարի առաջ: «*Պէտք է նկատել*,- գրում է Քալանթարեանը,- *որ այդ գիւղերը առաջուց (180-200 տարի սրանից առաջ) բնակեցուած են եղել հայերով: Դրա ապացոյց կարող են համարուել եկեղեցիները թէ ամբողջ (Բուզովնայում) թէ անհետացած (Բալախանում) եւ զանազան գերեզմանաքարերը որոնցից մէկը մի հայ կնկայ է, որ մօտ 400 տարի սրանից յառաջ մեռած է եղել*»[19]:

Բաքու. Ի. դարասկիզբ, Նիկոլաեւեան փողոց: Աջից՝ քաղաքային վարչութեան շէնքի ճակատային մասը. ճարտ.՝ Գ. Տէրմիքէլեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ ԴԷՊԻ ԿՈՒՐԻ ՁԱԽԱՓՆԵԱԿ

ԺԸ. դարի վերջերին Կուրի ձախափնեակում եւ մերձկասպեան շրջաններում տեղաբնակ հայութեան թիւը զգալիօրէն աւելացաւ Արցախից կատարուած արտագաղթերի հետեւանքով: Իրանի Աղա Մուհամմադ շահի՝ 1795 եւ 1797ի արշաւանքների ու աւարառութիւնների հետեւանքով, երբ մեծապէս քայքայուեց Արցախի տնտեսութիւնը, արշաւանքների պատճառած

նի ամրացուած միջնաբերդ՝ ամրապինդ պատերով: Այդ գիւղերի բոլոր բնակիչները քրիստոնեաներ են (իմա՝ հայեր - Գ.Ս.)...» (Абд ар-Рашид ал-Бакуви, Китаб талхис ад-асар ва аджа'иб ал-малик ал-Кахар ("Сокращение [книги о] 'Памятниках' и чудеса царя могучего", Издание текста, перевод, предсловие, примечания и приложения З. Буниатова (Համառօտ [գրքերը] «Յուշարձանների» եւ հզօր թագաւորի հրաշքների մասին, գրոյթի թարգմանութեան, առաջաբանի, ծանօթագրութիւնների եւ յաւելուածների հրատ.՝ Զ. Բունիաթով), Մոսկուա, 1971, էջ 89-90): Հարկ է նշել, որ աշխատութեան հրատարակիչ ադրբեջանցի «պատմաբան» Բունիաթովը, որին յատուկ է իրեն անցանկալի փաստերի կեղծումն ու աղաւաղումը, կասկածի տակ դնելով այդ հաղորդման հաւաստիութիւնը, յանիրաւի միջամտել է պատմիչի շարադրանքին եւ բնօրինակի այդ հատուածում դրել հարցական նշան:

[19] Աղ. Քալանթարեանց, «Նամակ Բուզովնայից», *Մշակ*, 1874, Սեպտեմբերի 19:

չարիքներին միանում են նաեւ սովն ու համաճարակները: Յուսահատութեան եզրին հասած արցախահայերի մի մասը գաղթեց Շիրվան[20], Վրաստանում եւ Ռուսաստանում[21]: Մակար եպս. Բարխուտարեանցն անդրադառնալով Արցախից տեղի ունեցած գաղթին, ցաւով գրել է.

> Ցրուած եւ գերուած հայեր... միլիոնաւոր հայ բնակիչներով հարուստ Արցախն իսպառ դատարկուած:... դատարկուած են Գարդման, Փառիսոս, Քաւս կամ Քուստի, Ջաւէ, Ջրաբերդ, Խաչէն, Վարանդայ եւ Դիզակ գաւառներն: Ի՞նչ եղան սոցա հայ բնակիչներն: Մի մասն կերակուր եղաւ 1798-1799 թուի սովին եւ ժանտախտին. մի մասն գերի գնաց Պարսկաստան, մի մասն գաղթեց Տաճկահայաստան, մի մասն Պարսկաստան, մի մասն Շաքի եւ Շամախի, մի մասն Կախէթ եւ Վրաստան, մի մասն Բագու, Ղուբա, Դարբանդ եւ Ռուսիա[22]:

Շիրվանում հաստատուած արցախահայերն բնակուեցին նախկինում հայաբնակ եւ այդմ դատարկուած կամ մասամբ բնակեցուած գիւղերը, որտեղ, գրեթէ առանց բացառութեան, պահպանուել էին բնիկ հայերից մնացած բազմաթիւ եկեղեցիներ, արձանագիր խաչքարերով ու տապանաքարերով գերեզմանոցներ: Գիւղերի մի մասը վերականգնուեց նոյն տեղում եւ շատ դէպքերում նոյն անուան տակ շարունակեց պահպանել իր գոյութիւնը[23]: Արցախահայերը Շաքի-Շիրվան գօտում հիմնադրեցին շուրջ հարիւր գիւղ[24]: Բարխուտարեանցը 1890ի կէսերին ճանապարհորդելով Կուրի ձախափնեակում, իր այցելած իւրաքանչիւր բնակավայրի համար նշում է այն

---

[20] Ժ. դարից Կուրի ստորին հոսանքից մինչեւ Կասպից ծով եւ Ապշերոնի Թերակղզուց հիւսիս-արեւմուտք՝ մինչեւ Դերբենդի ամիրայութիւն ընկած ողջ մերձկասպեան տարածքը Շամախի կենտրոնով սկզբնաղբիւրներում առաւելապէս յայտնի էր «Շիրվանայ երկիր» անունով, որի հիմքում ընկած էր վաղմիջնադարեան Ճիողքի բուն-աղուանական թագաւորութիւնը: (В. Минорский, *История Ширвана и Дербента X-XI вв.* (Շիրվանի եւ Դերբենդի Ժ.-ԺԱ.դդ. պատմութիւն), Մոսկուա, 1963, էջ 85, 106-19. նաեւ՝ Յ. Փափազեան, «Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի եւ Արեւելեան Վրաստանի աշխարհագրութեան եւ տնտեսական յարաբերութիւնների մասին (X դ.)», *Տեղեկագիր* ՀՍՍՀ ԳԱ, 5:1953, էջ 80, 86): Միքայէլ Չամչեանն այդ մասին գրում է. «*Աղուանից աշխարհ..., որ է ընդ մէջ Կուր գետոյ եւ Կասպից ծովու՝ մինչեւ ի Դարբանդ. եւ սա կոչի Աղուանք Շիրուանայ, կամ Շիրուան...*» (Միքայէլ Չամչեանց, *Հայոց պատմութիւն (սկզբից մինչեւ 1784 թուականը), հտր.* Գ., ԵՀ հրատ., Երեւան, 1984 (յաւելուած), էջ 131):

[21] Լէօ, *Հայոց պատմութիւն, հտր. Գ, գիրք Բ*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1973, էջ 405. նաեւ՝ Ռաֆֆի, «Խամսայի մելիքութիւնները», *Երկերի ժողովածու, հտր. 10*, Հայպետհրատ, Երեւան, 1959, էջ 291-92:

[22] Մ. Բարխուտարեանց, *Արցախ*, Բագու, տպ. «Արօր», 1895, էջ Ը:

[23] Կարապետեան, *Բուն Աղուանքի*, էջ 4:

[24] Ս. Կարապետեան, *Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 1999, էջ 12:

վայրերը, որտեղից եկել ու այդտեղ են հանգրուանել արցախահայերը[25]: Վերաբնակիչները հիմնականում Ջրաբերդ, Գիւլիստան, Խաչէն, Վարանդա եւ Դիզակ գաւառներից էին[26]:

Արցախցիների հաստատումից յետոյ Շիրվանում սկսում է աստիճանաբար գերակշռել Արցախի բարբառը: Ըստ Բարխուտարեանցի՝ «*Բնիկ Շամախեցւոց բարբառն թէեւ տարբեր է Արցախի բարբառից, այսուամենայնիւ հետզհետէ առաջինն տեղի է տալիս երկրորդին*»[27]: Իր ուղեգրական նոթերում Տէր Բաղդասար Գասպարեան Շուշեցին անդրադառնալով շիրվանահայերի խօսակցական լեզուին, գրում է. «...բառով գէէիքօրէն խօսին որպէս Ղարաբաղցիք...»[28]: Աճառեանը եզրահանգել է, որ Շամախու հայերի բարբառը կազմում է Արցախի բարբառի մի ենթաբարբառը[29]: Լեզուաբան Աբրարատ Ղարիբեանը նոյնպէս ցոյց է տուել, որ արցախ-ղարաբաղեան բարբառով «*...խօսում են Ղարաբաղի բնակչութիւնը եւ բոլոր այն ղարաբաղցիները, որոնք գտնւում են Բաքւում, Հիւսիսային Կովկասում, Շամախու շրջանում*...»[30]: Ինչ վերաբերում է Բաքու քաղաքի հայ բնակչութեան խօսակցական լեզուին, նրանց բառապաշարում առկայ է եղել այստեղ հաստատուած արցախցիների, զանգեզուրցիների, շամախեցիների եւ այլ տեղավայրերի հայութեան լեզուաբարբառային շերտերի ձուլման գործընթացը[31]:

ԲԱՔՈՒՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Ապշերոնեան Թերակղզու հայաբնակ բնակավայրերի շարքում տակաւին վաղ միջնադարից հայ ժողովրդի պատմութեան մէջ յատկապէս կարե-

---

[25] Մ. Բարխուտարեանց, *Աղուանից երկիր եւ դրացիք (Միջին Դաղստան)*, տպ. Մ. Շարաձէ, Թիֆլիս, 1893, էջ 177-207:

[26] Նոյն, էջ 89-134:

[27] Նոյն, էջ 295:

[28] Տէր Բաղդասար Գասպարեան Շուշեցի, «Ծաղկաքաղ աշխարհացոյց», տպագրութեան պատրաստեց՝ Յարութիւն Քիւրտեան, *Բանբեր Մատենադարանի*, 9:1969, էջ 293:

[29] Հր. Աճառեան, *Հայ բարբառագիտութիւն.- ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)*, Էմինեան ազգագրական ժողովածու, *հտր. Ը.*, տպ. Ս. Յ. Աւագեանի, Մոսկուա-Նոր-Նախիջեւան, 1911, էջ 76:

[30] Ար. Ղարիբեան, *Հայ բարբառագիտութիւն (հնչիւնաբանութիւն եւ լեզուաբանութիւն)*, ՀՍՍՌ պետ. հեռակայ մանկավարժական ինստ., Երեւան, 1953, էջ 230, 260-62. նաեւ՝ Հր. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի (համեմատութեամբ 562 լեզուների), հտր. IV, Բ. գիրք*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1961, էջ 60, 64-66, 178, 187-88, 192, 210, 287. նաեւ՝ Ռ. Բաղրամեան, *Շամախիի բարբառը*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1964:

[31] *Բաքուի հայոց բանահիւսութիւնը*, կազմ.՝ Ա. Ղազիեան, Ս. Վարդանեան, «Զանգակ-97» հրատ., Երեւան, 2004, էջ 16:

ւոր տեղ է գրաւում Բաքու քաղաքը[32]: Վիրահայոց թեմի առաջնորդ Ներսէս արք. Աշտարակեցու՝ 1822 Յունուարին կազմած ցուցակի համաձայն՝ Բաքւում հայերն ունէին 49 ծուխ, 1 եկեղեցի եւ 5 հոգեւորական[33]: 1838 Մայիսի 16ին հայ բնակչութեան շրջանում անցկացուած ընտանեկան ցուցակագրութեան համաձայն (բնակիչներից իւրաքանչիւրի անուն-ազգանունով եւ ընտանիքի անդամների թուով) հայերը Բերդաթաղում եւ արուարձանում

[32] Այդ է վկայում Արցախի Վաչագան Բարեպաշտ թագաւորի (485-523) կողմից 500ին Բաքուի բերդի ներսի Ս. Աստուածածին եկեղեցու կառուցման փաստը: Եկեղեցին գտնւում էր քաղաքի հին թաղում, բերդի ստորոտում, «Կոյսի աշտարակ»ի մերձակայքում՝ հայկական քարաւանատան կից: Աւանդութեան համաձայն՝ «...*Վաչագան բարեպաշտ թագաւորն... յամի Տեառն 500 շինեց եկեղեցի, ըստ այսմ եւ Բագուայ հին եւ նշանաւոր եկեղեցին եւ ուխտատեղին է սուրբ Աստուածածնայ եկեղեցին...*» (Մ. Սմբատեանց, *Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից, որք ի Շամախւոյ թեմի*, տպ. Մովսէս Վարդանեանց, Տփխիս, 1896, էջ 373: Հմմտ.՝ «Ֆիզիքական, ազգագրական եւ քաղաքական աշխարհագրութիւն Հայաստանի», կազմ.՝ Աւետիք Տէրյակոբեան, Թիֆլիս, 1914 (Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 335, ց. 1, գ. 24, թ. 98-99): Պատմական մէկ այլ աւանդութեան համաձայն՝ Վաչագան Բարեպաշտը, երբ 500ին Մեծ Հայքի Փայտակարան նահանգի Բագաւան գաւառն իբրեւ օժիտ տուեց իր դստեր Վարսենիկին, Բաքուն նրա ծմեռանոցն էր, իսկ Շամախին՝ ամառանոցը (*Հանրամատչելի հանրագիտական բառարան, հտր. Ա*, կազմեց՝ Հ. Առաքելեան, տպ. «Էպօխա», Թիֆլիս, 1915, էջ 199): Հայր Սուքիաս Էփրիկեանը գրում է. «*Այս կրակոտ երկիրը, Քրիստոսի 500 թուին ...Վաչագան թագաւորը, որ կը նստէր Պարտաւ քաղաքը, օժիտ տուեր էր իւր Վարսենիկ դստեր, որոյ ձմեռոցը Բագուն էր, իսկ ամառանոցը Շամախին*» (Ս. Էփրիկեան, *Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հտր. Ա, գիրք Ա.*, Վենետիկ-Ս.Ղազար, 1903-1905, էջ 362): Ադրբեջանում տարիներ շարունակ պետական մակարդակով իրականացուող հայկական յուշարձանների ոչնչացման եւ հակահայ քաղաքականութեան հետեւանքով 1992ին եկեղեցին բարբարոսաբար պայթեցուել է ադրբեջանական խուժանի կողմից: Եւրոպացի լրագրող Թոմաս Դէ Վաալը վկայում է. «*...հին քաղաքում՝ Կոյս Մարիամ մատուռի տեղում, այսօր դատարկ ու ամայի տարածք է: 1992ին՝ Ղարաբաղեան պատերազմի ամենաթէժ ժամանակաշրջանում, Բաքւում աշխատած դիւանագէտներից մէկի խօսքերով, ինքն ականատես է եղել, թէ ինչպէս էր գետնին հաւասարեցւում մատուռը*» (Թոմաս Դէ Վաալ, *Սեւ Այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղութեան եւ պատերազմի միջով*, «Զանգակ-97», Երեւան, 2007, էջ 155): Քանդուած եկեղեցու տեղում կառուցուել է թէյարան (Գ. Ստեփանեան, «Համառօտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական եկեղեցիների պատմութեան», *Հայոց պատմութեան հարցեր» (գիտական յօդուածների ժողովածու), հտր. 8*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստ., Երեւան, 2007, էջ 153):

[33] Ե. Գեղամեան, «Պատմական քաղուածքներ», *Հովիտ*, Թիֆլիզ, 1910, Օգոստոսի 16, էջ 249:

ունէին 69 տուն՝ 434 բնակչով (211 ար., 223 իգ.)[34]: Ցուցակը յստակ ցոյց է տալիս Բաքուի հայ համայնքի ձեւաւորման ակունքները: Այդտեղ տեղ են գտել ծագումով արցախցի, մասնաւորապէս՝ շուշեցի այնպիսի ազգանուններ (Թումայեան, Շահգեդանեան, Ղուկասեան, Սերեբրակեան եւն.), որոնց տէրերը յետագայ տարիներին դարձան խոշոր առեւտրաարդիւնաբերողներ, հասարակական գործիչներ:

Բաքու քաղաքի աստիճանական զարգացման եւ քաղաքային բնակչութեան աճի արդիւնքում նկատելի է դառնում նաեւ հայ բնակչութեան թուի անընդհատ աճը: Հայերի, մասնաւորապէս՝ արցախցիների թիւը Բաքւում առանձնապէս աճեց 1870-80ականների եւ Ի. դարի սահմանագլխին՝ նաւթային վերելքի շրջանում՝ ի հաշիւ Հայաստանի տարբեր վայրերից տեղափոխուածների[35]: 1897ի տուեալներով Բաքուն (ներառեալ արդիւնագործական գործարանային շրջանները) ունէր 45,402 հայ բնակիչ[36]: Հայերի մեծամասնութիւնն ապրում էր հին քաղաքի կենտրոնական մասում, նրա միջուկը կազմող Բերդաթաղում, Ս. Աստուածածին եկեղեցու շրջակայքում:

Արցախից Բաքու պանդխտութեան մեկնող երիտասարդութիւնը հիմնականում Վարանդայի գաւառից էր: Երուանդ Լալայեանը գրում է. «*Պանդխտութիւնը, որ սաստիկ տարածուած է գաւառիս (Վարանդայի – Գ.Ս.) բնակչութեան մէջ: Գլխաւորապէս պանդխտում են Բաքու, Ղազախ, Պետրովսկ եւ Անդրկասպեան երկրները: Վարանդացուն տակաւին նոր ծանօթ այդ երկրները, մանաւանդ Բաքուն՝ իւր նաւթահորերով, գրաւել եւ գերել է*»[37]: Բաքու հաստատուած արցախահայերը յետագայում այնքան մեծ թիւ են կազմում, որ մտահոգուելով իրենց համագիւղացիների ընկերային-տնտեսական ու հասարակական կեանքի պայմանների բարելաւման խնդրով, հիմնում են հայրենակցական միութիւններ: 1908ին Բաքւում գործում էր արցախահայերի աւելի քան 30 հայրենակցական միութիւն[38]:

Եթէ հարիւրամեակներ շարունակ հայերի համար Բաքուն մի յարմար վաճառանոց եւ նաւահանգիստ էր, ապա ԺԹ. դարի սկզբներից, յատկապէս դարի կէսերից, հայերը Բաքւում նաեւ արդիւնաբերողներ էին, գործարանատէրեր, հանքատէրեր եւն.: Ռուսական կառավարութիւնը, հաշուի առնելով հայ վաճառականների Ռուսաստանի հետ հնուց հաստատած առեւտրական լայն կապերը, խրախուսում էր նրանց գործուն մասնակցու-

---

[34] ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69-70. նաեւ՝ Գ. Ստեփանեան, «Փաստաթուղթ Բաքու քաղաքի XIX դ. 30-ական թուականների վերջերի հայ բնակչութեան մասին», *Բանբեր Հայաստանի արխիւների*, 2:2008, էջ 8-12:

[35] «Մի քանի օր Բագւում», *Տարազ*, Թիֆլիս, 1891, Մարտի 31, էջ 178:

[36] Ա. Կարապետ եպիսկոպոս, «Նամակներ խմբագրութեան (I)», *Արձագանք*, Թիֆլիս, 1897 Հոկտեմբերի 31. նաեւ՝ G. Stepanyan, *Armenians of Baku*, էջ 214:

[37] Երուանդ Լալայեան, *Երկեր, հտր. 2, Արցախ*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1988, էջ 136:

[38] *Վիրակ*, Թիֆլիս, 1908, Մայիսի 8, № 93:

թիւնը երկրամասի տնտեսական կեանքին: Այդ առաջընթացը նպաստաւոր պայմաններ ստեղծեց նաեւ Նուխի (Շաքի), Շամախի, Ղուբա եւ Բաքու քաղաքներում[39] գործող հայ առեւտրական դրամագլխի ներկայացուցիչների համար: Նրանցից շատերը Ապշերոնեան Թերակղզում սկսեցին ձեռնարկել տնտեսական նոր գործառոյթներ:

Ռուսական իշխանութեան հաստատման առաջին տարիներից Բաքւում տուրքերի գանձումը կատարւում էր կապալային սկզբունքով: Կապալառուները, որոնք տնտեսական կեանքում ունէին մեծ դերակատարութիւն, տուրքերի գանձումը հիմնականում կատարում էին նաւթից[40], սպանդանոցից, խանութներից, խանական այգիներից, օղու եւ գինիների վաճառքից ու երկու ձկնորսարաններից[41]:

ՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԻՐԻ ԱՃԸ ԱՊՇԵՐՈՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

Մեծ է եղել յատկապէս արցախահայերի դերը Ապշերոնեան Թերակղզու, մասնաւորապէս՝ մինչեւ ԺԹ. դարի կէսերը խիստ յետամնաց Բաքու

---

[39] Մ. Ասլանեան, «Նամակ Նուխուց (Ա)», *Մշակ*, Թիֆլիս, 1872, Դեկտեմբերի 7. նաեւ՝ Գ. Ստեփանեան, «Նուխի եւ Արէշ գաւառների հայերի պատմական անցեալից (համառօտ ակնարկ)», *Իրան-նամէ*, Երեւան, 4-5-6:1997, էջ 29. նաեւ՝ նոյնի՝ «Շամախահայերի դերը Արեւելեան Այսրկովկասի առեւտրատնտեսական յարաբերութիւններում», *Հայաստանի քաղաքակրթական աւանդը մերձաքսի ճանապարհի պատմութեան մէջ, Միջազգային գիտաժողովի նիւթեր*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2011, 198-218:

[40] Ըստ նշանաւոր բնագէտ Նազարէթ Տաղաւարեանի (Չատրճեան) թերակղզու նաւթի գործածութիւնը հայերին յայտնի էր այն ժամանակուանից, երբ հայոց Տիգրան Բ. թագաւորի (Ք.ա. 95-Ք.ե. 55) նուաճումների արդիւնքում Աղուանքը գտնուում էր Հայաստանի գերիշխանութեան տակ: Վկայաբերելով հռոմէացի պատմիչ Դիոն Կասիոս Կոկէյիանոսի (Բ. դարի երկրորդ կէս-Գ. դարի սկիզբ) այն տեղեկութիւնը, թէ ինչպէս հռոմէացի զօրավար Լուկիոս Լուկուլոսի կողմից Ք.ա. 69ին Տիգրանակերտի պաշարման ժամանակ հայերը «նետաձգութեամբ եւ [պաշարողական] մեքենաների վրայ թափած նաւթով մեծապէս վնասեցին նրան (Լուկիոս Լուկուլլոսին - Գ.Ս.)» (*Օտար աղբիւրները Հայաստանի եւ հայերի մասին, 9. Հին յունական աղբիւրներ, Ա. Յովսէպոս Փլաւիոս, Դիոն Կասսիոս*, թարգմ. բնագրից, առաջաբան եւ ծանօթ.՝ Ս. Մ. Կրկեաշարեան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1976, էջ 125), Տաղաւարեանը գրում է. «*Դիոն Կասիոս յանուանէ չի յիշատակեր թէ Մեծն Տիգրան ուսկից կը հանէր նաւթը: Բայց ծանօթ իրողութիւն է եթէ Վրաստան եւ Աղուանք իր գերիշխանութեան ներքեւ էին եւ հետեւաբար հոս ակնարկութիւն մ'ունինք նաւթահանքերու նշանաւոր աղբիւրին - Բագուի մասին: ...Այսպիսով,*- ամփոփում է Տաղաւարեանը,- *եթէ ստոյգ է մեր ենթադրութիւնը... հարկ է հետեւեցնել, որ նա պատերազմական մեծ նշանակութիւն մ'ունեցած է անցեալին մէջ ու թերեւս հին հայոց տնտեսական կեանքին մէջ ալ ունեցած է իր կարեւոր բաժինը*» (Տ. [Տաղաւարեան Նազարէթ], «Բագուի նաւթահանքերը հնութեան մէջ», *Բազմավէպ*, 11:1908, էջ 496-97):

[41] Դաւիթ Անանուն, *Ռուսահայոց հասարակական-քաղաքական մտքի զարգացումը (1800-1870), հտր. Ա*, տպ. «Տրուդ» Բագու, 1916, էջ 228:

քաղաքի առեւտրաարդիւնաբերական վերելքն ապահովելու գործում: Արցախցի առեւտրականները զբաղւում էին մեծածաւալ առեւտրով եւ կապ էին պահպանում հեռաւոր երկրների հետ, աստիճանաբար իրենց ձեռքին կենտրոնացնելով տարանցիկ առեւտուրը:

Այսպէս, դեռեւս 1808 Յունիսի 30ից քաղաքի վերոնշեալ տուրքերի գանձումը չորս տարի ժամկէտով, տարեկան 112,500 ռ. կապալով տրւում է հայ առեւտրական դրամագլխի ներկայացուցիչ, ծնունդով Նախիջեւանի Երնջակ գաւառի Շահկերտ աւանից յայտնի վաճառական Բաբա Թառումեանին[42], որը խոյս տալով Երեւանի սարդարի բռնութիւններից եւ կամայականութիւններց, վերահաստատուել էր Շուշիում եւ առեւտրաարդիւնաբերական լայն գործունէութիւն էր ձեռնարկել Բաքւում: 1821ի գարնանը Շուշի այցելած հայ ականաւոր գրող, մանկավարժ, հրապարակախօս, ազգային-լուսաւորական գործիչ Մեսրոպ Թաղիադեանը հետաքրքիր պատմութիւն է ներկայացնում Թառումեանցի մասին.

> Բաբա առեալ զամենայն զուգ՝ փախչի Փայտակարան, եւ գրաւէ զերեսս ծովուն Կասբից ի ռուսաց դրանէն, որով սակաւ առ սակաւ հարստացեալ անդանօր՝ կոչէ եւ զեղբարս իւր, եւ հիմն դնէ այնորիկ հարստութեան, յոր վայելէին այսօր եղբարք իւր եւ ազգն[43]:

Նոյն թուականին Բաքուի նաւթի, աղալճերի, ձկնորսութեան եւ նաւագնացութեան կապալը չորս տարի ժամկէտով եւս տրուած էր Թառումեան միւս եղբայրներին՝ Մարկոսին եւ Զոհրաբին[44]: Այդ է վկայում Թաղիադեանցի մի այլ տեղեկութիւն. «*Վասն զի՝ սոքա (Թառումեան եղբայրները - Գ.Ս.) ընդ իւրեամբք ունելով զամէնայն արտօնութիւնս զծովուն Կասպից, թէ զձկնորսական իրաւունս, եւ թէ զնաւագնացութեան տեղեհարկս, բազմագունից պէտս ունէին գործաւարաց յայն պաշտօն*»[45]: Արցախցիներն իրենց բանիմացութեան եւ անսպառ եռանդի շնորհիւ էապէս նպաստեցին քաղաքի համընդհանուր զարգացմանը՝ առեւտրատնտեսական, ընկերա-տնտեսական ու կրթամշակութային կեանքի բարգաւաճմանը:

Այսպիսով՝ Բաքուի հասարակական վերնախաւում աչքի էր ընկնում նոր ձեւաւորուած հայ դրամատիրութիւնը՝ առեւտրաարդիւնաբերողները: Հայ

---

[42] *Акты, собранные Кавказской археологической комиссией* (Ակտեր, հաւաքագրուած Կովկասեան հնագիտական յանձնաժողովի կողմից), *հտր. IV,* Թիֆլիս, 1870, էջ 575 (№ 865):

[43] *Ճանապարհորդութիւն Մեսրոբայ Դ. Թաղիադեանց Վ. Ա. Սարկաւագի Սրբոյ Էջմիածնի ի Հայս, հտր. Ա,* Կալկաթա, 1847, էջ 291-92:

[44] Համեմատութեան համար նշենք, որ ռուսական առեւտրական դրամագլխի ներկայացուցիչ, արտադրատէր Վասիլի Կոկորեւը Ապշերոնեան Թերակղզու նաւթի հանոյթով սկսել է զբաղուել 1857ից, երբ Սուրախանում հիմնեց նաւթի զտարան (Խ. Դադայեան, *Հայերը եւ Բաքուն (1850-ական թթ. – 1920 թ.),* «Գասպրինտ» ՍՊԸ տպ., Երեւան, 2006, էջ 12):

[45] Թաղիադեանց, էջ 292:

առեւտրաարդիւնաբերողներն առաջնակարգ դիրքեր էին գրաւում տնտեսութեան եւ առաջին հերթին՝ նաւթարդիւնաբերութեան ու առեւտրի տարբեր ոլորտներում: Երկրում խոշոր ձեռնարկատէրեր դարձան մեծահամբաւ Մանթաշեան, Լիանոսեան, Միրզոյեան, Ղուկասեան, Կրասիլնիկեան, Ադամեան (Աբգար[46], Յովհաննէս) եղբայրներ[47], Բեգլարեան, Մութաֆեան,

[46] Վաճառական Աբգար Ադամեանի ընտանիքում կրթուել ու դաստիարակուել են չորս նշանաւոր դէմքեր: Աւագ որդին՝ Յովհաննէսը (1879-1932), սեւ եւ սպիտակ գունաւոր հեռուստատեսութեան եւ լուսահեռագրութեան իր գիւտով նոր դարագլուխ է բացել գիտութեան եւ արհեստագիտութեան պատմութեան մէջ: Նրա՝ տասնեակ տարիներ առաջ կատարած գիտական յայտնագործութիւններն ունեցան համաշխարհային նշանակութիւն եւ դարձան ժամանակակից գունաւոր հեռուստատեսութեան ու լուսահեռագրութեան հաստատուն հիմքը (Յ. Յակոբեան, *Յովհաննէս Աբգարի Ադամեան. գունաւոր հեռուստատեսութեան եւ լուսահեռագրութեան գիւտարար*, «Միտք», Երեւան, 1968): Հեղինէ եւ Եւգինէ դուստրերը դարձան տաղանդաշատ դաշնակահարներ: Նրանք զուգանուագով երկար տարիներ իրենց վրայ էին գամել Եւրոպայի եւ Ռուսաստանի երաժշտական հասարակութեան ուշադրութիւնը: Նրանց կրտսեր եղբայրը՝ պրոֆ. Արշակ Ադամեանը, եղել է գեղագէտ, երաժշտագէտ, 1924-26՝ Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիայի տնօրէնը: Նրա նախաձեռնութեամբ Երեւանում կազմակերպւում է սիմֆոնիկ նուագախումբ, որի առաջին համերգը կայացել է 1924 Դեկտեմբերի 10ին եւ որով սկզբնաւորուել է սիմֆոնիկ երաժշտութեան կատարումը Հայաստանում (Յ. Յակոբեան, *Ադամեան քոյրեր*, «Հայաստան», Երեւան, 1973):

[47] Շնորհազարդ Ադամեան գերդաստանի ծագման վերաբերեալ աղբիւրներում պահպանուել են տարբեր տեղեկութիւններ: Այսպէս, Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան հիմնադիրների եւ անփոփոխ անդամների ցուցակում այդ գերդաստանից սերող նաւթարդիւնաբերող Դաւիթ Յովհաննէսի Ադամեանը նշուած է որպէս շուշեցի (*Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ հայոց մարդասիրական ընկերութեան 25-ամեայ գործունէութեան*, տպ. Ս. Տէրյովհաննիսեանցի, Բագու, 1891, էջ 8, 57. նաեւ՝ Магда Нейман, *Армяне. Краткий очерк их истории и современного положения* (Հայերը. նրանց պատմութեան եւ ներկայ իրավիճակի համառօտ ուրուագիծ), տպ. «Ю. Н. Эрлихъ», Սանկտ Պետերբուրգ, 1899, էջ 151): *Արցախ-Ղարաբաղի հանրագիտարանի* Ադամեան բառացանկում ասւում է, որ Աբգար Սահակի Ադամեանը եւ կինը՝ Մարգարիտ Յովհաննէսի Ադամեանը ծնունդով Շուշիի գաւառակի Ջրաղացներ գիւղից են (С. Саркисян, *Энциклопедия Арцах-Карабаха*, издание 2-е исправленное и дополненое (Արցախ-Ղարաբաղի հանրագիտարան» ուղղուած եւ լրացուած 2րդ հրատ.), «Գրադ Պետրով», Սանկտ Պետերբուրգ, 2007, էջ 30): Գիւտարար Յովհաննէս Աբգարի Ադամեանին նուիրուած աշխատութեան հեղինակ Յակոբ Յակոբեանը, ով Ադամեան գերդաստանին վերաբերող կենսագրական ստոյգ տեղեկութիւններ է քաղել Յովհաննէս Ադամեանի այրու՝ ԵՊՀ ռեկտոր Յակոբ Մանանդեանին գրած նամակից, ինչպէս նաեւ Աբգարի աւագ դուստր՝ Հեղինէի դուստր Թամար Թաուտ-Հայրեանի, Արշակ Ադամեանի այրու՝ Ն. Ս. Ադամեանից, Ադամեանների ազգական Ս. Հ. Տէրօհանեանի եւ Ադամեան ընտանիքի հետ մտերիմ կապ պահպանած ակադեմիկոս Կարապետ Մելիքօհանջանեանի տրամադրած նիւթերից,

Լալայեան, Բունիաթեան, Թումայեան, Առաքելեան, Փիլիպոսեան, Խատիսեան, Բուդաղեան, Քալանթարեան, Կաճկաճեան, Ծատուրեան, Ունանեան, Փիթոյեան, եւ այլ ընտանիքները[48]: Նէյմանն (Գրիգոր Նիկողոսեան) իր *Հայերը* գրքում գրում է, որ արցախցիների փոքր մասն էր զբաղւում առեւտրով. Բաքւում նրանք հիմնականում նաւթարդիւնաբերողներ էին[49]:

ԲԱՔՈՒԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԸ

Տարաժամանակեայ փաստերը վկայում են, որ Բաքուի նաւթարդիւնաբերութեան զարգացման գործում իրենց առանձնայատուկ դերն են ունեցել յատկապէս արցախահայերը, մասնաւորապէս՝ շուշեցիները, որոնք ձեռք են բերում մեծ հարստութիւն՝ դառնալով Բաքուի քաղաքակրթութեան զարգացման առաջամարտիկներից[50]: Առեւտրական կապերով կապուած լինելով Եւրոպայի եւ Ռուսաստանի հետ՝ արցախցի առեւտրաարդիւնաբերողները առաջիններից էին, որ կանխազգացին նաւթի նշանակութիւնը եւ սկսեցին զբաղուել նրա արդիւնաբերութեամբ ու զարգացնել այն: Նրանց հիմնած նաւթի հայանուն ընկերութիւնները («Արարատ», «Արցախ», «Արամազդ», «Սիւնիք», «Որոտան», «Մասիս», «Աստղիկ» «Վարանդա» եւն.) մեծ դեր են խաղացել Ապշերոնի նաւթի արդիւնահանման եւ վաճառքի կազմակերպման, ինչպէս նաեւ Բաքւում ֆինանսավարկային եւ դրամատնային համակարգերի կազմաւորման գործում[51]: Նրանց միջոցներով ԺԹ.-Ի. դարերում Բաքւում կառուցուեցին ոչ միայն արդիւնաբերական ու բնակելի շի-

---

գրում է, որ Ադամեանները ծագումով Շամախիից էին: Ըստ նրա՝ «*19րդ դարի կէսերին էր, երբ Բաքւում մշտական բնակութիւն հաստատեց Շամախեցի Սահակ Ադամեանը, որի Աբգար որդին հայրն էր շնորհաշատ զաւակների*» (Յակոբեան, *Յովհաննէս Աբգարի Ադամեան*, էջ 6): Այսպիսով՝ առկայ տեղեկութիւնները թոյլ են տալիս եզրակացնելու, որ Ադամեան գերդաստանի նահապետ Սահակի ծննդավայրը Շուշիի գաւառակի Ջրաղացներ գիւղն էր, որտեղից ԺԸ. դ. վերջերին շատուշատ արցախցիների պէս տեղափոխուել էր Շիրվան՝ Շամախի, այնուհետեւ 1830ականների սկզբներին մշտական բնակութիւն հաստատել Բաքւում: Բաքւում 1838 Մայիսի 16ին հայ բնակչութեան շրջանում անցկացուած ընտանեկան ցուցակագրութեան տեղեկագրում նշուած է նաեւ Սահակ Ադամեանը (Ատամով), որի ընտանիքը հաշւում էր 2 արական, 2 իգական (ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 305, թ. 69):

[48] *Отчеть о деятельности правления Бакинского армянского человеколюбивого общества за 1902 г.* (Հաշուետուութիւն Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան գործունէութեան, 1902), Բագու, 1903, էջ 7-8.

[49] Нейман, էջ 151:

[50] В. Микаелян, С. Мирзоян, "Участия армян в экномической жизни Восточного Закавказья (вторая половина XIX-первые десятилетия XX вв.)," (Հայերի մասնակցութիւնը Արեւելեան Անդրկովկասի տնտեսական կեանքին. ԺԹ. դարի երկրորդ կէս-Ի. դարի առաջին տասնամեակներ), *Լրաբեր հասարակական գիտութիւնների,* 2:1990, էջ 74-81:

[51] Մանրամասն տե՛ս՝ Գ. Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան պատմութիւնը*:

նութիւններ, այլեւ հասարակական խոշոր շէնքեր: Այս առումով նշանակալից են մասնագիտական մեծ վարպետութեամբ ճարտարապետեր Գաբրիէլ Տէրմիքէլեանի, Ն. Բաեւի, Ս. Սարկիսեանի, Ֆ. Աղալեանի նախագծերով նորդասական ոճով կառուցուած բնակելի ու հասարակական շինութիւնները, որոնք կանգուն են ցարդ եւ զարդարում են մերօրեայ Բաքուն[52]:

Նաւթարդիւնաբերութեան ոլորտում արցախցի թերեւս առաջին նախաձեռնողներից էր հայ առեւտրական դրամագլխի ներկայացուցիչ Պետրոս Մանչէեանը, որը կառավարութեան հետ 1810ին ստորագրած համաձայնագրով, կապալով շահագործում էր Ապշերոնեան Թերակղզու եւ Բաքուից ոչ-հեռու գտնուող Ղուբա քաղաքի նաւթահորերն ու մերձակայ ծովային ձկնորսարանները: Այդ աշխատանքը նա շարունակեց մինչեւ իր մահը՝ 1823[53]:1868ին նաւթարդիւնաբերութեան բնագաւառում որոշ քայլեր է ձեռնարկում նաեւ Բաքւում հաստատուած շուշեցի Լազարեանների գերդաստանի ներկայացուցիչ, զօրավար-տեղակալ Յովհաննէս (Իւան) Դաւթի Լազարեանը[54], որին ռուսական կառավարութիւնը յատկացրել էր մի փոքրիկ նաւթադաշտ: Սակայն յատկացուած հողակտորը գրեթէ նաւթաբեր չէր: Գրականագէտ, հրապարակախօս Տիգրան Նազարեանն իր քեռու՝ բաքուաբնակ շուշեցի մեծահարուստ բարեգործ Համբարձում Հախումեանի եւ Լազարեանի երկխօսութիւնից վկայում է հետեւեալը. «*Յիշեցի մեծ դայուս պատմածը՝ որ գեներալ Յովի. Լազարեւն էր արել նրան ռուս-տաճկ. պատերազմին՝ «Ա՛յ, Համբարձում աղա, ասում է հայրենասէր ղարաբաղցի գեներալ Լազրեւը իր նման հայրենասէր հսկայ քեռուս (Համբ. Հախումեանին), Շամիլին բռնելուց ենանա, ինձ էլ անպէտք համարեց ռուս թագաւորը: Մի պատառ նօթի հող էր տուել Բագւում, էն էլ օգուտ չէր բերում, նօթ չէր դուս գալիս: Սաղ օրը մալուխսլիի մէջ ծովին ղըրաղաւը բօլթա[55] տալաւ ի օրըս մթնըցնում*»[56]: 1877ին սկսուած ռուս-թուրքական պատերազմի պատճառով Յովհաննէս Լազարեանը թողնում է Բաքուն:

---

[52] Նոյն, էջ 171-87:

[53] Վալտէր Դիլոյեան, *Արեւելեան Հայաստանը XIX դարի առաջին երեսնամեակին եւ հայ-ռուսական յարաբերութիւնները*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1989, էջ 117:

[54] Լազարեանների գերդաստանը սերում էր Քաշաթաղի մելիքական տոհմից: Այս գերդաստանում են ծնուել զօրավար-տեղակալ Յովհաննէսը, գնդապետ, պատմաբան Յակոբը եւ Բաբաջանը (ՀԱԱ, ֆ. 42, ց. 1, գ. 2, թ. 1-11. նաեւ՝ Лотто В., Генерал-адъютант Иван Давыдович Лазарев (զօրավար-համհարզ Իւան Դաւթի Լազարեւ), Թիֆլիս, 1900. նաեւ՝ Ա. Ղազիեան, «Լազարեանների զինուորական փառքը», *Բանբեր Հայաստանի արխիւների*, Երեւան, 3:1991, էջ 218-25):

[55] Բոլթա տալ - զբօսնել, ման գալ (*Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. Ե.*, «Գիտութիւն» հրատ., Երեւան, 2008, էջ 99):

[56] Ե. Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարան, Տ. Նազարեանի ֆոնդ, գ. 233, տ. 4, թ. 19:



Բաքու, 1904, Յունուարի 6, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի: Հայութիւնը նշում է Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնը

Շուշեցիներ էին նաեւ խոշոր նաւթահանքերի տէրեր, եղբայրներ Առաֆէլեանները, Ղուկասեանները, Արսէն, Ներսէս, Կոնստանդին, Մովսէս[57] եւ Սողոմոն Կրասիլնիկեան եղբայրները, Արշակ Ունանեանը, Բաղդասար Արզումանեանը, Գրիգոր եւ Յովսէփ Թումայեան եղբայրները, Գրիգոր Դիլդարեանը, Դաւիթ Աւան-Իւզբաշեանը[58], Սամուէլ Բաղիրեանը, Դոլուխանեան եղբայրները, Յարութիւն (Արտեմ) Մադաթեանը, Միքայէլ Արամեանցը, Մուսայէլ Շահգեդանեանը եւ շատ ուրիշներ[59]:

ԺԹ. դարավերջին Կրասիլնիկեան եղբայրների եւ Սիմէոն Առաֆէլեանի նաւթարդիւնաբերական վաճառատների միաւորմամբ գործում էր «Եղբ. Կրասիլնիկեան եւ Ս. Առաֆէլեան» ընկերութիւնը[60]: Բաքուի նաւթարդիւնաբերութեան զարգացման գործում մեծ դեր են ունեցել նաեւ Ալեքսանդր, Յովհաննէս եւ Դաւիթ Ադամեան եղբայրների հիմնած «Եղբ. Ադամեան» առեւտրական ընկերութիւնը եւ Թումայեան եղբայրները: Վերջիններս Բաքւում հիմնել են «Եղբ. Թումայեանց» նաւթարդիւնաբերական ընկերութիւնը:

---

[57] Մովսէս Կրասիլնիկեանն իր ողջ հարստութիւնը Բաքու. նաւթարդիւնաբերական շրջանը, ԺԹ. դ կտակել էր որդուն՝ Ռուբէնին, որն ուսանում էր Լիէժի (Փարիզ) պոլիտեխնիկ ինստիտուտում: 20ամեայ Ռուբէնը շնորհիւ իր համեստ բնաւորութեան մեծ սէր ու յարգանք էր վայելում ընկերների շրջապատում: Սակայն, չպարզուած հանգամանքներում, 1908 Ապրիլի 21ին սպանւում է իր վարձած սենեակում, Ստալ ազգանունով մի երիտասարդ ֆրանսուհու ատրճանակից արձակած գնդակից (*Կտրակ*, Թիֆլիս, 1908, Ապրիլի 26):

[58] Դաւիթ Աւան-Իւզբաշեանի 24ամեայ որդին, Կովկասեան 2րդ բանակային զօրագնդի Տվերի դրագունեան գնդի դրօշակիր Գուրգէն Աւան-Իւզբաշեանը զոհուել է առաջին աշխարհամարտի ժամանակ՝ 1916 Մայիսի 15ին:

[59] Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան*, էջ 125-26:

[60] Ֆ. Մարդանեան, «Նաւթային քրոնիկ. Բիբի-Էյբաթի պետական նաւթային հողերի աճուրդը (II)», *Մուրճ*, 1899, № 2-3, էջ 308-13:

Իր գործունէութեամբ լայն ճանաչում էր ձեռք բերել յատկապէս Գրիգոր Թումայեանը: Թումայեան գերդաստանը, Բաքուից բացի, վիթխարի կարողութիւնների հասնող անշարժ գոյք էր ձեռք բերել նաեւ Թիֆլիսում[61]:

Բաքու. նաւթարդիւնաբերական շրջանը, ԺԹ. դ.

Բաքուի նաւթարդիւնաբերութեան մէջ առանձնանում են նաեւ շուշեցիներ Համբարձում Հախումեանը[62], Սամուէլ Բաղիրեանը եւ Յարութիւն (Արտեմ) Մադաթեանը, որոնք 1878ին միանալով արդիւնաբերող Բրունօ Դէ Բուրի հետ, հիմնում են «Կասպից Ընկերութիւն» նաւթարդիւնաբերական եւ առեւտրական վաճառատունը[63]: Նաւթի վերամշակման ուսումնասիրութեան նպատակով 1886ին երկրորդ անգամ Բաքու այցելած ականաւոր գիտնական, տարրաբան, նաւթային մասնագէտ Դմիտրի Մենդելէեւը Սամուէլ Բաղիրեանի մասին գրել է. «Բաղիրեանը շատ բարեխիղճ հայ է»[64]:

Այս առումով ուշագրաւ է *Տարազ* ամսագրի վկայակոչած հետեւեալ տեղեկութիւնը. «*Գաղտնիք չէ, որ Բագուի հայ հարուստները մի աննշան բացառութեամբ, բոլորը ղարաբաղցիներ են: Սրանք, իրանց բնածին ընդունակութեամբ եւ փոկունութեամբ մի երեսուն-քառասուն տարուայ ընթացքում շինել են այժմեան Բագու քաղաքը եւ ձեռք բերել ահագին հարստութիւն*»[65]: Այս առումով առաւել ուշագրաւ է *Տարազ*ում տեղ գտած նաեւ

---

[61] *Մուրճ*, Թիֆլիս, 1899, № 2-3, էջ 256:

[62] Համբարձում Հախումեանը մահացել է 1898 Մարտի 8ին՝ Բաքւում, 65 տարեկան հասակում (*Տարազ*, Թիֆլիս, 1898, Մարտի 8, էջ 198):

[63] *Баку и его окрестности* (Բագուն եւ նրա շրջակայքը), Թիֆլիս, 1891, էջ 28-29. նաեւ՝ Ա. Սարուխան, *Աղեքսանդր Մանթաշեանց. մեծ վաճառականն եւ բարեգործը: Յիշողութիւններ իր մահուան 20 ամեակի առթիւ*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1931, էջ 42:

[64] Դադայեան, *Հայերը*, էջ 219: Մենդելէեւը առաջին անգամ Բաքու է այցելել 1863 Սեպտեմբերի սկզբին (Գ. Սմիռնով, *Մենդելէեւ*, «Հայաստան» հրատ., Երեւան, 1986, էջ 171):

[65] *Տարազ*, Թիֆլիս, 1892, Յուլիսի 5, էջ 350:

հետեւեալ տեղեկութիւնը. «*Ռուսաստանում չը կայ մի քաղաք, որի բնակիչները այնքան հարուստ լինեն, որքան ղարաբաղցիք: Բագուայ ամենախոշոր դրամատէրերի 7/10ը ղարաբաղցիներ են*»[66]:



Յովհաննէս Լազարեան, Միքայէլ Արամեանց, Գրիգոր Թումայեան

Բաքուի նաւթադաշտերի հայ խոշոր սեփականատէրերի շրջանում յատկապէս առանձնանում են շուշեցի Պօղոս, Յակոբ, Աբրահամ եւ Արշակ Ղուկասեան եղբայրները: Սրանց նաւթաբիզնէսի հիմքը սկսել է աւագ եղբայրը՝ Պօղոսը[67], որ 1878ին Շուշուց գալով Բաքու, իր ձեռներէցութեամբ ու բանիմացութեամբ հիմք է դրել իրենց արդիւնաբերութեանը եւ դարձել Բաքուի մեծահարուստներից մէկը: Նա, նախ, 27,000 ռուբլով ձեռք է բերում Սամուէլ Բաղիրեանի մասնաբաժինը, ապա՝ Յարութիւն Մադաթեանինը եւ ինքն էլ շուտով սկսում ընկերակցել ԴէԲուրին: Աստիճանաբար զարգացնելով նաւթային իրենց գործը՝ Ղուկասեանները առաջնակարգ դիրք են գրաւում նաւթարդիւնաբերութեան մէջ եւ արդէն 1887ին 2 մլն ռ. հիմնադիր դրամագլխով վերածւում են բաժնետիրական ընկերութեան[68]: 1888ին ԴէԲուրի մահից յետոյ Կասպից Ընկերութեան լիակատար սեփականատէրը դարձան Ղուկասեան եղբայրները[69]: Նրանց աշխատողների թիւը հասնում

---

[66] «Շուշին իբրեւ առողջապահական կայարան», *Տարազ*, 27 Հոկտեմբերի 1902, էջ 404:

[67] Պ. Ղուկասեանն (1858, Շուշի-1937, Փարիզ) աւարտել է Մոսկուայի Գործնական առեւտրային ակադեմիան, 1878ին՝ Դրեզդէնի Պոլիտեխնիկ ինստիտուտը: 1890-1906՝ եւ 1915-17՝ եղել է Ռուսաստանի առաջին դասակցեալ կազմակերպութեան՝ «Բաքուի Նաւթարդիւնաբերողներ»ի համագումարների նախագահը: 1906-15՝ Ռուսաստանի պետական խորհրդի անդամ: 1916ից՝ Ռուսական առեւտրաարդիւնաբերական բանկի վարչութեան նախագահ: 1918ին տարագրուել է Ֆրանսա ու եղել «Տորգպրոմ» հակաբոլշեւիկեան կազմակերպութեան հիմնադիրներից: 1905-09՝ կառուցել է Եալթայի Ս. Խաչ եկեղեցին (ճարտարապետ՝ Գաբրիէլ Տէրմիքէլեան, եկեղեցու ներքին պատկերազարդումը՝ Վարդգէս Սուրենեանցի):

[68] Սարուխան, էջ 42:

[69] *Баку и его окрестности*, էջ 28-29:

էր աւելի քան 100ի[70]: Այդ ընթացքում Բաքու են գալիս Պօղոսի եղբայրները՝ Յակոբը, Աբրահամը[71] եւ Արշակը, որոնք արագօրէն ծանօթանալով նաւթի շուկային, է՛լ աւելի նպաստեցին ընկերութեան տնտեսական զարգացմանն ու հզօրացմանը:

Նաւթի արդիւնաբերութեան մէջ Պօղոս Ղուկասեանի ձեռնարկած արդիւնաւէտ գործունէութեան շնորհիւ նրա համբաւը Կովկասի վաճառականութեան շրջանակներից լայն տարածում գտաւ նաեւ Ռուսաստանում եւ այլուր՝ դառնալով համառուսաստանեան չափանիշերով նաւթարդիւնաբերող առաջին հայը: Ռուս գործարանատէր Վիկտոր Ռագոզինի նախաձեռնութեամբ, երբ Բաքուում հիմնւում է Մոսկուա-Կովկասեան Ընկերութիւնը, հաշուի առնելով Ղուկասեանի փորձառութիւնն ու հմտութիւնը, խնդրում են նրան՝ ղեկավարելու հեղինակաւոր այդ ընկերութեան աշխատանքները: Վերջինս ընդունելով առաջարկը, դառնում է ընկերութեան բաժնետէր[72]: 1891ին Պ. Ղուկասեանը նախագահում է «Բաքուի նաւթարդիւնաբերողների միութիւնը: Այդ պաշտօնը 1896ից մինչեւ իր մահը՝ 1917, ղեկավարում է նրա կրտսեր եղբայրը՝ Արշակը[73]: Շարունակելով առեւտրաարդիւնաբերական իր գործունէութիւնը, Պ. Ղուկասեանը Ս. Եակովլեւի հետ 1897ին 1 մլն ռ. հիմնադիր դրամագլխով հիմնում է Կասպից խողովակամուղը, որն իր բազմաճիւղ խողովակաշատ ցանցերով գործարաններին եւ քաղաքին մատկարարում էր անհրաժեշտ քանակութեամբ ջուր: Ծաւալելով լայնասպարէզ գործունէութիւն, Պ. Ղուկասեանը Բաքուում հիմնեց նաեւ մի շարք ձեռնարկութիւններ, որոնց գործարկման արդիւնքում առաւել բարձրացուեց նաւթարդիւնաբերութեան արդիւնաւէտութիւնը: Նրա անմիջական ջանքերով Բաքուում հաստատուել է մեքենաշինական մեծ գործարան, որն անհրաժեշտ քանակութեամբ մեքենաներ, հորատող սարքեր եւ խողովակներ էր պատրաստում նաւթարդիւնաբերական տարբեր ձեռնարկութիւնների համար: Նրան է պատկանում նաեւ Բաքուում առաջին էլէկտրամեքենաշինական գործարանի կառուցման պատիւը, որի ղեկավարութիւնն իրականացնում էին նրա հմուտ եւ գործիմաց որդիները: Բաքուի Ստարօ-Պոլիցէյսկայա փողոցում գտնուող նրա վաճառանոցը առաջիններից մէկը սկսեց նաւթարդիւնաբերութեան համար վաճառել արտասահմանեան տարատեսակ

---

[70] Ա. Գիւլխանդանեան, «Բագուի դերը մեր ազատագրական շարժման մէջ», *Հայրենիք*, Պոստոն, Բ. տարի, Մարտ, 5:1924, էջ 98:

[71] Աբրահամը յետագայում համալսարանական կրթութիւն է ստացել Գերմանիայում: Աւարտելով փիլիսոփայութեան ֆակուլտէտը՝ դոկտորի գիտական աստիճանով հաստատուել է Լոնդոնում, զուգահեռաբար ղեկավարելով իրենց առեւտրական տան գործերը Անգլիայում եւ եւրոպական մի շարք քաղաքներում: Նա եղել է Ազգային Բիւրոյի Բաքուի մասնաճիւղի անդամ (ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 111, թ. 11):

[72] Սարուխան, էջ 44-45:

[73] Նոյն, էջ 47:

սարքաւորումներ, շարժիչներ եւ էլեկտրական կայաններ: Նա առաջինն էր, որ Բաքւում ստացաւ արդիւնաբերական գազ[74]:

Նաւթարդիւնաբերութեան ոլորտում իր ծանրակշիռ ներդրումն ունի յատկապէս արցախցի առեւտրաարդիւնաբերող, ծնունդով Շուշիի գաւառի Ասկերանի շրջանի Քեաթուկ (Քոթուկ) գիւղից Միքայէլ Արամեանցը[75]: 1884ին Թիֆլիսից գալով Բաքու, նա ընկերանում է Բաքուի խոշոր ձեռնակատէրեր Առաքել Ծատուրեանցի[76], Յովսէփ Թումայեանի եւ Գրիգոր ու Նիկոլայ Առաֆէլեան եղբայրների հետ եւ Բալախանիում հիմնում են «Առ. Ծատուրեան եւ միւսներ» ընկերութիւնը, որը տարեկան արտահանում էր 4 մլն. փութ նաւթ եւ քսուքային տարբեր իւղեր[77]: Ընկերութիւնը 130,000 ռուբլով գնում է Առաֆէլեան եղբայրների եւ Գերասիմ Թումայեանի նաւթի վերամշակման գործարանը[78]:

Այդ տարիներին Բաքուից Բաթում նաւթի փոխադրումը եւ վաճառքը կապուած էր արհեստագիտական որոշակի դժուարութիւնների հետ: Փոխադրումները ժամանակին կատարելու նպատակով Միքայէլ Արամեանցը ձեռնարկում է նաւթի տեղափոխումը մետաղեայ արկղատակառներով: Անհրաժեշտ կանխիկ գումար ձեռք բերելու նպատակով նա գալիս է Թիֆլիս եւ դիմում իր վաղեմի ընկեր, Բաքւում հայ առեւտրաարդիւնաբերական դասի խոշոր ներկայացուցիչ Ալեքսանդր Մանթաշեանցին[79]՝ փոխարէնը առա-

---

[74] Նոյն, էջ 44-45:

[75] *Ոսկի-բարեկամ հայ ընտանեաց*, աշխատ.՝ Գրիգոր աւագ քահանայի Մանդակունւոյ, արագատիպ «Էսպերանտօ», Թիֆլիս, 1912, էջ Է-ԺԷ:

[76] Գիտական գրականութեան մէջ, ԺԹ. դ. երկրորդ կէսի հայ առեւտրաարդիւնաբերող, խոշոր բարեգործ Առաքել Ծատուրեանի ծննդավայրը թիւրիմացաբար նշուած է Շուշին: Օրինակ, Շիրվանզադէն գրում է, որ Ծատուրեանցը եղել է շուշեցի (Ա. Շիրվանզադէ, «Կեանքի բովից», *երկերի ժողովածու, հտր. 8*, «Հայաստան», Երեւան, 1961, էջ 166): Ծատուրեանը որպէս շուշեցի է յիշատակուած նաեւ Մարդասիրական Ընկերութեան տեղեկագրում (*Պատմական համառօտ տեսութիւն*, էջ 63): Հետեւելով տարածուած կարծիքին՝ Ծատուրեանին շուշեցի է համարել նաեւ Դադայեանը (Դադայեան, *Հայերը*, էջ 174): Հակառակ այդ կարծիքի՝ պահպանուել են ստոյգ տեղեկութիւններ թէ Ծատուրեանը ծնունդով Զանգեզուր գաւառի Քարահունջ գիւղից է: Նրա քարահունջեցի լինելը հաստատւում է հենց այն փաստով, որ թաղուած է հայրենի գիւղում (մանրամասն տե՛ս՝ Գ. Ստեփանեան, «Առաքել Ծատուրեան. առեւտրաարդիւնաբերողը եւ բարեգործը», *Գիտութեան աշխարհում*, 2:2018, էջ 2-9:

[77] Սարուխան, էջ 65:

[78] Վ. Աթանեսեան, *Միքայէլ Արամեանց*, Հեղ. հրատ., Երեւան, 2011, էջ 22:

[79] Խոշոր նաւթարդիւնաբերող, մեծահարուստ եւ բարեգործ Մանթաշեանցը ծնուել է Թիֆլիսում, 1842 Մարտի 3ին: Նրա հայր Յովհաննէսը, մօր կողմից ծագումով կրօնական հնագոյն ընտանիքից՝ Թիֆլիսի Ս. Գէորգ եկեղեցու աւագ քահանայ Տէր Փիլիպէ Ղայթմազեանցի գերդաստանից էր (Գալուստ Շերմազանեան, *Նիւթեր ազգային պատմութեան համար: Երեւելի հայկազունք ի Պարսկաստան*, Ռոս-

տով, 1890, էջ 215): Մանթաշեանցը սովորել է Թիֆլիսի Գալուստ վրդ. Փափազեանի մասնաւոր դպրոցում: Մանթաշեանցի հայրը Պարսկաստանում նշանաւոր եւ ազդեցիկ հայերից էր, արդիւնաբերական յայտնի վաճառական: «*Այդ շրջանում շատ ազդեցիկ էր Եովանէ* (Յովհաննէս - Գ.Ս.) *Մանթաշեանը, այժմեան Մանթաշեանների պապը եւ յայտնի բարեգործ հանգուցեալ Ալ. Մանթաշեանցի հայրը, որ մի գեղեցիկ փղամարդ էր՝ մորթէ գլխարկը դրած, մահուդէ կապան հագին մինչեւ օձիքը կոճկած*» (*Մշակ*, 1916 Հոկտեմբերի 19): Յովհաննէս Մանթաշեանցը գործի բերումով բնակւում էր Պարսկաստանում, սակայն նրա ընտանիքը գտնւում էր Թիֆլիսում: 1868ին Ալ. Մանթաշեանցը հօր հետ եղել է Լայպցիգում, այնտեղից անցել Լոնդոն եւ Մանչեստր: 1878ին Մանթաշեանցները Պարսկաստանից վերադառնում են Թիֆլիս: Շարունակելով ճանապարհորդութիւնները դէպի եւրոպական երկրներ՝ Ալ. Մանթաշեանցը սովորում է ֆրանսերէն, գերմաներէն եւ անգլերէն: Հօր մահից յետոյ (1887) Ալ. Մանթաշեանցը նրա թողած 20,000ռ. դրամագլխով շարունակում է առեւտրական գործունէութիւնը: Ուսումնասիրելով նաւթարդիւնաբերութեան պայմանները եւ համոզուելով այդ գործի հեռանկարային լինելը՝ 50,000ռ. դրամագլխով 1889ին Միքայէլ Արամեանցի առաջարկով միանում է «Առ. Ծատուրեանց եւ միւսներ» ընկերութեանը (*Ոսկի բարեկամ հայ ընտանեայց*, էջ 4-5): Դառնալով ընկերութեան վարչութեան անդամ՝ Մանթաշեանցը ամբողջութեամբ հրաժարւում է Թիֆլիսում ծաւալած արտադրական գործունէութիւնից: Աստիճանաբար հմտանալով նաւթարդիւնաբերութեան ոլորտում՝ Մանթաշեանցը հետզհետէ ձեռք է բերում իր գործընկեր փայատէրերի մասնաբաժինները: Ընկերութիւնից առաջինը հեռանում է Առաֆէլեանը՝ ստանալով 45,000ռ.: Նրան յաջորդում է Թումայեանը՝ իր արժեթղթերը վաճառելով 70,000ռ., ապա նրանց օրինակին հետեւում է Ծատուրեանցը, որն իր արժեթղթերը վաճառում է 620,000ռ.: Այդ գործարքի մասին *Տարազը* յայտնում է հետեւեալ մանրամասները: Ալ. Մանթաշեանցը, «*...այրական հասակում սկսելով Բագւում նաւթային արդիւնաբերութիւն, ընկերանում է ղարաբաղցիների՝ պ. պ. Յովսէփ Թումայեանցի, Առաքել Ծատուրեանի եւ Միքայէլ Արամեանցի հետ: Շնորհիւ վերջինիս՝ վախեցնում են նախ ծերունի եւ համեստ, աստւածավախ Յովսէփ Թումայեանին ու ապա Առաքել Ծատուրեանին, նկարագրելով ձեռնարկութեան անաջող ընթացքը եւ մեծ փոխառութեան պերսպէկտիւը ու մոլորեցնում ծերունի Թումայեանին, եւ էժան գնով առնում նրա նաւթահանքերը: Վերջը հեռացւում է եւ Առաքել ապէրը (Ծատուրեան) եւ գործի տէրերը մնում են երկու աժդահաներ՝ Ալ. Մանթաշեան եւ պ. Միք. Արամեան*» (*Տարազ*, Թիֆլիս, 1911, Յուլիս-Օգոստոս, էջ 97): Ընդ որում՝ Մանթաշեանցի բաժնեմասը կազմում էր 75%, իսկ Արամեանցինը՝ 25%: Մանթաշեանցը, աստիճանաբար տէր դառնալով «Առ. Ծատուրեան եւ միւսներ» ընկերութեան նաւթադաշտին, հիմնադրում է նոր ընկերութիւն՝ «Ա. Հ. Մանթաշեանց եւ ընկ. առեւտրական տուն»: Այս անգամ Մանթաշեանցի բաժնեմասը կազմում էր 80%, իսկ Արամեանցինը՝ 20%: Ընդարձակելով իր գործունէութիւնը՝ Մանթաշեանցը 22 մլն. ռ. հիմնադիր դրամագլխով 1899ին հիմնում է «Ա. Հ. Մանթաշեանցի նաւթարդիւնաբերական եւ առեւտրական ընկ.» բաժնետիրական նոր ընկերութիւնը, որի կանոնադրութիւնը հաստատւում է նոյն թուականի Յունիսի 11ին (*Устав нефтепромышленного и торгового общества «А. И. Манташев и К°»* (Ա. Ի. Մանթաշեւ եւ Կ^{0}» նաւթարդիւնաբերական եւ առեւտրական ընկերութեան կանո-

ջարկելով նրան մտնել իրենց ընկերութեան մէջ եւ դառնալ բաժնետէր: Կայացած գործարքի հիման վրայ Միքայէլ Արամեանցը չպէտք է միջամտէր «Ա. Մանթաշեանց առեւտրական տուն Կ°» ընկերութեան գործունէութեանը, այլ պէտք է միայն ստանար իր հասանելիք շահութատոկոսները[80]:

ԺԹ. դարավերջին եւ Ի. դարի սկզբներին նաւթային արդիւնաբերութեան համակենտրոնացման պայմաններում Մանթաշեանցը եւ Պ. Ղուկասեանը, 1902ին համաձայնութեան գալով «Բրիթիշ փեթրոլիում» ընկերութեան հետ, Լոնդոնում հիմնեցին «Homelight Oil» ընկերութիւնը: Ընկերութեան մշտական ներկայացուցիչն էր Լոնդոնում հաստատուած Աբրահամ Ղուկասեանը[81]:

Բաքուի նաւթարդիւնաբերութեան զարգացման գործում մեծ դեր են ունեցել նաեւ շուշեցի Առաֆելեան եղբայրները, որոնք կարճ ժամանակամիջոցում ձեռք էին բերել հսկայական հարստութիւն[82]:

1870ականներից խոշոր նաւթահանքերի տէրեր էին շուշեցիներ Կրասիլնիկեան եղբայրները, Գրիգոր եւ Յովսէփ Թումայեան եղբայրները, Գրիգոր Դիլդարեանը, Մուսայէլ Շահգեդանեանցը[83] եւ Աւետիք Բալայի Ղուկասեանը (Պօղոս, Արշակ եւ Յակոբ Ղուկասեանների հօրեղբայրը)[84]:

նադրութիւն), Սանկտ Պետերբուրգ, 1899: Ընկերութեան առեւտրական զինանշանն էր հայկական «Գառն Աստծոյ» պատկերը: Մանթաշեանցը մահացաւ 1911 Ապրիլի 19ին՝ Պետերբուրգում (Սարուխան, էջ 81. նաեւ՝ Լ. Բալագեան, *Ալեքսանդր Մանթաշեանց (ազգային բարերարը եւ գեղարուեստի մեկենասը)*, «Աստղիկ» գրատուն, Երեւան, 2003:

[80] Միք. Արամեանցի դրամագլուխը շարունակաբար դրւում էր շրջանառութեան մէջ եւ կրկնապատկւում: Վրաստանի տարբեր վայրերում նա ունէր ամառանոցներ: Նրան էին պատկանում Ախթալայի կալուածքը, Կիսլովոդսկի հանքային ջրերի տաղաւարը: Ախթալայում նա շինել է տուել զուիցերիական ոճով ամառանոց-դղեակ: Արամեանցը եղել է նշանաւոր բարերար: Նա իր միջոցներով Թիֆլիսի Հալաբար թաղամասում կառուցել է քաղաքային հիւանդանոց՝ տրամադրելով 100,000ռ. (*Մուրճ*, 1903, № 4, էջ 229): Իր հովանաւորութեան տակ է վերցրել Հաղպատի եւ Սանահինի վանքերի ու այնտեղ բնակուող վանականների խնամքը: Բարեգործական տարբեր ձեռնարկումներ է կատարել Շուշի քաղաքի համընդհանուր զարգացման համար: 1917 հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Արամեանցը, զրկուելով իր ամբողջ ունեցուածքից եւ կարողութիւններից, մահացաւ 1924ին ծայրայեղ չքաւորութեան ու մէնութեան մէջ: Թաղուել է Թիֆլիսի Խոջիվանքի հայկական գերեզմանոցում (մանրամասն տե՛ս՝ Վ. Աթանէսեան, *Միքայէլ Արամեանց. կեանքի եւ գործունէութեան դրուագներ*, Հեղ. հրատ., Երեւան, 2013. նաեւ՝ Կ. Օհանջ (Օհանջանեան), *Արամեանց*, «Էդիթ Պրինտ», Երեւան, 2020:

[81] Դադայեան, *Հայերը*, էջ 32:

[82] Գիւլխանդանեան, էջ 98:

[83] Նոյն, էջ 99-100:

[84] Բաքուի Ա. արհեստակցականի վաճառական Աւետիք Ղուկասեանը (1837, Շուշի-1902, Թիֆլիս) աւարտել է ծննդավայրի՝ Շուշիի գաւառական դպրոցը: Մոսկուայում, ապա Նուխիում, Ղուբայում եւ Շուշիում զբաղուել է տորօնի եւ հիւսուածքա-

Շուշեցի Դաւիթ Աւան-Իւզբաշեանի եւ Խատիսեանների նշանաւոր տոհմի ներկայացուցիչ, մասնագիտութեամբ տարրաբան, լեռնային երկրաչափ Կոնստանդին Խատիսեանի հիմնադրմամբ, 1880ականների վերջերին գործում էր «Կ. Խատիսեան - Դ. Աւան-Իւզբաշեան ընկերութիւնը»[85]: Նաւթարդիւնաբերութեան ասպարէզում մեծ յաջողութիւնների էին հասել շուշեցիներ Դոլուխանեանները[86], յանձին՝ «Սոուչաստնիկի» նաւթարդիւնաբերական վաճառատան տնօրէն-կառավարիչ Բոգդան Դոլուխանեանի[87]:

Այսպիսով՝ տնտեսական կեանքի աշխուժացման պայմաններում հայ առեւտրաարդիւնաբերողներից շատերը, այդ թւում նաեւ արցախցիները, Բաքւում հիմնել են գործարաններ, արտադրամասեր եւ արդիւնաբերական այլ ձեռնարկութիւններ: Եթէ 1889ին Բաքւում գրանցուած 69 նաւթարդիւնա-բերական ընկերութիւններից հայկական էր 34ը, ապա՝ 1907ին 154ից՝ 89ը (58%), 1909ին 176ից՝ 99ը (56%): 1907ի դրութեամբ 448 միլիոն փութ նաւթի հանոյթի 52,4%ը պատկանում էր հայերին, 36,9%ը՝ ռուսներին եւ եւրոպացիներին, իսկ 8,7%ը՝ կովկասեան այլ ժողովուրդների: Արդէն 1917ին 368 միլիոն փութ նաւթի հանոյթի 53%ը պատկանում էր հայ ձեռնարկատէրերին[88], որոնք լուրջ մրցակցութեան մէջ էին գտնւում «Նոբէլ եղբ.» եւ «Կասպից-Սեւծովեան ընկերութիւն (Ռոտշիլդ)» վաճառատների հետ:

ԱՐՑԱԽԱՀԱՅԵՐԻ ԱՅԼ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԲԱՔՒՈՒՄ

Բաքւում արցախցի առեւտրաարդիւնաբերողները նաւթի վերամշակման եւ արդիւնաբերական այլ գործարաններ ունենալուց զատ, ունեցել են նաեւ նաւամատոյցներ եւ սեփական շոգենաւեր: Սեփական շոգենաւերի, այդ թւում նաեւ ովկիանոսային նաւերի տէրեր էին Ղուկասեան եղբայրները եւ Գ. Թումայեանը[89]: Կասպից ծովում բեռնափոխադրումներ են կատարել

թէլերի առեւտրով: Այնուհետեւ մեկնել է Բաքու եւ ներգրաւուել նաւթարդիւնաբերութեան մէջ: Կասպից ծովում ունէր «Արգօ» եւ «Թամարա», նաւթատար շոգենաւերը: Սակայն նաւթարդիւնաբերութեան ոլորտում նա երկար չի մնում: 1892ին մշտական բնակութիւն է հաստատել Թիֆլիսում («Աւետիք Ղուկասեան ճեմարան Հայաստանում», *Տարազ*, Թիֆլիս, 5:1914, Մայիս, էջ 90-91):

[85] Գ. Ստեփանեան, «'Բաքուի Հայոց Կուլտուրական Միութեան' պատմութիւնից», *Բանբեր հայագիտութեան*, 1:2020, էջ 87-102:

[86] *Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ Հայոց*, էջ 72:

[87] Դադայեան, *Հայերը*, էջ 222. նաեւ՝ Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան*, էջ 298:

[88] ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 30-31. նաեւ՝ Микаелян, Мирзоян, էջ 77:

[89] ՀԱԱ, ֆ. 196, ց. 1, գ. 23, թ. 29: Նաւթարդիւնաբերող, մեծ բարերար, 1882-85՝ Բաքուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան վարչութեան նախագահ Գր. Թումայեանը 1889ին Կասպից ծովում ունէր հինգ շոգենաւ՝ «Սերիոժա», «Արշակ», «Լազար», «Կոնստանտին» եւ «Ադմիրալ»: Բացի վերջինից, միւսները կրում էին նրա որդիների անունները (Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան*, էջ 147): Թումայեանն ունեցել է ողբերգական մահ: 1894 Յունիսին նա որոշում է ընտա-

նաեւ արցախցի առեւտրաարդիւնաբերողների եւ հայկական այլ ընկերութիւնների «Հայաստան», «Արցախ», «Կիլիկիա», «Արմեինիա», «Գրիգոր Արծրունի»[90], «Արծուի Վասպուրականի», «Արգօ», «Թամարա», «Արմենիա», «Մասիս», «Արարատ», «Ամասիա», «Արաքս», «Անի», «Սե-ւան», «Շուշանիկ», «Աննա», «Գրիգոր», «Վահան», «Սարուխան», «Արշակ», «Ար-

նիքի անդամների հետ հանգստանալու մեկնել գերմանական Կարլսբադ քաղաք: Նրա հետ էին կինը՝ Թագուհին, երկու դուստրերը եւ մանկահասակ կրտսեր որդի Կոնստանտինը: Թումայեանները նախ Բաքուից գնացքով հասնում են Բաթում, ապա Յունիսի 13ին շոգենաւով ճանապարհւում Նովոռոսիյսկ, Կերչ ու Սեւաստոպոլ, այնտեղից էլ մէկ այլ շոգենաւով պիտի մեկնէին Օդեսա եւ արդէն ցամաքով ուղեւորուէին Կարլսբադ: Յունիսի 26ին Թումայեան ընտանիքը բարձրացաւ «Վլադիմիր» շոգենաւ: Ողբերգութիւնը տեղի ունեցաւ Յունիսի 27ի գիշերուայ ժամը 1ին: Թարխանկուտ հրուանդանից 32 մղոն հեռաւորութեան վրայ իտալական «Columbia» շոգենաւն ամբողջ թափով հարուածում է «Վլադիմիր»ի առաջամասի աջ կողին: Ջուրը սրընթաց յորդում է խորտակուող նաւ: Խեղդուածների մէջ էին Գր. Թումաեանը, նրա կինը եւ Բաքուի իգական գիմնազիայի 5րդ դասարանի աշակերտուհի դուստրը: Փրկուեցին միւս դուստր Եղիսաբէթը եւ Կոնստանտինը, որոնց կիսացնորուած վիճակում հասցնում են Օդեսա: Գր. Թումայեանի մարմինը գտան, տեղափոխեցին Բաքու եւ հողին յանձնեցին Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու բակում: Նրա տիկնոջ ու դստեր մարմինները չգտնուեցին (Խ. Դադայեան, «Բարերարի վախճանը», http://www.irates.am/hy/1393572174 (մուտք՝ 28.02.2014):

[90] Նաւթատար շոգենաւը Անգլիայի Նիւքասըլ արդիւնաբերական քաղաքում 1894ին պատուիրել է նաւթարդիւնաբերող Պօղոս Սարգսեանի կինը՝ Եղիսաբէթ Սարգսեանը, որը լինելով *Մշակի* ջերմ համակիր, նաեւ ի պատիւ հիմնադիր-խմբագրի մկրտել է՝ «Գրիգոր Արծրունի»: Ադրբեջանում խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ 1921ին նաւը բռնազաւթուել, պետականացուել եւ յանձնուել է նորաստեղծ ադրբեջանական նաւթային արդիւնաբերութեան «Ազնեֆտ» պետական միաւորմանը: 1937 Ապրիլի 25ին վերանուանուել է «Վալերի Չկալով»: Համաշխարհային Բ. պատերազմին նաւը 1941 Յուլիսին սպառազինուել է, պատերազմի աւարտից յետոյ՝ զինաթափուել եւ շարունակել է բեռնափոխադրումներ կատարել Կասպից ծովում: Շոգենաւն իր գոյութիւնն աւարտել է 1948ին: Դուրս գրուելուց յետոյ «Բուզաչի» թերակղզու ռազմական զէնքերի ծովային փորձարկման դաշտում (պոլիգոն) ծառայել է որպէս վերջրեայ թիրախ եւ 1960 Յուլիսին ռմբահարման հետեւանքով վերջնականապէս խորտակուել (Սարուխան, էջ 61. նաեւ՝ Դադայեան, *Հայերը*, էջ 16-17. նաեւ նոյնի «Կասպից ծովը եւ հայերը. 1887ին Հայկական «ԱՐՑԱԽ» նաւը բախուեց Բաքուի մաքսատան նաւակայանին. բացառիկ փաստեր» (https://yerevan-times.com/16510651065108-6/ (մուտք՝ 18.07.2021). նաեւ՝ http://wap.shmas.forum24.ru/ ?1-18-0-00000109-000-30-1 (մուտք՝ 28.03.2010):

շալոյս», «Փամբակ», «Զանգ», «Մուշ»[91], «Վան» եւ հայանուն ու օտարանուն այլ մարդատար ու ապրանքատար շոգենաւերն ու առագաստանաւերը[92]:

Աւետիք Ղուկասեան, Պօղոս Ղուկասեան, Աբրահամ Ղուկասեան

Արցախցի նաւթարդիւնաբերողներն ունէին նաեւ կերոսին տեղափոխող յատուկ նաւեր («Հայկական շոգենաւային ընկերութեան», «Արմենիակ», Սիմէոն Առաֆէլեանի «Ռաֆաիլ», Գր. Թումայեանի՝ «Ադմիրալ», «Լազար», «Կոնստանտին»)[93]: 1890 Յունիսին հայ նաւթարդիւնաբերողները հիմնել էին նաեւ Հայոց Շոգենաւային Ընկերութիւնը[94], որը պատուիրում է մի մեծ շոգենաւ՝ «Ռաֆֆի» անունով[95]: Ընկերութեանն էին պատկանում նաեւ «Աշոտ Երկաթ», «Ամասիա» եւ «Արամայիս» շոգենաւերը[96]:

---

[91] «Ե. Գ. Փիթոյեան» նաւթարդիւնաբերական եւ առեւտրային ընկերութեան սեփականատէր, թիֆլիսաբնակ Եսայի Փիթոյեանին պատկանող «Մուշ» նաւթատար նաւը կառուցուել է 1891ին: 1914ին վերանուանուել է «Սպարտակ»: 1941 Յուլիսին զօրակոչուել է: Պատերազմի աւարտից յետոյ զինաթափուել եւ շարունակել է բեռնափոխադրումներ կատարել Կասպից ծովում (http://wap.shmas.forum24.ru/?1-18-0-00000109-000-30-1 (մուտք՝ 28.03.2010):

[92] *Արօրի պատկերազարդ օրացոյց 1894 թուականին Քրիստոսի*, տպ. «Արօր», Բաքու, 1893, էջ 35. նաեւ՝ Գ. Ստեփանեան, «Համառօտ ակնարկ Կասպից ծովի հայկական նաւատորմի պատմութիւնից», *Ծովի մշակոյթը՝ մարդկութեան մշակոյթն է քաղաքակրթութիւնների երկխօսութիւնում: «Այաս» ծովային հետազօտութիւնների ակումբի 25ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթեր*, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2010, էջ 39-44:

[93] *Сборник статистических сведений о русской и американской нефтяной промышленности* (Ռուսական եւ ամերիկեան նաւթային արդիւնաբերութեան վիճակագրական ժողովածու), Բագու, 1890, էջ 48, 50:

[94] *Արձագանք*, Թիֆլիս, 1890 Յունիսի 24, էջ 14. նաեւ՝ *Տեղեկագիր եւ հաշիւ Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան 1906 թուականի*, Բագու, 1907, էջ 29:

[95] Նոյն:

[96] *Ежегодник Баку и его районы 1909* (Տարեգիրք Բաքուի եւ նրա շրջանների), օտդ. (բաժին) V, Սանկտ Պետերբուրգ, էջ 201:

ԲԱՔՈՒԻ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԲՆԱԳԱՒԱՌԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Բաքուի հայ դրամատէրերը, այդ թւում նաեւ արցախցիներն, իրենց որոշակի նպաստն ունէին նաեւ քաղաքի ֆինանսավարկային եւ դրամատնային համակարգերի կազմակերպման գործում: 1886ից «Բաքուի փոխադարձ վարկի ընկերութեան» (հիմն. 1875ին) խորհրդի նախագահն էր Յակոբ Ադամեանը[97]: «Բաքուի քաղաքային վարկային ընկերութեան» (հիմն. 1900ին) դիտորդական յանձնախմբի անդամ էր Գր. Թումայեանի որդին՝ Արշակը. ընկերութեան տարեկան զուտ շահոյթը կազմել է 400,000ռ.[98]:

«Գրիգոր Արծրունի» նաւթատար շոգենաւը

Անհրաժեշտ է նշել, որ Բաքուի հայ դրամատէրերը, նրանց թւում նաեւ արցախցիները, Բաքուից բացի, վիթխարի կարողութիւնների հասնող անշարժ գոյք էին ձեռք բերել նաեւ Թիֆլիսում՝ այդտեղի լաւագոյն փողոցներում (Միքայէլեան, Գոլովինսկի, Սոլոլակի թաղ Հալաբարում եւն.) գնելով կամ կառուցելով շքեղ տներ[99]: Այդ նպատակով իրենց դրամագլուխն էին Թիֆլիսում ներդնում Ա. Ղուկասեանը, Գ. Թումայեանը, Գր. Առաֆէլեանը, Կ. Կրասիլնիկեանը, Ս. Բուդաղեանը եւ ուրիշներ[100]:

Յիրաւի, իրենց ստեղծագործ եւ գիտամշակութային բարձր մակարդակով առաջնակարգ եւ ուրոյն տեղ գրաւելով Բաքուի հասարակական-քաղաքական, ընկերատնտեսական ու կրթամշակութային ոլորտներում՝ արցախահայերը ԺԹ. դարի Բ. կէսից հասարակութեան ընկերային կառուցուածքի մէջ զբաղեցնում էին բարձր դիրքեր, ապրում բարեկեցիկ կեանքով:

Բաքուի հայերը, որոնց թւում նաեւ արցախցիները, առաջատար դիրք ունէին քաղաքի հասարակական-քաղաքական կեանքի գրեթէ բոլոր ոլորտներում: Նրանք զբաղուել են ոչ միայն առեւտրաարդիւնաբերութեամբ, այլեւ որպէս իրաւասուներ, պարբերաբար ընտրուել են Բաքուի քաղաքա-

---

[97] Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան*, էջ 148:

[98] Նոյն:

[99] Г. Туманов, *Заметки о городскомь самоуправлении на Кавказе* (Նշումներ Կովկասում քաղաքային ինքնակառավարման մասին), Թիֆլիս, 1902, էջ 83:

[100] Ֆ. Մարդանեան, «Բիբի-Էյբաթի պետական նաւթային հողերի աճուրդը», *Մուրճ*, 1899, № 2-3, էջ 256. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 57, ց. 1, գ. 309, թ. 11:

յին խորհրդում[101], պատասխանատու պաշտօններ վարել թէ՛ նահանգային, թէ՛ գաւառային ու քաղաքային վարչութիւններում: Այսպէս, երդուեալ ատենակալ եւ ճանաչուած փաստաբան էր շուշեցի Բոգդան Դոլուխանեանը[102], 1906ին քաղաքագլխի ժամանակաւոր պաշտօնատարն էր շուշեցի Ջումշուդ Ջաւադի Յարութիւնեանը[103]: Նիկոլայ Ռաեւսկուց (1907-12) յետոյ շուրջ երկու տարի այդ պաշտօնը եւս զբաղեցրել է Յարութիւնեանը (1912-14 Դեկտեմբեր)[104]: Քաղաքագլուխ Բիչ Լուկայից (1914 Դեկտեմբեր-1917 Նոյ.)[105] յետոյ դարձեալ տեղապահն էր Յարութիւնեանը (1917 Դեկտեմբեր)[106]:

Նկատենք, որ արցախցի դրամատէրերը զգալի դերակատարութիւն են ունեցել նաեւ Բաքուի հայ հասարակական-քաղաքական կեանքում: Օրինակ, Յակոբ Ղուկասեանը[107] 1918 Նոյեմբերի վերջերից մինչեւ իր մահը (3 Յունուար 1919) նախագահել է Բաքուի հայոց ազգային խորհուրդը[108]:

ԱՐՑԱԽՑԻ ԲԱՐԵՐԱՐՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԻՑ

Բաքուի հայ բուրժուազիան ունէր իր գործունէութեան առանձնայատկութիւնները: ԺԹ. դարի կէսերից Բաքուի հայ իրականութեան մէջ հանդէս եկաւ մի իւրօրինակ երեւոյթ՝ բարեգործական շարժումը, որը բուռն զարգացում ապրելով դարձաւ Բաքուի հայ հասարակական կեանքի զարթօնքի կենարար ազդակներից մէկը: «*Չնայելով տեղացի հայոց սակաւութիւնը,*

---

[101] *Кавказский календарь на 1889* (Կովկասեան օրացոյց), Թիֆլիս, 1888, էջ 176-77:

[102] Ստեփանեան, *Բաքու քաղաքի հայութեան*, էջ 182:

[103] *Документы по истории Баку (1810-1917)*, Сост. Л. Алиева, М. Назирова, Н. Полумордвинова (Փաստաթղթեր Բաքուի պատմութեան (1810-1917 թթ.), Ш. Рзаева, Р. Руднева, Ч. Салахлы, Բաքու, 1978, док. № 40, էջ 99:

[104] *Հովիտ*, Թիֆլիզ, 1912 Դեկտեմբերի 23, էջ 79. նաեւ՝ *Արեւ*, Բագու, 1914, Նոյեմբերի 25: Ջ. Յարութիւնեանն իր ընտանիքով զոհուել է Բաքուի 1918 սեպտեմբերեան կոտորածների ժամանակ (*Աշխատաւոր*, Թիֆլիս, 1918 Սեպտեմբերի 25):

[105] *Արեւ*, Բագու, 1914 Դեկտեմբերի 9:

[106] *Кавказский календарь на* 1915, Թիֆլիս, 1914, էջ 128. նաեւ՝ *Արեւ*, Բագու, 1917 Նոյեմբերի 15:

[107] Իդէպ, Յակոբը, ի յիշատակ Եալթայում վաղաժամ մահացած դստեր՝ Հռիփսիմէի (1905-09) Ս. Հռիփսիմէ տաճարի նման մի երկյարկ եկեղեցի է կառուցել տեղի ամենաբարձր բլուրներից մէկի վրայ: Եկեղեցին նախագծել է Գ. Տէրմիքէլեանը: Եկեղեցու առաջին յարկը եղել է հանգստարան, որտեղ գտնւում է Հռիփսիմէի շիրիմը: Եկեղեցու այդ մասը յետագայում դարձաւ Ղուկասեանների տոհմական դամբարան (Է. Տիգրանեան, *Գաբրիէլ Տէր-Միքէլեան (կեանքն ու գործունէութիւնը)*, «Սովետական գրող», Երեւան., Երեւան, 1981, էջ 29. նաեւ՝ Ստեփան սրկ. Կարապետեան, «Եալթայի հայոց եկեղեցին», *Էջմիածին*, Դ:1984, էջ 59-60):

[108] ՀԱԱ, ֆ. 223, ց. 1, գ. 113, թ. 1. նաեւ՝ Ս. Մելիք-Եոլչեան, «Բագուի հերոսամարտը», *Հայրենիք*, Գ. տարի, Սեպտեմբեր, 11:1925, էջ 75:

նոքա (Բաքուի հայութիւնը - Գ.Ս.) *շատ աշխատասէր եւ հոգասէր են եւ իւրեանց քանի մի բարի գործքերովը նախադաս համարուելու են այլ քաղաքների հայերէն*»[109],- ասուած է *Տոմար ընտանեկան* օրացոյցում:

Բաքուի հայ դրամատէր խաւի գրեթէ բոլոր ներկայացուցիչները, այդ թւում նաեւ արցախցիները, իրենց անբաւ հարստութիւնից բաժին էին տրամադրում բարեգործական նպատակների համար: Մեկենասութիւնը հիմնականում ուղղւում էր հիւանդանոցների եւ դպրոցների կառուցմանը, ազգային թատրոններին եւ մշակութային այլ օջախներին, աղէտեալներին ու որբերին, նիւթական օգնութիւն էր տրամադրւում այդ նպատակով ստեղծուած բարեգործական ընկերութիւններին եւն.: Այսպէս, Թաղիադեանը գրում է, որ Թառումեան եղբայրները կուտակել էին անբաւ հարստութիւն եւ ազգային ու հասարակական գործերում բաւականին առատաձեռն էին՝ «*Առօրէական բաշխոյք ողորմութեանց տան այսմիկ առաւելոյք քան զոուբլիս 500, թող զմեծամեծ հասարակաց սեղանս, զոր տային ի տան անդ իւրեանց*»[110]:

1864 Մայիսի 21ին Բաքուի նահանգի բժշկապետ Դաւիթ Յարութիւնի Ռոստոմեանցի նախաձեռնութեամբ հիմնւում է Կովկասի հայոց կրթական բարեգործական հիմնարկութիւններից աւագագոյնը՝ «Հայոց մարդասիրական ընկերութիւն յանուն Ս. Գրիգոր Լուսաւորչի» (ՀՄԸ) բարեգործական ընկերութիւնը, հիմնադիր 13 անդամներից 9ը՝ շուշեցի էր. Ներսէս Նիկիտի Կրասիլնիկեանց, Մովսէս Զոհրաբի Զոհրաբեանց, Մուսայէլ Դանիէլի Շահգեդանեանց, Գրիգոր Հայրապետի Թումայեանց, Սարգիս Յովհաննէսի Տէրգրիգորեանց, Յակոբ Սահակի Ապրեսեանց, Դաւիթ Յովհաննէսի Ադամեանց, Օհանջան Գրիգորի Հախումեանց եւ Սարգիս Յարութիւնի Գրիգորեանց[111] (Ռոստոմեանից յետոյ ընկերութեան նախագահներ են եղել նաեւ Մովսէս Զոհրաբեանցը (1870-73), Սամուէլ Բաղիրեանը (1879-82) եւ Գրիգոր Թումայեանը (1882-85)[112]: Նկատենք, որ ընկերութեան հիմնադիր անդամներից բացի, մեծ թուով շուշեցիներ եղել են նաեւ անփոփոխ անդամներ[113]:

ՀՄԸի հիմնական նպատակը, ինչպէս ասուած է կանոնադրութեան առաջին գլխում, եղել է՝ «*լուսաւորութիւն եւ բարեգործութիւն տարածել Ռուսաստանի հպատակ գտնուած Հայոց մէջ, առանց զանազանելու նոցա կոչումը եւ դաւանութիւնը*»[114]: ՀՄԸի յենասիւներն էին Ղուկասեան եղբայրնե-

---

[109] *Տոմար ընտանեկան 1874-1875 թթ., հտ. Ա.*, աշխ.՝ Տ. Սրբուհի Ա. Երիցեանց, տպ.՝ գլխաւոր կառավարութեան փոխարքային Կովկասու, Թիֆլիս, 1874, էջ 122:

[110] Թաղիադեանց, էջ 292:

[111] *Պատմական համառօտ տեսութիւն Բագուայ հայոց*, էջ 8:

[112] Նոյն, էջ 11, 16, 18:

[113] Նոյն, էջ 56-71:

[114] ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 55, թ. 46:

րը: Իդէպ, ընկերութեան 1890-91ի նորակառոյց եռայարկ շէնքի դահլիճն իր ծախսով կառուցել է Աւետիք Ղուկասեանը[115]:

Ի. դարասկզբին ընկերութիւնը որոշում է Ստանիսլաւսկայա փողոցում կառուցել նոր, աւելի յարմարաւէտ երկյարկ շէնք: Շինութեան գումարը տրամադրում են նաւթարդիւնաբերող Գր. Թումայեանի ժառանգորդները: Շէնքը նախագծում են ճարտարապետեր Մ. Տէրգրիգորեանցը եւ Հ. Տէրոհանեանը: Շինարարական ախատանքները սկսւում են 1902 Յունիսին եւ աւարտւում 1903 Յունիսին: Շինութեան ճակատին գրուած էր. «Նուէր Գրիգոր Թումայեանի Բ.Հ.Մ.Ը.»[116]:

Փաստերը վկայում են, որ արցախցի բարերարները մայր հայրենիքի հետ այնքան սերտօրէն էին կապուած, որ նրանցից շատերը, օգտագործելով իրենց դիրքն ու հեղինակութիւնը, զանազան առիթներով դրամական զգալի օգնութիւն են ցուցաբերել հարազատ ժողովրդին: Մեկենասութիւնը հիմնականում ուղղւում էր հիւանդանոցների եւ դպրոցների կառուցմանը, ազգային թատրոններին եւ մշակութային այլ օջախներին, աղէտեալներին ու որբերին, նիւթական օգնութիւն էր տրամադրւում այդ նպատակով ստեղծուած բարեգործական ընկերութիւններին եւն.: Մեծահարուստ Համբարձում Հախումեանի կնոջ՝ Մարիամ Հախումեանի (ծագումով Մելիք-Շահնազարեանների տոհմից) եւ թեմական դպրոցի տեսուչ Պ. Շանշեանի, Պ. Պռոշեանի, Ա. Բահաթրեանի եւ Մ. Մուրադեանի ջանքերով Շուշիի թեմական դպրոցին կից 1864 Ապրիլի 7ին հիմնւում է «Մարիամեան» օրիորդաց դպրոցը[117]:

Բարեգործութեան իր չափերով յատկապէս աչքի էին ընկնում Կրասիլնիկեանց եւ Ղուկասեան եղբայրները, որոնք բաւականին գումարներ են ծախսել այդ նպատակներով: Բաքուի մեծահարուստ արցախցիները մեծագումար նուիրատուութիւններ են կատարել՝ մայր Հայրենիքում գիտական եւ լուսաւորական հաստատութիւններ բացելու համար: Այսպէս, Արշակ Ղուկասեանը (մահ. 1917) իր կտակում պատկառելի գումար էր յատկացրել հայկական համալսարանի հիմնարկման համար[118]: Մահուանից առաջ նա 5 մլն. կտակել էր յօգուտ Արեւմտեան Հայաստանի, 2 մլն.՝ Արեւելեան Հայաստանի[119]: Կ. Պոլսում հրատարակուող *Ազատամարտ* օրաթերթն այդ առիթով գրում է. «*Ղուկասեան կտակի հաշուեյարդարութեան տեղեկագիրը*

---

[115] «Աւետիք Ղուկասեան ճեմարան Հայաստանում», էջ 90:

[116] *Отчеть о деятельности правления Бакинского армянского человеколюбивого общества за 1902 г.* (Հաշուետուութիւն Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան գործունէութեան. 1902 թ), էջ 18. նաեւ՝ *Մուրճ*, 4:1904, էջ 176:

[117] Տիկին Ս., «Տիկին Մարիամ Հախումեան», *Մեղու Հայաստանի*, Թիֆլիզ, 1885 Օգոստոսի 15:

[118] Յ. Խաչատուրեան, «Երեք ամիս ի Կովկաս», Թէոդիկ, *Ամէնուն Տարեցոյցը*, *Ժ.-ԺԴ. տարի, 1916-1920,* Կ. Պոլիս, էջ 200:

[119] «Արշակ Ղուկասեանի կտակը», *Փայլակ*, Շուշի, 1917 Յունուարի 29:

Պատրիարքարան հասած ըլլալով, Խառն Ժողովը երէկ կարդաց զայն եւ տեսաւ որ կտակուած գումարէն Ազգին թողուած է 502,629,62 րուպլի»[120]: Շամախու հայոց թեմական խորհուրդը, թեմակալ առաջնորդ Կարապետ եպս. Այվազեանցի օրօք, երբ 1898ին որոշում է նաւթարդիւնագործական «Սեւ քաղաքում»՝ Բիբի-Հէյբաթի եւ Բալախանու հատուածներում կառուցել եկեղեցի, շինարարութեան ծախսը յանձն է առնում Արշակ Ղուկասեանն իր մայր՝ Հռիփսիմէի հետ: Թեմի յաջորդ առաջնորդ Անանիա եպս. Համազասպեանի 1912 Նոյեմբերի գրութիւնում ասւում է. «*Ա. Ղուկասեանը եւ իւր ծերունի Հռիփսիմէ մայրը՝ ցանկութիւն յայտնեցին իրենց ծախքով մի եկեղեցի կառուցանել քաղաքից տրուած նոյն գետնի վրայ*»[121]: Ղուկասեանն այդ նպատակով նախապէս յատկացրել էր 20,000ռ.: Ընդհանուր առմամբ՝ շինութեան համար ծախսուելու էր շուրջ 70,000ռ.[122]: Եկեղեցին օծուելու էր Ս. Հռիփսիմէի անուամբ: Ամէնայն հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցը 1914 Մայիսի 14ի սրբատառ կոնդակով օրհնեց Ղուկասեանին՝ եկեղեցու կառուցումը նախաձեռնելու համար, «*...օրհնելով Ղուկասեանին եւ նրա ծախքով Բագւում նոր կառուցանելի յանուն Ս. Հռիփսիմեայ եկեղեցու գործը*» [123]: Սակայն, ցարական կառավարութեան, մասնաւորապէս Կովկասի կառավարչապետ, հայատեաց Գ. Գոլիցինի կողմից ստեղծուած արհեստական արգելքների պատճառով եկեղեցու կառուցման աշխատանքները ձգձգուեցին եւ այդպէս էլ այն չկառուցուեց:

Ղուկասեան եղբայրները պարբերաբար նիւթական խոշոր միջոցներ են տրամադրել Շուշիի հայրենակից գիւղացիներին՝ իրենց անհամար կարիքները հոգալու համար: Իրենց վաղամեռիկ քրոջ յիշատակը յաւերժացնելու նպատակով եղբայրները դիմում են հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանցին՝ «Մարիամեան» օրիորդաց դպրոցը վերանուանելու «Մարիամ-Ղուկասեան»: Այդ գործի իրականացման համար նրանք մայր աթոռ Ս. Էջմիածնի տրամադրութեան տակ են դնում 200,000ռ. եւ Շուշիում գտնուող 40,000ռ. արժողութեամբ իրենց հայրական երկյարկ տունը բակով ու պարտէզով նուիրաբերում օրիորդաց դպրոցին: Էջմիածնին նուիրաբերած հիմնական դրամագլուխը պէտք է մնար դրամատանը, իսկ ստացուած տոկոսները նպատակաուղղուէին դպրոցի գործունէութեանը: Դպրոցը վերանուանուել է 1913 Յունիսի 20ին: Այն գործել է մինչեւ 1920[124]:

---

[120] *Ազատամարտ*, Կ. Պոլիս, 1914, 23 Օգոստոս-5 Սեպտեմբեր:

[121] Ստեփանեան, «Համառօտ ակնարկ Բաքու քաղաքի հայկական», էջ 168:

[122] Նոյն:

[123] Նոյն:

[124] *Արարատ*, Վաղարշապատ, Ը-Թ:1913, էջ 685. նաեւ՝ Լէօ, *Պատմութիւն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի (1838-1913)*, տպ. Ն. Աղանեան, Թիֆլիզ, 1914, էջ 634-36. նաեւ՝ Ռ. Տէրգասպարեան, *Շուշի քաղաքը*, ՀՀ ԳԱ հրատ., Երեւան, 1993, էջ 93. նաեւ՝ Վ. Բալայեան, *Շուշի. տեղն ու դերը հայոց քաղաքակրթական համակարգում*, «Զանգակ-97», Երեւան, 2017, էջ 230:

Նրանց հօրեղբայր՝ Աւետիք Ղուկասեանը, որ «*...դեռ կենդանութեան ժամանակ վայելում էր պատուաւոր անուն իր լուսամիտ բարի գործերով*», 160,000ռ. անձեռնմխելի գումար էր յատկացրել մայր աթոռ Ս. Էջմիածնին՝ շահութատոկոսներով հոգեւորականներ պատրաստելու, ինչպէս նաեւ՝ աշխարհականներին՝ բարձրագոյն կրթութիւն տալու համար[125]: Այստեղ ուշագրաւ է այն իրողութիւնը, որ Աւետիք Ղուկասեանը, մեծ նշանակութիւն տալով ազգային ընտանիքին, կտակում ընդգծել էր հետեւեալ կարեւոր նախապայմանը: Այսպէս, բարերարն իր կարողութիւնից մօտ կէս միլիոն ռուբլի կտակել էր միակ զաւակին՝ Թամարային[126], հետեւեալ պայմանով. եթէ վերջինս ամուսնանար օտարազգու հետ, կամ մահանար մինչեւ չափահաս դառնալը, ապա այդ ամբողջ գումարը պէտք է անցնէր հայ ժողովրդին, ի դէմս՝ հայոց կաթողիկոսի եւ Կ. Պոլսի պատրիարքի՝ Հայաստանում Ղուկասեան անունով բարձրագոյն ճեմարան բացելու համար (կտակարարներն էին Պօղոս Ղուկասեանը եւ կնոջ եղբայրը՝ շուշեցի Մնացական Խունունցը)[127]:

Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձուների խորհուրդը, երբ նա-խապատրաստւում էր մեծ հանդիսաւորութեամբ 1913 Օգոստոսի 4ին նշելու դպրոցի հիմնադրման 75ամեակը, Միքայէլ Արամեանցը Շուշիի հայրական տունը նուիրաբերում է թեմական դպրոցին[128]: Իսկ բաքուաբնակ մէկ ուրիշ շուշեցի նաւթարդիւնաբերող Բաղդասար Արզումանեանը 200,000ռ. է տրամադրում թեմական դպրոցին[129]:

Բաքւում ապրած տարիներին բարեգործութեամբ է զբաղուել նաեւ զօրավար-տեղակալ Յովհաննէս Լազարեանը՝ պարբերաբար նուիրատուութիւններ կազմակերպելով Բաքուի հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան համար[130]:

Մեծահարուստ եւ բարեգործ Դաւիթ Աւան-Իւզբաշեանն իր ծախսով (15,000ռ.) մայր աթոռ Ս. Էջմիածնում կառուցում է նոր գրատուն եւ 8000ռ. գնում Թիֆլիսում մահացած պատմաբան Ալեքսանդր Երիցեանցի հարուստ գրադարանն ու նուիրաբերում Ս. Էջմիածնին[131]:

---

[125] «Աւետիք Ղուկասեան ճեմարան Հայաստանում», էջ 90:

[126] Թամարան մահացել է վաղաժամ, 1910ին, 15ամեայ հասակում:

[127] «Աւետիք Ղուկասեան ճեմարան Հայաստանում», էջ 90-91:

[128] Սարուխան, էջ 84:

[129] Նոյն:

[130] *Պատմութիւն Բագուայ Հայոց աղքատախնամ եկեղեցական հոգաբարձութեան (1872 թ. Ապրիլի 1-ից մինչեւ 1893 թ. Ապրիլի 1-ը)*, կազմ.՝ Ա. Գալստեանց, տպ. «Արօր», Բագու, 1895, էջ 4-5, 59:

[131] «Երիցեանի Մատենադարանը», *Տարազ*, 6:1903, Փետրուարիի 23, էջ 75. նաեւ՝ Սարուխան, էջ 176:

Շուշեցի Հայրապետ Գրիգորի Հախումեանցը 1889ին ՀՄԸին 600ռ. էր կտակել, որի տոկոսները հանգուցեալի եղբօր ցանկութեամբ միքանի տարի ուղարկուել են Շուշիի թեմական դպրոցի հոգաբարձութեանը[132]:

Ամէնայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Ա. Վանեցուն (Խրիմեան Հայրիկ) ուղղուած Բաքու քաղաքի Ա. արհեստակցականի վաճառական Քրիստափոր Գրիգորի Թումայեանցի յայտարարութեան համաձայն, նրա հայրը՝ շուշեցի Գրիգոր Հայրապետի Թումայեանցը, 1892 Յունիսի 22ին կազմած կտակով աւանդել է ժառանգներին բարեգործական նպատակների համար յատկացնել 75,000ռ.: 1894ին Գրիգոր Թումայեանցի մահից յետոյ ժառանգները՝ ցանկանալով յաւերժացնել իրենց հօր յիշատակը, որոշում են կտակարարի նշանակած 75,000ռ. փոխարէն 83,000ռ. յատկացնել կրօնական եւ ուսումնական նպատակների համար: Այս գումարից Շուշիին է յատկացուել 5000ռ.՝ յօգուտ թեմական հոգեւոր դպրոցի[133]: Աստուածահաճոյ այս ձեռնարկի համար Գրիգոր Թումայեանցի ժառանգները արժանանում են հայրապետական օրհնութեան[134]:

Բաքուի Ա. արհեստակցականի վաճառական Սիմէոն Առաքելի Առաֆէլեանի՝ Թիֆլիսում 1910 Նոյեմբերի 12ին կազմած կտակի համաձայն՝ կտակարարը իր կողմից ձեռք բերուած ողջ անշարժ գոյքը եւ իրեն պատկանող շարժական գոյքի այն մասը, որը կնոջ սեփականութիւնը չէ, բաժնետոմսերը եւն., ողջ իր կարողութիւնը, կտակարարներին պատուիրում է վերածել կանխիկ գումարի, որի մի մասը կտակում է հարազատներին, 15,000ռ. յատկացնում է Էջմիածնի Գէորգեան ճեմարանին, իսկ մնացած կարողութիւնը՝ Շուշիում եւ գաւառում՝ առաւելապէս հայերով բնակեցուած գիւղերում, արհեստագիտական եւ արհեստագործական բաժիններով գիւղատնտեսական եւ կամ գիւղատնտեսական բաժիններով դպրոցներ բացելու, որոնցից մէկը պէտք է լինէր գլխաւոր եւ բաղկացած լինէր միքանի դասարաններից, իսկ մնացածը՝ ցածր ուսումնական հաստատութիւնների տիպի[135]: Բոլոր դպրոցները, ուսումնարանները եւ որբանոցները, որ կը բացուէին կտակարարի միջոցներով, պէտք է կրէին «Սիմէոն Առաֆէլեան» կամ «Առաֆէլեանական» անուանումը: Կտակարարի կամքով կտակարարներ են նշանակուել Բաքուի Ա. արհեստակցականի վաճառականներ Գրիգոր եւ Նիկոլայ Մարտինի Առաֆէլեանները, Արսէն Սերգէյի Կրասիլնիկեանը[136]:

Արցախի թեմի ժամանակաւոր առաջնորդ Զաւէն վարդապետի կողմից Շուշիի քաղաքի կենտրոնական մասում գտնուող Կուսանաց վանքի (նաեւ՝

---

[132] Վ. Յարութիւնեան, «Շուշեցի բարերարների կտակարար գործունէութիւնը», *Պատմութիւն եւ մշակոյթ (Հայագիտական հանդէս)*, Երեւան, 2016, էջ 369:

[133] Նոյն:

[134] Նոյն:

[135] Նոյն:

[136] Նոյն:

Ս. Աստուածածին անապատ, կառուցուել է 1816ին)[137] գաւթում 1914 Հոկտեմբերի 8ին օրիորդաց դպրոց հիմնուելուց յետոյ թեմակալը նկատի ունենալով վանքի անձուկ վիճակը, նիւթական օգնութեան ակնկալիքով դիմում է նաւթարդիւնաբերող Արսէն Կրասիլնիկեանին եւ նրա մօրը՝ Մարիամին «*…խնդրելով, որ նա իր վաղամեռ քրոջ Սոֆիա (Սոփիա) Կրասիլնիկեանի յիշատակը յաւերժացնելու համար, ով թաղուած էր նոյն վանքի գաւթում, նորաբաց դպրոցի պահպանութեան հոգսն իր վրայ վերցնի՝ ապահովելով նրան մի գումարով, որի տոկոսները կը կազմեն մօտաւորապէս 400-500 ռուբլի եւ դպրոցը կ'անուանուի հայոց եկեղեցական-ծխական վանական դպրոց՝ Սոֆիա Կրասիլնիկեանի անուամբ*»[138]: Ընդառաջելով թեմակալին, Արսէն Կրասիլնիկեանը յանձն է առնում «*…պահպանել Կուսանաց վանքի բակում իմ հանգուցեալ քրոջ՝ Սոփիայի անունով դպրոց՝ ընդ միշտ տարեկան 400 ռուբլի վճարով*»[139]:

ՀԱՅ-ԹԱԹԱՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԸ ԵՒ ԱՅՆՈՒՀԵՏԵՒ

Այսպիսով՝ հսկայական էր արցախահայերի, մասնաւորապէս՝ շուշեցիների դերը Բաքուի նաւթարդիւնաբերութեան հիմնադրման եւ զարգացման գործում: Այդ զարգացումը խաթարուեց, երբ ցարական կառավարութեան կողմից 1905-06ին հրահրուեցին հայ-թաթարական ընդհարումները:

Մարդկային կորուստներից զատ, Կովկասեան թաթար աւարառու հրոսակախմբերի կողմից աւերուեցին, հրդեհուեցին հայապատկան տասնեակ առեւտրաարդիւնաբերական ձեռնարկութիւններ՝ նաւթահանքերի եւ նաւթագործարանների հրդեհումով, թալանով ու աւերումով[140]: Աւելի սոսկալի էր նաւթարդիւնաբերող Ալեքսանդր Ադամեանի տան հրդեհը: Երբ կատաղի կովկասեան թաթար խուժանը շրջապատեց Ադամեանի տունը, Ալեքսանդրը դիմում է ինքնապաշտպանութեան: Յայտնի լինելով իբրեւ անվախ որսորդ եւ անվրէպ հրացանաձիգ, նա իր 13ամեայ որդու հետ յամառ մարտի է բռնւում թուական գերակշռութիւն ունեցող թաթար ամբոխի դէմ: Չկարողանալով գրաւել տունը, թաթարներն այն այրում են, որի հետեւանքով այրւում են ւոան բոլոր 17 անդամները, այդ թւում Ալեքսանդրը, կինը՝ Մարիան, նրանց որդին՝ Նիկոլայը եւ այնտեղ ապաստանած հայ հարեւանները:

---

[137] Շ. Մկրտչեան, *Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական յուշարձանները*, «Հայաստան», Երեւան, 1980, էջ 159-160:

[138] Վ. Յարութիւնեան, «Շուշիի օրիորդաց դպրոցները եւ հայ բարերարները», *Մեսրոպ Մաշտոցի համալսարանի լրատու*, Երեւան, 2015, էջ 109:

[139] Նոյն:

[140] ՀԱԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 187, թ. 25. նաեւ՝ *Մուրճ*, 11-12:1905, էջ 103. նաեւ՝ *Обзоры бакинской нефтяной промышленности за 1905* (Բաքուի նաւթարդիւնաբերութեան ամփոփում 1905 թ.), Բագու, 1906, էջ I, II:

Ալեքսանդրի ընտանիքից փրկւում է միայն մի պատանի՝ Արամայիսը, որն այդ օրը պատահաբար գտնւում էր ազգականի տանը[141]:

Հայ-թաթարական ընդհարումներից յետոյ արցախցի առեւտրաարդիւնաբերողները Բաքուի նաւթարդիւնաբերութեան բնագաւառում իրենց կայուն դիրքը պահպանեցին մինչեւ 1918: Բաքուի հայութիւնը մեծապէս տուժեց յատկապէս 1918 Սեպտեմբերի 15ին, երբ Նուրի փաշայի գլխաւորութեամբ թուրքական բանակը հայկական զօրքի մղած աներեւակայելի քաջագործութիւններով առլեցուն չորսամսեայ դիմադրական հերոսական կռիւներից յետոյ գրաւեց Բաքուն եւ մուսաւաթական կառավարութեան աջակցութեամբ, յանձին ներքին գործոց նախարար Բեհբուդ-խան Ջիւանշիրի, տեղի թաթարական ջոկատների հետ միասին երեք օր շարունակ (15-17 Սեպտեմբեր) կոտորածի ենթարկեց աւելի քան 30,000 հայերի՝ կողոպտելով նրանց ունեցուածքը[142]:

Թուրք-թաթարները թալանում են ոչ միայն առանձին անձանց, այլեւ հայ ձեռնարկատիրական կազմակերպութիւնների ունեցուածքը: Նման ճակատագրի արժանացան «Եղբ. Թումայեան», «Բաղդասար-Յակոբեան եւ ընկ.» եւ առեւտրաարդիւնաբերական այլ ընկերութիւններ: Բռնագրաւուեցին նաեւ «Բաքուի Նաւթարդիւնաբերական Միութեան» տնտեսական պահեստները եւն.[143]: «*Աննկարագրելի է այն աղքատութիւնը*,- գրում է *Մշակը*,- *որին ենթարկուել են Բագուի ամենահարուստ եւ նշանաւոր հայերից շատ շատերը: Շատերը թալանուելուց կամ իրանց հարազատներին կորցնելուց յետոյ ինքնասպան են եղել*»[144]: 1918 Հոկտեմբեր-Նոյեմբերին թուրք-թաթարները յափշտակեցին Ղուկասեան եղբայրներին պատկանող «Էլեկտրի-

---

[141] *Լումայ*, Թիֆլիս, Մարտ, 1:1905, էջ 153. նաեւ՝ *Հայրենիք* (լրագիր), Պոստոն, 1905 Ապրիլի 3. նաեւ՝ *Մշակ*, 1905 Փետրուարի 17. նաեւ՝ Հր. Սիմոնեան, *Ադրբեջանցիների պատմութեան «հերոսական» էջերից մէկը լուսանկարներում*, ԵՊՀ հրատ., Երեւան, 2014, էջ 37:

[142] Մանրամասն տե՛ս՝ Բ. Իշխանեան, *Բագուի մեծ սարսափները: Անկեղծային ուսումնասիրութիւն սեպտեմբերեան անցքերի 1918 թ.*, տպ. Մամուլ տնօրէններ՝ Մ. Էփրիկեան եւ Յ. Մայիլեան, Թիֆլիս, 1920. նաեւ՝ ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 94, թ. 96-99. նաեւ՝ *Геноцид армян в Османской империи. Сборник документов*, под редакцией М. Г. Нерсисяна (Հայերի ցեղասպանութիւնը Օսմանեան Կայսրութիւնում), «Հայաստան» հրատ., Երեւան, 1982, էջ 524. նաեւ՝ Գ. Ստեփանեան, «Բաքուի հայերի 1918 թ. կոտորածները եւ թուրք-ադրբեջանական իշխանութիւնների պատասխանատուութիւնը», *Ադրբեջանի պետական ահաբեկչութիւնը եւ էթնիկական զտումների քաղաքականութիւնը ԼՂՀի դէմ (2010 թ. Մարտի 21-24ը Ստեփանակերտում եւ Շուշիում կայացած միջազգային գիտագործնական կոնֆերանսի զեկուցումներ)*, «Կաճառ» գիտական կենտրոնի տարեգիրք, Շուշի, 4:2010, էջ 223-37):

[143] Ե. Գեղամեանց, *Տաճիկները Կովկասում եւ Բագուի անկումը, պր. Բ*, տպ. Ա. Ի. Կարապետեանց, Բագու, 1919, էջ 85-86:

[144] «Բագւում», *Մշակ*, 1918 Հոկտեմբերի 9:

չեսկայա սիլա» բաժնետիրական ընկերութեանը պատկանող գոյքը՝ 155 մլն. ռ. ընդհանուր արժողութեամբ, «Քաղաքների միութեան» գոյքը՝ 33 մլն. ռ. արժողութեամբ, «Կովկաս եւ Մերկուրի» շոգենաւային միութեան, «Արեւելեան միութեան ապրանքային պահեստներ», «Կովկասեան բամբակ» եւ բա-նետիրական այլ ընկերութիւնների ու դրամատների ամբողջ գոյքը[145]: Հայ բնակչութեան կրած միայն նիւթական վնասների գումարը անցնում էր 1 միլիարդ ռուբլուց[146], որը չնչին բան է հայութեան կրած մարդկային կորուստների դիմաց:

Հայերի դէմ կոտորածների քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ մուսաւաթական իշխանութեան տարիներին՝ 1918-20[147]: Աւերուեցին եւ ոչնչացուեցին նաեւ տեղծուած հայկական բազմաթիւ խաչքարեր, մատուռներ ու եկեղեցիներ, այսինքն՝ հայ բնակչութեան նկատմամբ թուրք-մուսաւաթականները իրագործեցին նաեւ մշակութային եղեռն:

Այսպիսով՝ ինչպէս ակներեւ է ցեղասպանութեան միջազգայնօրէն ճանաչուած սահմանումից, այն ամէնը, ինչ տեղի է ունեցել Կուրի ձախափնեակի հայութեան հետ 1918-20ին, անառարկելիօրէն փաստում են, որ կատարուածը ցեղասպանութիւն էր: Յատկանշական է այն իրողութիւնը, որ երկրամասի տեղաբնիկ հայ բնակչութիւնը ցեղասպանութեան ենթարկուեց իր բնօրրանում, այնպէս, ինչպէս երիտթուրքերն իրագործեցին արեւմտահայերի բնաջնջումը 1915-16ին, Արեւմտեան Հայաստանում: Ուստի, թուրք-մուսաւաթականների կիրառած քաղաքականութիւնը պէտք է որակել որպէս արեւմտահայերի ցեղասպանութեան շարունակութիւն եւ բաղկացուցիչ մաս, քանզի Հայոց Ցեղասպանութիւնն իր աշխարհագրական ընդգրկմամբ (Կիլիկիայից մինչեւ Բաքու) համաթուրքականութեան ամբողջական ծրագրի իրականացման հետեւանք էր:

Հայ բնակչութեան նկատմամբ մուսաւաթական կառավարութեան հայահալած յանցաւոր քաղաքականութիւնը շարունակուեց նաեւ խորհրդային իշխանութեան տարիներին. խորհրդայնացումը բնաւ չկասեցրեց խորհրդային Ադրբեջանի ղեկավար շրջանակների հայատեաց քաղաքականութիւնը: Ադրբեջանի յեղկոմի՝ նաւթարդիւնաբերութեան ազգայնացման մասին 1920 Մայիսի 24ի հրամանագրով դադարեցւում է «Բաքուի նաւթարդիւնաբերողների միութեան» գործունէութիւնը: Բռնազաւթում եւ ազգայնաց-

---

[145] Е. Токаржевский, *Из истории иностранной интервенции и гражданской войны в Азербайджане* (Ադրբեջանում օտարերկրեայ միջամտութեան եւ քաղաքացիական պատերազմի պատմութիւնից), Բագու, 1957, էջ 164:

[146] Իշխանեան, էջ 185:

[147] Գ. Ստեփանեան, «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքուի նահանգում 1918-1920 թթ.», *Պատմաբանասիրական հանդէս*, 3:2008, էջ 31-48:

ւում են[148] աւելի քան 272 նաւթարդիւնաբերական մասնաւոր ձեռնարկութիւններ, որոնց հիմքի վրայ կազմաւոր-ւում է «Ադրբեջանական նաւթային արդիւնաբերութեան պետական միաւորումը» («Ազնեֆտ»)[149]:

Անդրադառնալով Բաքուի հայերի անհամար սեփականութեան բռնազաւթմանը, Արտաշէս Աբեղեանն իրաւամբ գրել է. «*Ադրբեջան սեփականազրկելով իրենց սահմանների հայ բուրժուազիան, փէր են կանգնել հայկական հարստութիւնների եւ ուռճացել ի հաշիւ Հայաստանի հայութեան, բռնել նախկին բուրժուազիայի տեղը*»[150]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Բերուած փաստերն առաւել քան անհերքելիօրէն վկայում են, որ ներկայիս Ադրբեջանի արդիւնաբերութեան մի շարք բնագաւառների, մասնաւորապէս գլխաւոր ճիւղի՝ շահութաբեր նաւթարդիւնաբերութեան զարգացման հիմքում ընկած են յատկապէս հայ առեւտրաարդիւնաբերողների եւ մասնաւորապէս՝ արցախահայերի երկար տարիների տքնաջան աշխատանքի շնորհիւ ձեռք բերուած արդիւնաբերական միջոցները:

Այսպիսով՝ բերուած փաստերն առաւել քան անհերքելիօրէն վկայում են, որ ներկայիս «Ադրբեջան» անուամբ արհեստածին կազմաւորուման արդիւնաբերութեան մի շարք բնագաւառների, մասնաւորապէս գլխաւոր ճիւղի՝ շա-

---

[148] Առաջին անգամ դա կատարուել է Բաքուի ժողկոմխորհի 1918 Յունիսի 2 հրամանագրով, որի 2րդ կէտում ասւում էր. «*Բոլոր նաւթային ձեռնարկութիւնները վարչական, տեխնիկական եւ ֆինանսական տեսակէտից ենթարկւում են ժողովրդական տնտեսութեան Բաքուի խորհրդին*» (Ստեփան Շահումեան, *Երկերի լիակատար ժողովածու, հտր. 5 (1918 թ. Մայիսի 29-Սեպտեմբերի 20)*, «Հայաստան», Երեւան, 1978, էջ 59): Իդէպ, ժողկոմխորհի 1918 Յունիսի 6ի՝ «Կասպիական առեւտրական նաւատորմի ազգայնացման մասին» հրամանագրով պետականացուել են նաեւ հայապատկան շոգենաւերը: Հրամանագրի առաջին կէտում ասւում էր. «*Կասպիական ամբողջ առեւտրական նաւատորմը, որը պատկանում է բաժնետիրական ընկերութիւններին, փայատիրական ընկերութիւններին, առեւտրական տներին, բոլոր տիպերի ծովային եւ գետային նաւերի սեփականատէրերին՝ ամբողջ շարժական ու անշարժ գոյքով, դրամարկղների կանխիկ գումարներով, վարկային հիմնարկներում ունեցած ընթացիկ հաշիւներով, եւ ընդհանրապէս, այդ ձեռնարկութիւնների ակտիվներով ու պասսիվներով, ինչում էլ որ դրանք կայանան, յայտարարւում է Ռուսաստանեան Սոցիալիստական Ֆեդերատիւ Սովետական Հանրապետութեան անբաժան սեփականութիւնը*» (նոյն, էջ 71):

[149] *История Азербайджана* (Ադրբեջանի պատմութիւն), *հտր. 3, մաս I*, Ադր. ԽՍՀ ԳԱ հրատ., Բաքու, 1963, էջ 241-42. նաեւ՝ Սարուխան, էջ 218. նաեւ՝ Սահակ Տէր-Գաբրիէլեան, *Յօդուածներ, ճառեր, փաստաթղթեր*, «Հայաստան», Երեւան, 1979, էջ 185-86:

[150] Ա. Աբեղեան, «Հայ-Ատրբէջանեան յարաբերութիւնները (ազգային քաղաքական խնդիրներ)», *Հայրենիք*, 8:1929, էջ 114:

հութաբեր նաւթարդիւնաբերութեան հիմքերը դրել ու զարգացրել են յատկապէս հայ առեւտրաարդիւնաբերողները, մասնաւորապէս՝ արցախահայերը: Սակայն, նրանց երկար տարիների տքնաջան աշխատանքի շնորհիւ ձեռք բերուած արդիւնաբերական միջոցներն ու անբաւ հարստութիւնը ցեղասպանութեան ճանապարհով բռնազաւթուել է մուսաւաթական կառավարութեան եւ դրան յաջորդած խորհրդային իշխանութեան հաստատման տարիներին: Անդրադառնալով Բաքուի հայերի անհամար սեփականութեան բռնազաւթմանը, Արտաշէս Աբեղեանն իրաւամբ գրել է. «...*Ադրբեջան սեփականազրկելով իրենց սահմանների հայ բուրժուազիան, փէր են կանգնել հայկական հարստութիւնների եւ ուռճացել ի հաշիւ Հայաստանի հայութեան, բռնել նախկին բուրժուազիայի տեղը*»[151]:

[151] Աբեղեան, «Հայ-Ադրբէջանեան», էջ 114:

ARTSAKH ARMENIANS AS BENEFACTORS AND FOUNDERS OF OIL PRODUCTION IN BAKU (SECOND HALF OF THE 19TH CENTURY–BEGINNING OF THE 20TH CENTURY)

(Summary)

GEVORG STEPANIAN (SASUN-07@MAIL.RU)

The Armenians of Baku, particularly the Artsakh Armenians, who lived in the city between the 1850s and 1910s, played a critical role in the production of oil and the rapid rise of the social and economic status of the under-developed city of Baku.

In a sense they became economic tigers and pioneers in developing and putting the oil production of Baku on the international map.

The paper highlights the role played by a number of economic tycoons who were born in Artsakh and then left for Baku. Armenians who owned major oil wells in Baku include the brothers Arafelyan, the Ghukasyans, the Krasilnikyans, the Grigor and Hovsep Tumayan brothers, Grigor Dildaryan, Musayel Shahgedanyan and many others. The paper argues that the initial solid steps taken for the development of the Baku oil industry were due to the hard work and endless efforts of a number of Armenian oil moguls who traded the Baku oil on international markets using their oil tankers.

Almost all representatives of the Armenian capitalist class in Baku, including those from Artsakh, allocated significant portions of their huge wealth to charitable purposes. The sponsorship was mainly directed to the construction of hospitals, schools, national theaters and other cultural centers, as well as disaster victims and orphans; material assistance was allocated to benevolent organizations, etc.

During World War I, Ottoman Turkey planned to invade Baku and was instrumental in the proclamation of a state called "Oguzakan". However, the state was proclaimed as "Greater Azerbaijan" and was to hold the triangular territory lying between the Black Sea, the Caspian Sea and Iran. Such a state was to be realized at the expense of Armenian territory, which was to be ethnically cleansed of its indigenous population.

On September 15, 1918 a Turkish army captured Baku with the support of the local Tatars' Musavat Party. The occupation led to a three-day massacre, which cost the lives of some 30,000 Armenians, followed by expulsions and persecution of the resident Armenians.

The paper argues that the Baku massacres should be considered as the continuation of the Genocide of Western Armenians in 1915–1916, as it implies the realization of a political plan, the establishment of a Pan-Turkic entity. The paper notes that anti-Armenian policies remained on the agenda of the state of Soviet Azerbaijan. Indeed, the Soviet Azeri state did everything within its capacity to pauperize the Armenians, persecute them and sideline them in its domestic politics. The paper notes that by the decree of May 24, 1920 of the Revolutionary Committee of Azerbaijan on the nationalization of the oil Industry the activities of the "Baku Union of Oil Producers" was terminated. The Armenian oil companies were "nationalized", and the "State Union of Azerbaijani Oil Industry" ("Azneft") was formed.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՒՂԸ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀՈՂԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆՈՐԱՅՐ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ
ԹԱԹՈՒԼ ՄԱՆԱՍԷՐԵԱՆ (tatoulm@gmail.com)

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետութիւնում առկայ ընկերային խնդիրները մեղմելու, ազգաբնակչութեան պարէնային անվտանգութիւնն ապահովելու, գիտղատնտեսութեան առջեւ ծառացած խնդիրները քննարկելիս յաճախ յիշատակւում է երկրում աղքատութեան մակարդակը եւ դրա կրճատմանը ձգտող քաղաքականութեան անհրաժեշտութիւնը: Աւելին, տարիներ առաջ՝ 2003ին կառավարութեան եւ փորձագիտական հանրութեան ջանքերով մշակուեց նաեւ «Աղքատութեան յաղթահարման ռազմավարական ծրագիր»ը (ԱՀՌԾ), որի գլխաւոր նպատակը ՀՀում աղքատ բնակչութեան 2003ի 50,1%ը 2015ին 19%ի հասցնելն էր, ծայրայեղ աղքատութիւնը՝ 16%ից 4%ի իջեցնելը[1]: Սա նշանակում է, որ աղքատութեան նպաստը 12 տարուայ ընթացքում առնուազն պէտք է քառապատկուէր՝ հասնելով շուրջ 30 հազար դրամի: Նուազագոյն կենսաթոշակը նոյնպէս չպէտք է պակաս լինի նուազագոյն սպառողական զամբիւղի արժէքից: Միայն արտաքին աղբիւրներից՝ Համաշխարհային բանկից, Արժոյթի միջազգային հիմնադրամից, ՄԱԿի զարգացման ծրագրից, Միացեալ Թագաւորութեան միջազգային զարգացման նախարարութիւնից, Նիդեռլանդների կառավարութիւնից, Գերմանիայի կառավարութիւնից, Եւրոպական Միութիւնից, Եւրոպական Խորհուրդից եւ ԱՄՆ ՄԶԳից եւ տարբեր երկրների կառավա-

[1] Հաստատուած ծրագրի գլխաւոր շահառուները հենց աղքատ կամ ծայրայեղ աղքատ մարդիկ էին: Աղքատները սպառողական զամբիւղի արժէքից պակաս ամսեկան եկամուտ ունեցող մարդիկ են: Ծայրայեղ աղքատները կամ չքաւորները նրանք են, ում ամսեկան վաստակը չի գերազանցում նուազագոյն պարէնային զամբիւղի արժէքը: Ըստ մշակուած ծրագրի, աղքատութեան կրճատման գլխաւոր միջոցը տնտեսական աճը ու նոր աշխատատեղերի ստեղծման խրախուսումը պէտք է լինէր՝ յատկապէս ինքնազբաղուածութեան եւ փոքր *պիզնէս*ի բնագաւառում: Աղքատութիւնը առաջիկայ տասնամեակում պէտք է կրճատուէր նաեւ ընկերային քաղաքականութիւնը աւելի հասցէական ու նպատակային դարձնելու հաշուին՝ յատկապէս աղքատութեան նպաստների եւ կենսաթոշակների հետեւողական բարձրացմամբ: Ծրագրուող ժամանակաշրջանի վերջում շօշափելի աճ պէտք է ունենար աղքատութեան նպաստը: Ծրագրային նպատակն այն էր, որ ստացուող ընտանեկան նպաստի չափը գերազանցի պարէնային աղքատութեան չափը ընտանիքի իւրաքանչիւր անդամի հաշուով (https://www.gov.am/am/library/2/page/3/):

րութիւններից պէտք է ներգրաւուէր աւելի քան 1 միլիարդ 200 միլիոն դոլար: Աղքատութեան կրճատման ուղիներից պէտք է լինէր նաեւ եկամուտների բաշխումը աւելի արդարացի ու նպատակային դարձնելը. նախ՝ աւելի շատ հարկեր հաւաքելով, երկրորդ՝ ստուերում գոյացող ու իւրացուող եկամուտների մի մասը բացայայտելով եւ ուղղելով աղքատութեան խնդիրի լուծմանը:

Կարեւոր է հաշուի առնել այն հանգամանքը, որ տուեալ դէպքում աղքատութիւնը ոչ թէ պատճառ է, այլ՝ հետեւանք, ուստի պէտք է պայքարել ոչ թէ հետեւանքի դէմ, այլ այն ծնող պատճառի: Պատճառների թւում ՀՀ գիւղերի հանդէպ պետական հոգածութեան բացակայութիւնն է, ՀՀ գիւղատնտեսութեան նախարարութեան վերացումը, հողային քաղաքականութեան բացակայութիւնը եւ գիւղական համայնքների *բռնի* խոշորացումը: Արդիւնքում, այստեղ մատնանշուող խնդիրների լուծմանն ուղղուած առաջարկների եւ համալիր ծրագրի իրականացումը կը յանգեցնի հայկական գիւղերի հողային ոլորտում տեղ գտած բացասական երեւոյթների մի զգալի մասի կրճատմանը կամ վերացմանը:

ՆԻՒԹԸ ԵՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Տնտեսութեան տարբեր ճիւղերից ՀՀի համար առանձնայատուկ կարեւորւում է գիւղատնտեսութիւնն իր տարբեր ճիւղերով (անասնապահութիւն, այգեգործութիւն, բուսաբուծութիւն), որը այս ուսումնասիրութեան կարեւոր առանցքն է ոչ միայն աշխատուժի ներգրաւուածութեան բարձր տեսակարար կշռի եւ աշխատանքի ցածր արդիւնաւէտութեան մտահոգիչ գործօնների, այլեւ Առեւտրի Համաշխարհային Կազմակերպութեան պահանջների կատարման եւ հայրենական ապրանքների մրցունակութեան բարձրացման հրամայականն իրականութիւն դարձնելու պատճառով[2]: Աւելին, գիւղատնտեսութեան ոլորտի զարգացումը կարեւորւում է նաեւ միանգամից միքանի այլ առումներով՝ պարէնային անվտանգութեան ապահովման, գիւղատնտեսական արտադրութեան արտադրողականութեան բարձրացման, գիւղմթերքների եւ նրանցից ստացուած ապրանքների մրցունակութեան բարձրացման, ոլորտը արդիւնաբերական հիմքերի եւ մեքենայացման աւելի բարձր աստիճանի բարձրացնելու, գիւղմթերքների վերամշակումը խթանելու, դրանք արտաքին շուկաներում ներկայացնելու, ինչպէս նաեւ հայկական գիւղերն ամրացնելու, ժողովրդագրական խնդիրների արդիւնաւէտ լուծմանը նպաստելու ռազմավարական հրամայականներով:

Առկայ խնդիրների ուսումնասիրութիւնը հիմնուած է վիճակագրական տուեալների վերլուծութեան, առանձին երեւոյթներից դէպի աւելի ընդհան-

[2] WTO, Armenia, 2005,
https://www.wto.org/english/thewto_e/countries_e/armenia_e.htm :

րական հիմնահարցերի բացայայտման եւ ընդհանրացումների, ոլորտում առկայ միտումների եւ զարգացումների պատճառահետեւանքային կապերի բացայայտման, փորձագիտական գնահատականների համադրման եւ այլ մեթոդների վրայ:

2020ին ինչպէս համավարակի, այնպէս էլ արցախեան ճակատում պատերազմական գործողութիւնների անուղղակի եւ անմիջական ազդեցութեան ներքոյ տնտեսական իրավիճակի շարունակական վատթարացման արդիւնքում տնտեսական անկումը կազմել է 7.8%: Ներկայումս գիւղատնտեսութեան ոլորտը գտնւում է որոշակի ճգնաժամային միտումների պայմաններում. հողագործութեան ոլորտում զբաղուածների թիւն ընդհանուրի (նկատի ունենք զբաղուածների, աշխատողների) մէկ երրորդից աւելին է, ինչը նշանակում է, որ ներգրաւուած աշխատուժի ընկերային պայմանների վատթարացումը կը յանգեցնի նաեւ յիշեալ ցուցանիշի մակարդակի վատթարացմանն ամբողջ երկրով մէկ: Իր հերթին, սա աւելացնում է քաղաքաբնակեցման, գիւղերից դէպի քաղաքներ մարդկանց արտահոսքի, հետեւաբար՝ գիւղերի ամայացման գործընթացը, ինչն էլ սնուցում է անցանկալի ծաւալների հասած արտագաղթը, որը փորձագէտների վկայութեամբ միայն 2021ի առաջին հինգ ամիսներին կազմել է 90,000[3]:

ՀՀ Վիճակագրական կոմիտէի տուեալները՝ 1992-2021ին ՀՀ ժամանածների եւ մեկնածների[4]	
1991–98 (Լեւոն Տերպետրոսեան)	**Ուղղութեան կշիռ (+, -)**
1992	-228,600
1993	-141,100
1994	-127,800
1995	-37,500
1996	-20,500
1997	-31,300
1998–2007 (Ռոբերտ Քոչարեան)	**Ուղղութեան կշիռ (+, -)**
1998	-24,400
1999	-7200
2000	-57,500
2001	-60,400
2002	-2.700
2003	-10,200
2004	+2100
2005	+12,500
2006	+21,700

[3] «Յունուար–Մայիսին ՀՀից շուրջ 90,000 մարդ է հեռացել. քանի՞ տոկոսը չի վերադարձել», https://armeniasputnik.am/20210612/hunvar-mayisin-hayastanic-shurj-90-000-mard-e-mahacel-qani-tokosy-chi-veradardzel-27890392.html :

[4] http://www.aniarc.am/2022/02/07/migration-1992-2021/ :

2007	-3200
2008–18 (Սերժ Սարգսեան)	**Ուղղութեան կշիռ** (+, -)
2008	-23,059
2009	-24,978
2010	-46,684
2011	-43,820
2012	-42,811
2013	-31,188
2014	-41,672
2015	-43,438
2016	–48,170
2017	–26,897
2018–21 (Նիկոլ Փաշինեան)	**Ուղղութեան կշիռ** (+, -)
2018	+15,317
2019	+10,506
2020	+12,093
2021	–100,000 եւ աւելի

ՈԼՈՐՏԻ ՎՐԱՅ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՕՆՆԵՐԸ

Գիւղատնտեսութեան ոլորտի անկման պատճառների հիմքում ընկած է նաեւ ոլորտի համար պատասխանատու պետական կառոյցի՝ գիւղատնտեսութեան նախարարութեան լուծարումը: Նման քայլը պէտք է հաշուի առնել հետեւեալ փաստերը.

- գիւղական բնակավայրերը կազմում են ՀՀ տարածքի գերակշիռ մասը,
- գիւղացիական տնտեսութիւնները հաշւում են 350 հազարից աւելին,
- իւրաքանչիւր գիւղացուն յատկացուած 800 քառակուսի մետր տարածքը, թոյլ չի տալիս նրանց ներառել գործազուրկների ցանկում, անկախ նրանից՝ վնասո՞վ թէ՞ շահոյթով են մշակում այդ հողատարածքները,
- այս ոլորտում գերակշռում է ձեռքի աշխատանքը, հետեւաբար՝ արտադրողականութիւնն ամենացածրն է տնտեսութեան մէջ,
- գիւղատնտեսութիւնն է կոչուած ապահովելու ազգաբնակչութեան պարէնային անվտանգութիւնը,
- հայկական գիւղերը գնալով թուլանում են խոշորացման արդիւնքում,
- գիւղերում կտրուկ վատացել է ժողովրդագրական իրավիճակը՝ բնակչութեան ծերացում, արտագաղթ եւն.:

Այսպիսով, լուծարելով գիւղատնտեսութեան նախարարութիւնը պետութիւնն իրականում հրաժարւում է վերը նշուած խնդիրները լուծելու պատասխանատուութիւնից: Համեմատութեան համար նշենք, որ առաջին հանրապետութիւնից՝ 1918ից սկսած, այնուհետեւ խորհրդային կարգերի օրօք իր գործունէութիւնը շարունակած եւ անկախութեան տարիներին մշտապէս գործած գիւղատնտեսութեան նախարարութիւնը արդիւնաւէտութեան տարբեր աստիճաններով զբաղուել է այս եւ այլ յարակից

խնդիրներով: Արցախում, օրինակ, այս նախարարութիւնը գործում է ճիշտ այնպէս, ինչպէս նման կառոյցները գործում են աշխարհի ինչպէս զարգացած (ԱՄՆ, Եւրամիութեան երկրներ, Ճապոն), այնպէս էլ բոլոր զարգացող երկրներում (Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան եւն.), մինչ ՀՀում չկայ գիւղատնտեսութեան նախարարութիւն եւ գիւղատնտեսութեան ոլորտի քաղաքականութիւն: Այս պայմաններում անընդունելի է պարէնային անվտանգութեանը ձգտող յստակ աշխատանքային ծրագրի, ինչպէս նաեւ աւելի լայն առումով՝ հողային քաղաքականութեան փաստացի բացակայութիւնը, փոքր տնտեսութիւնների հետ պետութեան համագործակցութեան դադարեցումը եւն.[5]: Ընդհանուր առմամբ, տնտեսական աշխուժութիւնը ՀՀում էականօրէն կրճատուել է եւ 2021ին կազմել է 7.8% տոկոս: Կարեւոր է նկատել, որ այսօր երկրի ՀՆԱի 40%ն արտադրւում է 340,000 գիւղացիական տնտեսութիւնների կողմից: Այն կազմում է ընդհանուր ապրանքաշրջանառութեան 20%ը: Ցածր է աշխատանքի արտադրողականութիւնը, ու թէեւ ՀՀում այն ունի աճի միտում, սակայն աճի թափը դեռեւս զիջում է համաշխարհային միջին մակարդակին: Վերջինս ենթադրում է մրցակիցների արտադրողականութեան համեմատ աւելի բարձրը աճ մրցակիցներին գերազանցող թափերով: ՀՀում վերջին տասնամեակում մէկ աշխատողի հաշուով համախառն աւելացուած արժէքը (ՀԱԱ) նկատելի աճ է գրանցել: Այն աւելացել է շուրջ 1700 ԱՄՆ դոլարով (հաստատուն ԱՄՆ դոլար, 2010)՝ 3% միջին տարեկան աճի թափով: Մէկ շնչին բաժին ընկնող ՀԱԱի միջին տարեկան աճի թափն է՛լ աւելի բարձր է՝ 5%[6]:

ՀԵՏԱԶՕՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Մեր դիտարկմամբ առանց մրցունակութեան մակարդակի բարձրացման եւ արտահանման ծաւալների աւելացման իրական զարգացման մասին խօսք լինել չի կարող: Արտադրողականութեան աճն էական ազդեցութիւն կարող է թողնել ոչ միայն գիւղատնտեսութեան, այլեւ այս ոլորտին առնչուող այլ արտադրութիւնների եւ ծառայութիւնների վրայ: Իր հերթին, աշխատուժի շուկայում մրցակցութիւնը կարող է յանգեցնել արտահանող արտադրութիւններում եկամուտների աճին: Այս ամէնը պայմանաւորուած է որոշակի տնտեսական բարեփոխումներով, որոնց ծաւալն ու արդիւնքները մեծապէս պայմանաւորուած կը լինեն աւանդական ոլորտների, մասնաւորապէս՝ գիւղատնտեսութեան զարգացմամբ: Ակնկալւում է, որ այս ոլորտներում արտադրողականութեան աճը կը յանգեցնի որոշակի աշխատատեղերի զուտ կորստի (կը գերազանցի ընդլայնուած արտադրութեան

[5] Արցախի պետական համալսարանում քննարկուել են տնտեսական անվտանգութեանն առնչուող հարցեր,
http://www.asu.am/index.php?option=com_content&view=article&id=1265 :

[6] www.armstat.am :

շնորհիւ ստեղծուած աշխատատեղերի թիւը): Տնտեսութեան արտահանելի ոլորտներում ստեղծուած հնարաւորութիւնները պէտք է կարողանան կլանել աւանդական ոլորտների եւ գիւղատնտեսական հատուածի աւելցուկ աշխատուժը՝ առաջացնելով կառուցուածքային փոփոխութիւնների եւ հմտութիւնների զարգացման անհրաժեշտութիւն: Նման վերափոխումներից՝ հողի համատարած սեփականաշնորհումն իր դրական արդիւնքների հետ միասին, անսպասելի բացասական շրջադարձեր է բերել հայ գիւղացու համար:

ՀՀում գիւղատնտեսական նշանակութեան հողերը բաւականին մասնատուած են, յատկապէս Արարատեան դաշտավայրում: Օրինակ՝ Արարատի մարզում սեփականաշնորհուած 1 հողաբաժնի միջին չափը կազմում է 0.48 հա., Արմաւիրում՝ 0.68 հա, որոնք էլ տրոհուած են 3-4 հողակտորների[7]: Հողատարածքների մասնատուածութիւնն անհնար է դարձնում գիւղատնտեսութեան մէջ օգտագործուող մեքենաների օգտագործումը: Մասնաւորապէս, դժուարացել է հողերի մշակումը լեռնային բնակավայրերում, որտեղ պահանջւում են տուեալ տեղանքին համապատասխան գիւղատնտեսական մեքենաներ: Չի ձեւաւորուել նաեւ հողի շուկան, որը դանդաղեցնում է գիւղատնտեսութեան զարգացումը՝ ողջ երկրի տարածքում: Միւս կողմից, նկատւում է յատկապէս բերրի հողատարածքների զանգուածային կենտրոնացում՝ համեմատաբար սահմանափակ թուով մարդկանց ձեռքին: Հողատարածքներն այդպիսով վերածւում են խոշոր հողային սեփական տարածքների, որոնք անհամատեղելի են ազատ մրցակցութեան հռչակած սկզբունքների հետ: Մեր համոզմամբ, այնքան վտանգաւոր չէ հողերի կենտրոնացման բուն գործընթացը, որքան այն փաստը, որ հողի սեփականատէրերից շատերը չեն շտապում զբաղուել հողի մշակմամբ՝ այն մատնելով պարապուրդի, հետեւաբար, ժամանակի ընթացքում յանգեցնելով հողի որակի անկման եւ երկրի տնտեսութեան համար այնքան կարեւոր - առանց այն էլ սահմանափակ - պիտանի հողատարածքների ընդհանուր ծաւալի կրճատման: Սեփականատէրերն, այդպիսով, սպասում են յարմար պահի՝ խորհրդանշական գումարներով ձեռք բերած հողատարածքներն առաւելագոյն շահաւէտութեամբ վերավաճառելու համար[8]:

Շրջանառութիւնից ակամայից դուրս մնացած հողատարածքները վերստին օգտագործելու եւ սեփականատէրերին տնտեսապէս հողօգտագործումը հարկադրելու նպատակով մեր կողմից *առաջարկւում է չօգտագործուող հողատարածքներից գանձել չօգտագործման հարկ*՝ այն ամէն

---

[7] *ՀՀ Հողային օրէնսգիրք*, https://www.arlis.am/documentview.aspx?docid=74667 :

[8] Maitreesh Ghatak, Dilip Mookherjee, "Land Acquisition for Industrialization and Compensation of Displaced Farmers," *Journal of Development Economics*, 6(110):2014, էջ 303-12, https://doi.org/10.1016/j.jdeveco.2013.01.001 :

տարի երկրաչափական աճով աւելացնելով մինչ այն աստիճան, որ սեփականատէրերին ձեռնտու չլինի չօգտագործուող տարածքների համար մեծ գումարներ վճարել: Արդիւնքում անհրաժեշտութիւն կ'առաջանայ կա՛մ մատչելի շուկայական գներով հողը զիջել դրա իրական արժէքը գնահատողներին կա՛մ սեփական ուժերով կազմակերպել հողերի մշակում, որը բնականաբար նուազագոյնի կ'իջեցնի նաեւ հարկային բեռը[9]:

Այսօր աւելի քան երբեւէ, կարեւոր է բարձրացնել գիւղատնտեսութեան ոլորտում աշխատանքի արդիւնաւէտութիւնը, այն աստիճանաբար տեղափոխելով արդիւնաբերական եւ արհեստագիտական բարձր հիմքերի վրայ: Միայն մրցունակութեան բարձր մակարդակը թոյլ կը տայ լուծել երկրի պարէնային անվտանգութեան խնդիրը: Ընդսմին, *երկիրը կերակրող գիւղացին ինքն այսօր ընկերային պաշտպանութեան եւ համակարգային աջակցութեան խնդիր ունի*: Թէեւ վերջին շրջանում պետութեան եւ մասնաւոր կառոյցների կողմից որոշակի միջոցներ են ձեռնարկւում հակակարկտային ցանցերով գիւղացիական տնտեսութիւններին աջակցելու, կաթիլային համակարգերի տեղադրումն առաւել մատչելի դարձնելու եւ համեմատաբար էժան գներով պարարտանիւթեր մատակարարելու ուղղութեամբ, ապահովագրական համակարգի ներդրումը գիւղատնտեսութեան բնագաւառում առանց պետութեան մասնակցութեան անիրատեսական է ներկայումս: Անհրաժեշտութիւն է առաջացել առաջնահերթ *քայլեր ձեռնարկելու սերմերի ընտրովի անվտանգութեան ապահովման ասպարէզում*, ինչը թոյլ կը տայ նուազագոյնի հասցնելու GMO՝ գենետիկօրէն բարեշրջուած սննդամթերքից առաջացող սպառնալիքները: Հայ ջոկողների՝ մրգի, բանջարեղէնի, տարբեր մշակաբոյսերի սերմերի մասնագէտների առջեւ պետութիւնը պէտք է խնդիրներ դնի, օգնի դրանց հանգուցալուծմանը:

Գիւղատնտեսութեան ոլորտում յիշատակուած եւ այլ խնդիրների արդիւնաւէտ լուծումը թոյլ կը տայ նաեւ արդիւնաւէտ լուծումներ գտնել հայկական գիւղերի ամրացման, համայնքների եւ տարածքների համաչափ զարգացման, ամայացած գիւղերի ու շէների տարաբնակեցման, եւ առաջին հերթին՝ սահմանամերձ համայնքների ըստ ամէնայնի զարգացման:

Գիւղերի եւ գիւղացիական տնտեսութիւնների ամրապնդումը, գիւղատնտեսութեան ոլորտում կենսական նշանակութեան ծրագրերի մշակումն ու իրականացումը պէտք է զուգորդուեն *ոլորտի փորձագէտների մասնակցութեամբ պետութեան կողմից ընթացիկ եւ հեռանկարային հողային քաղաքականութեան հիմնադրոյթների մշակման եւ դրանց իրականացման հետ*:

[9] Ն. Մանասէրեան, *Ագրարային հարցը երէկ եւ այսօր*, Տնտեսագէտ հրատ., Երեւան, 2005, էջ 35-74:

Համաշխարհային փորձը վկայում է, որ յատկապէս գիւղատնտեսութեան ոլորտում պետութեան դերը ոչ թէ նուազում է, այլ աւելի աշխուժանում՝ հաշուի առնելով նաեւ այն պատասխանատուութիւնը, որ կրում է պետութիւնը՝ ոլորտի զարգացման, ազգաբնակչութեանը որակեալ պարէնով ապահովելու եւ տնտեսութեան այս ճիւղի մրցունակութիւնը բարձր պահելու գործում: Խօսքից *պէտք է գործնական կիրառութիւն ստանայ գիւղացիական համագործակցութիւնը, գիւղացուն խորհրդանշական տոկոսադրոյքով վարկերի եւ դրանց նպատակային օգտագործման համար խորհրդատուութեան տրամադրումը, պետական մթերումների որակապէս նոր համակարգի ստեղծումը*: Իվերջոյ, դա են պահանջում պետութեան կողմից իրագործուող կարգաւորիչ, վերահսկիչ գործառոյթները: Համեմատութեան համար նշենք, որ ոչ միայն զարգացած, այլեւ զարգացող բազմաթիւ երկրներ հսկայածաւալ նպաստներ (subsidies) են ուղղում գիւղատնտեսութեան զարգացմանը: Իսկ մի շարք երկրներում ագարակային տնտեսութիւններն ու երկրագործութիւնը (agribusiness) շատ աւելի շահութաբեր են դառնում հենց պետութեան անմիջական օժանդակութեամբ: Նման աջակցութիւն ցուցաբերւում է ոչ միայն ԱՄՆում, Եւրամիութեան բոլոր երկրներում, այլեւ Չինաստանում, Թայլանդում եւ Իրանում:

Ցանկալի է *նպաստաւոր պայմաններ ստեղծել գիւղերում մանր եւ փոքր ձեռնարկատիրութեան, փոքր ու միջին արտադրութիւնների կայացման համար*: Պակաս կարեւոր չեն նաեւ ժողովրդական արհեստները, յուշանուէրների արտադրութիւնը, մրգի տարբեր տեսակներից ստացուած խմիչքների, պահածոների փառատօնները:

Աւելի համարձակ քայլերով պէտք է նպաստել փոքր օդանաւորդութեան վերագործարկմանը, որը կարող է զգալիօրէն իջեցնել գիւղացու կողմից կատարուող ծախսերը վնասատուների, կրծողների, միջատների եւ տարբեր հիւանդութիւնների դէմ օգտագործուող թունաքիմիականների օգտագործման, վնասատուներից, զանգուածային բուսական հիւանդութիւնների բուժման, արհեստական անձրեւներ առաջացնելու ինչպէս նաեւ առանձին դէպքերում ստացուած շուտ փչացող բերքը սպառման շուկայ հասցնելու եւ այլ հարցերում:

Կարեւոր է նաեւ յուսալի տեղեկատուութիւն ստանալ հանրապետութեան բոլոր համայնքներից՝ մշակովի տարածքների, գիւղատնտեսական բերքի եւ այլ հարցերի վերաբերեալ, որը թոյլ կը տայ հաշուառել գիւղատնտեսութեան ոլորտի ներուժն ու մրցակցային առաւելութիւնները, մշակել ամէն համայնքի անձնագիր ու բոլոր ենթաճիւղերի մանրակրկիտ քարտէզագրում:

ԼԵՌՆԱՅԻՆ ԳԻՒՂԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆ Է

*Կոլխոզ-սովխոզ*ային ժամանակաշրջանի վերջին մոհիկանները վկայում են, որ 1970ականներին Մոսկուայի կողմից լայն հանրութեանն անյայտ պատճառներով սկիզբ առած գիւղերի եւ գիւղապետարանների խոշորացում-ապախոշորացումից յետոյ ՀՀ գիւղատնտեսութիւնն այլեւս ուշքի չեկաւ: Դա է վկայում նաեւ վիճակագրութիւնը: Իսկապէս, համայնատիրական կարգի գոյութեան վերջին 2-3 տասնամեակների ընթացքում ՀՀ գիւղատնտեսութեան զարգացման թափերը, միջին հնգամեայ ցուցանիշերով նուազեցին 5-10%ից մինչեւ 5-0,5%: Այլ խօսքով, հանրային գիւղատնտեսութիւնը այդ տարիներին դոփում էր տեղում: Ինչը եւ աւարտուեց համայնավարական հողային կարգի տխուր եւ համատարած փլուզումով:

Ինչպէս վկայում է տնտեսագիտական–վիճակագրական վերլուծութիւնը, ՀՀ գիւղերը խոշորագոյնն են ամբողջ ԱՊՀ տարածքում: ՀՀ մէկ գիւղի բնակչութեան միջին թիւը մօտ 1500 մարդ է, որը 2.5 անգամ գերազանցում է ԱՊՀ միջին ցուցանիշերին[10]: 2022ին խոշորացուած համայնքներում աւելի մեծ է այդ ցուցանիշը: Համեմատութեան համար նշենք նաեւ, որ Վրաստանում գրեթէ նոյն ցուցանիշերն են, ըստ որում այստեղ առկայ են լեռնային բնակավայրերի հիմնախնդիրներ:

Յիշեցնենք, որ խոշոր տնտեսութիւնների առաւելութեան մասին "դասական" մարքսիստական տեսութիւնը վաղուց արդէն մերժուել-հերքուել է կեանքի եւ գիտութեան կողմից որպէս հակագիտական մոլորութիւն: Ասուածը վերաբերւում է նաեւ խոշոր տնտեսութիւնների կառավարմանը. նման խոշոր եւ գերխոշոր տնտեսութիւնների կառավարումը անհամեմատ աւելի բարդ է եւ ցածր արդիւնաւէտ[11]: Իսկ դրանց հեղինակները՝ Արեւմուտքը, ունի խիստ հակասական փորձ այս հարցում:

---

[10] ՀՀ վարչատարածքային միաւորների արտաքին տնտեսական կապերի զարգացման հիմնախնդիրները (http://councils.ysu.am/pdf_files/015/2013/015-Khachatryan_Lilit.pdf):

[11] Եթէ ցանկութիւն կար 915 համայնքի փոխարէն ունենալ 300 համայնք, դա, ըստ Համայնքների միաւորում կազմակերպութեան նախագահ Էմիլ Երիցեանի, պահանջում է այլ մօտեցում, այն է՝ վարչատարածքային նոր համակարգի ստեղծում: Վրաստանում, օրինակ, երբ նախկին նախագահ Սահակաշվիլին 2004ին գոյութիւն ունեցող 1000ից աւելի համայնքները միաւորելով ստացաւ 60 համայնք, պատճառը ***ուրիշ*** էր: Գոյութիւն ունէին հայկական, ադրբեջանական գիւղեր, առկայ էին ընտրովի մարմիններ, որոնք ունէին սեփական ամավարկ, եւ դա ամէնեւին էլ ձեռնտու չէր Վրաստանի իշխանութեանը: Միաւորելով համայնքները, որտեղ 70 տոկոսից աւելին բնակչութեան հայեր ու ադրբեջանցիներ էին, ղեկավար նշանակուեց վրաց ազգի ներկայացուցիչ: Այս դէպքում կարելի է յստակ ասել, որ համայնքների խոշորացման ճանապարհով էթնիկական խնդիր էր լուծւում (http://mtad.am/hy/hraparakumner/):

Յատկանշական է, որ իրենց՝ եւրոպացիների իսկ խոստովանութեամբ, այնտեղ, ուր դիմել են համայնքների համատարած եւ արագ խոշորացման, գրեթէ կորցրել են գիւղացիութիւնը որպէս դասակարգ եւ այժմ լուրջ սպառնալիքներ են ստեղծուել սեփական երկրի համար: Եւ հակառակը, գիւղացիութիւնը եւ գիւղատնտեսութեան մրցունակութիւնը պահպանուել են այն երկրներում, որոնք աւելի հաւասարակշիռ մօտեցում որդեգրեցին այս հարցում: Գերմանիայում, օրինակ, այս գործընթացը տեւեց 10 տարի՝ 1965-75, իսկ Շուէտում նոյն գործընթացի համար պահանջուեց 44 տարի՝ 1951ից մինչեւ 1999: Ինչ վերաբերւում է Արեւելեան Եւրոպայի երկրներին, ապա մէկ համայնքի բնակչութեան միջին թիւը Չեխիայում 1680 մարդ է, Սլովաքիայում՝ 1846, Հունգարիայում՝ 3290, ՀՀ գիւղական համայնքներում՝ 1443: Հազարից պակաս բնակչութիւն ունեցող համայնքներն այս երկրներում համապատասխանաբար կազմում են ամբողջի՝ 79.8%, 68.5%, 52.6%, ՀՀում՝ 52.5%ը[12]:

ՀՀում, ինչպէս յայտնի է, համայնքները միմեանցից խիստ տարբերւում են բնակչութեան թուով: ՀՀում միջին հաշուով մէկ համայնքում բնակւում է 4084 մարդ, առանց Երեւան քաղաքի՝ 2777, իսկ միայն գիւղական համայնքներում՝ 1443 մարդ: Ընդ որում, մինչեւ 200 բնակիչ ունեցող կայ 96 համայնք, 201ից 500 բնակիչ ունեցող՝ 176, 501ից 1000 բնակիչ ունեցող՝ 185, 1001ից 3000 բնակիչ ունեցող՝ 318, 3001ից բարձր բնակիչ ունեցող՝ 96 գիւղական համայնք[13]:

ՀՀն այսօր ունի 871 գիւղական համայնք, որից 700ը՝ լեռնային շրջաններում, դրանց զգալի մասը բարձր լեռնային եւ սահմանամերձ գիւղեր են, որոնք եւս այսօր խոշորացուած համայնքների են ներառուել՝ կորցնելով իրենց դիմագիծը: Դրանցից իւրաքանչիւրի ամրապնդումն ունի կենսական, աւելի ճիշտ՝ ռազմավարական նշանակութիւն ՀՀի համար: Մինչդեռ, եթէ առաջնորդուենք գիւղերի եւ գիւղապետարանների խոշորացման ծրագրով, նշուած 700 գիւղերից “իշխանազուրկ” (այսինքն առանց համայնքի ղեկավարի) կը դառնան աւելի քան 500 գիւղ: Դա է վկայում Ի. դարի խոշորացումների դառը փորձը: Եթէ, օրինակ, խոշորացւում է 5 գիւղ, ապա արդիւնքում դրանք ղեկավարում է տուեալ խոշորացուած համայնքի միայն մէկ ղեկավար, որը կարող է բոլորովին տեղեակ չլինել իր ղեկավարած բոլոր համայնքների առանձնայատկութիւններին, մարդկանց եւ զարգացման հնարաւորութիւններին կամ խնդիրներին: Չէ՞ որ այդ գիւղերը աստիճանաբար կը լքուեն (պատճառներն արդէն ներկայաց-

[12] «Հասարակական կազմակերպութիւնների դերը ՀՀ հանրային կառավարման համակարգում»՝ http://councils.ysu.am/pdf_files/015/015-Margaryan_Stepan.pdf :

[13] «Գիւղերի բռնի խոշորացումը Հայաստանի անվտանգութեան սպառնալիք է»՝ https://www.aravot.am/2017/06/12/891300/ :

ուել են վերեւում) եւ կը դատարկուեն ընդամէնը մէկ սերնդի կեանքի ընթացքում:



Ակնյայտ է, որ նման քաղաքականութիւնն առաւել ձեռնտու է մեր ոխերիմ հարեւաններին եւ խրամատաւորուած հակառակորդներին:

Չմոռանանք, Հայաստանի Հանրապետութիւնն ապրում-մաքառում է.-

- թշնամական շրջափակման պայմաններում,
- միջպատերազմական (պատերազմը դեռ չի աւարտուել) պայմաններում,
- ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, որի վերահաս վտանգը կախուած է մեր գլխին:

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄԻԱՒՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՀՀի տեղական ինքնակառավարման յետագայ զարգացման եւ իշխանութեան ապակենտրոնացման խորացման իրականացման հիմնական խնդիրը տեղական ինքնակառավարման արդիւնաւէտութեան եւ բնակչութեանը մատուցուող համայնքային ծառայութիւնների որակի եւ մատչելիութեան բարձրացումն է: Տեղական ինքնակառավարումը ՀՀ սահմանադրութեամբ ամրագրուած համայնքների իրաւունքն ու պարտականութիւնն է եւ բնակչին - անկախ իր բնակութեան վայրից - պէտք է մատուցուեն օրէնքով նախատեսուած ծառայութիւնները ամբողջ ծաւալով: ՀՀ համայնքների գերակշիռ մասը ունակ չէ եւ չի իրականացնում իրեն օրէնքով վերապահուած լիազօրութիւնների զգալի մասը, իսկ իրականացման համար կը պահանջուի լուրջ մարդկային, դրամական ու տնտեսական ներուժ: Հաշուի առնելով սա՝ պետութեան կողմից իրականացուող լիազօրութիւնների եւ նիւթական միջոցների ապակենտրոնացման գործընթացներին զուգահեռ, ելնելով բնակչութեան շահերից եւ տնտեսական նպատակայարմարութիւնից, համայնքային խնդիրներն առաւել արդիւնաւէտ իրականացնելու նպատակով, օրէնքով սահմանուած կարգով համայնքները կարող են

կամաւոր եւ ՀՀ կառավարութեան նախաձեռնութեամբ միաւորուել միջհամայնքային միաւորումներում: Սակայն խոշորացման գործընթացն այսօր ոչ թէ կամաւոր, այլ պարտադիր եւ բռնի ուժով է իրականացւում: Այս քաղաքականութիւնը ոչ միայն սխալ է մասնագիտական առումով, այլեւ հակասահմանադրական է, քանի որ ոտնահարւում են տուեալ համայնքներում բնակուող մարդկանց իրաւունքները, հակառակ իրենց կամքի:

Հողագործութեան վրայ բացասական ազդեցութիւնը դրսեւորւում է առանձին համայնքների կողմից միւս համայնքների հետ "բռնի խոշորացման" հետեւանքով նոր՝ խոշորացուած համայնքում իրար հետ աշխատելու ցանկութիւնից հրաժարուելու մէջ: Քիչ չեն համայնքների միջեւ չվերջացող վէճերը, մէկը՝ միւսի հաշուին ապրելու փորձերը, խոշորացման արդիւնքում այդ համայնքներից հիասթափուած մարդկանց արտահոսքը, որը արտագաղթի հիմնական պատճառներից է նաեւ:

Ինչպէս արդէն յայտնի է, ՀՀ կառավարութիւնը 2021 Նոյեմբերի 10ին, իր արձանագրային որոշմամբ, հաւանութիւն է տուել «Միջհամայնքային միաւորումների ձեւաւորման եւ համայնքների խոշորացման հայեցակարգ»ին[14]: Եւրոպական երկրների փորձի ուսումնասիրութիւնը վկայում է, որ որոշ երկրներում, օրինակ, Զուիցերիայում, Գերմանիայում, Ֆինալանտայում, բաւականին արդիւնաւէտ գործում է համայնքային համագործակցութիւնը, այդ թւում նաեւ միջհամայնքային միաւորումները: Վերջիններիս միջոցով բաւականին բարձրացուել է մատուցուող ծառայութիւնների որակը: Սակայն իրաւական դաշտի անկատարութեան պատճառով, ինչպէս նախկինում էր, միջհամայնքային միաւորումներ չեն ստեղծուել: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրէնքի յօդուած 78ի՝ «միջհամայնքային միաւորումների խնդիրները, իրաւասութիւնները սահմանւում են օրէնքով», սակայն օրէնքը դեռեւս դրանք չի սահմանել[15]:

ՀՀում միջհամայնքային համագործակցութիւնը զարգացած չէ, որը պայմանաւորուած է ինչպէս անկատար օրէնսդրութեամբ, այնպէս էլ համայնքների թոյլ կարողութիւններով: ՀՀ օրէնսդրութեամբ միջհամայնքային համագործակցութիւնը կարող է իրականացուել հետեւեալ ձեւերով.- միջհամայնքային միաւորումների եւ համայնքների միութիւնների ձեւաւորում, իրաւական պայմանագրերով համագործակցութեամբն[16]: Ուղղակի կնքուող պայմանագրերի միջոցով միջհամայնքային համագործակցութեան գործող փորձը հիմնականում մնում է գոյքահարկի եւ հողի հարկի տուեալների դրամատան վարման եւ հաւաքագրման լիազօրութեան իրա-

---

[14] https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/11/qax44-18_1.pdf :

[15] https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271 :

[16] *Հայաստանի Հանրապետութեան տեղական ինքնակառավարման յետգայ զարգացման եւ իշխանութեան ապակենտրոնացման ռազմավարական մօտեցումներ*, USAID, 2012, էջ 48:

կանացումը համայնքների մի մասի կողմից ստեղծուած կառոյցների միջոցով: Այսպիսի կառոյցների ստեղծումը խրախուսելի է, քանի որ գոյքահարկի եւ հողի հարկի հիմքերի վարման եւ հաւաքագրման լիազօրութեան իրականացումն առանձին համայնքներում շատ աւելի թանկ է նստում՝ ի տարբերութիւն այդ կառոյցների միջոցով այդ լիազօրութեան համատեղ իրականացման:

Միջհամայնքային համագործակցութիւնը վերաբերւում է երկու կամ աւելի հարեւան համայնքների կողմից համատեղ գործունէութեանը՝ համայնքային վարչական խնդիրների, համայնքային ծառայութիւնների եւ տեղական զարգացման ոլորտներում, որը հնարաւորութիւն է ընձեռում այդ գործընթացներն իրականացնել աւելի արդիւնաւէտ, քան համայնքները դա կ'անէին առանձին: Այն հիմնուած է համայնքների համատեղ շահերի վրայ, վերաբերւում է համայնքներից իրականացուող մէկ կամ միքանի լիազօրութիւնների, որը պէտք է լինի կամաւոր: Այն ներառում է դերերի եւ լիազօրութիւնների համատեղ իրականացում, ենթադրում է սպառնալիքների, ծախսերի, վերահսկողութեան եւ օգուտների համատեղ կրում: Անհրաժեշտ է նշել, որ ի հակադրութիւն համայնքների խոշորացման, միջհամայնքային համագործակցութիւնը չի ենթադրում համայնքային լիազօրութիւնների փոխանցում, քանի որ համայնքները պահպանում են այդ լիազօրութիւնների իրականացման նկատմամբ վերահսկողութիւնը[17]:

Ներկայումս գործող միջհամայնքային համագործակցութեան տիպային ոլորտներից է համատեղ ծառայութիւնների մատուցումը: Դա միջհամայնքային հագործակցութեան ամենատարածուած ոլորտներից մէկն է եւ ներառում է այնպիսի ծառայութիւններ, ինչպիսիք են թափօնների կառավարումը՝ ներառեալ աղբահանութիւնը, ջրամատակարարումը, հանրային փոխադրութիւնը եւն.: Համագործակցութեան ոլորտ է համատեղ վարչարարութիւնը, որը նոյնպէս ամենատարածուածներից է եւ կարող է ներառել հարկային վարչարարութիւնը՝ տեղական հարկերի մասով, շինարարական թոյլտուութեան տրամադրումը, փոխադրամիջոցների կառավարումը եւն., ծառայութիւնների վաճառք, որը վերաբերւում է մեծ համայնքի կողմից իրեն շրջապատող համայնքներին ինչպէս վարչական բնոյթի, այնպէս էլ հանրային ծառայութիւնների մատուցմանը, ռազմավարական ծրագրաւորումը եւ տարածքային զարգացումը, որը հիմնականում կիրառւում է այն դէպքերում, երբ համայնքը այնքան փոքր է տարածքով եւ բնակչութեամբ, որ չի կարողանում արդիւնաւէտ իրականացնել իր տնտեսական զարգացման քաղաքականութիւնն ու ծրագրերը: Նման խնդիրներ, օրինակ, առաջանում են զբօսաշրջութեան զարգացման ոլորտում, երբ միքանի հարեւան համայնքներ զբօսաշրջիկներին հրապուրելու համար գովազդում են միեւնոյն ենթակառուցուածքը, պատմամշակութային

[17] http://www.irtek.am/views/act.aspx?aid=66135 :

վայրը: Իսկ համատեղ ֆինանսաւորումը վերաբերւում է մեծ ենթակառուցուածքային նախաձեռնութիւններին, լինի դա ճանապարհաշինութիւն, թէ մէկ այլ ենթակառուցուածքային ոլորտ, երբ համայնքները համատեղ ֆինանսաւորման արդիւնքում հնարաւորութիւն են ունենում այն կառուցելու:

Պէտք է նշել, որ միջհամայնքային միաւորումների ձեւաւորումը ամրագրում է՝ օրէնքով սահմանուած կարգով միջհամայնքային միաւորումների ձեւաւորման հնարաւորութիւնը եւ անհրաժեշտութիւնը[18]: Այդ հնարաւորութիւնը ամրագրուած է ինչպէս ՀՀ կողմից վաւերացուած «Տեղական ինքնակառավարման մասին» Եւրոպական Ուխտում, այնպէս էլ ՀՀ օրէնսդրութիւնում[19]: Նոր սահմանադրութիւնից յետոյ անհրաժեշտ է ներդնել կառավարման առաւել արդիւնաւէտ համակարգ միջհամայնքային միաւորումների, որը պէտք է օրէնքով ամրագրի ձեւաւորման համապատասխան կառուցակարգեր: Այս ուղղութեամբ ՀՀ կառավարութեան կողմից դեռ չեն մշակուել սկզբունքներ, որոնք ներկայացուած լինեն համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միաւորումների ձեւաւորման հայեցակարգում[20]: Մասնաւորապէս միաւորումներում ընդգրկւում են ընդհանուր սահմաններ ունեցող համայնքները: Միջհամայնքային միաւորման կազմում կարող են ընդգրկուել նաեւ համայնքների սահմաններից դուրս գըտնուող հողերը: Դա կ'ապահովի տեղական ինքնակառավարման իրականացումը ՀՀ ամբողջ տարածքում, այդ տարածքների հողի հարկը ու գոյքահարկը կը հանդիսանայ միջհամայնքային միաւորման ամավարկի եկամուտ, իսկ հողատարածքները անդամ համայնքների համար կը հանդիսանան ընդհանուր օգտագործման տարածքներ:

Միջհամայնքային միաւորման մարմիններ պէտք է լինեն միջհամայնքային միաւորման խորհուրդը եւ գործադիր կառավարիչը (միջհամայնքային միաւորման աշխատակազմը իր ամավարկային, ոչ առեւտրային հիմնարկներով ու կազմակերպութիւններով): Նրանց նստավայրը պէտք է լինի միաւորման տարածքի կենտրոնական մասի ամենամեծ համայնքում, որը հաստատւում է օրէնքով՝ հաշուի առնելով միաւորման խորհրդի կարծիքը: Խորհուրդը ձեւաւորւում է միաւորման մէջ ընդգրկուած համայնքների ղեկավարներից եւ աւագանիների կողմից ընտրուած մէկական անդամներից: Խորհուրդը իր կազմից ընտրում է խորհրդի նախագահ, տեղակալ եւ ձեւաւորում է յանձնաժողովներ: Միջհամայնքային միաւորման խորհրդի նիստերը նախապատրաստելու եւ անցկացնելու համար, խորհուրդը իր կազմից կը ձեւաւորի քարտուղարութիւն:

---

[18] *ՀՀ սահմանադրութիւն*, յօդուած՝ 110:

[19] «Տեղական ինքնակառավարման մասին» Եւրոպական Ուխտ, յօդուած 10:

[20] «Համայնքների խոշորացման եւ միջհամայնքային միաւորումների ձեւաւորման հայեցակարգ», ՀՀ Կառավարութեան 2011 Նոյեմբերի 10ի նիստի N 44 արձանագրային որոշում, էջ 49:

Քանի որ միջհամայնքային միաւորումների ձեւաւորման նպատակը - անկախ համայնքի մեծութիւնից եւ ֆինանսական հնարաւորութիւններից - լիազօրութիւնների իրականացման ապահովումն ու բնակիչներին որակեալ ծառայութիւնների մատուցումն է, ապա նախ անհրաժեշտ է առանձնացնել եւ ինքնուրոյն ճանաչել այն համայնքները, որոնք իրենց սեփական ֆինանսական միջոցներով ունակ են լիարժէք կատարել համայնքին օրէնքով վերապահուած պարտադիր լիազօրութիւնների ամբողջ ծաւալը[21], կամ փոքր համայնքները միաւորել միջհամայնքային միաւորումներում՝ վերապահելով դրանց այն լիազօրութիւնների կատարումը, որոնք փոքր համայնքները ի վիճակի չեն ինքնուրոյն կատարել: Այն հանգամանքը, որ երբ համայնքը արդէն իզօրու կը լինի ինքնուրոյն կատարել համայնքային նշանակութեան բոլոր խնդիրները - մասնաւորապէս 15,000ը գերազանցող համայնքները - կարող են դիմել կառավարութեանը եւ նրա օրէնսդրական նախաձեռնութեամբ ճանաչուել ինքնուրոյն համայնք, ինքնըստինքեան միջհամայնքային միաւորման կազմում ընդգրկուած փոքր համայնքներին շահագրգռում է իրենց համայնքում ապահովել բարեկեցութիւնը, բարձր որակի ծառայութիւնների մատուցումը, *պիզնէս*ի զարգացման միջոցով աշխատատեղերի ստեղծումը, բնակարանային շինարարութեան խթանումը եւն., ինչը ուղղակի կը նպաստի բնակչութեան աճին, որի հետեւանքով այն կարող է ճանաչուել ինքնուրոյն համայնք:

Իհարկէ, միշտ էլ իւրաքանչիւր նոր համակարգի ներդրման հարցում գոյութիւն ունեն տարբեր մասնագէտների կողմից տարբեր մօտեցումներ, որոնք մատնանշում են դրա դրական եւ բացասական կողմերը: Այս հարցում եւս կան բացասական մօտեցում ցուցաբերողներ, որոնք իրենց մտահոգութիւնն են յայտնում համայնքների խոշորացմանն ու միջհամայնքային միաւորումների ստեղծման վերաբերեալ: Մասնաւորապէս «Ֆերմէրային Շարժում» ՀԿի կարծիքով սա որեւէ դրական արդիւնքի չի յանգեցնելու[22]: 2010ին միջհամայնքային համագործակցութեան հարցում հետաքրքիր փորձ է գրանցուել Արարատի մարզի Արարատի տարածաշրջանում:

ՄԻՋՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՋՈՂ ՓՈՐՁ

«Վեդի Միջհամայնքային Միաւորում» համայնքների միութիւնը 2009ին հիմնադրել է «Մաքուր երկիր» ՍՊԸն իր անդամ համայնքների աղբահանութեան իրականացման նպատակով: Ընկերութիւնը փաստացի սկսել է գործել 2010 Յունուարի մէկից եւ բացի համայնքների միութեան կազմում ընդգրկուած 15 համայնքներից, սպասարկում է 3 այլ համայնքների: Աղբահանութեան ծառայութիւնն իրականացւում է համայնքներում տեղադրուած 230 մետաղական եւ կերպընկալ աղբամանների սպասարկմամբ,

[21] Այդպիսիք կարելի է համարել 15,000 եւ աւելի բնակիչ ունեցող համայնքները:
[22] http://www.armtimes.com/4592 :

օրական 5200 ընտանիքների եւ 326 իրաւաբանական անձանց բաժանուող *պոլիէթիլէնի* պարկերի միջոցով: Աղբահանութիւնը Վեդի քաղաքային համայնքում իրականացւում է երկու օրը մէկ անգամ, իսկ գիւղական համայնքներում՝ շաբաթը մէկ անգամ: Աղբը հաւաքւում է ընկերութեանը տրամադրուած հինգ հեկտար տարածքով աղբավայրում, որը ցանկապատուած է, ապահովուած է ջրով, էլեկտրուժով եւ շէնքային այլ յարմարութիւններով: Նախատեսւում է գործող աղբավայրում կառուցել աղբի վերամշակման գործարան ինչը նաեւ այսօր ՀՀ եւ ինչու ոչ՝ ամբողջ մոլորակի համար ունի մեծ կարեւորութիւն[23]:

Այսպիսով, միջհամայնքային միաւորումների ներդրման արդիւնքում փաստացի ձեւաւորուել են տեղական ինքնակառավարման երկրորդ մակարդակին բնորոշ մի շարք խոշորացուած միաւորներ: Եթէ սկզբունք ընդունենք, որ համայնքային միաւորումներում չեն ընդգրկուած 15,000ից աւելի բնակչութեամբ համայնքները, ապա հանրապետութիւնում դրանց թիւը 24ն է: Այսինքն 24 «ինքնուրոյն» համայնքները իրենց մարդկային, ֆինանսատնտեսական եւ արհեստագիտական ներուժով ունակ են իրականացնել օրէնքով իրենց վերապահուած լիազօրութիւնների ամբողջ ծաւալը եւ մնացած համայնքներով ձեւաւորուած 40-42 միջհամայնքային միաւորումները: Պէտք է աշխատել, որ հիմնական ծառայութիւնները ձեւաւորուեն ինքնուրոյն համայնքներում եւ միջհամայնքային միաւորումներում: Միջհամայնքային միաւորումներում ձեւաւորուած ծառայութիւնները իրենց լիազօրութիւնները կ'իրականացնեն դրանց կազմերում ընդգրկուած համայնքների վարչական սահմաններում, ինչպէս նաեւ համայնքների սահմաններից դուրս, բայց միջհամայնքային միաւորման սահմաններում գտնուող տարածքում: Այս դէպքում կենտրոնացուած ծառայութիւնների եւ պատուիրակուած լիազօրութիւններ իրականացնող մարմինների ընդհանուր թիւը 915ի փոխարէն կը կազմի 62-64: Ձեւաւորուող ծառայութիւնների այս թիւն աւելի շատ ձեռնտու է պետական հարկային, հասարակական, գանձապետական, քաղաքացիական կացութեան գրանցման եւ այլ մարմիններին: Պետութեանը դա հնարաւորութիւն կը տայ առանց որեւէ ծախսեր կատարելու, որոշ պետական համապատասխան ստորաբաժանումները, դրանց կողմից օգտագործուող գոյքը, արհեստագիտական միջոցները, նաեւ մասնագէտներին տեղափոխել ինքնուրոյն համայնքների եւ միջհամայնքային միաւորումների ծառայութիւններին: Եթէ 915 համայնքային ծառայութիւնների ձեւաւորման փոխարէն կիրառուի այս համակարգը, ապա խոշորացման գործընթացի կազմակերպիչների համոզմամբ, կրկնակի անգամ կը պակասի համայնքներում այդ ծառայութիւնները կազմակերպելու աշխատողների թուաքանակը եւ աշխատավարձի ծախ-

[23] Դ. Թումանեան, *Տեղական ինքնակառավարման բարեփոխումները Հայաստանում (2009-2010)*, Նոյեան տպան, Երեւան, 2011, էջ 112:

սերը, միքանի անգամ՝ ծառայութիւնների պահպանման ծախսերը, կը պակասի արհեստագիտական միջոցների եւ գոյքի անհրաժեշտութիւնը, ինչպէս նաեւ՝ մասնագէտների ուսուցման ու վերապատրաստման ժամկէտերը եւ դրա հետ կապուած ծախսերը:

Ընդհանրացնելով կարող ենք ասել, որ այս ամէնի արդիւնքն իրականում փոքր համայնքներում տեղական ինքնակառավարման լիազօրութիւնների իրականացումն է: Բացի դրանից, աւելի էժան, բայց պակասարդիւնաւէտ է դառնում պետական վերահսկողութեան իրականացումը եւ պատուիրակուած լիազօրութիւնների իրականացման ծախսերը: Սրան հասնելու համար նախ եւ առաջ պէտք է լուծել վարչատարածքային խնդիրներ, քանի որ գործող վարչատարածքային բաժանումը լուրջ եւ էական խոչընդոտ է հանդիսանում համայնքների կարողութիւնների ամրապնդման եւ տեղական ինքնակառավարման համակարգի յետագայ զարգացման համար:

ԻՆՉՊԷՍ ԶԱՐԳԱՑՆԵԼ ՀԱՅ ԳԻՒՂԸ

Ամփոփելով, կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարման համակարգի հիմնական խնդիրները պայմանաւորուած են վարչատարածքային բաժանման գործող համակարգով, որտեղ ձեւաւորուել են մեծ թուով համայնքներ, որոնց միջեւ առկայ էական տարբերութիւնները յաճախ հաշուի չեն առնւում: Դրանք վերաբերում են համայնքներին պատկանող տարածքներին, բնակչութեան թուաքանակին, կարողութիւններին, համայնքների կարգավիճակին եւն.: Միեւնոյն ժամանակ օրէնսդրութիւնը – անկախ այս գործօններից - բոլոր համայնքներին օժտել է նոյն լիազօրութիւններով, ինչն աւելի ժողովրդավարական եւ արդարացի մօտեցում է, իսկ այսօր այն իրականացման ընթացքում հանդիպում է մեծ դժուարութիւնների: Միջին եւ մեծ համայնքների համար դրանք քիչ են, իսկ բազմաթիւ փոքր եւ թոյլ համայնքներ չեն կարողանում բնակչութեանը անհրաժեշտ ծառայութիւններ մատուցել՝ համապատասխան համայնքային կառոյցներ չունենալու կամ ունենալու դէպքում շահագործել չկարողանալու պատճառով, ինչպէս նաեւ անբաւարար ֆինանսական միջոցների պատճառով: Գիւմրի քաղաքի, իր գրեթէ երկուհարիւր հազարանոց բնակչութեամբ եւ քսանեօթ բնակիչ ունեցող Քաշունիի տեղական ինքնակառավարման մարմիններն ունեն նոյն լիազօրութիւններն ու պարտականութիւնները: Այսինքն՝ գործող օրէնսդրութիւնը լուրջ եւ էական խոչընդոտ է հանդիսանում համայնքների կարողութիւնների ամրապնդման եւ տեղական ինքնակառավարման համակարգի յետագայ զարգացման համար:

ՏԻՄերի ֆինանսական կախուածութիւնը պետական ամավարկից զգալիօրէն խաթարում է տեղական ինքնակառավարման ինքնուրոյնութեան սկզբունքը: Փոքր համայնքները - իսկ դրանց տեսակարար կշիռը բաւականին բարձր է, որպէս կանոն - չեն կարողանում իրականացնել ի-

րենց վերապահուած լիազօրութիւնները, որոնց պատճառով պարտադիր եւ պետութեան կողմից պատուիրակուած լիազօրութիւնները մնում են չկատարուած: Արդիւնքում բնակչութեան կենսականօրէն կարեւոր խնդիրները ստանում են անբաւարար լուծում, ինչը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում համայնքի բնակչութեան կենսամակարդակի վրայ: Այս հարցն անմիջական կապի մէջ է ՏԻՄերի՝ պարտադիր եւ պատուիրակուած լիազօրութիւնների իրականացման կարգերի օրէնքով ընդունման անհրաժեշտութեան հետ: Գիւղատնտեսութեան առումով՝ կառավարութեան որոշումները կայացնում է ՀՀ Էկոնոմիկայի նախարարութիւնը՝ նախկին ՀՀ Գիւղատնտեսութեան նախարարութեան փոխարէն, սակայն դրա արդիւնաւէտութիւնը խիստ ցածր է քանի որ այդ կառոյցում չկան փորձառու եւ արհեստավարժ գիւղատնտեսութեան մասնագէտներ: Յաճախ իշխանութիւնների կայացրած որոշումները - ինչպէս արդէն նշեցինք - չի համընկնում համայնքների հաւաքական շահերի հետ:

Տեղական ինքնակառավարման համակարգում իրավիճակի վերլուծութիւնը թոյլ է տալիս յանգել այն եզրակացութեան, որ ՀՀ իշխանութիւնների կարծիքով ստեղծուած փոքր համայնքներում տեղական ինքնակառավարումը ձեւական բնոյթ է կրում, բնակչութեանը փաստացի չի մատուցւում որեւէ ծառայութիւն եւ ներկայ պայմաններում, ուղղակիօրէն աննպատակայարմար է դրանց յետագայ պահպանումը:

Հիմք ընդունելով տեղական ինքնակառավարման ընդհանուր պատկերի վերաբերեալ կատարուած վերլուծութեան արդիւնքները՝ առաջարկում ենք առաջիկայում ծրագրաւորել եւ իրականացնել հետեւեալ միջոցառումները.-

1. Մշակել եւ սահմանուած կարգով շրջանառութեան մէջ դնել համայնքի ղեկավարի լիազօրութիւնների իրականացման ընդհանուր կարգերը սահմանող շրջանակային օրէնքի նախագիծ, ինչը ուղղակիօրէն բխում է ՀՀ սահմանադրութեան, «Տեղական ինքնակառավարման մասին» Եւրոպական Ուխտի եւ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրէնքի պահանջներից:

2. Շարունակել համայնքային ծառայութեան կայացման նպատակով մասնագիտական վերապատրաստումների գործընթացին պետական օժանդակութիւնը, ֆինանսական եւ մեթոդաբանութեան առումով:

3. Վարչատարածքային բարեփոխումների իրականացում, համայնքների խոշորացմանն ուղղուած գործնական քայլերի իրականացում, որը ուղղակիօրէն կը բերի փոքր համայնքների խնդիրների լուծման:

4. Միջազգային ասպարէզում լայն կիրառութիւն գտած միջհամայնքային համագործակցութեան սկզբունքի ներդրում, որը թոյլ է տալիս փոքր համայնքներում ՏԻՄերի փաստացի չիրականացուող լիազօրութիւնների իրականացմանը: Ստեղծել նպաստաւոր պայմաններ եւ խթանել ծառայութիւնների արդիւնաւէտ մատուցման տեսանկիւնից համայնքների միջեւ

համագործակցութիւնը: Ձեւաւորել միջհամայնքային միաւորումներ եւ ամրագրել դրանք օրէնքով:

5. Շարունակել հանրային կառավարման վարչական եւ ֆինանսական ապակենտրոնացման գործընթացը՝ հիմնուելով եւրոպական երկրների փորձի եւ փորձնական ծրագրերի արդիւնքների վրայ:

6. Օրէնսդրօրէն ընդլայնել եւ ամրագրել քաղաքացիների մասնակցութիւնը տեղական ինքնակառավարմանը, որի միջոցով կը բարձրացուի ՏԻՄերի գործունէութեան թափանցիկութիւնը, հրապարակայնութիւնն ու պատասխանատուութիւնը:

7. Բարելաւել համայնքների ամավարկերին պետական ֆինանսական օժանդակութեան համակարգի արդիւնաւէտութիւնը, կատարելագործել ֆինանսական համահարթեցման կառուցակարգերը՝ տարբերակելով համայնքներին ցուցաբերուղ օժանդակութիւնը, մասնաւորապէս՝ փոքր համայնքներին:

8. Տարածքային կառավարումը գերազանցապէս մարզային կամ շրջանային տարածքային ինքնակառավարման ընտրովի մարմինների միջոցով իրականացնել, միաժամանակ վերացնելով մարզպետարանները՝ որպէս անարդիւնաւէտ կառոյցներ: Դա նշանակում է, որ ՀՀում անհրաժեշտ է կատարել անցում երկմակարդակ տեղական ինքնակառավարման համակարգի, որը փոքր համայնքների տեղական ինքնակառավարման հիմնախնդիրների լուծման ուղիներից մէկն է:

Վերը նշուածում ընդգրկուած են այն հիմնական ուղղութիւնները, անհրաժեշտ ու լուծում պահանջող խնդիրներն ու դրանց լուծմանն ուղղուած միջոցառումները, որոնց իրականացումը կ'ապահովի տեղական ժողովրդավարութեան յետագայ ամրապնդումը, ապակենտրոնացման գործընթացների խորացումը փոքր համայնքների հիմախնդիրների հնարաւոր լուծումները եւ - վերջին հաշուով - տեղական ինքնակառավարման համակարգի գործունէութեան բարելաւումը: Այս ամէնի իրականացման համար անհրաժեշտ են սահմանադրական եւ օրէնսդրական փոփոխութիւններ:

ՈՒՄ Է ԻՐԱԿԱՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒՄ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ամփոփենք: Նկարագրուած արտակարգ իրավիճակի պայմաններում մարտնչող երկրում գիւղերին եւ գիւղապետարաններին առաջարկուող խոշորացման ծրագիրը պէտք է դիտուի առնուազն որպէս վարչական արկածախնդրութիւն: Հետեւաբար, այդ ծրագիրն այսօր պէտք է կասեցուի եւ հանուի շրջանառութիւնից, չժխտելով, որ երբեւէ պէտք է սկսել նաեւ այդ գործընթացը: Միայն միքանի լուրջ վերապահումներով:

Մինչ համայնքների խոշորացման գործընթաց սկսելը ՀՀն անկասկած պէտք է լուծի առնուազն երեք հիմնախնդիրներ: Ա.- Արցախի բնակավայրերի միջազգային կարգավիճակի ամրագրումը, Բ.- Լեռնային բնակա-

վայրերի լիարժէք բնակեցումը եւ համաչափ զարգացումը, Գ.- Ազգային մրցակցային տնտեսութեան կայացումը: Դա այն ժամանակն է, երբ յարաբերութիւնները մեր հարեւանների հետ կը լինեն նոյնքան քաղաքակիրթ, որքան ֆրանքօ-գերմանական յարաբերութիւններն այսօր: Հասկանալի է, որ այս խնդիրները ոչ թէ միքանի տարուայ, այլ միքանի սերնդի նպատակային գործողութիւնների կարիք ունեն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ուսումնասիրութեան արդիւնքում հարկ է կատարել հետեւեալ հիմնական եզրայանգումները.-

- Ոլորտում առկայ բազմաթիւ խնդիրներին համարժէք լուծումներ տալու համար պէտք է մշակել եւ իրականացնել ՀՀ առանձնայատկութիւններից բխող եւ ոլորտի ու հայկական գիւղի զարգացմանը ձգտող համապարփակ հողային քաղաքականութիւն.
- Կարեւորելով պետութեան դերը գիւղատնտեսութեան զարգացման բնագաւառում, անհրաժեշտ է նաեւ մշտապէս իրականացնել պետութեան կողմից հայրենական արտադրութեան գիւղմթերքների եւ դրանց վերամշակումից ստացուած ապրանքների համար արտերկրի շուկաների բազմաստիճան եւ բազմակողմանի ուսումնասիրութիւն, ինչպէս նաեւ հայրենական ապրանքների ցուցահանդէսների աւելի յաւակնոտ աջակցութիւն եւ գովազդ.
- Հայրենական ապրանքների գովազդի ամենաարդիւնաւէտ միջոցներից մէկը պետութեան գործադիր մարմնի ներկայացուցիչների եւ գործարարների արտերկրի այցելութիւնների ժամանակ հայրենական ապրանքների պատշաճ ներկայացումն է, որպէս յուշանուէր դրանց տարածումը.
- Քանի որ արտերկրի շուկաների խորը եւ համակողմանի ուսումնասիրութիւնն ու գիւղմթերքների մրցունակութեան բարձրացումը, դրանց իրացման արդիական ձեւերի կիրառումն իրենց չեն կարող թոյլ տալ անգամ գիւղացիական տնտեսութիւններից ամենայաջողակները կամ հողային հատուածում մեծ կարողութիւններ ձեւաւորած միջին կամ խոշոր տնտեսվարողները, պետութեան աջակցութիւնը պէտք է լինի հասցէական եւ նպատակային.
- Երկրի վարկանիշի եւ մրցակցային կարողութիւնների իրացման հարցում պետութեան դերը գնալով կարող է աճել՝ դիմակայելու տարբեր երկրների կողմից նետուած անարդար մրցակցութեան մարտահրաւէրը[24].

[24] Առեւտրի համաշխարհային կազմակերպութիւն, 2015: Համաշխարհային առեւտրի կազմակերպութեան (WTO) հաշուարկների սպառողները եւ կառավարութիւնները զարգացած երկրներում վճարում են տարեկան 350 մլրդ. ԱՄՆ տոլար՝ գիւղատնտեսութեան նպաստաւորման համար, այլ խօսքով՝ մէկ

- Արտաքին տնտեսական կապերի արդիւնաւէտ համադրումը պէտք է դիտարկել որպէս կարեւոր պետական գործառոյթ՝ հիմնուած գիւղացիական տնտեսութիւնների ամենակենսական եւ առանցքային կարիքների հաշուառման վրայ.
- Կարեւոր է ուսումնասիրել ոչ միայն եւ ոչ այնքան զարգացած երկրների տնտեսվարման մոտէլները, որոնք, իհարկէ, ձեռք են բերւում զարգացող երկրների համար անհասանելի միջոցներով, այլ հիմնականում տնտեսութեան զարգացման համադրելի մակարդակում գտնուող երկրների յաջողութեան պատմութիւնները՝ դրանք փորձելով հարստացնել ու կիրառել հիմնականում տեղայնացման ճանապարհով[25].
- Արտաքին կապերի համադրումը միջազգային կառոյցների հետ աշխատանքները կարելի է աւելի արդիւնաւէտ դարձնել նաեւ ՀՀում հաւատարմագրուած միջազգային կառոյցների, Սփիւռքի տարբեր կառոյցների հետ համատեղ ծրագրերով.
- Ինչպէս գիւղատնտեսութեան ներկայ կարողութեան առաջարկուող գոյքագրումը՝ հողային հատուածի կարիքները եւս հաշուառման կարիք ունեն. այն պահանջում է հետեւողական եւ համակարգուած մօտեցում.
- ՀՀ գիւղատնտեսութեան զարգացման համար առկայ տնտեսական ներուժը, միջազգային կառոյցների եւ Սփիւռքի կարողութիւնը լիովին օգտագործելու դէպքում նուազ դժուար կը լինի մրցակցային առաւելութիւնների լիարժէք բացայայտումը, դրանց շահաւէտ իրացման եւ երկրի տնտեսական առաջընթացին շօշափելի ազդակ հաղորդելու համար:

կովի վրայ ԵՄ կողմից կատարուող ծախսերն աւելին են, քան Ռուսաստանի գիւղատնտեսութիւնում մէկ շնչին ընկնող եկամուտները (http://www.wto.org/english/res_e/doload_e/10b_e.pdf):

[25] Ուշադրութեան է արժանի, մասնաւորապէս, Թայլանդում OTOP՝ one tamboon one product ծրագրի յաջող իրագործումը, որի նպատակն է բացայայտել մրցակցային առաւելութիւնը իւրաքանչիւր բնակավայրում եւ աստիճանաբար կենտրոնացնել բոլոր մարդկային, ֆինանսական եւ հումքային աղբիւրները դրա արտադրութեան վրայ: Կառավարութեան տրամադրած փոքր վարկերի գերակշիռ մասը վերադարձուել են 1-2 տարում, երկրի տարբեր բնակավայրերի միջեւ աշխուժացել է ապրանքափոխանակութիւնը, աճել է մասնագիտացուած արտադրութիւնների մրցունակ ապրանքների արտահանումը: Ուսանելի փորձ է կուտակուած նաեւ Հնդկաստանում՝ "Կանաչ յեղափոխութեան" իրականացման արդիւնքում: Նպատակային ծրագրերի իրագործման օրինակ է նաեւ Չինաստանի ներմուծման փոխարինման արդիւնաւէտ քաղաքականութիւնը:

THE ARMENIAN VILLAGE: CURRENT CHALLENGES OF THE ARMENIAN AGROECONOMY AND LAND POLICY

(Summary)

NORAYR MANASERIAN,
TATOUL MANASERIAN (tatoulm@gmail.com)

The article focuses on the causes of the current difficult situation of Armenian agriculture. These include state indifference, smallness of agricultural plots (which makes the use of machinery impossible), the lack of a ministry of agriculture, absence of a state agricultural policy, and the forced merger of village communities (which leads to the desertion of villages, and in turn further encourages the high rate of emigration and provides a good chance for buying deserted land at cheap prices.)

The paper underlines the fact that maintaining highland village communities is a security concern for the Republic of Armenia. It notes as well that the peasant who used to feed the country is in need of social security and systematic state support.

Սպասքի[1] համալիրը ազգային մշակոյթի բնութագրիչ տարրերից է: Այն կրում է բազմաշերտ տեղեկատուութիւն՝ որոշակի ժամանակաշրջանի եւ՝ պատմազգագրական գաւառի[2] վերաբերեալ: Սպասքի ուսումնասիրութեամբ հնարաւոր է պատկերացում կազմել տուեալ շրջանի ուտեստի, հիւրասիրութեան, տնտեսաձեւերի, արհեստների, հաւատալիքների մասին: Մեր հետազօտութեան նիւթը Հայոց ազգագրութեան թանգարանի (ՀԱԹ) Սիւնիքի[3] պատմազգագրական շրջանին բնորոշ կիրառական սպասքի հաւաքածուն է, որի ուսումնասիրութիւնը ուղղակիօրէն կապուած է սիւնեցիների կենցաղամշակութային կենսակերպի հետ:

Յօդուածի նպատակն է թանգարանային նիւթի ուսումնասիրութիւնը եւ հանրահռչակումը, թանգարանային գործունէութեան լուսաբանումը, ինչպէս նաեւ Սիւնիքի պատմազգագրական շրջանին բնորոշ սպասքի տիպաբանումը ըստ կենցաղում ունեցած կիրառական նշանակութեան, պատրաստման նիւթի, արտաքին ձեւի եւ զարդանախշերի: Անդրադարձ է

---

[1] Սպասքը կենցաղային գործածութեան անհրաժեշտ պարագաների, պիտոյքների ամբողջական համալիր է: Այն լինելով նիւթական մշակոյթը ներկայացնող համալիր, համարւում է կենցաղը սպասարկող տարր եւ կենսապահովման միջոց, որն էլ սպասքի առաջնային եւ գլխաւոր գործառոյթն է (Է. Աղայեան, *Արդի հայերէնի բացատրական բառարան, հտր. 2*, Հայաստան հրատ., Երեւան, 1976, էջ 1324): Սպասք բառի արմատը սպասն է, որը պարսկերէնից փոխառութիւն է եւ պահլաւերենից թարգմանաբար նշանակում է սպասաւորութիւն ծառայութիւն (Հր. Աճառեան, *Հայերէնի արմատական բառարան, հտր. 4*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1926, էջ 261-62):

[2] Ընդհանրապէս իւրաքանչիւր պատմազգագրական շրջանի մշակութային առանձնայատկութիւնները ուսումնասիրելիս շատ կարեւոր է վարչատարածքային շրջանների ահմանների ճշգրիտ յստակեցումը, ինչը թոյլ կը տայ հետազօտողին ճիշտ կողմնորոշուել մշակոյթի տեղայնացման եւ ըստ վարչատարածքային շրջանների մշակութային առանձնայատկութիւնների տիպաբանման հարցերում:

[3] Սիւնիքի պատմաազգագրական մարզի մէջ մտնում են Գորիսի, Կապանի, Սիսիանի, Մեղրիի վարչատարածքային շրջանները, Վայոց Ձորը միջնադարում նոյնպէս Սիւնիքի վարչատարածքային միաւոր է համարուել, սակայն անցեալ դարի Բ. տասնամեակում բնակեցուել է պարսկահայերով եւ այժմ առանձին պատմազգագրական շրջան է համարւում (Դ. Վարդումեան, «Հայաստանի հիմնական պատմազգագրական մարզերի ընդհանուր բնութագրումը (XIX-XXդդ.)», *Պատմաբանասիրական հանդէս*, 2:2004, էջ 57-58:

կատարուել նաեւ Սիւնիքի մշակոյթին բնորոշ սպասքի օգտագործման ո-րոշ առանձնայատկութիւնների:

Հայոց ազգագրութեան թանգարանի մայր մուտքը

ՀԱԹում պահպանւում եւ ցուցադրւում է ԺԹ.-Ի. դարերով թուագրուող, Սիւնիքում կենցաղավարուած սպասքի հաւաքածու: Թանգարանը սպաս-քի այս հաւաքածուի մի մասը ձեռք է բերել 1985ին Գորիս--Մեղրի եւ 1991ին Սիսիան--Վայոց Ձոր իր կազմակերպած ազգագրական գիտար-շաւների արդիւնքում (գիտարշաւների ղեկավարներ Ա. Պօղոսեան, Հ. Մարգարեան, Գ. Աղանեան): Ուսումնասիրուել են Սիսիանի, Գորիսի, Մեղրու, Կապանի շրջանները, որի արդիւնքում ձեռք բերուած առարկա-ների ցանկում զգալի թիւ են կազմում սպասքի պարագաները: Հաւաքա-ծուի փոքր մաս են կազմում նաեւ 1970ականներին Հայաստանի պետա-կան պատմութեան թանգարանից ՀԱԹ տեղափոխուած առարկաները, ինչպէս նաեւ գնման եւ նուիրատուութեան արդիւնքում ձեռք բերուած նմուշներ: Դրանցից որոշները համալրել են թանգարանի ազգագրութեա-նը նուիրուած մշտական ցուցադրութիւնը, իսկ միւս մասը պահպանւում է թանգարանի պահոցներում: ՀԱԹի «Ազգագրութիւն եւ կենցաղ» (ԱԿ) պահոցում պահպանուող Սիւնիքի սպասքի համալիրը ներկայացնող հա-ւաքածուն համալրուած է կնակերպ աղամաններով, գինու եւ ջրի համար նախատեսուած կաւէ եւ պղնձէ կժերով[4], ջրխմիկներով[5], կերակուրներ ե-

[4] Կժի, կժեր, կաւից կամ պղնձից պատրաստուած, նեղ բերաններով, երկարաւուն ջրի աման, սափոր (Գ. Ջահուկեան, Հ. Մուրադեան (խմբ.), *Ժամանակակից հա-*

փելու համար նախատեսուած կճուճներով, քրեղաններով[6], սկուտեղներով, որոնց համար որպէս պատրաստման նիւթ օգտագործուել են կաւը, պղինձը, փայտը:

Հիմք ընդունելով Վ. Բդոյեանի սպասքի ուսումնասիրութիւնները[7] նշենք, որ առհասարակ մինչեւ Ի. դարի Ա. քառորդը հայկական աւանդական կենցաղում գերակշռող է եղել կաւէ ամանեղէնը: Սրանք ունեցել են պատրաստման երեք եղանակ.- տնայնագործ՝ ձեռածեփ ամանեղէն, ձեռքի դուրգի վրայ պատրաստուած խեցեղէն եւ յատկապէս քաղաքային կենցաղում տարածուած ոտքի դուրգի վրայ պատրաստուած խեցէ ամանեղէն: Առօրեայ օգտագործման ամանեղէնը պատրաստել են կանայք, տնային պայմաններում, իսկ թրծումը կատարուել է թոնիրներում[8]:

յոց լեզուի բացատրական բառարան, հտր. 3, Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 238):

[5] Ջուր խմելու աման, բարբառային անուանումներում հանդիպում ենք ջրխմի եւ դոլչա տարբերակները, որոնք բնորոշ են հիմնականում Արցախի, Սիւնիքի, Նախիջեւանի, պատմազգագրական շրջաններին եւ լրացնում են կենցաղում կիրառուող խոհանոցային սպասքի համալիրը (Հր. Աճառեան, *Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. 1*, Երեւան, 2001, էջ 343. նաեւ՝ Մ. Աւետիսեան, «Մետաղեայ ջրխմիկների տիպաբանական բնութագիրը», ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազօտութիւնների կենտրոն, *Գիտական աշխատութիւններ*, 24:2021, էջ 177):

[6] Մեծ եւ խոր թաս, լայն բերանով, յատակը նեղ՝ յարմարեցուած սեղանին դնելու համար, դրանով կերակուր են բաժանել, երբեմն էլ մածուն են մերել (Վ. Առաքելեան, Ե. Տէրմինասեան, Հ. Կոստանեան, Ա. Յակոբեան (խմբ.) *Ժամանակակից հայոց լեզուի բացատրական բառարան, հտր. 4*, Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտ, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1980, էջ 753):

[7] Վ. Բդոյեան, *Հայ ազգագրութիւն*, ԵՊՀ հրատ., Երեւան 1974, էջ 92-95:

[8] Շուռ տուած պղնձէ կաթսաների յատակին ձեռքով ծեփել են կաւը՝ անօթին տալով կանոնաւոր ձեւ, թրծել են թոնրի մէջ: Տնայնագործ խեցեգործութեան մէջ կիրառուող միակ աշխատանքային գործիքի՝ կոկիչի մասին յիշատակում է Սէրիկ Դալութեանը իր անտիպ յօդուած-պատմուածքում, որտեղ պատկերաւոր նկարագրում է կաւագործ Բաղդագիւլի աշխատանքային առօրեան, մանրամասն նկարագրում կաւի հետ աշխատելու ողջ ընթացքը, թէ ինչպէս է կաւագործ կինը հունցած կաւը ձեռքի մէջ կլորացնելով եւ երկարացնելով, իրար վրայ դնելով ստանում անօթի պատերը («Կաւագործ կինը, Մարտունի», 1958, հասանելի է www.armenianembroidery.wordpress.com , մատչում՝ 1 Յունիսի 2021. նաեւ՝ Վ. Բդոյեան, *Հայկական աղամաններ*, «Սովետական գրող», Երեւան, 1986, էջ 3-4. նաեւ՝ Գ. Հալաջեան, «Դերսիմի հայերի ազգագրութիւնը», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 5*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1973, էջ 178:
Թթուի, աղաջրի համար նախատեսուած խեցեղէնը կեչուց պատրաստուած քաղցրահամ ձէթով էին պատում՝ ջրաթափանցումը կանխելու նպատակով: Երբեմն էլ թոնրից հանած տաք կարասի մէջ թան էին լցնում, ինչը կայծակնային արագութեամբ գոլորշանում էր՝ կաւանօթին տալով ամրութիւն (Վ. Բդոյեան,

Ինչպէս բոլոր պատմազգագրական շրջաններում, այնպէս էլ Սիւնիքում աղի հանդէպ իւրայատուկ վերաբերմունքը փոխանցուել է նաեւ աղամաններին: Կանացիակերպ աղամանները, որոնցում տան աղի պաշարն են պահել (մինչեւ 50կգ)[9], դրուել են թոնրատներում՝ չօգտագործուող օճախների մէջ կամ յատուկ փորուած որմնախորշերի՝ պատուհանների[10] մէջ: Մեր հաւաքածուի աղամանները կոպիտ են, ձեռածեփ, արտաքին յարդարանքը՝ զուսպ: Առհասարակ կնակերպ աղամանների արտաքին յարդարանքը խորհրդանշային իմաստ ունի, կապւում է կանացիութեան եւ տղաբերքի խորհրդի հետ: Մեր ուսումնասիրութեան առարկայ աղամանները այդ առումով չեն առանձնանում ընդհանուրից. դրանցից մէկի մակերեսին վերադիր եղանակով զարդանախշուած կենաց ծառի պատկեր է, որ խորհրդանշում է կեանքի շարունակելիութիւնը, իսկ միւսի վրայ՝ պարանոցի հատուածում ագուցուած են յախճապակու մանր կտորներ, որոնք զարդեր են յիշեցնում եւ կապւում են կանացիութեան հետ: Սիւնիքում, աղամանների կենցաղավարման ծիսապաշտամունքային սովորոյթ է եղել. երբ ծննդկանին այցելելիս, դռան մուտքի մօտ այցելողը ձեռքը մտցրել է տան աղամանի կամ այն անօթի մէջ որտեղ պահւում է աղը, ի նշան մաքրազերծման[11]:

Կաւէ սպասքի ամենատարածուած տեսակներից են թոնրում կերակուր պատրաստելու կճուճները[12] լայնաբերան, երկու կամ չորս, կարճ, շուրթին ամրացուած ունկերով: Կան նաեւ ջնարակապատ, ունկաւոր կճուճներ, որտեղ ջնարակը գեղագիտական խնդիրներից զատ ունեցել է մանրէազերծող, աղաջրի քայքայումից պաշտպանիչ նշանակութիւն: Ջնարակապատումը արուել է հիմնականում ներսից, երբեմն՝ ե՛ւ ներսից ե՛ւ դրսից: Ըստ փորձագիտական հարցման արդիւնքների[13] երկկողմանի ջնարակապատ

Ջաւախքի հայոց ազգագրութիւնը եւ ժողովրդական բանարուեստը, ԵՊՀ հրատ., Երեւան, 2014, էջ 131):

[9] Հալաջեան, էջ 178:

[10] Բդոյեան, *Հայկական աղամաններ*, էջ 18. նաեւ նոյնի՝ *Ջաւախքի*, էջ 201. նաեւ՝ Յ. Մարութեան, *Հայկական ժողովրդական բնակարանի ներսոյթը (XIX դարի երկրորդ կէս-XX սկիզբ)*, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1989, էջ 129:

[11] Е. Мелик-Шахназаров, *Из поверий, предрассыдков и народных примет армян Зангезурского уезда* (Զանգեզուրի գաւառի հայերի հաւատալիքներից, նախապաշարմունքներից եւ ժողովրդական նախանշաններից), *հտր. 17, բաժին II*, Թիֆլիս, 1893, էջ 198. նաեւ՝ Ս. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 204:

[12] Թրծած կաւէ անօթ՝ նախատեսուած կերակուր եփելու համար, հանդիպում է նաեւ կճիկ, բղուղ, պուտուկ անուանումները (Աղայեան, *հտր. 1,* էջ 740:

[13] Հարցումը իրականացուել է Մեղրու շրջանի Լիճք, Արեփկ, Վանք, Կարճեւան գիւղերի բնակիչների շրջանում, 17. 03. 2022ին:

խեցեղէնը[14] (բարբառային խօսոյթում՝ «օշնակ»), պայմանաւորուած ջնարակի կանաչակապտաւուն գոյնով, նախատեսուած է եղել հալեցուած իւղի համար: Ընդհանրապէս խեցեղէնի ջնարակապատումը համարուել է թանկ հաճոյք եւ ընկերային դիրքի ցուցիչ: Ջնարակապատ կճուճները նախատեսուած են եղել նաեւ պանրի, թթուեղէնի պահպանման համար: Կաւէ սպասքի հաւաքածուի մէջ առանձնանում է Մեղրու Տաշտուն գիւղից բերուած գինու կուլան եւ ջրի կուժը, որոնք հարուստ զարդամոտիւ նախշեր եւ արձանագրութիւններ ունեն: ԺԹ. դարի Բ. կէսով թուագրուող կուլան պատրաստուած է բրուտի անուի վրայ, մակերեսին վերադիր երկրաչափական զարդեր են, առջեւի մասում կայ արձանագրութիւն՝ «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԶԱՊԵԼԻ ՈՐԴԻ ՂԱԶԱՐԻ»: Ջրի կուժը գծանախշերով է զարդարուած եւ իրանին ունի արձանագրութիւն՝ «ԱՅՍ ԿՈՒԺԸ ՊԱՏՐԱՍՏՎԵՑ ՅԻՆ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1929 ԹՎԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՎԱՆԵԱՆ»:

Կենցաղում տարածուածութեամբ խեցեղէնից յետոյ գերակշռել է պղնձէ սպասքը, որոնք հիմնականում քաղաքային արհեստանոցների արտադրանք էին եւ օգտագործման ենթակայ էին միայն անագապատումից յետոյ, ինչը կատարում էին շրջիկ արհեստաւորները: Վերջիններս կատարում էին նաեւ ամանեղէնի նորոգման աշխատանքներ: Սիւնիքի պատմազգագրական շրջանում պղինձը տեղական մետաղ է համարուել եւ պղնձի պաշարի պակաս չի եղել, սակայն տեղական պղնձագործ վարպետներ քիչ են եղել եւ հրաւիրուել են դրսից:[15]

ՀԱԹի Սիւնիքի սպասքի հաւաքածուի պղնձէ ամանեղէնի մաս են կազմում կաթնամանները, թասերը, թաւաները, ջրի կժերը, ջրխմիկները, ափսէները, պղնձէ սկուտեղները, քրեղանները: Հաւաքածուում երկու պղնձէ սկուտեղ կայ՝ մէկը Սիսիանի Բնունիս գիւղից, թուագրում է ԺԹ. դարի կէս-Ի. դարասկզբով: Պատրաստուած է սառը կռման եղանակով, արտաքին յարդարանքը զուսպ է՝ յատակին ունի շրջագծեր, եզրերը ալիքաձեւ են: Նմանատիպ սկուտեղները՝ կախուած չափերից, օգտագործուել են կենցաղային տարբեր նպատակներով: Առհասարակ հայկական աւանդական կենցաղում դրանք կիրառուել են որպէս սեղաններ, դրուել են յատակին՝ փոռոցների կամ կարճ ոտքերով, շրջանաձեւ, ուղղանկիւնաձեւ սեղանների վրայ, որոնց շուրջը կազմակերպուել են հիւրասիրութիւններ տան չափա-

[14] Նմանատիպ ջնարակապատ խեցանօթների բարբառային անուանումներից յաճախ հանդիպում է կանաչիկ անուանումը, որը նշանակում է կանաչագոյն լաքով պատուած խեցեղէն աման: Անուանումը կապուած է ջնարակի կանաչակապտաւուն գոյնի հետ (Գ. Գասպարեան, Ա. Գրիգորեան, Ա. Յակոբեան (խմբ.), *Հայոց լեզուի բարբառային բառարան, հտր. 3,* Հր. Աճառեանի անուան լեզուի ինստ., ՀՀ ԳԱԱ, Երեւան, 2004, էջ 33):

[15] Ս. Լիսիցեան, *Զանգեզուրի հայերը*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1969, էջ 166-67:

հաս անդամների եւ պատուաւոր հիւրերի համար[16]: Հայոց մէջ ամուսնական մահճի մօտ, ամուսնացողների համար պղնձէ սկուտեղ է դրուել, վրան գինի, մեղր, տարբեր անուշեղէններ[17], իսկ մեղրեցիների աւանդոյթի համաձայն, Նաւասարդին հարսնացուի ընտանիքին գինու գաւով, քաղցրեղէնով լի, վառուող մոմերով զարդարուած սկուտեղ են ուղարկել (բարբառային խօսոյթում՝ մեժմահի)[18]: Հաւաքածուում ուշագրաւ է Մեղրիի Փոքր թաղից բերուած, ԺԹ. դարի պղնձէ սկուտեղը, որն աչքի է ընկնում հարուստ զարդագօտիներով, որոնցում հաւասարակենտրոն դասաւորութեամբ նշազարդեր, բուսազարդեր եւ խաչաձեւ պատկերներ են: Ըստ Մեղրի կատարած 1985ի գիտարշաւի ղեկավար Գրիգոր Աղանեանի փոխանցած տեղեկութիւնների, պղնձէ սկուտեղը ձեռք է բերուել անուանի հայագէտ, ծագումով մեղրեցի Կարապետ Մելիքօհանջանեանի դուստր Անահիտ Օհանջանեան-Մեժլումեանից: Սինին կողային եւ կենտրոնական հատուածներում ունի արձանագրութիւններ՝ «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ԳՐԻԳՈՐ ՄԵՐԱՆՂՈՒԼԵԱՆԻ 1963 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30», «ԳՐԵՑԻՄ ՔՍԻ ԾԱՌԱՅ ՅՈՀԱՆՆԷՍ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ ՇՆՈՐՀԻՎ», «ՈՐ Է ԱՅՍ ՏՐ ԶԱՔԱՐԵԱՆՑ Ի ՄԵՂՐԻ»: Սինու շուրջ կատարուած ուսումնասիրութիւններից պարզ դարձաւ, որ արձանագրութիւնից մեզ յայտնի Գրիգոր Մերանղուլեանցը Մելիքօհանջանեանների տոհմից սերուած իշխանական տոհմի ներկայացուցիչ է, ում գերդաստանը 1829-30ականներին ներգաղթի ժամանակ Իրանի հայաբնակ Մուժանբար գիւղից հաստատւում է Զանգեզուրում՝ Գորիսում եւ աւելի ուշ՝ Մեղրու Գուդեմնիս գիւղում[19]: Եւ հաւանաբար նրանց կողմից Մեղրիի Փոքր թաղի Ս. Յովհաննէս Մկրտիչ եկեղեցուն արուած հանգանակութիւններին ի պատասխան եկեղեցին որպէս երախտագիտութիւն նուիրել է սինին: Ինչ վերաբերւում է «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ…» արտայայտութեանը, որը արձանագրութիւնների տեսքով յաճախ ենք հանդիպում կենցաղային եւ եկեղեցական տարբեր սպասքի վրայ, ընկալւում է որպէս բարեմաղթանք նրան, ում նուիրաբերւում է սպասքը: Որպէս կանոն «Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ» արտայայտութեանը յաջորդում է ընծայատիրոջ անունը: Եկե-

[16] А. Марутян, *Поселения и жилища, Армяне* (Բնակատեղի եւ բնակավայր, Հայերը), Գիտութիւն հրատ., Մոսկուա, 2012, էջ 225:

[17] Ս. Լիսիցեան, «Լեռնային Ղարաբաղի հայերը», *Հայ ազգագրութիւն եւ բանահիւսութիւն, հտր. 17*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 49:

[18] Ս. Պօղոսեան, «Մեղրու աւանդական տարազի տօնածիսական համալիրը», *Հայ ժողովրդական մշակոյթ*, 12:2004, Երեւան, էջ 122:

[19] Մ. Աւետիսեան, ԴԱՆ, բանասաց Ն. Բոլեան, Սիւնիքի մարզ, Ագարակ աւան, 7. 12. 2021թ. (Ն. Բոլեանը Գ. Մերանղուլեանի ծոռնուհին է):

ղեցուն կենցաղային սպասք նուիրաբերելու Սիւնիքի պատմազգագրական շրջանի սովորոյթի մասին տեղեկութիւններ է յայտնում Լալայեանը[20]:

Պղնձէ սպասքի յաջորդ տեսակը կերակուրը մատուցելու համար օգտագործուող նստուկաւոր կամ հարթ յատակներով պղնձէ խորը ամաններն են՝ քրեղանները, որոնք սիւնեցիները *կեաւաթ*[21] էին անուանում: Նմանատիպ սպասքի տեսակներ թանգարանի նշուած հաւաքածուն ներառում է: Սրանք հիմնականում փորագրման միջոցով արուած բուսական եւ երկրաչափական զարդերով են գեղազարդուած: Այսպիսի խորը թասերը կիրառուել են նաեւ ջուր խմելու նպատակով եւ կոչուել են ջամ[22]: Սրանց զուգահեռ ջուր խմելու համար լայնօրէն կիրառուել են ջրխմիկների սիւնիք-արցախեան տիպը՝ միականթ, գոգաւոր յատակներով, բուսանախշ կամ պարզապէս գօտեւորուած ելուստներով:

Պղնձէ սպասքը պատրաստուել է կռման, զօդման, երբեմն էլ սառը կոփման եղանակներով[23]: Պղինձը, որպէս մետաղ ե՛ւ դրուագման ե՛ւ փորագրման հնարաւորութիւն է տալիս: Այս հաւաքածուի պղնձէ սպասքի նմուշները փորագրազարդ են, յաճախ հանդիպող զարդերը տերեւներ, ճաղկի թերթեր, ոճաւորուած երկրաչափական պատկերներ, նշիկաձեւ զարդեր են, որոնք սպասքի եզրային գօտիներում են արուում, հիմնականում սպասքի արտաքին մակերեսներին: Բուսական հարուստ մոտիւները բնորոշ են երկրագործ ժողովուրդների հաւատալիքներին եւ կրում են արգասաւորութեան, լիութեան, պտղաբերութեան խորհուրդ, եւ առհասարակ հայկական զարդարուեստում ցանկացած բուսական զարդ նոյնականացւում է կենաց ծառի գաղափարի հետ[24]:

ՓԱՅՏԷ ՍՊԱՍՔ

Սիւնիքում փայտէ սպասքը մեծ թիւ չի կազմել: Փայտից պատրաստել են միայն սպասքի միքանի տեսակ՝ հացի տաշտերը (1,25X40սմ), հացը պահելու համար նախատեսուած սնդուկներ (50X40սմ), Սիւնիքում փայտէ սպասքը մեծ թիւ չի կազմել: Փայտից պատրաստել են միայն սպասքի միքանի տեսակ՝ հացի տաշտերը, հացը պահելու համար նախատեսուած սնդուկներ, տեփուրները, խմորը գնդելու եւ գրտնակելու համար օգտա-

---

[20] Սիսիանում ժողովրդի նուիրատուութիւնների միջոցով հաւաքած սպասքը եկեղեցին անհրաժեշտութեան դէպքում տրամադրում էր հարսանիք կամ թաղում ունեցողներին, որի դիմաց փոխհատուցում էր ստանում (Լալայեան, էջ 248):

[21] Լիսիցեան, էջ 171:

[22] Նոյն, էջ 172:

[23] Աւելի մանրամասն տե՛ս՝ Ա. Թադեւոսեան, *Գիւմրի քաղաքի դարբնոցային մշակութային ժառանգութիւնը*, ՀՀ ԳԱԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստ., Երեւան, 2021, էջ 25, 48:

[24] Ա. Մնացականեան, *Հայկական զարդարուեստ*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1955, էջ 2:

գործուող սեղանները, փայտէ խնոցիները: Թանգարնի փայտի սպասքի նմուշները բերուել են Սիսիանի Ուզ գիւղից, դրանք հիմնականում հացահատկի վերամշակման համար նախատեսուած առարկաներ են՝ քարմաղ, ալուրմաղ, հացահատկի կոտ, ալիւրը հորից հանելու յարմարանք, Սիսիանի Տոլորոս գիւղից՝ խմորի տաշտ: Փայտէ սպասքի մաս են կազմում նաեւ ԺԹ. դարի վերջով թուագրուող երկու ջրի կժերը: Նմանատիպ կժերի բերանները սովորաբար փակուել են փայտէ խցաններով կամ պարզապէս լաթի կտորներով: Թանգարանի փայտէ սպասքի նմուշները ձեւով պարզունակ են, կիրառական նշանակութեան, զուրկ որեւէ զարդանախշից:

Ուշադրութիւն են գրաւում հաւաքածուի մաս կազմող երկու իր, որոնք կիրառուել են որպէս սպասք, սակայն սպասքի պարագայ չեն: Դրանցից մէկը Սիսիանի Ուզ գիւղից բերուած ոչխարի ծնկոսկրն է, ինչը իր ալիքաձեւ վերջաւորութեան պատճառով օգտագործուել է որպէս գաթանախշիկ, միւսը Մեղրու շրջանի Կարճեւան գիւղից բերուած դդմիկն (կարկաժ յարդարանքային բոյս) է, որի դիմային հատուածում անցք բացելով օգտագործել են որպէս գինին կարասներից հանելու յարմարանք՝ շերեփ: Այս երեւոյթը առաջին հերթին մարդ--բնութիւն գործակցութեան ցուցիչ է, նաեւ վկայութիւն է որ իւրաքանչիւր պատմազգագրական շրջանի սպասքի համալիր յարմարեցուած է տուեալ շրջանի բնակլիմայական պայմաններին, տնտեսաձեւերին եւ կեցութեան ձեւին:

ՍՈՎՈՐՅԹՆԵՐ

Սիւնիքի պատմազգագրական շրջանում ամանեղէնի օգտագործման առնչութեամբ գոյութիւն են ունեցել առանձնայատկութիւններ, որոնք ընդհանրական են եղել գրեթէ բոլոր պատմազգագրական շրջաններում: Սպասքի հաւաքելը եւ լուանալը գերդաստանի երկրորդ հարսի պարտականութիւնն էր համարւում: Այն խիստ արգելւում էր նորահարսերին, յղիութեան շրջանում գտնուող եւ նոր ծննդաբերած հարսներին, որոնք միայն ծննդաբերութիւնից քառասուն օր անց իրաւունք ունէին տան սպասքին դիպչելու եւ օգտագործելու, այն էլ քահանայի օրհնութիւնից եւ մեռոնաջրով ամանները լուանալուց յետոյ, այլապէս սպասքը հարամուած էր համարւում: Սպասքը ոչ-մաքուր կամ հարամուած էր համարւում, երբ սխալմամբ լուացքաջուր էին լցնում, կամ մուկ էր ընկնում մէջը, այսպիսի ամանները կամ կոտրում էին կամ էլ մոխրաջրով լուանալուց ու խնկարկելուց յետոյ նորից օգտագործում: Պղծուած սպասքը «հալալում» էին միքանի եղանակով: Ջրօրհնէքի օրհնուած ջրով հունցած խմորից բլիթ էին պատրաստում, չորացնում պահում, երբ ամանեղէնը պղծում էր, բլիթը մէջն էին գցում, լուանում սպասքը, որից յետոյ բլիթը կրկին չորացնում

էին, պահում յաջորդ անգամուայ համար, կամ էլ կնունքի մեռոնաջրով հունցած խմորն էին օգտագործում ամանեղէնը մաքրելու համար[25]:

Բնակելի համալիրում սպասքը պահում էին սպասքապահարանների մէջ, որոնք իրենց ձեւով տարբեր էին լինում՝ պատից կախուած, պատի մէջ ներկառուցուած: Սակայն Հայաստանի գրեթէ բլոր շրջաններին յատուկ պահարանի տիպը ծալքատեղն էր կամ ծալքապահարանը: Դրա ուղղանկիւնաձեւ վերեւի մասը նախատեսուած էր անկողնու, իսկ ներքեւի փակ հատուածը՝ սպասքի պահպանման համար: Այսպիսի պահարաննեը օգտագործւում էին նաեւ Մեղրու գիւղական շրջաններում: Որմնախորշ պահարանները, որոնց սիւնեցիները *պապի շկաֆ* էին կոչում, ձեւով կրկնում էին փոքր որմնախոշերին սակայն չափերով բաւականին մեծ էին, միքանի յարկերով եւ ծածկւում էին փայտէ կամ նրբատախտակից պատրաստուած երկփեղկ դռներով[26]:

Ժամանակի ընթացքում սպասքը նաեւ ծիսականացուել է՝ կենցաղային կիրառական գործառոյթը փոխարինելով ծիսապաշտամունքայինով: Սպասքի ծիսականացման այս երեւոյթը գոյութիւն է ունեցել նաեւ Սիւնիքում յատկապէս հարսանիքների, մանկատածութեան եւ թաղման ծէսերում: Օրինակ Սիւնիքում սովորոյթ է եղել, որ հարսանիքի ժամանակ սկեսուրը իւղի պուլիկը ձեռքին երեք անգամ պտտուի նորապսակ զոյգի շուրջը, որպէս առատութեան խորհրդանիշ, իսկ շէմից ներս մտնող հարսի ոտքի տակ կաւէ *կեռաւթ* են դրել եւ հարսը որպէս չարխափան կոտրել է այն: Գորիսում երկու *կեռաւթ* են դրել, մէկը հարսի, միւսը փեսայի համար: Մաղը նոյնպէս սրբացուել է, նորածնին Մեղրու Շուանիձոր գիւղում դրել են մաղի մէջ՝ հաւատալով, որ մաղի ցանցանման հիւսուածքը չարխափան է եւ պաշտպանում է չար ոգիներից[27]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Սպասքը իր կարեւոր դերակատարումն է ունեցել եւ շարունակում է ունենալ կենցաղը կազմակերպելու եւ վարելու հարցում: Սպասքի կարեւորութեան մասին վկայում է դեռեւս ԺԹ.-Ի. դդ. բնորոշ սպասքի համալիրի բազմազանութիւնը: Հենց այս կարեւորութիւնը գիտակցելով է, որ հասարակութեան կողմից որոշակի վերաբերմունք է ձեւաւորուել սպասքի հանդէպ, այն ծիսականացուել է, երբեմն էլ՝ սրբացուել, որի վերապրուկային դրսեւորումները նկատւում են նաեւ այսօր: Հարկ է նշել, որ ԺԹ.-Ի. դդ. կենցաղավարուած սպասքի որոշ տեսակներ շարունակում են վերարտադրուել եւ կիրառուել հիմնականում ճաշարանային *բիզնէս*ի ոլորտում՝

[25] Ե. Լալայեան, «Սիսիան, ընտանեկան բարքեր», *Ազգագրական հանդէս,* 1:1898, էջ 248-50:

[26] Մարութեան, «Հայ ժողովրդական բնակարանի», էջ 107:

[27] Լիսիցեան, էջ 196-204:

միջավայրի ձեւաւորման եւ աւանդական կերակրատեսակների մատուցման նպատակով: Ուշագրաւ է յուշանուէրային սպասքի արտադրութիւնը, որտեղ փորձ է արւում կրկնել աւանդական սպասքի արտաքին ձեւի նմանութիւնը եւ զբօսաշրջութեան ոլորտում դարձնել ազգային մշակոյթը ներկայացնելու ուրոյն ձեւ:

TYPOLOGICAL CHARACTERISTICS OF THE COLLECTION OF SYUNIK UTENSILS OF THE ETHNOGRAPHIC MUSEUM OF ARMENIA

(Summary)

MARY AVETISYAN (meryavetisyan1984@gmail.com)

The paper focuses on utensils used for cooking and eating in the Syunik region in southern Armenia. It notes that these utensils play an important role in the organization of everyday life. The paper argues that the variety and diversity of the utensils, typically in the 19th-20th centuries, prove their importance. Furthermore, it contends that due to the importance of some of the utensils, society has shaped an attitude towards them which, in time, has been transformed into a ritual and has even been characterized as having sacred significance, an attitude which can still be noticed today.

The author notes that some types of these household utensils have been modernized and have been used in the restaurant business since the 1950s. The author argues that giving them a new look and using them in restaurants is meant to add an atmosphere and a mood while serving traditional dishes. Besides, some sorts of utensils have been redesigned and displayed in souvenir shops, to be used as decorations in houses.

ՍՈՒՐԻՈՅ ՀԻՒՍԻՍԱՐԵՄՏԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒ ԲՆԻԿ ՀԱՅՈՑ ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐԸ

ՅԱԿՈԲ ՉՈԼԱՔԵԱՆ (hagopcholakian@hotmail.com)

ՄՈՒՏՔ

Սուրիոյ հիւսիսարեւմտեան շրջաններուն մէջ հայոց ներկայութիւնը դարերու խորութիւն ունի. Տիգրան Մեծի օրով Անտիոքը կը դառնայ փոխարքայութեան մայրաքաղաքը՝ տէրութեան հարաւային թագաւորանիստը. հայեր կը վերաբնակեցուին շրջանին մէջ: Ըստ յոյն, լատին ու մանաւանդ արաբ պատմագիրներու եւ ժամանակագիրներու՝ միջին դարերուն հայոց ներկայութիւնը մեծ խտութիւն մը կը ներկայացնէ Սեւ լեռներուն վրայ, Որոնդէսի միջին եւ վերին հովիտներուն մէջ, մանաւանդ Անտիոք, Սելեւկիա, Լաւոդիկէ եւ Աֆամիա քաղաքներու շրջանակին մէջ: Ահաւասիկ, այդ բնիկ հայութենէն ԺԸ.-ԺԹ. դդ. մնացած հայ բնակչութեան բնակավայրերն էին Պէյլանի, Մուսա Լեռան եւ Քեսապի գաւառակները, Որոնդէսի հովիտին մէջ Եագուպիէ եւ Գնիէ, Տերիւս լեռան Արամօ եւ Ղնեմիէ, Պոտամայի սարահարթի եւ Օրտուի գաւառի հարաւը ցրուած գիւղերը:

Յօդուածը նիւթ կ'ընէ այս բնիկ հայութեան սրբավայրերն ու ուխտավայրերը: Դժբախտաբար, բացի գործող եկեղեցիներէ, մեզի ոչինչ փոխանցուած է Պէյլանի գաւառակի սրբավայրերէն, մինչ ենթադրելի է, որ Սեւ լեռներու այս հատուածին մէջ հայերը պէտք է ունեցած ըլլային մեծ թիւով եկեղեցական եւ վանական կառոյցներ, որոնց հետ բարեպաշտական աղերսներ պէտք է ունեցած ըլլային բնիկները: Այդ ուղղութեամբ ոչ մէկ տեղեկութիւն ունինք միջին դարերուն Ամըգի դաշտի արեւելեան հարեւանութեամբ գտնուող հայ մեծ բնակավայրերուն՝ Գոմ, Անապ, Արթահ, Հարէմ եւն., ինչպէս նաեւ Ռուճի հովիտի նախկին հայ բնակավայրերուն, Անտիոք եւ Լաթաքիա քաղաքներու միջնադարու հայոց սրբավայրերու մասին: Դարձեալ՝ շատ քիչ բան փոխանցուած է մինչեւ Ի. դարու առաջին տասնամեակները յիշուող Պոտամայի սարահարթի եւ Օրտու գաւառի հարաւը ցրուած հայոց սրբավայրերուն մասին:

Այստեղ մեր տեղեկութիւնները գլխաւորաբար կը վերաբերին Մուսա Լեռան եւ Քեսապի գաւառակներուն, Որոնդէսի հովիտի Եագուպիէ եւ Գնիէ, ու Տերիւս լեռան Արամօ եւ Ղնեմիէ գիւղերուն:

Մեր դիտարկումները կատարուած են համապատասխան գրականութեան եւ մեր դաշտային աշխատանքներուն հիման վրայ:

ՈՒԽՏԱՎԱՅՐԵՐ, ԱՆՈՒԱՆ ՈՒ ՊԱՏԿԱՆԵԼԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐ

Սուրիոյ հիւսիսարեւմտեան շրջաններու բնիկ հայոց ուխտավայր կը հանդիսանան սրբավայրերու երեք խմբաւորումներ.-

ա.- Յայտնի կամ անանուն «կիղիցիկներ» եւ անշուք սրբավայրեր.

բ.- Միջնադարեան վանական կառոյցներու աւերակներ.

գ.- Գործող եկեղեցական կառոյցներ՝ եկեղեցիներ ու մատուռներ, «ի հնուց անտի» կամ նորաշէն:

ա) Կիղիցիկները

«Կիղիցիկ»ները (եկեղեցի-իկ) փոքրիկ տարածքներ են, ուր կ'երեւին եկեղեցական կամ այդպէս կարծուած կառոյցի մը յետին մնացորդները՝ խորան մը, մկրտութեան աւազան մը, փոքրիկ խաչքար մը կամ պատին՝ խաչաքանդակ մը, պատերու հիմքեր, խոյակ մը, խարիսխ մը, տապալած սիւն մը, տապանաքար մը եւն.: Հազուագիւտ են կանգուն կառոյց ունեցող կամ իբրեւ այդպիսին յիշուող կիղիցիկները, թէեւ բոլորն ալ կը յիշատակուին իբրեւ նախկին եկեղեցիներ: Կիղիցիկները շատ են մանաւանդ Քեսապի շրջանին մէջ, ինչպէս Գարատուրան գիւղի Ս. Գէորգը, նոյն գիւղի Վերի թաղի կիղիցիկը, Քեսապի մօտ Սամասի Ս. Մարուքէն, Արամոյի Ս. Թորոսը:

Կիղիցիկները մեծամասնութեամբ կը գտնուին նախկին կամ գործող գերեզմանատուներու տարածքին մէջ, ունին առաւել խնամուած սուրբ ծառ մը, փշակաղնի (արաբ.՝ *սընտիան*)[1] կամ դափնի (արաբ.՝ *ղար*), հազուադէպօրէն նաեւ սօսի եւ ձիթենի[2]:

Իբրեւ կիղիցիկ կը յիշուին նաեւ վիմափոր կամ բնական քարայրներ, որոնք հաւանաբար եղած են ճգնարաններ կամ դամբարաններ: Կիղիցիկներու պէս պաշտամունքի առարկայ կը դառնան նաեւ աղբիւրներն ու ծառերը, ինչպէս Ս. Սարգիսի քարայրը եւ Ս. Մարտիրոսի աղբիւրը Մուսա Լեռան Քեպուսիէ գիւղին մօտ, Ս. Ուրբաթի քարայրը Եողունօլուքի մօտ, Խտըրպէկի սօսի ծառը եւն.[3]:

Կիղիցիկներէն ոմանք անհատական ուխտեր կ'ընդունին. անցորդ մը կը մտնէ խաչ մը կը հանէ, մտովի աղօթքը կ'ընէ, «խընդրուածք» մը կը ներկայացնէ (հիւանդի ապաքինում, ճամբորդ հարազատի բարի երթ, զաւկի մը ծնունդը կամ յղի կնոջ բարի ազատում եւն.), ապա քովի ծառի մէկ ճիւղին *ադար* (բարբառ՝ *ադդուօր,* ուխտի նշան՝ լաթի երիզ մը) կապելով կը հեռանայ: Կրնայ աքլոր մը զենել ու տալ դրացիի մը. այդպիսի մատաղը տուն չեն տանիր:

Կարգ մը կիղիցիկներ թաղային ուխտավայրեր են. թաղեցիները կը հաւաքուին ծառին տակ, մէկը իր մատաղը քարին վրայ կը զենէ, կը նստին,

---

[1] Մեր տեսած բոլոր ոչ-քրիստոնեայ սրբավայրերն ալ շրջապատուած են փշակաղնիի պուրակով:

[2] Կիղիցիկներու մասին տե՛ս՝ Յակոբ Չոլաքեան, «Քեսապի շրջանի եկեղեցական հին կառոյցները յարանուանական համայնքներու բաժանումէն առաջ», *Հայագիտական հարցեր*, 1(16):2019, էջ 103-20:

[3] *Յուշամատեան Մուսա Լերան*, խմբ.՝ Մարտիրոս Գուշագճեան եւ Պօղոս Մատուռեան, հրատ.՝ Ճեպէլ Մուսայի հայրենակցական միութեան, Տպ. Ատլաս, Պէյրութ, 1970. տե՛ս՝ Մուսա Լեռան գիւղերու նկարագրութեան բաժինները:

շուրջը կը մաքրեն, ուխտապուր կը պատրաստեն: Ուխտապուրը՝ *կիղիցիկէ-պէօր*, մատաղի միսով պատրաստուած սիսեռով փիլաւ է: Միասին կ'ուտեն, «ուխտդ ընդունելի ըլլայ» կ'ըսեն, ժամանակ կ'անցընեն:


Մ Ի Ջ Ե Ր Կ Ր Ա Կ Ա Ն Ծ Ո Վ
Ա Ն Տ Ի Ո Ք Ի
ԿԱՄ
ՇԱՏՐ ՀԱՐԻՒ - ԱՐԵՒՄՏԵԱՆ ՀԱՅԱԲՆԱԿ ՎԱՅՐԵՐ
(ՊԷՅԼԱՆ, ՍՈՒԵԷՏԻԱ, ՔԵՍԱՊ.ՂՆԵՄԻԷ-ԱՐԱՄՕ ԵՒ ՌՈՒԲԱՅ ՀՈՎԻՏ
Հայաբնակ գիւղեր
Միջին դարերուն յիշուող, իսկ ոմանք մինչեւ 1939 գոյութիւն ունեցող հայաբնակ գիւղեր
Հայ եւ այլազգի խառն բնակչութեամբ յիշուող նախկին գիւղեր
Այլազգի գիւղեր
Քրիստոնեայ գիւղեր
Քրիստոնէական վան շրջանի տաճարական կառոյցներ
Բերդեր
Ասան – քաղաքներ
Ալեքսանդրիա
Ալեքսանդրիա
Անտիոք
Հարեմ
Իտլեպ
Արիհա
Ազրաղ
Աֆրին
Լաթաքիա
Ազազ
Ճարապլուս
Մանպիճ
Ռաքքա
Ռահպա
Ռասաֆա
Ռուսաֆա

գաղթականութեան տարածքին մէջ - նկատի ունիմ հարաւի Ալաուի լեռնէրէն ու Որոնդէսի միջին հովիտէն ու Աֆամիայէն հիւսիս - Ռուճի հովիտին մէջ, Կասիոս լեռան լանջերուն, ապա Անտիոքէն հիւսիս երկարող Սեւ լեռներուն վրայ կան բազմաթիւ միջնադարեան քրիստոնէական կառոյցներու աւերակներ՝ եկեղեցիներ, վանքեր, միանձնեայ ճգնարաններ: Հայ հին գաղթականութեան յետնորդները, ինչպէս կ'երեւի ԺԹ. դարէն եկող վկայութիւններէն, բարեպաշտական կապեր ունեցած են անոնց հետ ու զանոնք վերածած՝ յատկապէս համաժողովրդական ուխտավայրերու: Անոնց հետ կապուած են հայկական հաւատալիքներու շատ երեւոյթներ ու ծէսեր, ինչպէս՝ Արամոյի վանքը, Եագուպիէի Ս. Գէորգը (Ս. Աննան), Կասիոսի Պարլում/Պալլումը: Յատկապէս անոնք մեծ խտութիւն մը կը ներկայացնէին Սելեւկիայէն հիւսիս մինչեւ Իսոսի ծոց եւ անկէ մինչեւ Մարաշ երկարող Սեւ լեռներուն վրայ: Սեւ լեռներուն հարաւային բաժնին մէջ, պատմական Սելեւկիա քաղաքէն հիւսիս-արեւելք կը գտնուէին Սուետիոյ կամ Մուսա Լեռան հայ գիւղերը: Մուսա Լեռան բոլոր գիւղերուն կից կը գտնուին բազմաթիւ միջնադարեան եկեղեցական կառոյցներ, վանքերու աւերակներ ու ճգնարաններ, դամբարաններ, որոնց հետ բարեպաշտական աղերսներ ունէին մուսալեռցիները. անոնք սիրելի ուխտավայրեր էին իրենց համար[4]: Դժբախտաբար Կիլիկիոյ սահմանակից, հայոց կողմէ յիշատակուող Դարպսակէն հարաւ, Պաղրասի բերդի հարեւանութեամբ գոյատեւող Պէյլանի շրջանի հայոց ուխտավայրերուն մասին բան չէ փոխանցուած մեզի: Բացի գործող եկեղեցիներէ՝ ոչինչ ունինք այլ սրբավայրերու մասին:

Սեւ Լեռներ

Պատմութիւնը կը վկայէ Ամանոսեան լեռնաշղթայի հարաւային բաժնի՝ Սեւ լեռներու հայոց սուրբ վայրերուն մասին: Գրիգոր Վկայասէր կաթողիկոս կը գրէ. «*Հասաք ի սուրբ լեառնն, զոր Սեաւն կոչին, ի մեր սեփական պարգեւական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ պառ-*

[4] Քեսապի Պարլումի, Մուսա Լեռան եւ Արամոյի միջնադարեան վանական համալիրներու մասին տես՝ J. Mésérian, S. J., *Expédition archéologique dans L'Antioche Occidentale,* Beyrouth, 1964. նաեւ՝ Wachtang Djobadze, *Archeological investigations in the Region West of Antioch on the-Orentes,* Stuttgart, 1986. նաեւ՝ *Յուշամատեան Մուսա Լերան*, էջ 73-75, 78-79, 83-84, 90-96, 100, 106, նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, «Կասիոս լեռը Անտիոքի շրջանի հայոց աւանդազրոյցներուն եւ հաւատալիքներուն մէջ», *Աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում 1,* հրատ. ՀԱԻ, Երեւան, 2018, էջ 313-327. նաեւ նոյնին՝ «Համպուշիէ գիւղի աշտարակին 1348 թ. հայերէն արձանագրութիւնը», *Վէմ համահայկական հանդէս*, 2(62):2018, էջ 144-154. նաեւ նոյնին՝ «Արամօ գիւղի մօտիկ հայոց վանքը Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ եկեղեցիներով», *Բանբեր Երեւանի համալսարանի,* 2(34):2021, էջ 30-44:

լահոյ կոչի, որ թարգմանի դրախտ Աստուծոյ»[5]: Ուրեմն՝ պառլահոյ կը նշանակէ «դրախտ Աստուծոյ» ու ընդհանուր անունն է Սեւ լեռներուն եւ ոչ թէ Քեսապի Պարլումը, ինչպէս ոմանք կը կարծեն[6] կամ առանձին վանք մը: «*Այդ անունով վանք չկայ: Արդ, պառլահոն որոշ վանքի մը անունը չէ եղած, այլ «սուրբ տեղիք» կոչուելու արժանի վայր, Աստուծոյ դրախտը յորջորջուելու յատկութիւններով օժտուած սրբատեղիներով լեցուն տարածք*»[7]:

Սեւ լեռներու վանքերը, անապատներն ու ճգնարանները, կը պատկանէին քրիստոնեայ տարբեր ազգերու, դաւանանքներու. կային ասորական, հայկական, յունական, վրացական, լատին վանքեր ու ճգնարաններ, տեղ-տեղ խառն էին՝ հայ-ասորական, յունական-վրացական եւն.: ԺԱ. դարու հայ պատմագիր Արիստակէս Լաստիվերցին կը պատմէ հետեւեալ դրուագը Հալէպի վրայ արշաւող բիւզանդացի Ռոմանոս Գ. կայսեր մասին, որ տեսնելով լեռան վանականներու բազմութիւնը («հերետիկոս» բառով կ'ակնարկէ հայ ու ասորի վանականները)՝ կը հրամայէ բոլորը բանակ տանիլ.

> Սա յառաջին ամի իւրոյ թագաւորութեանն՝ զօրաժողով լինի, եւ ճանապարհ առն ի կողմանս Անտիոքացւոց. եւ կամէր երթալ ի վերայ քաղաքին որ կոչի Հալպ, առնուլ աւերել զնա: Եւ եկեալ հանդիպի լերինն որ կոչի Սեաւ, եւ տեսանէ անդ բազմութիւն վանորէից եւ զմենաստանս մենակեցաց, որք ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն: Որք միով այծէիւ կամ բաճկոնաւ շատանան, զՅովհաննու բերելով զնմանութիւն բայց միայն զի նա մարախով եւ վայրենի քաղցու կերակրեալ լինէր, իսկ սոքա երկաթի բրիչ ձեռն առեալ՝ խոնջեալ աշխատին ի գարի սերմանեաց պատրաստեալ զօրապահիկն կերակուր: Այլ զզանազան խորտիկս եւ զքաղցրահամ կերակուրս հանդերձ ուրախարար գինւով զոր մատռուակեն որթք այգեաց, զայսոսիկ զամենեսեան աշխարհասիրացն թողին: Ի գլուխ լերինն բարձրացեալ նախամարգարէին կաճառակից գոլով՝ միշտ ընդ Աստուծոյ խօսին:
>
> Զսոսա տեսեալ թագաւորին՝ հարցանէր արժանաւորաց իւրոց. զի՞նչ են այն բազմութիւն հերետիկոսացն: Եւ նոքա ասեն. սոքա ամենեքեան երամք աղօթողաց են, որք աշխարհի խաղաղութեան եւ կենաց ձերոց առողջութեան միշտ խնդրուածս առնել: Պատասխանի տուեալ թագաւորն ասէ. չէ ինձ պիտոյ աղօթք նոցա. այլ գերեցէք յամենայն վանորէիցն աղեղնաւորս ի ծառայութիւն իմում թագաւորութեանս: Քանզի յոյժ հաւանեալ էր քաղկեդոնական սահմանադրութեանն՝ ատելի գոլով ամենայն ուղղափառ հաւատոց[8]:

---

[5] Գարեգին Ա. Կաթողիկոս, *Յիշատակարանք Ձեռագրաց, Ա. հատոր*, Անթիլիաս, 1951, էջ 260:

[6] *Ալպոմ Քեսապի եւ շրջակայից*, Պէյրութ, 1955, էջ 8: Այս շփոթը կու գայ Հ. Ղեւոնդ Ալիշանէն. «*եւ միւս եւս վանք՝ որոյ ոչ յիշի սրբազան անուն, այլ կոչի վանք Պարլերոյ լերին (Abbatiam Montis Parleri), որ իցէ թերեւս վանքն Պառլահոյ, այն զոր յիշատակեցաք ի թիւս վանորէից Սեաւ լերանց*» (*Սիսուան,* Վենետիկ, 1885, էջ 424):

[7] Տոքթ. Յարութիւն Տէր Ղազարեան, *Հայկական Կիլիկիա, Տեղագրութիւն,* Տպ. Կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1966, էջ 67:

[8] Արիստակէս Լաստիվերցի, *Պատմութիւն,* վենետիկ, 1901, էջ 31:

Հայր Ղեւոնդ Ալիշան եւ հայր Համազասպ Ոսկեան Կիլիկիոյ վանքերու մասին խօսելով կ'անդրադառնան նաեւ Սեւ լեռան հայոց վանքերուն, ինչպէս՝ Արեգի, Շուղրի, Բարսեղեանց, Վարդկան, Մաշկեւոր, Քարաշիթու, Շափիրի, Պաղակձիակ վանքերը[9], բայց յստակ տեղադրութիւն գրեթէ չեն յաջողիր տալ. ոմանց «մերձ ի Մարաշ» արտայայտութիւնը մեզ շատ հիւսիս կը տանի Անտիոքի սահմաններէն:

Պարկանելիութիւն

Հարց է, թէ Մուսա Լեռան, Քեսապի եւ հարաւի հայ գիւղերուն կից գտնուող քրիստոնէական միջնադարեան կառոյցները ի սկզբանէ հայկակա՞ն կառոյցներ եղած են, թէ՞ օտար՝ յունակա՞ն, ասորակա՞ն, թէ՞ այլ: Հայր Յովհաննէս Մըսըրեան եւ Վախտանգ Ճոպաճէ լայնօրէն կը խօսին իրողապէս կամ ենթադրաբար գործած վրաց եկեղեցւոյ վանական համալիրներու մասին, ինչպէս՝ Քեսապի Պարլումը (St. Barlaam), Եողունօլուքի Ս. Թադէոս Առաքեալը եւն.: Այդ վանական համալիրները գործած են հայաբնակ միջավայրերու մէջ: Այդ դարերու արաբական վկայութիւնները բազմաթիւ են՝ գոյութիւն ունեցող տեղաբնիկ հայոց մասին: Պահ մը ընդունելով հանդերձ քաղկեդոնական հայոց գոյութիւնը, բնական հարց կը ծագի, թէ քաղկեդոնականութիւնը որքա՞ն կրցած է գոյատեւել Անտիոքի շրջանի հայոց մէջ:

Մեծագոյն իրողութիւնը այն է, որ հայերը հոս ունեցած են երեք եպիսկոպոսութիւններ՝ Անտիոքի, Լաւոդիկէի եւ Աֆամիոյ: 1179ին Հռոմկլայի ժողովին մասնակցող եպիսկոպոսներուն մէջ կը յիշուի Աֆամիոյ Կոստանդին եպիսկոպոսը Լաւոդիկէի Սարգիս եպիսկոպոսին եւ Անտիոքի Գրիգորիս արքեպիսկոպոսին հետ[10]: Եւ բնականաբար այս թեմական իշխանութիւններուն տակ գործած են եկեղեցիներ եւ վանքեր:

Կիղիցիկներն ու վաղ միջնադարեան վանական աւերակները իսկութեան մէջ յատուկ համայնքի մը կամ յարանուանութեան մը չեն կապուիր իբրեւ սեփականութիւն: Անոնք համայնական կալուածներ էին կամ մօտիկ բնակավայրի մը գերեզմանատունը, ուր կրնային թաղումներ ընել բոլոր յարանուանութիւններուն պատկանող հայ ընտանիքները, բայց շատ այցելուներ ունեցող կամ համաժողովրդական ուխտավայրի վերածուած սրբավայրերը դրուած էին գործող հայ առաքելական եկեղեցւոյ, հազուադէպօրէն նաեւ հայ կաթողիկէ եւ լատին եկեղեցիներու հսկողութեան տակ: Աւետարանական եկեղեցին պաշտամունքային աղերսներ չունի անոնց հետ:

---

[9] Հայր Համազասպ Ոսկեան, *Կիլիկիայի վանքերը*, Վիեննա, 1957, էջ 295:

[10] Մաղաքիա արք. Օրմանեան, *Ազգապատում, Ա. հատոր, Գ. մաս*, Բ. հրատ., Տպ. Սեւան, Պէյրութ, 1959, էջ 1468:

Ընդհանուր կարծիք կար, որ այս սրբավայրերը հայոց հետ աղերսներ ունին միայն, բայց կային քանի մը սրբավայրեր, ուր հոռոմներն[11] ալ առանձին համաժողովրդական ուխտագնացութիւններ կը կազմակերպէին, ինչպէս Քեսապի Ներքի գիւղի մօտ Սիվտիկիը եւ Մուսա Լեռան Պիթիաս գիւղի քով Ս. Եղիայի վանքը:

Ընդունուած աւանդութիւն էր, որ կիղիցիկներու եւ վաղմիջնադարեան սրբավայրերու տարածքին մէջ ամէն ինչ պէտք է մնայ, ինչպէս որ կայ: Անոնց վրայ նոր կառոյցներ գրեթէ չկան. անգիր օրէնքով արտօնուած չէ: Կայ ըմբռնում, որ կիղիցիկները յարանուանական բաժանումներէն առաջ հայ առաքելական մատուռներ կամ եկեղեցիներ եղած են, բայց յետագային այդ վայրերը սրբացուած են բոլորին կողմէ ու վերածուած բոլորին պատկանող ուխտավայրի՝ կիղիցիկի: Հոն հայ առաքելականն ալ, բողոքականն ալ, կաթողիկէն ալ իրենց ուխտը ընելու կու գան: Պաշտօնական եկեղեցւոյ վերահսկողութիւն չկայ անոնց վրայ, բայց կան ուխտավայրեր, յատկապէս շատ սիրուած ու համաժողովրդական բնոյթ ունեցողները, ուր ուխտաւորները նուէրներ կը ձգեն՝ սպասք, գումար եւն., ասոնք ուղղակի հայ առաքելական տեղւոյն եկեղեցւոյ հսկողութեան տակ են, ուր եկեղեցւոյ թաղականութեան կարգադրութեամբ պարբերաբար կամ տարին անգամ մը եկեղեցական արարողութիւններ տեղի կ'ունենան: Այս սրբավայրերուն վրայ կը հսկեն տեղւոյն առաքելական եկեղեցւոյ թաղական խորհուրդները, հոգ կը տանին շրջապատի մաքրութեան, ինչպէս մեր օրերուն՝ Քեսապի մօտիկ Ս. Մարուքէն: Կարիք զգացուելու պարագային սրբավայրի կալուածէն դուրս, անոր կից՝ մատուռ մըն ալ կը կառուցեն, առանց սրբավայրէն ծառ մը հեռացնելու կամ քար մը տեղափոխելու, ինչպէս Ներքի գիւղի Ս. Աստուածածին մատուռը (1959)՝ կիղիցիկին կից: Միայն մէկ պարագայի, Գարատուրանի Ս. Աստուածածին կիղիցիկի խորանին հիմքին վրայ կաթողիկէները կառուցեցին պեթոնէ խորան, այդ ալ իբրեւ երկու համայնքներու՝ սրբավայրի նկատմամբ սեփականութեան իրաւունքի շուրջ ծագած կամ հնուց անտի գոյութիւն ունեցող հակամարտութեան մը իբրեւ հետեւանք:

Մենք յստակօրէն չենք գիտեր տեղադրութիւնը Անտիոքի առաջնորդանիստ Յեսուանց վանքին, զոր կը դնեն շատ հեռու՝ «մերձ ի Մարաշ»: Չենք գիտեր նաեւ տեղադրութիւնը Վարդան Այգեցիի վանքին՝ Գետիկին: Անդին, ոմանք փորձած են Քեսունի մօտ Շուղրի Կարմիր վանքն ու Ընկուզնիկի վանքը փնտռել Շուղրի քար եւ Բագաս կից բերդերուն մօտիկ Շուղր եւ Ընկըզիկ գիւղերուն մէջ[12]: Բոլորն ալ մերժուած են:

---

[11] Նաեւ՝ ուռում, *ռում.* այս անունով կը ճանչցուին Բիւզանդական Կայսրութեան յոյն բնակչութեան յետնորդները՝ այժմու Թուրքիոյ, Մերձաւոր Արեւելքի եւ պալքանեան երկիրներու յոյները:

[12] Յ. Ա. Պ., «Շղուրի կաթողիկոսարանը», *Հասկ,* 1941, էջ 20. նաեւ՝ Բիւզանդ Եղիայեան, «Հայեր Սիւրիոյ եւ Լիբանանի մէջ, Ա.», *Հայաստանի կոչնակ,* 3 Յուլիս 1948, էջ 629-31. նաեւ՝ Ա. Գ. Աբրահամյան, *Համառօտ ուրուագիծ հայ գաղթավայրերի*

Պատմական վկայութիւններ

Անտիոքի հարաւային շրջաններու «հայալուր» բնակավայրերու մասին առաջին ակնարկութիւնը կը վերաբերի Ալիշանի, որ Անտիոքի Ռենալտ դուքսին պատկանող պարգեւագիրէ մը քաղելով՝ Ալուս (Alus) անուն գիւղը կը տեղադրէ Անտիոքի հարաւը, «որ ընդ Վալենիոյ քաղաքի եւ Մարկադայ. երկուքին եւս ի հարաւոյ Անտիոքայ»: Նոյն ցանկին մէջ «հայալուր» շարք մը անուններ եւս կը նշանակէ, բոլորն ալ Անտիոքի հարաւային կողմը. «*Յորոց գէթ զոմանս ի դէպ է դասել ի կողմանս յայսորիկ եւ զի հայալուր եւս են անուանք նշանակեսցուք զոմանս, որպէս Կոմ կամ Գոմ գիւղ (Come), Պոպոս կամ Բոբս? բերդ (Bobos), համանուն գիւղիւ. Կազնափոր (Casnapor), Կոլկաս (Colgas), Կորկոնէ (Corcona), Մունձարակ կամ Մունսարակ, սոքա ասին լինել ի Palmeris լերին: Իսկ Պոտամա (Potama) եւ Բանջերեգուն (Pangeregun) (Բանջարագում?) ի Ռուսէ հովտի, եւս եւ Գոռոզ (Gorrosio), Մասպաբ (Mastaba) եւն.. ընդ սոսին փուեալ էր եւ Ս. Գէորգ վանք որ ի թիւս վանորէից Սեւոն լերին նշանակեցինք*»[13]:

Կը մնայ ըսել, որ Անտիոքի շրջանի հայ միջնադարեան եկեղեցական ու վանական հաստատութիւններուն մասին հայագիտութիւնը տակաւին շատ ըսելիք ունի:

Անանուն, նոյնանուն ուխտավայրեր

Ուխտավայրերէն շատերը անանուն են, կը ճանչցուին այսինչ գիւղի, թաղի կամ արտի անունով՝ Քեսապի շրջանին մէջ Պաղճաղազի կիղիցիկը, Գարատաշի կիղիցիկը: Ոմանք ունին անուն, որ կրնայ ըլլալ սուրբի մը անունը, ինչպէս Գարատուրանի Ս. Գէորգը, Քէօրքիւնէի Ս. Ստեփանոսը, Քեսապի Ս. Մարուքէն, Քեպուսիէի Ս. Սարգիսի քարայրը, Արամոյի Ս. Թորոսը: Ոմանց անունը հասարակ բառ մըն է, ինչպէս՝ Մուսա Լեռան վրայ Ճգնաւորի քարայրն ու Սուրբ Ուրբաթը, Քեսապի Ներքի գիւղի մօտ Սեւ տիկնոջ կիղիցիկը (Սիվտիկիյը) եւն.:

Միւս կողմէ, սակայն, վանական կառոյցները սովորաբար անունով յայտնի են, ինչպէս Քեսապի Պարլումը, Արամոյի Ս. Աստուածածին վանքը, Պիթիասի մօտ Ս. Եղիայի վանքը, Եողունօլուքի մօտ Ս. Թադէոս Առաքեալի վանքը եւն., կամ պարզապէս կը յիշուին Վանքը ձեւով: Հայր Մըսըրեան կը գործածէ ժողովուրդի՝ տեղւոյն հայոց կողմէ ընդունուած անունները՝ Ս. Միքայէլ, Ս. Թովմաս Առաքեալ, Ս. Եղիա, մինչ Ճոպաձէ կը մերժէ զանոնք՝ գլխաւորաբար վրաց մատենագրութենէն անուններ ենթադրաբար անոնց

պատմութեան, հտր. Ա., Հայպետհրատ, Երեւան, 1964, էջ 430. նաեւ՝ Մարտիրոս Գուշագճեան, *Մուսա լերան հայկական գաղթօճախը*, Տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1988, էջ 30:

[13] Ալիշան, *Սիսուան*, էջ 424:

կապելով: Հայր Մըսըրեան կը խօսի Քեպուսիէ մօտ Ս. Միքայէլ վանքի մասին, զոր Ճոպաձէ կը համարէ վրացական եւ հաւանական կը նկատէ, որ նուիրուած ըլլայ Ս. Գէորգի անուան[14]: Հայր Մըսըրեան կը խօսի Եողունօլուքի մօտ գտնուող Ս. Թովմաս Առաքեալի վանքի մասին, մինչ Ճոպաձէն Սեւ Լեռներուն վանական համալիրները ներկայացնող ցանկի մը հիման վրայ կ'ենթադրէ, որ եկեղեցին Wood of Life («Lifegiving Cross» վրացերէն թարգմանութեամբ) կը կոչուի, այսինքն՝ Խաչ կամ Խաչափայտ, եւ լայնօրէն ուսումնասիրութեան կ'ենթարկէ զայն[15]:

Յատկանշական են նաեւ նոյնանուն ուխտավայրերը: Ուրբաթ անունով երկու տեղ կայ, մէկը Սըբըրբութ կամ Սուրբ Ուրբաթ ուխտավայր քարայրն է Մուսա Լեռ, իսկ միւսը Սուրբ Ուրբաթ աղբիւրն է Ղնեմիէ գիւղին մէջ: Վերջինը արաբախօսները կը կոչեն Շէխ Ճումաա: Շէխ բառը կրնայ նշանակել երէց, աւագ, իշխանաւոր, սուրբ, ուրեմն՝ Սուրբ Ուրբաթ: Ասիկա ծագումնաբանօրէն կու գայ մեր Աւագ Ուրբաթէն, Յիսուսի Խաչելութեան օրը, որմէ ետք, երրորդ օրը ան մեռելներէն յարութիւն առաւ: Խաչելութիւնը մարդոց փրկութեան եւ յաւիտենական կեանքի համար եղաւ, այդ պատճառով ալ տարբեր տեղեր կը կոչուի Լաւ Ուրբաթ, Բարի Ուրբաթ, Սուրբ Ուրբաթ:

գ) Գործող եկեղեցիներ

Առաքելական համայնքի եկեղեցիները հնագոյններն են, կը յիշատակուին իբր «ի հնուց անտի» գոյութիւն ունեցող եկեղեցիներ՝ «կիղիցա». հնագոյնները կու գան ԺԸ. դարու արձանագրութիւններով: Անոնք մեծ մասով տեղւոյն վրայ գտնուած եկեղեցական կառոյցի մը վրան շինուած են կամ լայնօրէն օգտագործած են խոնարհած եկեղեցւոյ մը քարերը: Մըսըրեան եւ Ճոպաձէ կը գտնեն, որ Մուսա Լեռան հայոց եկեղեցիներէն ոմանք իրենց կառոյցին մէջ ունին հին եկեղեցիներէ բերուած քարեր, ինչպէս Քեպուսիայի Ս. Սարգիսը (կառ.՝ 1802ին, այժմ՝ մզկիթ), Խտըրպէկի Ս Փրկիչը (կառ.՝ 1850ին), Եողունօլուքի Ս. Աստուածածինը (կառ.՝ 1790ին, այժմ՝ մզկիթ), Պիթիասի նախկին Ս. Միլիտոսը[16]: Ասիկա ակնբախ է յատկապէս Արամօ գիւղի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ պարագային, որուն պատերուն ագուցուած են յայտնապէս հին կառոյցներէ բերուած մեծ ու փոքր խաչքարեր ու քանդակազարդ անկիւնաքարեր[17]: Նկատեր եմ, որ շրջանի եկեղեցիները, նոյնիսկ եթէ կառոյցին մէջ չեն օգտագործած հին, խոնարհած եկեղեցիէ բերուած քարեր, մուտքին կամ գաւիթին մէջ հին կառոյցէ մը բերուած քանդակազարդ քար մը - ընդհանրապէս խոյակ - զետեղած կ'ըլլան: Ասիկա հաւա-

---

[14] Mésérian, էջ 37. նաեւ՝ Djobadze, էջ 172:

[15] Djobadze, էջ 117-18:

[16] Djobadze, համապատասխանաբար տե՛ս էջ 172, 175-177:

[17] Ատրիանօ Ալփակօ Նովելլօ, «Հայկական ճարտարապետական կոթողները Սուրիոյ մէջ», թարգ.՝ քոյր Թէոպիստէ Մարի Պետրոսեան, *Շիրակ,* Օգոստոս-Սեպտեմբեր 1989, էջ 81-87:

նաբար կ'արտայայտէ այն կապը, որ ունեցած են իրենց նախնիները տարածքին մէջ գտնուած աւելի վաղ շրջանի հոգեւոր կառոյցներուն հետ: Այդպիսի մէկական խոյակ ունին Քեսապի Ս. Աստուածածին եւ Քէօրքիւնէի հայ աւետարանական եկեղեցիները: Տեղւոյն հայ կաթողիկէ Ս. Միքայէլ եկեղեցւոյ երիցատան մէջ (նախկին լատինաց վանք) կը գտնուին Պարլումի սրբավայրէն բերուած քանդակազարդ քարեր:

ԺԹ. դարու կիսուն շրջանին մէջ ստեղծուեցան հայ աւետարանական (բողոքական), հայ կաթողիկէ (կաթոլիկ) եւ աւելի ուշ՝ հայերէ կազմուած լատին համայնքներ: Հայութիւնը բաժնուեցաւ չորս յարանուանութիւններու: Այս բաժանումները շատ անգամ եղան մեծ խռովքներով. հին եկեղեցիներն ու գերեզմանատունները կռուախնձոր դարձան, քանդուեցան ու լքուեցան: Նորակազմ յարանուանութիւնները ունեցան իրենց եկեղեցական նոր կառոյցները: Մայր համայնքը, տեղ-տեղ կորսնցնելով հանդերձ, շարունակեց պահել իր եկեղեցիներէն ոմանք իբրեւ հայ զանգուածի մայր եկեղեցի:

Ի տարբերութիւն կիղիցիկներուն եւ վաղմիջնադարեան վանական սրբավայրերուն՝ եկեղեցիները համայնքային եւ յարանուանական սեփականութիւններ են, եկեղեցական թեմական իշխանութեան մը կամ կեդրոնի մը վիճակը կը հանդիսանան, ունին իրենց հոգեւոր հայրը՝ քահանայ, վարդապետ կամ պատուելի, որ ունի իր հօտը կամ ծուխերու քանակ մը: Կ'ունենայ նաեւ աշխարհականներէ կազմուած խորհուրդներ կամ մարմիններ, որոնք կը վարեն եկեղեցւոյ վարչական, տեսչական եւ հոգեւոր եկեղեցական գործերը: Ասոնք, ըստ յարանուանութեան, կ'ունենան տարբեր կազմեր եւ լիազօրութիւններ: Եկեղեցւոյ հօտին ինքնութիւնը կը հաստատուի իր եկեղեցւոյ անունով:

Հասկնալի է, որ եկեղեցիները, ըստ յարանուանական պատկանելիութեան՝ կ'ունենան արտաքին եւ ներքին իւրայատկութիւններ, տօներու, ծէսերու եւ արարողակարգերու մէջ տարբերութիւններ, որոնք ամէն տեղ նոյնն են մեր իրականութեան մէջ:

Եկեղեցիներն ալ ուխտավայրեր են, թէեւ այստեղ ուխտերն ու խնդրուածքները չունին միւս ուխտավայրերուն մէջ երեւցող ցուցական յատկանիշերը՝ զոհ մատուցել, ուխտապուր պատրաստել, ադար կապել, կարգ մը պարագաներու՝ մանրադրամ դնել կամ փակցնել քարին, սուրբգրային նիւթեր՝ գիրք ու սրբանկար, դնել յատուկ տեղ մը եւն.: Գործող եկեղեցիներուն տրուած դրամական ու այլ տեսակի նուիրատուութիւնները կը յայտարարուին քահանային կողմէ: Անհատական ուխտեր ունեցողները զանազան նուէրներ կը խոստանային գործող եկեղեցիին բարեզարդման համար, ինչպէս՝ բան մը հիւսել՝ դաստարակ, վարագոյր, սպաս մը նուիրել, վերանորոգութեան մէջ բաժին ունենալ: Ուխտաւորի նուէրները կրնային զուտ բարեսիրական նպատակ ունենալ՝ յատկացուելով անկարներու, ծերանոցի, որբանոցի, անկելանոցի, դպրոցի: Տարածուած երեւոյթ է, որ կի-

ղիցիկներն ու վանական աւերակներու ուխտի մեկնողներ՝ նուէրները կը յանձնէին գործող եկեղեցիին:

Անտիոքի շրջանէն դուրս՝ մեծագոյնը «Աւետեաց երկիր» կատարուած ուխտագնացութիւնն էր: Բայց շատեր չէին կրնար կատարել ատիկա, ուստի ուխտը կը կապէին գործող եկեղեցիներէն մէկուն: Այսպէս՝ Հաճի Հապիպլիի Ս. Աստուածածին եկեղեցին (վերանորոգուած 1781ին), «*ուխտատեղի էր, ուր Երուսաղէմ*[18] *ուխտի երթալու կարելիութիւն չունեցող հաւատացեալները կը հանդիպէին, որովհետեւ, ըստ աւանդութեան, անյիշատակ ժամանակներէ ի վեր փոխանցուած է, որ եկեղեցիին մէջ գտնուող արծաթեայ անօթին մէջ զետեղուած փայտախաչի բեկորը մասունք մըն է Յիսուսի Խաչափայտէն*»[19]:

ՍՐԲԱՎԱՅՐԵՐՈՒ ՈԳԵՂԷՆ ԷԱԿՆԵՐՆ ՈՒ ՊԱՀՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Յատկապէս կիղիցիկները հանդէս կու գան շրջապատի եռամիասնութեան մը մէջ. առաջինը հնավայր մըն է՝ կիղիցիկին շուրջ գտնուող արտերուն մէջ հնութեան հետքեր, կարասային թաղումներ, ոսկորներ, կղմինտրէ կտորներ, երկրորդը՝ հնամենի աղբիւրը, որ առհասարակ Գապ կը կոչուի, երրորդը՝ նոյնինքն ուխտավայրը: Ահաւասիկ այս եռամիասնութեան մէջ կը գտնուի «գանձը»: Ի՞նչ է գանձը՝ իրողապէս ոչ ոք գիտէ, ջու՞րը, եկեղեցւոյ սրբութի՞նը, թէ՞ իսկական հարստութիւն՝ գանձ:

Հակառակ անոր որ ըստ ժողովրդային հաւատալիքներու՝ բոլոր սրբավայրերն ալ ունին իրենց պահապան սուրբերը՝ Ս. Աստուածածինը, Ս. Գէորգը, Ս. Սարգիսը, Ս. Աննան, Ս. Ստեփանոսը, Ս. Մարուքէն եւն., այդուհանդերձ, շատ սրբավայրերու մասին պատմուող զրոյցներուն մէջ ուրիշ էակներու եւս կը հանդիպինք: Ասոնք պահապան էոյթներ են՝ հեքիաթի եւ իրականութեան խառնուրդ. ասոնք պահապաններն են սբավայրին, ջուրին ու գանձին եւ կը յայտնուին միայն այս սրբավայրերուն հետ կապուած զրոյցներուն մէջ:

Պահապանը.-

ա) Մարդակերպ էակ մըն է, սրբավայրին սուրբը. ըստ զրոյցներու՝ անիկա սրբավայրի կանգուն եղած ատենի վերջին եկեղեցականն է, կը կոչուի Կիղիցիկ Պապուկ. ան մարդոց կը ներկայանայ երկար մօրուքով, ձեռնափայտով ու լրիւ ճերմակ պարեգօտով: Կիղիցիկ Պապուկի ներկայութիւնը կը կապեն գրեթէ բոլոր կիղիցիկներուն հետ: Արամոյի մէջ այս ոգին նոյն կերպարանքով երեւցած է ոմանց ու կը կոչուի Շէխ:

բ) Կանացի կերպարանքով էակ մըն է, որ ունի կնոջ մը բոլոր յատկանիշերը, կը լոգնայ, կը սանտրուի, կ'երեւի այր մարդոց ու կը չքուի: Կը կոչուի

[18] Երուսաղէմ ուխտի գացածներուն՝ *հաճի* (ուխտաւոր) կ'ըսէին: Աւելի հինները գործածած են *մուղդըսի* (արաբերէն՝ երուսաղէմցի) բառը:

[19] Զօրա Իսկէնտէրեան, «Հաճի Հապիպլի», *Յուշամատեան Մուսա Լեռան,* էջ 75:

Սիվտիկի, ու կապուած է Ներքին գիւղի համանուն ուխտավայրին հետ: Եագուպիէի Ս. Աննա ուխտավայրին հետ կապուած զրոյցներուն մէջ Ս. Աննան կ'երեւի լրիւ ճերմակ զգեստով ու թագով, անոր կ'ընկերանան երեք եղբայրները, որոնք կը պաշտպանեն գիւղն ու սրբավայրը: Կիղիցիկ Պապուկին եւ Սիվտիկիին պատիժները զգուշացումներ են կամ միջոցներ՝ սրբավայրէն առնուած որեւէ բան իր տեղը վերադարձնելու կապակցութեամբ:

Այս պահապան-ոգիները սրբավայրի պահապաններն են ու չեն արտօներ, որ սրբավայրի պուրակէն մարդիկ ծառ հատեն, հողամաս գողնան, քարերը տեղափոխեն, դռնակը տանին, հաւատացեալներու հոն ձգած մանրադրամները գողնան: Զրոյցներուն մէջ գողցուած դուռը կռնակէն վար չ'իջներ, խաչագողը կուզիկ կը դառնայ, տեսողութիւնը կը կորսնցնէ, ծանրօրէն կը հիւանդանայ՝ մինչեւ գողօնին տեղը վերադարձնելը: Զրոյցներուն մէջ ասոնք անուն-մականունով կը յիշուին: Պատիժը սահմանուած է ոչ միայն հայերուն, այլ բոլորին՝ դաւանափոխ ու կրօնափոխ հայերուն, արաբին, թուրքմէնին, ալաուիին[20], քուրտին, որոնք նոյնպիսի բարեպաշտութեամբ կը մօտենան այս վայրերուն ու ձեռք չեն երկարեր անոնց ու կը հաւատան, թէ այսինչ կիղիցիկը հոգեկան հիւանդութիւններ կը բուժէ, այնինչը մանչ զաւակ կը պարգեւէ, այնինչը կորսուած հարազատի մը տունդարձին կ'օգնէ եւն.[21]:

գ) Կիղիցիկ Պապուկի առնչութեամբ զրոյցներուն մէջ կայ նաեւ *արվանտ* անունով յիշուող վիշապը, որ կը պատկերացուի սովորաբար օձի կամ այլ կենդանի արարածի մը (ծովաշուն, կէտ, ոչխարակերպ էակ, լուսեղէն կերպարանք, նոյնիսկ՝ ծովային թարթառ) կերպարանքով: Տարածքի ժայռերուն վրայ գոյացած ոլորանները կը համարուին օձին հետքը, որ դէպի «գանձ»ը կը տանի: Արվանտը Կիղիցիկ պապուկին հետ կ'երեւի հաշտ վիճակով, անոր պատճառած կամ պատճառելի պատիժը աւելի ահաւոր է գանձագողներուն նկատմամբ: Արվանտը կամ վիշապը ըստ էութեան չար է, իբրթէ մանուկներ կուլ կու տայ, բայց դեր ունի սրբավայրերու պաշտպանութեան մէջ: 1 Յուլիս 1974ին Գարատուրանի Վերի թաղի կիղիցիկին մօտ

---

[20] Ալաուիները հաւաքական ուխտագնացութիւններ ալ կ'ընեն այսպիսի սրբավայրերուն: Արամոյի Ս. Աստուածածնայ Վերափոխման ուխտագնացութեան անոնց մասնակցութեան մասին գրուած է. «*Սուրբ Աստուածածնի փօնին նոյնիսկ շրջակայ Նուսէյրի կոչուած արեւապաշտ ազգերէն եկողներ կ'ըլլան ընծայաբերութեամբ*» (Այծեամն, «Նմուշ մը Արամօ գիւղին հայ լեզուէն», *Հանդէս ամսօրեայ*, 1:1907, էջ 27: Նուսէյրիները նոյն ալաուիներն են, շիա դաւանանքին մէջ անկախ յարանուանութիւն մը, որ իր անունը կ'առնէ Ալի Պըն Ապի Թալէպ խալիֆայէն): Ս. Աստուածածին եկեղեցւոյ ձախակողմեան խորանին մէջ այժմ դրուած է *փարիհ* (խորհրդանշական գերեզման), ծածկած կանաչ լաթերով, ու «Եա խըտըր» կանչելով եւ ընծաներով անոր ուխտի կու գան:

[21] Այսպիսի զրոյցներու հաւաքածոյ մըն է Ներսէս քհն. Թաթարեանի *Ս. Աննա մատուռը եւ անոր հրաշքները* գիրքը (Հալէպ, 1963):

ջրհորին մէջ 5 անձանց մահուան աղէտը տեղացիք կը բացատրեն իբր «Կիղիցիկ պապուկն ու արվանտը պատժեցին թաղեցիները»: Ոմանք կը համարձակէին ըսել *«Թի գիւղիս արվանտը պըլղից զիրինք»* (Կարծես արվանտը կլանեց զիրենք), թէեւ եղածը պարզապէս թունաւորում նկատողներուն կողմէ կշտամբանքի կ'արժանանային:

Չափազանց հետաքրքրական է չորրորդը, որ մարդոց կը ներկայանայ լուսեղէն կերպարանքով կամ ամբողջապէս ճերմակ հագած երկու համանման մարդոց տեսքով: Զրոյցներուն մէջ ասոնք կը ներկայանան առանձին մարդոց քուն, թէ արթուն վիճակի մէջ ու կը յայտնեն գանձին տեղը. պայմանով որ մարդը այդ մասին ոչ ոքի ըսէ, երթայ առանց ետեւ նայելու, գանձին տիրանալու պարագային՝ գաղտնիքը ոչ ոքի յայտնէ[22]:

Շատ զրոյցներու մէջ վերոյիշեալ ոգեղէն էակները չկան, չկան նաեւ սուրբերը, բայց պատիժը բնականաբար կը հասնի, սրբավայրին պաշտպանութիւնը կը կայանայ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուխտագնացութիւնները կ'ըլլային անհատական, ընտանեկան կամ թաղային, բայց մեծագոյնները հաւաքական ուխտագնացութիւններն էին:

Հաւաքական ուխտագնացութիւնները երկու խումբի կը բաժնուին.-

- Գիւղի մը կամ մէկ-երկու գիւղի բնակիչներուն համար. ասոնք տեղական ուխտագնացութիւններ էին:

- Ամբողջ շրջանի հայութեան համար: Ասոնք համաժողովրդական ուխտագնացութիւններ էին:

Անկախ աշխարհագրական հեռաւորութենէն, իրարմէ 6-12 ժամ հետիոտն ճամբորդութեամբ, այս շրջանակները իրարու հետ կը պահէին հաղորդակցութեան զանազան կապեր՝ ազգակցական-ընտանեկան, առեւտրական, յարանուանական ու կուսակցական: Օրինակ, Քեսապի մէջ միշտ ալ եղած են *Սիվփիցա, Արամալցա, Արֆալցա, Եագուպիացա* կոչուող հարսեր: Մուսալեռցիներու եւ քեսապցիներու միջեւ եղած է ժառանգական կնքահայրութիւն, մինչեւ այսօր ալ անոնք զիրար *շըպէն* (արաբերէն՝ կնքահայր, քաւոր) կը կոչեն: Այս շրջանակներու մէջ, մասնաւորաբար հարաւէն հիւսիս ընտանիքներու տեղաշարժ եղած է ԺԹ. դարուն եւ անկէ ետք, Քեսապի մէջ հաստատուած են Արամոյէն, Ղնեմիէէն ու Քիւրտ Տաղէն եկած ընտանիքներ, ինչպէս՝ Սարամազեան, Արամեան կամ Արամալի, Քորթեան եւ Մահտեսեան ընտանիքներ, Սուետիոյ եւ Պէյլանի մէջ կան Քեսապլեաններ եւն.: Եղած են արհեստակցական ու առեւտուրի կապեր, ապրանքափոխանակում եւն.: ԺԹ. դարուն բոլոր գիւղերու խոզակի բերքը կը տեղափոխուէր

[22] Յակոբ, Չոլաքեան, «Վիշապը (արվանտ) Քեսապի հայոց հաւատալիքներուն մէջ», *Վիշապը հեքիաթի եւ իրականութեան սահմանին*, հրատ.՝ ՀՀԳԱԱ ՀԱԻ, Երեւան, 2019, էջ 215-24:

Լաւշիէ, Խտըրպէկ եւ Անտիոք: ԺԹ. դարու կէսէրէն կ'աւելնան հոգեւոր-եկեղեցական եւ կրթական կապերը: Այս շրջանակներէն բազմաթիւ քահանաներ, պատուելիներ, վարժապետեր եւ վարժուհիներ կը գործէին հոս ու հոն, օրինակ 1856ին Եագուպիէ կանչուած Տէր Ստեփանը քեսապցի էր, Շահպազեան ընտանիքէն, անկէ կը սերին Եագուպիէի Գասսիս-Երէցեան տոհմի ընտանիքները, Արամոյի, Ղնեմիէի, Արֆալիի ուսուցիչները եղած են քեսապցիներ, մուսալեռցի էին Քեսապի մէջ երկար տարիներու ծառայութիւն ունեցած վերապատուելիներ Տիգրան Անդրէասեանն ու Կարապետ Թիլքեանը:

Ազգային գաղափարական զարթօնքի օրերուն գործակցութեան եւ փոխադարձ շփումներու դերակատար եղաւ Հնչակեան Կուսակցութիւնը, որ 1892ին Մուսա Լեռան Խտըրպէկ գիւղէն սկիզբ առնելով հասաւ Քեսապ եւ հարաւի միւս հայախօս եւ արաբախօս գիւղերը: Ասոր նպաստը եղաւ նաեւ այն, որ ազգային ապրումներով վերստին եղբայրացաւ յարանուանապէս բաժնուած ժողովուրդը: Դաշնակցութիւնը շրջանին մէջ երեւցաւ 1908էն ետք. անոր հետ կը կապուի նաեւ նորադաւաններուն, յատկապէս աւետարանական, մայր եկեղեցւոյ վերադառնալու միտում մըն ալ:

Այս բոլորէն վեր, փոխադարձ կապի եւ շփումներու տեսակէտէն մասնաւոր նշանակութիւն ունեցած են համաժողովրդական ուխտագնացութիւններն եւ ուխտավայրերու ժողովրդական տօնակատարութիւնները: Ասոնք շատ կարեւոր իրադարձութիւններ էին Անտիոքի շրջանի՝ այլազգի գիւղերով ու շրջաններով բաժնուած հայերը տարին քանի մը առիթներով համախմբելու ուխտավայրերու տարածքին մէջ:

Իւրաքանչիւր շրջանակի մէջ կային համաժողովրդական ուխտագնացութեան առիթներ եւ վայրեր: Բուն առիթներն էին Հայ Եկեղեցւոյ երեք տաղաւար տօները՝ Վարդավառը, այսինքն՝ Քրիստոսի Պայծառակերպութեան տօնը, Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը եւ Ս. Խաչվերացը: Աւանդաբար՝ Վարդավառի համաժողովրդական ուխտագնացութեան գլխաւոր վայրը Քեսապի Պարլում ուխտավայրն էր, Ս. Աստուածածնայ ուխտագնացութեան գլխաւոր վայրը՝ Արամոյի Ս. Աստուածածին վանքը, իսկ Ս. Խաչի ուխտագնացութեան գլխաւոր վայրը՝ Մուսա լեռ, Ս. Թովմաս առաքեալի վանքը: Տաղաւար տօներէն դուրս կար նաեւ Ս. Գէորգի (ապա՝ Ս. Աննայի) համաժողովրդական ուխտագնացութիւնը Ճսըր Շուղուրի մօտ Եագուպիէ գիւղի «Արեւմտեան եկեղեցի»: Ասոնց կը մասնակցէին Անտիոքի գրեթէ բոլոր վայրերէն եկող ուխտաւորներ: Համաժողովրդական ուխտագնացութիւնները կը կազմակերպուէին ու կը հովանաւորուէին թեմական առաջնորդներու կամ կաթողիկոսական փոխանորդներու կողմէ[23]:

[23] Յակոբ Չոլաքեան, «Կասիոս լեռը Անտիոքի շրջանի հայոց աւանդազրոյցներուն եւ հաւատալիքներուն մէջ», *Աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում 1,* ՀԱԻ հրատ., Երեւան, 2018, էջ 313-27. նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, «Արամօ գիւղի մօ-

Այս տօներուն առթիւ կային նաեւ այլ ուխտավայրեր, ուր նոյն օրերուն կ'ըլլային տեղական ուխտագնացութիւններ՝ տուեալ գիւղի կամ քանի մը գիւղերու բնակիչներուն կողմէ: Տեղական ուխտագնացութիւնները կրնային ըլլալ նաեւ տարբեր առիթներու, ամիս եւ ամսաթիւ չունէին եւ կը կազմակերպուէին ինքնաբուխ կերպով: Օրինակ՝ երաշտ տարիներուն անձրեւաբեր Ս. Եղիայի ուխտագնացութիւնը Ս. Եղիա, Մուսա Լեռ, քեսապցիներու ուխտագնացութիւնը Ս. Սարգիս, Մուսա Լեռ, հունձքի աշխատանքներէն ետք եւն.:

Ըսինք՝ համաժողովրդական ուխտագնացութիւններուն կը մասնակցէին ոչ միայն տուեալ գիւղի ու շրջանի բնակիչները, այլեւ ուխտաւորներու մեծ կարաւաններ՝ Անտիոքի շրջանի միւս բնակավայրերէն: Հոն այս տարբեր շրջանակներու մարդիկ միացած են ոչ միայն ուխտով, այլեւ՝ հաստատած ծանօթութիւններ, խնամիութիւն, արհեստակցական ու առեւտրական կապեր, ճանչցած իրարու բարքերն ու սովորութիւնները, բարբառներու առանձին յատկանիշերը, իրարմէ սորված իրենց պարերը, երգերը, խաղերը: Հաւաքական ուխտագնացութիւնները հոգեւոր եւ նիւթական մշակոյթի մեծ իրադարձութիւններ էին, որոնցմով պայմանաւորուած էին ոչ միայն անոնց գոյութիւնն ու զարգացումը, այլեւ համանման արժէքներու բացայայտումն ու պահպանումը:

Հայ եկեղեցւոյ տօներուն առթիւ կատարուող համաժողովրդական ուխտագնացութիւնները կազմակերպելու գործին մէջ հիմնական դերակատարութիւն ունէին թեմակալ առաջնորդները, այս պարագային՝ Լաթաքիոյ հոգետան տեսուչ եւ Ճսըր Շուղուրի, Լաթաքիոյ եւ Անտիոքի կաթողիկոսական փոխանորդները, իսկ 1927էն ետք՝ Բերիոյ թեմի առաջնորդները: Անոնց պարտականութիւնն էր եկեղեցական բոլոր բեմերէն յայտարարութիւն կատարել համաժողովրդական ուխտագնացութեան մասին, կապ հաստատել ուխտավայրի շրջանին մէջ գործող եկեղեցւոյ կամ մօտիկ քանի մը եկեղեցիներու *մութաուլլի*ին կամ թաղական խորհրդոց՝ պարտ ու պատշաճ կարգադրութիւնները տեսնելու եւ որոշեալ օրը առաջնորդը դիմաւորելու համար: Անպայման տեղեակ կը պահուէին վարչական տարածքի կառավարիչը *(միւտիր)* եւ ոստիկանութիւնը: Օսմանեան իշխանութեան ատեն կային ուխտաւորներու ճամբորդութիւնները եւ ուխտավայրի ապահովութիւնը կարգաւորող յատուկ միաւորներ:

տիկ հայոց վանքը Ս. Աստուածածին եւ Ս. Գէորգ եկեղեցիներով», *Բանբեր Երեւանի համալսարանի,* 2(34):2021, էջ 30-44. նաեւ՝ Ներսէս քհն. Թաթարեան, *Ս. Աննա մատուռը եւ անոր հրաշքները,* Հալէպ, 1963. նաեւ՝ Յակոբ Չոլաքեան, *Անտիոքի մերձակայ Ռուճի հովիտի հայերը*, Անթիլիաս, 2006, էջ 191-95. նաեւ՝ Խաչեր Մատուռեան, «Եողուն-Օլուք», *Յուշամատեան Մուսա Լերան,* էջ 93. նաեւ՝ Ալպէռ Ս. Թէմիրեան, *Քէսապ,* Տպ. Տօնիկեան, Պէյրութ, 1956, էջ 43-44:

Տաղաւար տօներու ուխտագնացութիւնները կ'ըլլային գլխաւորաբար Շաբաթ եւ Կիրակի օրերուն: Գրեթէ բոլոր ուխտագնացութիւնները նոյն ձեւով կը կատարուէին: Ուխտաւորները նախատօնակի երեկոն տեղ հասած պէտք է ըլլային: Հեռաւոր տեղերէ եկողները այդ օր ճամբայ ելած ու վանքի կից գտնուող բացատին մէջ *չէրդիկ*ները (հովուական վրան) լարած կ'ըլլային, բեռնատար կենդանիներուն տեղ գտած, ջուրի խնդիրը լուծած՝ ուսով կամ բեռնատար կենդանիով տիկերով ջուր ամբարած: Բոլոր ուխտավայրերն ալ աղբիւր ունէին: Ուխտաւորներէն ոմանք կ'իջեւանէին մօտիկ գիւղին մէջ բարեկամ-ազգականի մը տունը: Ուխտաւորները իրենց ընծաները՝ մատաղցու խոյ եւ հիրիսացու ցորեն, կը յանձնէին պատասխանատու մարմնին, ապա ներկայ կ'ըլլային երեկոյեան ժամերգութեան: Քահանայ հայր մը կ'օրհնէր խոյերը, որոնց ափով աղ կը կերցնէին: Տեղւոյն եկեղեցւոյ իշխանութեան հսկողութեամբ երիտասարդները կրակի վրայ կը դնէին մեծ պղինձները ու մինչեւ առտու կը հսկէին հերիսային:

Գրեթէ բոլոր համաժողովրդական ուխտագնացութիւններու միակ ուխտապուրը հերիսան է (Քեսապ՝ *հիրիսէ՛պէօր,* Սուետիա՝ *քիշկէկ*): Հերիսայի ցորենի լուացումը կը կատարէին կիները, աղբիւրին առջեւ, իսկ երիտասարդները կը կատարէին ցորենծեծը: Շատ ուխտավայրեր ունէին ցորենծեծի սանդեր եւ կամ պաթոս: Օրէնք էր, որ զենումը կատարող, ցորենը ծեծող ու հերիսայի եփին հսկող մարդոց յանձնուէր մատաղի թոքը, երիկամները, սիրտը եւ այլ մասեր, որոնք հերիսայի կաթսաներուն մէջ չէին դրուեր: Այս մարդիկ բացօթեայ խոհանոցին շուրջ մինչեւ առտու կը կազմակերպէին խնճոյքներ ու խաղեր, կը հսկէին հերիսայի եփին: Անդին՝ վրաններու շրջապատին մէջ կը բացուէին հաւաքական սեղաններ ու ամէն մարդ, իր խաշարը դնելով սեղանին վրայ, կերուխում կ'ընէին, կ'երգէին, իրենց բարբառներով պարերգեր կ'ընէին. կը պարէին զանազան նուագարաններ գործածելով՝ գաւալ, շուպապիկ, արղուր, ճումպուշ աւելի ուշ ժամանակներուն՝ նաեւ ջուհակ եւ ձեռնադաշնակ: Կը կատարուէին հայերէն, թրքերէն, արաբերէն երգեր: Հայերէն ազգային-յեղափոխական, աշուղական եւ ժողովրդական երգերը սկսան տարածուիլ ԺԹ. դարու վերջերէն:

Ամենէն աշխուժ միջավայրը բուն հրապարակը կ'ըլլար, ուր կեդրոնի խարոյկին շուրջ կը փչէր զուռնան, կը թնդար թմբուկը, ու ծայր կ'առնէին շուրջպարերը, զուգապարերը, մենապարերը ու զանազան խաղեր. այստեղ պարն ու նուագը, խաղն ու ծափը մինչեւ առտու կը տեւէր: Խաղահրապարակը մեծ բազմութեամբ շրջապատուած կ'ըլլար:

Բոլոր համաժողովրդական ուխտագնացութիւններուն կը փութային հասնիլ նաեւ շրջուն վաճառորդները՝ ուխտաւոր բազմութեան վաճառելու համար քաղցրաւենիք, օշարակներ, այդ միջավայրի տնտեսական յատուկ իրեր ու սարքեր՝ սանտրեր, փայտեայ շերեփներ, նուագարաններ եւն.:

Կիրակի առաւօտ Ս. Պատարագն էր, հերիսայի օրհնութիւնը եւ բաշխումը, որմէ ետք ժողովրդային պարերն ու խաղերը կը շարունակուէին հրա-

պարակին մէջ: Ուխտաւորները կը կատարէին իրենց ուխտերը՝ մկրտութիւն, հերահատում եւն.:

Անտիոքի շրջանի հայոց համաժողովրդական բոլոր ուխտագնացութիւններուն կը մասնակցէին նաեւ յոյներ, ալաուիներ, թիւրքմէններ, քիւրտեր ու արաբներ եւ տեղ կը գրաւէին խաղահրապարակին մէջ իրենց երգերով ու պարերով: Շուրջպարի իւրաքանչիւր նոր դարձին թմբկահարը *«սապաշ»* կը ստանար շարք մտած *պարպաշի*էն ու սապաշ կանչելով կը գովէր անով ներկայացուած ուխտաւորները, ուխտավայրը, գիւղը, տոհմը, հիւրերը եւն.: Այս համաժողովրդական ուխտագնացութիւններուն միջցեղային բախումներ երբեք չեն արձանագրուած[24]:

1920ականներէն ետք Անտիոքի շրջանի հայոց այս մեծ ուխտագնացութիւններուն հետզհետէ մեծ թիւերով սկսան ներկայ ըլլալ հայ նոր գաղթականութեան մաս կազմող ընտանիքներ եւ միութենական խումբեր, որոնց համար այս միջավայրը թէ՛ ամառանոցային եւ թէ՛ ազգային իմաստով կարեւորութիւն կը ներկայացնէր: Ասոնք եւս իրենց տոհմիկ պարերով ու երգերով նոր երանգ մը աւելցուցին այս ուխտագնացութիւններուն վրայ:

Հեռաւոր տեղերէ եկողներուն համար ասիկա քառօրեայ ուխտագնացութիւն էր:

ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ, ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1939ի սահմանագծումով եւ հայերու գաղթով Պէյլանի, Մուսա Լեռան եւ Օրտուի հարաւի հայ բոլոր սրբատեղիները լքուեցան: Հոն շարունակեցին գործել միայն Վագըֆ գիւղի Ս. Աստուածածինը եւ Աղեքսանդրէթի Ս. Քառասնից մանկանց եկեղեցին: Շրջան մը գործեց նաեւ Գրըգխանի Ս. Աստուածածին եկեղեցին: Քեսապի Պարլումի ուխտավայրը նոյնպէս Թուրքիոյ անցաւ: Այնտեղ կատարուող Վարդավառի ուխտագնացութեան փոխարէն Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առթիւ սուրիահայութեան համար համաժողովրդական ուխտագնացութեան վայր դարձաւ Ներքի գիւղի Ս. Աստուածածինը: Քեսապի եւ շրջակայ գիւղերու գործող եկեղեցիներէն բացի՝ նախկին ուխտավայրերէն ոմանք կը շարունակեն ունենալ իրենց այցելուները: Մինչեւ 2012ի ծայրայեղ իսլամականներու ներժուժումը՝ համաժողովրդական ուխտագնացութիւն կը կազմակերպուէր նաեւ Եագուպիէի մէջ Ս. Աննա եկեղեցւոյ մէջ: Ներկայիս, Լաթաքիոյ եկեղեցին կը գործէ: Արամոյի Ս. Ստեփանոս եւ Ղնեմիէի Ս. Գէորգ եկեղեցիները կը շարունակեն մնալ հայրենակիցներու եւ հաւատացեալներու հոգածութեան առարկայ:

---

[24] Ուխտագնացութիւններու մասին շարք մը յուշեր ունի Թադէոս Պապիկեան՝ «Խաչվերացի օրը մեր գիւղերուն մէջ», *Քուլիս,* 1979:1987, էջ 20. նաեւ՝ «Հուտ հայաբնակ գիւղը՝ Վագըֆ», *Քուլիս,* 1022:1990, էջ 22. նաեւ՝ «Տօնակատարութիւնները մեր կորսուած աշխարհին մէջ», *Քուլիս,* 1051:1992, էջ 48. նաեւ՝ «Տօներ եւ տօնակատարութիւններ մեր գիւղերուն մէջ», *Քուլիս,* 1037:1989, էջ 16. նաեւ՝ «Յուշեր գաւառէն – Վէնքը (Վանքը)», *Քուլիս,* 1009:1989, էջ 29:

NATIVE ARMENIAN PILGRIM SITES IN NORTHWESTERN SYRIA

(Summary)

HAGOP CHOLAKIAN (hagopcholakian@hotmail.com)

The paper focuses on native Armenian pilgrimage sites in north-western Syria, which include Beylan, Musa Ler, Kesab, the Roudje Valley, and the Deriya Mountains. These sites are categorized in three groups: a) small sanctuaries, like ruined chapels, caves, cemeteries, springs, trees, b) ruins of early medieval temple precincts, c) currently functioning churches.

The author notes that according to popular beief, all these sanctuaries have their guarding saints, Surp Mariam Asdvadzadzin, Surp Kevork, Surp Sarkis, Surp Anna, Surp Sdepannos, Surp Maruke, etc. He argues, however, that people believe that within people believe that within each of these, the old sanctuary, the ruined church and the old spring, there are two guardians who guard the "treasure". One of them is the Gighitsig Babug, who has the physical features of a human being, and the other the dragon Arvand, who has different forms and lives peacefully with Gighitsig Babug.

The author notes as well that there used to be three sorts of pilgrimages: individual, local and on a district level, which were organized under the patronage of the prelate of the Armenian Orthodox Church. The ceremony included the slaughtering of the sacrifice, the mass, the preparation of *herisa* (the dedicated food) and the popular celebration. Local pilgrimages were organized by the local priest, and the ceremony followed a similar ritual. Individual or family pilgrimages were conducted in any sanctuary.

ԴՐԱՊԱՇՏ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՄՍԵՐԵԱՆԻ *ՄԷՏԷՕՐԱ* ՀԱՆԴԷՍԻՆ ՄԷՋ

ՃԱՆ ԷՐԶՈՒՐՈՒՄԼՈՒՕՂԼՈՒ (canerzurumluoglu@hotmail.com)

ԴՐԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ ՕՍՄԱՆՑԻ ԹՈՒՐՔ ԵՒ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ՄԷՋ

Օկիւսթ Քոնթ (1798-1857), ֆրանսական յեղափոխութեան յաջորդած ճգնաժամային տարիներուն կը զարգացնէ փիլիսոփայական դրոյթ մը, զոր կը կոչէ «դրական փիլիսոփայութիւն»: Այս դրոյթը ընկերային խնդիրներու լուծումը կը գտնէ գիտական մտքի պաշտպանութեան մէջ՝ ի դէմս աստուածաբանութեան ու բնազանցութեան: Գիտական ուսումնասիրութեան առարկայ կը դառնան նաեւ ընկերային երեւոյթները: Ընկերաբանութիւնը կը հաստատուի որպէս մարդկութեան պատմութիւնը ուսումնասիրող դրական գիտութիւն: Քոնթի նպատակն էր բոլոր երեւոյթները - նեռառեալ ընկերայինը - ենթարկել որոշ օրէնքներու[1]:

Դրապաշտութիւնը օսմանեան թուրք մտաւորականութեան մօտ կը համարուէր փլուզուող օսմանեան պետութիւնը փրկելու միջոց: Ուստի, քաղաքական պատճառները կարեւոր դեր խաղացին օսմանեան քաղաքական եւ մտաւորական շրջանակներու մէջ դրապաշտութեան տարածման:

Դրապաշտները կը փորձեն իրենց գաղափարները տարածել երկրի ամբողջ տարածքին վրայ: Քոնթ նամակներ կ'ուղարկէ Մուստաֆա Ռեշիտ փաշային[2]՝ դրապաշտութիւնը իբրեւ «մարդկութեան կրօնք»[3] ներկայացնելով: Բայց իր նախաձեռնութիւնը դրական արձագանգ չի գտներ: Դրապաշտներ, որոնք ջանքեր ի գործ կը դնէին իսլամ ժողովուրդներու մէջ դրապաշտութեան տարածման համար, նոյնիսկ կ'այցելեն Միտհաթ փաշային[4] 1877ին[5]:

---

[1] Դրապաշտութեան մասին հակիրճ անդրադարձած ենք մեր նախորդ յօդուածին մէջ՝ «Գալուստ Կոստանդեանի դրապաշտ աշխարհայեացքը եւ դերը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 42:2022, էջ 501-2:

[2] Մուստաֆա Ռեշիտ Փաշա (1800-1858).- Թանզիմաթեան շրջանի օսմանեան քաղաքական գործիչ:

[3] 4 Փետրուար 1853 թուակիր նամակին մէջ Քոնթ կը նշէ, որ իսլամ հաւատքը աւելի յարմար է դրապաշտութեան, քանի որ ան աւելի պարզ է, քան կաթոլիկութիւնը, եւ կ'արտայայտէ իր համոզումը, որ դրական կրօնքը աջակցութիւն կը գտնէ մահմետականներու մօտ (Auguste Comte, *Système de Politique Positive, ou Traité de Sociologie, Instituant la Religion de l'Humanité*, Paris, 1853, էջ 47-9):

[4] Միտհաթ Փաշա (1822-84).- Օսմանեան քաղաքական գործիչ: Կարեւոր դեր խաղացած է 1876ի օսմանեան սահմանադրութեան պատրաստման մէջ:

Պեշիր Ֆուատ (1852-87) այն կարեւոր օսմանեան թուրք մտաւորականներէն է, որ լուրջ ներդրում ունեցած է յետթանզիմաթեան շրջանի օսմանեան փիլիսոփայական մտքին: Դրապաշտութեան եւ գիտական աշխարհայեացքի անզիջող ջատագով Ֆուատ՝ յատկապէս իր յօդուածներով քննադատած է բնազանցութիւնը, պաշտպանելով այն տեսակէտը, թէ հասարակութիւնը կրնայ լուսաւորուիլ միայն գիտութեամբ[6]:

1870ականներէն սկսեալ դրական փիլիսոփայութիւնը արդէն արձագանգ կը գտնէր արեւմտահայ իրականութեան մէջ: Տէմիրճիպաշեան երբ Ֆրանսա կը գտնուէր (1874-76) բարձրագոյն ուսում ստանալու համար, ծանօթացած էր դրական փիլիսոփայութեան: 1879ին իր փիլիսոփայական բառարանին մէջ ակնարկելով նշանաւոր ֆրանսացի դրապաշտ փիլիսոփային պիտի գրէր, որ «*միայն Աստուած Լիդռէէն աւելի բան գիտէ*»[7]: Իսկ 1883-88ի միջեւ պիտի հրատարակէր *Դրական եւ իմաստասիրական շարժումը*՝ դրական փիլիսոփայութիւնը հայերու մէջ տարածելու համար: 1891ին ան կը հրատարակէ *Տարերք պատմութեան իմաստասիրութեան* գիրքը, ուր կը շարադրէ ընկերային բարեշրջութեան օրէնքները հարցում-պատասխանի ձեւով: Զմիւռնիահայ դրապաշտ փիլիսոփայ Գալուստ Կոստանդեանի կողմէ 1878ին կը հրատարակուի *Մեթոդի վրայ* գիրքը, որ դրապաշտութեան անզիջող պաշտպանութիւն մըն էր: Գիրքը կը հարուածէր ոչ միայն կրօնականները եւ եկեղեցին, այլեւ՝ նոյնինքն կրօնքը եւ քրիստոնէութեան հասցէին սուր քննադատութիւններ կ'ուղղէր: Կոստանդեանի այս խանդավառ եւ տենդոտ ոճը, պահպանողական շրջանակներու մօտ մեծ վրդովմունք կը յառաջացնէ: Լիթրէն[8] իր նշանաւոր *La Philosophie Positive* թերթին մէջ, ուր նախապէս հրատարակուած էր Կոստանդեանի *Propagande Scientific en Orient* ծրագիրը, զօրակցութիւն կը յայտնէ իրեն[9]:

---

[5] *Adresse des positivistes à Midhat-Pacha, ancien Grand-Vizir de l'Empire ottoman*, Paris, P. Ritti, 14 Gutemberg 89:

[6] Ֆուատի եւ օսմանեան թուրք դրապաշտ մտքի մասին ամփոփ տեղեկութիւններ տրուած են մեր վերոյիշեալ յօդուածին մէջ:

[7] Ա. Ազատախոհեան (Տէմիրճիպաշեան), *Փիլիսոփայական բառարան ժողովրդական* (նախափորձ), Արամեան տպարան, Կ.Պոլիս, 1879, էջ 21:

[8] Emile Littré (1801-81).- Դրապաշտ փիլիսոփայ, բժիշկ, բառարանագէտ եւ քաղաքական գործիչ: Որպէս հանրապետական մասնակցած է Յունիս 1830ի յեղափոխական շարժումին: Եղած է Քոնթի հետեւորդ բայց հեռացած է իրմէ երբ ան յարած է «Մարդկութեան կրօնքին»: Grégoire Wyrouboffի հետ 1867ին սկսած է հրատարակել *La Philosophie Positive* երկամսեան: 1871ին ընդունուած է Ֆրանսական ակադեմիայի անդամ: Ընտրուած է ֆրանսական խորհրդարանին: Հսկայածաւալ աշխատանքի արդիւնք՝ իր *Dictionnaire de la Langue Francaise* բառարանը այսօր ալ մեծ արժէք կը ներկայացնէ: Ուրիշ գործերու կողքին թարգմանած եւ խմբագրած է Հիպոկրատի երկերը:

[9] «Propagande Scientifique en Orient», *La Philosophie Positive*, Յուլիս-Դեկտեմբեր, Paris, 1878, էջ 304-6:

Զմիւռնիահայ ուրիշ մտաւորական մը՝ Գրիգոր Մսերեանն ալ Քոնթի եւ Լիթրէի հետեւորդ էր եւ «*Գալուստ Կոստանդեանի հետ առաջին խիզախ քայլը կ'առնէր նա դրապաշտ դպրոց մը հաստատելու հայոց մէջ*»[10]:

1880-81ի միջեւ Մսերեան կը հրատարակէ *Մէտէօրա* հանդէսը: Տէմիրճիպաշեան կ'ողջունէ այս հրատարակումը[11]: Հանդէսին մէջ լոյս կը տեսնէ Փիշարի[12] դրապաշտութիւնը ծանօթացնող *Doctrine du Réel* գիրքի թարգմանութեան մեծամասնութիւնը, Լիթրէէն ուսումնասիրութիւն մը եւ Զոլայի դրական փիլիսոփայութիւնը պաշտպանող մէկ յօդուածը: Այս շրջանին լոյս պիտի տեսնէր նաեւ Տաղաւարեանի[13], թէեւ ոչ-դրապաշտ բայց գիտական բնոյթով թերթը՝ *Գիտական շարժումը* (1885-87)[14]:

Կոստանդեան գիտութեան կատարելագործումը եւ տարածումը կը համարէր «ամենէ սրբազան ու վեհ» պարտաւորութիւն մը[15]: Տէմիրճիպաշեան համակարծիք էր իրեն. ան համոզուած էր, որ դրական գիտութիւնները պիտի նպաստէին ազգային հաստատութիւններու զարգացման. հետեւաբար, ան կը պահանջէր դրական գիտութիւններուն աւելի շատ տեղ յատկացնել ազգային վարժարաններու մէջ: Տէմիրճիպաշեանի համաձայն «*ամէնէն ճշմարիտ իմաստասիրութիւնը այն է, որ գիտութեանց վրայ հիմնուած է*»[16]: Ան կը հաւատար, որ դրական փիլիսոփայութեան տարածմամբ պիտի բարեփոխուէր ընկերային կեանքը: Սակայն, կրօնքի վերաբերեալ երկու դրապաշտ փիլիսոփաներու միջեւ կային տարակարծութիւններ: Տէմիրճիպաշեան եկեղեցին քննադատելով, նոյնիսկ երբեմն հակակրօնական ելոյթներ ունենալով հանդերձ կապերը չէր խզած կրօնքին եւ ազգային եկեղեցւոյ հետ: Իսկ Կոստանդեան թիրախ կը դարձնէր կրօնական եւ աւելի լայն իմաստով բնազանցական ամէն ինչ[17]:

---

[10] Մեսրոպ Նուպարեան, *Հայ գրականութիւն*, 5:1911, էջ 36:

[11] «*Ես անկեղծօրէն կը գովեմ Մէտէօրան իր իմաստասիրական յաւակնութեանց համար, եւ դրական իմաստասիրութեան գաղափարներն ազգին մէջ ծաւալելու բարձրագոյն փառասիրութեան համար*», *Մասիս*, 3023:1881:

[12] Prosper Pichard (1839-?).- Ֆրանսացի գիտնական եւ դրապաշտ մտաւորական:

[13] Նազարէթ Տաղաւարեան (1862-1915).- Հասարակական գործիչ, խմբագիր, բժիշկ:

[14] Տէմիրճիպաշեանի եւ Կոստանդեանի փիլիսոփայական գործունէութեան համար տե՛ս մեր երկու յօդուածները՝ «Եղիա Տէմիրճիպաշեանի դրական փիլիսոփայութեան արժեւորումը օսմանեան փիլիսոփայութեան պատմութեան մէջ (1840ականներէն սկսեալ)», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 40:2020, էջ 655-4 եւ «Գալուստ Կոստանդեանի», էջ 501-21:

[15] *Մեթոտի վրայ, առաջին հատոր,* Տպագրութիւն եղբարց Տէտէեան, Իզմիր, Արեւելեան գիտական մատենաշար, 1878, էջ 158:

[16] «Հիւլէ, տարերք», *Գրական եւ իմաստասիրական շարժում*, 1887, էջ 61:

[17] Յարութիւնեան կ'ընդգծէ դրական փիլիսոփայութեան երեք առանձնայատկութիւնները հայոց մէջ առանց զատորոշելու՝ արեւմտահայ եւ արեւելահայ իրականութիւնը.- ա) բնական գիտութիւններու հետ անխզելի կապի ընդունում, բ) դրա-

ԳՐԻԳՈՐ ՄՍԵՐԵԱՆ

Գրիգոր Մսերեան ծնած է 1846ին Զմիւռնիա: Հայրը՝ Ղազարոս, Մսեր Մագիստրոսի[18] եղբայրն էր, իսկ մայրը՝ Մարիամ, Մարկոս Աղաբէկեանի[19] քոյրը: Համեստ ընտանիքի զաւակ Գրիգոր նախնական ուսումը ստացած է Մամուրեանի եւ Աղաբէկեանի հիմնած (1851) յառաջդիմական սկզբունքներով գործող Աղաբէկեան վարժարանին մէջ, ապա Մեսրոպեան վարժարանին մէջ աշակերտած է նշանաւոր մանկավարժ Անդրէաս Փափազեանին, տարի մըն ալ յաճախած է վիեննական Մխիթարեաններու տեղական վարժարանը, ուր գնահատուած է Այտընեանի[20] կողմէ «իր ուշիմութեանը եւ յառաջդիմութեանը պատճառաւ»[21]: Հուսկ Մսերեան կը ստիպուի գործի ասպարէզ մտնել եւ զուիցերիական վաճառատան մը մէջ կարեւոր պաշտօն մը ստանձնել: Այս ընթացքին, ան կը շարունակէ զարգացնել իր գիտելիքները. ֆրանսերէն եւ ուրիշ լեզուներ կը սորվի[22], կը գնէ ֆրանսերէն գիրքեր եւ կը հետեւի նշանաւոր դրապաշտ Լիթրէին[23]:

1867ին հանդէս կու գայ *Ծաղիկ* ամսաթերթին մէջ «Լորտ Պայրն» խորագրեալ ուսումնասիրութեամբ մը[24]: *Արեւելեան մամուլի* 1871ի համարներու մէջ լոյս կը տեսնէ Մսերեանի «Ճշմարտութեան վրայ գրաւ մը» երկը, որ գրուած է ֆրանսերէնի պատշաճեցումով[25]: 70ականներու սկիզբին կը մասնակցի գրապայքարին՝ զօրակցելով աշխարհաբարեաններուն[26]. կը պայքարի *Մասիս*ին եւ Արմաշի պաշտօնաթերթ *Յոյս*ին դէմ, ուր կը հրա-

---

կան փիլիսոփայութիւնը որպէս հինի դէմ մարտնչող ուսմունք. յառաջդիմութեան կոչ ընող եւ ընկերային զարգացման նպաստող ամէն գափափարի ընդգրկում, գ) դրական փիլիսոփայութեան եւ նիւթապաշտութեան նոյնացումը (Տ. Է. Յարութիւնեան, «Պոզիտիւիզմի մուտքը հայ իրականութիւն եւ պայքարը նրա գնահատման շուրջ», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 3(63):1987, էջ 184-6):

[18] Մսեր Մսերեան (1808-73).- Գրող եւ մշակութային գործիչ:

[19] Մարկոս Աղաբէկեան (1830-1908).- Հրապարակագիր, պատմաբան եւ կրթական մշակ:

[20] Արսէն Այտընեան (1825-1902).- Բանասէր, հոգեւորական եւ լեզուաբան:

[21] Միքայէլ Յակոբեան, *Մէկդէօրա հանդէսը արեւմտահայ լուսաւորական-դեմոկրատական շարժման մէջ*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1977, էջ 36-7: Այտընեանի ակնարկին համար տե՛ս՝ Վ.Գ. Զարդարեան, *Յիշատակարան*, Տպագրութիւն Նշան-Պապիկեան, Պոլիս, 1910, էջ 152: Երիցեան կը նշէ որ փոքրիկ Գրիգորը նախնական ուսումը ստացած է Մեսրոպեան վարժարանին մէջ նախ Աղաբէկեանի, յետոյ Մամուրեանի ժամանակ (Երիցեան, *Արձագանգ*, 103:1893: Զարդարեան միայն Մեսրոպեան վարժարանի անունը կու տայ:

[22] Երիցեան, *Արձագանք*, 103:1893:

[23] Զարդարեան, էջ 153:

[24] *Ծաղիկ*, 139-142, 146:1867:

[25] *Արեւելեան մամուլ*, 1-3, 6-10:1871:

[26] Յակոբեան, էջ 46:

տարակուէին աշխարհաբարը քննադատող յօդուածներ[27]: Մսերեան Սիւնի ծածկանունով «Լեզուի վրայ» յօդուածաշարը կը գրէ *Արեւելեան մամուլ*ին մէջ, ուր կը քննադատէ *Մասիս*ի մէջ լոյս տեսնող Աշըքեանի[28] յօդուածին պաշտպանած տեսակէտերը[29]: Վկայակոչելով Պէյքընը, Լոքը[30] եւ Լայպնիցը[31], ան կը հերքէ լեզուին աստուածային ծագում ունենալու թեզը: Ընդհակառակը՝ լեզուն «մարդկային բնութենէ ծագում առած է»[32], կը բնորոշէ ան: Մսերեանի կարծիքով, լեզուն «գործիք մ'է եւ չէ թէ մասունք», գիտութիւն մըն է որ ընդունակ է յառաջդիմութեան եւ մշակութեան[33]: Կը քննադատէ Աշըքեանի պահպանողական հայեացքները, հաւաստելով թէ՝ «*թող ներուի մեզ ըսել թէ շարականները չեն բաւեր ոչ լեզու մը կազմելու եւ ոչ ազգի մը զարգացման վրայ մեծ ազդեցութիւն մը ունենալու համար*»[34]: 1875 Դեկտեմբերին, այսինքն աւելի քան 2 տարի անց, Մսերեան դարձեալ կը ստիպուի գրել այս նիւթին շուրջ «Յոյս հանդէսն ու լեզուի խնդիրը» խորագրով, քանի որ *Յոյս*ը անգամ մը եւս անդրադարձած էր վերոնշեալ վիճաբանութեան[35]: *Արեւելեան մամուլի* էջերուն մէջ կը հանդիպինք նաեւ անոր «Քինքինա»[36] դեղագիտական յօդուածին, «Կու կուկ կու»[37] բանաստեղծութեան, եւրոպական գիրքերու վիճակագրութեան մը[38] եւ «Վարդանանց հանդէս»[39] ատենախօսութեան:

Մսերեան 70ականներէն սկսեալ մաս կը կազմէ զմիւռնիահայ թարգմանիչներու փաղանգին, ֆրանսերէնէ հայերէն կը թարգմանէ գիրքեր, ինչպէս՝ Ա. Տիւմայի *Բօլին* (*Pauline*, 1872), Օ. Ֆէօյէի *Աղքատ երիտասարդի մը վէպը* (*Le Roman d'un jeune homme pauvre*, 1873), Ժ. Սանի *Լէօն Լէօնի* (*Leone Léoni*, 1873) եւ *Ֆլաւի* (*Flavie*, 1875), Ա. Աշարի *Հետվիճի երդումը* (1875), Ռ. Լըֆէպրըի *Բարիզն յԱմերիկա* (*De Paris en Amérique*,

---

[27] Նոյն, էջ 48:

[28] Խորէն Աշըքեան (1842-99).- Պոլսոյ հայոց պատրիարք (1888-94): Գրած է փիլիսոփայական բնոյթով գիրքեր:

[29] *Արեւելեան մամուլ*, 1872, էջ 540-543 եւ 1873, էջ 12-17 եւ 440-447: Յօդուածաշարը անաւարտ մնացած է, հակառակ անոր որ վերջին յօդուածի մէջ «շարունակելի» կը նշուի, սակայն յաջորդ համարներուն մէջ չենք հանդիպիր շարունակութեան:

[30] John Locke (1632-1704).- Փորձապաշտ անգլիացի փիլիսոփայ:

[31] Gottfried W. Leibniz (1646-1716).- Գերմանացի բանապաշտ փիլիսոփայ:

[32] *Արեւելեան մամուլ*, 12:1872, էջ 542:

[33] *Արեւելեան մամուլ*, 1:1873, էջ 15:

[34] *Արեւելեան մամուլ*, 1:1873, էջ 16:

[35] *Արեւելեան մամուլ*, 1875, էջ 467-70, 1876, էջ 137-41, 206-16:

[36] *Արեւելեան մամուլ*, 7:1875, էջ 271-3:

[37] *Արեւելեան մամուլ*, 11:1876, էջ 422-3. ասիկա նմանողութիւն մըն է եւ Յակոբեանի կարծիքով «*Մսերեանի մեզ յայտնի միակ չափածոյ սփեղծագործութիւնն է*»:

[38] *Արեւելեան մամուլ*, 1:1877, էջ 40:

[39] *Արեւելեան մամուլ*, 2:1877, էջ 52-4:

1876) 2 հատորով, Պոքաչիոյի *Տասնօրեակը* (*Le Décameron*, 1879) 2 հատորով: Մսերեան 1878ին կը հիմնէ իր տպարանը[40]: Հոն լոյս կը տեսնեն Ա. Միւսէի *Նոր քերթուածները* (1878), *Ընթերցարանը* (1878), *Համառօտ դիցաբանութիւն* (1878) դասագիրքը, *Նոր այբբէնարան՝ ֆրանսերէնը* (1880), Ռիքարի *Փունջ կամ սէր. կանայք եւ ամուսնութիւնը*[41], Խաչատուր Պաղտասարեանի *Վարդ եւ սոխակ* (1880) ողբերգը, *Ուսումնական ափեզնախօսութիւն մը*ն (1878) արտասանուած Յ. Միքայէլեանէ, Զարմայր Ստեփան Չաքրեանէն «Ողջախոհ Արայ» (1878) բանաստեղծութիւնը, Էմմանուէլ Ռոիտիսի *Յովհաննա Բաբուհին* (1881) վէպը եւ Պոքաչիոյի *Le Décameron*ը (1879)[42] երկու հատորով:

Տպարանին փակումէն[43] ետք Մսերեան երիտասարդ տարիքին հեռացաւ գրական ասպարէզէն[44]: Սահմանափակ տեղեկութիւններու լոյսին տակ կրնանք ըսել, որ այս ժամանակաշրջանին, որ դժբախտաբար կեանքին վերջին շրջանը պիտի ըլլար, ան կը հետաքրքրուի հանրային գործունէութեամբ եւ առեւտուրով: Լոնտոնի մէջ իր աջակցութիւնը կը բերէ *L'Arménie* թերթի հրատարակութեան: 1890ին երկրորդ անգամ հանդիպում կ'ունենայ գերմանացի գիտուն Վիրքոֆի[45] հետ եւ անկէ խորհուրդներ կը ստանայ «Հայ ազգին տառապանքին մեղմացման համար»: Անոր հետ կը շարունակէ թղթակցութիւնը: Վիրքոֆ կը խոստանար հայ ժողովուրդի մասին բարեխօսել խորհրդարանին մէջ[46]: Իրաւ ալ, ան կը պաշտ-

---

[40] *Արշալոյս Արարատեան*, թիւ 1089, 1 Ապրիլ 1878. Զարդարեանի համաձայն տպարանը հիմնած է «*քանի մը համախոհներու հետ*» Զարդարեան, էջ 153:

[41] Տպագրութեան թուականը նշուած չէ, բայց *Մէփէօրա*յի 1881 տարուան 3րդ հատորի մէջ կը նշուի մամլոյ տակ ըլլալը:

[42] Այս գիրքին թարգմանիչը, հրատարակիչը եւ հրատարակութեան թուականը չէ նշուած: Թուականը կարելի է ճշտել *Արշալոյս Արարատեան*ի 1879ի 1127րդ համարէն, իսկ գիրքին թարգմանիչը Նուպարեան եւ Զարդարեանի համաձայն Մսերեանն է (Զարդարեան, էջ 153. նաեւ՝ Նուպարեան, էջ 38): Գիրքին անուանաթերթին վրայ գրուած է «տպագրութիւն Ա. Մամլոյ» բայց Յակոբեանի կարծիքով գիրքը հրատարակուած է Մսերեանի տպարանին մէջ (Յակոբեան, էջ 98 եւ յաջորդ էջեր): Զարդարեանի համաձայն՝ Մսերեան «*ինքը եղաւ գրեթէ Հայոց մէջ իրապաշտ դպրոց մը սփեղծելու առաջին յանդուգն քայլը առնողը թարգմանելով Պօքաչիօի Տասնօրեակները եւ հրատարակելով Յովհաննա բաբուհի անուն վէպը եւ Մէփէօրայի մէջ թարգմանելով Էմիլ Զօլայի մէկ գեղեցիկ գրական փեսութիւնը Լիթրէի եւ Հիւկօի վրայ*» (Զարդարեան, էջ 153):

[43] Մսերեանի լաւ բարեկամ եւ աշխատակից Նուպարեանի համաձայն, տպարանը փակուած է «Համիտի բռնապետական վարչոյթի»ն կողմէ, «արտօնագիր չունենալը պատճառ բռնելով» (Նուպարեան, էջ 37):

[44] Յակոբեան, էջ 112:

[45] Rudolf Virchow (1821-1902).- Գերմանացի ախտաբան, մարդաբան եւ քաղաքական գործիչ

[46] Զարդարեան, էջ 154:

պանէ հայանպաստ տեսակէտեր[47]: 1883ին, որպէս առեւտրական Ամսթերտամի ցուցահանդէսին մէջ իր ներկայացուցած ծխախոտին համար կ'արժանանայ ոսկէ շքանշանի[48]: Մսերեան եղած է գաւառական ժողովի ազգային երեսփոխան եւ երեք անգամ հոգաբարձու՝ Զմիւռնիոյ ազգային երկսեռ ուսումնարաններու: Անդամակցած է Հայ Ընթերցատան[49] եւ «Alliance Francaise» ընկերութեան, որուն նպատակն էր տարածել ֆրանսերէնը Փոքր Ասիոյ մէջ[50]: Կարճ ժամանակ մը կը զբաղի նաեւ կուսակցական գործերով. «կուսակցական հոսանքի մէջ պահ մ'ընկաւ» բայց յետոյ համոզուեցաւ որ «սխալ քայլ մ'առած է»[51]: Մսերեան իր մահկանացուն կնքեց 1893ին, 47 տարեկանին, հնդկախտի պատճառով՝ ետին թողլով այրին եւ չորս զաւակներ[52]:

ԴՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ *ՄԷՏԷՕՐԱ* ՀԱՆԴԷՍԻ ՄԷՋ

Զմիւռնիան նշանակալից դեր ունի հայ տպագրութեան եւ մամլոյ պատմութեան մէջ: Հո՛ն լոյս տեսած է հայերէն առաջին թերթը՝ *Արշալոյս Արարատեան*:

1843էն սկսեալ մօտաւորապէս 50 տարուան ընթացքին Զմիւռնիոյ մէջ լոյս տեսած են աւելի քան 100 հատոր թարգմանեալ գիրքեր, որոնց հեղինակներու շարքին են ֆենելոն, Շաթոպրիան, Մոլիէր, Վիքթոր Հիւկօ, Ռասին, Լամարթին, Կէօթէ, Վոլթէր, Շէյքսփիր, Պոկաչիօ: Թարգմանական գործունէութիւնը կը նպաստէ արեւմտահայերէնի տարածման[53]: Իսկ մինչեւ 1922, Զմիւռնիոյ մէջ հրատարակուած է 36 թերթ[54]:

Մէտէօրա հանդէսը լոյս տեսած է 1880-81ի միջեւ Զմիւռնիոյ մէջ, Գրիգոր Մսերեանի կողմէ: Առաջին թիւը տպուած է Մսերեանի, իսկ երրորդը՝ Վարդովեանի տպարանին մէջ, իսկ երկրորդին վրայ միայն հրատարակիչի՝ Մսերեանի անունը նշուած է: Երեք թիւ հրատարակուելէ ետք փակուած է ան, իշխանութեան կողմէ: Հանդէսին վրայ նշուած է, որ ան գիտական, ազգային եւ գրական հանդէս մըն է: Առաջին հատորի նախաբանին մէջ Մսերեան կը նշէ, որ *Մէտէօրան* գիտական, ազգային ու գրական գործերու եւ թարգմանութիւններու հաւաքածոյ մըն է եւ «*փիլիսոփայական մաս-*

---

[47] Նուպարեան, էջ 37:

[48] Յակոբեան, էջ 113:

[49] *Արշալոյս Արարատեան*, 1008:1875:

[50] Երիցեան, *Արձագանք*, 103:1893:

[51] *Արեւելեան մամուլ*, թիւ 8:1893, էջ 385:

[52] Նուպարեան, էջ 38:

[53] Վահէ Օշական, "L'Ecole des Traducteurs Arméniens de Smyrne au XIXe Siècle," *Հայկազեան հայագիտական հանդէս*, 4:1973, էջ 199-216:

[54] Sona Seferian, "İzmirli Çevirmenler-Aydinlanmacilar,"*Tarihi Kentler ve Ermeniler: İzmir*, Richard G. Hovannisian, ed., թարգմ.՝ Aras Ergüneş, Aras Yayincilik, İstanbul, 2018, էջ 169:

նաւոր դպրոցի մը նկատմամբ որ եւ է յատուկ միտում կամ դաւանութիւն չունենալով՝ իր նպատակն է ժամանակիս ոգւոյն եւ Եւրոպայի գիտական շարժման արձագանք ըլլալ, միեւնոյն համակրութեամբ ընդունելով աստուածաբանական, հոգեբանական եւ դրական հայեցուածքով գրուած կարեւոր յօդուածներ»[55]: Մսերեան կը տեղեկացնէ նաեւ, որ թերթը պիտի բովանդակէ ազգային, քննական եւ վիպական յօդուածներ:

*Մէտէօրա*յի մէջ լայն տեղ կը գրաւէ Փիշարի *Doctrine du Réel* գիրքին թարգմանութիւնը՝ «Վարդապետութիւն իրականին» խորագրով[56]: Հեղինակի եւ թարգմանիչի անուններ նշուած չեն: Գիրքը ընդհանուր գիծերով կը ծանօթացնէ դրական փիլիսոփայութիւնը: Լիթրէ գիրքին համար նախաբան մը գրած է: Մսերեան ծրագրած է 4 մասով հրատարակել զայն, բայց թերթին փակման պատճառով կրցած է միայն առաջին 3 մասը հրատարակել: Գիրքը գրուած է հարց-պատասխանի ձեւով: Առաջին մասը, որ կը կրէ «Մեթոտի վրայ» վերնագիրը, կը բաղկանայ 22 էջերէ: Փիշար կը սկսի «Ի՞նչ է ճշմարիտը» հարցումով եւ յետոյ մարդուն ծանօթութիւնը կը սահմանափակէ ժամանակով եւ անջրպետով: Փիշարի համաձայն «*Կան բաներ որ մարդուս հետազօտութեան եւ սպուգման միջոցներու տակ պիտի չըլլին երբեք*»[57]: Ան օրինակ կու տայ «սկիզբի եւ վերջի խնդիրները»: Փիշար կը հետեւի դրապաշտ դպրոցի սկզբունքներուն: Իր կարծիքով իրականը ճշմարիտ դառնալու համար պէտք է գիտական օրէնքի ձեւով յայտնուի[58]: Ան կը մերժէ բացարձակին հասնելու հնարաւորութիւնը, «*Մարդկային գիտութիւնը առնչականին կը հասնի միայն, վասն զի մեր զգայարանքներուն հետ յարաբերութիւն ունե-ցող բաները կրնանք ճանչնալ մինակ*»[59]:

Փիշարի եւ ընդհանրապէս դրապաշտներու այս մերձեցումը կը բացառէր, բնականաբար, ամէն տեսակ միսթիք փորձառութիւն, հետեւաբար՝ կրօնքը եւս: Արդէն յաջորդ հարցումին՝ թէ միտքը զգայարանքներու տը-

---

[55] *Մէտէօրա*, 1:1880, էջ 3-4:

[56] Ի ձեռի ունինք գիրքին երկրորդ՝ 1889ի տպագրութիւնը.- Prosper Pichard, *Doctrine du Réel, Catéchisme à l'Usage des Gens qui ne se Paient pas de Mots*, C. Reinwald, Փարիզ, 1889, 191 էջ: Գիրքին նախաբանին մէջ նշուած է 1869 թուականը, որ հաւանաբար առաջին թարգմանութեան թուականն է. արդէն հեղինակն ալ նախաբանին մէջ կը նշէ, որ 20 տարի անցած է առաջին թարգմանութենէն: Թերթին հրատարակման խափանման պատճառով, Մսերեան չէ կրցած հրատարակել գիրքին վերջին գլուխը, որ վերնագրուած է «De la Conception Positive de l'Univers ou Philosophie Positive»: *Մէտէօրա* հանդէսին մէջ չէ հրատարակուած Լիթրէի նախաբանը: Փիշարի ուսումնասիրութիւնը լոյս տեսած է նաեւ *La Philosophie Positive*ի 1872 (2-3) եւ 1873 (4-5) թիւերուն մէջ:

[57] *Մէտէօրա*, 1:1880, էջ 47:

[58] Նոյն, էջ 47-8:

[59] Նոյն, էջ 49:

ւած տեղեկութենէն անդին կրնա՞յ անցնիլ, որպէս պատասխան Փիշար ընդունելով մտքի «իրականին սահմանէն անցնիլ»ը, կը նշէ որ «ձեռք բերած արդիւնքը ոչինչ ստուգութիւն կ'ընծայէ»: Փիշար համոզուած է, որ «փորձական մեթոտ»ով կարելի է ամէն տեսակ երեւոյթ բացատրել, ներառեալ՝ ընկերայինը[60]:

Երկրորդ գլուխի վերնագիրն է «Մարդկային ծանօթութեան առարկան»: Փիշար տիեզերքի երեւոյթները 6 կարգի կը բաժնէ.- մաթեմաթիքական, աստղագիտական, բնագիտական, տարրաբանական, կենսաբանական, ընկերային: Ասոնք «հիմնական գիտութիւններ» կը կոչուին, որոնք տրուած են կարգով. ամէնէն վարը կը գտնուի մաթեմաթիքը, իսկ ամէնէն վերը՝ ընկերաբանութիւնը: Այս գիտութիւններուն միջեւ կայ առնչութիւն մը, որուն համաձայն մէկը սորվելու համար պէտք է նախ անկէ առաջ գտնուողը իւրացնէ[61]:

Երրորդ գլուխը կը կրէ «Մաթեմաթիքի վրայ» վերնագիրը: Փիշար մաթեմաթիքի, ստորաբաժանումներու, մեթոտի եւ ասոնց հետ կապուած նիւթերու մասին տեղեկութիւններ կու տայ: Մեր յօդուածին առնչութեամբ շահեկան է Փիշարի այն կարծիքը, թէ մաթեմաթիքը «*փորձական գիտութիւն մ'է*» եւ «*տրամաբանութեան իբրեւ մեկնակէտ ծառայող եղելութիւնները՝ զննութեան արդիւնք են*»[62]: Փիշար, բնածին գաղափարներու հաւանական դերը կը մերժէ, «*որովհետեւ այդ ճշմարտութիւնները շատ մատաղ հասակնուս մէջ դիտողութիւնով կ'ստանանք, եւ քը անոնց ծագումը մոռնալով՝ կ'երեւակայենք թէ մեր մտքին մէջ գտնուած են անոնք*»[63]:

4րդ, 5րդ եւ 6րդ գլուխներու վերնագիրերը համապատասխանաբար հետեւեալներն են. «Աստղագիտութեան վրայ», «Ֆիզիքի վրայ» եւ «Քիմիայի վրայ»: Փիշար տեղեկութիւններ կը փոխանցէ վերոնշեալ գիտութիւններու առարկաներու, մեթոտներու, իրարու հետ ունեցած յարաբերութեան, պատմութեան, գիտութիւններու դասաւորման մէջ զբաղեցուցած կարգի եւ յարակից նիւթերու շուրջ[64]:

Երկրորդ հատորին մէջ «Վարդապետութիւն իրականին» յատկացուած է 27 էջ: Այս բաժինը կը սկսի 7րդ գլուխով, որ վերնագրուած է «Կենսաբանութիւն ընդհանուր»: Ան տեղեկութիւններ կը փոխանցէ նշեալ գիտութեան առարկայի, մեթոտի, ստորաբաժանումներուն, իմացականութեան եւ միւս «հիմնական» գիտութիւններու հետ ունեցած յարաբերութեան եւ առնչակից նիւթերու շուրջ[65]: Յաջորդ գլուխի վերնագիրն է «Մարդաբանութիւն, մտային կարողութիւնք, ուսումն մարդկային բնութեան»: Փիշար

---

[60] Նոյն, էջ 49-50:
[61] Նոյն, էջ 51-4:
[62] Նոյն, էջ 55:
[63] Նոյն, 54-7:
[64] Նոյն, 58-68:
[65] *Մէտէօրա*, 2:1881, էջ 82-95:

մարդու մտային կարողութեան, զգացումներու, գաղափարներու, տրամախոհութեան, բարոյականութեան եւ այլ նիւթերու շուրջ բացատրութիւններ կու տայ: Ըստ իրեն՝ «*գաղափարի մը մեկնակէտը ... զգայական տպաւորութիւն մը*»ն է: Տպաւորութիւնը արտաքին կամ ներքին կրնայ ըլլալ եւ ուղեղին մէջ կը վերածուի գաղափարի[66]: Փիշար կը քննադատէ բնազանցագէտները, քանի որ անոնք խելքը կը համարէին իմացական բոլոր գործողութիւններու առաջնային աղբիւրը.

> Ըղեղի բնախօսութեան շնորհիւ՝ ալ կարելի չէ խելքը իբրեւ նախաւոր սկիզբ մը նկատել բնազանց հոգեբաններու հետ, սկիզբ մը՝ որ իբր թէ իմացական ամէն գործողութեանց կը նախագահէ եւ կը խաղայ նոյն դերը որ կը կարծուէր թէ կենսական սկիզբը գործարանաւոր կեանքի երեւոյթներու մէջ կը խաղար[67]:

Երրորդ հատորին մէջ լոյս կը տեսնէ «Ընկերբանութեան վրայ» խորագրեալ 8րդ գլուխը, որ թերթի խափանման պատճառով կ'ըլլայ վերջինը: Այս բաժինը կը բաղկանայ 35 էջերէ: Կ'արծարծուին ընկերաբանութեան մեթոտի, առարկայի եւ պատմութեան կողքին զանազան նիւթեր, ինչպէս՝ բարեշրջում, աստուածաբանական, բնազանցական եւ դրական ըմբռնումներ, կրօնք, քաղաքականութիւն, յառաջդիմութիւն եւն.: Փիշար, ինչպէս միւս դրապաշտները, համոզուած է, որ ընկերային երեւոյթները կ'ենթարկուին բնական օրէնքներուն: Իսկ ընկերաբանութեան «հիմնական եղելութիւնը» բարեշրջումն է: «*Ընկերաբանութեան անվերածելի եւ փիրող եղելութիւնը ասէ*» կը գրէ Փիշար[68]: Ան կը նշէ, որ աստուածաբանութիւնը եւ բնազանցութիւնը «*նախնական եւ վերջնական պատճառներու հետազօտութեամբ կ'զբաղին*,- եւ,- *իրենց հաստատած եղելութիւնները սփռգելու կարողութենէ զուրկ են*»[69]: Փիշարի համաձայն աստուածաբանական եւ բնազանցական պնդումները մարդկային ուղեղի արդիւնք են, այսինքն առարկայական հիմք չունին: Հրաշքներ գոյութիւն չունին, ասոնք հետեւանքն են ականատես մարդոց տգիտութեան եւ դիւրահաւատութեան: Բնական օրէնքները անցեալին ալ նոյնն էին, հետեւաբար պատճառ չկայ հաւատալու կրօնական հանգամանք ունեցող բացառութիւններու: «*Արեւը իր ընթացքին մէջ կանգ առած չէ երբեք: Ոչ ոք հրապարակաւ երկինք ելած է, ջուրը բնաւ գինիի փոխուած չէ, մեռեալ մը յարութիւն չէ առած*»՝ կը գրէ դրապաշտ փիլիսոփան[70]: Ան կը հասնի այն եզրակացութեան, որ «*այդ եղելութիւններու վրայ հանգչող աստուածութեան գոյու-*

---

[66] Նոյն, էջ 96-108:
[67] Նոյն, էջ 104:
[68] *Մէտէօրա*, 3:1881, էջ 40:
[69] Նոյն, էջ 44:
[70] Նոյն, էջ 45:

թիւնն իրականութիւն չունի»[71]: Փիշար չ'ընդունիր Աստուծոյ գոյութեան բնազանցական ապացոյցները. ըստ իրեն՝ բնազանցական «*էակութիւններ-ը... լոկ անրջային իրականութիւն*» մը ունին եւ «*այս նոյն էակութիւններ-ով արտածեալ աստղաւածային գոյութիւն մը՝ անկէ աւելի իրականութիւն մը չունի*»[72]: Փիշար մերժելով նման միտքերը կ'ընդգծէ, որ աշխարհը գիտական օրէնքներու ենթարկուած է. «*Դրական ըմբռնումը կը պարունակէ ինչ որ է, այսինքն իրերու ինչպէսը որ կրնայ փաստուիլ ու սպուգուիլ, եւ դուրս կը ձգէ ինչ որ սպուգողութեան տակ չըլնիր*»[73]: Փիշար, ինչպէս Քոնթ, մարդկային մտքի զարգացման փուլերը կարգով երեք շրջանի կը բաժնէ՝ աստուածաբանական, բնազանցական եւ դրական. տեղեկութիւններ կը փոխանցէ ասոնց մասին: Ան կը քննադատէ նաեւ բնազանցական մտքի գեղարուեստական աշխարհայեացքը: Հին դարերուն արհեստագէտներու եւ հասարակութեան միջեւ համաձայնութիւն մը գոյութիւն ունէր գեղարուեստական գործերու արժեւորման մասին, իսկ հիմա անհամաձայնութիւն մը կը տիրէ. գեղագիտական գործերը այլեւս «*ընդհանուր հիացումի առարկայ*» չեն դառնար: Ասոր լուծումը կարելի պիտի ըլլայ այն ատեն, երբ «*ընկերութեան մէջ մտքերն ու սրտերը միացնող, հասարակ իտէական մ'ընծայող ընդհանուր դաւանութիւն մը տիրէ, այսինքն երբ դրական ըմբռնումը գահակալէ*»[74]: Փիշար, որպէս դրապաշտ, լաւատես է ապագայի մասին: Ըստ իրեն, «*աւելի կամ նուազ հեռաւոր ժամանակի մը մէջ*» մարդկութիւնը պիտի հասնի դրական շրջան, ուր մարդիկ պիտի հաւատան միայն բնական օրէնքներու: Պատերազմները պիտի անհետանան, գիտութեան զարգացումը ճոխութիւն պիտի բերէ եւ աշխարհը խաղաղասէր եւ արուեստասէր պիտի դառնայ[75]:

Չորրորդ հատորը, որ պիտի ընդգրկէր թարգմանութեան վերջին մասը, լոյս չտեսաւ: Բայց հրատարակուած մեծամասնութիւնը գիրքին, հեղինակին միտքը լրիւ կ'արտացոլէ արդէն:

Վերոյիշեալ թարգմանութեան առընթեր, *Մէկտէօրա*յի առաջին հատորին մէջ Օրպէլի (Ստեփան Ոսկանեան)[76] թարգմանութեամբ կը հրատարակուի Լիթրէի *Դրական ենթադրութիւնք աշխարհածնութեան* (Les Hypothéses Positives de Cosmogonie)[77] ուսումնասիրութիւնը յապաւումնե-

---

[71] Ուշագրաւ է կրօնքին նման հարուածումը հայերէն հանդէսի մը մէջ, յատկապէս՝ համիտեան խիստ գրաքննութեան ներքեւ: Թերեւս այս եւ նմանօրինակ հատուածներ պատճառ դարձան թերթի խափանման:

[72] Նոյն, էջ 47-8:

[73] Նոյն, էջ 49:

[74] Նոյն, էջ 64:

[75] Նոյն, 66:

[76] Յակոբեան կը հաստատէ, որ Օրպէլը Ոսկանեանն է (Յակոբեան, էջ 280):

[77] *La Philosophie Positive*, 1872, Յուլիս-Սեպտեմբեր, էջ 343-71. Մսերեան նշած է միայն հեղինակը, իսկ յօդուածի բնագրին աղբիւրը՝ ոչ:

րով: Թարգմանութեան նախաբանին մէջ խմբագիրը կը պատասխանէ Ս. Ոսկանի՝ *M.E. Littré et l'Athéisme*[78] գրքոյկի մէջ ըրած քննադատութիւններուն, ուղղուած՝ դրական փիլիսոփայութեան հետեւորդներուն: Ոսկանի կարծիքով, անոնք «*դրական ածականը կու տան ենթադրութիւններու*», որ աններելի է[79]: Հեղինակը որպէս պատասխան կը մէջբերէ Լիթրէէն հատուած մը, ուր կը նշուի, որ դրական ենթադրութիւնները հետեւանք են փորձնական եղելութիւններու եւ «*մարդուս միտքը կը գոհացնեն իրենց իբր հիմ ծառայող* ***եղելութեանց եւ օրէնքներու ապացուցանելի հանգամանքով***»[80]: Խմբագիրին համաձայն Ոսկան ենթադրութիւններու հիմքերը նկատի չ'առներ. իրեն համար «*փորձականութիւնը արժէք մը չունի, եւ ամէն ենթադրութիւն բնազանցութիւն է*»[81]: Ոսկան կը պնդէր, որ հակառակ գիտութեան սահմանափակ դաշտին, փիլիսոփայութիւնը «*զննութեան եւ մտածումի ընդարձակ սահմաններու մէջ կ'տարածուի*»: Իր համոզմամբ՝ փիլիսոփայութիւնը աւելի հեռու կ'երթայ քան գիտութիւնը: Խմբագիրը կ'առարկէ Ոսկանին, դիտել տալով որ գիտութեան սահմանը անցնող փիլիսոփայութիւն մը կը դառնայ «*երեւակայութեան մէկ զաւակը*»[82]: Այս տեսակ փիլիսոփայութիւնը բանաստեղծութիւն մըն է, որ բանաստեղծութեան հրապոյրն ալ չունի եւ այլեւս ժամանակավրէպ դարձած է[83]:

Լիթրէի յօդուածը կը պարզաբանէ աստղագիտական եւ կենսաբանական նիւթեր: Առանց թերագնահատելու յօդուածին գիտական բովանդակութեան արժէքը՝ որուն կարիքը զգալի էր ատենի հայ իրականութեան մէջ, մեր նիւթի առնչութեամբ մեզի համար կարեւոր են Լիթրէի ըրած հաստատումները դրական փիլիսոփայութեան մասին: Լիթրէ, իր վերապահութիւնը չի թաքցներ երբ աշխարհի մէջ կեանքի ծնունդի մասին կը խօսի: Ան կը մերժէ թէ՛ նիւթապաշտական եւ թէ՛ աստուածաբանական բացատրութիւնները. դրական փիլիսոփայութիւնը «*նիւթակրօններու պէս չ'ընդունիր թէ կեանքը ֆիզիքօքիմիական ուժերու արդիւնքն է, վասն զի այդ լուծումը նախահիթները (premisse) կը զանցանէ. նմանապէս աստուածաբանական լուծումն ալ կը մերժէ, վասն զի ան ալ փորձականութեան տակ չ'ընկնիր*»[84]: Դրական փիլիսոփայութիւնը «*հաստատութեամբ եւ խոնարհութեամբ՝ ամէն ապացուցանելի բաներու վրայ իր տգիտութիւնը կը*

---

[78] Այս գրքոյկը, որուն անդրդարձած էինք նաեւ Կոստանդեանի նուիրուած մեր վերոյիշեալ յօդուածին մէջ, դեռ կարելի չեղաւ գտնել: Հետեւաբար Ոսկանեանէն կատարուող մէջբերումներուն կը հետեւինք խմբագիրին միջոցով:

[79] *Մէտէօրա*, 1:1880, էջ 69:

[80] Նոյն, էջ 69-70:

[81] Նոյն, էջ 70:

[82] Նոյն, էջ 70-1:

[83] Նոյն, էջ 69-71:

[84] Նոյն, էջ 83:

խոստովանի»[85]: Այդուհանդերձ, Լիթրէ կը նշէ որ արգելք չի տեսներ գիտական հետազօտութիւն ընելու կեանքի ծնունդի մասին: Ան չի բացառեր «*երկրորդական սկիզբի լուծումը*», որ հետեւանքը կրնայ ըլլալ կլիմայական փոփոխութիւններու: Եզրակացութեան մէջ ան կը հաւաստէ, թէ կրօնքներու աշխարհածնական հայեացքները այլեւս չեն կրնար դիմանալ արդի գիտութեան փաստերուն եւ «*անոնց տեղը դրական ենթադրութիւնները կը բռնեն*»: Դրական ենթադրութիւնը «*յեղաշրջումի (évolution) մը աստիճաններու կապակցութիւնը միայն կը բացատրէ*»: Իսկ անկէ անդին «*անճանաչելին է՝ որմէ բան մը չ'ընդունիր եւ չ'մերժեր դրական փիլիսոփայութիւնը,*- որ,- *...ահարկու անճանաչելին կը ճանչնայ եւ անոր ձեւ ու սպորոգելիք մը չուտար*»[86]:

Երրորդ հատորին մէջ լոյս կը տեսնէ «Վ. Հիւկօ եւ Էմիլ Լիթրէ» (Hugo et Littré) խորագրեալ յօդուածը[87], որուն հեղինակն է Զոլա: Նախաբանին մէջ *Մէտէօրա*յի խմբագիրը կը յայտնէ իր վերապահութիւնը եւ կը նշէ, որ թերթը բաց ասպարէզ մըն է: Եթէ նկատի առնենք Զոլայի խիստ քննադատութիւնները Հիւկոյի հասցէին, այս վերապահութիւնը հասկնալի կը դառնայ քանի որ ան «*ամէն հայ դպրոցականի բերնին մէջ է, ամէն յօդուածի վերեւ, կրնանք ըսել ամէն հայ գրողներու մտքին մէջ*»[88]: Հիւկոյի հանդէպ սէրը այնքան տարածուած է, որ հասած է մոլութեան: «*Մեր մէջ Հիւկօպաշտութիւնը (Hugolatrie) մինչեւ մոլութեան կ'երթայ*» կը գրէ Մսերեան: Հիւկօ «*քերթողական անհաւասարելի հանճար մը*», «*վսեմ հոեփոր մը*»ն է, «*որու բերնին մէջ մէն մի բառ կը զօրանայ, կ'ընդարձակուի ու կ'որոտայ եռափող շռինդէ ելնող ահեղ ձայնին պէս*»: Բայց խմբագիրին համոզմամբ՝ ասոնք «*մեր իրական պիտոյից չեն բաւեր*» եւ «*ուրիշ սնունդներու ալ պէտք ունինք, զորս ժամանակ է ալ փնտռելու*»: «*Չմոռնալու է որ Աթենաս մը կայ Ապողոնէ վեր*» կը վերջացնէ ան[89]:

Զոլա յօդուածին սկիզբը կը յայտնէ, որ վերջին շաբաթները երկու կարեւոր դէպք պատահած է՝ Հիւկոյի գիրքի հրատարակութիւնը եւ Լիթրէի մահը: Ան համոզուած է, որ այլեւս ժամը հասած է այս երկու անունները բաղդատելու: «*Լիթրէ բոլոր միտքս գրաւած է,*- կը գրէ Զոլա, իսկ Հիւկօն կը համարէ,- *հեռաւոր նուագ մը*»: Զոլայի կարծիքով՝ «*դրականութիւնը կնքած է այն քարը՝ որու ներքեւ վիպականութիւնը յաւիտենապէս կը ննջէ*»[90]:

---

[85] Նոյն, էջ 83:

[86] Նոյն, էջ 92:

[87] Բնագիրը լոյս տեսած է 13 Յունիս 1881ին *Le Figaro*ին մէջ: Հանդէսի մէջ բնագիրին աղբիւրը չէ նշուած:

[88] *Մէտէօրա*, թիւ 3:1881, էջ 25:

[89] Նոյն, էջ 25-6:

[90] Նոյն, էջ 26:

Զոլայի գրական վերլուծումները եւ պատմական ակնարկները մեր յօդուածի սահմաններէն եւ մեր մասնագիտութենէն դուրս են: Ըսենք միայն, որ ան որպէս բնապաշտ Հիւկօն ժամանակավրէպ կը գտնէ եւ կը յարձակի նաեւ վիպապաշտութեան վրայ: Զոլայի կարծիքով, Լիթրէն դրապաշտութեան հիմնադիրը չըլլալով հանդերձ մեծ ներգործութիւն ունեցաւ այս վարդապետութեան վրայ: Ան դրապաշտութիւնը Քոնթի «*փեսիլներէ զփելով*» գիտական դարձուց[91]: Զոլա բնապաշտութեան եւ դրապաշտութեան կապը կը մատնանշէ. ըստ իրեն, դրական մեթոտը «*գրականութեան մէջ կը փայլի այն բնապաշտական ձեւով զոր շատեր անտես կ'ուզեն ընել*»[92]:

Զոլա կը հարուածէ Հիւկօն, որ հանդէս կու գայ «*իր ցնորած հռետորի հսկայական մեքենաներով, բառերու եղծումով, պղտոր գաղափարներով, յարատեւ կատակներով եւ մարգարէի հովերովը եւ իր մեծ այլ դատարկ խօսքերու մէջ փեղ ըրած ոտքի տրոփիւնով ու շլմորած բարի ծերունիի մը յետին ընկերհաշտութեամբ*,- իսկ Լիթրէն՝- *իր անբիծ տրամաբանի ահարկու աշխատութիւններով, իր մեթոտին ճշտութիւնով, գործերու միութենով, յստակութեամբ, միայն ճշմարտութեան սիրովն աշխարհիս կապուած աշխատողի համեստութեամբն ու պարզութեամբը*,- եւ,- *'ի վերջէ այն իրական յառաջդիմութիւնով որ իր ամէն մէկ երկասիրութիւններու մէջ կ'որոշուի աստիճանաբար եւ որոնց ամէնքն ալ զմեզ դէպ 'ի ապագան կ'մղեն*»[93]: Զոլա հետեւելով իր տրամաբանումներուն կը յանգի այն եզրակացութեան, որ վիպապաշտութիւն եւ դրականութիւն անհամատեղելի են եւ մէկը միւսը պիտի ոչնչացնէ: Զոլա կը հաւատայ, որ միայն Լիթրէն իրաւունք ունի «*յանուն եղելութեանց խօսելու եւ ապացուցեալ ճշմարտութեանց նոր Աւետարանը տարածելու*»[94]: Լիթրէն եղած է դարու մարդը եւ վիպապաշտական հին մեթոտները փոխարինած դրականով, իսկ Հիւկօն «*միջին դարու ամէն ուրուականներուն վերադարձած, առասպելներն աւելցուցած՝ եւ ենթադրութիւններն մռայլած է*»[95]: Զոլա իր յօդուածը կը վերջացնէ ֆրանսայի երիտասարդութենէն խնդրելով մտածել այս երկու ճամբու մասին եւ որոշում կայացնել, թէ որու՞ պիտի հետեւին. Լիթրէի հետեւելով մեծնա՞լ, թէ՞ որպէս վիպապաշտութեան յետնորդ հետեւակներ՝ Հիւկոյի մեծ ստուերին տակ աճիլ բուսապէս[96]:

Բացի դրական փիլիսոփայութեան վերաբերեալ թարգմանութիւններէ, թերթը կ'ընդգրկէ նաեւ ազգային, գրական եւ լեզուական նիւթեր[97]:

---

[91] Նոյն, էջ 30:
[92] Նոյն, էջ 31:
[93] Նոյն, էջ 32:
[94] Նոյն, էջ 33:
[95] Նոյն, էջ 34:
[96] Նոյն, էջ 35:
[97] Բովանդակալալից տեղեկութեան համար տէ՛ս՝ Յակոբեան:

Երրորդ հատորին մէջ կը հաղորդուի, որ չորրորդ հատորը մամուլի տակ է եւ կը տրուի հատորին բովանդակութիւնը[98], բայց - ինչպէս նշեցինք – հատորը չի հրատարակուիր:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Մսերեան որպէս թարգմանիչ, խմբագիր, հրատարակիչ եւ հանրային գործիչ, կարեւոր դեր խաղացած է զմիւռնիահայ մտաւորական կեանքին մէջ: Ֆրանսերէնէ ըրած թարգմանութիւններով հասած է նաեւ հասարակութեան տարբեր խաւերուն եւ լուրջ ներդրում ունեցած աշխարհաբարի զարգացման մէջ: Ծաւալած է հանրային գործունէութիւն, հետաքրքրուած է հայկական հարցով: Ան իր *Մէտէօրա* հանդէսով ջատագովը եղած է դրական իմաստասիրութեան, եւ դրապաշտ փիլիսոփաներէն թարգմանութիւններ հրատարակած է իր հանդէսին մէջ: Եթէ նկատի առնենք Կոստանդեանի 1878ին լոյս ընծայած դրական փիլիսոփայութիւնը պաշտպանող *Մեթոտի վրայ* գիրքը եւ իր սուր ոճը, որ բուռն հակազդեցութիւններու տեղիք տուած էր պահպանողական շրջանակներու մէջ, *Մէտէօրա* հանդէսը թերեւս կրնայ համարուիլ դրական փիլիսոփայութեան դիրքերէն ա-ջակցութիւն մը Կոստանդեանին: Ինչպէս պիտի ըսէր Նուպարեան. «*Գալուստ Կոստանդեանի հետ առաջին խիզախ քայլը կ'առնէր նա դրապաշտ դպրոց մը հաստատելու հայոց մէջ*»:

[98] «Պարունակութիւն», *Մէտէօրա*, 3:1881:

POSITIVISM IN KRIKOR MSERIAN'S *METEORA* PERIODICAL

(Summary)

CAN ERZURUMLUOGLU (canerzurumluoglu@hotmail.com)

As of the 1870s positivist philosophy made headway into Western Armenian society. Ottoman Armenian positivists in Istanbul, like Demirdjibashian and Gosdantian, defended science against religion and metaphysics. They believed that society can develop only through the extensive dissemination of science. In 1878 Gosdantian published a book named *Metodi vra* (*On Method*) where he criticized Ottoman conservative circles. A few years later in 1883, Demirdjibashian started publishing a journal, *Kragan yev Imasdasiragan Sharjoom* (*Literary and Philosophical Movement*). It lasted for five years and propagated similar ideas. In an attempt to disseminate European scientific developments among its readers, during 1880-1881 Krikor Mserian published a periodical *Meteora*, where alongside literary and political articles, he published positivist papers translated from French. Mserian played a prominent role within the Izmir circle of Armenian translators, editors, publishers and intellectuals. He was engaged in different social institutions, which enabled his translations to reach different segments of society and help to further develop the Western Armenian language.

Against the backdrop of Western Armenian positivism, the paper highlights the role played by Mserian and his *Meteora* periodical in further promoting positivist concepts within Western Armenian society.

ԿՐԹՈՒԹԵԱՆ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԱԲՆԱԿ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ՀԱՄԱՐԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԳԱՅԻԱՆԷ ՅԱԿՈԲԵԱՆ (gayik20@gmail.com)

ՆԱԽԱԲԱՆ

2011ին սկսուած սուրիական պատերազմի հետեւանքով Հայաստանի Հանրապետութիւն ժամանեցին շուրջ 22,000 սուրիահայեր[1]: Այսօր նրանց թուի վերաբերեալ պաշտօնական տեղեկատուութիւնը բացակայում է, սակայն ոչ-պաշտօնական տուեալների համաձայն՝ այն տատանւում է 5-8000ի միջեւ[2]: Նրանց մեծ մասը տեղափոխուեց եւրոպական երկրներ, ԱՄՆ եւ Քանատա, ոմանք էլ ռազմական գործողութիւնների տաք փուլի աւարտից յետոյ վերադարձան Սուրիա:

Սուրիահայերի համար հայաստանեան ընկերամշակութային կեանքին յարմարուելու խնդիրները բազմաթիւ են: Առաջնային եւ կարեւոր խնդիր է նաեւ նրանց կրթական համարկումը, քանզի դրա յաջող ընթացքը ՀՀում մշտական բնակութիւն հաստատելու գրաւականներից է: Նախադպրոցական, դպրոցական եւ համալսարանական միջավայրն անփոխարինելի միջոց է սուրիահայ մանուկների, պատանիների ու երիտասարդների համար՝ ոչ միայն հայեցի կրթուելու, անհրաժեշտ գիտելիքներ եւ հմտութիւններ ձեռք բերելու, յետագայում լաւ աշխատանք ու ապագայ ունենալու, այլեւ տեղացիների հետ շփուելու, հայաստանեան հասարակութեանն համարկուելու տեսանկիւնից:

Ըստ Էմիլ Տըրքհայմի՝[3] յարմարում եւ *ոցիալ*ականացում հասկացութիւնները հոմանիշեր են: Ընդունելով, որ սուրիահայերի *ոցիալ*ականացման հերթական փուլն անցնում է նոր հասարակութիւնում, յարմարումը

---

[1] ՀՀ Սփիւռքի նախարարութիւն, «սուրիահայերի անկիւն, պետական քաղաքականութիւն», http://www.mindiaspora.am/am/petakan_qaxaqakanutyun, մատչում՝ 26.03.2020:

[2] «Սուրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ նախագահ, փորձագիտական հարցազրոյց, 25 Հոկտեմբեր 2018:

[3] Տըրքհայմը մարդու սոցիալական տարբերակումը բացայայտում է «նորմ-ախտաբանութիւն» առանցքի միջոցով, որտեղ իւրաքանչիւր մարդ որոշակի տեղ է զբաղեցնում (Э. Дюркгейм, *Социология. Ее предмет, метод, предназначение* [Սոցիոլոգիա. նրա առարկան, մեթոդը, նպատակը], 1995, Կանոն հրատ., Մոսկուա, էջ 23-32): Եթէ դիտարկենք հասարակութեան շահերի կամ պահանջմունքների տեսանկիւնից, ապա մարդը - ըստ նորմերի - պէտք է ունենայ պատշաճեցման բարձր մակարդակ, իսկ հասարակութիւնը՝ այդ մարդու նկատմամբ բարձր պատշաճեցնող յատկութիւն, եւ հակառակը (Э. Дюркгейм, "Ценностные и реальные суждения" [Արժէքային եւ իրական դատողութիւններ], *СОЦИС*, Մոսկուա, 2:1991, էջ 109-10):

սահմանւում է որպէս կրթութեան ոլորտում անհրաժեշտ հիմնաչափերի իւրացում: Սուրիահայերի համարկումը կրթութեան ոլորտում կարող ենք քննարկել նաեւ Հարթմուտ Էսսէրի եւ Ֆրիտրիխ Հեքմանի առաջարկած տիպաբանութեան շրջանակներում, մասնաւորապէս, կառուցուածքային համարկման, որը ենթադրում է սուրիահայերի ներառում հայաստանեան կրթական համակարգ, մշակութային համարկում, որի ժամանակ նրանք իւրացնում են հայ հասարակութեան լեզուն ու հիմնաչափերը, ընկերային համարկում, որի դէպքում խօսքը վերաբերում է այս համակարգում փոխադարձ շփումների մասին[4]:

Սոյն յօդուածում նպատակ ունենք բացայայտել սուրիահայերի՝ հայաստանեան կրթական համակարգին համարկուելու առանձնայատկութիւնները: Ուսումնասիրութիւնն իրականացուել է «Սուրիահայերի սոցիալ-մշակութային յարմարման հիմնախնդիրները ՀՀում» ատենախօսական աշխատանքի շրջանակներում, որում առաջադրուած խնդիրները վերաբերւում էին ՀՀում նրանց յարմարման գործընթացի տարբեր երեսակներին՝ փաստաթղթային, կեցութեան, ընկերային-կենցաղային եւ նիւթական խնդիրներ, լեզուական, կրթական եւ աշխատանքային դժուարութիւններ, տեղի մշակութային հիմնաչափերի եւ աւանդոյթների չիմացութիւն, արժէհամակարգի տարբերութիւններ, հայաստանցիների հետ հաղորդակցութեան բարդութիւններ եւն.: Դաշտային նիւթը հաւաքուել է 2012-18ին անցկացուած հետազօտութիւնների արդիւնքում՝ համադրելով քանակական եւ որակական մեթոդները:

1. Քանակական հետազօտութիւն (2014ին)՝ կիսաձեւայնացուած հարցազրոյցներ սուրիահայերի հետ Երեւանում, Արագածոտնի, Արարատի, Արմաւիրի, Կոտայքի, Շիրակի մարզերում:

2. Որակական հետազօտութիւն. ա) խորին հարցազրոյցներ սուրիահայերի հետ (2014ին), հարցուողի ընտրութեան չափանիշներ են հանդիսացել սեռը, տարիքը եւ զբաղուածութեան կարգավիճակը: բ) Փորձագիտական հարցազրոյց (2018ին), որը հնարաւորութիւն է տուել լրացնել եւ բազմակողմանի դարձնել ուսումնասիրուած խնդրի շուրջ ստացուած տեղեկատուութիւնը: Փորձագէտներ են հանդիսացել պետական հաստատութիւնների եւ հասարակական կառոյցների ներկայացուցիչներ, ոլորտից քաջատեղեակ մասնագէտներ: գ) Փաստաթղթերի որակական վերլուծութիւն, մասնաւորապէս, առցանց պարբերականների ուսումնասիրութիւն:

Հետազօտական տուեալները համադրուել են նաեւ այլ հետազօտութիւնների տուեալների երկրորդային վերլուծութեան հետ, որոնք, ի թիւս այլ

[4] H. Esser, “Does the “New” Immigration Require a “New” Theory of Intergenerational Integration?” *International Migration Review*, 3(38):2004, էջ 1126–59. նաեւ՝ F. Heckmann, W. Bosswick, *Integration and Integration Policies*, European Forum for Migration Studies, Bamberg, 2005, էջ 9:

հարցերի, վերաբերում են սուրիահայերի կրթական խնդիրներին: Յիշեալ ուսումնասիրութիւններն անցկացուել են ՀՀում գործող միջազգային կառոյցների եւ անհատ հետազօտողների կողմից[5]:

ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՒ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՄԱՐԿՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐԸ

Կրթութեան ոլորտում համարկումը սկսւում է նախադպրոցական հաստատութիւններից. մեծ թիւ են կազմում այն ընտանիքները, որոնց երեխաները յաճախում են համապատասխան կրթական հաստատութիւններ՝ պետական եւ մասնաւոր մանկապարտէզներ (համապատասխանաբար, 42.5%, 2,0%, աղիւսակ 1): Չնայած սուրիահայ երեխաների դպրոց եւ մանկապարտէզ ընդունելութեան դիմումները քննարկուել են արտահերթ, այնուամէնայնիւ, տեղահանուած անձանց մեծ մասի Երեւան քաղաքում կամ դրա մերձակայքում բնակուելու պատճառով՝ Երեւան քաղաքի մանկապարտէզներում անհրաժեշտ թուով տեղերի պակաս կայ[6]:

Աղիւսակ 1. Կրթական հաստատութիւններ յաճախող սուրիահայերը, %

Կրթական հաստատութիւնները	Յաճախում
Պետական մանկապարտեզ	42,5
Մասնաւոր մանկապարտեզ	2,0
Պետական դպրոց	34,0
Մասնաւոր դպրոց	0,0
Ուսումնարան, քոլեջ	2,0

[5] V. Hovyan, “Syrian-Armenians’ Issues in Armenia,” (https://orbeli.am/en/post/256/2019-07-31/Syrian-Armenians%E2%80%99+Issues+in+Armenia). նաեւ՝ “Syrian-Armenians in Armenia: Problems and Prospects, Open Society Foundations Armenia” (https://www.osf.am/wp-content/uploads/2017/11/Syrian-Armenians-in-Armenia.-Repatriates-or-Refugees-policy-brief.pdf). նաեւ՝ “Assessment of the Situation of Asylum Seeking, Refugee, and Displaced Children in Armenia,” UNICEF Armenia, Yerevan 2016 (http://children.ombuds.am/wp-content/uploads/2017/09/Situation_of_-Refugee_Children_-Armenia_2016_eng.pdf). նաեւ՝ “Economic Integration of Syrian Armenians in Armenia,” Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH, 2017 (EISRA_Needs_Assessment_Report_Final-1.pdf). նաեւ՝ Լ. Տանաջեան, *Սուրիահայերի ինտեգրման փորձառութիւնը Հայաստանում. խնդիրների յաղթահարման մեխանիզմները*, Բաց հասարակութեան հիմնադրամներ-Հայաստան, Երեւան, 2018:

[6] «Սուրիական հակամարտութեան հետեւանքով հարկադիր տեղահանուած եւ Հայաստանում պաշտպանութիւն հայցող անձանց ինտեգրման 2018-2022 թուականների ռազմավարութիւն» Իրաւական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, (https://www.e-draft.am/projects/679/about) 25-06-2019:

Պետական բուհ	13,0
Մասնաւոր բուհ	2,0

Բացի պետական եւ մասնաւոր մանկապարտէզներից, Երեւանում գործում են նաեւ տարբեր կենտրոններ՝ նախադպրոցական տարիքի երեխաների կրթական համարկմանը նպաստելու համար: Դրանցից են, օրինակ, ամառային նախադպրոցական կենտրոնը Սուրիայից եկած երեխաների համար[7], նաեւ Երեւանի թիւ 1 եւ 21 դպրոցներում բացուած խմբակը՝ նախատեսուած 5-6 տարեկան տեղացի եւ սուրիահայ երեխաների համար[8]:

Երբ մեծ թուով սուրիահայեր ապաստան գտան ՀՀում, 2012ին կառավարութիւնը որոշակի աշխատանքներ նախաձեռնեց նաեւ հանրակրթութեան կազմակերպման ուղղութեամբ: 2018ի տուեալների համաձայն՝ Երեւանի 73 հանրակրթական ուսումնական հաստատութիւններում սովորել է 470, իսկ մարզերի 54 հանրակրթական ուսումնական հաստատութիւններում՝ 174 սուրիահայ աշակերտ[9]: Նկատենք, որ մեր հետազօտական տուեալներով՝ ընտանիքների 34%ն է ունեցել դպրոցահասակ երեխաներ (աղիւսակ 1): Նրանցից շատերը, որոշելով ապագան կապել ՀՀի հետ, մտածել են երեխաներին կրթութեան տալու մասին: 2012ի ուսումնական գործընթացի նախաշէմին կրթութեան կազմակերպման երեք տարբերակ է առաջարկուել նախարարութեան կողմից.-

1. Սուրիահայ երեխաները սովորեն հայկական դպրոցում, որի նպատակով Երեւանի Ստ. Շահումեանի անուան թիւ 1 դպրոցում բացուել են արեւելահայերէնի ուսուցման արագացուած դասընթացներ:
2. Դպրոցների որոշ դասարաններում իրականացուեն արեւմտահայերէնի ուսուցում: Որոշուել է, որ դասագրքերն ու կրթական ծրագրերը բերուեն Սուրիայից, իսկ երեխաներին դասաւանդեն այնտեղից եկած ուսուցիչները՝ գործընթացում ներգրաւելով նաեւ համապատասխան որակաւորում ունեցող արեւմտահայերէնի մասնագէտներ:
3. Սուրիական դասարաններ ստեղծուեն եւ կրթութիւնը շարունակեն սուրիական ծրագրով՝ համադրելով հայկականի հետ: Նման ծրագրով

[7] Կենտրոնը գործում է ՄԱԿի մանկական հիմնադրամի օժանդակութեամբ եւ ֆինանսաւորմամբ (*ՄԱԿ ՓԳՀ մտահոգութեան առարկայ հանդիսացող անձանց աջակցութիւն տրամադրող կազմակերպութիւնների ուղեցոյց*, ՄԱԿ ՓԳՀ, 2015, էջ 57):

[8] Ծառայութիւնն իրականացնում է «Save the children international» հայաստանեան ներկայացուցչութիւնը (նոյն, էջ 56):

[9] ՀՀ Սփիւռքի նախարարութեան 2018ի գործունէութեան հաշուետուութիւն (http://www.mindiaspora.am/res/Hashvetvutyunnner/2018/tarekan/2018_hashvetvutyun_SN.pdf), մատչում՝ 10 Մարտ 2019:

պէտք է սովորեն այն աշակերտները, որոնք մտադիր են յետագայում վերադառնալ Սուրիա[10]:

Արդիւնքում, Երեւանի Նար Դոսի անուան թիւ 14 հիմնական դպրոցում բացւում է սուրիահայ երեխաների համար նախատեսուած «Կիլիկեան» դպրոցը: Արաբերէնով դասաւանդուող դպրոցում 2012-13 կրթաշրջանում սովորել են 1-9րդ դասարանի 265 սուրիահայ երեխաներ, դասաւանդել են Սուրիայից եկած ուսուցիչներ, բազմացուել եւ աշակերտներին տրուել են համապատասխան դասագրքեր: Դպրոցի ստեղծումը նախաձեռնել է Սուրիայում գործող «Կիլիկիա» ԲԿը, ֆինանսապէս աջակցելու խնդիրը ստանձնել է նաեւ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւնը: Սակայն դպրոցը 2013 կրթաշրջանից այլեւս չի գործել՝ հիմքում ունենալով ոչ միայն ֆինանսական, այլեւ իրաւական պատճառներ: Մեր փորձագիտական հարցազրոյցներից մէկում արձանագրուեց հետեւեալ փաստը.

> Նրանք (Կիլիկեան դպրոցը – Գ.Յ.) չունէին սեփական կնիքը, որ կարողանային ատեստատներ տալ եւն.: Դրա համար խորհուրդ տրուեց, որ մեր դպրոցի շրջանակում ինտեգրուի այդ վարժարանը: Ճիշտն ասած, մենք սկսեցինք դա հարթ կատարել, բայց, ըստ երեւոյթին, այն, որ ինքը չէր կոչուելու տնօրէն, դուր չեկաւ յատկապէս տնօրէնին: Ու, կարծես, ինքը կազմակերպեց, որ դպրոցը փակուի (փորձագէտ, թիւ 14 դպրոցի փոխտնօրէն)[11]:

Սակայն, «Կիլիկեան» դպրոցի նախկին տնօրէնի հետ հարցազրոյցից էլ պարզ դարձաւ, որ այն ի սկզբանէ ժամանակաւոր ծրագիր է եղել, իսկ ֆինանսաւորումը՝ նախատեսուած ընդամէնը մէկ տարուայ համար: Բացի այդ, ծրագիրը չէր նախատեսում սուրիահայերի ներառում հայաստանեան կրթական համակարգ[12] եւ չէր նպաստելու նրանց ընկերամշակութային համարկմանը:

Վարժարանի փակուելուց յետոյ, նպատակ հետապնդելով հիմնական գիտելիքներ ապահովել Սուրիա վերադարձող երեխաների համար, սկզբում՝ որպէս ուսումնական ծրագրի մաս, յետոյ՝ արտադասարանական խմբակի տեսքով չորս տարի շարունակ թիւ 14 դպրոցի տարրական դասարաններում ուսուցանուել է արաբերէն: 2013-14 կրթաշրջանից աշակերտները ցրուել են տարբեր ուղղութիւններով: Ըստ փորձագէտի գնահատականի՝ նրանց մի մասը հեռացել է ՀՀից, միւս մասը՝ տեղափոխուել Երեւանի տարբեր դպրոցներ:

Հանրակրթութեան մատչելիութեան ապահովմանն ու կրթութեան աջակցութեանն ուղղուած բազմաթիւ ծրագրերի իրականացման եւ կենտ-

---

[10] Հրանուշ Յակոբեան, «Ինչպէ՞ս կը լուծուի սուրիահայ երեխաների կրթութեան հարցը», *tert.am*, 22 Օգոստոս 2012:

[11] Գ. Յակոբեան, Դաշտային ազգագրական նիւթեր (ԴԱՆ) 2018, ՀԱԻ, էթնոսոցիոլոգիայի բաժնի արխիւ:

[12] *Assessment of the Situation of Asylum Seeking, Refugee, and Displaced Children in Armenia*, UNICEF Armenia, Երեւան, 2016, էջ 37:

րոնների բացման հետ մէկտեղ՝ երեխաների կրթական համարկումն ապահովելու նպատակով արտադասարանային պարապմունքներ են կազմակերպուել նաեւ մի շարք դպրոցներում: Փորձագէտը մասնաւորապէս նշում է, որ առաջին տարուանից առ այսօր, եւ յատկապէս, երբ նոր աշակերտներ են ընդունւում դպրոց, ուսուցիչները պարապում են նրանց հետ, որպէսզի կարողանան յաղթահարել ուսողութիւնից, ռուսերէնից եւ այլ դասանիւթերից գիտելիքի ձեռքբերման, արեւելահայերէնի ընկալման դժուարութիւնները: Չնայած ուսուցիչները ոչ-միշտ են ֆինանսական փոխհատուցում ստանում դրա դիմաց, սակայն, տեսնելով սուրիահայ երեխաների յաջողութիւններն ու կրթական համակարգում համարկուելու քայլերը, գոհանում են իրենց աշխատանքի արդիւնքից: Եթէ սուրիահայ շրջանաւարտը դպրոցն աւարտելիս թերանում է արեւելահայերէն գրելու մէջ՝ ունակութիւնները հասցնելով բաւարարի, ապա նրա բանաւոր խօսքն այնքան է զարգանում, կատարելագործւում, որ «ապշեցնում» է ու «հիացնում» ուսուցչական անձնակազմին:

Սրա հետ մէկտեղ, սուրիահայերը բարձրաձայնում են կրթական ծրագրերի տարբերութեամբ պայմանաւորուած խնդիրների մասին: Նախ, որոշ դասանիւթեր նորութիւն են երեխաների համար, օրինակ, ռուսաց լեզուն: Դպրոցական ծրագրից դուրս կազմակերպուող դասընթացներն ամբողջութեամբ չեն կարող լուծել խնդիրը, քանզի դրանք ոչ միայն կանոնաւոր եւ համատարած չեն, այլեւ քչերն են կամքի ուժ ցուցաբերում՝ պահանջուած գիտելիքները իւրացնելու համար: Բնագիտական դասանիւթերի պարագայում գիտական լեզուն անհասկանալի է երեխաների մեծ մասին, ինչն էլ յետագայում խոչընդոտ է դառնում նրանց համար՝ մասնագիտանալու այդ ուղղութեամբ: Մարդասիրական դասանիւթերը չնայած հասկանում, սակայն դժուարութեամբ են վերաշարադրում, իսկ մեծ ծաւալներով դասանիւթի իւրացումն արդէն լուրջ խնդիր է արեւելահայերէնին վատ տիրապետող սուրիահայ երեխաների եւ նրանց ծնողների համար: Եթէ ծնողներից կամ ընտանիքի անդամներից մէկը ժամանակին կրթութիւն է ստացել ՀՀում, ապա հարցը հեշտութեամբ լուծւում է.

> Ո՛չ մեզ մօտ՝ ես, ամուսինս կամ քոյրս, որ այստեղ եկել, սովորել է, ո՛չ էլ երեխաներս, այսինքն՝ աղջիկս էլ, տղաս էլ, ոչ մէկ դժուարութիւն չեն ունեցել լեզուական: Ո՛չ էլ թոռնիկս, որ եկաւ ու այստեղ առաջին դասարան ընդունուեց: Ե՛ւ շատ լաւ սովորում է, ե՛ւ շատ լաւ յարմարուել է: Մենք չունենք էդ հարցը, որովհետեւ, նախ, լաւ հայերէն ենք խօսում, երկրորդ՝ օտար չէ մեզ. հեռուստատեսութեամբ, գրքերով եւն. միշտ էլ կապ եղել ա արեւելահայերէնի հետ (62 տ. կին, ք. Երեւան)[13]:

Ինչպէս ցոյց են տալիս մեր հետազօտութեան արդիւնքները, ՀՀ կառավարութեան եւ այլ կառոյցների կողմից կազմակերպած արեւելահայերէնի

[13] Յակոբեան, ԴԱՆ, 2014:

դասընթացներին մասնակցութիւն է ունեցել միայն հարիւրից մէկը (աղիւսակ 1)։ Այս ցուցանիշը, իհարկէ, փոքր է՝ հաշուի առնելով այն, որ Սուրիայում հայ աշակերտները, արաբերէնով անցնելով դպրոցական դասանիւթերը, ՀՀ հանրակրթական համակարգում խնդիրներ են ունենում հիմնականում լեզուի վատ իմացութեան պատճառով։ Ի տարբերութիւն արեւելահայերէնի, օտար լեզուի (հիմնականում ռուսերէն, անգլերէն) դասընթացներին մասնակցողների թիւը մեծանում է՝ հասնելով 22.0%ի։

Աղիւսակ 1. Կրթական-մասնագիտական դասընթացներին մասնակցութիւնը, %			
Դասընթացները	Այո	Ոչ	Ընդամէնը
Արեւելահայերէնի դասընթաց	1.0	99.0	100.0
Օտար լեզուի դասընթաց[14]	22.0	78.0	100.0
Աշխատանքի հետ կապուած վերապատրաստում	13.0	87.0	100.0
Մասնագիտութիւն ձեռք բերելու դասընթաց	4.0	96.0	100.0

ՀԱՄԱՐԿՄԱՆ ՄՕՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ ՍՈՒՐԻԱՀԱՅԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿՐԹՈՒԹԵԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

2012ին ՀՀ կառավարութիւնը քաղաքականութիւն է մշակում նաեւ սուրիահայ ուսանողների կրթութեան մատչելիութիւնն ապահովելու նպատակով։ Ինչպէս տեսնում ենք վերեւում բերուած աղիւսակ 1ի տուեալներից, սուրիահայ ընտանիքների 13%ն առնչւում է պետական բուհերի հետ։ Նկատենք նաեւ, որ հարիւրից երկու ընտանիքներում երիտասարդները յաճախում են մասնաւոր բուհեր եւ նոյնքան երիտասարդներ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններ։ Սուրիայում բուհական ուսումը կիսատ թողած ուսանողներին հնարաւորութիւն է ընձեռնուել նոյն մակարդակից (դասարանից) ուսումը հայաստանեան բուհերում շարունակելու համար։ Միւս կողմից, դիմորդների ընդունելութիւնը ՀՀ բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններ իրականացուել է պարզեցուած կարգով[15].

> Ես սկիզբը, որ ասեցի՝ ինչպիսի մասնագիտութիւն ուզում եմ, պտտուեցայ, նայեցի՝ որը լաւ ա, որը լաւը չէ, Երեւանի Պետական Համալսարան ընդունուեցայ։ Վերջը ասեցին՝ ինչի՞ մանկավարժական չես դիմում, էնտեղ աւելի լաւ ա։ Գնացի, փոխեցի մանկավարժական։ Շատ հեշտ էր, ինձ զանգեցին, ասեցին՝ էսինչ թուականին կու գաս, կը յանձնես քննութիւնը, ասեցի՝ լաւ։ Գնացի, մի թելադրութիւն տուեցին։ Մի երկու օրէն վերջ ասեցին՝ կու գաք, պատասխանները կը վերցնէք։ Յետոյ որ գնացի, ասացին, որ ընդունուել եմ (22 տ. կին, ուսանող, ք. Երեւան)[16]։

[14] Դասընթացների 55%ը՝ ռուսերէն, 35%ը՝ անգլերէն, իսկ 10%ը այլ լեզուներով է։

[15] «Սուրիական հակամարտութեան հետեւանքով»։

[16] Յակոբեան, ԴԱՆ, 2014։

2012-13 կրթաշրջանից սուրիահայ ուսանողների վարձավճարի չափը սահմանուել է ՀՀ քաղաքացիների համար սահմանուած վարձավճարի չափով: Պետութիւնը, գործակցելով բարեգործական կազմակերպութիւնների հետ, իրականացնում է նրանց ուսման վարձավճարների փոխհատուցման քաղաքականութիւն: Սկզբնական շրջանում փոխհատուցումն իրականացուել է ամբողջապէս, այնուհետեւ՝ զեղչերով, ընդ որում, տարէցտարի այդ զեղչային շէմը նուազել է: Օրինակ, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, Գալուստ Կիւլպենկեան Հիմնարկութիւնը եւ ՀՀ կառավարութիւնը փոխհատուցել են ՀՀ բարձրագոյն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատութիւններում սովորող 280 սուրիահայ ուսանողների 2013-14 կրթաշրջանի ուսման վճարները՝ իւրաքանչիւրը մինչեւ 1/3ի չափով[17]: 2016-17 կրթաշրջանին նոյն ծրագրով փոխհատուցուել է 436 սուրիահայերի ուսման վարձավճարների 70%ը, 2018-19ին՝ 294 ուսանողների վար-ձավճարների 50%ը: 2019-20ին՝ նախատեսուել է վարձը փոխհատուցել միայն 40%ով[18]:

Կրթաթոշակներ են տրամադրուել/տրամադրւում նաեւ «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի, Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերութեան կողմից[19]: Որոշում է կայացուել նաեւ ուսանողական հանրակացարաններում առաջնահերթութեան կարգով համապատասխան սենեակներ ապահովել սուրիահայ ուսանողների համար[20]:

Հետազօտութեան շրջանակներում բացայայտել ենք նաեւ սուրիահայ ուսանողների՝ կրթութեան ոլորտում ունեցած խնդիրները, սակայն ոչ-այնքան դրամական, որքան ծրագրերի տարբերութեան, լեզուական առանձնայատկութիւնների եւ նոր միջավայրին յարմարուելու դժուարութիւնների առնչութեամբ: Ծրագրերի տարբերութիւնը մտահոգութեան առարկայ է դառնում յատկապէս կրթութեան որակի, արդիւնաւէտութեան գնահատման առումով:

---

[17] Հասարակութիւն, «Սուրիահայերի կրթավճարը կը փոխհատուցուի», a1plus.am, Հոկտեմբեր 07, 2013:

[18] Վ. Հովեան, «Սուրիահայերի հիմնախնդիրները Հայաստանում» https://orbeli.am/hy/post/246/2019-07-10/%D5%8D%D5%AB%D6%80%D5%AB%D5%A1%D5%B0%D5%A1%D5%B5%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B0%D5%AB%D5%B4%D5%B6%D5%A1%D5%AD%D5%B6%D5%A4%D5%AB%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%A8%20%D5%80%D5%A1%D5%B5%D5%A1%D5%BD%D5%BF%D5%A1%D5%B6%D5%B8%D6%82%D5%B404 Սեպտեմբեր 2020:

[19] *ՄԱԿ ՓԳՀ մտահոգութեան առարկայ,* էջ 53-54:

[20] Հասարակութիւն, «Կոնկրէտ դպրոցներ՝ սուրիահայերի համար», a1plus.am, 27 Յուլիս 2012:

Ուսումս արաբերէն էր համալսարանում: Երրորդ կուրս վերջացուցի, եկայ հոս ալ երրորդ կուրս նստայ: Հոս, որ հիմա երրորդ կուրս անցնում ենք, առաջին կուրսի մէջ անցել եմ Սուրիայում (21 տ. տղամարդ, ուսանող, ք. Երեւան)[21]:

Ըստ սուրիահայերի՝ ՀՀում կրթութեան համեմատաբար բարձր մակարդակ ապահովում են արեւմտեան կրթական համակարգով աշխատող բուհերը, ինչն էլ բաւարարում է որակեալ կրթութիւն ստանալու նրանց պահանջմունքը՝ միաժամանակ լուծելով լեզուական խնդիրը:

Այնտեղ էլ էր անգլերէն լեզուով, եւ շատ գոհ եմ: Ես Բէյրութ եղած եմ, Մոսկուայի համալսարաններէն ալ քիչ մը գաղափար ունիմ, այստեղի Ամերիկեան Համալսարանը գրեթէ բանով մը չի պակսիր միւս ամերիկեան որեւէ քաղաքի համալսարաններէն: Միայն սկիզբը, որ եկաւ, քիչ մը արեւելահայերէնի եւ արեւմտահ-յերէնի դժուարութիւն ունեցաւ, բայց հիմա արդէն իրենց պէս արեւելահայերէնը բաւական չափով կը խօսի տղաս» (71 տ. տղամարդ, ք. Երեւան)[22]:

Կրթութեան արդիւնաւէտութեան ցուցանիշ է դիտարկւում նաեւ գիտելիքի ստուգման հարցում ուսուցիչների, դասախօսների առարկայական մօտեցումը, որը թոյլ է կամ շատ դէպքերում բացակայում է: Պատճառը ստեղծուած իրավիճակում սուրիահայ աշակերտներին եւ ուսանողներին ինչ-որ կերպ օժանդակելու նրանց ցանկութիւնն ու պատրաստակամութիւնն է, ինչը հակառակ արդիւնքի է յանգեցնում՝ արհեստական գնահատականներով «խաբելով» նրանց գիտելիք ստանալու գործընթացի մէջ: Այս առումով դիպուկ է յատկապէս հարցուողներից մէկի խօսքերը.

Քիչ մը՝ որպէս սուրիացի, խղճալու, մեղքնալու դէպքեր եղեր են, բայց քիչ մըն ալ էտի ժխտական ազդեցութիւն կը թողնի՝ ամենաթողութիւն կը ստեղծէ: Հիմա ես շատ ընկերներ ունիմ, որ ունին աշակերտներ՝ 9րդ, 11րդ, 6րդ, ամէն դասարանէն: Ուրախ են փոքրերը: Ասում եմ՝ ինչու՞ ուրախ էք, ասում են՝ մեզի շատ դաս չկայ: Մէջները թուլութիւն ստեղծել են, ընճայել են իրենց, որ իբր իրենք շատ դժուարութիւն ունեցեր են լեզուն ընկալելու հարցում, ոչինչ, որ քիչ մը չեն սորվիր, թերանան՝ իմաստ մը չունի: Բայց դա լաւ չէ, ժամանակի կորուստ է (56 տ. տղամարդ, ք. Երեւան)[23]:

Նոյն խնդրին անդրադարձել է նաեւ ՄԱԿի մանկական հիմնադրամն իր զեկոյցում՝ նշելով, որ դրական խտրականութեան այդ դրսեւորումները երկարատեւ հեռանկարում բացասական ազդեցութիւն կարող են ունենալ սուրիահայ երեխաների կրթական մակարդակի եւ, ընդհանուր առմամբ, ապագայի վրայ[24]:

Դպրոցական եւ համալսարանական միջավայրն անփոխարինելի միջոց է սուրիահայ պատանիների ու երիտասարդների համար հայաստանցիներ հետ հաղորդակցուելու առումով, սակայն այս գործընթացում որոշ խո-

[21] Նոյն:

[22] Նոյն:

[23] Նոյն:

[24] *Assessment of the Situation of Asylum Seeking*, էջ 38:

չընդոտներ կարող են լինել՝ լեզուական եւ արժէհամակարգային տարբերութիւնների պատճառով, ինչպէս նաեւ կարծրատիպերի, որոնք ազդում են նրանց ընկալումների եւ յարաբերութիւնների վրայ: Այդ հաղորդակցութիւնը, մի կողմից, կարող է բերել միմեանց ճանաչման եւ ընդունման, միւս կողմից, սուրիահայերի օտարման ու մեկուսացման: Մեր հետազօտութեան արդիւնքները վկայում են այս երկու երեւոյթների մասին, որոնք տարբեր մակարդակներով առկայ են կրթական միջավայրում.

> Երեւանցի կուրսեցիներիս հետ շփումը էդքան բարձր չեմ կարայ ասեմ: Ես որ մի բան եմ ասում կամ իմ լեզուով եմ խօսում, շատ չեն հասկանում ինձ, բայց հիմա սկսել են հասկանալ: Բայց էնպէս չի, որ վատն են երեխէքը. շատ լաւն են, շատ ջերմ, մի բանի օգնութիւն ունենամ, ինձ օգնում են: Ասում են՝ կարիք ունես, քեզ կ'օգնենք դասերու մէջ (22 տ. կին, ուսանող, ք. Երեւան)[25]:

ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձելով ամփոփել առաջադրուած խնդրի վերլուծութիւնը՝ նշենք, որ 2012ից իվեր ՀՀ կառավարութեան կողմից որոշակի քայլեր են իրականացուել սուրիահայերի կրթական համարկմանը խթանելու համար.

- «Կիլիկեան» դպրոցի բացում, որը գործել է ընդամէնը մէկ ուսումնական տարի,
- Երեխաների ներգրաւում հանրակրթական հաստատութիւններ,
- Բուի ընդունուելու դիւրին քայլերի մշակում,
- Բուհական համակարգում ուսման վարձավճարների զեղչման քաղաքականութիւն,
- Արեւելահայերէնի եւ ռուսաց լեզուի արագացուած դասընթացների կազմակերպում[26]:
- Սուրիայում ստացած 12ամեայ կրթութեան թէ համալսարանական վկայականների ճանաչում:

Սրա հետ մէկտեղ, ներառուած լինելով հայաստանեան կրթական համակարգ, սուրիահայ աշակերտներն ու ուսանողները յարմարուելու դժուարութիւններ ունեն հիմնականում՝ ճանաչողական (cognitive) եւ հաղորդակցական գործօնների պատճառով: Եթէ տեղացիների հետ հաղորդակցութեան հարցը ժամանակի ընթացքում կարգաւորւում է, ապա ճանաչողական մակարդակի խնդիրները շարունակում են ուղեկցել նրանց:

ՀՀ այժմու կառավարութիւնը 2018-22՝ համարկման ռազմավարութեան մէջ դեռեւս առկայ կրթական խնդիրների լուծման համար ուղենիշ է սահմանել, մասնաւորապէս.-

1. Տեղահանուած անձանց լեզուամշակութային համարկման խնդիրների լուծմանն աջակցութիւնը,

---

[25] Նոյն:

[26] Տե՛ս նաեւ՝ *Համառօտ տեղեկանք սուրիահայերի հիմնախնդիրների մասին*, ՀՀ Սփիւռքի նախարարութուն, Երեւան, Մայիս 2014:

2. Առկայ աղբիւրների սահմաններում մանկապարտէզների սահմանափակ կարողութիւնների հզօրացումը նախադպրոցական տարիքի երեխաների համար,

3. Դպրոցական տարիքի երեխաների համար միջնակարգ կրթութեան, իսկ դիմորդների եւ ուսանողների համար բարձրագոյն կրթութեան մատչելիութեան ապահովումը,

4. Անվճար հիմունքներով կամ զեղչերի կիրառմամբ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական եւ բարձրագոյն կրթութիւն ստանալու հնարաւորութիւնների մատչելիութեան ապահովումը,

5. Տեղահանուած ուսանողների (յատկապէս խոցելի ընտանիքներից) ուսման վարձավճարների մասնակի փոխհատուցման ծրագրերի իրականացումը (գործընկեր կառոյցների համաֆինանսաւորմամբ)[27]:

THE ROLE OF EDUCATION IN INTEGRATING SYRIAN ARMENIANS IN THE ARMENIAN POLITY OF THE REPUBLIC OF ARMENIA

(Summary)

GAYANE HAKOBYAN (gayik20@gmail.com)

Due to the intense fighting and civil war in Syria, some 20,000 Syrian Armenians have taken refuge in the Republic of Armenia during the last decade. Currently there are around 8-10,000 Syrian Armenians in Armenia.

The paper highlights the core difficulties most of the Syrian Armenian refugee students have faced in enrolling in the educational system of Armenia. The difficulties have been due to differences in a) the language of instruction (Arabic vs. Armenian), b) language of communication (Western vs. Eastern Armenian), c) curriculum (Syrian vs. Armenian).

The paper analyses the integration process of the Syrian-Armenian refugees in Armenia and assesses the steps taken by the government to reduce the difficulties at all levels of education. However, obviously the steps taken have not given the results expected. The paper concludes that while the issue of communication with locals has been resolved over time, the cognitive-level problems - differences in educational programs and language features - continued to be a hindrance.

[27] «Սուրիական հակամարտութեան հետեւանքով»:

ՄԻՔԱՅԷԼ ՎՐԴ. ՉԱՄՉԵԱՆԻ *ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ* ԳՐՔԻ ԹԻՖԼԻՍԻ ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՄԻԱԿ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԻՐՈՒՀԻ ՍԻՐԵԿԱՆԵԱՆ (tiruhi.sirekanyan@list.ru)

ՄՈՒՏՔ

Ներսիսեան հոգեւոր դպրոցի տպարանի կարեւորագոյն հրատարակութիւններից մէկը Մխիթարեան միաբանութեան անդամ Միքայէլ վրդ. Չամչեանի *Քերականութիւն հայկազեան լեզուի* գիրքն է, որ Թիֆլիսում հրատարակուել է 1826ին: Այստեղ քննական-համեմատական-վերլուծական մեթոդի կիրառման օգնութեամբ վիճարկում ենք.-

ա) Մատենագէտ Հայկ Դաւթեանի կողմից նոյն տարուայ ընթացքում նոյն գրքի երկու հրատարակութեան գաղափարը: Մեր կարծիքով, Կոստանդնուպոլսում 1779ին տպագրուած գրքի արեւելահայերէն տարբերակը 1826ին Թիֆլիսում հրատարակուել է մէկ անգամ:

բ) Ապացուցում ենք, որ Վենետիկում եւ Թիֆլիսում տպագրուած գրքերը յար եւ նման են իրար եւ առաջին հայեացքից մասնագէտներն անգամ դրանք չեն տարբերում, եթէ չնայեն տիտղոսաթերթերին, որտեղ մի դէպքում նշուած է Վենետիկ, միւս դէպքում՝ Թիֆլիս: Բացարձակ նոյն տառատեսակներն են, անգամ նոյն ձեւաւորումը, գրեթէ նոյն նկարները եւ նոյն զարդանախշերը: Այս նոյնականութիւնը խախտուած է մէկ պարագայով: Վենետիկում տպագրուած օրինակը դասական գրաբարով է, Թիֆլիսում տպագրուած օրինակը՝ արեւելահայերէնով: Գրքի տառատեսակների, ձեւաւորման նոյնականութիւնը եկել է մէկ վայրից՝ Ամստերդամից, որտեղ այդ տառատեսակները շուրջ մէկ դարի ընթացքում՝ 1650-1750ականներին ստեղծուել, բարելաւուել ու օգտագործուել են: Ամստերդամից դրանց տառահայրերը, տառամայրերը, պատրաստի տառերի մի մասը Վենետիկի Մխիթարեան միաբանութեան հիմնադիր Մխիթար աբբահօր ջանքերով, 1730ականներին, գնման միջոցով յայտնուել է Վենետիկում, մի մասը - դարձեալ գնման միջոցով - 1819ին յայտնուել է Թիֆլիսում:

ՄԻՔԱՅԵԼ ՎՐԴ. ՉԱՄՉԵԱՆՑԻ *ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ* ԳՐՔԻ ԹԻՖԼԻՍԵԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

1824ի Նոյեմբերի 12ին Գէորգ աղա Երեմեան Արծրունու[1] միջնորդութեամբ մահտէսի Կոսպար Բարսեղեան Չարուխչեանը[2] Թիֆլիսում կտակ

[1] Գէորգ աղա Երեմեան Արծրունի (1771-1830), հայ իշխան, ազնուական, մեծահարուստ, բարեգործ: Սերել է Վանի Արծրունեաց թագաւորական գերդաստանից: 1813ին ընտանիքով Վանից տեղափոխուել է Թիֆլիս: Զբաղուել է խոշոր առեւտրական գործունէութեամբ: Մտերմացել է Վրաստանի հայոց թեմի առաջնորդ

Քերականութիւն հայկազեան լեզուիի վենետիկեան եւ թիֆլիսեան հրատարակութեանց անուանաթերթերն ու ներքին էջերից օրինակներ

Ներսէս Աշտարակեցու հետ եւ առեւտրական գործունէութեանը զուգահեռ զբաղուել մշակութանպաստ բարեգործութեամբ (Ա. Երիցեանց, *Գրիգոր Արծրունու եւ նրա քսան հինգ տարւայ գրական գործունէութեան առիթով (1865-1890)*, տպ. «Արօր» Տ. Նազարեանի, Թիֆլիս, 1890, էջ 4-34. նաեւ՝ Խ. Մալումեան, *Մտքի մշակը. Գրիգոր Արծրունու գրական գործունէութեան 25-ամեակի առիթով*, տպ. «Արօր» Տ. Նազարեանի, Թիֆլիզ, 1890, էջ 2. նաեւ՝ Հ. Տէրաստուածատրեանց, *Բառարան հայ կենսագրութեանց (հայագէտներով), 1441-1904, պրակ առաջին*, արագատիպ Ա. Քութաթելաձէի, Թիֆլիզ, 1904, էջ 150-51. նաեւ՝ Գ. Ստեփանեան, *Կենսագրական բառարան (հայ մշակոյթի գործիչներ), հտր. Ա*, Հայաստան հրատ., Երեւան, 1978, էջ 151:

[2] Գէորգ աղա Երեմեան Արծրունու բարեկամ-համերկրացի:

է կազմել: Նա իր հսկայական ունեցուածքը միքանի բաժիններով կտակել է առաջին կէտով իր հարազատներին, երկրորդ կէտով՝ Թիֆլիսի 17 հայկական եկեղեցիներին, ապա՝ Վանի տարածքի եկեղեցիներին եւ եւս մի կէտով՝ Թիֆլիսում Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցու կառուցած ուսումնարանին: Կտակում մասնաւորապէս նշուել է.

> Նորակառոյց Վարժարանի Հայոց աստ ի Թիֆլիզ քաղաքի՝ յատկացուացեն չորս հազար վեց հարիւր արծաթէ մանեթ, եւ սովին գումարաւ գնեալ զանշարժ կայս, զեկամուտ նորին ամի ամի պիտոյացուացեն յաղագս Վարժարանին յաւիտեանս ժամանակաց: Վասն յիշատակի իմոյ ի Տպարանի նոյն Վարժարանի տպել տացեն ի պէտս աշակերտացն զՔերականութ/են/ի որքան եւ հարկաւոր իցէ, եւ զայս Կտակ իմ տպեսցեն ի նոյն Քերականութեան, եւ զարդիւնս յառաջացեալս ի վաճառմանէ նոցա, յատկացուացեն ի մշտնջենական օգուտ նոյն Տպարանին, եւ յամենայն գիրս տպեցեալս անդ՝ անջինջ պահպանեսցեն յիշատակ անուան իմոյ եւ ծնողաց իմոց:

Կտակակատարներ են նշանակուել Վրաստանի թեմի առաջնորդ Ներսէս արք.ը, Գէորգ Երեմեան Արծրունին, Յարութիւն Շերմազան-Վարդանեանը:

Կտակատէրը հրատարակուելիք քերականութեան գրքի ընտրութիւն չի կատարել, թողել է հոգեւոր դպրոցի հայեցողութեանը: Ներսէս արքեպիսկոպոսը որոշել է տպագրել Մխիթարեան միաբանութեան անդամ Միքայէլ վարդապետ Չամչեանցի[3] 1779ին Վենետիկում տպագրուած *Քերականութիւն հայկազեան լեզուի* գիրքը[4]:

Թէեւ Չարուխչեանի կտակը դեռեւս վիճարկւում էր, սպասուող եկամուտները դեռ չէին ստացւում, այնուամէնայնիւ նրա յիշատակը յաւերժացնելու նպատակով, Ներսէս արք.ի հրամանով, իր անձնական միջոցներից յատկացրած գումարով, 1825ին սկսուել է գրքի տպագրութեան նախապատրաստական աշխատանքը: 600ից աւելի էջը խմբագրուել է, պահպանելով հեղինակային սկզբունքը, դրանում քննարկուող օրինակների բացատրութիւնները բերուել են արեւելահայերէն թարգմանութեամբ: Շարուածքը ամէնայն հաւանականութեամբ իրականացուել է ամբողջ տարուայ ընթացքում եւ բուն տպագրութեան գործը սկսուել է 1826ի կէսերին: Որպէս տպագրութեան տարի 1826ն է նշուած գրքի տիտղոսաթեր-

---

[3] Միքայէլ Աբրահամի Չամչեանց (1738-1823).- պատմաբան, քերական, լեզուաբան, աստուածաբան, մանկավարժ: Մխիթարեան միաբանութեան անդամ: Սովորել է Սուրբ Ղազարի Մխիթարեան վարժարանում (1757-1762): Տիրապետել է յունարէն, լատիներէն, եբրայերէն, իտալերէն, գերմաներէն, ֆրանսերէն, արաբերէն, սանսկրիտ, ասորերէն, պարսկերէն, թուրքերէն եւ այլ լեզուների: Վարել է տարբեր պաշտօններ: Եղել է Մխիթարեան միաբանութեան վարչական մարմնի խորհրդական:

[4] Հայր Միքայէլ վրդ. Չամչեանց, *Քերականութիւն հայկազեան լեզուի*, տպ. Դեմետրեայ Թէոդոսեանց, Վենետիկ, 1779, յԱպրիլի 20, 600 (610) էջ:

թին: Տպագրութեան գործը հաւանաբար աւարտուել է այդ թուականին, բայց կազմարարական աշխատանքը շարունակուել է երկար եւ ամբողջապէս աւարտուել է միայն 1827ին[5]: Գրքի առաջաբանը գրել է Ներսէս արքեպիսկոպոսը: Գրքի 600րդ էջից յետոյ չհամարակալուած երեք թերթերից երկուսի վրայ տպագրուել է Չարուխչեանի կտակը, երրորդ թերթի դիմերեսին՝ տպարանը ձեռք բերելու եւ Ամստերդամից Թիֆլիս փոխադրելու մասին յիշատակարանը[6]:

Տպագրուել է գրքի 1600 օրինակ: Ներսէս արքեպիսկոպոսը կանխաւ որոշել էր գիրքը վաճառել 10 արծաթ ռուբլով եւ գուցէ սկզբնական շրջանում այդ գնով վաճառուել է, բայց աւելի ուշ գրքի գին է սահմանուել 6 արծաթ ռուբլի: Որոշուել է չքաւոր աշակերտներին գիրքը ձրի յատկացնել:

Չամչեանի գրքի ընտրութիւնն ու տպագրութեան կազմակերպումը, այնուամէնայնիւ միանշանակ չի ընդունուել, դարձել է խօսակցութեան նիւթ: Ասել են թէ հարկ չկար Մխիթարեան վարդապետի չոր ու ցամաք աշխատանքը տպել, երբ կարելի էր տպագրել Միքայէլ վրդ. Սալլանթեանի[7] պատրաստած քերականութիւնը: Այս խնդրին Ներսէս արքեպիսկոպոսն արձագանգել է 1827ի Նոյեմբերի 28ին տէր Յովսէփ Ալամդարեանին Երեւանից ուղարկած նամակով: Նա գրել է, որ տուեալ քերականութեան ընտրութիւնը հաստատապէս կատարուել է յանուն իր հիմնած հոգեւոր դպրոցի սովորողների շահերի եւ որ ինքը բամբասանքներով չի առաջնորդւում: Աւելի լաւ պայմանների ժամանակ հաշուի կ'առնուի այլ գրքերի տպագրութեան հարցը եւս:

*Քերականութիւն*ի կազմարարական աշխատանքները բաւական աշխատատար են եղել: Օրինակ, յայտնի է, որ 1827-30ին գրքի 150 օրինակ է պատրաստուել, ինչի համար կազմարարին վճարուել է 53 ռուբլի 25 կո-

---

[5] Ա. Երիցեանց, *1824-1899. Ներսիսեան հոգեւոր դպրոցը*, տպարան Յովհաննէս Մարտիրոսեանցի, Թիֆլիս, 1898, էջ 122:

[6] Հայր Միքայել Վարդապետ Չամչեանց, *Քերականութիւն Հայկազեան լեզուի, յօրինեալ ըստ նախնի ուղղախօսութեան ի Հայր Միքայէլ Վարդապետէ Չամչեանց: Ի Հայրապետու[թեա]ն Տ[եառ]ն Եփրէմի Սրբազնագոյն կաթողիկոսի ա-մ[ենայն] Հայոց*, Տփխիս, Տպարանի Ուսումնարանի Հայոց ընծայելոյ ազնուական Գէորգայ Երեմեան Արծրունւոյ, 1826 թ., 600 էջ:

[7] Միքայէլ վրդ. Սալլանթեան (Յովակիմ, 1782-1851).- քերական, մանկավարժ, եկեղեցական գործիչ՝ արքեպիսկոպոս: Սովորել է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան վարժարանում: 1810-22՝ եղել է Վրաստանի, Աստրախանի, Ղրիմի կաթոլիկ հայերի առաջնորդ: 1822ին ընդունել է Հայ Առաքելական Եկեղեցու դաւանանք: Տիրապետել է լատիներէն, գերմաներէն, ֆրանսերէն, արաբերէն լեզուներին: 1827ին հրատարակել է *Քերականութիւն գրաբառ լեզուիս Հայոց: Նորակարգ ոճով ի պէտս աշակերտաց գերահռչակ ճեմարանին կառուցելոյ ի Մոսկով:... Բաժանեալ յերկուս հատորս, ի փոքր եւ ի մեծ, հտր. Ա, Փոքր քերականութիւն* (տպ. Օգոստեան Սեմէնի, Մոսկուա, 1827) դասագիրքը:

պէկ[8]: Նոյն ժամանակաշրջանում գրքի վաճառքից ստացուել է 406 արծաթ ռուբլի[9]: 1847ին վիճակագրական հաշուետուութեան համաձայն տպարանի գրատանը դեռեւս առկայ էր չվաճառուած *Քերականութիւն*ի 657 օրինակ[10]:

Ներսէս արքեպիսկոպոսը մտածել է նաեւ Հնդկաստանում գործող հայկական դպրոցների աշակերտներին քերականութեան գրքով ապահովելու մասին: Նա հրահանգել է *Քերականութիւն*ի որոշակի քանակ յատկացնել այդ դպրոցներին: Նա մասնաւորապէս յանձնարարել է Ալամդարեանին. «*… զի տպարան Ուսումնարանի Հայոց ի Թիֆլիզ՝ տպեսցէ ի միտս եւ ի խորհուրդս Հայկազանց զհոգի ազգասիրութեան. սմին իրի՝ ընտրելագոյն համարիմ օժանդակել դպրոցաց Հայոց՝ ի Կալկաթայ, ի Մադրաս եւ յայլ քաղաքս Հնդկաստանի, յորս գտանիցինն, նաեւ՝ ի Բուշեռ եւ Բասրայ, այսպիսի մակագրութեամբ նուիրելով իւրաքանչիւրոց նոցա զքերականութիւնս ըստ չափու. 'Տպարանի Ու-սումնարանի Հայոց ի Տփխիս՝ նուիրանք ազգասիրութեան ուսումնարանի Հայոց ի Կալկաթայ'*»[11]: Ահա այսպէս է գրքերի որոշ քանակների վրայ յայտնուել ծանօթ նուիրատուական նախադասութիւնը, որը շփոթմունքի պատճառ է դարձել այն չափով, որ նման մի գրքի պատճառով[12] դիտարկուել է նոյն տարում նոյն գրքի երկու տարբեր հրատարակութիւնների տեսութիւնը: Փաստօրէն նուիրատուական նախադասութիւնը դրուել է Կալկաթայի, Մադրասի, Բուշէռի, Բասրայի, գուցէ նաեւ այլ քաղաքների նշումներով: Ներսէս արքեպիսկոպոսը նաեւ յանձնարարել է ո՛ր դպրոցին քանի գիրք յատկացնել, օրինակ՝ Կալկաթային 50, Բուշէռին՝ 30, միւսներին, այդ թւում Մադրասի ուսումնարանին՝ 20ական:

Բանասէր-մատենագէտ Դաւթեանը[13] դիտարկելով նոյն գրքի երկու տիտղոսաթերթերը, մանրամասների մէջ չխորանալով, եզրակացրել է, որ նոյն տարուայ մէջ գիրքը երկու անգամ է տպագրուել: Անդրադառնալով երկու գրքերի տպագրութեան հաւանական հերթականութեանը նա համարել է, որ այն գիրքը, որի տիտղոսաթերթի վրայ կայ «Տպարանի Ուսումնարանի Հայոց ի Տփխիս՝ նուիրանք ազգասիրութեան Ուսումնարանի Հայոց ի Մատրաս» նուիրագիրը, տպագրուել է երկրորդը, որով որոշել է, որ այդու նոյն տարուայ մէջ եղել է *Քերականութիւն*ի երկու հրատարակու-

[8] Երիցեանց, էջ 228:

[9] Նոյն:

[10] Նոյն, էջ 433:

[11] Նոյն, էջ 125:

[12] Գիրքը գտնւում է ՀԱԳում: Դրա վրայի նուիրագրում յիշուել է Մադրաս քաղաքը:

[13] Հայկ Դաւթեան, *Հայ գիրքը 1801-1850 թուականներին. մատենագիտութիւն*, խմբագիր Յ.Ս. Անասեան, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրութիւն, Երեւան, 1967, էջ 140:

թիւն[14]: Եթէ նրա ձեռքում յայտնուէր Կալկաթայի, Բուշէռի եւ այլ քաղաքների անունով նուիրագիր ունեցող տիտղոսաթերթերով գիրք՝ հաւանաբար դրանցից իւրաքանչիւրը կը համարուէր ա՛յլ հրատարակութիւն:

Որպէսզի պարզենք թէ արդեօ՞ք իրականում եղել է երկու հրատարակութիւն, ուսումնասիրել ենք 1826ին տպագրուած երկու հրատարակութիւնները: Դրանք տիտղոսաթերթից սկսած մինչեւ 600րդ էջն ու չհամարակալուած չորս թերթերը, բացարձակապէս նոյնն են. միակ տարբերութիւնը տիտղոսաթերթի վրայ եղած նուիրատուական նախադասութիւն-յաւելումն է, որ տեղադրուել է զարդանկարի փոխարէն:

Խաչատուր Աբովեանի անուան Հայկական Պետական Մանկավարժական Համալսարանի (ԽԱՀՊՄՀ) գիտական գրադարանում առկայ զինանշանով տիտղոսաթերթով օրինակը համեմատել ենք Հայաստանի Ազգային Գրադարանում (ՀԱԳ) պահուող երկու տարբեր տիտղոսաթերթերով օրինակների հետ: Համեմատել ենք նաեւ 1779ին Վենետիկում տպագրուած օրինակի հետ[15]: ՀԱԳում պահուող երկու տարբեր տիտղոսաթերթերով գրքերը, ինչպէս նաեւ ԽԱՀՊՄՀի գրադարանում պահուող գիրքը ջրի կաթիլի պէս նոյնն են: Այսինքն տարբեր հրատարակութիւն լինելու համար դրանց բովանդակութեան մէջ որոշակի նիւթեր պիտի տարբեր լինէին: Նման բան չկայ: Այսինքն նոյն տարում երկրորդ հրատարակութեան մասին խօսք չի կարող լինել: Մենք գործ ունենք մէկ հրատարակութեան հետ, որի որոշ քանակների վրայ ըստ նուիրանքի նուիրատուական նախադասութիւն է առկայ:

Եթէ իրականում նոյն տարուայ ընթացքում *Քերականութիւն հայկազեան լեզուի* գրքի երկրորդ հատարակութիւն լինէր դրա մասին հրատարակիչներն անվերապահօրէն նշում կը կատարէին, ինչպէս նշել են նոյն տպարանում տպագրուած այլ գրքերի դէպքում: Նման փաստի արձանագրում չկայ նաեւ պատմաբան, խնդրի լաւագիտակ Ալեքսանդր Երիցեանի՝ թեմային առնչուող հրատարակութիւններում:

---

[14] Այլ առիթով ուսումնասիրել ենք ԽԱՀՊՄՀի գրադարանում պահուող եւ այդ ժամանակ Թիֆլիսում տպագրուած *Քերականութիւն*ի առաջին-երկրորդ հրատարակութիւն համարուող երկու գրքերը, հրատարակել ենք յօդուած (Տիգրան Պետրոսեանց, Տիրուհի Սիրեկանեան, «Հնատիպ, հազուագիւտ, սովորական տպագիր գրքերի ձեռագիր յիշատակարանները պատմական սկզբնաղբիւր», *Էջմիածին*, Զ:2019, էջ 101-2):

[15] Այս քննութիւնը հնարաւորութիւն տուեց ճշտելու ես մէկ հնատիպ գրքի առկայութիւն ԽԱՀՊՄՀի գիտական գրադարանում: Մինչ այս քննութիւնը ԽԱՀՊՄՀի գիտական գրադարանում եղած *Քերականութիւն հայկազեան լեզուի* երկու գրքերը գրանցուել են որպէս Թիֆլիսում 1826ին տպագրուած գրքեր: Մեր նոր ուսումնասիրութեամբ ճշտել ենք, որ տիտղոսաթերթ չունեցող գիրքն իրականում 1779ին Վենետիկում տպագրուած գիրք է:

Բազմավաստակ բանասէր-մատենագէտ Դաւթեանը եւս մէկ վրիպում ունի: Թիֆլիսում 1826ին տպագրուած *Քերականութիւն*ին վերաբերող ծանօթագրութիւնում նշել է, որ 582 էջահամարից յետոյ միանգամից նշուել է 591ը: Իրօք այդպէս է թէ՛ ԽՍԱՀՊՄՀում գտնող գրքի դէպքում, թէ՛ ՀԱԳում գտնուող օրինակի դէպքում: Հնարաւոր է, որ նոյնը կը լինի նաեւ այլ օրինակներում: Մենք ԽՍԱՀՊՄՀի գրադարանի օրինակը մանրակրկիտ համեմատել ենք Վենետիկի 1779ի հրատարակութեան հետ: Արձանագրենք. կարծում ենք պարզապէս 583-590 թուահամարներով էջերի մամուլը գուցէ կազմարարի մեղքով կամ պատահաբար չի տեղադրուել գրքի որոշակի քանակներում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Մխիթարեան միաբանութեան անդամ Միքայէլ վրդ. Չամչեանցի *Քերականութիւն հայկազեան լեզուի* գիրքը Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր դպրոցի տպարանում հրատարակուել է Հայ Առաքելական Եկեղեցու Վիրքի հոգեւոր թեմի առաջնորդ Ներսէս արքեպիսկոպոս Աշտարակեցու հրամանով, այն տպագրուել է մէկ անգամ, երկրորդ հրատարակութիւն չի ունեցել: Բանասէր-մատենագէտ Հայկ Դաւթեանը երկրորդ հրատարակութեան մասին գաղափարն առաջադրել է միայն այն պատճառով, որ գրքերից մէկի տիտղոսաթերթի վրայ տեսել է նուիրատուութիւն Մադրասի ուսումնարանին նախադասութիւնը: Այն աւելացուել է Ներսէս արքեպիսկոպոսի պահանջով: Հաւանաբար նման նուիրատուական նախադասութիւն առկայ է նաեւ գրքերի այն օրինակների վրայ, որոնք ուղարկուել են Կալկաթայի, Բուշէռի, Բասրայի ուսումնական հաստատութիւններին: Նման պարագայում կարող ենք մտածել, որ իւրաքանչիւր նուիրատուական նախադասութեան համար կարող ենք նաեւ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ հրատարակութիւններ յայտագրել:

DID FATHER MIKAYEL CHAMCHIAN'S *GRAMMAR OF THE ARMENIAN LANGUAGE* HAVE MORE THAN ONE PRINTING IN TBILISI IN 1826?

(Summary)

TIRUHI SIREKANYAN (tiruhi.sirekanyan@list.ru)

One of the most important publications of the Nersisyan Theological School in Tiflis was the publication of the Mekhitarist Father Mikayel Chamchian's book *Grammar of the Haikazian Language,* originially published in Venice in 1779. However, due to different versions of its title page, the renowned bibliographer Haig Davtian was confused and considered there were two publications of the book in a single year.

The paper analyses in detail the title pages of several copies of the 1826 publication and argues that the two editions of the same book were printed in the same year, 1826. The simple reason is that a donation note was added instead of an ornament on the title pages of several dozens of the book (about 150 copies) as these were delivered to the Armenian College of India at the request of Archbishop Nerses Ashtaraketsi, who supervised the printing of the book.

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԱՆՏԻՊ ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՏԱՓԱԶԱՐԻ ԵՒ ՄՕՏԱԿԱՅ ՀԱՅԱԲՆԱԿ ԵՐԵՔ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ (1871)

ՄԻՀՐԱՆ ՄԻՆԱՍԵԱՆ (mihran.min@gmail.com)

ՄՈՒՏՔ

Յետագայ էջերով հրատարակութեան կու տանք Ատափազար քաղաքի ու անոր մօտակայ հայաբնակ Թամլըխ, Նոր գիւղ եւ Ֆերիզլիւ գիւղերու մասին 1871ին պատրաստուած պատմական տեղեկագիր մը, որուն առաջին մասը կը ներկայացնէ Ատափազարի հայաբնակ չորս թաղերը՝ Ս. Հրեշտակապետաց, Ս. Կարապետ, Ս. Լուսաւորիչ եւ Ս. Ստեփանոս, անջատաբար եւ կը խօսի իւրաքանչիւրի եկեղեցիին, քահանաներուն, արական եւ իգական դպրոցներուն, ուսուցիչներուն, ինչպէս նաեւ դպրոցներուն եւ եկեղեցիներուն նիւթական վիճակին մասին: Տեղեկագիրին երկրորդ բաժինը կ'անդրադառնայ Ատափազարի մօտակայ երեք հայաբնակ գիւղերուն՝ Թամլըխին, Նոր Գիւղին ու Ֆերիզլիւին եւ ասոնց պարագային եւս կու տայ մանրամասնութիւններ՝ իւրաքանչիւրի եկեղեցիին, քահանային, դպրոցին, ուսուցիչին, հայութեան թուաքանակին, գիւղացիներու տնտեսական վիճակին եւ այլ կարեւոր նիւթերու մասին:



Հրատարակուող փաստաթուղթի կարեւոր տեղեկութիւններէն մէկը Օսմանեան Կայսրութիւն նոր թափանցած չերքէզ գաղթականներու կողմէ Թամլըխ գիւղէն մօտ 300 եւ Նոր Գիւղէն մօտ 200 արտավար հողերու գրաւման փաստն է, որոնց մասին գիւղացիներու բողոքները կառավարութեան կողմէ մնացած են «անլսելի», մինչ մօտակայ Սինան Օղլու գիւղի թուրքերը, իրենց կարգին, գրաւած էին Ֆերիզլիւի մօտակայ ճանապարհ-

ները, զրկելով ֆերիզլիւցիները իրենց հողերուն հասնելու եւ զանոնք մշակելու կարելիութենէն:

Եթէ այս էր մայրաքաղաքին աշխարհագրականօրէն այնքան մօտիկ Ատափազարի հայաբնակ գիւղերու կացութիւնը, ապա պիտի ենթադրել, թէ ի՛նչ վիճակ կը տիրէր ներքին գաւառներուն ու մանաւանդ՝ Արեւմտեան Հայաստանի գիւղական շրջաններուն մէջ…

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՏԱՓԱԶԱՐԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ատափազարը հայաբնակ քաղաք մըն էր Նիկոմիդիա գաւառին մէջ եւ կեդրոնը՝ համանուն գաւառակին: Ծանօթ էր նաեւ «Աստուածարեալ քաղաք» պատուանունով: Կը գտնուի Նիկոմիդիա քաղաքի արեւելքը, անկէ 45 քլմ. հեռաւորութեան վրայ, արգասաբեր դաշտի մը մէջ:

Շրջանի բնակչութեան եկամուտի գլխաւոր աղբիւրը շերամապահութիւնն ու գիւղատնտեսութիւնն էր:

Ատափազարը Բիւթանիոյ շրջանի ամենահայաշատ քաղաքն էր: Ըստ բանասէր Մինաս Գասապեանի (Ֆարիատ, աւելի ետք՝ Մինաս Վերածին) պատրաստած մարդահամարին, քաղաքը 1909-10ին ունեցած է 12,030 հայ առաքելական, 420 հայ բողոքական եւ 13 շաբաթական կամ գալստեան հայեր[1]: Ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի սկզբնաւորութեան կազմած գաւառի հայութեան ընդհանուր մարդահամարին՝ Ատափազարի չորս հայաբնակ թաղերը միասնաբար ունեցած են 2416 տուն, 11,858 հայ առաքելական բնակիչ[2]:

Քաղաքի առաքելական հայերը ունեցած են 6 եկեղեցի. մանչերու հինգ եւ աղջկանց չորս ազգային վարժարանները 1909-10 եւ 1911 կրթաշրջաններուն միասնաբար ունեցած են 810 աշակերտ եւ 761 աշակերտուհի, իսկ 1909ին հիմնուած Ազգ. կեդրոնական վարժարանը՝ 130 ուսանող, ազգային երեք մանկապարտէզները 1909-10 կրթաշրջանին միասնաբար ունեցած են 450 երկսեռ աշակերտ, «Մանիշակ» սեփական մանկապարտէզը՝ 120 երկսեռ աշակերտ: Նոյն թուականներուն, քաղաքի բողոքական դեպրոցը ունեցած է 40 աշակետ եւ 60 աշակերտուհի[3]: Հոն գործած է նաեւ հանրածանօթ ամերիկեան «Հայուհեաց բարձրագոյն վարժարան»ը, որուն ուսանողուհիներուն մէջ մեծ էր տեղացի հայուհիներուն թիւը:

Զինադադարին (1918), վերապրող ատափազարցիներուն մէկ մասը վերադարձած է ծննդավայր, բայց աւելի ետք, քեմալական շարժման ուժեղացումով, 1921ին անոնք կրկին հեռացած են հայրենի քաղաքէն:

---

[1] Մինաս Գ. Գասապեան (Ֆարիատ), *Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ*, Պարտիզակ-Կ. Պոլիս, տպ. «Ազատամարտ»ի, 1913, էջ 243:

[2] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆոնտ 1388, ցուցակ 1, գործ 111, թերթ 1:

[3] Գասապեան, էջ 259, 261-3:

Քաղաքի հայերը ունեցած են մշակութային հարուստ կեանք, բազմաթիւ թատերախումբեր, նուագախումբ, գրադարաններ, աւելի քան չորս տասնեակ մշակութային-բարեսիրական միութիւններ, հայերէն գիրքեր ու թերթեր, երկու տպարաններ եւն.:

Ատափազարի եկեղեցիներուն առնչութեամբ աւելցնենք, որ քաղաքը, հրատարակուող տեղեկագրի կազմութենէն ետք, 1906-07ին ունեցած է Ս. Յարութիւն նորակերտ եկեղեցին եւս, մինչ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի Մայիս 1915ին կազմած վիճակացոյցին մէջ, Ատափազարի եկեղեցիներու շարքին յիշատակուած է 1813ին կառուցուած Ս. Եղիա անունով եկեղեցի մը, որուն մասին որեւէ ակնարկութիւն չկայ հրատարակուող տեղեկագրին մէջ. կամ ա՛յն է, որ 1871ին գործող եկեղեցի չէր, ու աւելի ետք, վերանորոգուելով, 1915-ին (ու անկէ առաջ) դարձած է գործող եկեղեցի, եւ կամ ալ մատուռ մըն էր, առանց ծխական ժողովուրդի, ու այդ պատճառով նկատի չէ առնուած տեղեկագրին մէջ[4]: Զարմանալի է, որ Թէոդիկ եւս, Ատափազարի եկեղեցիներու ցանկը ներկայացուցած ժամանակ, չէ յիշած այս վերջին երկու եկեղեցիները[5]:

Ատափազարը ունի իր անցեալին նուիրուած մեծարժէք յուշամատեան մը՝ *Պատմագիրք Ատափազար «Աստուածարեալ» քաղաքին*, խմբագրողներ՝ Արտաշէս Պիպէրեան եւ Վարդան Եղիշէեան[6], ուր հրատարակուող տեղեկագրի ընդգրկած ժամանակաշրջանի տեղեկութիւնները հազուագիւտ են, այնպէս որ այս տեղեկագիրը նոր լոյս կը սփռէ քաղաքի հայութեան անցեալին եւ աւելի լայն պատկերացում կու տայ անոր պատմութեան, մանաւանդ կրթական-եկեղեցական անցեալին մասին:

Հրատարակուող տեղեկագիրը յղուած է Ներսէս եպս. Վարժապետեանին (աւելի ետք՝ պատրիարք Կ. Պոլսոյ), որ 1871ին առաջնորդն էր Նիկոմիդիոյ թեմին, որուն ենթակայութեան տակ կը գտնուէր նաեւ Ատափազար գաւառակը: Նիկոմիդիոյ ազգային գաւառային երեսփոխանական ժողովը թեմի առաջնորդ ընտրած էր զինք 22 Փետրուար 1871ին, ու ինք Նիկոմիդիա հասած էր Ապրիլ 3ին[7]: Ըստ երեւոյթին, թեմին աւելի լաւ ծանօթանալու նպատակով, պաշտօնավարութեան սկզբնաւորութեան Ներսէս եպս. թելադրած է Ատափազարի ազգային մարմիններուն, որ պատրաստեն այս տեղեկագիրը, ինչ որ կատարուած է բաւական բարեխղճութեամբ:

---

[4] ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 111, թ. 3:

[5] Թէոդիկ, *Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հօտին աղէտալի 1915 փարիին*, խմբ. Արայ Գալայճեան, St. Vartan Press հրատարակչութիւն, Նիւ Եորք, 1985, էջ 368:

[6] Տպուած է Փարիզ, տպարան Տէր Յակոբեան, 1960, 752 էջ:

[7] «Ազգային», *Մասիս լրագիր*, Կ. Պոլիս, 25 Փետր. 1871, էջ 2**7**. նաեւ նոյն՝ 13 Մարտ 1871, էջ 2. նաեւ նոյն՝ 8 Ապրիլ 1871, էջ 2:

Հրատարակուող տեղեկագրին բնագիրը կը պահուի Երեւանի Եղիշէ Չարենցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ (ԳԱԹ), Թորոս Ազատեանի ֆոնտ, 37/VI: 9 էջանի ձեռագիր տետրակ մըն է, 22x27.5 սմ. ծաւալով: Զայն կը հրատարակենք նոյնութեամբ, առանց որեւէ փոփոխութեան: Աւելցուցած ենք միայն հարկ եղած ծանօթագրութիւնները:

* * *

[ՏԵՂԵԿԱԳԻՐ ԱՏԱՓԱԶԱՐԻ ԵՒ ՄՕՏԱԿԱՅ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐՈՒ ՄԱՍԻՆ]

Ըստ հրամանի գերապատիւ սրբազան առաջնորդ հօրդ, Ատափազար գիւղաքաղաքիս չորս թաղերուն եւ շրջակայ երեք հայաբնակ գիւղօրէից եկեղեցեաց եւ վարժարանաց տեղեկագրութիւնը մանրամասն կերպիւ ի ներքոյ կ'նշանակեմք:

Սբ. Հրեշտակապետաց թաղ

Ունի

Մէկ եկեղեցի նորաշէն յանուն սրբոց Հրեշտակապետաց, կառուցեալ յամին 1864:

Վեց քահանայ՝ որք են.

Ա. Տ. Նիկողայոս (անդամալոյծ), ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղաւնի[8] կոչեցելոյ, յամին 1826: Ամաց իբրեւ ութսունից:

Բ. Տ. Յովհաննէս Մաղաքեանց, ձեռնադրեալ ի Տ. Կիրակոս եպս.է յամին 1837, ամաց իբրեւ ութսունից, դադարեալ ի քահանայագործութենէ վասն ծերութեանն:

Գ. Տ. Մատթէոս Փանչուկեան, ձեռնադրեալ ի Տ. Կիրակոս եպս.է յամին 1837: Ամաց 65:

Դ. Տ. Միքայէլ Գաւալճանեանց, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպիսկոպոսէ Մաղաքեանց[9] յամին 1865: Ամաց 40:

---

[8] Ստեփանոս եպս. Զաքարեան, Աղաւնի մականունով: Աւազանի անունով՝ Զաքարիա: Ծնած է Պուրսա, 1777ին: Ուսանած է Արմաշի վանքին մէջ, ապա եղած է առաջնորդ Պանտրմայի, 1823ին՝ Զմիւռնիոյ եւ Սեպտ. 1825ին՝ Արմաշ-Նիկոմիդիա թեմին, ուր ունեցած է շինարար եւ արդիւնաւէտ գործունէութիւն: 1831-39 եւ 1840-41՝ երկու անգամ վարած է Կ. Պոլսոյ պատրիարքութիւնը, ու այդ օրերուն է որ կատարուած է Ս. Փրկիչ ազգային հիւանդանոցի հիմնարկէքը եւ բազում նոր դպրոցներու եւ եկեղեցիներու կառուցումն ու վերանորոգումը: Պատրիարքութենէն հրաժարելէն ետք, քաշուած է Արմաշ եւ որպէս վանահայր մնացած է անդ մինչեւ վախճանումը՝ 1853: Թաղուած Նիկոմիդիոյ եկեղեցւոյ բակին մէջ (*Արմաշու դպրեվանքին 25 ամեայ յոբելեանին առթիւ 1889-1914*, Առեւտրական նոր տպ. Մ. Յովակիմեանի, Կ. Պոլիս, 1914, էջ 10-17, նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայոց անձնանունների բառարան, Դ. հատոր*, Պետական համալսարանի հրատ., Երեւան, 1942, էջ 678):

[9] Ստեփաննոս եպս. Մաղաքեանց ծնած է Ատափազար, 1801ին: 1822ին անդամակցած է Արմաշի միաբանութեան: 1829ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ ու զանազան պաշտօններ ստանձնած վանքին մէջ: Հիմնադիրն է վանքի տպարանին (1863) եւ *Յոյս* հանդէսին (1864): 1847-53՝ վարած է Նիկոմիդիոյ ա-

Ե. Տ. Ստեփան Ազարեանց, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան[10] յամին 1869: Ամաց 35:

Զ. Տ. Գրիգոր Աճէմեան, ձեռնադրեալ ի Տէր Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1869: Ամաց 30:

Մէկ վարժարան արական սեռի, որոյ թիւ աշակերտացն է 175, ուսմունքն է քերականութիւն, քրիստոնէական վարդապետութիւն, թուաբանութիւն, ընթերցանութիւն, գիր եւ եկեղեցական երաժշտութիւն:

Երկու ուսուցիչ որք են.

Ա. Կարապետ Թորոսեան, բնիկ տեղացի եւ ուսեալ անդ, ամաց 58: Շաբաթական վարձքն է 40 ղրուշ:

Բ. Շահնազար Աստուածատուրեան, բնիկ տեղացի, ուսեալ ի Սբ. Կուսի վանս յԱրմաշ, ամաց քսան եւ չորից, շաբաթական վարձք 40 ղրուշ:

Մէկ դասատու երաժշտութեան Մինաս անուն, բնիկ տեղացի, որոյ տարեկան վարձքն է 1000 ղրուշ, եւ առաւօտները մէկ ժամ դաս կ'տայ:

Մէկ նախակրթարան դպրոց որոյ թիւ աշակերտացն է 96:

Մէկ ուսուցիչ նոյն դպրոցին Մինաս Դանիէլեան, բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, շաբաթական վարձք 20 ղրուշ, ամաց 56:

Մէկ տնտես երկու վարժարանին Գէորգ անուն, տարեկան վարձքն 750 ղրուշ:

Մէկ վարժարան իգական սեռի, որոյ թիւ աշակերտուհեացն է 186: Ուսմունքն ընթերցանութիւն, գիր եւ թուաբանութիւն:

Երկու ուսուցիչ նոյն վարժարանին.

Ա. Տ. Գրիգոր Քհնյ. Աճէմեանց (վերոյիշեալն), բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, շաբաթական վարձք 25 ղրուշ:

Բ. Մարիամ Ղառատումանեանց օգնական դասատու, բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, ամաց վեշտասեսնից, շաբաթական վարձք 5 ղրուշ:

Եկամուտ եկեղեցւոյ.

ռաջնորդական փոխանորդի պաշտօնը: 1854ին ընտրուած է Արմաշ-Նիկոմիդիա թեմի առաջնորդական տեղապահ եւ զայն վարած է երկու տարի: 1861ին ընտրուած է պատրիարքական տեղապահ եւ պաշտօնի վրայ մնացած է մինչեւ 15 Հոկտեմբեր 1863: Այս շրջանին է որ կատարուած են Ազգային Սահմանադրութեան վերաքննութեան աշխատանքները: Պարտիզակի մէջ վարակուած է հնդախտէ ու մահացած 24 Օգոստոս 1865ին (Աբրահամ Յ. Այվազեան, *Շար հայ կենսագրութեանց, Գ. հատոր*, տպագր. Գ. Պաղտատլեան, Կ. Պոլիս, 1893, էջ 7-9, նաեւ՝ *Արմաշու դպրեվանքին…*, էջ 18-19):

[10] Նիկողայոս կամ Նիկողոս արք. Աղասեան ծնած է 1826ին: Կարգուած է Նիկոմիդիոյ վիճակի առաջնորդական տեղապահ, ապա եղած է առաջնորդ մինչեւ 1870. վարած է նաեւ Ակնի առաջնորդութիւնը: 1873ին Կ. Պոլսոյ Խառն ժողովի կողմէ ընտրուած է պատրիարքական տեղապահ: Վախճանած է 11 Փետրուար 1874ին (Արշակ Ա. Ալպոյաճեան, «Ազգային Սահմանադրութիւնը ու իր ծագումը եւ կիրառութիւնը», տես՝ *1910 Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցին հայոց*, Կ. Պոլիս, 1910, էջ 445, նաեւ՝ Մ. արք. Օրմանեան, *Ազգապատում, Գ. հտր.*, Ս. Էջմիածին, 2001, էջ 4966):

Իւղագինէ՝ մոմագինէ եւ բանկալէն գոյացած արդիւնքն եւ սեպհական եկամուտ եղած մէկ հացագործի փուռէն առնուած տարեկան վարձքն	13500 ղրուշ
Ծախքն է.	
Երկսեռ վարժարանաց պաշտօնէից տարեկան վարձքը	8350
[Մնացորդ գումար]	5150
Դպրոցի սպառելի ծախուց համար	0500
[Մնացորդ գումար]	4650
Ժամակոչի տարեկան վարձք	1250
[Մնացորդ գումար]	3400
Եկեղեցւոյ մոմի, իւղի եւ այլ ծախուց համար	2000
[Մնացորդ գումար]	1400

Սբ. Կարապետի թաղ

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Կարապետի կառուցեալ յամին 1834:

Չորս քահանայ որք են.

1. Տ. Յարութիւն Տօնաւագեան, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղաւնի կոչեցելոյ, յամին 1840: Ամաց 60-62:

2. Տ. Պօղոս Տ. Միքայէլեան, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղաւնի կոչեցելոյ յամին 1849: Ամաց 60:

3. Տ. Խորէն Տ. Գրիգորեան, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1866: Ամաց 38:

4. Տ. Յակոբ, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1866: Ամաց 28:

Մէկ վարժարան արական սեռին որոյ թիւ աշակերտաց 140, ուսմունքն է ընթերցանութիւն, գիր, թուաբանութիւն եւ եկեղեցական երաժշտութիւն:

Երկու ուսուցիչ որք են.

1. Ահարօն Վարժապետեան, բնիկ տեղացի, աշակերտ Առաքել վարժապետի Աբրահամեան, ամաց երեսուն եւ եօթից, եւ տարեկան վարձքն է 2600 ղրուշ:

2. Մահտեսի Ռուբէն Փափազեան, բնիկ տեղացի, աշակերտ Ազգ. Ուսումնարանի որ յԱտափազար, ամաց իբրեւ քսանից, տարեկան վարձքն է 1820 ղրուշ:

Մէկ դասատու երաժշտութեան Մ[ահտեսի] Յակոբ անուն, որոյ տարեկանն է 1000 ղրուշ, զոր կ'ընդունի հարսանեաց տուրքերէն եւ սուրբ Ստեփաննոսի յիշատակաց գանձանակէն, եւ առաւօտները մէկ ժամ դաս կու տայ:

Մէկ նախակրթարան դպրոց, որոյ թիւ աշակերտացն 160-170, երկու ուսուցիչ սոյն դպրոցին որք են.

1. Տիրացու Մարտիրոս Պէրպատեան, բնիկ տեղացի, աշակերտ Յովհաննէս վարժապետի Հատիկեանց, տարեկան վարձքն է 1820 ղրուշ, տարիքն է 50-52:

2. Պօղոս Համբարձումեան, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 1300, տարիքն է 30:

Մէկ տնտես երկու վարժարանին Խաչատուր անուն, տարեկան վարձքն է 1100 ղրուշ:

Մէկ վարժարան իգական սեռին, որոյ թիւ աշակերտուհեացն է 220: Ուսմունքն է քերականութիւն, ընթերցանութիւն, գիր: Երեք ուսուցիչ սոյն վարժարանին որք են.

1. Յակոբ Կոստօլեան, բնիկ տեղացի, աշակերտ Ազգ. ուսումնարանին որ յԱտափազար, ամաց 20ից եւ է այցելու դասատու քերականութեան:

2. Նունէ վարժուհի Գօբելեան, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 520 ղրուշ, տարիքն է 24-25:

3. Հռիփսիմէ վարժուհի, բնիկ տեղացի եւ անդ ուսեալ, տարեկան վարձքն է 390 ղրուշ:

Եկամուտ եկեղեցւոյ

Իւղագինէ, մոմագինէ եւ բանկալէն գոյացած արդիւնք	12500 ղրուշ
Մէկ հացագործի փուռէն առնուած տարեկան վարձք	0800 ղրուշ
Համագումար	13300 ղրուշ
Ծախքն է	
Դպրոցի պաշտօնէից տարեկան վարձքերն	8640 ղրուշ
Դպրոցի սպառելի ծախուց համար	0360 ղրուշ
Ժամակոչի տարեկան վարձքը	1250 ղրուշ
Եկեղեցւոյ մոմի, իւղի եւ այլոց այսպիսեաց համար	2500 ղրուշ
	0550 ղրուշ

Իգական սեռի վարժարանի տարեկան եկամուտն է 1500 ղրուշ, կիւրակէ, շաբաթ օրերն եկեղեցիէն յատուկ թապախով[11] գոյացած արդիւնք:

Կիրակի աւուրց կանանց լսարանէն գոյացած արդիւնք	0500 ղրուշ
Բոլոր եկամուտը	2000 ղրուշ
Սոյն վարժարանի դասատուաց տարեկան վարձք	1430 ղրուշ
	0570 ղրուշ
Կիւրակէ աւուրց քարոզիչ քահանային տարեկան վարձք	0260 ղրուշ
	0310 ղրուշ
Սպառելի ծախք	0160 ղրուշ
	0150 ղրուշ

Սոյն թաղիս եկեղեցին ունի նաեւ թահվիլով[12] ստակ 20000, քսան հազար ղրուշի չափ:

Սբ. Կարապետ եկեղեցւոյս բակին մէջ 1865էն ի վեր հաստատեալ

Մէկ ուսումնարան չորս թաղին վերաբերեալ, որոյ թիւ աշակերտացն այժմ 13, վասն անխնամ մնալոյն:

Ուսմունքն է

Քերականութիւն, ճարտասանութիւն, կրօնագիտութիւն, թուաբանութիւն եւ հայոց պատմութիւն:

---

[11] Թապախ.- արաբերէն՝ պնակ. հոս նկատի ունի պատարագի ընթացքին դրամահաւաքութեան նպատակով պտըտցուող կամ եկեղեցւոյ դռան մօտ նոյն նպատակով դրուած սկուտեղը:

[12] Թահվիլով.- արաբերէն՝ փոխանցումով (պարտամուրհակով):

Ունի

Մէկ դասատու Հ. Արմենակ Երամեան, բինկ տեղացի, աշակերտ Ժառանգաւորաց ուսումնարանի որ յԱրմաշ, ամաց 25, տարեկան վարձքն է 3000 ղրուշ:

Մէկ տնտես (որ եւ կառավարիչ) Գէորգ անուն, բնիկ տեղացի, ամաց 30, տարեկան վարձքն է 1200 ղրուշ:

Տարեկան եկամուտն է խանէի[13] հաշուով արքունի տրոց հետ թաղերը ձգուած	4000 ղրուշ
Հարսանեացմէ եւ նշանադրութենէ կ'գոյանայ	1500 ղրուշ
[Գումար]	5500 ղրուշ
Տարեկան սպառելի ծախքն է	0200 ղրուշ
[Մնացորդ գումար]	5300 ղրուշ

Սբ. Լուսաւորչի թաղ

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Լուսաւորչի կառուցեալ 1830 Յուլիս 13:

Չորս քահանայ որք են.

Ա. Տ. Մանուէլ, ձեռնադրեալ ի Տ. Պօղոս եպս.է Ղառաղօչեան[14] յամին 1815, ամաց 102:

Բ. Տ. Անդրէաս, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս Աղաւնի կոչեցելոյ յամին 1829, ամաց 75:

Գ. Տ. Ստեփան, ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան 1866, ամաց 35:

Դ. Տ. Պետրոս ձեռնադրեալ ի Տ. Նիկողայոս եպս.է Աղասեան յամին 1869 Նոյ., 31 ամաց:

Մէկ վարժարան արական սեռի, որոյ աշակերտաց թիւն է 110:

Ուսմունքն է ընթերցանութիւն, գիր, թուաբանութիւն եւ եկեղեցական երաժշտութիւն:

Երկու ուսուցիչ որք են.

1. Տ. Ստեփան Քհնյ., բնիկ տեղացի, աշակերտ նոյն դպրոցի, ամսական վարձքն է 120 ղրուշ, այս է դասատու նաեւ երաժշտութեան:

2. Կարապետ Գրիգորեան, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 1300 ղրուշ:

---

[13] Խանէ.- պարսկերէն՝ տուն:

[14] Պօղոս արք. Ղառաղօչեան, ծնած է Տերէվենք (Կեսարիա), 1751ին: Եղած է առաջնորդ Պուրսայի: 1794ին նորոգած է տեղւոյն հին ու փոքր եկեղեցին եւ հիմնած դպրոց մը: Յուլիս 1810ին կարգուած է առաջնորդ Նիկոմիդիա-Արմաշի, հուսկ 1811ին վարած է առաջնորդութիւնը Պուրսա-Նիկոմիդիա միացեալ թեմին մինչեւ 1820, երբ անցած է Արմաշ, որպէս վանահայր: Եղած է գործունեայ եկեղեցական. կառուցած է եկեղեցիներ, դպրոցներ ու մանաւանդ հետամուտ եղած է Արմաշի վանքի վերաշինութեան ու յաջողած է կառուցել փայտաշէն եկեղեցի մը եւ ուսումնարան մը: Վախճանած է 6 Օգոստ. 1825ին, Արմաշ (Օրմանեան, էջ 4105-7. նաեւ՝ [Յովհաննէս Տէրոյենց Չամուռճեան Պուրսացի], «Պուրսա եւ անոր եպիսկոպոսները», *Երեւակ*, Կ. Պոլիս, 1 Նոյ. 1859, էջ 261-3):

Մէկ վարժարան իգական սեռի, որոյ աշակերտուհեաց թիւն է 40, ուսմունքն է ընթերցանութիւն, գիր:

Մէկ վարժուհի, Ագապի անուն, բնիկ տեղացի, 40 ամաց, տարեկան վարձքն է 520 ղրուշ:

Եկեղեցւոյ եկամուտն է.

Իւղագինէ, մոմագինէ գոյացած եւ մոմարանի արդիւնքն	7500 ղրուշ
Երկու դասատուաց տարեկան վարձքը	2800 ղրուշ
[Մնացեալ գումար]	4700 ղրուշ
Տնտես Ստեփանին (որ ժամկոչ ալ է) տարեկան վարձքը	1300 ղրուշ
[Մնացեալ գումար]	3400 ղրուշ
Երկու վարժարանաց սպառելի ծախքերն	0500 ղրուշ
[Մնացեալ գումար]	2900 ղրուշ
Եկեղեցւոյ իւղի, մոմի եւ այլ այսպիսեաց տարեկան ծախք	2500 ղրուշ
[Մնացեալ գումար]	0400 ղրուշ

Եկեղեցւոյն գանձուն յատուկ թահվիլով ստակ 7000, եօթն հազար ղրուշ:

Տեղեկագրութիւնս ստորագրուելէ ետեւ, Ատափազար գիւղաքաղաքիս հասարակութեան կողմանէ քանի մը անձինք յատուկ գերապատիւ սրբազան հօրդ խընդիրք մը մատուցանելով՝ հոս նոյն խնդրոյն իմաստը նշանակել արժան համարեցինք:

Խնդիրն այս իսկ է.

Ատափազարու հայոց արքունի տուրքերու ժողուելու առթիւ՝ շատ անգամ աղքատին պարտուց համար մահալլէներու էիլի սէրվէթները[15] իրենց խանութէն կամ գործարանէն զինուորով իջեցունելով՝ կառավարութեան դուռը կ'տանին, գիշերով ցերեկով կ'բանտարկեն, որք իրենց տրոց սեպհական բաժինները տուած եւ պարտք ունեցած չեն ըլլար, այս ապօրինաւոր դրութիւնը որ ի վաղուց ներմուծեալ է՝ քաղաքիս մէջ կ'շարունակուի ի վնաս արհեստաւոր ազգայնոց:

Սբ. Ստեփաննոսի թաղ

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Ստեփաննոսի կառուցեալ յամին 1810:

Մէկ քահանայ Տ. Յովհաննէս անուն, ձեռնադրեալ ի Տ. Յակոբ եպս.է Ուրֆացւոյ[16] յամին 1859, ամաց 58:

Մէկ վարժարան արական սեռին, որոյ աշակերտաց թիւն է 50, եւ ուսմունքն է ընթերցանութիւն եւ գիր:

---

[15] Մահալլէներու էիլի սէրվէթներ.- արաբերէնով մահալլէ՝ թաղ, էիլի սէրվէթներ՝ հարստութեանց տէրեր, մեծահարուստներ, այսինքն՝ մեծահարուստ հայեր, որոնք կառավարութեան կողմէ ձերբակալուելով կը բանտարկուէին՝ այլոց չվճարած տուրքերուն պատճառով, հակառակ անոր որ իրենք վճարած կ'ըլլային իրենց տուրքերը:

[16] Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբան: 1861ին ներկայացուած է որպէս Պոլսոյ պատրիարքութեան թեկնածու, բայց չէ ընտրուած (Օրմանեան, էջ 4661):

Երկու ուսուցիչ որք են.

1- Ստեփան Չաքըրեան, բնիկ տեղացի, աշակերտ Կարապետ վարժապետի Թորոսեան, ամաց 36, տարեկան վարձքն է 2080 ղրուշ:

2- Սեդրաք անուն, աշակերտ յիշեալ դպրոցին, 16 ամաց, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 520 ղրուշ:

Մէկ վարժարան իգական սեռին, որոյ աշակերտաց թիւն է 30, ուսմունքն՝ ընթերցանութիւն եւ գիր:

Մէկ վարժուհի Նոյեմզարա անուն, բնիկ տեղացի, տարեկան վարձքն է 520 ղրուշ:

Եկեղեցւոյ տարեկան եկամուտն է	1000 ղրուշ
Եկեղեցւոյ տարեկան ծախքն է մոմի իւղի խունկի եւայլն	1000 ղրուշ
[Մնացորդ գումար]	0000

Եկեղեցւոյ գանձուն սեպհական ստակ 13000 ղրուշ:

Այս տասնեւերեք հազար ղրուշին տարեկան տոկոսէն եւ երբեմն ալ հանգանակութեամբ կ'վճարուի դպրոցի դասատուաց տարեկան վարձքերն:

Գիւղաքաղաքիս չորս թաղի հայոց արքունի տուրքն է	213954 ղրուշ
Պէտէլի ասկէրիէն[17]	046975 ղրուշ
Բոլոր տրոց գումարը ըստ հին դրութեան	260929 ղրուշ
Երկուքէն մնացորդ պարտք	52500 ղրուշ

23 Ապրիլ 1871, Ատափազար

Ատափազար գիւղաքաղաքի չորս թաղերու եկեղեցեաց եւ վարժարանաց վրայ վերոյիշեալ տեղեկութիւնները՝ մեք նոյն գիւղաքաղաքի բնակիչքս տուած ըլլալով քահանայք եւ ժողովականքս կ[ը]ստորագրեմք:

Անդրէաս Քահանայ Տէր Յոհանէս Քահանայ
Տէր Պօղոս Քահանայ Տէր Մանուէլ Քահանայ
Տէր Ստեփան Քահանայ Տէր Աթանասեան
Տէր Ստեփան Ազարեանց Ն. Ծ. Տէր Միքայէլ Քահանայ
Յակոբ Քահանայ Խորէն Քահանայ
Մատթէոս Քահանայ Տէր Յօհաննէս Կիւմիւշեան
Գրիգոր Քահանայ Միտս.ի Սարգիս Գալիկեան
Յարութիւն Լօխընեան Աստուածատուր Ա. Յ. Մաղաքեանց
Միտս.ի Մընացական Նազարէթեան Հաճի Թօրոս Սարըեան
Հաճի Կարապետ Տէվէճիեան Մ. Աբրահամ Ներկարարեան
Միտս.ի Յովսէփ Պէրպէրեան Մ. Սարգիս Վարդանեան
Միտս.ի Պաղտասար Յարութիւնեան
Կարապետ Թիթէրեան Սերօբէ Չախճիեան
Մ. Յակոբ Շահանեան Յովակիմ Սուքերեան

[17] Պետէլի ասքերիէ.- արաբերէն՝ զինուորական տուրք, որ կը գանձուէր կայսրութեան ոչ-իսլամ արու բնակիչներէն, քանի որ անոնք զերծ կը մնային զինուորական ծառայութենէ:

Պետրոս Պօյէճեան Յովհաննէս Ֆէնէրճեանց
Հաճի Բարսեղ Քէնէռաճեան
Գրագիր ժողովոյն՝ Ահարօն Վարժապետեան

* * *

Թամլըխ Գիւղ[18]

Ունի

Մէկ եկեղեցի փայտաշէն յանուն սրբոյն Գէորգայ կառուցեալ յամին 1761:

Մէկ քահանայ Տ. Սահակ անուն, ձեռնադրեալ ի Տ. Յակօբ եպս.է Ուրֆացւոյ ի թուին 1860: Տարիքն է 34-35:

Մէկ վարժարան արական սեռին:

Եկեղեցին ունի տարեկան եկամուտ 20 քիլէ[19] ցորեն եւ 20 քիլէ միսիր[20], որոց աղբիւրն է մէկ աղօրիք մէկ քարէն, զոր նուիրած է եկեղեցւոյ՝ Քէօչէկ պապուկ անուն նոյն գիւղէն հայազգի մը 20 տարի յառաջ: Եկեղեցւոյ բանկալէն կ[ը]գոյանայ տարեկան 400 ղրուշ:

Վարժարանն յատուկ եկամուտ չունի:

Եկեղեցւոյ տարեկան ծախքն է 400 ղրուշ իւղի, մոմի, խունկի եւ այսպիսեաց համար:

Վարժարանն ունի տարեկան ծախք 600 ղրուշ որ է դասատուին վարձքը եւ այն կը տրուի գիւղէն:

Մէկ դասատու Թէլեան Ստեփան անուն, բնիկ տեղացի եւ հոն ուսեալ, ամաց իբրեւ քսանից: Թիւ աշակերտացն է 20-25, ուսմունքն են ընթերցանութիւն, գիր եւ թուաբանութեան չորս գործողութիւնը:

Տէրութեան տուրքն է	10013 ղրուշ
Պէտէլիէ	02270 ղրուշ
50 խանէի վրայ[21]	12283 ղրուշ

Տրոց պագըյէ[22] 2400 ղրուշ, որոյ մնալուն պատճառ ժողովրդեան աղքատութիւնն է:

---

[18] Թամլըխ կամ Թամլըք.- զուտ հայաբնակ գիւղ Նիկոմիդիա անկախ գաւառի Ատափազար գաւառակին մէջ, Ատափազար քաղաքէն հիւսիս-արեւելք եւ Ֆերիզլիէն մօտ չորս քլմ. հարաւ-արեւելք:
Ըստ Գասապեանի պատրաստած մարդահամարին, գիւղը 1909-10ին ունեցած է 65 հայ առաքելական տուն՝ 376 անձ, 7 տուն բողոքական՝ 40 անձ եւ 10 շաբաթապահ: Ունեցած է նաեւ Ազգային Տատեան երկսեռ դպրոցը՝ 35 աշակերտ-աշակերտուհիներով (Գասապեան, էջ 243, 260), իսկ ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի մարդահամարին՝ Թամլըքը ունեցած է 85 հայ առաքելական տուն՝ 382 անձ եւ Ս. Ստեփաննոս քարուկիր եկեղեցին, կառուցուած 1879ին, իսկ 26 Փետր. 1915ի դրութեամբ, գիւղը ունեցած է նաեւ 9 տուն հայ բողոքական՝ 51 անձ (ՀԱԱ, ֆ. 1388, g. 1, գ. 111, թ. 2-3):

[19] Քիլէ.- արմտիքներ կշռելու չափ՝ քոռ, որ հաւասար էր 293.760 քլկմ.ի:

[20] Միսիր.- տեղական բարբառով՝ եգիպտացորեն:

[21] Այսինքն յիշեալ գումարները պիտի վճարուէին իւրաքանչիւր 50 տունի համար:

[22] Տրոց պագըյէ.- [նախորդ տարիներու] տուրքերէն մնացորդ:

Ատափազարու գայմագամ[23] Ազիզ պէյի օրով գիւղացւոցմէ տասն հոգիի սեպհական եղած 300 արտավարի չափ երկիրներն ցանը մէջը եւ քաղելու միջոցին չէրքէզ գաղթականները գրաւեցին, անոնց թշուառութեան պատճառ ըլլալով:

Գիւղիս բնակչաց բոլորին ալ արհեստը երկրագործութիւն է:

Գիւղիս եկեղեցին պատրաստ ապրանք գիւղացւոց վրայ տումարով ունի 400 քիլէ ցորեն եւ 200 քիլէ մսրացորեն, որք 1867-էն ի վեր առանց շահու անգործ մնացած են:

Մուրհակով ասոր անոր վրայ ստակ 21000 ղրուշ, որք նոյնպէս 1867-էն ի վեր առանց շահու անգործ մնացած են:

Շտեմարանի մէջ պատրաստ 25 քիլէ ցորեն, 25 քիլէ միսիր:

Կալուած

Ունի

Ութն կտոր արտ, ամէնը 25 քիլէ ցորեն առնող որք գիւղին բոլորն են, Կէրտէմէի մէջ երկու կտոր արտ, ամէնը ութ քիլէ ցորեն առնող:

Մէկ տուն գիւղին մէջ, մէկ յարդնոց, երեք արտավար թթենւոյ պարտէզ, մէկ հորթով կով, մէկ ամուլ կով, զոյգ մը եզ եւ 600 ղրուշի չափ արժողութեամբ կահ կարասիներ:

Թէ այս տասն կտոր արտերն եւ թէ տուն, յարդնոց եւ թթենւոյ պարտէզը եւ թէ կովերն ու եզները ու կարասիներն Կէօչէ օղլու հանգուցեալ Մինասէն եկեղեցւոյ մնացած են, ինքը իրեն սեպհական ժառանգ չունենալուն համար:

Վերոյիշեալ Կէօչէկ պապուկի եկեղեցւոյ նուիրած աղօրիքին հետ արտեր ալ կենալով՝ նոյն արտերը 20 տարի յառաջ 2000 ղրուշ ծախելով՝ գինը տոկոսի տուեր են, այս երկու հազար ղրուշն եւ աղօրիքին 20 տարեկան շահն են որ յիշեալ 400 քիլէ ցորեն եւ 200 քիլէ մսրացորենը եւ 21000 ղրուշ մուրհակով ստակը կ'արտադրեն:

Այս վերոգրեալ բոլոր ստացուածոց պատասխանատուն են վեց անձինք, որք են. Կարապետ Պօզեան, Կարապետ Մինասեան, Զատիկ Չէնտիկեան, Թորոս Կէվրէկեան, Յովհաննէս Չորապճեան, Յարութիւն Վարդէվանեան, որք որոշմամբ մահտեսի Յարութիւն աղայի Տէյիրմէնճեան եւ Եսայի աղայի մահտեսի Խաչատուրեան միւթէվէլլի[24] կարգեալ են ի թուին 1870:

Թամլըխ գիւղը ունի 50 տուն բնակիչ:

Թամլըխ գիւղի վերոյիշեալ տեղեկութիւններն նոյն գիւղէն մեք ստորագրեալքս տուած ըլլալով ամէն մասամբ ստուգութեանը վկայելով կ'ստորագրեմք:

1871, Ապրիլ 20

Կարապետ Պոզեան Մարտիրոս Պոզեան
Ստեփան Չորապճեան Յարութիւն Մանիկեան
Սահակ Քահանայ Զատիկ Չէնտիկեան

* * *

[23] Գայմագամ.- գաւառակի կառավարիչ:

[24] Միւթէվելլի.- արաբերէն՝ հոգաբարձու, խնամակալ:

Նոր Գիւղ[25]

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սրբոյն Կարապետի կառուցեալ յամին 1800:

Մէկ քահանայ Տ. Կարապետ անուն, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Մաղաքեանց յամին 1864: Տարիքն է 43, եւ որուն տարեկան ապրուստ ըլլալու համար բացի քահանայական իրաւունքէն, 30 քիլէ ցորեն եւ 10 քիլէ միսիր գիւղացւոցմէ վճարել որոշուած է, 20 սայլ ալ փայտ:

Մէկ վարժարան, որոյ թիւ աշակերտացն է 10 արու եւ էգ խառն, ուսմունքն է ընթերցանութիւն:

Մէկ դասատու Արիստակէս անուն, բնիկ տեղացի, Ատափազարու մէջ ուսեալ, ամաց 18, տարեկան վարձքն է 250 ղրուշ, եւ այն կ[ը]տրուի գիւղացւոցմէ:

Եկեղեցւոյն տարեկան եկամուտն է 300 ղրուշ, գիւղացւոցմէ նուիրուած ցորենէ գոյացեալ:

Տարեկան ծախքն է 300 ղրուշ:

Արքունի տուրքն է	2868 ղրուշ
Պէտէլի ասքէրիէ	0727 ղրուշ, հին դրութեամբ
[Ընդհանուր գումար]	3595 ղրուշ
Երկու տրոցմէ պագրյէ	0550 ղրուշ

Այս պագայէն մնալուն պատճառն է՝ գիւղին խանէէն տարուէ տարի պակսիլ, եւ այն պակսածին տուրքը դարձեալ գիւղէն պահանջուիլն[26]:

Գիւղացիքս մեծ զրկողութիւն կրած ենք մեզի դրացի գաղթական չէրքէզներէն, վասնզի մեր գիւղացւոցս սեպհական եւ քօչանով[27] հաստատեալ 200 արտավարի չափ արտերն Ատափազարու գայմագամ Ազիզ պէկի օրով գրաւեցին, եւ մեր քանիցս ըրած բողոքը լսելի չեղաւ կառավարութեան, եւ դարձեալ հերուան գիւղաց-

---

[25] Նոր Գիւղ (Թամլըքի).- հայաբնակ գիւղ Նիկոմիդիա գաւառի Ատափազար գաւառակին մէջ, Ատափազար քաղաքէն հիւսիս-արեւելք եւ Թամլըքէն հարաւ:
Ըստ Գասապեանի պատրաստած մարդահամարին, գիւղը 1909-10ին ունեցած է 9 հայ առաքելական տուն՝ 43 անձ (Գասապեան, էջ 243), իսկ ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի մարդահամարին, ունեցած է 10 հայ առաքելական տուն՝ 45 անձ եւ մէկ եկեղեցի՝ Ս. Կարապետ, կառուցուած 1786ին (ՀԱԱ, ֆ. 1388, g.1, գ. 111, թ. 2-3):
Գիւղի Ազգային Եղիայեան վարժարանը 1901ին ունեցած է 15 աշակերտ («Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ», տետր Ա., վիճակ 1901 տարւոյ, պատրաստեալ յՈւսումնական խորհրդոյ, Կ. Պոլիս, 1901, տախտակ 3):
Այս գիւղը պէտք չէ շփոթել շրջանին մէջ գոյութիւն ունեցած համանուն երկու այլ գիւղերու հետ՝ Սապանճայի Նոր Գիւղին եւ Մեծ Նոր Գիւղին հետ:

[26] Խանէ.- պարսկերէն՝ տուն, ինչպէս տեսանք վերեւ: Հոս խօսքը այն մասին է, որ գիւղի բնակչութեան թիւը տարուէ տարի նուազած է, բայց հակառակ այդ իրողութեան, պետական տուրքը մնացած է անփոփոխ, ինչը պատճառ դարձած է տուրքերու կուտակումին:

[27] Քոչան.- թրքերէն՝ կալուածագիր, կալուածի մը սեփականութիւնը հաստատող փաստաթուղթ:

ւոցս ցանած քսան երեսուն արտավար մսրացորենը իւրեանց արջառներուն կերցուցին, ասոնց նման վնասներ անպակաս կ[ը]կրենք նոցա ձեռքէն, այնպէս որ գիւղացիքս տեղէ կարօտ մնալով, պարտաւորած ենք ուրիշին երկիրը գործելու եւ ապրելու, այս մասին ողբալի է վիճակնիս:

Գիւղացւոցս ընդհանուրին արհեստն ալ երկրագործութիւն է:

Նոր Գիւղ ունի 18 տուն բնակիչ:

Այս վերոյիշեալ տեղեկութիւնները նոյն գիւղէն մեք ստորագրեալքս տուած ըլլալով ըստ ամենայնի ստուգութեանը վկայելով կ[ը]ստորագրեմք:

Մարտիրօս Կիւլէսէրեան Յովհաննէս Չարքաշեան

* * *

Ֆէրիզլիւ Գիւղ[28]

Ունի

Մէկ եկեղեցի յանուն սուրբ Աստուածածնի, կառուցեալ յամին 1834:

Երկու քահանայ, որք են.

1. Տէր Պօղոս, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղաւնի կոչեցելոյ յամին 1836, ամաց 70: Ախտաւոր եւ ոչ ի քահանայագործութենէ դադարեալ:

2. Տ. Մարտիրոս, ձեռնադրեալ ի Տ. Ստեփաննոս եպս.է Աղաւնի կոչեցելոյ յամին 1852, տարիքն 50:

Մէկ վարժարան արական սեռին, որոյ թիւ աշակերտացն է 30, ուսմունքն է քերականութիւն, ընթերցանութիւն, գիր, թուաբանութիւն, սրբազան պատմութիւն, քրիստոնէական վարդապետութիւն:

Ուսուցիչ մէկ Շմաւօն անուն, աշակերտ Ժառանգաւորաց ուսումնարանին որ յԱրմաշ, ամաց 37, տարեկան վարձքն է 1500 ղրուշ եւ այն կտրուի գիւղէն:

Եկեղեցւոյ եկամուտն է երկու խանութէ գոյացած արդիւնք	0120 ղրուշ
Եկեղեցւոյ բանկալէն	2000 ղրուշ
Գիւղացւոց նուիրած ցորենէ գոյանայ տարեկան	1000 ղրուշ
[Գումար]	3120 ղրուշ
Եկեղեցւոյ տարեկան ծախքն է	2500 ղրուշ

[28] Ֆերիզլի կամ Ֆիրուզլի.- զուտ հայաբնակ գիւղ Նիկոմիդիա անկախ գաւառի Ատափազար գաւառակին մէջ, Ատափազարէն երեք ժամ հիւսիս-արեւելք:
Ըստ Գասապեանի պատրաստած մարդահամարին, գիւղը 1909-10ին ունեցած է 196 տուն հայ առաքելական՝ 872 անձ, իսկ ազգային վարժարանը՝ 80 աշակերտ եւ 50 աշակերտուհի (Գասապեան, էջ 243, 260), իսկ ըստ Նիկոմիդիոյ ազգային առաջնորդարանի 1913ի մարդահամարին, Ֆերիզլին ունեցած է 202 հայ առաքելական տուն՝ 908 անձ եւ 1834ին կառուցուած Ս. Աստուածածին ու 1897ին կառուցուած Ս. Եղիա զոյգ եկեղեցիները (ՀԱԱ, ֆ. 1388, ց. 1, գ. 111, թ. 2-3):
1880ին մահմետական գաղթականներ գրաւած են ֆերիզլիցի հայերու 2000 արտավար հողատարածք, իսկ 1894ին Լեմոն Տէրէյի թուրքերը գրաւած են հայերու 1000 տէօնիւմ բերրի հողերը, եւ առ այդ, կառավարութեան մօտ եղած դիմումները ամբողջ 30 տարի մնացած են անհետեւանք (Անահիտ Աստոյեան, «Իզմիթի (Նիկոմիդիա) գաւառի հայ բնակչութիւնը եւ նրա սոցիալ-տնտեսական վիճակը XIX դարավերջին եւ XX դարասկզբին»՝ *Հայոց ցեղասպանութեան մշակութային եւ նիւթական հետքեւանքների յաղթահարման մեթոդաբանութիւնն ու գործիքակազմը*, ՀՀԳԱԱ, պատմութեան ինստիտուտ, Երեւան, 2021, էջ 229):

[Մնացեալ գումար]	0620 ղրուշ

Թահվիլով տրուած ստակ՝ 500 ղրուշ:

Արքունի տուրքն է	29247 ղրուշ
Պէտէլի ասկէրիէ	06586 ղրուշ
[Ընդհանուր գումար]	35833 ղրուշ
Թախսիլթարի[29] համար	2000 մաքուր ստակ[30]
Միլլէթ քէահեայի[31]	0500 մաքուր ստակ
[Ընդհանուր գումար]	38333 ղրուշ

Վէրկիէ[32] եւ պէտէլիէէ մնացորդ 1700 ղրուշ:

Պագայէն[33] մնալուն պատճառ ժողովրդեան աղքատութիւնն է:

Ֆէրիզլիւ գիւղիս մէջ կայ 150 տուն բնակիչ:

Գիւղացւոցս երկիրներուն մէկ մասը Ղառասուի ղազէն[34] ըլլալով քանի մը տարիէ ի վեր նոյն երկիրներու յատուկ ճամբայն Սինան Օղլու կոչեցեալ գիւղի տաճիկ բնակիչները գրաւելով՝ նոյն տեղերը չեմք կրնար մշակել, եւ եթէ մշակելու ըլլամք, մեր ճամբայն գրաւողներուն հետ կռուիլ պէտք է, այս մասին մեր աղքատը խիստ կը նեղուի, վասնզի գիւղացւոցս արհեստը երկրագործութիւն է:

Վերոյիշեալ տեղեկութիւնները նոյն գիւղէն մենք ստորագրեալքս տուած ըլլալով՝ վասն ամենայնի ստուգութեանը վկայելով կ'ստորագրեմք:

Տէր Մարտիրոս Սէրգիս Կոմիքեան

Հաճի Հարապետ Փիլիպոսեան Խաչատուր Մուրատեան

Ստեփան Ուզունեան

[29] Թախսիլթար.- հաւաքող, գանձող, հարկահաւաք:

[30] Մաքուր ստակ՝ նկատի ունի օսմանեան «սաղ»՝ իսկական, չխարդախուած ղրուշը, մինչդեռ խարդախուածը կը կոչուէր «չուրուք» ղրուշ՝ աւրուած ղրուշ, որ իսկականին մօտ մէկ-չորրորդ արժէքը ունէր: «Չուրուք»ը յառաջ եկաւ, երբ տնտեսական ճգնաժամի հետեւանքով կառավարութիւնը ղրուշի պատրաստութեան ժամանակ արծաթին խառնեց այլ մետաղներ:

[31] Միլլէթ քէահեա.- թրքերէն՝ ազգի [հայութեան] գործակատար, ազգային գործերու հետամուտ անձնաւորութիւն:

[32] Վէրկէ կամ վէրքո.- թրքերէն՝ ուղղակի տուրք, հարկ:

[33] Պագայէ.- արաբերէն պագայա՝ մնացորդ:

[34] Ղազէ կամ ղազա, ղատա.- արաբերէն՝ գաւառակ:

AN UNPUBLISHED STATISTICAL REPORT OF 1871 ON ADAPAZAR AND ITS THREE ADJACENT ARMENIAN-INHABITED VILLAGES

(Summary)

MIHRAN MINASIAN (mihran.min@gmail.com)

The first part of this unpublished statistical report of 1871 on the Armenian-populated town of Adapazar and its three adjacent Armenian-populated villages focuses on the Armenian-populated four quarters of Adapazar and provides details about their churches, their priests, their male and female schools and teachers, the number of Armenians according to their denominations, and the financial conditions of the churches and schools. In its second part the report provides similar details about the three Armenian-populated villages, namely Tamlekh, Nor Kugh and Ferizli, which were adjacent to Adapazar. Furthermore, the second part of the report highights the difficulties of the Armenian villagers, the dire economic situation they were living in, the usurpation by the state of land owned by the villagers without any compensation for the benefit of the incoming Cherkez refugees and neighboring Turks.

The report bears further importance due to the fact that the book, which is dedicated to Adapazar, barely includes any information on the said areas during the 1870s.

ՏԻԳՐԱՆ ՉԷՅԹՈՒՆՑԵԱՆԻ, ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆԻ, ԱՐՄԵՆԱԿ ՇԱՀՄՈՒՐԱՏԵԱՆԻ, ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐԵԱՆԻ ԵՒ ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՂԱԶԱՐՈՍ ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻՆ

ՀԱՅԿ ԱԻԱԳԵԱՆ (haigavakian@yahoo.com)

Շուրջ քառասուն տարի Ղազարոս Ղազարոսեան հարստացուցած է Գահիրէի երաժշտական կեանքը իր դպրապետական, խմբավարական եւ մանկավարժական անդուլ գործունէութեամբ:

Ծնած է Ռոտոսթօ, 1884 Հոկտեմբեր 21ին (ծննդեան վկայականին մէջ նշուած է 1886): Յաճախած է Ռոտոսթոյի Ս. Խաչ թաղի Յիսուսեան նախակրթարանը: 1899 Յուլիսին շրջանաւարտ եղած է Չորլուի Ս. Գէորգեան վարժարանէն ու անմիջապէս ստանձնած վարժարանի երաժշտութեան ուսուցիչի եւ Ս. Գէորգ եկեղեցւոյ դպրապետութեան զոյգ պաշտօնները: 1906-10՝ եղած է Ռոտոսթոյի Ս. Խաչ եկեղեցւոյ դպրապետը եւ Յիսուսեան վարժարանի երգի ու հայկական ձայնագրութեան ուսուցիչը: 1908ին դպրաց դասը յաջողած է վերածել երկսեռ երգչախումբի: 1910-13՝ վարած է Ադրիանուպոլսոյ Ս. Թորոս եկեղեցւոյ դպրապետութեան եւ Արշակունեան ու Հռիփսիմեան վարժարաններու երգի ու ձայնագրութեան ուսուցիչի պաշտօնները:

Այդ միջոցին քաղաքը կ'այցելէ Սուլթան Րեշատ, որուն ի պատիւ կազմակերպուած հանդիսութեան կը մասնակցին տասնեակ մը բարձրագոյն վարժարաններու երգչախումբեր (թուրք, յոյն, պուլկար, ֆրանսացի, հրեայ եւն.): Հայկական երգչախումբը մեծապէս գնահատուելով *Մէարէֆի* կողմէ, Ղազարոսեան կը հրաւիրուի թուրք վարժապետանոցի եւ Իթթիհատ Թերաքքը վարժարաններու երգի ուսուցիչի պաշտօնին, զոր կը շարունակէ մինչեւ պուլկարներուն գրաւումը քաղաքին՝ 1913 Մարտին (պալքանեան պատերազմ):

1913 Օգոստոսին, Ռոտոսթոյի ազգային իշխանութեան հրաւէրով կը ստանձնէ Ս. Թագ եկեղեցւոյ եւ Յովհաննեան վարժարանի երաժշտութեան պաշտօնները: Կը կազմէ դպրաց դաս եւ երկսեռ երգչախումբ Եկմալեանի քառաձայն պատարագի համար, կու տայ երգահանդէսներ: Թրքական *Մէարէֆի* հրաւէրով երգ կը դասաւանդէ նաեւ թուրք վարժարաններու մէջ:

1915ին, ծնողքին հետ կը տարագրուի Մեսքենէ, ուր թիֆիւսի զոհ կը դառնան ծնողքը եւ մերձաւոր 24 ազգականներ: Շուրջ մէկ տարի անապատներու մէջ թափառելէ ետք, արկածալից ճամփորդութիւններէ եւ Տէր Զօրի վերջնակայանը տանող Ապուհարարի կարաւանէն հրաշքով փախուստ տալէ ետք, 1916ի երկրորդ կէսին կը հասնի Հալէպ: Անմիջապէս Հա-

լէպի ազգային իշխանութեան կողմէ կը հրաւիրուի Ս. Քառասուն մանկանց եկեղեցւոյ դպրապետի պաշտօնին:

1918-19 զինադադարին կը կազմէ երգչախումբ, համերգներ կու տայ նախ Բարսեղ Կանաչեանի եւ Յակոբ Իւվէզեանի հետ, ապա՝ առանձին, միաժամանակ պաշտօնավարելով Ներսէսեան-Հայկազեան վարժարաններուն եւ հայկական որբանոցին մէջ:



Արմենակ Շահմուրատեանի ձեռագիր նամակը

1920ին կ'անցնի Ատանա, ուր ազգային իշխանութեան կողմէ կը հրաւիրուի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ Աբգարեան ու Աշխէնեան վարժարաններու երաժշտութեան պաշտօններուն, միաժամանակ երգ կը դասաւանդէ ֆրանսական եւ ամերիկեան որբանոցներու մէջ: Կը կազմէ երգչախումբ եւ համերգներ կու տայ կրօնական, ազգային, ժողովրդական եւ գեղջուկ երգացանկով:

Եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ եպս. Գուշակեանի հրաւէրով, 1921 Դեկտեմբերին վերջնականապէս կը հաստատուի Գահիրէ, ստանձնելով Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրապետութեան եւ Գալուստեան ազգային վարժարանի երաժշտութեան ուսուցիչի պաշտօնները, ապա՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ եւ շրջան մը՝ Նուպարեան վարժարանի:

Կազմած է Շնորհալի երգչախումբը, տալով բազմաթիւ երգահանդէսներ կրօնական եւ ազգային երգերով, ինչպէս նաեւ մասնակցելով բազմաթիւ ձեռնարկներու: Երգչախումբը մասնակցած է 1946ի *Անուշ* օփերայի Գահիրէի եւ Աղեքսանդրիոյ բեմադրութիւններուն[1]:

Շուրջ քառասուն տարուայ եգիպտահայ նուիրեալ գործունէութենէ ետք, Ղազարոսեան Դեկտեմբեր 1960ին կը ներկայացնէ իր հրաժարականը եւ հանգստեան կը կոչուի: Կը մահանայ Հելուան (Գահիրէ), 1967 Մարտ 21ին:

Ղազարոսեանի ձեռագիրերը կ'անցնին Եդուարդ Յակոբեանին, որուն մահէն ետք՝ 2004ին, այլ կարեւոր ձեռագիրերու հետ, կը տարածուին տարբեր ուղղութիւններով[2]: 2000ականներու վերջաւորութեան, եգիպտացի հնավաճառի մը մօտ գտանք Ղազարոսեանի անձնական թղթածրար մը, որուն մէջ կը գտնուէին իր ստացած ձեռագիր նամակները Տիգրան Զէյթունցեանէն, Արշակ Չօպանեանէն, Արմենակ Շահմուրատեանէն, Աշոտ Պատմագրեանէն եւ Արսէն Երկաթէն, ինչպէս նաեւ ինքնագիր ինքնակենսագրական մը եւ քանի մը այլ փոքր նիւթեր[3]: Զէյթունցեանի եւ Չօպանեանի նամակները ստացած է Ատանա կեցութեան ժամանակ, միւսները՝ Գահիրէ եւ Աղեքսանդրիա:

Ստորեւ կը ներկայացնենք նամակներուն ամբողջականութիւնը, որոնք կը հրատարակուին առաջին անգամ: Նամակներուն պահարանները չեն պահպանուած:

---

[1] Այս տեղեկութիւնները քաղած ենք 1963 Մայիս 1 թուակիր ինքնագիր-ձեռագիր ինքնակենսագրութենէն, որ յայտնաբերուեցաւ հրատարակուող նամակներուն հետ:

Ղազարոսեանի մասին տես նաեւ՝ ա) Գրիգոր Պասմաճեան, «Անհետացող դէմքեր. Ղազարոս Ղազարոսեան», *Ջահակիր*, շաբաթաթերթ, 30 Մարտ 1967, էջ 3, 6, բ) Յոփսէփ Թըգըրեան, «Անձնական յուշեր. Ղազարոս Ղազարոսեան», *Արեւ*, օրաթերթ, 15 Նոյեմբեր 1971, էջ 2, գ) Աւետիս Եափուճեան, *Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն*, Տպ. Արեւ, Գահիրէ, 1981, էջ 291-23:

[2] Եդուարդ Յակոբեանի ունեցած երաժշտական ձեռագիրերու ճակատագրական ուղիին մասին տես՝ *Ծիծեռնակ*, եռամսեայ երաժշտական յաւելուած *Ջահակիր* շաբաթաթերթի, Ե. տարի, Յունուար 1(17):2005, էջ 3-8:

[3] Եգիպտացի հնավաճառներու մօտ նման նիւթերու գոյութիւնը բացառութիւն չէ բնաւ: Անոնցմէ գնուած նիւթերու վաճառքը ընդունուած երեւոյթ մը դարձած է eBayի էջերուն վրայ:

Ա. Տիգրան Զէյթունցեանէն[4]

[4] Մէկ թերթ, գրուած մէկ երեսը, 20.9 x 26.9 սմ.:

Եգիպտահայ երաժիշտներուն մէջ իր արժանաւոր տեղը կը գրաւէ երաժշտահան, մանկավարժ Տիգրան Զէյթունցեան (1892, Մարաշ–1963, Գահիրէ): Ան մեծ նուիրաբերութիւն ցուցաբերած է յատկապէս մանկավարժական ասպարէզին մէջ: Հայկական եւ արաբական դպրոցներու մէջ կազմակերպած է մանկական նուագախումբեր, որոնց համար մշակած է անթիւ ստեղծագործութիւններ, կատարած հայ, եգիպտացի եւ օտարազգի երաժշտահաններու երկերու դաշնակի դիւրամատչելի փոխադրութիւններ:

Նախնական ուսումը ստացած է Մարաշի Ամերիկեան ակադեմիա բարձրագոյն վարժարանը, իսկ 1913ին շրջանաւարտ եղած Գերմանական քոլէճէն: Ապա տեսչութեան եւ ուսուցչութեան պաշտօններ վարած է Հարունիէի գերմանական որբանոց-վարժարանը եւ Հասանպէյլիի ազգային որբանոցը, ինչպէս նաեւ Այնթապի Կիլիկեան ճեմարանը:

Տարագրուած է Հալէպ, որմէ ետք Ճիսր Էլ-Շուղուրի մէջ եղած է պետական պաշտօնեայ, իսկ պատերազմէն ետք պաշտօնավարած է Տէօրթ Եոլի Քելէկեան որբանոցը իբրեւ աւագ ուսուցիչ եւ առողջապահութեան վերին հսկիչ՝ ուրկէ ղրկած է Ղազարոսեանի 1920 Դեկտեմբեր 5 թուակիր ներկայ նամակը:

Կիլիկիոյ պարպումէն ետք, 1922ին հաստատուած է Եգիպտոս, ուր մինչեւ 1955 ստանձնած ՀԲԸՄի Գահիրէի մասնաճիւղի քարտուղարի պաշտօնը: Միաժամանակ, եղած է այցելու ուսուցիչ Գահիրէի Նուպարեան, Գալուստեան, Արարատեան եւ Թաշեան վարժարաններուն մէջ: 1926-30՝ եղած է Գալուստեան վարժարանի հոգաբարձութեան անդամ, 1954ին՝ Եգիպտահայ ուսումնական խորհուրդի անդամ:

Տուած է բազմաթիւ նուագահանդէսներ եւ դասախօսութիւններ (Մանուկ Գ. Ճիզմէճեան, *Խարբերդ եւ իր զաւակները*, Ֆրեզնօ, 1955, էջ 369. նաեւ՝ Աւետիս Եափուճեան, էջ 288-90. նաեւ՝ Արտաշէս Հ. Գարտաշեան, *Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար*, *հատոր Բ.*, Վենետիկ, 1986, էջ 456, 467):

Յաջողած է տպագրել երկու աշխատութիւններ.- ա) *Նոր մեթոտ երաժշտութեան, Ա. շրջան, մանկական նուագախումբ, Ա. եւ Բ. մաս*, Գահիրէ, 1938 (ըստ գիրքի վերջաւորութեան հրատարակուած ցուցակին, Զէյթունցեան հետզհետէ տպագրութեան պիտի յանձնէր *Նոր մեթոտ երաժշտութիւն*ի շարունակութիւնը՝ կազմուած չորս հատորէ, մանկական եւ դպրոցական երկու երգարաններ եւ երաժշտութեան համառօտ պատմութիւն մը, որոնք մնացած են անտիպ), բ) *Ֆրէտէրիք Շոբէն*, Գահիրէ, 1950:

Իր երաժշտական յօրինումներէն տպագրած է երկու պրակներ.- ա) *Քայլերգ Նուպարեան ազգային վարժարանի*, Տպ. Նեղոս, Գահիրէ, 1932: Վերահրատարակուած՝ *Ծիծեռնակ*, եռամսեայ երաժշտական յաւելուած *Ջահակիր* շաբաթաթերթի, Գահիրէ, էջ 27-29, բ) *Քայլերգ ողիմպիական* (1953ի եգիպտահայ ողիմպիական խաղերուն առիթով), Գահիրէ, 1953: Հրատարակած է նաեւ երգեր Աշոտ Պատմագրեանի *Գանձարան հայկական երգերու* ժողովածուին մէջ (Գահիրէ, 1937-1940): Ստորեւ ցանկի բոլոր երգերը միաձայն են, բացի նշուածէն.- ա) *Լուսին* (Լուսին եւլաւ ան սարէն, մշակում՝ Տ. Զէյթունցեան, էջ 283), բ) *Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն* (Աշուղ Ջիւանի, գրի առաւ՝ Տ. Զէյթունցեան, էջ 303), գ) *Գութա-*

ներգ (Արի՛ գութան, վարի՛ գութան, խօսք՝ Յ. Թումանեան, մշակում՝ Տ. Զէյթունցեան, էջ 306), դ) *Ձմեռը անցաւ, եկաւ նոր գարուն* (խօսք՝ Հ. Ամիրեան, երաժշտ.՝ Տ. Զէյթունցեան, էջ 308), ե) *Լորիների տակ* (խօսք՝ Ա. Իսահակեան, երաժշտ.՝ Տ. Զէյթունցեան, էջ 309), զ) *Պօղոս Փաշա Նուպարին. Օ՜ն, թող զարնեն քնար, հնչեցնեն շեփոր* (խօսք՝ Ակիւլինէ, երաժշտ.՝ Տ. Զէյթունցեան, էջ 313), է) *Ազատութեան մարտիկներին* (խօսք՝ Շուշանիկ Կուրղինեան, ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 321), ը) *Հերոս Անդրանիկ. հերոս մռնչեց, սուլթան դողդողաց* (կամաւորի երգ, գրի առաւ՝ Տ. Զէյթունցեան, էջ 323), թ) *Քըրդի աղջիկ* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 327), ժ) *Հայրենիք* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 343), ժա) *Բարի հրեշտակ* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 344), ժբ) 12. *Սասուն. Իսլամական գոռ վաշտերը կատաղի* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 345), ժգ) *Քայլերգ մարտական* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 347), ժդ) *Հրաւէր. տեսէք աղաւնին Նոյեան տապանին* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 348), ժե) *Օրօր, բալա՛ ջան* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 349), ժզ) *Հայաստան. ո՞րն է աշխարհ Հայաստան* (խօսք՝ Մ. Փորթուգալեան, ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 354), ժէ) *Խաղաղ դաշտի որդիք* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 355), ժը) *Հովուերգ. հովիւը սարում տխրեց* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, երկձայն, էջ 356-57), ժթ) *Ափանայի կոփորածը. կոփորածն անգութ, հայերը թող լան* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 358), ի) *Հարսանեկան պարերգ. Տէր հայրն այսօր կարդաց պսակ* (խօսք՝ Ստեփան Համամճեան, երաժշտ.՝ Տ. Զէյթունցեան, ժողովրդական մոթիֆ, էջ 366), իա) *Կամաւորի երգ. ձմեռն անցկացաւ, գարուն է արդէն* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 367), իբ) *Պանդխտի ողբը. օփար երկիր, օփար պանդուխտ կը հեծեմ* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 419), իգ) *Ջեփիւռ Հայաստանի. հայկազն որդի շար գունդ ի պար* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 689), իդ) *Տղայի փաղը. սիրելի՛ս, մի հափիկ ես* (խօսք՝ Ա. Իսահակեան - *Մանթաշի փերին*, պոէմ - մշակում՝ Տ. Զէյթունցեան (ժողովրդ. մոթիւ Ծոփաց գաւառի, էջ 692-93), իե) *Դարդ մ՛ունիմ դարդերով* (երգուած Աշուղ Մկրտիչ Լուսարարեանէ, մշակում՝ Տ. Զէյթունցեան, հաւաքած ժողովրդ. երգերէ, էջ 706), իզ) *Երգ մեծին Վարդանաց. հուր բարկութեան համայն հայոց* (խօսք՝ Ռ. Սեւէֆճեանի, ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 713-14), իէ) *Հայրենիք փուն* (ձայնագրեց՝ Տ. Զէյթունցեան, էջ 715):

Մամուլի մէջ հանդէս եկած է յօդուածներով եւ յօդուածաշարերով, որոնցմէ կարելի է առանձնացնել.- ա) «Երաժշտութեան տարրերը եւ անոնց ուսուցումը ազգ. վարժարաններու մէջ» (*Նոր սերունդ*, օրաթերթ, Ատանա, Յուլիս-Օգոստոս 1921), բ) «Եփրատ գոլէճ երաժշտանոցի մէկ նոր յաջողութիւնը» (*Հայաստանի կոչնակ*, շաբաթաթերթ, Նիւ Եորք, 27 Օգոստոս 1932, էջ 889), գ) «Օր. Ալիս Խանդամուր» (*Հայաստանի կոչնակ*, 28 Յունուար 1939, էջ 83), դ) «Պէթովէնի կեանքէն դրուագներ» (*Հայաստանի կոչնակ*, 30 Սեպտեմբեր 1939, էջ 1034-36), ե) «Պէթովէնի կեանքէն դրուագներ (Պէթովէնի վերջին վայրկեանները)» (*Հայաստանի կոչնակ*, 10 Օգոստոս 1940, էջ 784-86), զ) «Ֆրէտէրիք Շոբէն 1810-1849 (իր մահուան հարիւրամեակին առթիւ)» (*Արեւ*, 7 Նոյեմբեր 1949, 5 Յունուար 1950), է) «Լուտվիկ վան Պէթհովէնի կեանքէն դրուագ մը» (*Արեւ*, 28 եւ 30 Յունուար 1950), ը) «Հրաշք մանուկը Եոհան Վոլֆկանկ Ամատիուս Մոցարթ» (*Արեւ*, 13 Փետրուար եւ 19 Ապրիլ 1950), թ) «Ֆրանց Լիսթ եւ Օր. Քարոլին» (*Արեւ*, 19 եւ 28 Յունիս 1950), ժ) «Եոհան

5 Դեկտ. 1920
Տ. Եօլ

Մեծայարգ Տիար Ղազարոս Ղազարոսեան
Երաժիշտ ուսուցիչ՝ Ազգ. Վարժարաններու
Ատանա

Յարգելի Տիա՛ր

Առջի օր Սուետիացի Տ. Վարդան Քահանան ինձ հաղորդեց Ձեր ապսպրանքը, անմիջապէս գրել տալով մեր աշակերտներէն միոյն, ահաւասիկ ներփակ կը ղրկեմ:

Պիտի խնդրէի Ձեր Ազնուութենէն որ հաճէիք, Պատարագի երգեցողութիւններէն՝ «Հոգի Աստուծոյ որ զփառակցի»էն յետոյ մինչեւ վերջը, եթէ նօթագրեալ Եկմալեան եղանակը (երկձայն կամ եռաձայն) ունիք, ղրկէիք, որովհետեւ ես թէպէտ ունիմ նօթագրուած եւ երկձայն բայց մինչեւ այն մասը կայ, ատկէ զատ «Խորհուրդ խորին»ին ալ ծանր եղանակը չկայ:

Խիստ շնորհակալ պիտի մնամ եթէ ղրկէիք զանոնք շուտով, որովհետեւ «ծնունդին» համար կ'ուզեմ տղաքը պատրաստել: Եթէ գրել տալու եւն.ի ծախք ըլլայ պատրաստ եմ վճարել, իսկ եթէ Ձեր քով արդէն տետրակ կայ ղրկելիք վերադարձուելու

Սեպասթիէն Պախ (իր մահուան 200-ամեակին առթիւ)» (*Արեւ*, 12 Օգոստոս եւ 18 Սեպտեմբեր 1950):

Եգիպտահայ մշակոյթի պատմութիւն հատորին մէջ Եափուճեան կը գրէ՝ թէ անտիպ կը մնան «*աւելի քան տասնհինգ մեծ օփերաներու պատմութիւնը, ինչպէս նաեւ դպրոցական մեծածաւալ երգարանը, որ կը պարունակէ մօտաւորապէս երեք հարիւր երգեր, աղօթքներ, մաղթանքներ, քայլերգեր, ինչպէս նաեւ ազգային, հայրենասիրական, ժողովրդային, բնութեան մասին, մարզական երգեր: Անտիպ կը մնայ նոյնպէս հայկական ժողովրդական երգերու մեղեդիներով նուագախումբի համար պատրաստուած խառն երաժշտութիւններ*» (էջ 290):

1992ին, պատահմամբ մեր ձեռքը կ'անցնէր Ձէյթունցեանի ձեռագիրերու պատկառելի հաւաքածոյ մը, ուր, սակայն, վերոյիշեալ անտիպներէն ոչ մէկը կը գտնուէր: Ձեռագիրերուն մեծամասնութիւնը կը կազմէր դպրոցականներու համար նախատեսուած դաշնակի, նուագախումբի փոխադրութիւններ, որոնք ցոյց կու տային Ձէյթունցեանի նուիրուածութիւնն ու բծախնդրութիւնը մանկավարժական գործունէութեան նկատմամբ: Ձեռագիրերը կը բովանդակէին նաեւ հայերէն, անգլերէն եւ արաբերէն երաժշտական դասագիրքեր՝ մեծ մասամբ թերի, որոնք, ինչպէս իրենց բովանդակութենէն կարելի էր դատել, վերոյիշեալ անտիպ դասագիրքերը չէին կրնար ըլլալ: Փոքր մաս մըն ալ կը կազմէին ինքնուրոյն երգեր՝ դարձեալ դպրոցական տարիքի աշակերտներու համար:

Այդ ձեռագիրերէն փոքր ընտրանի մը կը հրատարակուի 2001ին՝ «Տիգրան Ձէյթունցեան. տարբեր ստեղծագործութիւններ», *Տիծեռնակ*, Յուլիս 2001, Ա. տարի, թիւ 3, էջ 25-35.- ա) *Քայլերգ Հ.Բ.Ը.Միութեան* (երգի եւ դաշնակի համար: Տարբեր է Յարութիւն Սինանեանի համանուն երկէն, որ վաւերացուած քայլերգն է Հ.Բ.Ը. Միութեան), բ) *Քայլերգ կըրլ կայտերու* (դաշնակի համար), գ) *Մանկական երգեր* (երգի եւ դաշնակի համար), դ) *Տէ՛ր, կեցո՛ դու զհայս* (երգին երկձայն ձայնագրութիւնը):

Ձէյթունցեանի գտնուած ձեռագիրերը կը փոխադրուին Երեւանի Գրականութեան եւ Արուեստի Թանգարան, ուր կը պահուին մինչեւ այսօր:

համար, այդ աւելի լաւ, անմիջապէս կը ղրկեմ: Կանխայայտ շնորհակալութիւններով եւ յարգանքներով:

Ձերդ
Տիգրան Զէյթունցեան

Բ. Արշակ Չօպանեանէն[5]

Սիրելի Պ. Ղազարոսեան

Չեմ գիտեր թէ այս աշնան Փարիզ երթալու ձեր ծրագիրը պահա՞ծ էք թէ ոչ: Կ'ուզեմ որ գիտնաք թէ Երուսաղէմ, ուր երեք շաբաթ մնացի, անհրաժեշտ պէտք կայ ձեզի պէս վարպետ երաժշտի մը: Մեր վանքի եկեղեցւոյ երգեցիկ խումբը խեղճ բան է, որովհետեւ կարող ուսուցիչ մը չունի. տարրերը կան, լաւ ձայն ունեցող մանչեր ու աղջիկներ, ուսուցիչը կը պակսի:

Երուսաղէմ այսօր՝ անգլիական հովանաւորութեան տակ՝ միջազգային կարեւոր կեդրոն մը ըլլալու վրայ է, բացի իբր Սրբազան Քաղաք իր ունեցած անզուգական հմայքէն. ու թէ ինչ պատկառելի ու մեծարժէք հաստատութեան մէջ է մեր վանքը, պէտք չունիմ քեզի բացատրելու:

Եթէ Ատանայի մէջ ձեր գործը շարունակելու համար ձեզմէ յաջորդ մը հասցուցած էք եւ մտադիր էք երթալ Փարիզ, շատ լաւ պիտի ընէիք անկէց առաջ Երուսաղէմ անցնելով, ուր գոնէ քանի մը ամիս մնալով կրնաք լաւ խումբ մը կազմել: Ինչ պայման որ առաջարկէք վանքը վստահ եմ որ կ'ընդունի: Եթէ համաձայն էք, գրեցէք Հ. Մեսրոպ Նշանեանին (Rev. Père Mesrob Nichanian, couvent arménien de St. Jacques, Jérusalem):

Ընդունեցէք սիրալիր բարեւներս
Ա. Չօպանեան

Յ. Գ. – Ութը օր առաջ եկայ հոս, 8 օրէն նորէն Երուսաղէմ կ'երթամ եւ անկէց կ'սպասեմ Ձեր պատասխանին: Ժառանգաւորացի աշակերտաց թիւը 25 է, որ 30ի պիտի հասնի: Տասը որբ Հալէպէն հետս բերի, շատերը Ձեր աշակերտներէն են:

---

[5] Երկու թերթ, տարբեր չափեր: Նամակը անթուակիր է եւ առանց վայրի:
Նամակին մէջ Չօպանեան կը գրէ Երուսաղէմ կատարած այցելութեան մասին, ապա կը նշէ 16օրեայ կեցութիւնը «հոս»՝ ուրկէ ղրկած է նամակը, եւ կը տեղեկացնէ Երուսաղէմ վերադառնալու մտադրութիւնը:
Չօպանեանի առաջին այցելութիւնը Երուսաղէմ կայացած է 1921 Ապրիլին (Յիմէնսէ, «Պ. Արշակ Չօպանեան Երուսաղէմի մէջ», *Արեւ*, 25 Ապրիլ 1921, էջ 1-2), որմէ ետք Մայիսին գտնուած է Պէյրութ, կրկին Երուսաղէմ վերադառնալու մտադրութեամբ («Պ. Արշակ Չօպանեան», *Արեւ*, 9 Մայիս 1921, էջ 3): Ուրեմն, նամակը գրուած ըլլալու է 1921 Մայիսին, Պէյրութէն:
Քանի մը ամիս առաջ՝ 1920 Դեկտեմբերին, Չօպանեան այցելած էր Ատանա, ուր կը բնակէր ու կը պաշտօնավարէր Ղազարոսեան: «Երիտասարդ Տղամարդոց Քրիստոնէական Ընկերակցութեան» (YMCA) սրահին մէջ Չօպանեան ներկայեղած ու ճառախօսած էր ի պատիւ Ճիմ Չանգալեանի սարքուած թէյասեղանին, որուն ընթացքին Ղազարոսեան մեներգած էր *Հայրի՛կ, հայրի՛կ* երգը (Էլան (*Հայ ձայն*), «Թէյասեղան ի պատիւ Պ. Չանկալեանի Ատանայի մէջ», *Արեւ*, 24 Յունուար 1921, էջ 3): Դեկտեմբերի վերջաւորութեան Չօպանեան մեկնած էր Ատանայէն («Թէյասեղան մը», *Արեւ*, 24 Յունուար 1921, էջ 3): Այս այցելութեան Չօպանեան ծանօթացած ըլլալու է Ղազարոսեանի գործունէութեան ու կարողութեան:

Գ.- Արմենակ Շահմուրատեանէն[6]

Ալէքսանդրիա – Չորեքշաբթի
Յարգելի Պրն. Ղ. Ղազարոսեան
Գահիրէ

Սիրելի բարեկամ

Առի Ձեր նամակը, շնորհակալ եմ կրած նեղութեանդ համար: Սրուանձտեանը[7] չունի *Ո՛հ ինչ քաղցր բան* երգը, միւս երգերը ձեռագիր լինելուն, մէկու մը չի տար, հակառակ խնդրանքիս, որովհետեւ ինքը կ'ուզէ տպագրել տալ յարմար ատենի մը[8]:

---

[6] Երկծալ մէկ թերթ, թերթը՝ 27.2 x 21.2 սմ., Աղեքսանդրիայէն գրուած, անթուակիր: Ըստ բովանդակութեան, ան գրուած է Վաղարշակ Սրուանձտեանցի Աղեքսանդրիոյ երգահանդէսէն ետք եւ Շահմուրատեանի նոյն քաղաքը տալիք երգահանդէսէն առաջ: Սրուանձտեանցի երգահանդէսը տեղի ունեցած է 1925 Մարտ 14ին, իսկ Շահմուրատեանինը տեղի պիտի ունենար 1925 Ապրիլ 4ին: Եւ քանի որ նամակի գրութեան օրը Չորեքշաբթի մըն է, ուրեմն ան գրուած պէտք է ըլլայ 1925 Մարտ 25ին կամ Ապրիլ 1ին: Ապրիլ 1ը աւելի հաւանական է, քանի որ նամակին մէջ կը նշէ՝ թէ երգահանդէսին համար «ամէն ինչ պատրաստ է»:

[7] 1923 Մայիսին, Աղեքսանդրիոյ թեմական ընտրութիւններուն կը յաղթանակէ ՀՅ Դաշնակցութիւնը, որ կը սկսի վարել առաջնորդական աշխատանքը: Նոյն տարիին, ղեկավարութիւնը Աղեքսանդրիոյ Պօղոսեան ազգային վարժարանի տնօրէնի պաշտօնին կը հրաւիրէ Նիկոլ Աղբալեան, որ կարողապէս կը վարէ դպրոցը մինչեւ դաշնակցական շրջանի աւարտը՝ 1928: Իր կարգին, 1924ին, վարժարանի երաժշտութեան ուսուցիչի պաշտօնին համար Աղբալեան կը հրաւիրէ Կոմիտաս վարդապետի սաներէն Վաղարշակ Սրուանձտեանց, որ ընդամէնը երեք տարի առաջ (1921) աւարտած էր Պերլինի Երաժշտանոցի դաշնակի եւ խմբավարութեան բաժինները եւ սկսած փայլեցնել իր տաղանդը: Ան նոյնպէս այդ պաշտօնին կը մնայ մինչեւ 1928, որմէ ետք կը մեկնի Մ. Նահանգներ:
Պաշտօնավարութեան չորս տարեշրջաններուն՝ 1924-28, դպրոցէն անդին կը կազմակերպէ երգչախումբեր եւ կը զբաղի անձնական յօրինումներով: Մինչեւ Եգիպտոս գալը, Սրուանձտեանց արդէն տպագրած էր իր յօրինած ու մշակած *Հայ երգեր* յայտնի շարքի առաջին երեք ժողովածուները (թիւ 1՝ Փարիզ, 1921. թիւ 2՝ Փարիզ, 1922. թիւ 3՝ Լայփցիկ, 1923): Շարքի թիւ 4-7ը կը յօրինուին ու կը պատրաստուին Աղեքսանդրիոյ մէջ եւ կը տպագրուին Փարիզ (թիւ 4-5՝ 1926, թիւ 6-7՝ 1927): Այս շրջանին, Սրուանձտեանց կը ծանօթանայ 1924ին Աղեքսանդրիա հաստատուած եւ Պօղոսեանի մէջ ուսուցչութեան պաշտօն ստանձնած Հմայեակ Շէմսին, որուն բանաստեղծութիւններուն վրայ կը յօրինէ մեներգեր եւ խմբերգեր, զանոնք ամփոփելով *Հայ երգեր*ու վեցերորդ շարքին մէջ:

[8] Ասիկա չի խանգարեր՝ որ Աղեքսանդրիոյ 1925 Ապրիլ 4ի երգահանդէսին, Շահմուրատեան իր նուագացանկին մէջ առաջին անգամ ընդգրկէ Սրուանձտեանցի մշակած *Տըլէ եամանը* (*Հայ երգեր*, թիւ 2): Այս գործը, Սրուանձտեանցի *Ալագեազ բարձր սարին*ի (նոյն տեղը) հետ միասին, պիտի դառնային մեներգիչի նուագացանկային կարեւոր երգերէն:

Իր Concert-ը իրեն տուած է 60 ոսկի զուտ շահ, հակառակ աւելորդ ծախսերու[9]: Թողած տպաւորութիւնը թեր ու դէմ է՝ ըստ ոմանց աղէկ, միջակ կամ թոյլ: Աւելի ճիշդ, ըստ իս, թերթերուն մէջ արտայայտուածը՝ ամենէն շիտակն է[10]: Նպատակ չունի այլեւս այս saison-ին ուրիշներ տալ, ցրուեց խումբը[11]: Հիմակուընէ կը պատրաստուի եկող saison-ին համար մէկ-երկու օփերէթներ պատրաստել եւ ամառը հոդ գալ տեղւոյն վրայ եւս խումբ պատրաստել[12]: Ինքը շատ գոհ է եղած արդիւնքէն եւ լաւատես՝ ապագայի մասին:

Դուք ի՞նչ կ'ընէք, կը յուսամ թէ պատարագի գործը յաջող կը քալէ ու արդիւնքը նպաստաւոր պսակը ըլլայ թափած ջանքերուդ, որուն կը փափագիմ իբր Զեզի բարեացակամ մը:

Գէորգի հիւանդութիւնը ինձ ցաւ պատճառեց, յանցանքը քիչ մը ալ իրենց է եթէ չըսեմ մեծամասամբ: Տունը միշտ courant d'air-ի մէջ է, որովհետեւ միշտ կը խաղայ, կը քրտնի տղան, արդիւնքն ալ բնականաբար պիտի ըլլայ՝ պաղառութիւն: Չը մոռնաք իրենց յայտնել, այսինքն Տէր եւ Տիկ. Տէր Պաղամեաններուն, իմ բարեւներս,

---

[9] Վաղարշակ Սրուանձտեանցի 130 անդամներէ կազմուած Գողթան երգչախումբի երգահանդէսը տեղի ունեցած է 1925 Մարտ 14ին, Աղեքսանդրիոյ Թատրոն Քիւրսալի մէջ (*Արեւ*, 5 Մարտ 1925, էջ 3):

[10] *Յուսաբեր*ի անանուն թղթակիցը կը գանգատի Քիւրսալ թատրոնի աքուսթիք տկարութենէն՝ որ խանգարեց ձայնին տարածումը: Նաեւ, երգչախումբի անդամներու անկարողութենէն: Մանրամասն նկարագրութենէ ետք կ'եզրակացնէ. «*Առաջին համերգին բոլոր լաւ կողմերը արդիւնք էին Պ. Սրուանձտեանցի կարողութեան ու ճարտարութեան իսկ թերութիւնները՝ խումբին անխնամ կազմութեան*» (Թղթակից, «Պ. Սրուանձտեանցի համերգը», *Յուսաբեր*, 19 Մարտ 1925, էջ 2): Իր քննախօսականին մէջ Էլան կը նշէ՝ որ յաջողութիւն մըն է այսպիսի աննպաստ պայմաններու մէջ համերգ կազմակերպելը, քանի որ շատ դժուար է գաղութի մէջ երգչախումբ կազմելը, կապուած յատկապէս իգական սեռի բեմ բարձրանալուն հետ (Էլան, «Հայ համերգը», *Արեւ*, 20 Մարտ 1925, էջ 1-2):

[11] Խումբի ցրումը որոշ քննադատութեան տեղիք կու տայ: Երգչախումբի անդամներէն մէկը ցրումին պատճառը կը համարէ նոյնինքն Սրուանձտեանցը, որ հակառակ համերգի յաջողութեան, անշնորհակալ վերաբերմունք ունեցած է անդամներուն նկատմամբ (Ժիւլ Ս. Նաօրէվսքի (Աղեքսանդրիա), «Հայ համերգ մը», *Կաւռոշ*, Կ. Պոլիս, 26 Ապրիլ 1925, էջ 18):

[12] Եղած է օփերէթ պատրաստելու ծրագիր մը, ինչպէս կը տեղեկացնէ *Սֆինքս*. «Կը լսենք թէ Պ. Սրուանձտեանց կազմակերպելու վրայ է օբերէթի նուագախումբ մը բեմադրելու համար անմահն Չուհաճեանի *Էչպլէպիճի հօր հօր աղան*» (6 Ապրիլ 1925, *Սֆինքս*, Ա. տարի, թիւ 5, էջ 3): Ծրագիրը երբեք չ'իրականանար:

յարգանքներս, ինչպէս եւ Վարդանեանին, Տօնիկեանին, մեր Մելիքին[13]: Այստեղ ամէն ինչ պատրաստ է, կը սպասեմ ապրիլ 4-ին[14]:

Երուսաղէմ նամակ գրուած է մէկ-երկու անձնաւորութեանց, հաւանաբար ստացուի պատասխանները մինչեւ Concert-ի օրը[15]: Violoncelle-ի խնդիրը[16], գալուս պէս, հետեւեալ օրը կարգադրեցի: Մինչդեռ քիչ մնաց որ ինձի պարապ տեղ 10 ոսկիի ծախք մը ընել պիտի տային... յիմարնե՜ր:

Անկեղծ բարեւներով միշտ Ձերդ
Ա. Շահ-Մուրատեան

Դ.- Արմենակ Շահմուրատեանէն[17]

Պէյրութ, 21.5.925

Սիրելի Պր. Ղ. Ղազարոսեան

---

[13] Հաւանաբար՝ Մերկեր Մելիք, պոլսահայ յայտնի երաժիշտ՝ մասնագէտ արեւելեան եւ եկեղեցական երաժշտութեան, որ 1913ին հաստատուած էր Գահիրէ (Գրիգոր Պասմաճեան, «Երաժիշտ Մերկեր Մելիք», *Ջահակիր*, 12 Մարտ 1964, էջ 4), եւ յաջողած էր 1925 Մարտ 29ին, Ռամսէս Թատրոնին մէջ բեմադրել իր հեղինակած (խօսք եւ երաժշտութիւն) *Ութսունոց փեսան* երեք արար օփերէթը (*Արեւ*, 25 Մարտ, էջ 3 եւ, 1 Ապրիլ 1925, էջ 2): Այս ներկայացումը կը կայանար Շահմուրատեանի Գահիրէի երգահանդէսէն (15 Մարտ 1925) ընդամէնը երկու շաբաթ ետք:
Ութսունոց փեսան ուրիշ բեմադրութիւն մըն ալ կ'ունենայ 1936 Ապրիլ 23ին, Թատրոն Ռիցի մէջ («Նուագահանդէս մը», *Արեւ*, 18 Մայիս 1936, էջ 3): Օփերէթին բառերը կը տպագրուին Գահիրէ, տպարան Սահակ Մեսրոպ, 1932: Մելիք Գահիրէի մէջ տպագրած է նաեւ երկու այլ գիրքեր՝ *Ժողովրդական վիճակարան* (1920) եւ *Քնարերգական հաւաքածոյ* (անթուակիր):
Մելիքի շնորհիւ փրկուած են Համբարձում Լիմոնճեանի կարեւոր ձեռագիրեր («Համբարձում Լիմոնճեանի աշխատութիւնները՝ Մերկեր Մելիքի թարգմանութեամբ եւ ծանօթագրութեամբ», *Ծիծեռնակ*, Յունուար, 1(17):2005, էջ 3-122):

[14] Բացի զանազան ձեռնարկներու իր մասնակցութիւնը բերելէ, Շահմուրատեան Եգիպտոսի մէջ տուած է 11 երգահանդէսներ՝ 1912 Փետրուար 19 (Գահիրէ), Մարտ 12 (Աղեքսանդրիա), 1913 Յունուար 15 (Գահիրէ), 1922 Փետրուար 19 (Գահիրէ), Փետրուար 28 (Աղեքսանդրիա), 1925 Մարտ 15 (Գահիրէ), Ապրիլ 4 (Աղեքսանդրիա), Մայիս 3 (Գահիրէ), 1927 Դեկտեմբեր 24 (Աղեքսանդրիա), 1928 Յունուար 15 (Գահիրէ), Ապրիլ 1 (Գահիրէ), Ապրիլ 14 (Աղեքսանդրիա) (*Արմենակ Շահ-Մուրատեան. ժամանակագրութիւն, յօդուածներ, երգացանկ*, պատրաստեց՝ Հ. Ա., Գահիրէ, *Ջահակիր* շաբաթաթերթ, Յաւելուած, ԺԸ:2018, էջ 167-68, 178, 184, 393, 395, 428, 430, 433-34, 478-80, 483-85):
Նամակին մէջ յիշատակուած 1925 Ապրիլ 4ի երգահանդէսը կը կայանայ Աղեքսանդրիոյ Ամերիկեան Միսիոնի սրահին մէջ, դաշնակի նուագակցութեամբ Ժ. Փասքարելլոյի, մեներգելով Անուշաւան Տէրղեւոնդեանի, Վաղարշակ Սրուանձտեանցի, Կոմիտաս վարդապետի, Ռոմանոս Մելիքեանի, Արա Պօյաճեանի, Չայքովսքիի, Մասընէի գործերը:

[15] Եգիպտոսէն ետք Շահմուրատեան կ'անցնի Երուսաղէմ, ուր 1925 Մայիսին երգահանդէս կու տայ (*Արմենակ Շահ-Մուրատեան. ժամանակագրութիւն,* էջ 438):

[16] Ապրիլ 4ի երգահանդէսի թաւջութակահարն էր՝ մաէսթրօ Լանզոնի:

[17] Երկծալ երկու թերթեր, թերթը՝ 27.2 x 21.2 սմ.:

Ազնիւ բարեկամ

Հիւանդութիւնդ ինձ ցաւ պատճառեց, թուլամորթ ու վախկոտ լինելուդ պատճառաւ: Այդ բոլորը արդիւնք է հակաառողջապահական պայմաններու տակ ապրելուդ: Այնչափ կը հագնիք ու տաք որ որեւէ նոյնիսկ, հեռի քէնէ... չորքոտանին, շատոնց իվեր ոտքերը դէպի վեր ցցած կ'ըլլար: Խորհուրդ կուտամ քեզի որ մեր տնեցւոց կերակուրի լամպայի պէս հատ մը առ, դուրս ելած պահուն վառած – յետոյքիդ վրայ գամէ որ շարունակ տաք ըլլաս ու քուռանտէրէ չը վախնաք: Ինչ եւ իցէ եղածը անցած է ու չը կարօտի Ձեզ ուրիշ անգամ:

Շնորհակալութիւն կրած նեղութեանդ համար: Նամակդ առի ու իմիններուս մասին անհոգ եմ ալ: Այստեղ բարեկամիս մէկը որ ներկայ եղած էր Դպրոցասէրի նուագահանդէսին, պատմեց ինձ որ ձախողած է եղեր ան իմինիս պէս: Այս ժողովուրդը մաքուր, հոգեպարար, վեհ, ազնուացնող musique չը սիրեր այլ՝ շնական, անբարոյական, լինելով ինքը անբարոյական ու շնական:

Կը ներէք որ, ինչպէս ալ մեր տնեցիները, եկած օրէս Ձեզ քառթ մ'իսկ չը գրեցի, դիւրին բան չէ անծանօթ վայր այցելել, մանաւանդ գործի մը մտադրութեամբ մարդիկ գտնել, իրար քովէ քով բերել, թատրոն վարձել, եւն. եւն.:

Իւվէզեանը[18], ճիշդ է ինձ հետ նեղուեցաւ ու ժամավաճառ եղաւ, շատ բարեսիրտ տղեկ մըն է, պատմեցի իրեն հարկ եղածը, մանաւանդ իր գրքոյկի մասին, ինքն ալ համոզուեցաւ[19]: Աս ալ compositeur հռչակուելու մոլուցքէն բռնուած է... ուրիշներու

---

[18] Յակոբ Իւվէզեան (1891, Մարաշ–1943, Պէյրութ): 9 տարեկանին Մարաշի մէջ սկսած է հետեւիլ ջութակի դասերու, 1911ին հիմնած է Երգասիրաց ընկերութիւնը, ապա երաժշտութիւն դասաւանդած Այնթապի Կեդրոնական Թուրքիոյ Քոլէճին մէջ: Երաժշտութիւն ուսանելէ ետք Ժընեւ, 1912ին Այնթապի մէջ կը սկսի իր երաժշտական մանկավարժական եւ կատարողական գործունէութիւնը, հիմնելով երգչախումբ, նուագախումբ եւ ֆանֆառ:
1915ին կը բռնագաղթուի Հալէպ, ուր կը կազմէ երգչախումբեր եւ կը զբաղի մանկավարժութեամբ: 1921ին կը փոխադրուի Լիբանան՝ Ճունիէի, Ճիպէյլի եւ Ղազիրի որբերուն եւ կարօտեալներուն համար դասաւանդելով երաժշտութիւն: 1924ին վերջնականապէս կը հաստատուի Պէյրութ, ուր 1925ին կը հիմնէ երգչախումբ, դաշնակի վաճառքի եւ վերանորոգումի տուն եւ Նուագ երաժշտական հրատարակչութիւնը՝ որուն միջոցով կը տպագրէ իր դասագիրքերը: 1932ին կը հիմնէ նուագախումբ եւ Քնար երգչախումբը, տարեկան երգահանդէսներուն ներկայացնելով հայրենասիրական ու կրօնական երգեր, ինչպէս նաեւ ծաւալուն գործեր (Roubina Artinian, "Armenian Choirs in Lebanon, 1930-1980: A Bridge Between the Past and the Present,"՝ *Armenians of Lebanon: From Past Princesses and Refugees to Present-Day Community*, edited by Aïda Boudjikanian, Haigazian University, Beirut, 2009, էջ 134-37):

[19] Յակոբ Իւվէզեանի հրատարակած գիրքերն են.- ա) *Տարերք ձայնագրութեան* (Պէյրութ-Սուրիա, 1924), բ) *Երաժշտական եւ ձայնագրական գիտելիքներ. դասագիրք ձայնագրութեան* (Պէյրութ, 1926), գ) *Ձայնագրեալ նոր երգարան միաձայն եւ երկձայն. Գ. մաս. զուարթ երգեր հայկական օբէրէթներէ* (Պէյրութ, Նուագ հրատ., 1926), դ) *Ձայնագրեալ նոր երգարան. Ա. մաս. ազգային ընտիր երգեր*

պէս հազիւ թէ գաղափար ունի compositionի մասին, արդէն հազար անգամ յօշոտուած, այլանդակուած ազգային, խմբական, արդէն գոյութիւն ունեցած երգերը, քիչ մը պոչը կսմթելով կամ կրծելով, ստորակէտը կէտի, վերջակէտը՝ բութի (իրենց ցրուած ու բթացած ուղեղին պէս) փոխելով հրապարակի վրայ կ'ուզէ երեւնալ... Կոմիտասի աշակերտներուն պէս... խեղճ, *Բամ փորոտան*, *Տէր կեցո*ն եւն. եւն. հազար ափսոս, ինչե՜ր չը տեսան ու պիտի տեսնան...[20]:

I encountered the same picture of misery and deprivation in my inspection of the various khans and houses in which the fugitives are lodged. The only difference is that they are accommodated under a roof in [107] dry rooms. The quarter of the city called Sorsuk [Sursock], in which there are many magnificent palaces built in gardens, where crowns of date palms rise above the roofs of the palaces, cypresses, various cacti, olives and orange trees, and other vegetation afford a splendid sight, is also crowded with refugees. The atmosphere in the crowded rooms was terrific. The air, mixed with the fumes of human bodies and the effect of cooking smoke spreading, made the atmosphere so dense it was almost possible to cut it with a knife. All the rooms, even the smallest, were inhabited. In the cradles made of ropes, often imperfectly twisted, from which it seemed that the child must fall out at any moment, the never-ceasing crying of children greeted me on my visits. The cradles, of which I counted seven in one large room occupied by 19 families but only two men, were fixed between the windows or suspended from the room's ceiling. The

[21] Boghos Aris was an Armenian Catholic priest, who selflessly used his connections for the settlement of the Armenians in Lebanon and was instrumental in establishing orphanages in Beirut and finding sources for their survival.

cradle was swung employing a cord the same way a bell is swung. It is perhaps unnecessary to point out how, in such an environment, the health of adults and especially that of small children is endangered.

Many families have taken refuge in half-demolished houses and live in cellars or alcoves, which they have enclosed with boards and laths nailed together with metal sheets. In one such hole in a house in danger of falling down, returning from the seashore late at night, I found two women and an older man with three little children. Drawn by the children's cries, I crawled into the burrow and surprised the inhabitants with the light of a pocket torch during prayer...

No. 3: Amongst the Armenian orphans in Lebanon, *Horrors of the East*, pp. 115-8.

The joyous cries of innocent children's souls greeted me on my visits to the orphanages on the seaside in the settlement of Antilyas [Antelias] - where I went by a narrow railway, at times passing in the vicinity of the roaring sea tide or the shadow of the date palms, olives and banana trees - during my few weeks' stay in Beirut.

Thousands of children of both genders and all ages are placed in rented buildings or in tents set in the shadows of cedars and cypresses and also in barracks built in haste on the seashore and on the foothills of the immense mountains of Lebanon. These are shelters for children with no one in the world! The shelters were built by the charity of people from far away America, who brought month after month a certain amount of money, voluntarily subscribed and donated for the benefit of the orphaned children.

Even the tiny hands of the little children help in the building of the houses, and the whole camp gives the impression of a great anthill, in which every member of the great family of orphans contributes its penny to the altar of the common good. It seems to be the realm of the elves - who build the palace of children's love. The observer, whoever he may be, is in the way, for there is work to be done. Each one carries and fiddles with either a block rolled from a nearby rock or a basket of sand from the seashore as his contribution to the great work of the new orphanage! Admiration, genuine admiration, is created by the little workers, who know neither rest nor repose.

The children's lives are busy there all day long. Outside of school and the various exercises, the children help with the work described above in building the barracks. Swimming and fishing for many crabs and shells in the sea are unlimited. Cries of admiration or horror accompany the "good hunt" of the little fishermen wading in the silty sand, which is washed by the water of the waves that quietly spill over the long and wide quay. A happy life, one would think, for the children there. Yes, if it can be called a happy child's life--a child's life [116] without a mother's love and tenderness? Love, which most of these children have scarcely known, and who, in the earliest days of their earliest childhood, were deprived of it by a murderous hand....

A beautiful road, winding in places close to the seashore, winding, gently ascending, and running through many gardens of orange trees, olive trees, banana trees, and

whole fields of sugar cane, dominated by the magnificent crowns of slender date palms, leads to the settlement of Zuk Michaelat 27 km. from Beirut.
Quietly and regularly worked our car engine, which carried us, Mr Khahigian, his wife and me, to visit the orphanage in the settlement of Zuk Michael [Zouk Mikael], which was in the care of a Danish charitable association based in Copenhagen.
On the day of our visit, 25 November 1922, 136 orphans were in the care of the Danish orphanage there, led by Madame Maria P. Jacobsen, a lady of about 35 years of age, of beautiful stature, with clear blue eyes. This woman has devoted her life to the children's souls, to become their caring and self-sacrificing foster mother. What brought her to those wild and dangerous lands so many years ago? To the places where she experienced all the horrors of the deportation of the Armenian people to the Arabian desert? It was love for the poor, flowing from the pure heart of a woman who had once loved and sought solace and oblivion. Her heart had found what it was looking for, confirmed by the bright gleam of her twinkling eyes, coming from the depths of her soul, content with work done well!
After the warm welcome we received, not only from Madame Jacobsen but also from the children, who greeted us respectfully, a short tour was made of the rooms, which were very airy and exemplarily clean and which serve efficiently for all the needs of the orphanage. The building itself is built of stone and has only one floor. It stands alone as if glued to the hillside that crouches beneath the range of the boundless mountains and mountain ranges of Lebanon. The view from the hill and the balcony of the building over the surface of the open sea on the west side, and the view of the row of buildings of the French school, which stands in the immediate vicinity of the orphanage on the east side, under the shade of cypresses and olives, is magnificent. The building is surrounded by a high stone wall, and the garden, neatly laid out and full of orange and olive trees and the various flowers the children cultivate, makes the best impression.
At the time of our visit, 136 girls of various ages were in the care of the orphanage. The only male was Abraham, a boy two years old, who was the darling of all. An adorable boy with beautiful black eyes and a curly head. Six girls, aged two or three, slept on spread mats in one room. The institution's inmates are mostly children abandoned by their mothers during the deportation when caravans of unfortunate mothers passed through Harpoot. There many a mother, trusting that her child's life would be preserved, abandoned her, often an infant, on the steps of the local American orphanage. There Mme Jacobsen [117] collected the children and saved the lives of many of them. She collected more than 3000 children, whom she nursed, washed and cooked for. After the departure of the American staff, who were immediately expelled by the Turkish authorities after America declared war on Turkey, she was the only one left in the orphanage. Thanks to the respect she enjoyed among the Mohammedan population of the town, some people came to help her, so she managed to raise the children with a superhuman effort. She told me with a smile what a struggle it was to feed the children when there was a terrible shortage of the necessities of life, which could not be supplied from anywhere. And it was more than hopeless to attempt to get help from the Turkish authorities. So, she cooked a meal for the children only once a day, the small ration of which, as she expressed it, was quite insufficient to feed the children, and she distributed it in

closed rooms to prevent the children from running around and thus avoided the possibility of some of the children receiving food twice at the expense of others.
Similarly, she had to herself wash the clothes, of which there was an absolute shortage, as there was not such an ample supply, and she picked up many a child from the street in a single torn shirt. So, she shut the children up in a room in the building while she washed and dried the clothes. The mass of lice that the children brought with them, and which had nested under the children's skin, made the work of the selfless woman very difficult.
Her and the children's departure from Harpoot in 1920 was a timely deliverance, for the hardships they had endured resulted in severe illness. With a sad smile, she added that although the difficulties had ceased with the arrival in Lebanon, the uncertainty of the future remained. The children's stay in Lebanon seems not to be permanent, although the stay of the French troops in Syria seems to be a guarantee.
Her favourite is a girl eight years of age, the daughter of a professor from the American school at Harpoot. Her father was murdered, and her mother was deported after several days of terrible torture. Little Berdji [Beatrice], as she is called, was then a child of three months. Today she speaks several languages and plays the piano very skilfully and beautifully.
Quietly and inconspicuously, all the children gathered in a spacious room and created a remarkably picturesque group; they sat in front of the piano. A few taps on the piano keys with little Berdji's tiny fingers and the pleasant sound of the music brightened everyone's faces. The head of the whole family of children, the adorable Abraham, presided over the entire choir. The little children's throats sang song after song in rapture—moving pieces full of devotional tenderness and love. The melodies are simple and purely childlike, which I wish I could understand. But the shining eyes of the little singers were a testimony that the children's souls fully accompanied the singing. The little beauty Amine, a girl about four years old, had her solo after the choir finished their songs, and she gave us a lullaby in a casual, stunning, mellifluous voice, in which she sang daily to her doll. But how painful was the fate of little Amine? Her father, Madame Jacobsen told me, [118] was a wealthy merchant in Malatya. He had been imprisoned during the deportation and had been horribly tortured in prison. After being tortured for several days, he was taken out of prison and publicly crucified. The mother was later deported, and no further news from her ever came. The fate of little Asnif, a girl of four who recited several poems in Armenian and Turkish to us, was no more comforting. Similarly, the life of the little Kreysi, whose mother was raped multiple times by the leader of a horde of Turkish volunteers, Haji Khaya, was full of terrible hardships and suffering.
Soon the children's shyness disappeared, and they performed several round dances and figures for us. One, two, three - the tiny hands of the little dancers clapped as they danced the dances of their own choreographies. There is no end to the ingenuity of the children in the manner of their various games, and so the hearty display of the little ones grew more and more varied. My sincere love for the children could not be stifled, and I soon became a participant in that rejoicing, which brought me a genuine and most beautiful friendship - the love of the little children! But it was jealousy, unfortunate jealousy - or regret, that was almost the cause of a rupture in a friendship hardly acquired. I soon observed that some eyes were moistened with

a barely concealed tear of regret. The childish regret, awakened by the neglect of a stranger, and wholly undeserved, almost moved the children to tears. The remedy, however, was made at once, and I, who did not understand their words but fully comprehended them, gave each a piece of love and attention and made amends for unsuspected wrongdoings.

With the kind hospitality of Mme. Jacobsen, and in the course of further conversation about the events of recent years, when she herself confirmed to me various statements made by Mr Khahigian, I learned many valuable stories about events which took place during the general deportation of the Armenians. Thus, she has confirmed to me the terrible death of about 10,000 Armenian children, who were taken from Malatya by the Turks to the desolate mountains most of them aged about ten, and left there to starve and die of thirst. She did not want to believe it, but she convinced herself by a personal visit to the places, where she found and saw sun-baked piles of children's bones. The case happened in the summer of 1915.

Late in the afternoon, we bade farewell to our gracious hostess, who accompanied us to the border of her magnificent and unique kingdom....

Leaving through the garden door, I was gifted a small bouquet of Lebanese flowers from little Amine with the words: "Return soon to us".

Impressions, which I carried with me from the unforgettable visit, are a picture of the fact there is in the end "Love" in this world!

ԼԻԲԱՆԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԸ 1922Ի ԱՇՆԱՆ. ՉԷԽ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴ ՔԱՐԷԼ ՀԱՆՍԱՅԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

(ԱՄՓՈՓՈՒՄ)

ՄԱՐԷՔ ԵԱՆՏԱՔ (Marek.Jandak@ff.cuni.cz)

Չէխ ճանապարհորդ Քարէլ Հանսան անձնական պատճառներով լքելով իր ծննդավայրը կ'ուղղուի Միջին Արեւելք: Առանց յստակ երթուղի մը ունենալու, ան ինքզինք կը գտնէ Հալէպի մէջ, 1922ի ամռան, երբ քեմալական շարժումին հետեւանքով հայութիւնը դարձեալ կ'արտաքսուէր իր պապենական հայրենիքէն: Ան ականատես կը դառնայ շուրջ 10,000 որբերու փոխադրութեան՝ Ճարապլուսէն Հալէպ: 1922ի աշնան զինք կը գտնենք Պէյրութի մէջ, իբրեւ ընկերակից Հալէպէն Պէյրութ փոխադրուող Նիր Իսթ Րիլիֆի որբերուն:

Իտես այս կացութեան, Հանսա կ'որոշէ նուիրուիլ մարդասիրական ծառայութեան. կը վեդրադառնայ հայրենիք՝ հանգանակութեան նպատակով, որպէսզի կարենայ աւելի լայնածիր ծառայութիւն մատուցել հայ գաղթականութեան: Չէխիոյ մէջ, 1923ին, ան կը հրատարակէ երկու գիրք, ուր կը նկարագրէ իր ճանապարհորդութիւնը եւ լուսարձակի տակ կ'առնէ 1922ի հայ գաղթականութեան վիճակը՝ Հալէպի եւ Պէյրութի գաղթակայաններուն մէջ, ինչպէս նաեւ հայ որբերուն կացութիւնը, իր հանդիպումները Սահակ կաթողիկոսին, Մարիա Ճէյքըպսընի եւ այլ նուիրեալներու հետ:

Այստեղ հրատարակուող նկարագրութիւնները քաղուած են Հանսայի այդ զոյգ գիրքերէն: Անոնք հազուագիւտ վկայութիւններ են Լիբանանի մէջ գաղթական հայութեան դիմագրաւած դժուարութիւններուն, գաղթակայաններու կեանքին եւ որբանոցայիններուն իրավիճակին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՊՂՆՁԵՂԷՆԻ ՍԱՐԳԻՍ ԶԱՄՊԱՔՃԵԱՆԻ ՀԱԻԱՔԱԾՈՆ

ԱՆԴՐԱՆԻԿ ՏԱԳԷՍԵԱՆ (adakessian@haigazian.edu.lb)

ՄՈՒՏՔ

Լիբանանի հայօճախի յետեղեռնեան մշակոյթի պատմութեան իւրօրինակ երեւոյթներէն է հնահաւաքներու պարագան: Թէեւ պատմականօրէն Հալէպը եղած է Արեւմտեան Հայաստանի, Կիլիկիոյ եւ Փոքր Ասիոյ հայաբնակ այլ տարածքներու մօտիկ վայրը, ուր բերուած են պապենական տարածքներէն յայտնաբերուած, եղեռնեան աւարէն ու կողոպուտէն մնացած հայկական հնութիւններ, սակայն Պէյրութը ըլլալով նիւթապէս բարեկեցիկ, այդ գտածոներէն գէթ մաս մը անցած է Պէյրութէն, ուր կա՛մ հանգրուանած են անոնք, կա՛մ - իրենց մեծարժէքութեան պատճառով – Պէյրութի վրայով ղրկուած են Արեւմուտք[1] եւ կամ նուիրաբերուած Հայաստանի, Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Զմմառի հայ կաթողիկէ վանքի, կամ այլ թանգարաններու:

Պէյրութի մէջ հայկական հնութիւններով զբաղողներ եղած են 1930-40ականներէն սկսեալ, ինչպէս՝ Անուշաւան Էպէեան[2], աւելի ետք՝ Պերճ Կարապետեան[3], Կիրակոս Մխճեան, գեղանկարիչ Յարութիւն Թորոս-

---

[1] Արեւմտահայ հնութիւններու աղբիւր է նոյնինքն արմատախլուած հայերուս մեր հետ բերած պապենական նիւթական աւանդները, յիշատակները՝ տպագիր *Աստուածաշունչ*եր, ձեռագրեր, պղնձեայ իրեր, հիւսուածեղէն, կալուածաթուղթեր, լուսանկարներ եւն.: Յիրաւի, մինչեւ այսօր տակաւին լիբանահայ շատ տուներու մէջ կարելի է հանդիպիլ պապենական նման հոգեպահուստներու, որոնցմէ ոմանք ի պահ դրուած են տուներու ձեղնայարկերը, իսկ ուրիշներ՝ կը ցուցադրուին տան ցուցապահարանին մէջ:

[2] Յայտնի հնագէտ դրամագէտ Անուշաւան Էպէեան (1913-1996), ծնած է Իզմիտ: Երախտաշատ աշխատանք տարած է հայ հնագիտութեան մասնագէտներու պատրաստման առումով: Հեղինակ է դրամագիտական ուշագրաւ ուսումնասիրութիւններու՝ *Արաբահայ դրամագիտական պատմութիւն/Histoire numismatique Arabo-Armenienne (632-892 Après J.C.)*, տպ. Փիւնիկ, Պէյրութ, 1940. նաեւ՝ *Կիլիկիոյ հայոց թագաւորները իրենց տպած դրամներով (1198-1393)*, տպ. Մշակ, Պէյրութ, 1973. նաեւ՝ *Հայութեան անծանօթ իր երկրորդ կայսրութիւնը. Շահ էլ-Արմէն/Deuxieme empire armenien les Chah-El-Armens, dynastie des Ayyoubides (586-658 H. 1190-1259)*, տպ. Մշակ, Պէյրութ, 1981: 1961էն իվեր Էպէեանի հնագիտական հաւաքածոյին հայկական նիւթերը կը ցուցադրուին Զմմառու հայ կաթողիկէ վանքին թանգարանը:

[3] Կարապետեան պղնձագիտական ուսումնասիրութիւններով աշխատակցած է *Հայկազեան հայագիտական հանդէս*ի Զ. եւ ԺԲ. (1977-8 եւ 1992) հատորներուն, դրամագիտական թէ այլ ուսումնասիրութիւններով աշխատակցած է նաեւ *Սփիւռք*ին, Կիլիկիոյ կաթողիկոսութեան *Հասկ*ին՝ եւն.: Կիլիկիոյ հայոց կաթողիկոս Գա-

եան[4], Ասպետ Տօնապետեան[5], Արա Արծրունի[6], կենսաբանութեան երկարամեայ ուսուցիչ Մայք Պօղոսեան, Երուանդ Ապաճեան, Սասուն Սիմոնեան եւն.: Դեռ աւելին, 1971-2ին կազմուած է խմբակ մը՝ «Լիբանանեան ժառանգը պահպանելու սատարող լիբանահայ միութիւն» անունով[7]:

Այդ խմբակին մաս կազմած է նաեւ Սարգիս Զամպաքճեան, որուն պղնձեղէնի հաւաքածոյին համառօտ նկարագրութիւնը կը ներկայացնենք ստորեւ[8]:

րեգին Յովսէփեանց զինք ղրկած է Փարիզ մասնագիտանալու, որպէսզի վերադարձին ստանձնէ Կիլիկիոյ կաթողիկոսարանի թանգարանի տնօրէնի պաշտօնը: Սակայն, Կարապետեանի վերադարձէն առաջ վեհափառը վախճանած ըլլալով, ծրագիրը կը մնայ անաւարտ:

[4] Յարութիւն Թորոսեան (1933-2022), Լիբանանի վաւերական գեղանկարիչներէն է, արուեստի երկարամեայ դասախօս՝ Լիբանանեան ԱԼՊԱյի մէջ: Դասաւանդած է նաեւ Հայկազեան համալսարանի մէջ: Հեղինակ՝ *Խոհեր կեանքի եւ արուեստի մասին* (1995), *Դիպանկիւնէս* (2008) գիրքերուն: Հրատարակած է նաեւ իր ստեղծագործական գեղանկարներուն նկարագիրքերը:

[5] Յայտնի դրամագէտ, երկարամեայ կրթական մշակ Ասպետ Տօնապետեան (1923-93), դրամագիտական ուսումնասիրութիւններով աշխատակցած է *Հայկազեան հայագիտական հանդէս*ի Ա., Բ., Է., Ը. եւ Ժ. (1970, 1971, 1979, 1980 եւ 1982-84) հատորներուն: Այս ուսումնասիրութիւնները յետագային ամփոփուեցան *Էջեր հայ դրամագիտութեան պատմութեան* գիրքին մէջ (խմբ.՝ Երուանդ Քասունի, United printers & traders, Պէյրութ, 2006): 1989ին կը տեղափոխուի Մ. Նահանգներ:

[6] Արա Արծրունի (1932-2018) - վիպագիր, թատերագիր, հրապարակագիր, աշխատակցած է *Ազդակ*ին, *Արծիւ*ին, *Բագին*ին, *Կամար*ին, *Սփիւռք*ին, բեմադրած է նաեւ փիէսներ: 2012էն անդամ՝ Հայաստանի գրողներու միութեան, 2017ին արժանացած է Կիլիկիոյ կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշանին: Հեղինակ է շարք մը գիրքերու՝ *Վիրաւոր ծիծեռնակը* (1967), *Եղեռնի հեւքերով* (1972), *Ես զոհ-ես դահիճ* (Երեւան 1993, Պէյրութ 1995), *Ողջո՜յն (թատերգութիւն 3 արար) եւ Պահածոյի տուփերը (թատերգութիւն 3 արար)* (2006), *Անաւարտ վէպը* (2006), *Մարիօ՛, ծաղկա՛ծ են արդէն ծառերը. թատերգութիւն 3 արար* (2008), *Թատերգութիւններ երկու հատորով* (2010), *5 թատերգութիւններ* (2012), *Ծուէնները* (2017):

[7] Խմբակին անդամակցած են Էպէեան, Թորոսեան, Գրիգոր Թերզեան, Մանուկ Հոփալեան, Երուանդ Տարագճեան, Արա Արծրունի, Պօղոսեան (որուն անունով պետականօրէն արձանագրուած էր միութիւնը): Խմբակին կազմակերպիչն էր Էպէեան որ անուղղակի կը ղեկավարէր զայն: Խմբակը ամէն Ուրբաթ կը հաւաքուէր անդամներու տուները: Հանդիպումները ծառայած են անդամներուն միջեւ կրկնօրինակներու փոխանակման: Անոնք դադրած են Լիբանանի պատերազմին բռնկումով (անձնական տեսակցութիւն Պօղոսեանի հետ, 15 Սեպտեմբեր 2022):

[8] *Ազդակ*ի 13 Յունիս եւ *Զարթօնք*ի 4, 9, 21, 28 Յունիս, 16 եւ 19 Յուլիս 2022ի (եւ յաջորդող) թիւերուն մէջ, ինչպէս նաեւ դիմատետրի վրայ զետեղեցինք յայտարարութիւն՝ բաղնիքի կաւի թասերու շուրջ մեր ձեռնարկած ուսումնասիրութեան առնչութեամբ: Այս յայտարարութեան արձագանգողներէն եղաւ Զամպաքճեան, որուն հետ մեր ունեցած հանդիպումներուն (24, 29 Յուլիս, 17 Սեպտեմբեր 2022) արձանագրեցինք իր մօտ գտնուած հայկական պղնձեղէնը:

ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՔԱԾՈՅԻՆ

Հաւաքածոն կը բաղկանայ 49 իրէ: Ան կ'ընդգրկէ մոմակալ մը, տիւիթներ[9] (կաղամարներ), բաղնիքի ջրամաններ[10], բաղնիքի օգտագործման տուփեր, տարբեր չափերու պնակներ ու ամաններ, պտղամաններ: Ասոնց բոլորն ալ արձանագրութիւններ ունին, կամ՝ կնիքներ, բացի թիւ 5 տիւիթէն: Հաւաքածոյէն երկու իրեր յունարէն (նկ. 25, 49) արձանագրութիւն ունին: Երկու այլ իրերու (նկ. 16[11], 24) ընթերցումը չկրցանք կատարել[12]: Իսկ առկայ հինգ տիւիթներէն թիւ 4ը արաբերէն անընթեռնելի արձանագրութիւն, մինչ թիւ 5ը արձանագրութիւն չունի (Այդ պատճառով ալ չենք ընդգրկած վերջին երկուքի նկարները):

Ստորեւ աղիւսակի ձեւաչափով կը ներկայացնենք հաւաքածոն, ըստ տեսակի: Աղիւսակին մէջ տուած ենք արձանագրութիւն/կնիքը, չափագրութիւնը (բարձրութիւն, մետաղի հաստութիւն, տրամագիծ, կշիռք եւն.): Լուսանկարներով տուած ենք իւրաքանչիւր արձանագրութիւն, նաեւ՝ միքանի բացառիկ իրերու այլ լուսանկարներ:

Զամպաճքեան իր հաւաքածոյին ծննդոցին մասին հետեւեալը պատմեց մեզի. «*...1981ին Կիրակոս Մխճեանը ինծի բերաւ չորս հատ փոքր պնակներ՝ ծախելու: Երբ տեսայ որ վրան հայերէն գրութիւններ կան, որոշեցի ինծի պահել: Իրեն վճարեցի ուզածը եւ ատիկա եղաւ սկիզբը իմ հաւաքչական աշխատանքիս: Հալէպ ամէն ճամփորդելուս կ'երթայի բերդին կողմերը, ուր կային հնավաճառներ. հաւաքածոյիս մեծ մասը անոնցմէ գնած եմ: Պէյրութ ալ, Պուրճ Համուտի մայրուղիին վրայ պղնձագործները կային, հոն ծանօթացեր էի Մանուէլ Գարամինասեանին, որ պղինձի գործով կը զբաղէր: Անոր ըսած էի թէ հայկական իրեր կը հաւաքեմ: Իրեն կը հանդիպէի պարբերաբար. երբ ձեռք անցընէր՝ ինծի կը վերապահէր: Բայց մեծամասնութեամբ Հալէպէն գնած եմ: Վերջին կտորը գնեցի 2008-09ին: Ամէն անգամ*

---

[9] Բացի տիւիթներէն միւս բոլորը կարմիր պղինձ են: Տիւիթներուն մասին տե՛ս՝ Պերճ Կարապետեան, «Տիւիթ կոչուած թափծու գրչակալ կաղամարներ հայերէն արձանագրութիւններով», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԺԲ:1992, էջ 81-106. նաեւ Անդրանիկ Տագէսեան՝ «Յաւելեալ տեղեկութիւններ եւ նորութիւններ հայկական տիւիթներու մասին», *Հայկազեան հայագիտական հանդէս,* ԼԱ:2011, էջ 643-62 ուսումնասիրութիւնները:

[10] Թասերուն մասին տե՛ս՝ Անդրանիկ Տագէսեան, «Ակնարկ հայկական արձանագրութեամբ պղնձեայ թասերու վրայ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, 42/1:2022, էջ 339-50:

[11] Այս իրին արաբերէն արձանագրութիւնը միայն կրցած ենք կարդալ:

[12] Ըստ հայրենի վիմագրագէտ Արսէն Յարութիւնեանի՝ արձանագրութեան «որոշ տառեր արաբերեն թուերի են նման, ուստի նաեւ այդ գործօնը պիտի նկատի առնել: Մէկ-երկու տառ նման է հին վրացերէն գլխագրերին: Բայց դա էլ վարկած է, բայց յամենայն դէպս [գրութիւնը] հայերէն չէ» (ելնամակներ, 10 եւ 12 Օգոստոս, 2022):

որ հայկական հնութիւն մը ձեռք անցընեմ այն զգացումը կ'ունենամ թէ սփոյգ կորուստէ կը փրկեմ մեր ժողովուրդին պատկանող յիշատակարան մը: 1988ին, հայերէն արձանագրութեամբ չորս պղնձեայ պնակ տուի հայր Յարութիւն Պզտիկեանին՝ նուիրելու Վենետիկի Ս. Ղազարի Մխիթարեան միաբանութեան թանգարանին, նաեւ՝ ծխախոտի արծաթեայ տուփ մը»: Ան կատարած է նաեւ այլ կարեւոր նուիրատուութիւն մը՝ Անիի հնավայրէն պեղուած հայերէն արձանագրութեամբ խնկաման մը, Էջմիածնի թանգարանին:

Զամպաքճեան ծնած է Հալէպ, 1946ին, յաճախած Հալէպի Յիսուսեան միաբանութեան Վարդանանց վարժարանը, տնօրէն ունենալով հայր Սահակ Քէշիշեանը[13]: 1960ին աւարտելէ ետք նախակրթարանը կ'աշխատի ատաղձագործ հօր քով, որ միաժամանակ հին կահոյք կը նորոգէր: 1965ին կ'անցնի Պէյրութ եւ կը հաստատուի Պուրճ Համուտ, կը լծուի կահոյքի նորոգութեան գործին: Ինք կը պատմէ կեանքին անկիւնադարձային հետեւեալ դրուագը. «*...Անգամ մը Պէյրութը պտրտելով հասայ մինչեւ Մանարա, Րաուշէ, յետոյ երբ հանդիպակաց բնակելի կողմը անցայ, տեսայ կալերի մը՝ Կալերի Խուրի: Հնավաճառ էր: Ներսը չնորոգուած կահոյք մը կար, որմէ մենք նորոգած էինք: Ֆրանսական 18րդ դարու կահոյք էր: Ներս մտայ մօտէն դիտելու. մինչայդ պաշտօնեան եկաւ, սկսաւ հարցնել թէ ինչ կ'ուզեմ ... ես փոքր տղայ, իրենց հետ կապ չունիմ, բայց զարմանալիօրէն կը հետաքրքրուիմ այդ կահոյքով: Կասկածելով՝ ըսաւ որ դուրս ելլեմ: Մարդը միքանի անգամ կրկնեց: Ես չելայ դուրս, ընդհակառակը, հարցուցի՝ «ինչու՞ այս պուլը չէ նորոգուած»: Գրասեղանին եղեւը նստած մարդը, բուն տէրը, զարմացած, ելաւ տեղէն, եկաւ՝ «դուն ինչէ՞ն գիտես որ ասիկա պուլ է, ինչպէ՞ս գիտես որ չէ նորոգուած» հարցուց: Ըսի՝ «Այո՛, գիտեմ, ես կը նորոգեմ ասի» ու բացատրեցի թէ հայրս կը նորոգէր ես ալ քովը սորված եմ եւն.: Ան գանգատեցաւ որ Ֆրանսա նորոգութեան տուած էր կահոյքը, բայց նորոգութիւնը անյաջող եղած էր: Պնդեցի որ ես կը նորոգեմ, բայց գործատեղի չունիմ: ...Ինծի կալերիին վերի յարկը սենեակ մը տուաւ: Նորոգութեան համար իրմէ ուզեցի 300 լիբանանեան ոսկի, մինչ ամսականները շուրջ 100 լիբանանեան ոսկի էին...: Համաձայնեցանք: Իրմէ 25 ոսկի առի, որ գործիք գնեմ: Մարդը վստահեցաւ, հակառակ որ առաջին անգամ կը տեսնէր զիս...: Յաջորդ օրը գնեցի անհրաժեշտ գործիքները, եւ հակառակ որ չէի գիտեր հասցէն, հարցուփորձելով հասայ վայրը եւ գտայ կալերին: ...Նորոգութիւնը տեւեց 10 օր: Մարդը շատ հաւնեցաւ, ինծի ցուցուց 10 կտոր: Համաձայնեցանք որ մէկ առ մէկ սկսիմ նորոգել. իւրաքանչիւրի նորոգութեան համար համաձայնեցանք 500 լիբանանեան ոսկի: ... Երկու տարի իր գործերը նորոգեցի, երկու տարուան մէջ իրմէ շահած դրամով տուն մը գնեցի 27,000 լիբանան-*

[13] Իր մասին տե՛ս՝ Հայր Անդրանիկ վրդ. Կռանեան, «Հայր Սահակ վրդ. Քէշիշեան», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԻՉ:2006, էջ 434-35:

եանի: Յետոյ սկսայ օրիանթալ սնտուկի գործին, անոնց կրկնօրինակները ըրի, մեծ պահանջարկ ունեցան այս նորերը, որոնք հինին շատ նման էին...»:

Զամպաքճեան իր առաջին եւ միակ վաճառատունը՝ Antiquités Beaux Arts կը բանայ 1978ին, իր կրտսեր եղբօր՝ Վազգէնին հետ, Պէյրութէն Անթիլիաս, ծովային մայրուղիին վրայ, Ժալ ԷլՏիպի շրջան: Վաճառատունը, ուր կը վաճառուէին հին կահոյք, ապակեղէն, պրոնզեայ իրեր, ժամացոյցներ, արձաններ եւն., կը գործէ մինչեւ 2019: «Երբ խանութը բացի, արդէն ծանօթացեր էի հնավաճառ վաճառականներու. դիմեցի գորգավաճառի, ջահավաճառ Մուղաննիին, որոնք ինծի աւանդ տուին բաւական ապրանք, յետոյ սկսայ Պասթայի հնավաճառներու շուկայէն գնել եւ նորոգել»: Յաջողութիւն գտնելով, Զամպաքճեան 1982ին, Ֆրանսայէն առաջին անգամ կը ներածէ մեծաքանակ հին կահոյք: Նորոգութեան յատուկ աշխատանոց մը կը հիմնէ Պուրճ Համուտի հայոց գերեզմանատան մօտակայ արհեստանոցներու շուկային մէջ, 1978ին: «*Յաճախորդներուս մեծամասնութիւնը հարուստ լիբանանցիներ էին: Այն ատեն Լիբանանը փղթի Փարին էր, Արեւելքի Զուիցերիան, Լիբանան փոքր երկիր էր, բայց շրջանի դրամը հոս էր, հարուստ երկիր էր, իսկ լիբանանցին զարգացած էր, ճաշակի տէր, կը սիրէր աղուոր առարկայ, կահոյք ունենալ փունը: Երբեմն, ամառը կու գային Ծոցի երկիրներու արաբները, նաեւ եւրոպացիներ, Ծոցի արաբները կը գնէին, իսկ եւրոպացիք՝ զբօսաշրջիկ էին: ...Պէյրութի մէջ, որպէս կալերի, հայ հնավաճառ չկար, մենք միակ հայն էինք, բայց տեղացիներ կային, մանաւանդ՝ քրիստոնեաներ: Յետոյ տեղացի իսլամներ շատցան նոյն գործին մէջ: Մինչեւ այսօր այս գործը ընող հայ չկայ*»:

Զամպաքճեան, հայկական պղնձեայ իրերէ բացի կը հաւաքէ նաեւ Վանի արծաթէ ծխախոտի տուփեր, հին հայկական դրամներ եւն.: Իր հաւաքածոյէն իրեր ցուցադրուած են Լիբանանի մէջ հայկական մշակոյթին նուիրուած ցուցահանդէսներու ընթացքին: Ան կը պնդէ. «*Որեւէ բան որ հայկական է՝ անկարելի է որ ծախեմ: Հայկական պղինձի առեւտուրով երբեք չեմ զբաղած: Միայն գնած եմ: Ասի իմ նախասիրութիւնս է*»[14]:

ԱՄՓՈՓԻՉ ՏՈՒԵԱԼՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Անձնանուններ եւ Ազգանուններ

Հաւաքածոյին իրերուն վրայ եղած արձանագրութեանց մեծամասնութեան մէջ կը հանդիպինք հետեւեալ անձնանուններուն, որոնցմէ ոմանց՝ աւելի քան մէկ անգամ.- Աբրահամ, Ակոբ, Աննա, Ապէտ, Արսլան[եան], Աստուածատուր, Ատուր, Արապ Օղլի Կարապետ, Արութին, Աւետիս, Գասբար, Գրիգոր, Դաւիթ, Եդգար, Եղիայ, Եուսուֆ, Թմաճան, Լուսեայ, Խանըմ, Կարապետ, Հօռօբսըմա, Ղազար, Մանուկ, Մարիք/Մարիֆ, Մարտի-

[14] Անձնական հարցազրոյց Սարգիս Զամպաքճեանի հետ, 29 Յուլիս 2022ին:

րոս, Մելքոն, Մինա, Մկըրտիչ, Յակոբ, Նահապետ, Ներսէս, Պաղտասար, Պապա, Պետրոս, Սարգիս, Սելվեր, Վարդան, Տիքրանույի:

Կը հանդիպինք նաեւ զանազան ազգանուններու.- Գահկեճիեան, Գահվէճեան, Թանաշեան, Թութիւնճեան, Խալօեան, Հճնեան, Ղազանճըեան, Ճեմպէրճեան (արաբերէն՝ جمبرجيان), Չուվլակեան, ΧΤΖΙΜΟΥΡΑΤ [հաճի Մուրատ], ΚΟΣΤΑΝΤΗ ΧΑΤΖΙΣΤΕΦΑΝΙ[15] [Կոստանդի Խաճիսթեֆանի]:

Տեղանուններ

Վերոյիշեալ արձանագրութեանց մէջ հազուադէպ են տեղանունները՝ Երուսաղէմ, Ս. Յակոբա[յ] Վանք եւ Երուսաղէմի Ս. Աստուածածնայ գերեզման:

Թուականներ

Հաւաքածոյին արձանագրութիւններէն շատեր կը կրեն թուականներ, ոմանք՝ արաբատառ, ուրիշներ՝ հայկական, ուրիշներ՝ մահմետական: Զանոնք կու տանք ժամանակագրական յաջորդականութեամբ.- ՌՃԾԶ [1156+551=1707], ՌՃԿԴ [1164+551=1715], ՌՃՀԳ [1173+551=1724], ՌԲՃԱ [1201+551=1752], 1801, ՌՄՀ [1270+551=1821], [արաբերէն] 1268 [=1852], 1874, [արաբերէն] 1298 [=1880], 1895, 1896, 1901, 1903, 1906, [1]923, [1]929:

Կնիքներ

Պղնձեայ այս հաւաքածոյին մէջ կը հանդիպինք եօթ կնիքներու, որոնցմէ մին՝ միքանի իրերու վրայ.- Ատուր, Արսլան[եան], Գրիգոր Թանաշեան 929, Հճնեան, Յակոբ, Չեմպէրճեան (արաբերէն՝ جمبرجيان), Սարգիս:

Յապաւումներ եւ կցագրեր

Գրեթէ բոլոր պարագաներուն ալ մահտեսի/մղտսի բառը յապաւուած է «ՄՀԻ»:

Արձանագրութիւններուն վրայ կը հանդիպինք նաեւ բազմաթիւ տառերու միակցումներու՝ կցագրերու: Ընդհանրապէս անոնք երկու տառերու կցումներ են.- Ա եւ Ր (12 անգամ), Ա եւ Ն, Դ եւ Ի (5 անգամ), Ե եւ Ա, Թ եւ Վ, Ի եւ Ն, Ի եւ Ի, Մ եւ Ա (ուշագրաւ է որ երբեմն Ա, իսկ երբեմն Մ գիրը առաջնային է), Ն եւ Ա, Ն եւ Ի, Ո եւ Ր, Ո եւ Ի, Պ եւ Ե, Ս եւ Ի: Կայ միակ պարագայ մը երբ երեք տառեր կցուած են իրարու՝ Ս-Ր-Բ, գոյացնելու համար սուրբ բառը:

Նշումներ՝ առանձնացող երեւոյթներու մասին

ա) Թիւ 17 նկարին արձանագրութիւնը՝ Թումաճանի որդի Եղիա, ուշագրաւ է իր Ճ գիրով: Զայն առանձնացուցած ենք նկար (17բ), քանի որ փորագրիչը զայն վերածած է գեղեցիկ թռչունի: Մեզի կը թուի թէ նման

[15] Թիւ 25 եւ 49 իրերուն արձանագրութիւնը վերծանեց Յովիկ Գասապեան, որ իր երկտողին մէջ (9 Օգոստոս 2022) կը նշէ նաեւ թէ թիւ 49ի արձանագրութեան մէջ «կայ ուղագրական սխալ Κ (ο) ΣΤΑΝΤΗ պէտք էր գրուի Ωով»:

գեղագիտական փոխակերպումները հազուադէպ են հայկական պղինձի արձանագրութիւններու պարագային:

բ) Կարելի չեղաւ վերծանել թիւ 4 տիւիթի եւ նկարներ 7բի արաբատառ գեղեցիկ արձանագրութութիւնները, թիւ 16բի եւ թիւ 24ի արձանագրութիւնները:

գ) Յատկանշական է նկար թիւ 47բ՝ խորունկ մեծ ամանի ներքին յատակին փորագրութիւնը. բուսանախշերով եւ կենդանանկարներով շրջապատուած կեդրոնական շրջագիծին մէջ նկատելի նրբութեամբ փորագրուած է ձիու վրայ նստած իշխանաւոր մը: Ան իր գլխուն ունի թագ եւ հաւանաբար քրիս-տոնեայ է, որովհետեւ թագին վրայ կ'երեւին երեք տերեւանման նախշեր: Մեզի կը թուի թէ այդ երեքը կը խորհրդանշեն Ս. Երրորդութիւնը, որով եւ կ'ենթադրուի անոր քրիստոնէութիւնը:

ARMENIAN COPPER UTENSILS: THE COLLECTION OF SARKIS ZAMBAKDJIAN

(SUMMARY)

ANTRANIK DAKESSIAN (adakessian@haigazian.edu.lb)

The paper is a report on the Armenian copper utensils collection of Sarkis Zambakdjian, a Lebanese Armenian who has been collecting these items since 1988.

The collection is comprised of 50 items, mostly dishes and plates of different sizes, some candlesticks, bath *tass*es, bath boxes, and *divit*s. All but 3 items have no Armenian inscriptions or stamps identifying the craftsman on them.

The article describes all the items, gives their specifications (weight, height, width, diameter, thickness of the copper). Furthermore, the article decodes all the Armenian inscriptions engraved on the items, provides photos of the inscriptions, and the stamps identifying the craftsman as well as some outstanding ornaments and designs which have high artistic and creative value.

The article lists all the proper names of individuals and locations as well as the dates mentioned in the inscriptions.

The paper decodes two Greek inscriptions but falls short of reading one of the four Arabic inscriptions.

թիւ	Տեսակ	Գրութիւն եւ թուական	Չափեր (սմ.)	Հաստեն. եւ ծնրթն.	Նշումներ
			ՏԻԻԻԹՆԵՐ		
1	Տիւիթ	ՅԱԿՈԲ ԳԱՀԿԵՃԻԵԱՆ Ունի երկու կնիք՝ ՍԱՐԳԻՍ, անընթ. թուական	Երկայնք՝ 23, բրձր.՝ 3, լայնք՝ 1.5	348 կր.	Թանաքամանը կափարիչ չունի
2	Տիւիթ	ՂԱԶԱՆՃԸԵԱՆ ԱԿՈԲ [արաբ.] 1291 [=1874], ունի կնիք՝ ՅԱԿՈԲ	Երկայնք՝ 23, բրձր.՝ 2.7, լայնք՝ 1.2	300կր.	Թանաքամանին տակինը նոր կտոր
3	Տիւիթ	Գրութիւն չունի. ունի մէկ կնիք՝ ԱՏՈՒՐ	Երկայնք՝ 23.8, բրձր.՝ 3.4, լայնք՝ 1.6	283 կր.	Թանաքաման չունի
4	Տիւիթ	Արաբերէն անընթեռնելի գրութիւն	Երկայնք՝ 19, բրձր.՝ 2.8, լայնք՝ 1	255 կր.	Կոթէն դէպի բերան՝ չափերը կը մեծնան, կնիք չունի
5	Տիւիթ	Գրութիւն չունի	Երկայնք՝ 19, բրձր.՝ 2.2, լայնք՝ 1.3	205 կր.	Թանաքամանին կափարիչը ուրիշ տեսակ է, խաչի փոխարէն եռանկիւն մը ունի, նախշուած է ամբողջութեամբ
			Խնկամաններ		
6	Խնկաման	ԱՊԷՏ արաբերէն անընթեռնելի գրութիւն	Բարձր.՝ 12.5, տրամագիծ՝ 16, յատակի արտաքին տրամագիծ՝ 12	Հստեն.՝ 1.6-2 մլմ., 614 կր.	Զարդանախշուած է շրթունք եւ՝ ամանին ամբողջ յենարան հատուածը: Մարդակերպ զարդանախշ
7	Խնկաման	ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴ/Ի ՎԱ/ՐԴԱՆ [Դ/Ի, Ա/Ր միացուած]	Բրձր.՝ 12.3, տրամագիծ՝ 15.5, յատակի արտաքին տրամագիծ՝ 11.5-12.5	Հստեն.՝ 0.9-1.5 մլմ., 647 կր.	Զարդանախշուած է՛ շրթունքը եւ՝ ամանին ամբողջ յենարան հատուածը, զարդանախշերը՝ բուսական
			Բաղնիքի ջուրի թասեր		
8	Բաղնիքի ջուրի թաս[1]	ԱՆՆԱ ԽԱԼՕԵԱՆ 1903	Բրձր.՝ 7.5, տրամագիծ՝ 21	Հստեն.՝ 1 մլմ., 618 կր.	Յատակը անողորկ, նախշեր՝ վիզէն մինչեւ անկիւնաւոր կտրուածքը
9	Բաղնիքի ջուրի թաս	ԼՈՒՍԵԱՅ ԳԱՀՎԷՃԵ/ԱՆ 1895 [Ե/Ա միացուած]	Բրձր.՝ 7.5, տրամագիծ՝ 21	Հստեն.՝ 1 մլմ., 674 կր.	Յատակը անողորկ, նախշեր՝ վիզէն մինչեւ անկիւնաւոր կտրուածքը
10	Բաղնիքի ջուրի թաս	ԱՆՆԱ ՉՈ/ԻՎԼԱԿԵԱՆ 1903 [Ո/Ի միացուած]	Բարձր.՝ 8, տրամագիծ՝ 21	Հստեն.՝ 1 մլմ., 614 կր.	Յատակը անողորկ

[1] Այս եւ յաջորդ երեք բաղնիքի ջուրի թասերը չեն ընդգրկուած մեր՝ «Ակնարկ հայկական արձանագրութեամբ» ուսումնասիրութեան մէջ:

11	Բաղնիքի ջուրի թաս	ԽԱՆԸՄ 1894 [թուականը արաբերէն] 1896	Բարձր.՝ 7, տրամագիծ՝ 21.5	Հստթն.՝ 1.2 մլմ., 609 կր.	Յատակը անողորկ: Յատակին՝ աստղաձեւ կրկնուող նախշեր, որոնք կլոր շրջանակ մը կը գոյացնեն, վիզի բաժինը ի տարբերութիւն միւսներուն՝ դէպի դուրս բացուած
Բաղնիքի ջուրի թասի նմանակ					
12	Բաղնիքի ջուրի թասի նմանակ	Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄՀԻ ՆԵՐՍԷՍԻՆ Թ/Վ ՌՃԿԴԻՆ [Թ/Վ միացուած]	Բարձր.՝ 8, տրամագիծ՝ 19	Հստթն.՝ 3 մլմ., 879 կր.	Ուրիշ տեսակ է, անողորկ յատակ, բերանին երկու գօտի նախշ, ա.ին մէկ մասը գրութիւն
Բաղնիքի տուփեր					
13	Բաղնիքի տուփ	ՏԻՔՐԱՆՈՒ/ԻՅԻՆ 1901 [Ո/Ի միացուած]	Բրձրթն.՝ 21, յատակի տարածք՝ 25x11.2, կափարիչի ներքին տարածք՝ 24x11.5	Հստթն.՝ 0.9, մլմ. , 1216 կր.	4 ոտքերու (դեղին պղինձ) վրայ դրուած, գետնէն մօտ 3 սմ. բարձրութեամբ, կափարիչին բաժինը լաւապէս ուռուցիկուած, անկիւնները լաւապէս կլորցուած են
14	Բաղնիքի տուփ	ՄԻՆԱ ԹՈՒԹԻ/ԻՆՃԵԱՆ 1906 [Ի/Ի միացուած]	Բրձրթն.՝ 21, յատակի տարածք՝ 23x11.5, կափարիչի ներքին տարածք՝ 22.5x11	Հստթն.՝ 09-1.2 մլմ., 1035 կր.	4 ոտքերու (դեղին պղինձ) վրայ դրուած, գետնէն մօտ 3 սմ. բարձրութեամբ, կափարիչին բաժինը լաւապէս ուռուցիկուած
Այլաչափ տափակ պնակներ					
15	Փոքր	Մ[Ա]Հ[ՏԵՍ]Ի ԵՂԻԱՅ ԵՂԲԱՅՐ Ա[ՍՏՈՒԱ]ծԱՏՈ/ԻՐ	Բրձրթն.՝ 21, յատակի տրամագիծ՝ 8, բերանի տրամագիծ՝ 16	Հստթն.՝ 1.4 մլմ., 193 կր.	Յատակին կնիք-նախշ
16	Փոքր	Մէկ անընթեռնելի արձանագրութիւն, երկրորդը՝ արաբերէն՝ حنا كريس	Բրձրթն.՝ 2.3, յատակի տրամագիծ՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 15	Հստթն.՝ 1.5 մլմ., 136 կր.	Յատակին կնիք-նախշ
17	Փոքր	Թ[ՈՒ]Մ/ԱՃԱՆ/Ի Ո/ՐԴ/Ի ԵՂԻԱ [Մ/Ա, Ն/Ի, Ո/Ր, Դ/Ի միացուած]	Բրձրթն.՝ 2.1, յատակի տրամագիծ՝ 7.1, բերանի տրամագիծ՝ 14.55	Հստթն.՝ 1.7 մլմ., 175 կր.	Յատակին կնիք-նախշ: Ճն՝ վերածուած է շատ գեղեցիկ թռչունի
18	Փոքր, քիչ մը փոսաւոր	ՄՂՏՍ/Ի ԱԿՈԲ [Ս/Ի միացուած]	Բրձրթն.՝ 2.5, բերանի տրամագիծ՝ 17	Հստթն.՝ 1.5 մլմ., 217 կր.	Յատակը անողորկ
19	Փոքր	ՄԱՀՏԵՍ/Ի ԿԱ/ՐԱՊԵՏ [Մ/Ա, Ս/Ի, Ա/Ր միացուած]	Բրձրթն.՝ 2, յատակի նստուածք՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 16	Հստթն.՝ 1.5 մլմ., 176 կր.	Յատակը նախշուած

20	Փոքր	ՊԱՂՏԱՍԱՀ/Ր [Ա/Ր միացուած]	Բրձրթն.՝ 2.5, յատակի նստուածք՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 17.5	Հստթն.՝ 1 մլմ., 176 կր.	Յատակը նախշուած, թեքուած բաժինը ամբողջութեամբ ուռուցիկուած
21	Փոքր, քիչ մը փոսաւոր	ԱՍԼԱՆ	Բրձրթն.՝ 3, յատակի նստուածք՝ 9, բերանի տրամագիծ՝ 17	Հստթն.՝ 1.1 մլմ., 210 կր.	Յատակը նախշուած
22	Փոքր	ԿԱ/ՐԱՊԵՏ [Ա/Ր միացուած]	Բրձրթն.՝ 2.5, յատակի նստուածք՝ 8.5, բերանի տրամագիծ՝ 17.5	Հստթն.՝ 1.2 մլմ., 203 կր.	Անընթեռնելի կնիք՝ պռունկին
23	Փոքր	ԳԻՐԳՈ/ՐԻ Ո/ՐԴ/Ի ՄՂՏԵՍԻ ՂԱԶԱ/Ր [Ո/Ր, Ո/Ր, Դ/Ի, Ա/Ր միացուած] [1881=] 1298 محمد اسحق كيالي سنة	Բրձրթն.՝ 1.5, բերանի տրամագիծ՝ 18.2	Հստթն.՝ 1.5 մլմ., 316 կր.	
24	Փոքր	Անընթեռնելի	Բրձրթն.՝ 3, յատակի նստուածք՝ 11.5, բերանի տրամագիծ՝ 19	Հստթն.՝ 1.5 մլմ., 255 կր.	
25	Միջակ	XTZIMOYPAT [= ԽԵԻ ՄՈՒՐԱԹ/հաճի Մուրատ]	Բրձրթն.՝ 3.5, յատակի նստուածք՝ 11.5, բերանի տրամագիծ՝ 21	Հստթն.՝ 1.8 մլմ., 414 կր.	Յատակին նախշ կնքուած
26	Միջակ	Այ ՃԱՌԱ ՄԱՐԻՔ[2] [Ա/Ր միացուած]	Բրձրթն.՝ 3, յատակի նստուածք՝ 11, բերանի տրամագիծ՝ 20.5	Հստթն.՝ 1.2 մլմ., 324 կր.	Յատակին նախշ կնքուած
27	Միջակ	ՀՕՌՕԲՍԸՄԱ ՄՀԻ ԴԱՎԻԹ	Բրձրթն.՝ 3.5, յատակի նստուածք՝ 11, բերանի տրամագիծ՝ 21	Հստթն.՝ 1 մլմ., 388 կր.	Յատակին նախշ կնքուած
28	Փոքր	ՄՀԻ ԵՈ/ԽՍՈ/ԻՖԻ Ո/ՐԴ/Ի ՄՀԻ ԱԲՐԱՀԱՄ [Ո/Ի, Ո/Ի, Ո/Ր, Դ/Ի, Ա/Մ միացուած]	Բրձրթն.՝ 2, յատակի նստուածք՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 14.2	Հստթն.՝ 0.5, մլմ., 133 կր.	Յատակին նախշ կնքուած
29	Պզտիկ	ՄՀԻ ԵՂԻԵԱՅ ՌՄԼԴ =[1785] արաբերէն թուական՝ 1841	Բրձրթն.՝ 2.5, յատակի նստուածք՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 14.5	Հստթն.՝ 0.5 մլմ., 192 կր.	Շատ գեղեցիկ եւ նուրբ զարդանախշեր
30	Պզտիկ փոսաւոր	Կնիքը արաբերէն بابا نلاسار կայ նաեւ խորհրդանշան մը՝ ոչխարի նմանող	Յատակի նստուածք՝ 7.5, բերանի տրամագիծ՝ 14	Հստթն.՝ 0.8 մլմ., 141 կր.	Տափակ յատակին նախշեր, դէպի ներս ցցուած բարձրութիւն

[2] Քն կարելի է նաեւ Ֆ կարդալ։

31	Միջակ չափի, փոսաւոր	2 կնիք, մէկը՝ արաբերէն ابا ن ارسلا կայ նաեւ խորհրդանշան մը՝ ոչխարի նմանող, կայ նաեւ հայերէն կնիք՝ ԱՐՍԼԱՆ ՊԱՊԱ, կեդրոնը՝ 923[3]	Յատակի նստուածք՝ 8, բերանի տրամագիծ՝ 15.2	Հստթն.՝ 1 մլմ., 221 կր.	Տափակ յատակին նախշեր, դէպի ներս ցցուած բարձրութիւն
32	Միջակ չափի, փոսաւոր	ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ, կեդրոնը՝ 929,	Յատակի նստուածք՝ 8, բերանի տրամագիծ՝ 15.2	Հստթն.՝ 1 մլմ., 266 կր.	Կնիքին շուրջ 2 խորհրդանշան, որոնք կրկնուած են 4ական անգամ[4]
33	Միջակ չափի եւ խորութեամբ	ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ, կեդրոնը՝ 929	Յատակի նստուածք՝ 12.5, բերանի տրամագիծ՝ 20	Հստթն.՝ 1 մլմ., 286 կր.	Կնիքին շուրջ 2 խորհրդանշան, որոնք կրկնուած են 4ական անգամ
34	Միջակ չափի եւ խորութեամբ	ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ, կեդրոնը՝ 929	Յատակի նստուածք՝ 11, բերանի տրամագիծ՝ 20	Հստթն.՝ 1 մլմ., 266 կր.	Կնիքին շուրջ 8 սիմպոլ, 4ական կրկնուած
35	Միջակ չափի եւ խորութեամբ	ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ, կեդրոնը՝ 929	Յատակի նստուածք՝ 12.5, բերանի տրամագիծ՝ 22	Հստթն.՝ 1.1 մլմ., 370 կր.	Կնիքին շուրջ 8 սիմպոլ, 4ական կրկնուած
36	Միջակ չափի եւ խորութեամբ	ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ, կեդրոնը՝ 929	Յատակի նստուածք՝ 12.5, բերանի տրամագիծ՝ 22	Հստթն.՝ 1.1 մլմ., 393 կր.	Կնիքին շուրջ 8 սիմպոլ, 4ական կրկնուած
37	Միջակ չափի եւ խորութեամբ, անողորկ	ՄԵԼՔՈՆԻ Ո/ՐԴ/Ի ՄՀԻ ՍԵԼՎԵՐ ՌՄՀի [1270+551=1821], [Ո/Ր, Դ/Ի միացուած]	Յատակի նստուածք՝ 14, բերանի տրամագիծ՝ 23	Հստթն.՝ 1.5 մլմ., 354 կր.	
38	Միջակ չափի եւ խորութեամբ, անողորկ	Ի ՎԱՅԵԼՈ/ԻՄՆ ՄՀԻ ՄԿԸՐՏԻՉ Թ/Վ ՌՃՃզ [1156+551=1707] , [Ո/Ի, Թ/Վ միացուած]	Յատակի նստուածք՝ 15, բերանի տրամագիծ՝ 24	Հստթն.՝ 1.3 մլմ., 440 կր.	Յատակին կնիքի պէս նախշ, վիզի բաժինին դուրս ցցուած գեղեցիկ կամարաձեւ խոռոչներ
39	Մեծ չափի, միջակ խորութեամբ, անողորկ	ԱԻԵՏԻՍԻ ՈՐԴ/Ի ԵԴԳԱ/Ր [Դ/Ի, Ա/Ր միացուած]	Յատակը անողորկ, կիսաթեք, նստուածքը՝ 18.5, բերանի տրամագիծ՝ 27	Հստթն.՝ 1.9 մլմ., 649 կր.	
40	Մեծ չափի, միջակ խորութեամբ	Ա/ՐԱՊ ՕՂԼԻ ԿԱ/ՐԱՊԵՏ, [արաբերէն] 1268 [=1852], [Ա/Ր, միացուած]	Յատակի նստուածք՝ 17.5, բերանի տրամագիծ՝ 29.5	Հստթն.՝ 1.1 մլմ., 924 կր.	Շրթունքին միջարկուած զարդանախշեր
41	Մեծ չափի, միջակ խորութեամբ	ՆԱՀԱՊԵՏԻ Ո/ՐԴ/Ի ԱԻԵՏԻՍ [Ո/Ր, Դ/Ի միացուած]	Յատակի նստուածք՝ 20, բերանի տրամագիծ՝ 32.5	Հստթն.՝ 1.9 մլմ., 1046 կր.	Գեղեցիկ արձանագրութիւն, յատակին՝ նախշ-կնիք

[3] Այս հայերէն եւ նախորդ արաբերէն կնիքները կը բացակային Հրազդան Թոքմաճեանի կազմած մեծարժէք *Գալէմքեարեաններ. Այնթապ, Դամասկոս-Հալէպ/The Kalemkiarians:Ayntab-Damascus-Aleppo*, Տիգրան Մեծ, Երեւան-Հալէպ, 2016 հատորէն:

[4] Այս կնիքը կը բացակայի Թոքմաճեանի վերոյիշեալ հատորէն:

42	Մեծ չափի, փոքր խորութեամբ	Ա/ՐՈ/ԻԹԻՆ Թ/Վ ՌՃՀԳ [=1724] [Ա/Ր, Ո/Ի, Թ/Վ միացուած] արաբերրէն ձեռագիր՝صاحبه الشيخ ابراهيم ابن محمود	Յատակի նստուածք՝ 23.5, բերանի տրամագիծ՝ 36.5	Հստթն.՝ 1.7, 1343 կր.	Գեղեցիկ նախշեր + կեդրոնին վեցթեւանի աստղ, պնակին շրթունքին 6 խորհրդանիշ-նախշեր
43	Մեծ չափի, միջակ խորութեամբ	յշՏԿ է ԵՄ ի Ս/Ր/Բ յկբ [Ս, Ր եւ Բ միացուած] Յատակին կայ բ. գրութիւն՝ ՅշՏԿ Է ԷՄ ի ԴՌՆ Ս/Ր/Բ ՅկԲյ Արաբերէն գրութիւն՝ عبد البديع الدفر	Յատակի, նստուածք՝ 24, բերանի տրամագիծ՝ 35	Հստթն.՝ 1.2 մլմ., 1141 կր.	Երկու ձեռագրերը նոյնական են եւ գեղեցիկ
44	Սառաման	Կնիք՝ ՊԵՏՐՈՍ ՀՃՆԵԱՆ [կեդրոնի գրութիւնը՝ անընթ.][5]	Բրձրթն.՝ 11.5, բրձրթն.՝ 0.6 մլմ, յատակ՝ 8,5, բերանի տրամագիծ՝ 16.5	Հստթն.՝ 1 մլմ., 375 կր.	
45	մոմակալ	ՅԻշՏԿ Է Մ/ԱՆՈ/ԻԿԻ Ո/ՐԴ/Ի ՍԱ/ՐԳԻՍԻ/Ն ՍԲ յԷՐՂՄ/Ա ի ԴՌՆ ՍԲ ԱՃԱՃՆ/Ա ԳԵՐԵԶՄ/ՆԻՆ Թ/Վ ՌԲՃԱի/ն [1201+551=1752]	Բրձրթն.՝ 14, յատակի նստուածք՝ 10	Հստթն.՝ 1-2.6 մլմ., 314 կր.	
46	պտղաման	Կնիք արաբերէն՝ سارکیس جمیرجیان կեդրոնը առիւծ	Բրձրթն.՝ 12.5, բերան՝ 30x20.5,	Հստթն.՝ 1 մլմ., 675 կր.	
47	Մեծ, խորունկ	ՄՂՏՍԻ ՄԱ/ՐՏԻՐՈՍԻ Ո/ՐԴ/Ի ԳԱՍԲԱ/Ր [Ա/Ր, Ո/Ր, [Դ/Ի, Ա/Ր միացուած]	Յատակը՝ 17, բերանի տրամագիծ՝ 30, բրձրթն.՝ 8,	Հստթն.՝ 3 մլմ., 1344 կր.	Նուրբ, գեղեցիկ նախշեր՝ մէջը եւ խորքը
48	Լուացաման	ՍԱՐԳ/ԻՍ [Գ/Ի միացուած]	Բրձրթն.՝ 9.5, տրամագիծ բերան՝ 34, յտկ.՝ 17.5,	Հստթն.՝ 3 մլմ., 2080 կր.	
49	Կափարիչով կաթսայ	ΚΟΣΤΑΝΤΗ ΧΑΤΖΙΣΤΕΦΑΝΙ 1801[6] [= Կոստանդի Խածիսթեֆան]	Բրձրթն.՝ 22, ոռիկ՝ 25, կափարիչի բերան՝ 19.5	Հստթն. 0.8 մլմ., 1637+392 կր.	

[5] Թոքմաճեանի վերոյիշեալ գիրքը չունի այս պղնձագործին անունն ու կնիքը:

[6] Թիւ 25 եւ 49 իրերուն արձանագրութիւնը վերծանեց Յովիկ Գասպարեան, որ իր երկտողին մէջ (9 Ագոստոս 2022) կը նշէ նաեւ թէ թիւ 49ի արձանագրութեան մէջ «կայ ուղագրական սխալ Κ (ο) ΣΤΑΝΤΗ պէտք էր գրուի Ωով»:

Նկար 1. ՅԱԿՈԲ ԳԱՀԿԵՃԻԵԱՆ+ կնիք՝ ՍԱՐԳԻՍ

Նկար 2. ՂԱԶԱՆՃԸԵԱՆ ԱԿՈԲ + արաբերէն թուական 1291+ կնիք՝ ՅԱԿՈԲ

Նկար 3. Կնիք՝ ԱՏՈՒՐ

Նկար 6. ԱՊԷՏ[1]

Նկար 7. ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՎԱՐԴԱՆ եւ արաբատառ անընթեռնելի գրութիւն

[1] Թիւ 4 եւ 5 տիւիթները հայկական արձանագրութիւն չունին:

Նկար 8. ԱՆՆԱ ԽԱԼՕԵԱՆ 1903

Նկար 9. ԼՈՒՍԵԱՅ ԳԱՀՎԷՃԵԱՆ 1895

Նկար 10. ԱՆՆԱ ՉՈՒՎԼԱԿԵԱՆ 1903

Նկար 11. ԽԱՆԸՄ [արաբերէն] 1896

Նկար 12. Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄՀԻ ՆԵՐՍԷՍԻՆ ԹՎ[.]ՌՃԿԴ[-]ԻՆ

Նկար 13. ՏԻՔՐԱՆՈՒՅԻՆ 1901

Նկար 14. ՄԻՆԱ ԹՈՒԹԻՆՃԵԱՆ 1906

Նկար 15. ՄԼԱՀՀՏԵՍԻ ԵՂԻԱՅ ԵՂԲԱՅՐ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Նկար 16ա. حنا كريس [Հաննա Կարպիս՞]

Նկար 16բ. Գաղտնագի՞ր, անընթեռնելի

Նկար 17ա. ԹՂՈՒՄԱՃԱՆԻ ՈՐԴԻ ԵՂԻԵԱ

Նկար 17բ. Թռչունի վերածուած Ճ գիրը

Նկար 18. ՄՂՏԻ ԱԿՈԲ

Նկար 19. ՄԱՀՏԵՍԻ ԿԱՐԱՊԵՏ

Նկար 20. ՊԱՂՏԱՍԱՐ

Նկար 21. ԱՍԼԱՆ

Նկար 22. ԿԱՐԱՊԵՏ

Նկար 23ա. 1298 محمد اسحق كيالي [Մուհամմատ Իսհաք Քայյալի]

Նկար 23բ. ԳԻՐԳՈՐԻ ՈՐԴԻ ՄՂՏԵՍԻ ՂԱԶԱՐ

Նկար 24. Գաղտնագի՞ր, անընթեռնելի

Նկար 25. XTZIMOYPAT [= ԽԾԻ ՄՈՒՐԱԹ/հաճի Մուրատ]

Նկար 26. Այ ծԱՌԱ ՄԱՐԻՔ

Նկար 27ա. ՀՕՌՕԲՍԸՄԱ

Նկար 27բ. ՄՀԻ ԴԱՎԻԹ

Նկար 28. ՄՀԻ ԵՈՒՍՈՒՓԻ ՈՐԴԻ ՄՀԻ ԱԲՐԱՀԱՄ

Նկար 29. ՄՀԻ ԵՂԻԵԱՅ ՌՄԼԴ

Նկար 30 եւ 31. بابا ارسلانيان [Պապա Արսլան] եւ ԱՐՍԼԱՆ 923 ՊԱՊԱ

Նկար 32. Առիւծի պատկեր, Նկար 33-36. ԳՐԻԳՈՐ ԹԱՆԱՇԵԱՆ 929

Նկար 37. ՄԵԼՔՈՆԻ ՈՐԴԻ ՄՀԻ ՍԵԼՎԵՐ ՌՄՀԻ

Նկար 38. Ի ՎԱՅԵԼՈՒՄՆ ՄՀԻ ՄԿԸՐՏԻՉ ԹՎ ՌՃծզ

Նկար 39. ԱՒԵՏԻՍԻ ՈՐԴԻ ԵԴԳԱՐ



Նկար 40. ԱՐԱՊ ՕՂԼԻ ԿԱՐԱՊԵՏ, [արաբերէն] 1268

Նկար 41. ՆԱՀԱՊԵՏԻ ՈՐԴԻ ԱՒԵՏԻՍ

Նկար 42ա. ԱՐՈՒԹԻՆ ԹՎՈՒՃՀԳ

Նկար 42բ. صاحبه الشيخ ابراهيم ابن محمود [Սահիպուհու էլշէյխ Իպրահիմ Իպն Մահմուտ]

Նկար 43ա. յշՏկէ Ելրուսաղէ]Մ ԻՍՐԲ յկբ

Նկար 43բ. Յշ5կ Է Ելրուսաղէ]Մ իդՌՆ ՍԲ Յ5Բյ

Նկար 43գ. عبد البديع الدفر [Ապտուլ Պատիʻ ԷլՏաֆար]

Նկար 44. ՊԵՏՐՈՍ ՀՃՆԵԱՆ

Նկար 45. ՅԻՇՏԿ Է ՄԱՆՈՒԿԻ ՈՐԴԻ ՍԱՐԳԻՍԻՆ ՍԲ յԷՐՂՄայ ի ԴՌՆ ՍԲ. ԱծԱծՆԱյ ԳԵՐեզՄԱՆԻՆ ԹՎ ՌԲՃԱին

Նկար 46. ساركيس جمبرجيان [Սարգիս Ճեմպերճեան]

Նկար 47ա. ՄՂՏՍԻ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՈՐԴԻ ԳԱՍԲԱՐ

Նկար 47բ. Ամանին կեդրոնական գեղեցիկ փորագրանկարը

Նկար 48. ՍԱՐԳԻՍ

Նկար 49. ΚΟΣΤΑΝΤΗ ΧΑΤΖΙΣΤΕΦΑΝΙ 1801 [= Կոստանդի Խածիսթեֆան]

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՔԱՐՏԷԶՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒՆ[1]

ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐԵԱՆ (sardarapatasatryan@gmail.com)

ՄՈՒՏՔ

Հայոց ազգագրութեան թանգարանի (ՀԱԹ) հաւաքածուն հարուստ է ու բազմաբովանդակ: 1978ին հիմնադրուած թանգարանի հաւաքածուն շատ արագ հարստացաւ՝ շնորհիւ դաշտային ազգագրական արշաւների, գնումների, հաւաքչական աշխատանքների ու նուիրատուութիւնների:

ՀԱԹի հաւաքածուին առանձին արժէք են տալիս նուիրատուութիւնները, որոնք յաճախ մէկ կամ միքանի նմուշներ չեն, այլ՝ նուիրատուների կողմից տարիների ընթացքում ստեղծած հաւաքածուներ, որոնց նիւթերը - հաւաքածուի միւս նմուշների հետ - կազմում են թեմատիկ մէկ ամբողջութիւն: Յատկապէս արժէքաւոր են Ժիրայր Գաբրիէլեանի[2], Փ. Չիֆթալարեանի[3], Երանուհի Հայտոսթեանի[4], Յակոբ Մոմճեանի[5] եւ այլոց նուիրատուութիւնները: Այս շարքում անգնահատելի տեղ ունի «Թանգարանի բարեկամ» կոչմանն արժանացած Յակոբ Ճելալեանը, որի նուիրատուութիւնների հաւաքածուն բաղկացած է պղնձագործական եւ արծաթագործական առարկաներից, զարդերից, զէնքերից, Կուտինայի յախճապակուց[6]:

2007ին Ճելալեանը ՀԱԹին նուիրաբերեց 130 փորագրանկար՝ մեծմասամբ օտար վարպետների գործեր, որոնցում արտացոլուած են Հայաստանի հետ պատմական տարբեր ժամանակներում տեղի ունեցած իրադարձութիւններ ու դէպքեր: Հաւաքածուն ներառում է տպագիր մամուլ, գրքերի էջեր, քարտէզներ, որոնք տպագրուած են ԺԶ.-ԺԹ. դարերում, Հայաստանից դուրս, եւ պատմաքաղաքական տեղեկատուութեան աղբիւր են հանդիսանում Հայաստանի մասին[7]:

---

[1] Յօդուածը նուիրուած է Յակոբ Ջելալեանի պայծառ յիշատակին:

[2] Տե՛ս՝ ՀԱԹ, ԱԿ-3 ֆոնդ, համար 8225/1-17 պղնձէ ափսէների հաւաքածուն:

[3] Գ. Աղանեան, «Հայկական զինագործութիւնը XIX դարում--XX դարի սկզբին (ըստ Կարնոյ եւ Ախալցխայի նիւթերի)», *Գիտական աշխատութիւններ*, III:2000, էջ 129-36:

[4] ՀԱԹ, համար 7010/1-334 հաւաքածու:

[5] Ա. Ասատրեան, «Յակոբ Մոմճեանի նուիրատուութիւնների հաւաքածուն», *Թանգարան հանդէս*, 2011, էջ 144-152:

[6] Տե՛ս՝ Ս. Պօղոսեան, Ս. Պապիկեան, Ա. Ասատրեան, Զ. Ծատուրեան, Ա. Ճելալեան, *Յակոբ Ճելալեանի նուիրատուութիւնների կատալոգ*, Տիգրան Մեծ, հրատ. Երեւան 2008:

[7] Հաւաքածուն ներառում է նաեւ հայկական տարազի նմուշներ պատկերող նկարներ (Ս. Պօղոսեան, «Կովկասեան տարազով կերպարներ եւրոպական փորագրանկարներում», *Աւանդականը եւ արդիականը հայոց մշակոյթում XVI (Դերենիկ Վարդումեանի ծննդեան 90-ամեակին նուիրուած գիտաժողովի նիւթերի ժողովածու)*, ՀՀ ԳԱԱ Գիտութիւն հրատ., Երեւան,2014, էջ 111-21:

Յատկապէս մեծ արժէք ունեն հաւաքածուի 27 քարտէզները, որոնք տպագրուած են ԺԷ.-ԺԹ. դարերում, Եւրոպայում (Ֆրանսա, Անգլիա, Հոլանտա) եւ հանդիսանում են ժամանակի հեղինակաւոր տպագրական ընկերութիւնների ու լաւագոյն քարտէզագիր-հեղինակների գործունէութեան արդիւնք: Դրանք վերատպութիւններ են աւելի հին շրջանի քարտէզներից եւ ունեն աղբիւրագիտական ու պատմական մեծ արժէք՝ թէ՛ որպէս թանգարանային հաւաքածու եւ թէ՛՝ պատմաքաղաքական վաւերագրեր[8]:

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Քարտէզ եզրն իյայտ է եկել միջնադարում՝ Վերածննդի դարաշրջանում: Մինչայդ գործածւում էին tabula, descriptionis բառերը: Եզրը ծագում է լատիներէն charta (թերթ, թուղթ) բառից, որն իր հերթին առաջ է եկել յունարէն χαρτηζ (խարտէս) բառից: Այժմ այս բառն օգտագործւում է աշխարհի մի շարք լեզուներում: Ոչ-պակաս տարածուած է նաեւ լատիներէն mappa բառից ծագող եզրը, որը նշանակում է կտաւի կտոր: Միքանի լեզուներում գործածւում են երկու եզրերն էլ, երբեմն՝ տարբեր նրբիմաստներով, օրինակ՝ անգլերէնում chart եզրով նշում են ծովային եւ օդագնացագիտական քարտէզները, սպաներէնում carta եզրով նշում են ծովային եւ աստղագիտական քարտէզները: Գոյութիւն ունեն նաեւ քարտէզ բառի տիպիկ ազգային անուանումներ. ճափոներէն՝ tizu, հունգարերէն՝ terkep լիտվերէն՝ zemelapis եւն.[9]:

Միջնադարեան Հայաստանում քարտէզ (քարտէս) բառին զուգահեռ գործածւում էին նաեւ աշխարհացոյց, աշխարհագիր, երկրագրութիւն, բառերը: Աշխարհացոյց բառը գործածութեան մէջ է եղել մինչեւ ԺԷ.-ԺԸ. դարերը: Օրինակ՝ 1695ին Ամսթերտամում հրատարակուած քարտէզը կոչւում է «Համատարած աշխարհացոյց»[10], 1778ին Վենետիկում Շահամիր Շահամիրեանի պատուէրով տպագրուած Հայաստանի քարտէզը՝ «Աշխարհացոյց Հայաստանեայց»[11]:

---

[8] Քարտէզները գրանցուած են թանգարանի «Փ» (Փաստաթուղթ) ֆոնդում՝ 8332 համարի տակ եւ թանգարանի քարտէզների միակ հաւաքածուն են, ինչն առաւել արժէքաւոր եւ նպատակային է դարձնում դրանց ուսումնասիրութիւնն ու գիտականօրէն շրջանառուելը: Թանգարանի «Փ» ֆոնդում են պահւում նաեւ համար 299՝ յունարէնով տպագրուած «Փոքր Ասիա-Միջագետք» քարտէզը եւ համար 300 երկրագունդը, որոնք համար 8332 հաւաքածուի մաս չեն կազմում, ուստի այս աշխատանքում դրանց չենք անդրադարձել:

[9] А. Берлянт, *Картография* (Քարտէզագրութիւն), Ասպեկտ պրէսս, Մոսկուա, 2002, էջ 5:

[10] Ս. Տ. Երեմեան, *Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»ի*, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1963, էջ 17:

[11] Ծ. Գրիգորեան, «Շահամիր Շահամիրեանի "Աշխարհացոյց Հայաստանեաց"-ը», *Բանբեր Մատենադարանի*, 6:1962, էջ 354:

Քարտէզն աշխարհագրական, ինչպէս նաեւ պատմական ու ժամանակագրական տեղեկութեան պահպանման ու փոխանցման արդիւնաւէտ միջոց է: Այն թոյլ է տալիս տարածքի ամբողջական դիտարկում եւ վերլուծութիւն՝ տեղանքի ոչ-մեծ հատուածից մինչեւ երկրագնդի մակերեւոյթն ամբողջութեամբ, արտացոլում պատմաաշխարհագրական տարբեր իրողութիւնները, դրանց յաջորդականութիւնն ու փոխկապակցուածութիւնը[12]:

Դէպքից յետոյ որոշ ժամանակ դպրոց չի յաճախում, շինարարութիւնում, որտեղ հայրն էր աշխատում, սովորում է պատ շարել: Յետոյ հրապուրւում է լողով, եւ, ինչպէս ամէն ինչին կեանքում՝ տրւում է անմնացորդ: Արդիւնքը չի ուշանում. 1949ի ձմռանը պատանին սահմանում է առաջին հանրապետական մրցանիշը:

Շուտով դիպուածը, թէ՞ նախախնամութիւնը փոխում է Շահէնի կեանքը մէկընդմիշտ: Նա մի հանդէսում տեսնում է Այվազովսկու՝ ծովը պատկերող մի նկար. «*Եւ արուեստի հանդէպ չորս տարով մոռացութեան մատնուած սէրս հրաբխի նման յանկարծ ժայթքեց ու ալեկոծեց ինձ: Հորիզոնն ասես լուսաւորուեց, ու պարզ դարձաւ, թէ յանուն ինչի պէտք է ապրել: Ամէն ինչ մղուեց երկրորդ պլան, մնաց միայն արուեստը*»: Դա 1950 թուականն էր: Ֆիզկուլտուրայի ինստիտուտի ուսանողը, լողի՝ Հայաստանի պատանիների ախոյեանն ու մրցանիշակիրը սկսում է «արուեստի գծով» ինքնակրթութիւնը, Խորհրդային Միութեան տարբեր քաղաքներ մրցումների գնալիս յաճախում է թանգարաններ, հաւաքում նկարների վերատպութիւններ, որոնցով կազմում է իր առաջին ալբոմը…

1959ը յիրաւի շրջադարձային էր. Շահէնն աշխատանքի է անցնում Հայաստանի ազգային պատկերասրահում եւ շուտով սկսում է հեռակայ ուսանել Լենինգրադի

(այժմ՝ Սանկտ Պետերբուրգ) Իլիա Ռեպինի անուան գեղանկարչութեան, քանդակագործութեան եւ ճարտարապետութեան ինստիտուտում (նախկին գեղարուեստի ակադեմիան): Վեց տարուայ փոխարէն սովորելով 4,5 տարի, նա 1965ին աւարտում է՝ ստանալով արուեստաբանի որակաւորում:

1967ի գարնանը Պատկերասրահի երիտասարդ արուեստաբանն առաջին անգամ մեկնում է արտասահման՝ Հունգարիա, ուղեկցում Մարտիրոս Սարեանի ցուցահանդէսը եւ այնտեղից սկսում է նամակներ գրել Վարպետին այն մասին, թէ հունգարացիներն ինչ լաւ են ընդունում նրա արուեստը: Շուտով այդ նոյն շէնքում բացւում է Պաբլօ Պիկասոյի ցուցահանդէսը, եւ Շահէնը շարունակում է Վարպետի հետ կիսել իր տպաւորութիւնները:



Այդ ժամանակ Երեւանի կենտրոնում կառուցւում էր Մարտիրոս Սարեանի տուն-թանգարանը եւ Վարպետը, թանգարանի ապագայ տնօրէնի մասին խօսակցութեան ժամանակ, յիշում է իրեն Բուդապեշտից նամակներ գրողին: Չի ուշանում վերին մարմինների հակադարձութիւնը. «Շահէ՞նը: Նրա մասին խօսք լինել չի կարող: Նախ՝ շատ երիտասարդ է, երկրորդ՝ անկուսակցական է, երրորդ՝ հայրենադարձ է»: «Ինձ համար դա նշանակութիւն չունի,- վճռաբար առարկում է Սարեանը:- Կանչէ՛ք, ուզում եմ հետը խօսել»:

Շարունակութիւնը հեքիաթի նման. 1967 Օգոստոս, Պատկերասրահում աշխատանքից ազատման դիմում գրած երիտասարդը փողոցում հանդիպում է Վարպետի որդուն՝ կոմպոզիտոր Ղազարոս Սարեանին, որը, հօր պատուէրով, հենց նրան էր փնտռում: «*Կէս ժամ անց երկչոտ կանգնած էի Վարպետի առաջ: Նա հարցրեց, թէ որտեղից են ծնողներս, յետոյ ասաց. "Ես ցանկանում եմ, որ դու դառնաս իմ ընկերը, եւ մենք միասին այստեղ աշխատենք"*»:

Սարեանը նամակ է գրում Հայաստանի մշակոյթի նախարարին.

...Վերջապէս գտնուեց թանգարանային աշխատանքի շատ լաւ փորձ ունեցող մի երիտասարդ արուեստաբան, որը կարող է ղեկավարել թանգարանը եւ ծաւալել իսկական աշխատանք: Դա Շահէն Խաչատրեանն է:

Խնդրում եմ Ձեզ նրան թանգարանի դիրեկտոր նշանակել, մանաւանդ որ նա պետական պատկերասրահից այլ աշխատանքի անցնելու մտադրութիւն ունի:

Խորին յարգանքով՝ Ձեր Մարտիրոս Սարեան, 14. IX. 1967թ.:

Պատմում են, որ թանգարանի տնօրէն, արուեստաբան Շահէն Խաչատրեանը ոչ միայն ինք էր կազմակերպում բոլոր ցուցադրութիւնները, այլեւ անձամբ էր կա-

խում կտաւները, անձամբ էր լուանում թանգարանի ապակիներն ու գորգերը, մաքրում մայթի ձիւնն ու սառոյցը: Իսկ ամենայիշատակելին պաշտելի Վարպետի հետ յարաբերութիւններն էին: Դրանք միայն նկարիչ-թանգարանի տնօրէն յարաբերութիւններ չէին, միայն կենդանի դասական-երկրպագու յարաբերութիւններ չէին: Շահէնը յիրաւի որդիական սիրով ու խոնարհութեամբ է ծառայել Վարպետին:

Մարտիրոս Սարեանի տուն թանգարանը հիմնադրուել է 1967ին, երբ նկարիչն արդէն 87 տարեկան էր, իսկ ինքը՝ 33: Շահէնն ամէն օր հանդիպում էր, զրուցում Վարպետի հետ, գրի առնում նրա մտքերը, անընդհատ լուսանկարում էր նկարելիս, հանգստանալիս, հիւրերի հետ (նա նկարել է շուրջ 2 հազար լուսանկար)… Եւ ամենակարեւորը՝ ամէն օր Սարեանի սեղանին թուղթ ու մատիտներ, ֆլոմաստէրներ էր դնում, որ Վարպետը նկարի…

Վարպետի ծննդեան 90ամեակի կապակցութեամբ Խաչատրեանը հրատարակում է *Մարդը բնութիւն է, բնութիւնը՝ մարդ* գրքոյկը, որտեղ հաւաքել էր իր դիտարկումներն ու գրառումները, որոնք բացայայտում են ոչ միայն մեծ նկարիչ, այլեւ՝ մեծ փիլիսոփայ Մարտիրոս Սարեանին… Հեղինակի յորդորով Վարպետն անում է այդ գրքոյկի նկարազարդումները՝ հարստացնելով իր ստեղծագործութիւնը նոր գծապատկերներով:

Թանգարանն իր գործունէութիւնը սկսել է Վարպետի նուիրած 30 գեղանկարչական գործերով եւ 20 գծանկարներով: 37 տարուայ ընթացքում (Շահէն Խաչատրեանը տնօրինել է թանգարանը 1967-2004ին), սարեանական ստեղծագործութիւնների թիւը հասնում է 234ի, որոնք ձեռք են բերուել կամ նուէր ստացուել այս անդուլ, մեղուի ժրաջանութեամբ աշխատող մարդու շնորհիւ: Իդէպ՝ քիչ չէին նաեւ անձամբ Խաչատրեանի՛ նուիրած գործերը, այն կտաւներն ու գծանկարները, որոնք նա ձեռք էր բերում իր խնայողութիւններով, կամ նուէր էր ստանում տարբեր հաւաքորդներից, նաեւ՝ հենց Վարպետից:

Շահէն Խաչատրեանի ղեկավարած տարիներին Սարեան թանգարանը դառնում է մեծանուն Վարպետի ստեղծագործութեան ուսումնասիրման եւ հանրահռչակման կենտրոն: Նրա կազմակերպած 100ից աւել ցուցահանդէսները Հայաստանի եւ ԽՍՀՄ տարբեր քաղաքներում, Ֆրանսայում, Գերմանիայում, Իտալիայում, Եգիպտոսում, Սուրիայում, տարբեր լեզուներով հրատարակած ալբոմներն ու կատալոգները Մարտիրոս Սարեան երեւոյթի արժեւորման եւ աշխարհին ներկայացնելու հրաշալի ճիգեր էին…

Արուեստաբանի միւս լուսատու աստղը, վստահաբար, Յովհաննէս Այվազովսկին էր: Շահէն Խաչատրեանի նպատակը «ռուս» նկարիչ Իւան Այվազովսկուն հայացնելն էր: Դրա համար Խաչատրեանը Խորհրդային երկրի տարբեր թանգարաններից հաւաքում եւ 1979ին Սարեան թանգարանում բացում է ծովանկարչի՝ հայկական թեմաներով արուած շուրջ 40 նկարից կազմուած ցուցահանդէս: Արուեստաբանն այդ թեմային հետամուտ է լինում ամբողջ կեանքի ընթացքում. Այվազովսկուն նուիրուած մեծ ու փոքր ցուցահանդէսներ ԽՍՀՄում, արտերկրում, բազմաթիւ գիրք-ալբոմներ լոյս տեսած մեծ պատկերագրքերը:

Չստեղծուի տպաւորութիւն, թէ Շահէն Խաչատրեան արուեստաբանին հետաքրքրում էին միայն Սարեանն ու Այվազովսկին: Մինաս Աւետիսեան, Յակոբ Յակոբեան, Գառզու, Ժանսէմ, Լաւինիա Բաժբէուկ-Մելիքեան, Ռոբերտ Էլիբեկեան, Էդգար Շահին, Ռաֆայէլ Աթոյեան, Արշիլ Գորկի, Շառլ Ադամեան, Վարդան Մախոխեան եւ ուրիշ շատ հայաստանցի ու սփիւռքահայ նկարիչներ են եղել արուեստաբանի հետաքրքրութիւնների ծիրում:

Նրա յօդուածներն ու գիրք-ալբոմները, Հայաստանում եւ Սփիւռքում ունեցած բազմաթիւ ելոյթներն ու դասախօսութիւնները մի նպատակ էին հետապնդում՝ Հայաստանում ճանաչելի դարձնել սփիւռքահայ նկարիչներին եւ հակառակը՝ Սփիւռքում լաւագոյնս ներկայացնել հայաստանաբնակ արուեստագէտներին, դրանով իսկ հանդիսանալով իւրօրինակ կամուրջ մեր ժողովրդի այդ երկու հատուածների միջեւ: «*Քանի՛-քանի՛ խանդավառ դահլիճներ է տեսել Շահէնը: Իր խօսքի ուժով քանի՛-քանի՛ անտարբեր սրտեր են վառուել արուեստի հրով: Քանի՛-քանի՛ կեանք տեսած, ամէն ինչից ձանձրացած ունկնդիրներ են վառուող աչքերով մօտեցել դասախօսութիւնը աւարտած Շահէնին: Այն, ինչի մասին հաճոյքով յիշում եւ գրում եմ, չի վերաբերում միայն Հալէպին, Դամասկոսին, Բէյրութին: Նրան սպասում էին Կանադայից Ֆրանսիա, Միացեալ Նահանգներից Ռուսաստան եւ այլուր: Նրա եռանդն անսպառ էր: Իր սրտին խօսող որեւէ գաղափարի համար ովկիանոսներ ու մայրցամաքներ անցնելը՝ սովորական բան*»,- վկայում է արուեստաբանի կրտսեր ընկերներից մէկը՝ նկարիչ Հրազդան Թոքմաջեանը:

Աշխարհով մէկ սփռուած հայ նկարիչները, ի դէմս Խաչատրեանի, գտնում էին ոչ միայն ազնիւ բարեկամի, այլեւ Հայաստանի հետ կապուելու, Հայաստանում ցուցադրուելու, ճանաչուելու ճանապարհը... Եւ ամէն անգամ այդ շփումները Շահէն Խաչատրեանը ծառայեցնում էր նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահին այդ նկարիչների գործերով հարստացնելու ազգաշահ գործին: Նրա ջանքերի շնորհիւ միայն Գառզուից շուրջ 70 աշխատանք է հասել Պատկերասրահ, մեծաթիւ արժէքաւոր աշխատանքներ՝ Ժանսեմից: «*Նկարիչը խոստացել էր, որ իր փարիզեան խոշոր ցուցահանդէսից յետոյ ինձ թոյլ կը տայ մի ստեղծագործութիւն ընտրել Պատկերասրահի համար: Երբ ես մի պահ մօտեցայ «Ասեղնագործուհիներին», ինձ թուաց նկարիչը տագանուեց: Պարզուեց, որ Ժանսեմը երբեք չի բաժանուել այդ կտաւից: «Լաւ,- ասաց,- տար, հոս հայկական բան մը կայ: Այս մանչուկը (կտաւի կենտրոնում պատկերուած պատանին) ես եմ»: Իսկ 1995ին նկարիչն ինձ յանձնեց «Թափօրը»՝ իրեն բնորոշ եւ, անտարակոյս, լաւագոյն գեղանկարչական գործերից մէկը*»՝ գրում է Խաչատրեանը *Թանգարանի զինուորը* գրքում:

1990ին Սարեան թանգարանի տնօրէն Շահէն Խաչատրեանը համատեղութեամբ ստանձնում է նաեւ Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրինութիւնը: Անմիջապէս սկսում է Պատկերասրահի շէնքի նորոգումը, ապահովում է դահլիճների անվտանգութիւնը: 1992ին նրա նախաձեռնութեամբ Մարսէյում հրատարակւում է Պատկերասրահի առաջին, եռալեզու ուղեցոյցը: Արցախեան ազատամարտի այդ ծանր տարիներին Պատկերասրահում հիմնադրուած «Սարգիս Խաչենց» հրատարակչատունը Խաչատրեանի՝ սփիւռքահայ բարերարներին ներգրաւելու շնորհիւ սկսում է լոյս ընծայել մէկը մէկից արժէքաւոր գրքեր... Շահէն Խաչատրեանը Ազգային պատկերասրահում աշխատած 12 տարիների ընթացքում հարստացնում է այն շուրջ 400 գեղանկարներով եւ գծանկարներով, որոնց նիւթական արժէքը միլիոնաւոր դոլարներով է հաշւում, իսկ հոգեւոր արժէքն անչափելի է...

2003ին մշակոյթի նախարարի պահանջով Շահէն Խաչատրեանը թողնում է Ազգային պատկերասրահի տնօրէնի պաշտօնը, իսկ 2004ին՝ հեռացւում է նաեւ Սարեան թանգարանից: Սիրելի աշխատանքից զրկուելը ծանր հարուած էր նուիրեալ արուեստագէտի համար: Բարեբախտաբար նրան աշխատանքի է հրաւիրում ամենայն հայոց հայրապետ Գարեգին Բ.ը: Խաչատրեանը դառնում է կաթողիկոսի մշակոյթի գծով խորհրդականը, յետոյ՝ «Խրիմեան» թանգարանի տնօրէնը: Եւ նորից լծւում է իր սիրելի գործին՝ ցուցահանդէսներ, ալբոմներ, նկարահաւաքչութիւն...

2011-17՝ արուեստաբանը հրատարակում է պատանիներին ուղղուած «Ճանաչիր եւ սիրիր» պատկերագրքերի շարքը, նուիրուած՝ հայ նկարիչներին: Տասնհինգ պատկերագրքերից բաղկացած այս շարքում տեղ է գտել նաեւ Եղեռնին նուիրուած հատորը, որը ներառում է շուրջ 60 հայ նկարչի 160 ստեղծագործութիւն: Միայն երեւակայել կարելի է, թէ ինչպիսի՛ մանրակրկիտ եւ յամառ աշխատանք է պահանջում այդպիսի գործը: «Ճանաչիր եւ սիրիր» շարքի վերջին՝ 15րդ հատորը *Թանգարանների հարստացում*ն է, որը ներառում է այն գործերը, որոնք Հայաստան են բերուել հեղինակի ջանքերի շնորհիւ: Այստեղ, սակայն, նկատելի է մի ցաւալի իրողութիւն, որը շրջանցել չենք կարող. կեանքի վերջին տարիներին արուեստագէտը տառապում էր հիւանդութեամբ, որը դանդաղ սպանում էր նրա յիշողութիւնը, ինչն անդրադարձել է յատկապէս նրա այս վերջին աշխատանքի վրայ՝ խօսքը դարձնելով ճապաղ, ցաքուցրիւ... Ցաւալի է, որ հրատարակիչները ուշադրութիւն չեն դարձրել այդ փաստին, չի եղել խմբագիր...:

Արուեստաբանի շատ ծրագրեր հիւանդութիւնը անկատար թողեց. պէտք է շարունակէր *Ճանաչիր եւ սիրիր* շարքը (ի սկզբանէ նախատեսուած էր 20 գիրք), տարիների ընթացքում Վարպետի հետ հանդիպումների, իր արած լուսանկարների, ձայնագրութիւնների, գրառումների հիման վրայ մտադիր էր հրապարակել *Զրոյցներ Սարեանի հետ* գիրքը, ուզում էր հրապարակել նաեւ ամերիկահայ նկարիչ Մանուէլ Թոլեգեանի եւ Վիլիամ Սարոյեանի՝ արուեստին նուիրուած երկխօսութիւնների գիրքը, Երեւանում ուզում էր հիմնել Յովհաննէս Այվազովսկու թանգարանը, իսկ Մայր Աթոռում՝ Արշիլ Գորկու...

Շահէն Խաչատրեանը 1984ին արժանացել է Հայաստանի արուեստի վաստակաւոր գործչի կոչման, 1996ին պարգեւատրուել է ՀՀ «Մովսէս Խորենացի» մեդալով, 1999ին դարձել է Գիւմրու պատուաւոր քաղաքացի, իսկ 2014ին՝ ծննդեան 80ամեակի առիթով, արժանացել է Հայ Առաքելական Եկեղեցու «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» պատուոյ բարձր շքանշանին:

Այդուհանդերձ, նրա թերեւս ամենամեծ գնահատականը տուել է ինքը՝ Մարտիրոս Սարեանը՝ **թանգարանի զինուո՛ր:** Մեր կողմից աւելացնենք, որ այդ Զինուորը հայ մշակոյթի մի ամբողջ դարաշրջան է մարմնաւորել՝ տեսանելի եւ անտես թէլերով կապուած լինելով հայ նկարիչների միքանի սերնդի հետ՝ Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի...

Ստորեւ՝ Շահէն Խաչատրեանի հրատարակած գրքերը.- *Մարդը բնութիւն է, բնութիւնը՝ մարդ*, (1970), *Մարտիրոս Սարեան* (հայերէն, ռուսերէն, անգլերէն պատկերագիրք, 1980), *М. Сарьян, избранные произведения, на русском и английском* (1983), *Цветы Сарьяна. Альбом* (Լ. Միրզոյեանի հետ, 1987), *Martiros Saryan* (Ա. Կամենսկու հետ, 1988), *Мартирос Сарьян, сказки и сны* (անգլերէն եւ ռուսերէն, 1995), *Sarian* (անգլերէն եւ ռուսերէն, 2003), *Martiros Sarian* (անգլերէն, 2001), *Սարեանը եւ Եգիպտոսը* (հայերէն, անգլերէն, 2001), *Sarian* (ֆրանսերէն, 2009), *Մարտիրոս Սարեան, ընտրանի* (2009), *Мартирос Сарян, избранное* (2009), *Այվազովսկի* (հայերէն, ռուսերէն, անգլերէն, 1984), *Айвазовский, живопись* (1989), *Айвазовский известный и неизвестный* (անգլերէն եւ ռուսերէն, 2000, 2013), *Aivazovski la poésie de la mer* (2007), *Այվազովսկի* (հայերէն, ռուսերէն, ֆրանսերէն), *Aivazovsky* (անգլերէն, արաբերէն, 2014), *Այվազովսկի, ծննդեան 200ամեակին* (2017, ռուսերէն՝ նոյն տարին), *Айвазовский* (ռուսերէն եւ անգլերէն, 2019), *Айвазовский, Апостол мира и гуманизма* (ռուսերէն եւ հայերէն, 2008), *Գաբրիէլ Արքեպիսկոպոս Այվազեան (Այվազովսկի), ընտրանի* (2012), *Le chant de la mer*

(1996), *Minas Avetisian* (անգլերէն, 1996), *Մինաս Աւետիսեան* (հայերէն, ռուսերէն, անգլերէն, 2004), *Hagop Hagopian* (անգլերէն, 1997), *Յակոբ Յակոբեան* (հայերէն, ռուսերէն, 2016), *Rafael Atoy*an (անգլերէն, 1999), *XIX-XX դարերի հայ նկարիչներ* (բ. հրատ., ֆրանսերէն, հայերէն, անգլերէն, 2001), *Յաւի գոյնը. Եղեռնի անդրադարձը հայ նկարչութեան մէջ* (հայերէն, անգլերէն, 2010), *Ֆրանսահայ կերպարուեստ* (1991. գիրքը գրուել էր 1960ականներին, բայց խորհրդային տարիներին չէր կարող հրապարակուել...), *Պետրոս Կոնտրաջեան-Պետօ, 1905-1956* (հայերէն, ֆրանսերէն, արաբերէն, 2004), *Թանգարանի զինուորը. նկարահաւաքի պատմութիւններ* (2007, 2014, ռուսերէն՝ 2007), *Հայաստանի Ազգային Պատկերասրահ. Ուղեցոյց* (Սիմոնա Դամոտի հետ, 1992): Իր «Ճանաչիր եւ սիրիր» մատենաշարով հայերէն եւ ռուսերէն հրատարակուել են Յակոբ Էքիզեանը, Պետրոս Կոնտրաջեան-Պետօն, Մարտիրոս Սարեանը, Արշիլ Գորկին, Մինաս Աւետիսեանը, Յակոբ Յակոբեանը, Յովհաննէս Այվազովսկին, Վարդգէս Սուրէնեանցը, Յակոբ Յովնաթանեանը, Էդգար Շահինը, Վարդան Մախոխեանը, Գառզուն, Ժանսեմը: Այս շարքի մէջ են մտնում նաեւ *Հայոց Եղեռնը* եւ *Թանգարանների հարստացում* գրքոյկները: Նա համահեղինակել, կազմել, խմբագրել եւ առաջաբանն է գրել մի շարք գրքերի՝ *Արշիլ Գորկի. նամակներ* (Սէյրանուհի Գեղամեանի հետ, 2005), Գ. Գէորգեանի *Ջութակի հոգին. Ժան Տէրմերկերեան* (Է. Մանուկեանի հետ, 2012), Օնոփրիոս Անոփեանի *Բանաստեղծութիւնները*ը (2010) եւ թարգմանել ու հրատարակել է Ռուբէն Սեւակի *Багровая тоска* գիրքը (2004):

Շահէն Խաչատրեանը մահացել է 2021ի Հոկտեմբերի 22ին, Երեւանում:

ԼԻԼԻԿ ՍՏԵՓԱՆԵԱՆ (lilikstep@gmail.com)

ԱՇՈՏ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
(1954–2021)

Լեզուաբան, ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտէտի ընդհանուր լեզուաբանութեան ամբիոնի դոցենտ Աշոտ Աբրահամեանը ծնուել է 1954ի Սեպտեմբերի 23ին, լեզուաբան, ակադեմիկոս Սերգէյ Աբրահամեանի ընտանիքում: 1971-76՝ ուսանել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտում:, 1980ին պաշտպանել է թեկնածուական՝ «Արսէն Այտընեանի լեզուաբանական հայեացքները» նիւթով: Դասաւանդել է Երեւանի Վ. Բրիւսովի անուան ռուսաց եւ օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում (1976-77), Հայաստանի գրքասէրների ընկերութիւնում (1977-78), ՀԽՍՀ ԳԱ Հ. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտում (1981-95), ԵՊՀում (1991ից մինչեւ մահը): Գիտական հետաքրքրութիւնները ներառել են ընդհանուր լեզուաբանութիւնը, լեզուափիլիսոփայութիւնը, նշանագիտութիւնը:

Աշոտ Աբրահամեանը հեղինակ է *Արսէն Այտընեանի լեզուաբանական հայեացքները* մենագրութեան (1984): Որպէս համահեղինակ մասնակցել է մի շարք դասագրքերի, ձեռնարկների եւ շտեմարանների ստեղծմանը, այդ թւում՝ *Մաթեմատիկա. հանրակրթական դպրոցի 4րդ դասարանի դասագիրք* (1997), *Մաթեմատիկա 4. դասագիրք հանրակրթական դպրոցի 4րդ դասարանի համար* (2000), *Մաթեմատիկա 5. դասագիրք հանրակրթական դպրոցի 5րդ դասարանի համար* (2000), *Մաթեմատիկան 4-5րդ դասարաններում. ուսուցչի մեթոդական ձեռնարկ* (2000), *Մաթեմատիկա. դասագիրք հանրակրթական դպրոցի 5րդ դասարանի համար* (2006), *Մաթեմատիկան 5-6րդ դասարաններում* (2006), *Մաթեմատիկա 6. դասագիրք հանրակրթական դպրոցի 6րդ դասարանի համար* (2007), *Հայոց լեզու եւ հայ գրականութիւն. 7 թեստ* (2008), *Հայոց լեզուի եւ հայ գրականութեան պետական աւարտական եւ միասնական քննութեան ուղեցոյց* (2009), *Հայոց լեզուի եւ հայ գրականութեան ձեռնարկ-շտեմարան* (2009), *Մաթեմատիկա. հիմնական դպրոցի 5րդ դասարանի դասագիրք* (2011), *Մաթեմատիկական տերմինների բացատրական բառարան* (2017), *Մաթեմատիկա 5-6. ուսուցչի ձեռնարկ* (2011), *Մաթեմատիկա. հիմնական դպրոցի 6րդ դասարանի դասագիրք* (2012):

Աշոտ Աբրահամեանը մահացաւ 2021ի Փետրուարի 10ին, Երեւանում:

ՀՀՀ

ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԵԱՆ
(1935–2021)

Պատմական գիտութիւնների թեկնածու Ֆրինա Սուրէնի Բաբայեանը ծնուել է 1935ի Յունուարի 27ին, Երեւանում: 1954-59՝ ուսանել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտում: 1962ին ընդունուել է ԳԱ արուեստի ինստիտուտ, 1963ին տեղափոխուել է հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտ, որտեղ աշխատել է մինչեւ կեանքի վերջը: 1974ին պաշտպանել է «Միջնադարեան Հայաստանի գեղարուեստական խեցեղէնի զարդաձեւերի իմաստաբանութիւնը 9-13րդ դդ.» թեկնածուականը, որը լոյս է

նութիւնը 9-13րդ դդ.» թեկնածուականը, որը լոյս է տեսել 1981ին:

Երկար տարիներ մասնակցել է մայրաքաղաք Դուինի միջնաբերդի պեղումներին, որոնց շնորհիւ ի յայտ են եկել դարաւանդաձեւ դասաւորուած կառոյցներ: Բաբայեանի վերջին տարիների ուշագրաւ բացայայտումներից էր միջնաբերդի հիւսիս-արեւելեան լանջին յայտնաբերուած աղիւսաշէն կառոյցը՝ զարդարուած յախճապակէ անօթներով:

Բաբայեանը ղեկավարել է հնագիտական արշաւախմբեր: Հառիճի վանական համալիրում 1980-90ականներին յուշարձանների պահպանութեան եւ օգտագործման գլխաւոր վարչութիւնը վերականգման աշխատանքներ է իրականացրել, որի ընթացքում կատարուել են նաեւ պեղումներ՝ Բաբայեանի ղեկավարութեամբ: Պեղումների շնորհիւ բացուել են բնակելի, տնտեսական, արտադրական նշանակութեան կառոյցներ: Բաբայեանի գլխաւորութեամբ են իրականացուել նաեւ Ուշիի Ս. Սարգիս վանական համալիրի պեղումները: Հնագիտական աշխատանքների արդիւնքում հողի շերտից ազատուել են Ս. Սարգիս եկեղեցի-վկայարանը, Ս. Աստուածածին եկեղեցին, բնակելի եւ տնտեսական շինութիւնները, պարիսպը՝ հինգ աշտարակներով, պարսպի արտաքին տարածքը, վանքի գլխաւոր մուտքը, երկրորդ մուտքը եւն.: 2005ին հրատարակել է *Ուշիի Ս. Սարգիս վանքը* գիրքը (հայերէն-անգլերէն-ռուսերէն):

2012ին Արագածոտնի թեմի առաջնորդ Մկրտիչ եպիսկոպոս Պռոշեանի հրաւէրով Բաբայեանը պեղումներ է իրականացրել Օշական գիւղի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու զանգակատան հիմքերի մօտ:

1990ականների սկզբին պեղումներ է իրականացրել Ղրիմի Ս. Խաչ վանական համալիրում՝ յստակեցնելով եկեղեցու նախնական ճարտարապետական կերպարը, կրած փոփոխութիւնները: Պեղումների արդիւնքում յայտնաբերուած ուշագրաւ գտածոներից են մի շարք նորայայտ վիմագրերը, հայատառ թասերը:

Բաբայեանը մասնակցել է նաեւ 2003ին Երեւանի հանրապետութեան հրապարակի տարածքում իրականացուած պեղումներին: Դրանց արդիւնքում Աղաւնի Ժամկոչեանի համահեղինակութեամբ հրատարակել է *Ուրուագծեր հին Երեւանի պատմութեան եւ հնագիտութեան* գիրքը (2015):

2010-11՝ մասնակցել է Արցախի Տող գիւղում գտնուող Մելիք Եգանի պալատական համակառոյցի պեղումներին: Հնագէտը ուշագրաւ բացայայտումներ է կատարել մելիքական ընդունարանի գործառութային տարբեր խնդիրների բացայայտման ուղղութեամբ: Առաջին անգամ գիտական շրջանառութեան մէջ է դրուել Արցախի մելիքական շրջանի նիւթական մշակոյթը:

2014ին պարգեւատրուել է ԼՂՀ վարչապետի յուշամեդալով՝ ԼՂՀ մատուցած ծառայութիւնների եւ ներդրած աւանդի համար: 2018ին պարգեւատրուել է «Էրեբունի թանգարան 50» յուշամեդալով՝ մշակութային արժէքների պահպանման գործում ներդրած նշանակալի աւանդի համար:

Ֆրինա Բաբայեանը մահացել է 2021ի Օգոստոսի 8ին, Երեւանում:

ԴԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆԵԱՆ (dianamirijanyan@gmail.com)

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒՏԵԱՆ
(1955–2021)

Հայագէտ-տոմարագէտ Գրիգոր Բրուտեանը ծնուել է Երեւանում, 1955 Յունիսի 28ին: Ծնողները Կիլիկիայի Մարաշ եւ Ատանա քաղաքներից են: Իր հիմնական գիտելիքները եւ վերաբերմունքը մշակոյթի ու գիտութեան նկատմամբ ստացել է ծնողներից եւ մօրաքրոջից՝ բանասէր, Մատենադարանի գիտաշխատող Արմինէ Քէօշկէրեանից: 1973-78՝ ուսանել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտէտում: Ուսումնառութեան վերջին տարիներին աշխատել է համալսարանի աստղաֆիզիկայի ամբիոնում որպէս *լաբորանտ*: Ուսումնառութեան աւարտից անմիջապէս յետոյ աշխատանքի է անցել Բիւրականի աստղադիտարանում: Երկար տարիներ աշխատել է աստղերի եւ միգամածութիւնների ֆիզիկայի բաժնում: Զբաղուել է բռնկուող աստղերի (նաեւ՝ Վոլֆռայէի դասի աստղերի) ուսումնասիրութեամբ, գործուն մասնակցութիւն է ունեցել աստղադիտարանում ընթացող դիտողական ծրագրերին: 1982ից՝ աստղաֆիզիկական աշխատանքին զուգընթաց զբաղուել է նաեւ հայկական օրացոյցին վերաբերուող խնդիրներով: 1999ից աշխատել է նորաստեղծ՝ Վիկտոր Համբարձումեանի տուն-թանգարանում, 2000ից՝ եղել է թանգարանի տնօրէնը: 2004ին պաշտպանել է թեկնածուական: 2005ից «տոմարագիտութիւն» է դասաւանդել Գէորգեան հոգեւոր ճեմարանում, ԵՊՀում ու Մխիթարեան ճեմարանում: 2009ից տուն-թանգարանում պաշտօնավարութեանը զուգահեռ աշխատանքի է անցել Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանում:

Բրուտեանի տոմարագիտական ուսումնասիրութիւնների հիմնական ոլորտը հայկական հին եւ հնագոյն օրացոյցների դաշտն է: Նա ճշգրտել է հայոց հայկեան օրացոյցի սիզբը՝ Ք.ա. 2341ը, հայոց հնագոյն Ամանորի՝ Նաւասարդի տօնի դիրքը արեւադարձային տարուայ մէջ (ամառնամուտից 8 օր առաջ), ի յայտ է բերել հայոց հնագոյն՝ նախահայկեան օրացոյցը իր ուրոյն կառուցուածքով, որոշ ճշգրտումներ է կատարել հայկական միջնադարեան օրացոյցների վերաբերեալ (մասնաւորապէս՝ Անանիա Շիրակունու տոմարի), ճշգրտել է Յովհաննէս Սարկաւագի ժամանակագրական համակարգը...: Երեք տպագրուած եւ մէկ անտիպ մենագրութիւնների հեղինակ է, հեղինակել է նաեւ շուրջ վաթսուն գիտական յօդուածներ՝ հիմնականում հայկական օրացոյցի, դրա պատմութեան, յարակից խնդիրների եւ աստղաֆիզիկայի որոշ հարցերի վերաբերեալ: Հրատարակել է *Անանիա Շիրակացու «Խառնախորանը»* (1998):

Գրիգոր Բրուտեանը մահացել է 2021ի Ապրիլի 11ին, Երեւանում:

ՀՀՀ

ՎԼԱԴԻՄԻՐ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ
(1946–2021)

Պատմական գիտութիւնների թեկնածու Վլադիմիր Երուանդի Գրիգորեանցը ծնուել է 1946ի Ապրիլի 5ին, Աշխաբադում (Թուրքմէնական ԽՍՀ):

1974ին աւարտել է Տաշքենդի Լենինի անուան պետական համալսարանի պատմութեան ֆակուլտէտը: 1974ից եղել է Թուրքմէնական ԽՍՀ կենտրոնական պետական արխիւի փաստաթղթերի հրապարակման եւ օգտագործման բաժնի աւագ գիտաշխատող, 1979ից՝ Մ.Ի. Կալինինի անուան Թուրքմէնստանի պետական



գիւղատնտեսական ինստիտուտի պատմութեան դասախօս: 1983ին ՀԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական՝ «Հայ բնակչութեան մասնակցութիւնը անդրկասպեան տարածաշրջանի սոցիալ-տնտեսական եւ սոցիալ-քաղաքական զարգացմանը 19րդ դարավերջ-20րդ դարասկզբին, 1881–1917 թթ.» թեմայով: 1989ից եղել է ՀԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտի հայկական գաղթօճախների պատմութեան բաժնի աւագ գիտաշխատող: 1994ից բնակուել է Սիմֆերոպոլում (Ղրիմ), 2001ից եղել Սիմֆերոպոլի ղրիմագիտական հետազօտական կենտրոնի տնօրէն: Առանձին գրքերով հրատարակել է *Армяне Средней Азии: История, соврем. положение, перспективы* (Միջին Ասիայի հայերը. պատմու-թիւն, ներկայ վիճակը, հեռանկարները (1994), *Возрождение армянской общины Крыма: достижения и проблемы (1989–2004 гг.)* (Ղրիմի հայ համայնքի վերած-նունդը. նուաճումներ եւ խնդիրներ (1989-2004) 2004) հատորները, խմբագրել է Օսմանեան Թուրքիայում Հայոց Ցեղասպանութեան 90րդ տարելիցին նուիրուած նիւթերի ժողովածուն (2005 ռուսերէն):

Վլադիմիր Գրիգորեանցը մահացաւ 2021ի Մարտի 1ին, Սիմֆերոպոլում:

ՀՀՀ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ԴԱՐԲԻՆԵԱՆ-ՄԵԼԻՔԵԱՆ
(1920–2021)

Պատմաբան, թարգմանիչ Մարգարիտա Յովնանի Դարբինեան-Մելիքեանը ծնուել է 1920ի Մարտի 18ին, Բաթումում (այժմ՝ Վրաստան), հայ հօր եւ լեհ մօր ընտանիքում: Տանը խօսել են ռուսերէն. նա հայերէն սովորել է գրաբարի միջոցով: Միջնակարգ կրթութիւնն ստացել է Լենինականում (այժմ՝ Գիւմրի): 1941ին աւարտել է Մոսկուայի մանկավարժական ինստիտուտը: Վերադառնալով Հայաստան՝ աշխատանքի է նշանակուել Չիբուխլու գիւղում (այժմ՝ Ծովագիւղ): Մասնակցել է Բ. համաշխարհային պատերազմին (Բաթումի ափամերձ տարածքը թշնամու օդային յարձակումից պաշտպանող 352րդ զենիթահրթիռային գնդում) եւ Ճափոնի դէմ ԽՍՀՄ մղած պատերազմին: 1951-57՝ դասաւանդել է Երեւանի ռուսաց եւ օտար լեզուների ինստիտուտում, 1958-59՝ եղել է արեւելագիտութեան ինստիտուտի աւագ գիտաշխատող, 1959ից՝ Մատենադարանի աւագ գիտաշխատող: 1955ին ՀԽՍՀ ԳԱ պատմութեան ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական՝ «Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ քաղաքական իրավիճակը առաջին Հուլաւուների օրօք (մինչեւ Ղազանխանը)» նիւթով:

Ուսումնասիրել եւ գրաբարից ռուսերէն է թարգմանել հայ պատմագրութեան սկզբնաղբիւրները եւ կազմել ծանօթագրութիւնները: Նրա թարգմանութեամբ ռուսերէն լոյս են տեսել նաեւ Զաքարիա Քանաքեռցու *Պատմագրութիւն*ը (1969), Սիմէոն Լեհացու *Ուղեգրութիւն*ը (1965), Անանուն Զրուցագրի *Պատմութիւն*ը (1971), Յովհաննէս Դրասխանակերտցու *Պատմութիւն հայոց*ը (1986), Թովմա Արծրունու *Պատմութիւն տանն Արծրունեաց*ը (2001): *Նարեկ*ի ռուսերէն գեղարուեստական

թարգմանութիւնները, որ կատարել են Նաում Գրեբնէովը (1969) եւ Վ. Միկուշեւիչը (1985) հիմնուած են Մարգարիտա Դարբինեան-Մելիքեանի եւ իր գործընկերուհի Լենա Խանլարեանի՝ գրաբարից արուած տողացի թարգմանութեան վրայ: 1988ին Մոսկուայի «Արեւելքի մատենագրութեան յուշարձաններ» շարքով լոյս է ընծայուել *Մատեան ողբերգութեան* ռուսերէն թարգմանութեան գիտական ու ամբողջական տարբերակը՝ Դարբինեան-Մելիքեանի եւ Խանլարեանի թարգմանութեամբ: Թարգմանութիւններ է կատարել նաեւ պարսկերէնից, գերմաներէնից, անգլերէնից, ֆրանսերէնից, իտալերէնից, արաբերէնից:

2019ին Երեւանում լոյս է ընծայել *Книга мелизматических песнопений* (Մելիզմատիկ երգեցողութեան գիրք) գրքոյկը, որտեղ ամփոփուած են Նարեկացու տաղերից ու ներբողներից 13 թարգմանութիւն՝ իր նախաբանով, գիտական բացատրութիւններով ու ծանօթագրութիւններով: Անտիպ է մնում ԺԳ. դարի հեղինակ, Ստեփանոս արք. Օրբէլեանի (Ստեփանոս Սիւնեցի) *Պատմութիւն տանն Սիսական* աշխատութեան ռուսերէն թարգմանութիւնը:

Մարգարիտա Դարբինեան-Մելիքեանը մահացել է 2021ի Մարտի 9ին, Երեւանում, 101 տարեկանը լրանալուց ինն օր առաջ:

ՀՀՀ

ՎԼԱԴԻՄԻՐ ԶԱԽԱՐՈՎ
(1946–2021)

Ռուս պատմաբան, գրականագէտ, պատմական գիտութիւններու թեկնածու Վլադիմիր Ալեքսանդրի Զախարով ծնած է 1946 Յուլիս 17ին, Արմաւիր (Հիւսիսային Կովկաս): 1964ին ընդունուած է Սթաւրոպոլի պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական բաժինը: Աւարտած է Մոսկուայի պետական հեռակայ մանկավարժական ինստիտուտը: Աշխատած է Փիաթիկորսքի, Փենզայի, Քրասնոտարի երկրամասի, Մոսկուայի թանգարաններուն մէջ: Եղած է Ռուսաս-տանի ԱԳՆ Մոսկուայի միջազգային յարաբերութիւններու պետական ինստիտու-տի աւագ գիտաշխատող:

Հեղինակ է շուրջ 1000 յօդուածի եւ աւելի քան 300 գիրքերու: Զախարովի գիտական հետաքրքրութիւններու շրջանակը լայն էր: Ան հետազօտութիւններ կատարած է Թմուտարականի իշխանութեան պատմութեան, ռուսական «Ասք Իկորի գունդին մասին» հերոսապատումին, բանաստեղծ Միխայիլ Լերմոնթովին, Այսրկովկասի պետութիւններուն, Հիւսիսային Կովկասի, Աբխազիայի, Թուրքիոյ քաղաքական պատմութեան մասին: Հայաստանին կը վերաբերին անոր *Кавказ после 08.08.08: старые игроки в новой расстановке сил* (Կովկասը 08.08.08էն յետոյ. հին խաղացողները ուժերու նոր դասաւորումին մէջ) (համահեղինակ՝ Ա.Գ. Արեշեւ, Մոսկուա, 2010) եւ *История Кавказской Албании в исследованиях академика И. А. Орбели и проблема искажения истории Армении и Арцаха в Азербайджане* (Կովկասեան Ալբանիայի պատմութիւնը ակադեմիկոս Յ. Ա. Օրբելիի ուսումնասիրութիւններու մէջ եւ Ադրբեջանում Հայաստանի ու Արցախի պատմութեան խեղաթիւրման խնդիրը) (Մոսկուա, 2012) մենագրութիւնները: Բազմիցս այցելած է Հայաստան, լայն կապեր ունեցած հայ գործընկերներու հետ:

Զախարովը մահացաւ 2021 Նոյեմբերի 1ին, Քարաչաեւսք, Ռուսաստան:

ՀՀՀ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԹՈՓՉԵԱՆ
(1939–2021)

Գրականագէտ, գրաքննադատ, արձակագիր, թատերագիր եւ թարգմանիչ Ալեքսանդր Թոփչեանը ծնուել է 1939 Սեպտեմբերի 7ին, Երեւանում, գրականագէտ Էդուարդ Թոփչեանի ընտանիքում: 1962ին աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը: 1962-63՝ աշխատել է *Պիոնէր կանչ* պարբերականում, 1963-65՝ «Հայաստան» հրատարակչութիւնում, 1967-75՝ *Գարուն* ամսագրում, 1975-88՝ «Հայֆիլմ»ում, 1982-89՝ Չարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանում որպէս գրական բաժնի վարիչ, 1991-95՝ ՀՀ ԱԺ լրատուութեան յանձնաժողովում: 1960-80ի ընթացքում Հայաստանի, Մոսկուայի եւ միութենական տարբեր հանրապետութիւնների գրական մամուլում հրատարակած յօդուածները նրան միութենական ճանաչում են բերել: Ուսումնասիրել է Ի. դարի եւ յատկապէս 1960ականների հայ բանաստեղծութիւնը՝ Հայաստանում թէ Սփիւռքում: Առանձին հատորներով լոյս են տեսել նրա *Բառի սահմանները* (1978) եւ *Ապագայի ներկայութեամբ* (1987) գրականագիտական եւ գրաքննադատական յօդուածների ժողովածուները:

Հեղինակ է բազում թարգմանութիւնների ֆրանսերէնից եւ ռուսերէնից, որոնց թւում են առանձին հատորներով լոյս տեսած Լառոշֆուկոյի, Շոտերլօ տը Լաքլոյի, Վիւանի, Սիմենոնի, Ափոլինէրի, Փրեւէրի, Քոքթոյի, Ժիրոտուի, Սարթրի, Անույի, Ռընարի, Սականի, Տենի դը Ռուժմոնի, Պենժամէն Քոնսթանի, Լորիս Քարէմի, Ժաք տը Տեքէրի, Ռամիւզի, Քոլցի, Վիտրլիէի, Լըմոնիէի, Շլեխթէրի, Փորթանթի, Վահէ Քաչայի, Ժան-Պաթիսթ Պարոնեանի, Վահէ Կոտէլի, Արմէն Կոտէլի եւ այլոց գործերը: Հրատարակել է 500ից աւելի գրականագիտական յօդուած մամուլում՝ նուիրուած արդի գրականութեան հարցերին: Թոփչեանի խմբագրական եւ հրատարակչական գործունէութեան շնորհիւ Խորհրդային Հայաստանում լոյս են տեսել Ռուբէն Սեւակի, Վազգէն Շուշանեանի, Հրաչ Զարդարեանի, Յարութ Կոստանդեանի, Նիկողոս Սարաֆեանի, Զահրատի, Զարեհ Խրախունու եւ այլ հայ գրողների ստեղծագործութիւնները, ինչպէս նաեւ հայ գրողների ժողովածուներ եւ ընտանիներ՝ ռուսերէն, լատվիերէն, վրացերէն եւ այլ լեզուներով:

Թոփչեանը հեղինակ է նաեւ մի շարք գեղարուեստական երկերի, որոնք լոյս են տեսել հայերէն եւ օտար լեզուներով: Դրանց թւում են *Արտագերս* թատերախաղերի եւ պատմուածքների ժողովածուն (1994), *Կիրկէ կղզին* (1996), *Եւ անգամ մահից յետոյ* (Ռուբէն Սեւակի մասին, 2005) եւ *Բանկ Օտոման* (2008, ռուսերէն՝ Մոսկուա, 2012, ֆրանսերէն՝ Փարիզ, 2012, թարգմանուել է նաեւ պարսկերէն, սերբերէն եւ լատվիերէն) վէպերը: Իր գրական գործունէութեան համար արժանացել է մի շարք մրցանակների:

Ալեքսանդր Թոփչեանը մահացաւ 2021ի Սեպտեմբերի 3ին Երեւանում: Սեպտեմբերի 20ին մահացաւ նրա անբաժան ուղեկիցը՝ թատրոնի, հեռատեսիլի եւ շարժանկարի ճանաչուած դերասանուհի, արձակագիր եւ թարգմանչուհի Անահիտ Թոփչեանը (1947–2021):

ՍՏԵՓԱՆ ԹՈՓՉԵԱՆ
(1937–2021)

Գրականագէտ, հրապարակախօս, արուեստաբան, բանասիրական գիտութիւնների թեկնածու Ստեփան Թոփչեանը ծնուել է 1937ի Յունիսի 20ին, Երեւանում, գրականագէտ Էդուարդ Թոփչեանի ընտանիքում: Աւարտել է Երեւանի Խ. Աբովեանի անուան հայկական մանկավարժական ինստիտուտի պատմալեզուագրական ֆակուլտէտը: 1959ից աշխատել է Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ մշակութային կապի հայկական ընկերութիւնում, 1960-66՝ ՀԽՍՀ ԳԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտում: 1967-76՝ եղել է ՀԽՍՀ ԳԱ փիլիսոփայութեան եւ իրաւունքի ինստիտուտի էսթետիկայի, ապա հայ փիլիսոփայութեան պատմութեան բաժնի աւագ գիտաշխատող, իսկ 1976-79՝ Հայկական սովետական հանրագիտարանի գլխաւոր խմբագրի տեղակալը: 1979ից աշխատել է «Սովետական գրող» հրատարակչութիւնում, սկզբում որպէս գեղարուեստական արձակի խմբագրութեան բաժնի վարիչ: 1966ին թեկնածուական է պաշտպանել «Շիրվանզադէի էսթետիկական հայեացքները» թեմայով:

Առանձին հատորներով հրատարակել է *Շիրվանզադէի էսթետիկան* (1963), *Րաֆֆու էսթետիկական հայեացքները* (1971), *Հայ էսթետիկական մտքի պատմութիւնից* (գիրք I-II, 1974, 1976, հեղինակակից, ռուսերէն՝ Մոսկուա, 1976*), Հայ նոր գրականութեան պատմութիւն* («Դանիէլ Վարուժան», *հտր. 5*, 1979), *Անհունի անդրադարձը* (1982), *Կերպ եւ իսկութիւն, գրականագիտական ուսումնասիրութիւններ* (1985), *Հայ քննադատութեան պատմութիւն* («Յովհաննէս Թումանեան», *հտր. 2*, 1998), *Ապագայի յիշողութիւնը, հրապարակախօսութիւն* (գիրք 1-2, 2003), *Կեանք դարերի համար (Աւետիս Ահարոնեանի կեանքը)* (2003), *Կարիճի տարի, հրապարակախօսութիւն* (2016), *Յովսէփ Էմին* (2017), *Երուանդ Քոչար* (2021):

Ստեփան Թոփչեանը մահացել է 2021ի Յունուարի 20ին, ԱՄՆում:

ՀՀՀ

ՎԱՐԴԱՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ
(1932–2021)

ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հայ գաղթօճախների եւ Սփիւռքի պատմութեան բաժնի երկարամեայ գիտաշխատող, պատմական գիտութիւնների դոկտոր Վարդան Արշաւիրի Խաչատրեանը ծնուել է 1932ին:

Նրա գիտական հետաքրքրութիւնների շրջանակը հայ-ռուսական պատմամշակութային առնչութիւններն էին, մասնաւորապէս Աստրախանի հայ գաղթօճախի պատմութեան տարբեր ժամանակաշրջանների՝ սկզբնաւորումից (ԺՋ. դար) մինչեւ Ի. դարասկզբի Աստրախանի հայերի առեւտրա-տնտեսական, իրաւադատական յարաբերութիւնների բազմադարեան պատմութեան, քաղաքի եւ շրջանի արդիւնաբերութեան մէջ ունեցած խոշոր ներդրման, մշակութային կեանքի, հայկական դպրոցների, հայ տպագրութեան ուսումնասիրութիւնը:

Պատմական գիտութիւնների դոկտոր Ժորէս Անանեանի հետ Խաչատրեանը բազմիցս անդրադարձել է հայ-ռուսական քաղաքական կապերի պատմութեանը, ինչպէս նաեւ Ռուսաստանի հայկական գաղթավայրերում վաշխառութեան եւ վարկաւորման ծագման ու զարգացման հարցերին: Արխիւային հարուստ նիւթերի հիմամբ նրանք քննել են ռուսահայերի շրջանում կիրառուող վարկաւորման տարբեր

եղանակները, մուրհակային իրաւունքի, դրամատնային գործի ձեւաւորումը եւն.: Նրանք միասին հրատարակել են նաեւ «Ռուսաստանի հայ համայնքները» մենագրութիւնը (ռուսերէն, 1993):

Այս թեմաներով Խաչատրեանի հեղինակած յօդուածները լոյս են տեսել նաեւ *Հայ ժողովրդի պատմութիւն* բազմահատորեակի 4րդ հատորում (1981), *XVI-XVIII դդ. հայ ազատագրական շարժումները եւ հայ գաղթավայրերը* (1989) եւ *Էջեր հայ գաղթավայրերի պատմութեան* յօդուածների ժողովածուներում (խմբ.՝ Վլադիմիր Բարխուդարեան, Զաւէն Եկաւեան), *Հայ գաղթաշխարհի պատմութիւն* Ա. հատորում (2003) եւ այլ հեղինակաւոր հրատարակութիւններում:

Վարդան Խաչատրեանը մահացել է 2021ին:

ՀՀՀ



ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
(1936-2021)

Փրոֆեսոր Վլադիմիր Աղասու Կիրակոսեանը ծնուել է 20 Մայիս 1936ին Լենինական քաղաքում (այժմ՝ Գիւմրի): 1959ին աւարտել է ծննդավայրի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: Այնուհետեւ մինչեւ 1962 Ապարանի շրջանի գիւղական դպրոցներում աշխատել է իբրեւ հայոց լեզուի եւ գրականութեան ուսուցիչ: 1962ին ընդունուել է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտի թեկնածուական: 1966ին աշխատանքի է անցել նոյն ինստիտուտում եւ ամբողջ կեանքը անմնացորդ նուիրել հայ նոր գրականութեան բարդ ու հետաքրքիր ժամանակաշրջաններից մէկի՝ ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի հայ գրականութեան ուսումնասիրութեանը: Նրա գիտական նախասիրութիւնները կապուած էին յատկապէս արեւմտահայ գրականութեան ու քննադատութեան, որոնք այդ ժամանակաշրջանում ձեռք էին բերել աննախադէպ բարձր որակ:

Կիրակոսեանը իր գրականագիտական մկրտութիւնը ստացաւ Հայոց Ցեղասպանութեան նահատակ Ռուբէն Սեւակի կեանքի եւ ստեղծագործութեան ուսումնասիրութեամբ: Նախ նա պաշտպանեց նրան նուիրուած թեկնածուական, ապա հրատարակեց *Ռուբէն Սեւակ. կեանքը եւ սփեղծագործութիւնը* (1972) արժէքաւոր մենագրութիւնը: Սրան յաջորդեցին Ինտրային (Տիրան Չրաքեան), ԺԹ. դարավերջի եւ Ի. դարասկզբի այլ հեղինակներին նուիրուած, ինչպէս նաեւ ժամանակի գրական բանավէճերն ու առանցքային հարցերն արծարծող նրա յօդուածները եւ ուսումնասիրութիւնները, որոնք տպագրուեցին Հայաստանի Հանրապետութեան գիտական մամուլում, այդ թւում եւ *Բանբեր Երեւանի համալսարանի* հանդէսում: Դրանց արդիւնաւոր ամփոփումը գրականագէտի *Արեւմտահայ բանաստեղծութիւնը 1890-1907 ԹԹ.* (1985) մենագրութիւնն էր, որը նրա դոկտորական ատենախօսութեան հիմքն էր:

Հայ գրական մտքի զարգացմամբ շահագրգիռ՝ Կիրակոսեանը նաեւ գործակցում էր այլ հեղինակների եւ խմբերի հետ. համահեղինակ է *Գրական դէմքեր* (1976), *Հայ քննադատութեան պատմութիւն* (1985), *Հայկական ռէալիզմի տեսութեան եւ պատմութեան հարցեր* (1987) գրքերի:

Հիմնադրման առաջին օրուանից աշխատել է Քուանտէ վարժարանում. 1991–2011՝ եղել է վարժարանի հայոց լեզուի եւ գրականութեան ամբիոնի վարիչը: 1994-2009՝ վարել է գրականութեան ինստիտուտի փոխտնօրէնի պաշտօնը: Խաղաղ, անաղմուկ, համեստ աշխատաւոր էր Կիրակոսեանը: Որպէս իր գործին հմտօրէն տիրապետող գրական մշակ՝ նա աշխատում էր առանց ցուցադրականութեան, մասնակցում էր գրականութեան ինստիտուտի ձեռնարկումներին եւ հանրապետութեան գիտական ու գրական-մշակութային կեանքին:

Անուրանալի է Կիրակոսեանի դերը երիտասարդ գրականագէտների պատրաստման ոլորտում: Գրականութեան ինստիտուտում նա բարեխղճօրէն կատարել է իր պարտականութիւնները բազմաթիւ թեկնածուների եւ հայցորդների հետ, անտրտունջ ստանձնել նրանց գիտական ղեկավարի կամ պաշտօնական ընդդիմախօսի պարտականութիւնը, նրանց փոխանցել իր կենսափորձն ու մասնագիտական հմտութիւնները: Տասնամեակներ շարունակ այս գիտական հիմնարկում նա ղեկավարել է Յովհաննէս Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան տարեգրութիւնն ուսումնասիրող խմբի աշխատանքները: Արդիւնքը՝ նրա խմբագրութեամբ լոյս տեսած *Յովհաննէս Թումանեանի կեանքի եւ ստեղծագործութեան տարեգրութիւն* քառահատոր գիրքն է (2010-20)**:**

Կիրակոսեան բնագրագէտի, ծանօթագրողի եւ խմբագրի հմտութիւնները լայնօրէն օգտագործուել են ՀՀ ԳԱԱ հրատարակչութեամբ լոյս տեսած գիտական գրեթէ բոլոր գրական ուղղուածութեամբ հրատարակութիւններում: Կարեւորագոյններից են յատկապէս Թումանեանի եւ Աւետիք Իսահակեանի երկերի լիակատար ժողովածուների հրատարակութիւնները, որոնց խմբագրական յանձնաժողովների գործուն անդամ էր նա որոշակի դերակատարութեամբ:

Արդէն աւարտուել է Իսահակեանի երկերի տասնչորսհատորեակի հրատարակութիւնը, որում փոքր չէ նրա ներդրումը: Երբ Թումանեանի ծննդեան 150ամեակի առթիւ բազմաթիւ նորայայտ նիւթերի առկայութեամբ ծագեց ամենայն հայոց բանաստեղծի երկերի տասհատորեակի՝ համալրումներով վերահրատարակութեան անհրաժեշտութիւնը, նախորդ հրատարակութեան խմբագրական յանձնախումբը պահպանելով՝ որոշուեց ստեղծել գրականութեան ինստիտուտի եւ Յովհաննես Թումանեանի թանգարանի համատեղ խմբագրական խորհուրդ, որի համանախագահների տեղակալը եւ գլխաւոր պատասխանատուներից մէկը Կիրակոսեանն էր: Ջրբաշեանի մահից յետոյ նա էր Թումանեանի *Երկերի լիակատար ժողովածուի* ակադեմական վերահրատարակուած չորս հատորների (2018-20) գլխաւոր խմբագիրը: Նա հսկայական ջանքեր ներդրեց 1990ականներին Թումանեանի ամբողջական հրատարակութեան բնագրերի, ծանօթագրութիւնների, մեկնական յօդուածների հետ նոր հրատարակութիւնը համեմատելով ու համալրելով, թումանեանական բնագրերի գրաքննութեան կրճատումների վերականգնումով եւ դրա հետ մէկտեղ՝ ներառուած նոր նիւթերը ծանօթագրութեամբ տպագրութեան պատրաստելով: Ասում են՝ անփոխարինելի մարդիկ չկան, սակայն Կիրակոսեանից յետոյ դժուար կը լինի գտնել թումանեանական յաջորդ հատորների խմբագրին:

Որպէս գրականութեան պատմաբան եւ տեսաբան՝ նա մեծ ջանքեր է ներդրել նաեւ գրականութեան ինստիտուտի հրատարակած *Հայ նոր գրականութեան պատմութեան* յատկապէս 5րդ հատորի (1979) պատրաստման գործում՝ գրելով քիչ-ուսումնասիրուած կամ խորհրդահայ իրականութեան մէջ առաջին անգամ ներկայացուող հեղինակներին եւ առանցքային հարցերին նուիրուած միքանի բաժիններ: Այդպիսի վստահութիւն գրականագէտը նուաճել էր նախանձելի աշ-

խատասիրութեամբ եւ ընդգրկուն իմացութեամբ, արեւմտահայ եւ արեւելահայ գրական երեւոյթները փոխկապակցուածութեան մէջ՝ որպէս մէկ միասնական ազգային գրականութիւն ընկալելու եւ համաշխարհային գեղարուեստական մտքի զարգացման համապատկերում դիտարկելու կարողութեամբ: Վլադիմիր Կիրակոսեան գրականագէտին բնորոշ է ժամանակի տարբեր երեւոյթները փոխկապակցուած տեսնելու կարողութիւնը, իւրաքանչիւր հեղինակի գրական ժառանգութիւնն իբրեւ ամբողջական շղթայի իւրայատուկ օղակ դիտարկելը: Գեղագէտի խորը եւ նուրբ դիտողականութեամբ է նա թափանցում գեղարուեստական ստեղծագործութեան բովանդակութեան ու գեղագիտական ներգործութեան բազմաթիւ շերտերը, բացայայտում հեղինակների աշխարհայեացքը, գեղարուեստական մտածողութիւնը, ոճը, դաւանած գաղափարներն ու սկզբունքները, տուեալ ստեղծագործութեան հեղինակային մտայղացման խորքային իմաստները, պատկերային համակարգը:

Նրա գրականագիտական փորձառութիւնն ու մանկավարժական հմտութիւնը արդիւնաւէտութեամբ են դրսեւորուել նաեւ հանրակրթական դպրոցի հայ գրականութեան դասագրքերի կազմման ասպարէզում: Աշակերտների տարիքային հոգեբանութեան առանձնայատկութիւնների հաշուառումով եւ դրան համապատասխան նիւթերի ճաշակաւոր ընտրութեամբ է նա ստեղծել այսօր գործածուող որակեալ, կենսունակ դասագրքերն ու մեթոդական ուղեցոյցները, մասնաւորապէս միքանի անգամ լոյս տեսած 7րդ դասարանի աշակերտների համար *Հայ գրականութիւն* դասագիրքը (1993, 1997, 2000):

Իր գիտական վաստակով Կիրակոսեանն ուղեկցելու է գրականագէտների նոր սերունդներին, իսկ կազմած դասագրքերով լինելու է դպրոցականների կողքին: Նրան ճանաչող անձինք կը յիշեն, որ նա աշխատանքային լաւ մթնոլորտ ստեղծող, վստահելի, հաւատարիմ ընկեր էր, հայ գեղարուեստական խօսքի եւ երգարուեստի գեղեցկութիւններով, մանաւանդ կոմիտասեան ու ժողովրդական մեղեդիներով լեցուն կենսախինդ հայ մտաւորական:

Վլադիմիր Կիրակոսեանը մահկանացուն կնքեց 25 Ապրիլ 2021ին Երեւանում:

ՍԱՄՈՒԷԼ ՄՈՒՐԱԴԵԱՆ (muradyan.samvel45@gmail.com)

ԳԷՈՐԳԻ ԿՈՒԲԱՏԵԱՆ
(1946–2021)

Գրաքննադատ, ռուսագիր բանաստեղծ, թարգմանիչ Գէորգի Իոսիֆի Կուբատեանը (Ղուբաթեան) ծնուել է 1946 Ապրիլի 18ին, Ուֆա քաղաքում (Բաշկիրական ԻԽՍՀ, Ռուսաստան), զինուորականի ընտանիքում: 1968ին աւարտել է Գորկի քաղաքի պետական համալսարանի բանասիրական բաժինը: 1962-63՝ որպէս ֆրեզէրագործ աշխատել է Կիրով քաղաքում, 1968ին՝ Երեւանի *Լիտերատուրնայա Արմենիա* ամսագրում որպէս գրական աշխատող, 1969-71 եւ 1972-75՝ որպէս գրական աշխատող եւ բաժնի վարիչի պաշտօնակատար: 1968-69՝ ծառայել է խորհրդային բանակում: 1971ին՝ աշխատել է ԵՊՀում որպէս աւագ լաբորանտ, 1976ից՝ Երեւանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազօտական ինստիտուտում որպէս ճարտարագէտ, 1974-2004՝ Մարտիրոս Սարեանի տուն-թանգարանում:

Հայերէնից ռուսերէն է թարգմանել Միսաք Մեծարենցի, Յովհաննէս Թումանեանի, Վահան Տէրեանի, Վահան Թեքէեանի, Սիամանթոյի, Դանիէլ Վարուժանի, Մատթէոս Զարիֆեանի, Յովհաննէս Շիրազի, Գէորգ Էմինի, Պարոյր Սեւակի, Արմէն Շեկոյեանի եւ այլոց ստեղծագործութիւններից, որոնք մեծ մասամբ լոյս են



տեսել Մոսկուայի գրական մամուլում: Առանձին գրքերով նրա թարգմանութիւններից լոյս են տեսել Պերճ Զէյթունցեանի *Աւերուած քաղաքի առասպելը* (համահեղինակ, 1981, 1985), Ռազմիկ Դաւոյեանի *Էպոս պատանութեանը* (համահեղինակ, 1982), Գուրգէն Մահարիի *Այրուող այգեստանները* (համահեղինակ, 2001), Ռուբէն Սեւակի *Կարմիր կարօտը* (2004) եւ Յովհաննէս Ներզեթեանի *Արտաւազդ եւ Կլէոպատրան* (2004): Երեւանում ռուսերէն հրատարակել է *Անուն* (1979) եւ *Լողանցման գօտի* (1990) բանաստեղծական ժողովածուները, *Բարի մտադրութիւններ (ակնարկներ ահաբեկութեան մասին)* ժողովածուն (2003) եւ *Գողացած օդ (յօդուածներ գրականութեան մասին)* (2004) հատորները: Վերջին հատորում Կուբատեանը ներկայացրել է մի շարք ռուս գրողների (Պիթով, Կրոսման, Քարապչիեւքի, Ախմաթովա, Ցուեթաեւա, Փասթեռնաք, Սամոյլով)՝ հայ մշակոյթի ու գրականութեան հետ ունեցած առնչութիւնները:

Ռուսաստանում նրան ճանաչել են որպէս Օսիփ Մանտելշթամի ստեղծագործութիւնների հետազօտողի, նա ներառուել է Մոսկուայում լոյս տեսած մանտելշթամեան հանրագիտարանի հեղինակների ցանկում:

Գէորգի Կուբատեանն արժանացել է Հայաստանի գրողների միութեան եւ Ս. Էջմիածնի համատեղ սահմանած «Կանթեղ» մրցանակին, 2010ին՝ Մոսկուայի *Դրուժբա նարոդով* (Ժողովուրդների բարեկամութիւն) հանդէսի մրցանակին:

Գէորգի Կուբատեանը մահացաւ 2021ի Սեպտեմբերի 1ին, Երեւանում:

ՌՈԼՖ ՀՈՍՖԵԼԴ
(1948–2021)

Գերմանացի պատմաբան, գրականագէտ, գրող Ռոլֆ Հոսֆելդը ծնուել է 1948ի Յունիսի 22ին: Կրթութիւնը ստացել է Ֆրանքֆուրթի եւ Պերլինի համալսարաններում, որոնցում յատկապէս քաղաքագիտութեան եւ փիլիսոփայութեան առարկաներում է խորացրել իր գիտելիքները: Դոկտորականի թեման եղել է գերմանացի բանաստեղծ եւ քննադատ Հայնրիխ Հայնէի աշխատութիւնները: Զբաղուել է լրագրութեամբ, խմբագրական աշխատանքներով եւ կինօարուեստով: Պատրաստել է բազմաթիւ փաստագրական ֆիլմեր: 1982ից եղել է գերմանացի գրողների միութեան անդամ: Հրատարակել է 15 գիրք, որոնց մի մասը արժանացել է մրցանակների:

Նրա *Հայոց Ցեղասպանութեան պարմութիւն* աշխատութիւնը լոյս է տեսել 2005ին եւ 2009ին: 2018ին դրա վերամշակուած տարբերակը թարգմանուել է թուրքերէն, իսկ 2021ին՝ հայերէն: 2005ին նաեւ լոյս է տեսել նրա *Նեմեսիս գործողութիւնը. Գերմանիան եւ Հայոց Ցեղասպանութիւնը*, 2015ին՝ *Մահն անապատում. Հայոց Ցեղասպանութիւնը* հատորը: Հայոց Ցեղասպանութեան մասին նրա գրքերը, բազմաթիւ դասախօսութիւնները, գիտական հրապարակումները, ելոյթները մեծ աւանդ են ունեցել Գերմանիայում Հայոց Ցեղասպանութեան նիւթի առաւել

ընդգրկուն եւ հանգամանալից ներկայացման համար: Հայերի տեղահանութիւններ-ի եւ Ցեղասպանութեան վերաբերեալ գերմանացի դեսպանների, հիւպատոսներ-ի, ականատեսների զեկոյցների շարքը համալրուել է նաեւ Հոսֆելդի ուսումնասիրութիւններով:

2011-21՝ տնօրինել է Փոցտամում գործող Եոհաննէս Լեփիսուսի տուն կենտրոնը: Իր տասնամեայ տնօրէնութեան ընթացքում բազմաթիւ գիտական ծրագրեր է իրականացրել, որոնք զգալիօրէն բարձրացրել են գիտահետազօտական կենտրոնի շրջանային եւ միջազգային հեղինակութիւնը, նպաստել հայ ժողովրդի, նրա պատմութեան եւ մշակոյթի, ինչպէս նաեւ ցեղասպանութեան վերաբերեալ գիտելիքների տարածմանը: Գործակցել է ՀԲԸՄի, Փոցտամի եւ ԵՊ համալսարաններ-ի, Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան Թանգարան-Ինստիտուտի հետ:

Ռոլֆ Հոսֆելդը մահացել է 2021ի Յուլիսի 23ին:

ՀՀՀ

ՎԱՐԴԱՆ ՂԱԶԱՐԵԱՆ
(1958–2021)

Լեզուաբան Վարդան Ղազարի Ղազարեանը ծնուել է 1958 Նոյեմբերի 23ին, Թեհրանում: Հօր մահից յետոյ ընտանիքի հետ տեղափոխուել է Հայաստան, 1977ին բնակութիւն հաստատել Աբովեան քաղաքում: 1987ին աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտը, 1989ին տեղափոխուել Մոսկուա, ընդունուել Լոմոնոսովի անուան Մոսկուայի պետական համալսարանի (ՄՊՀ) բանասիրական ֆակուլտէտի թեկնածուականը եւ պաշտպանել 1995ին՝ «Հնդեւրոպական բայերի փոխակերպումը հայերէնում եւ հնդկաիրանական լեզուներում» աւարտաճառը: 1997ից աշխատել է ՄՊՀի ընդհանուր եւ համեմատական-պատմական լեզուաբանութեան ամբիոնում: Դասաւանդել է խե-թերէն, հին եւ նոր պարսկերէն, գրաբար եւ աշխարհաբար: Աշխատութիւնները վերաբերում են հայերէնի եւ այլ հնդեւրոպական լեզուների վերջածանցաւոր բա-յերի, հայերէնի եւ թոխարերէնի համեմատական վերլուծութեանը:

Վարդան Ղազարեանը մահացել է 2021ի Մայիսի 19ին, Մոսկուայում:

ՀՀՀ

ԱՐՇԱԿ ՄԱԴՈՅԵԱՆ
(1938--2021)

Հայագիտութեան երախտաւոր, հայ միջնադարեան գրականութեան երեւելի գիտնական, մարդկային եւ գիտական բացառիկ որակների տէր Արշակ Մադոյեանը ծնուել է 1938 Յուլիսի 1ին Ախալքալաք քաղաքում (Վրաստան): Երեւան է տեղափոխուել 1954ին: 1961ին աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտի հայոց լեզուի եւ գրականութեան բաժինը: Համալսարանում անցել է աշխատանքի՝ իբրեւ ԵՊՀ հրատարակչութեան խմբագիր, բանասիրական ֆակուլտէտի մեթոդիստ, *Բանբեր Երեւանի համալսարանի* խմբագրութեան գրական աշխատող, պատասխանատու քարտուղար, գլխաւոր խմբագրի տեղակալ: Համալսարանի հայագիտական կենտրոն

է տեղափոխուել 1971ին, նախ՝ որպէս աւագ գիտաշխատող, ապա աշխատանոցի վարիչ (1986), իսկ 2001ից՝ առաջատար գիտաշխատող:

ՀՀ ԳԱԱ գրականութեան ինստիտուտում համատեղութեան կարգով աշխատել է 2007-9ին. 2009-15՝ եղել է *Էջմիածին* ամսագրի գլխաւոր խմբագիրը:

«Առաքել Սիւնեցի» ատենախօսութեան համար 1970ին ստացել է բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան. 1985ին պաշտպանել է դոկտորական՝ «Միջնադարեան հայկական պոէմը (ԺԱ.-ԺՋ. դարեր)» թեմայով: Այդ թուականից սկսած դասախօսել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտում: 1994ին ընտրուել է ժուռնալիստիկայի ամբիոնի փրոֆեսոր եւ դասաւանդել Հայ գրքի պատմութիւն: Երուսաղէմի ժառանգաւորացում եւ Էջմիածնի Գէորգեան ճեմարանում դասաւանդել է հայ մատենագրութեան պատմութիւն:

Հայ հին գրականութեան պատմութեանը վերաբող յօդուածներով, հրապարակումներով ու գրախօսականներով Հայաստանի եւ Սփիւռքի գիտական եւ գրական-հասարակական պարբերականներում հանդէս է եկել 1962ից:

Առանձնապէս յիշատակելի են *Միջնադարեան հայկական պոէմը* (1985), *Հայ-ռուսական գրական փոխառնչութիւններ* (1985), *Առաքել Սիւնեցի բանաստեղծը* (1987), *Խորհուրդ մեծ եւ սքանչելի. ներածութիւն հայ մատենագրութեան* (Երուսաղէմ 1995, ռուսերէն՝ 2004), *Հայ միջնադարեան քնարերգութիւն* (Լ. Մկրտչեանի աշխատակցութեամբ, 1996), *Ոսկեփորիկ* (Վ. Ներսիսեանի աշխատակցութեամբ, 1997), *Երուսաղէմ, Երուսաղէմ...* (1999), *Ուղեգրութիւններ* (հայերէն-իսպաներէն, 2001), *Զաւակներ լոյսի, առաքինութեան* (2001), *Գրիգոր Լուսաւորիչը ներբողներում* (Գ. Մադոյեանի հետ, 2002), *Խորհուրդ մեծ եւ սքանչելի* աշխատութիւնները:

Մադոյեանը կազմել, ծանօթագրել, առաջաբաններ է գրել տարբեր բնոյթի ժողովածուների համար, կատարել է թարգմանութիւններ՝ գրաբարից եւ ռուսերէնից: Յիշատակելի են հետեւեալ թարգմանութիւնները.- Ղուկաս Սեբաստացի, *Դաւիթ Բէկի պատմութիւնը* (1988), Սիմէոն Լեհացի, *Ուղեգրութիւն* (1997), *Հայկական վարքեր եւ վկայաբանութիւններ* (1998), *Կարդալով Նարեկացուն* (1999), *Շարական* (Գ. Մադոյեանի հետ, 2001), Թովմա Մեծոփեցի, *Պատմագրական երկեր* (2003) եւն.:

2009ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. ամենայն հայոց կաթողիկոսի ձեռամբ պարգեւատրուել է «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» շքանշանով:

Նրա գիտական եւ հասարակական գործունէութեան մէջ առաջնակարգ տեղ են գրաւել պատասխանատուութիւնն ու գիտական բարեխղճութիւնը, որոնք մշտապէս առաջնորդել են մտաւորականին: Հայրենասիրութեան, երկրին ծառայելու ներքին մղումը գալիս էր դեռեւս պապից՝ ԺԹ. դարի ազատագրական շարժումների մասնակից Արշակ Մադոյեանից (Սէյլան), որի ստեղծագործութիւնները ԺԹ. դարավերջ--Ի. դարասկզբի հայոց պատմութեան կարեւոր էջերից են: Հայրը՝ Գէորգ Մադոյեանը, անուանի մանկավարժ էր եւ հրապարակախօս, գրականագէտ: Արեան կանչով ու նաեւ գիտնականի փութաջանութեամբ Արշակ Մադոյեանը տասնամեակներ շարունակ պրպտեց ու լոյս աշխարհ հանեց պապի գրական ժառանգութիւնն ու գործունէութեան մասին վկայութիւնները:

22 Փետրուարի 2021ին Արշակ Մադոյեանը հրաժեշտ տուեց երկրային կեանքին, Երեւանում:

ՀԱՅՐԱՊԵՏ ԳԷՈՐԳԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ
(1950-2021)

Հայ ժողովրդի եւ Վրաստանի միջնադարեան պատմութեան մասնագէտ, նշանաւոր մանկավարժ, *Հայկազեան հայագիտական հանդէս*ի աշխատակից, պատմական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Հայրապետ Մարգարեանը ծնուել է 1950ի Հոկտեմբերի 10ին Արարատի մարզի Այգաւան գիւղում: 1967-72՝ ուսանել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտում, 1973-75՝ շարունակել է իր ուսումը ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի թեկնածուականում՝ կովկասագիտութեան ասպարէզում: Այնուհետեւ աշխատանքի է ընդունուել նոյն հիմնարկում, որտեղ մինչեւ 1996ն աշխատել է որպէս կրտսեր, ապա աւագ եւ առաջատար գիտաշխատող: 1979ին պաշտպանել է թեկնածուական՝ «Հիւսիսային Հայաստանը եւ Վրաստանը ԺԲ. դարի 20-70ական թուականներին» նիւթով, իսկ 1996ին դոկտորական՝ «Ռազմաքաղաքական տեղաշարժերը Մերձաւոր Արեւելքում եւ հայ աւատատիրական աւագանին ԺԲ. դարում եւ ԺԴ. դարի առաջին կէսում» նիւթով:

1982ից գիտական գործունէութիւնից բացի զբաղուել է նաեւ մանկավարժական աշխատանքով, 1989ին նրան շնորհուել է դոցենտի կոչում: 1996ին նա մշտական աշխատանքի է անցել ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտում, նախ հայոց պատմութեան ամբիոնում, ուր 2003ին արժանացել է փրոֆեսորի կոչման, իսկ 2007ին նշանակուել է Հայաստանի յարակից երկրների պատմութեան ամբիոնի վարիչ եւ այդ պաշտօնը վարել է մինչեւ կեանքի աւարտը: Տասնամեակներ շարունակ նա ընդգրկուած է եղել նաեւ ՀՀ ԳԱ պատմութեան ինստիտուտում գործող՝ գիտական աստիճաններ շնորհող բարձրագոյն որակաւորման յանձնաժողովի մասնագիտական խորհրդի կազմում:

Մարգարեանի գիտական աշխատանքները նուիրուած են Հայաստանի եւ Վրաստանի միջնադարեան պատմութեանը, ինչպէս նաեւ հայ եւ վրաց աղբիւրագիտութեանն ու պատմագրութեանը: *Հիւսիսային Հայաստանի եւ Վրաստանի ԺԲ. դարի պատմութեան մի քանի հարցեր* (1980) մենագրութիւնը նա շարադրել է հայկական, վրացական, արաբական, պարսկական սկզբնաղբիւրների հիման վրայ, մանրամասն ուսումնասիրել Հայաստանում հաստատուած մուսուլմանական ամիրայութիւնների դէմ Վրաստանի մղած յարատեւ պայքարը, Անի քաղաքի պատմութիւնը ԺԲ. դարի 20-70ականներին, ինչպէս նաեւ նոյն ժամանակ Հիւսիսային Հայաստանում եւ Վրաստանում ընթացող ներքաղաքական կեանքն ու ներդասակարգային պայքարը: Պատմական անցեալի ուսումնասիրութեան հիման վրայ նա յանգել է այն կարեւոր եզրակացութեան, որ Զաքարեանները, որոնց վիճակուած էր գլխաւորել հիւսիսարեւելեան Հայաստանի ազատագրումը եւ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու մշակութային վերածնունդը, խնդրոյ առարկայ ժամանակաշրջանի ծնունդն էին: Իդէպ, նա նաեւ փաստել է, որ ԺԲ. դարի վերջերին ներքին եւ արտաքին կեանքում տեղի ունեցած փոփոխութիւնները Զաքարեաններին հնարաւորութիւն են ընձեռել ազատագրելու Անի քաղաքը:

Կարեւոր է եւ խիստ հետաքրքրական Մարգարեանի աշխատասիրութեամբ ԺԲ. դարի պատմիչ Մխիթար Անեցու *Մատեան աշխարհավէպ հանդիսարանաց* երկի վերահրատարակութիւնը (1983), որը նա իրաւամբ համարել է «արժէքաւոր սկզբնաղբիւր»: Ինչպէս նա նշել է, այն նուիրուած է ոչ միայն հայերի ԺԱ.-ԺԲ. դա-

րերի պատմութեանը, այլեւ մասամբ առնչւում է վրացիների, պարսիկների, արաբների եւ սելջուկների անցեալին: Նա նաեւ փաստել է, որ այս սկզբնաղբիւրը՝ ընդգրկած պատմական իրականութեան ծաւալով, ընդարձակ ու արժէքաւոր տեղեկութիւններով, արժանացել է նոյնիսկ միջնադարեան հայ պատմիչների յարգանքին: Իդէպ, Մարգարեանը իր գործընկերոջ՝ Պաւէլ Չոբանեանի հետ վրացերէնից հայերէն է թարգմանել յայտնի կովկասագէտ Ակակի Շանիձէի *Հին վրացերէնի քերականութիւն* աշխատութիւնը (1983):

Մարգարեանը բազմիցս մասնակցել է նաեւ տարատեսակ խմբային պատմագիտական ուսումնասիրութիւնների իրականացմանը: Նա *Հայոց պատմութիւն. հտր. II, միջին դարեր, գիրք երկրորդ (IX դարի կէս-XVII դարի առաջին կէս)*» (2014) ակադեմական հրատարակութեան համահեղինակներից է: Այստեղ ընդգրկուած նրա յօդուածները նուիրուած են մոնղոլների ընկերա-տնտեսական քաղաքականութեանը, Զաքարեանների իշխանութիւնների առաջացմանը: Բացի բուն գիտական աշխատութիւնների իրականացմանն օժանդակելուց, նա մեծապէս նպաստել է նաեւ բազում հրատարակութիւններ ունեցած՝ *Հայոց պատմութիւն, 6րդ դասարանի դասագիրք* (2000), ինչպէս նաեւ *Հայոց պատմութիւն, միջին դարեր, 7րդ դասարանի դասագիրք* (2009) դպրոցական դասագրքերի լոյս ընծայմանը, որոնցում հրատարակուած՝ նրա գրչին պատկանող մեծաթիւ գլուխները նուիրուած են հայ ժողովրդի միջնադարեան, ինչպէս նաեւ Կիլիկեան Հայաստանի թագաւորութեան պատմութեանը:

Մարգարեանն ուշադրութիւնը կենտրոնացրել է նաեւ բուն Վրաստանի պատմութեան վրայ: *Հայաստանի յարակից երկրների պատմութիւն* (*հտր. II*, 2016) ակադեմական երկհատոր ծաւալուն ժողովածուում նա խիստ գիտական կտրուածքով ներկայացրել է Թ.-ԺԵ. դարերում Վրաստանի քաղաքական կացութիւնը, ընկերա-տնտեսական յարաբերութիւնների զարգացումը եւ վրացական մշակութային առաջընթացը: Նա Վրաստանի պատմութեանն է նուիրել նաեւ ծաւալուն մի գլուխ՝ հնագոյն ժամանակներից մինչեւ դրամատիրութեան դարաշրջանը, *Հայաստանի յարակից երկրների պատմութիւն* դպրոցական դասագրքում (1992):

Նա չէր շրջանցում ոչ միայն դասախօսական ու վարչական աշխատանքները, պատմագիտական թեկնածուականների վրայ աշխատող երիտասարդ հեղինակների գիտական գործունէութեան ղեկավարումը, այլեւ մասնակցում Հայաստանում թէ այլ երկրներում տեղի ունեցող գիտաժողովներին: 2000-10ականներին նրա գրչին պատկանող բազում անգլերէն եւ ֆրանսերէն յօդուածներ տպագրուել են տարբեր երկրներում:

Մարգարեանը շատ ազնիւ, ուղղամիտ, բարեացակամ, գիտական աշխատանքների նկատմամբ խիստ անաչառ վերաբերմունք դրսեւորող անձնաւորութիւն էր: Երբ 2014ին ԵՊՀում հիմնադրուեց *Հայագիտութեան հարցեր* գիտական հանդէսը, նա ընդգրկուեց խմբագրական խորհրդի կազմում՝ իբրեւ հայ ժողովրդի միջնադարեան պատմութեան ամենայայտնի մասնագէտի: Նրա մասնակցութիւնը հանդէսի աշխատանքներին իրաւամբ արժանի է մեծ դրուատանքի:

Գիտամանկավարժական բեղուն գործունէութեան համար Հայրապետ Մարգարեանը պարգեւատրուել է ԵՊՀ ոսկէ, ինչպէս նաեւ «Աշխատանքային արիութեան համար» մեդալներով:

Հայրապետ Մարգարեանը մահացաւ 2 Մայիսի 2021ին, Երեւանում:

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ, varuzhan.poghsyan@mail.ru

ՌՈՆԸԼՏ ՄԱՐՇԷԶ
(1947-2021)

Ծնած է Ֆրեզնօ, 1947ին: Ուսանած է Ֆրեզնոյի նահանգային համալսարանը, իսկ դոկտորականը ստացած է Նիւ Եորքի Քոլումպիա համալսարանէն:

Աւելի քան 40 տարի հին դասական պատմութիւն եւ հնաբանութիւն դասաւանդած է Միննեսոթա-Տոլոթ համալսարանին մէջ:

Դոկտ. Մարլին Պրէօյի հետ համահեղինակ է *Treasures of Faith: Sacred Relics and Artifacts from the Armenian Orthodox Churches of Istanbul* (2015) and *Splendor and Pageantry: Textile Treasures from the Armenian Orthodox Churches of Istanbul* (2011) հատորներուն: Վերջինս առաջին մանրամասնեալ մատուցումն է Պոլսոյ հայոց պատրիարքարանին մէջ պահ դուած պատմական եւ կրօնական հանդերձեղէն-հիւսուածեղէնի հաւաքածոյին: Գիրքը կը բովանդակէ 175 գունաւոր պատկերներ եւ կը ներկայացնէ համառօտ պատմութիւնը Պոլսոյ պատրիարքարանին, հայոց եկեղեցիներուն, կը քննարկէ ներկայացուած նիւթերուն նկարչական յատկանիշերը եւ կ'արծարծէ անոնց ծննդոցին արհեստագիտական ճարտարութիւնները: Այս երկու գիրքերը նոր ուղի կը հարթեն հայ կրօնական հանդերձանքի եւ աշխարհիկ հիւսուածեղէնի մշակման պատմութեան ուսումնասիրութեան համար եւ աննախընթաց են ու վստահաբար երկար տասնամեակներ պիտի ունենան ուղենշային նշանակութիւն:

Ռոնըլտ Մարշէզ մահացաւ 3 Հոկտեմբեր 2021ին:



ՄՈՐԵՆՕ ՄՈՐԱՆԻ
(1947–2021)

Միջազգային ճանաչում ունեցող իտալացի լեզուաբան, փրոֆեսոր Մորենօ Մորանին՝ Իտալիայում հայագիտութեան խթանողներից մէկը, ծնուել է 1947ին, Միլանում: Ուսանել է Միլանի կաթոլիկ համալսարանում, դասախօսել Թրենթոյի եւ Քաթանիայի համալսարաններում, 1990ից եղել է Ճենովայի համալսարանի լեզուաբանութեան ուսուցչապետ՝ ղեկավարելով անտիկ եւ միջին դարերի եւ աշխարհագրութեան ու շրջակայ միջավայրի ուսումնասիրութիւնների բաժինը: Հեղինակ է բազմաթիւ աշխատութիւնների՝ հնդեւրոպական լեզուաբանութեան եւ հայոց լեզուի վերաբերեալ: Հրատարակել է Նե-մեսիոս Եմեսացու «Մարդկանց բնոյթի մասին» երկի քննական բնագիրը (1987) եւ Կեղծ Դիոնիսիոսի «Աստուածային անունների» յունարէն շարադրանքը (2010)՝ զուգահեռներ կատարելով այս գրուածքների հայերէն թարգմանութիւնների հետ: Նրա հրատարակութիւններից են *Յունական լեզուաբանութեան ներածութիւնը* (1999), *Լատինական լեզուաբանութեան ներածութիւնը* (2000) եւ *Հնդեւրոպական լեզուաբանութեան ուրուագծերը* (2007): Մորանին եղել է Իտալիայում 1980-90ականներին կայացած դասական արեւելեան լեզուների, այդ թւում՝ հայերէնի վերաբերեալ դասընթացների եւ սեմինարների նախաձեռնողներից: Հայկական ուսումնասիրութիւնների միջազգային ընկերակցութեան հովանու ներքոյ եւ Սորպոնի համալսարանի ու

փրոֆեսոր Ճուսթօ Թրայնայի հետ մէկտեղ Ճենովայի համալսարանում կազմակերպել է «Յունարէն շարադրանքներ եւ հայերէն թարգմանութիւններ» աշխատաժողովը, որը նպաստել էր հայագէտների եւ յունագէտների երկխօսութեանը (զեկուցումները լոյս են տեսել առանձին հատորով): *Բանբեր Մատենադարանի* հանդէսում (2014) հրատարակել է «Հայերէնի կարեւորութիւնը 20րդ դարի իտալական լեզուաբանական դպրոցում» աշխատութիւնը (իտալերէն):

Մորենօ Մորանին մահացել է 2021ի Օգոստոսի 4ին, Ճենովայում:

ՀՀՀ

ԼԻԱՆԱ ՅՈՎՍԷՓԵԱՆ
(1941–2021)

Լեզուաբան, բանասիրական գիտութիւնների դոկտոր, փրոֆեսոր Լիանա Սամուէլի Յովսէփեանը ծնուել է 1941ի Յուլիսի 26ին Երեւանում: 1963ին աւարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլ-տէտը: 1974-81՝ եղել է ՀՀ ԳԱԱ լեզուի ինստիտու-տի գիտքարտուղար, 1981-86՝ տիպաբան-զուգադրական հետազօտութիւնների բաժնի վարիչ, 1986-90՝ հայոց լեզուի պատմութեան բաժնի վարիչ, 1990-95՝ փոխտնօրէն: Զբաղուել է գրաբարի, միջին հայերէնի, հայ լեզուաբանութեան պատմութեան, հայոց լեզուի տիպաբանութեան հարցերով, ինչպէս նաեւ հանրալեզուաբանական որոշ խնդիրներով: Երեւանում առանձին գրքերով լոյս են տեսել նրա *Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան* (1975, համահեղինակ), *Սովետահայ լեզուաբանութիւնը 60 տարում* (1982), *Գրաբարի բառակազմութիւնը* (1987), *ԺԳ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների լեզուն* (1997), *Գերմաներէն-հայերէն-ռուսերէն զրուցագիրք* (2003), *Հայոց լեզու. գրականութիւն* (2006) աշխատութիւնները:

Լիանա Յովսէփեանը մահացաւ 2021ի Ապրիլի 18ին, Երեւանում:

ՀՀՀ

ՄՈՒՇԵՂ ՅՈՎՍԷՓԵԱՆ
(1961–2021)

Բանասէր, լրագրող, բանասիրական գիտութիւնների դոկտոր (2002), ուսուցչապետ (2007) Մուշեղ Մայիսի Յովսէփեանը ծնուել է 1961 Յունուարի 4ին, Սեւանի շրջանի Ծաղկունք գիւղում: 1982-85՝ սովորել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտէտում, 1985-88՝ Մոսկուայի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտէտում, որտեղ 1991 պաշտպանել է թեկնածուական: 1991ից դասախօսել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտէտում: 1991-94՝ եղել է Հայաստանի հանրային ռադիոյի հասարակական-քաղաքական գլխաւոր խմբագրութեան խմբագիր, 1991-97՝ «Հրաչեայ Աճառեան» համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, 1997-2003՝ «Անանիա Շիրակացի» համալսարանի ժուռնալիստիկայի ամբիոնի վարիչ, 2001-05՝ Հայաստանի հեռուստատեսութեան եւ ռադիոյի ազգային յանձ-նաժողովի անդամ, 2003-08՝

Ռուս-հայկական համալսարանի ուսուցչապետ: 1999ից եղել է ԵՊՀ ռադիոհեռուստատեսային ժուռնալիստիկայի ամբիոնի վարի-չը (յետագայում՝ տպագիր եւ հեռարձակուող լրատուամիջոցների ամբիոն): 2008-15՝ եղել է ԵՊՀ գիտխորհրդի անդամ: 2002ին ստացել է բանասիրական գիտու-թիւնների դոկտորի գիտական աստիճան՝ պաշտպանելով ատենախօսութիւն «Ռադիօշուկայի օրինաչափութիւնները եւ զարգացման միտումները ՀՀում» նիւ-թով (որպէս մենագրութիւն լոյս է տեսել 2002ին): Հեղինակ է բազմաթիւ գիտա-կան յօդուածների, որոնք հրատարակուել են հայերէն, ռուսերէն, անգլերէն, պարս-կերէն: Առանձին հատորներով Երեւանում լոյս են տեսել Յովսէփեանի *Բանակ-հասարակութիւն յարաբերութիւնների իրաւական եւ էթիկական առանձնայատ-կութիւնները. նոր եւ այլընտրանքային մեդիա. էթիկական եւ իրաւական խնդիր-ներ, ուսումնական ուղեցոյց, միջազգային միջբուհական գիտաժողով* (2012), *Ռադ-իօժուռնալիստիկայի հիմունքներ. պատմութիւն եւ տեսութիւն (դասախօսութիւն-ներ)* (2014), *Հայաստանի ռադիոյի պատմութիւն (1926–2018) (փաստաթղթեր, ա-կանատեսների վկայութիւններ)* (2018) գրքերը:

Մուշեղ Յովսէփեանը մահացել է 2021ի Նոյեմբերի 25ին, Երեւանում:

ՀՀՀ

ՌԻՄԱ ՇԱԼՈՒՆՑ
(1937–2021)

Լեզուաբան, բանասիրական գիտութիւնների դոկտոր Ռիմա Նիկոլայի Շալունցը ծնուել է Գորի-սում 1937 Հոկտեմբերի 9ին: Որոշ ժամանակ աշ-խատել է Գորիսի պետական թատրոնում: 1961-65՝ սովորել է Երեւանի Խ. Աբովեանի անուան պետա-կան մանկավարժական ինստիտուտի բանասիրա-կան ֆակուլտէտում, ապա ընդունուել ՀՀ ԳԱԱ լեզ-ուի ինստիտուտի թեկնածուականը՝ «բառագիտու-թիւն եւ բառարանագրութիւն» մասնագիտութեամբ: 1972ին պաշտպանել է թեկնածուական՝ «Համանուն բառերը ժամանակակից հայերէնում», իսկ 1994ին դոկտորականը՝ «Զանգուածային լրատուութեան լե-զուն եւ ոճը» թեմաներով: Վերջինս որպէս ուսումնական ձեռնարկ գործածւում է բուհերում:

Շալունցը զբաղուել է բառագիտութեամբ: Հեղինակել է *Արդի հայերէնի համա-նունների դպրոցական բառարան* (1980), որում ընդգրկուած են ինչպէս դպրոցա-կան դասագրքերում, այնպէս էլ հայ դասական եւ խորհրդային գրողների երկե-րում (1870ականներից սկսած) հանդիպող համանուն բառերը:

Նա բազմիցս հանդէս է եկել մամուլում հանդիպող սխալների, դրանց վերաց-ման, հայերէնի անաղարտութեան վերաբերեալ յօդուածներով:

Մասնակցել է *Մեր լեզուն, մեր խօսքը* հեռուստատեսային հաղորդաշարին՝ անդրադառնալով հայերէնին անհարազատ ոճերին, հոլովական սխալ կիրառու-թիւններին, կապակցելիութեան սխալներին եւն.:

2000ից բնակուել է ԱՄՆում, որտեղ մահացաւ 2021 Յունուարի 22ին:

ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿԵԱՆ



ՃՈՐՃ ՊՈՒՌՆՈՒԹԵԱՆ
(1943–2021)

Ամերիկահայ պատմաբան, ուսուցչապետ Ճորճ Պուռնութեանը յայտնի էր Հայաստանի, Անդրկովկասի, Ռուսաստանի ու Միջին Արեւելքի պատմութեան հարցերին նուիրուած իր ուսումնասիրութիւններով եւ ուշ միջնադարի հայ պատմագիտական երկերի անգլերէն թարգմանութիւններով:

Ճորճ (Ժորա, Ժորժ) Պուռնութեանը ծնուել էր 1943ի Սեպտեմբերի 25ին, Սպահանում, հայ հօր եւ լեհ մօր ընտանիքում: Ուսանել է Քալիֆորնիայի Լոս Անճելըսի համալսարանում: 1970ին արժանացել բակալաւրիատի աստիճանի (նիւթը՝ "The Armenian Community of Isfahan (Iran) in the 17th Century," երկու մասով հրատարակուել է *The Armenian Review*ում (1971-72): 1971ին ստացել է մագիստրոսի աստիճան (նիւթը՝ "The Rise of National and Political Consciousness among the Armenian, Georgian and Turko-Tatar Peoples and their Role in the Russian Revolution of 1905-1907," հրատարակուած *The Armenian Review*ում, 1973) եւ վերջապէս, 1976ին՝ պատմութեան դոկտորի կոչման որպէս հայոց, իրանական եւ ռուսական պատմութեան մասնագէտ (նիւթը՝ "Eastern Armenia on the Eve of the Russian Conquest," հրատարակուած 1982ին՝ *Eastern Armenia in the Last Decades of Persian Rule, 1807-1827*, Studies in Near Eastern Culture and Society, number 5, von Grunebaum Center, UCLA):

1975-76՝ ժամանակակից Իրանի պատմութեան դասախօս Լոս Անճելըսի Քալիֆորնիայի համալսարանում, 1980-82՝ Քոլումպիա համալսարանի Հարիման ռուսական հաստատութեան տնօրէնի, 1982ին՝ Քոլումպիա համալսարանի փրովոսթի ընթերակայ: 1989ից Արեւելեան Եւրոպայի եւ Միջին Արեւելքի պատմութեան աւագ դասախօս է եղել Նիւ Եորքի Այոնա քոլէճում: 1981-2009՝ որպէս հիւր դասախօս հայոց եւ իրանական պատմութիւն է դասաւանդել Քոլումպիա, Թաֆց, Քընեթիքաթի, Նիւ Եորքի, Սթորս, Հարթֆորտ, Սթենֆորտ, Ռաթկըրզ համալսարաններում, Ֆրեզնոյի Քալիֆորնիայի նահանգային համալսարանում, Ռամապօ քոլէճում եւ Կլենտէյլի համայնքային քոլէճում:

Պուռնութեանի հեղինակութեամբ եւ անգլերէն թարգմանութեամբ լոյս են տեսել տասնեակ հատորներ՝ *Eastern Armenia in the Last Decades of Persian Rule, 1807-1827* (1982); *The Khanate of Erevan under Qajar Rule, 1795-1828* (1992); *A History of the Armenian People, Vol. I: Pre-History to 1500 A.D.* (1993); *A History of Qarabagh. Annotated Translation of Mirza Jamal Javanshir's History* (1994); *A History of the Armenian People, Vol. II: 1500 to the Present* (1994); *Russia and the Armenians of Transcaucasia: A Documentary Record, 1797-1889* (1998); *The Chronicle of Abraham of Crete* (1999); *History of the Wars, 1721-1738 by Abraham of Erevan* (1999, նոյնը՝ պարսկերէն՝ *Tarikh-e Jangha*, Pazhuheshgah-e Tarikh-e Eslam, Tehran, 2014); *Armenians and Russia: A Documentary Record, 1626-1796* (2001); *The Journal of Zak'aria of Agulis* (2004); *The Chronicle of Deacon Zak'aria of K'anak'er* (2004); *Two Chronicles on the History of Karabagh* (2004, նոյնը պարսկերէն՝ *Tarikh-e Qarehbagh, Markaz-e asnad*, Թեհրան, 2004); *The History of Vardapet Arak'el of Tabriz* (2 vols.) (2005-2006, նոյնի վերամշակուած հրատարակութիւնը՝ *Arak'el of Tabriz: Book of History*, 2010); *Hakob Manandyan, Tigranes II and Rome* (English

translation, 2007); *The Travel Accounts of Simeon of Poland* (2009); *Jambr (Simeon of Erevan)* (2009); *A Brief History of the Aghuank' Region, 1702-1723 (Esayi Hasan Jalaleants')* (2009); *The 1823 Russian Survey of the Karabagh Province: A Primary Source on the Demography and Economy of Karabagh in the Early 19th Century* (2011, 2nd edition, 2012); *From Tabriz to St. Petersburg: Iran's Mission of Apology to Russia in 1929* (2014); *The 1820 Russian Survey of the Khanate of Shirvan: A Primary Source on the Demography and Economy of an Iranian Province Prior to its Annexation by Russia* (2016); *The 1829-1832 Russian Surveys of the Khanate of Nakhichevan. A Primary Source on the Demography and Economy of an Iranian Province Prior to its Annexation by Russia* (2016); *The 1819 Russian Survey of the Khanate of Sheki [Shakki]: A Primary Source on the Demography and Economy of an Iranian Province Prior to its Annexation by Russia* (2016); *Armenia and Imperial Decline: The Yerevan Province, 1900-1914* (2018); *From the Kur to the Aras: A Military History of Russia's Move into the South Caucasus and the First Russo-Iranian War, 1801-1813* (2020):

2002ին լոյս է տեսել նրա *A Concise History of the Armenian People* երկհատորեակը: Մինչեւ 2018 այն ունեցել է եօթ լրամշակուած հրատարակութիւն, թարգմանուել է եօթ լեզուների՝ իսպաներէն (*Historia Sucinta del Pueblo Armenio*, UGAB Press, Պուենոս Այրէս, 2007), թուրքերէն (*Ermeni Tarihi*, Aras Press, Istanbul, 2011), հայերէն (*Հայ ժողովրդի համառօտ պատմութիւն*, «Հայաստան», Երեւան, 2012), արաբերէն (*Mawgez Tarikh al-Sha'b al-Armani*, Aldar al-Mesriya al-Lebnaniya, Cairo, 2012), ռուսերէն (*Краткая история армянского народа*, Ереван, «Айастан», 2014), ճափոներէն (*Arumenia-jin no Rekishi*, «Ֆուճիաարա շոթէն», Թոքիո, 2016) եւ պարսկերէն (*Tarikh-e mokhtasar-e Maredom-e Armani*, Թեհրան, 2019):

Պուռնութեանը գրել է յօդուածներ *Encyclopedia Iranica*ի համար, Հայաստանի եւ Պարսկաստանի պատմութեան վերաբերեալ աշխատութիւններով հանդէս եկել միջազգային գիտական հրատարակութիւններում (*Iran and the Caucasus, Journal of the International Society for Iranian Studies, Forum of EthnoGeoPolitics, Journal of the Society for Armenian Studies, Kachar, Series Byzantina, Armenian Review, Religiao e Sociedade, Journal for the Society of Iranian Studies, American Historical, Middle East Studies Association Bulletin*): *Հայկազեան հայագիտական հանդէս*ում Պուռնութեանը հանդէս է եկել մէկ անգամ՝ գրախօսելով Mustafa Agha, Fath-name-ye Iravan (Երեւանի գրաւման գիրք) հատորը (ԼՋ:2016):

Պուռնութեանն արժանացել է մի շարք կրթաթոշակների եւ դրամաշնորհների: Դասախօսութիւններով եւ զեկուցումներով հանդէս է եկել ԱՄՆի, Քանատայի, Աւստրիայի, Ռուսաստանի, Պուլկարիայի, Իրանի, Ճափոնի եւ Աւստրալիայի քաղաքներում, ինչպէս նաեւ Երեւանում, Շուշիում եւ Ստեփանակերտում: Եղել է Middle Eastern Studies Association, Iranian Studies Association, Society of Armenian Studies, Association International des Etudes Armeniens եւ այլ միութիւնների անդամ, *Iran and the Caucasus* հանդէսի խմբագրակազմի անդամ: Տնօրինել է *Մազդա* հրատարակչութեան հայագիտական մատենաշարը, որը հրատարակել է 18 հատոր, ինչպէս նաեւ եղել է Iranian Heritage in the Caucasus and Central Asia մատենաշարի տնօրէնը:

Պուռնութեանը տիրապետել է անգլերէն, հայերէն, ռուսերէն եւ պարսկերէն լեզուներին, որոշ չափով իմացել նաեւ լեհերէն, ֆրանսերէն եւ թուրքերէն: Նրա միւս հետաքրքրութիւնները ներառում էին ճանապարհորդութիւնները (իր ուսա-

նողներին որպէս ուղեվար ուղեկցել է աշխարհի բազմաթիւ երկրներ), նաեւ դասական դաշնամուրային երաժշտութիւնը եւ շարժանկարը, որոնց վերաբերեալ յօդուածներով հանդէս է եկել հայկական եւ ամերիկեան մամուլում:

Ճորճ Պուռնութեանը մահացաւ 2021 Օգոստոսի 22ին, Հաուըրթում (Նիւ Ճըրզի, ԱՄՆ):

ԱՐԾՈՒԻ ԲԱԽՉԻՆԵԱՆ (artsvi@yahoo.com)

ԷԴՈՒԱՐԴ ՎԱՆԻԿԻ ՊՕՂՈՍԵԱՆ
(1954-2020)

Իր մահկանացուն անժամանակ կնքեց յայտնի պատմաբան, Խաչատուր Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ՀՊՄՀ) հայոց պատմութեան ամբիոնի փրոֆեսոր, պատմական գիտութիւնների դոկտոր Էդուարդ Պօղոսեանը:

Նա ծնուել է 1954ին, Հայաստանի Հանրապետութեան Մարտունի շրջանի Երանոս գիւղում: 1975ին աւարտել է ՀՊՄՀ պատմաաշխարհագրական ֆակուլտէտը, այնուհետեւ իբրեւ շարքային զինուոր մէկ տարի ծառայել խոր-հրդային բանակում: 1986ին պաշտպանել է թեկնածուական՝ «ՍՄԿԿ ղեկավարու-թեամբ լենինեան կոմերիտմիութիւնը ԲԱՄի Շէֆ» նիւթով: 1994ին աշխատանքի է անցել ՀՊՄՀ աղաքագիտութեան, 1995ին՝ հայոց պատմութեան ամբիոնում:

Գործունէութեան յետագայ տարիներին մասնագիտանալով հայ ժողովրդի նոր եւ նորագոյն ժամանակաշրջանների պատմութեան ասպարէզում՝ նա ուշադրութիւնը կենտրոնացրել է մասնաւորապէս յետխորհրդային ժամանակաշրջանում Հայաստանում նորանկախ պետականութեան ձեւաւորման գործընթացի վրայ: Ըստ այդմ՝ նա հրատարակել է *Անկախ պետականութեան հաստատման գործընթացը Հայաստանում (1990-2001 ԹԹ.)* (2013) ծաւալուն մենագրութիւնը, իսկ 2015ին պաշտպանել դոկտորական նուիրուած այդ թեմային:

Սոյն մենագրութեամբ Պօղոսեանը ուսումնասիրել է հայոց նորանկախ պետականութեան հաստատման գործընթացը տարբեր ձեւաչափերով: Իդէպ, հայ պատմագրութեան մէջ այն Հայաստանի անկախ պետականութեան հաստատման մանրազնին ուսումնասիրութեան առաջին փորձն է: Նա օգտագործել է Հայաստանի ազգային արխիւի, Հայաստանի Հանրապետութեան հասարակական-քաղաքական կազմակերպութիւնների կենտրոնական պետական արխիւի բազմաթիւ անտիպ փաստաթղթեր, ինչպէս նաեւ տպագիր սկզբնաղբիւրներ եւ մամուլի նիւթեր: Ըստ օգտագործուած սկզբնաղբիւրների՝ նա ուսումնասիրել է հայկական անկախ պետականութեան հաստատման գործընթացը, ինչպէս նաեւ Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակումը, երկաթուղու եւ ուժանիւթատարների նկատմամբ իրականացուած ահաբեկչութիւնները: Էդուարդ Պօղոսեանը հայ ժողովրդի շահերի պաշտպանութիւնը իրաւամբ համարել է Հայաստանի ինքնիշխանութեան դրսեւորում եւ անկախ պետականութեան հաստատում: Միաժամանակ, նա սոյն գործընթացը ներկայացրել է իբրեւ հասարակական, քաղաքական, տնտեսական ձեռնարկումների փոխկապակցուած համակարգ:

Էդուարդ Պօղոսեանը հեղինակն է *Հայաստանի պետութեան եւ իրաւունքի պատմութիւն* դասագրքի, որն ունեցել է երեք հրատարակութիւն (2005, 2006, 2009)։ Այնտեղ հեղինակը ներկայացրել է Հայաստանի պետութեան եւ իրաւունքի ամբողջ ընթացքը՝ հնագոյն ժամանակներից մինչեւ ԻԱ. դար, ուշադրութիւնը կենտրոնացրել պետական եւ իրաւական զարգացումների առաւել էական հիմնահարցերի վրայ։

Էդուարդ Պօղոսեանը բազմիցս մասնակցել է գիտաժողովների աշխատանքներին, հանդէս եկել զեկուցումներով, ինչպէս նաեւ գործուն մասնակցել ՀՊՄՀ հասարակական կեանքին։ Լինելով վաստակաշատ մանկավարժ եւ սիրուած դասախօս, նա իրաւամբ արժանացել է ՀՊՄՀ թէ՛ դասախօսական աշխատակազմի եւ թէ՛ ուսանողութեան մեծ յարգանքին։

Էդուարդ Պօղոսեանը մահացել է 17 Նոյեմբեր 2020ին, Երեւանում։

ՎԱՐՈՒԺԱՆ ՊՕՂՈՍԵԱՆ (varuzhan.poghosyan@bk.ru)

ՀԵՆՐԻԿ ՍՎԱԶԵԱՆ
(1938–2021)

Պատմական գիտութիւնների դոկտոր, ուսուցչա պետ, ՀՀ բանակի գնդապետ Հենրիկ Սուրէնի Սվազեանը ծնուել է 1938ին, Լենինականում (այժմ՝ Գիւմրի)։ 1958ին զօրակոչուել է խորհրդային բանակ. զօրացրուելուց յետոյ՝ 1961ին ընդունուել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտ։ Ուսումն աւարտելով՝ 1966ին աշխատանքի է անցել ՀՀ յուշարձանների պահպանութեան վարչութիւնում, ապա 1967ին՝ յեղափոխութեան պետական թանգարանում որպէս աւագ գիտաշխատող։ 1971ից աշխատել է ՀՀ ԳԱ պատմութեան ինստիտուտի միջին դարերի բաժնում։ 1975ին պաշտպանել է թեկնածուական, 1991ին՝ դոկտորական ատենախօսութիւն։ 2003ից ուսուցչապետ է։ 1980-81՝ վարել է ՀՀ ԳԱ միացեալ արիկոմի նախագահի պաշտօնը։ 1994-2003՝ Վ. Սարգսեանի անուան ռազմական ինստիտուտում գլխաւորել դաստիարակչական աշխատանքների եւ հասարակագիտական առարկաների ամբիոնները, դառնալով դրանց հիմնադիր-պետը։ Ունի ՀՀ բանակի գնդապետի զինուորական կոչում։ Զբաղուել է Աղուանից Աշխարհի պատմութեամբ։ Հրատարակել է 80ից աւելի աշխատութիւն եւ *Աղուանից Աշխարհի պատմութիւն (հնագոյն շրջանից-VIII դարը ներառեալ)* (հայերէն՝ 2006, ռուսերէն՝ 2009) մենագրութիւնները։ Երկու ուսումնական ձեռնարկների համահեղինակ է։

Հենրիկ Սվազեանը մահացել է 2021ին, Երեւանում։

ՀՀՀ

ՔՆԱՐԻԿ ՏԷՐԴԱԻԹԵԱՆ
(1926–2021)

Բանասիրական գիտութիւնների դոկտոր Քնարիկ Սուրէնի Տէրդաւթեանը (Արեւշատեան) ծնուել է 1926 Սեպտեմբերի 6ին, Իրանի Թաւրիզ քաղաքում։ 1934ին ընտանիքը հայրենադարձել է Հայաստան։ 1945-50՝ սովորել է ԵՊՀ պատմութեան ֆակուլտէտում։ 1951-71՝ գործակցել է ՄՄ Մատենադարանի հետ, ռուսերէն թարգմանել հայ միջնադարեան գրականութեան յուշարձանները։ 1972ից աշխատում է ՀՀ ԳԱ Մանուկ Աբեղեանի անուան գրականութեան ինստիտուտում։

1975ին թեկնածուական է պաշտպանել «հայ վարքագրութիւնը 11-15րդ դարերում» նիւթով: 1995ին դոկտորական է պաշտպանել՝ «Քրիստոնէական գրականութեան զարգացման ուղիները Հայաստանում» նիւթով: Գիտական գործունէութիւնն սկսել է թարգմանական աշխատանքներով՝ *Անանիա Շիրակացու տիեզերագիտութիւն* (1962) եւ մի շարք վարքագրական գործեր ամփոփող *Հայ սրբախօսական գրականութեան յուշարձաններ* (1973) գրքերով: Այնուհետեւ հետեւողականօրէն զբաղուել է հայ միջնադարեան գրականութեան բնագրերի եւ յատկապէս վարքագրական ու կրօնաբարոյախրատական նիւթերով գործերի ուսումնասիրութեամբ, քննական բնագրերի կազմութեամբ, ծանօթագրմամբ եւ ռուսերէն թարգմանութեամբ:

Հեղինակել է վարքերի եւ վկայաբանութիւնների ժանրային կառուցուածքին, վարքագրական կոդ հասկացութեանը (որի հիման վրայ էին ներկայացւում սրբերի ու նահատակների գրական դիմանկարները) նուիրուած ուսումնասիրութիւններ: Աշխատասիրել է վարքագրական սեռի ձեւաւորումը բիւզանդական գրականութեան մէջ, ապա եւ անցումը հայ գրականութեանը եւ դրա պատմական զարգացումը ոսկեդարեան շրջանից մինչեւ միջնադար: *Հայ վարքագրութիւնը 11-15րդ դդ.* (1980) գրքում մանրամասն անդրադարձել է այս հարցերին, հայ սրբախօսական գրականութեան պատմութիւնը ներկայացնելով ըստ վարքերի եւ վկայաբանութիւնների գրութեան ժամանակի, որով հայ վարքագրութիւնը դիտարկւում է հայ գրականութեան եւ հայ ժողովրդի պատմութեան համապատկերում, ու վարքագրական գրականութեան ընթացքի պարբերացումը կատարւում է ըստ այդմ: Այն կարեւոր դրոյթն է առաջ քաշւում, որ սկսած Ե. դարից եւ յատկապէս Աւարայրից յետոյ, հայ վարքագրութեան հերոսները դառնում են ոչ միայն պարզապէս սրբակենցաղ եւ ճգնակեաց անձնաւորութիւնները, այլեւ նրանք, ովքեր այդ յատկանիշերն ունենալուց բացի իրենց կարեւոր աւանդն են բերել հայ մշակոյթին, դպրութեանը եւ կամ էլ յանուն հաւատի ու հայրենիքի նահատակներ են: Ըստ Տէրդաւթեանի՝ հայ սրբախօսական գրականութիւնը ներառում է վաղ շրջանի բիւզանդական եւ ասորական վարքագրութիւնը, որը գեղարուեստական ու թեմատիկ առումով մեծ ճանապարհ էր անցել քրիստոնէութեան առաջին նահատակներին նուիրուած դատական ակտերից մինչեւ Դ. դարի մեծ կապադովկացիների գործերը: Ըստ այդմ՝ հայկական առաջին վարքերը նուիրուած են հայ հոգեւոր-մշակութային կեանքի ժամանակի ամենանշանաւոր գործիչներին:

Տէրդաւթեանի գիտական հետաքրքրութիւնների երկրորդ ուղղութիւնը հայ միջնադարեան կրօնաբարոյախրատական բնոյթի գործերն են: Նա մի շարք մեծ եւ փոքր բնագրեր է հրատարակել, այդ թւում՝ *Հայելի վարուցը* (1994):

Ռուսերէն է թարգմանել *Վկայաբանութիւն Սրբոց Հռիփսիմեանց* (1996), *Ագաթանգեղոսի հայոց պատմութիւնը* (2004), *Կարապետ Գաբիկեան, եղեռնապատում փոքուն հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ* (2015) աշխատութիւնները: Գրել է *Աղբիւրներ միջնադարեան Հայաստանի բարձրագոյն դպրոցների պատմութեան (12-15-րդ դդ.)* ռուսերէն մենագրութիւնը (1983):

Քնարիկ Տէրդաւթեանը մահացել է 2021ին Յուլիսի 1ին, Երեւանում:

ՀՀՀ

ԿԱՐՊԻՍ ՏԷՐԵՂԻԱՅԵԱՆ
(1949--2021)

Կարպիս Տէր Եղիայեան ծնած է 29 Մարտ 1949ին, Հալէպ: 1960ին ընտանիքը կը տեղափոխուի Պէյրութ, իսկ ինք՝ կը սկսի ուսանիլ Պէյրութի Ամերիկեան համալսարանը: 1976ին կը հաստատուի Մ. Նահանգներ, ուր կը պաշտպանէ դոկտորականը՝ կրթական վարչակառավարման մասնագիտութեամբ: Նոյն տարին կը ստանձնէ օգնական տեսչութիւնը, իսկ 1986ին նախագահութիւնը Քալիֆորնիոյ Լա Վերն Համալսարանի Հայ-ամերիկեան միջազգային քոլէճին (American Armenian International College), ապա նաեւ՝ Կլենտէյլի մէջ 1992ին իր հիմնած Մաշտոց քոլէճին: 1980ականներէն ան կրթական եւ վարչակառավարման կեդրոնական ներկայութիւն էր հարաւային Քալիֆորնիոյ հայութեան մէջ, վարչական եւ խորհրդատուական յատկանշական մասնակցութիւն ունենալով նաեւ շրջանի բնակչութեան այլեւայլ դրսեւորումներուն մէջ:

1987էն սկսեալ Տէրեղիայեան ամենամեայ ուխտագնացութիւններ կազմակերպեց Արեւմտեան Հայաստան եւ Կիլիկիա: Այս ճանապարհորդութիւններուն արդիւնքը եղաւ 1989ին լոյս տեսած իր *Conversations in Silence* գիրքը, ուր կը ներկայացուին պատումները տասնամեակներ շարունակ ծնողական յուշերու պատմութեամբ սնած մարդոց, որոնք կ'երթային իրական աչքերով տեսնելու իրենց ծնողական ծննդավայրերը: Աւելի ետք, այս ուխտագնացութիւնները դրսեւորուեցան նաեւ դասախօսութիւններով, յօդուածներով, բայց մանաւանդ՝ 2017ին լոյս տեսած իր *Voices in Silence: My Body Cried. My Soul Cried. My Heart Cried* նկարագիրքով որ կ'ամփոփէ իր հայկական ուխտագնացութիւնները Արեւմտեան Հայաստան, Կիլիկիա եւ Կապադովկիա:

Դոկտ. Կարպիս Տէրեղիայեան մահացաւ 11 Յունուար 2021ին:

ՀՀՀ

ԼԻՒՍԻ ՏԷՐՄԱՆՈՒԷԼԵԱՆ
(1928–2021)

Հայ ճարտարապետութեան հետազօտող Լիւսի Տէրմանուէլեանը ծնած է 1928ին: Ուսանած է Հարվըրտ համալսարանին մէջ: 1980ին պաշտպանած է դոկտորական՝ (ղեկավար՝ Օլէկ Կրապար), Պոստոնի համալսարանը, Գեղարդի քանդակագործութեան մասին: Այս աշխատութիւնը, ըստ փրոֆ. Քրիստինա Մարանչիի, նորութիւն էր՝ մօտեցման եղանակին մէջ ուր կը կատարուէին նաեւ բաղդատականներ հայ, իսլամ եւ բիւզանդական սրբանկարչութեան աւանդներուն հետ: Ան անգլերէն առաջին լուրջ մենագրութիւնն էր Գեղարդի մասին, եւ հայ արուեստի նուիրուած առաջին ամերիկեան դոկտորականը:

Տէրմանուէլեան իր աշխատակցութիւնը բերած է զանազան գիտական ձեռնարկներու, ինչպէս՝ *Dictionary of the Middle Ages*

(1982-89) եւ *Grove Dictionary of Art* (այժմ՝ Oxford Art Online): Գրած է յօդուածներ զանազան հայագիտական հատորներու համար, ինչպէս՝ *Medieval Armenian Culture* (1984): Հայկական ճարտարապետութեան ու քանդակագործութեան զանազան աշխատութիւններու կողքին, ան նաեւ գրած է հայ արուեստի այլ բնագաւառներու, յատկապէս՝ գորգագործութեան մասին: *Weavers, Merchants, and Kings: The Inscribed Rugs of Armenia* ցուցահանդէսին հատորը (1984) անգլերէն հիմնարար աշխատութիւն մըն է հայ գորգագործութեան պատմութեան ուսումնասիրութեան համար:

1970-80ականներուն, Տէրմանուէլեան բազմիցս ճամբորդած է Խորհրդային Հայաստան, ուր լայնածիր լուսանկարչական աշխատանք կատարած է, յաճախ՝ դժուարին ու վտանգաւոր պայմաններու մէջ, վանքերու եւ եկեղեցիներու փաստագրումին համար: Մերթընդմերթ, գաղտնի ոստիկանութեան թիրախ դարձած է՝ լրտեսութեան կասկածով: Մարանչի կը պատմէ. «*Գիշեր մը, Երեւանի մէջ, զինք այցելեցին, եւ, լուսանկարչական ժապաւէնը յանձնելէ խուսափելու համար, Լիւսի զայն պահեց իր հագուստին տակ, մարտահրաւէր կարդալով, որ փորձէին ձեռք տալ իրեն: Արուեստի պատմութիւնը յաղթեց եւ այժմ լուսանկարները ունինք*»:

Տէրմանուէլեան հիմնադիրն է Թաֆց համալսարանի արուեստի եւ ճարտարապետութեան պատմութեան ֆակուլտէտի Արթըր Տատեանի եւ Արա Օզտեմէլի անուան հայկական արուեստի ամբիոնին, որուն առաջին վարիչն էր դարձեր 1984ին: Ամբիոնը կը գործէ Հարվըրտ, ՄՔԿիլ, Պոստոն եւ Նորթիսթըրն համալսարաններու գործակցութեամբ, որպէսզի հնարաւոր ըլլայ հայկական արուեստի պատմութեան դասընթացքներ ունենալ նաեւ այդ համալսարաններուն մէջ:

Տէրմանուէլեան բազմաթիւ դասախօսութիւններ տուած է հայ արուեստի պատմութեան վերաբերեալ եւ կատարած համեմատական ուսումնասիրութիւններ: Յատուկ ուշադրութեան արժանի են հայկական գորգարուեստի իր յօդուածները: Ան պրպտող հետազօտող էր եւ անսովոր եռանդի տէր անձնաւորութիւն, որ անշահախնդիր նուիրուածութեամբ կենսունակ կը պահէր հայկական արուեստի պատմութիւնը օտարներուն ծանօթացնելու գործը:

Լիւսի Տէրմանուէլեանը մահացաւ 2021ի Սեպտեմբերի 20ին, Պելմոնթ, Մեսեչուսէց, ԱՄՆ:

ԱՐՄԷՆ ՏԷՐՍՏԵՓԱՆԵԱՆ
(1946–2021)

Մատենադարանի ԺԵ.-ԺԹ. դարերի հայ մատենագիտութեան բաժնի աւագ գիտաշխատող, բանասիրական գիտութիւնների թեկնածու Արմէն Տէրստեփանեանը ծնուել է 1946ին, Երեւան քաղաքում, բանասէր Գառնիկ Ստեփանեանի ընտանիքում: 1969ին աւարտել է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտը: 1969-80՝ աշխատել ԵՊՀ հայագիտական հետազօտութիւնների աշխատանոցում, 1985ին պաշտպանել թեկնածուական:

1981ից աշխատել է ՄՄ Մատենադարանի միջնադարեան սկզբնաղբիւրների ուսումնասիրման (2019ից՝ 15-19րդ դարերի հայ մատենագրութեան) բաժնում: 1985-92՝ վարել է Մատենադարանի գիտքարտուղարի պաշտօնը:

Արմէն Տէրստեփանեանի գիտական հետաքրքրութեան ոլորտում էին հայերէն ձեռագրական ժառանգութեան պատկառելի մասը կազմող աստուածաբանական երկերը եւ ձեռագրերի յիշատակարանները: Այս բնագաւառում նրա կատարած աշխատանքներն ամփոփուել են *Manuscrits Arméniens de la Bibliothéque Nationale de France* (Raymond H. Kévorkian, Armen Ter-Stépanian, avec le concours de Bernard Outtier et de Guévorg Ter-Vardanian, Փարիզ, 1998), *Ս. Գրքի հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն* (Եզնիկ եպս. Պետրոսեանի հետ, 2002), *Յովհաննէս Մուշի որդի, մեկնութիւն Եսայեայ* (Ա. Մխիթարեանի հետ, 2009), Յ. Շահխաթունեանց, *Սփորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ* (2014) հրատարակութիւններում:

Հեղինակ է բազմաթիւ հայագիտական յօդուածների: Վերջին տարիների նրա գիտական աշխատանքներն ամբողջութեամբ նուիրուած էին ԺԶ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարանների երկհատորեակի կազմմանը, որը գրեթէ աւարտուած է:

Արմէն Տէրստեփանեանը մահացաւ 2021ի Մայիսի 5ին, Երեւանում:

ԳԱՍՊԱՐ ՏԷՐՏԷՐԵԱՆ[1]
(1934–2021)

Ծնած է 28 Փետրուար 1934ին, Ալէյ (Լիբանան), սեբաստացի մօրմէ եւ շապինգարահիսարցի հօրմէ, տարագրեալներու ընչազուրկ ու բազմանդամ (չորս քոյր, չորս եղբայր) ընտանիքի մը մէջ: 1939ին կորսնցուցած է հայրը:

Աւարտած է ՀԲԸՄ Յովակիմեան-Մանուկեան երկրորդական վարժարանը, զոր աւարտած է 1953ին, մաս կազմելով վարժարանի առաջին հունձքին, ապա ուսումնառութիւնը շարունակած է Պէյրութի ամերիկեան համալսարանէն ներս, խափանուած է քաղաքական պատճառով: 1964ին, աւարտած է Պէյրութի Սէն Ժոզէֆ համալսարանի իրաւագիտութեան եւ տնտեսագիտութեան բաժինը: 1957ին անդամակցած է Լիբանանի լրագրողներու ընկերակցութեան, իսկ 1965ին՝ Պէյրութի փաստաբաններու կաճառին:

Պատանեկան տարիներէն լիովին ներգրաւուած է երկրի արաբական եւ ներհայկական քաղաքական կեանքին, ընտրելով արաբ եւ հայ «ձախ» խրամատը, ամբողջական յանձնառութեամբ հրապարակագրութեամբ եւ ընդյատակեայ գործունէութեամբ:

Մեթր Տէրտէրեան վարած է եռուն եւ բեղուն ազգային, քաղաքական եւ հասարակական գործունէութիւն, Լիբանանի ոչ միայն հայկական, այլեւ արաբական կազմակերպութիւններու մէջ, ինչպէս Հ.Ե.Ընկերակցութիւնը, Ռ.Ա. Կուսակցութիւնը, Լիբանանցի մարքս-լենինեան կոմունիստներու միութիւնը, դեմոկրատ իրաւա-

[1] Նիւթը քաղուած է մեթր Գասպար Տէրտէրեանի յիշատակին նուիրուած ձեռնարկի գրքոյկին մէջ լոյս տեսած կենսագրականէն, զոր պատրաստած է Անի Ք.Պ.: Մատենագիտութիւնը - նոյն գրքոյկէն - աշխատասիրած է Կարօ Աբրահամեան:

բաններու համաշխարհային լիկայի Լիբանանի մասնաճիւղը եւ մանաւանդ Լիբանանահայ գրական շրջանակը, անոր հիմնադրութեան առաջին տարիներէն (1948) մինչեւ իր մահը: Հիմնադիրներէն է Արաբ-հայ օրինական միջազգային խորհուրդին (Դամասկոս, 2013):

Աշխատակցած է լիբանահայ, սփիւռքահայ եւ Լիբանանի ու Սուրիոյ արաբական մամուլին, ստորագրելով Ոզնի Թոնտրակի, Ժպրան Խուրի, Դաւիթի Կապարճակիրը, Զարեհաւանեցի եւն.: Մաս կազմած է *Ալախպար, Մեր նշանաբանն է յառաջ, Յառաջ գրական, Յառաջ, Նոր ուղի, Ալֆիքր ուլժափիտ* պարբերականներուն եւ *Սաութ ուլշաապ* ռատիօկայանի խմբագրակազմերուն: Կատարած է հայերէնէ արաբերէն եւ արաբերէնէ հայերէն գրական եւ հրապարակագրական գործերու թարգմանութիւն:

Մասնակցած է հայկական եւ արաբական համագումարներու Փարիզ, Թունուզ, Հալէպ եւ Էջմիածին: Բանախօսական եւ քարոզչական ելոյթներ ունեցած է հայկական եւ արաբական բեմերէ եւ զանգուածային լրատուամիջոցներէ՝ Լիբանան, Ֆրանսա, Թունուզ, Սուրիա եւ Կիպրոս՝ Հայ դատի, Պաղեստինեան դատի եւ արաբական քարիւղի պաշտպանութեան գծով:

Վերջին շուրջ 40 տարիներուն հետապնդած է արեւմտահայութեան «տարագիր բեկորներուն» միջազգային կարգավիճակ մը ձեռք բերելու գաղափարը, զայն իրականացնելու միջոցը տեսնելով Տարագիր արեւմտահայութեան համաշխարհային քոնկրէսի (ՏԱՀՔ) ստեղծումին մէջ, զոր միջազգային հանրային իրաւունքին անշրջանցելի պահանջը նկատած է:

Մեթր Գասպար Տէրտէրեան մահացաւ Պէյրութ, Երկուշաբթի, 23 Օգոստոս 2021ին:

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆԿ

Առանձին հատորներով կամ պրակներով.-

(Յովհաննէս Աղպաշեանի համահեղինակութեամբ) *Ուղեցոյց Լիբանանի ընկերային ապահովութեան օրէնքին*, մատենաշար «Յառաջ», թիւ 1, 1966, [տպ. Ատլաս], Պէյրութ, 128 էջ:

Սիոնիզմի եւ բանթուրքիզմի առնչութիւնները եւ անոնց սպառնալիքը՝ Հայաստանի լինելութեան, հրտ. ԼԳԾ, մատենաշար ԼԳԾ, թիւ 11, ատ, Պէյրութ, 1990, 47 էջ:

جبران خوري, *الصهيونية والطورانية وتأثيرهما على مستقبل شعوب المنطقة*, دار الصداقة، دار الحاسوب للطباعة، حلب، ١٩٩٤، ٦٧ صفحة (Ժըպրան Խուրի գրչանունով. «Սիոնիզմը եւ փանթուրքիզմը եւ անոնց ազդեցութիւնը շրջանի ժողովուրդներու ապագային վրայ»):

Մեր լինելութեան ուղին. (Արաբական Արեւելքի հայ գաղութները՝ արաբ ազգայնականութեան եւ իսլամ արմատականութեան միջեւ), յաւելուած Ազգային Մշակոյթի, թիւ 541, Պէյրութ, 23 Ապրիլ 1994, 16 էջ:

Սարդարապատէն անդին՝ համահայկական գոյամարտի 3 ջոկատները, հրտ. ԼԳԾ, մատենաշար ԼԳԾ թիւ 15, տպ. Քեստենեան, Պէյրութ,1996, 24 էջ:

Եկեղեցի-պետութիւն. յարաբերութիւններ եւ նոր աղանդաւորականներ. ներածական ակնարկ, մատենաշար Արմէն եւ Միմի Յարութիւնեան, թիւ 11, Պէյրութ, 2003, 32 + 2 ներդիր էջ:

Հայեացք եւ կեցուածք. հապա ե՞րբ պիտի օժտենք տարագիր հայերը միջազգային կարգավիճակով – հրապարակախօսական էջեր, մատենաշար Արմէն եւ Միմի Յարութիւնեան, թիւ 29, տպ. Փաւո, Պէյրութ, 2008, 455+2 էջ:

Ապրիլեան ասուլիս. մտորումներ Մեծ Եղեռնի 95րդ տարելիցին առիթով, հրտ. ԼԳԾ, ատ, Պէյրութ, 2010, 8 էջ:

Այսպէս բարբառեցաւ պղնձաթելը..., Պղնձաթելի կերպարուեստի ռահվիրայ Մկրտիչի Ա. ցուցահանդէսը, (Գեղարուեստական ալպոմ – հայերէն եւ արաբերէն), ատ, Պէյրութ, 2010, 43 էջ:

Հայեացք դէպի դարադարձ (1915-2015), հրտ. ԼԳՇ, տպ. Քեստենեան, Պէյրութ, 2011, 28 էջ:

Հայեացք դէպի դարադարձ՝ 2015... մշուշապատումի պատեհապաշտ փորձ մըն է՝ ՀՀ խորհրդարանի սենաթին հակադրումը տարագիր արեւմտահայութեան քոնկրէսին, հրտ. ԼԳՇ, ատ, Պէյրութ, 2011, 23 էջ:

Էօժէն Իոնեսքօ (ծննդ. 100ամեակ) – "Անհեթեթ"ի դիմակով նորիրապաշտ գրողը ... եւ "Արքան կը մահանայ" (Le Roi Se Meurt)» (թատերագրութիւն եւ թարգմանութիւն), մատենաշար ԼԳՇ, թիւ 23, տպ. Սիփան, Պէյրութ, 2012, 173+1 էջ:

Դարադարձի անդոհանք եւ մարտակոչեր» (հրապարակագրական էջեր եւ փաստաթուղթեր), հրտ. ԼԳՇ, մատենաշար ԼԳՇ, թիւ 24, տպ. Տար Ալֆարապի, Պէյրութ, 2014, էջ 1-619 հայերէն, էջ 1-99 արաբերէն: *هواجس الذكرى المئوية ومناداة الى الكفاح*, منشورات الحلقة الأدبية الأرمنية اللبنانية رقم ٢٤، دار الفارابي، بيروت، ٢٠١٤, عدد الصفحات: باللغة الأرمنية ص ١-٦١٩ وباللغة العربية ص ١-٩٩.

2015 թուի մեծ սփոգատեսին՝ մեր հողային պահաջատիրութիւնը միջազգային հանրային իրաւունքին մէջ (Տարագիր արեւմտահայութեան համաշխարհային քոնկրէսին՝ ՏԱՀՔի հրամայականը), հրտ. ԼԳՇ, մատենաշար ԼԳՇ, թիւ 25, տպ. Շիրակ, Պէյրութ, 2014, 158+1 էջ:

الذكرى المئوية لإبادة الأرمن ـ القضية الأرمنية في القانون الدولي العام والشهادات العربية لنصرة القضية الأرمنية, منشورات الحلقة الأدبية الأرمنية اللبنانية رقم ٢٦، دار الفارابي، بيروت، ٢٠١٥, عدد الصفحات: ١٠٣+١.

(Հայ Դատը միջազգային հանրային իրաւունքին մէջ եւ արաբական զօրակցութիւնը Հայ Դատին)

Մեր հողային պահանջատիրութիւնը միջազգային հանրային իրաւունքին մէջ (Տարագիր արեւմտահայութեան համաշխարհային քոնկրէսին՝ ՏԱՀՔի հրամայականը), (Բ. տպագրութիւն, լրացումներով եւ ճշգրտումներով), հրտ. ԼԳՇ, մատենաշար ԼԳՇ, թիւ 27, տպ. Զինգոկրաֆ Քեստենեան, Պէյրութ, 2016, 247 էջ:

[Յանձնառու սրտցաւ սփիւռքահայեր սփորագրութեամբ], "Վասն համաստիւռքահայ քոնկրէսի" Յայտարարութիւն-կոչին առիթով, ատ, աթ, Պէյրութ, 14 էջ:

Անտիպ ուսումնասիրութիւններ.-

«Լիբանանի բազմահամայնքային համակարգը եւ լիբանանահայութեան եզակի կարգավիճակը», (Ուսումնասիրութին՝ Լիբանանի հայոց անձնական իրաւանց եւ դատավարական զոյգ կանոններու բարեփոխութեանց առաջարկներով):

«Հասարակագիտական եզրերու եւ անուններու բացատրական բառարան»,

ա – 213 եզրաբանութիւն (շաբաթական հերթականութեամբ հրատարակուած են *Կանչի* 10 Փետրուարէն-13 Յուլիս 2002 թուականներու միջեւ, եւ դադրած՝ «մնացեալը գիրքով» նշումով):

բ – 50 եզրաբանութիւն (հրատարակուած են հեղինակին *Մեր հողային պահանջատիրութիւնը*, Բ. տիպ. հատորին մէջ (էջ 227-41):

գ – 17 եզրաբանութիւն (հրատարակուած են ներդիր էջով մը, հեղինակին *Եկեղեցի-պետութիւն*, գրքոյկին մէջ):

كارباغ ـ لا انفصالية ولا طائفية، بل حق الشعوب في تقرير المصير («Ղարաբաղեան Դատը՝ ժողովուրդներու ինքորոշման իրաւունքին մէջ»)

القضية الأرمنية وحركات التحرر الوطني في الشرق العربي ضد السلطنة العثمانية («Հայկական Հարցը եւ արաբ արեւելքի ազգային ազատագրական շարժումը Օսմանեան Սուլթանութեան մէջ»)

Խմբագրած հատորներ.-

(Շաւարշ Թորիկեանի գլխաւոր խմբագրութեամբ, Շուշանիկ Մոլոյեանի եւ Զաւէն Մսըրլեանի համախմբագրութեամբ) *Armenian Studies. Etudes Armeniens/Annals of the Lebanese Association of Armenian University Graduates/Les Annales de l'Association Libanaise des Universitaires Armeniens*, Beirut, 1973:

Յո՞ երթաս հայ Սփիւռք... ապրիլեան սեմինար Ա. ասուլիս, 22-23-24 Ապրիլ 1988, հրտ. Ուրֆայի վերածնունդ մշակութային միութեան սեմինարի յանձնախումբ, ատ, Պէյրութ, [1988]:

Ազգային մշակոյթ շաբաթաթերթ – 10համեակի բացառիկ, Պէյրութ (16 Յունուար 1994) (հայերէն եւ արաբերէն պարունակութեամբ):

Յովհաննէս Աղպաշեան, *Պայքարի ոլորապտոյտին մէջ (կուսակցական կեանքիս յուշերը)* – մասն Ա. (1927-1964), հրտ. ԼԳԾ, մատենաշար ԼԳԾ, թիւ 18, [տպ. Թեքնոփրէս], Պէյրութ, 2001, 88 էջ:

Վարուժան Սալաթեան. «Քաղաքական կեանքիս անաւարտ յուշերը» (անտիպ):

Լիբանանահայ գրական շրջանակի, 1993-2014 տարիներու, բովանդակալից մեծածաւալ Ուղեցոյց-օրացոյցները:

Լիբանանահայ գրական շրջանակի յոբելենական հանդիսութիւններու եւ տարեդարձներու բազմաթիւ գրքոյկները:

Լիբանանահայ գրական շրջանակի երախտաւորներու յիշատակին նուիրուած «Դափնեպսակ» խորագրեալ պրակը (2008):

Առանձնատիպով հրատարակուած.-

«Լիբանանի հայոց անձնական իրաւանց կարգավիճակը՝ պետութիւն-եկեղեցի յարաբերութեանց դիտանկիւնէ», *Հայկազեան հայագիտական հանդէս*, ԻԸ:2008, էջ 263-78:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Քնարիկ Աբրահամեան **spyurkka@gmail.com**

Ծնած է 1984ին, Գիւմրի: 2006ին աւարտած է Երեւանի Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի (ԽԱՀՊՄՀ) բանասիրական բաժանմունքը: 2013ին թեկնածուական պաշտպանած է «Զարեհ Խրախունին եւ արեւելահայ բանաստեղծութիւնը» նիւթով:

2008էն ԽԱՀՊՄՀի «Սփիւռք» գիտաուսումնական կեդրոնի մեթոդիստ է, 2022էն՝ գիտական աշխատող, 2014էն՝ ԽԱՀՊՄՀի հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ անոր դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի օգնական-դասախօս, 2018էն՝ դոցենտ: 2019էն անդամ է «Հայկ Նագգաշեան գրական գնահատանք» հիմնադրամի յանձնախմբին: Հեղինակած է *Զարեհ Խրախունին եւ արեւելահայ բանաստեղծութիւնը* (2013) եւ *Գրական հորիզոնի ներքին շերտերում* (2022) հատորները, կազմած եւ խմբագրած Սփիւռքի գրականութեան վերաբերող տասնեակ գրքեր:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն արեւմտահայ դասական եւ սփիւռքահայ գրականութեան պատմութիւնը, տեսաբանական եւ նամակագրական հարցադրումներ: 2010էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Հայկ Աւագեան **haigavakian@yahoo.com**

Ծնած է 1964ին, Գահիրէ: 1991ին աւարտած է Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցի դաշնակի եւ երաժշտագիտութեան բաժինները: 1991-94՝ մաս կազմած է Գահիրէի երաժշտանոցի ուսուցչակազմին, 1992-2009՝ Գահիրէի օփերայի երգչախումբի խմբավար, 2007-10՝ Աղեքսանդրիոյ մատենադարանի քառաձայն եւ մանկական երգչախումբերուն գեղարուեստական ղեկավար: Տուած է բազմաթիւ դաշնակի մենանուագներ:

Հեղինակ է հայերէն, արաբերէն եւ անգլերէն աւելի քան 50 երաժշտագիտական, բանասիրական ու պատմափիլիսոփայական հատորներու: 2001-8՝ խմբագրած է *Ծիծեռնակ* երաժշտական եռամսեան, պատրաստած հայկական առաջին օփերայի՝ Տիգրան Չուխաճեանի *Արշակ Բ.*ի (1868) բնագիր տարբերակի քննական խմբագրութիւնը: Խմբագրած եւ հրատարակած է անտիպ երկասիրութիւններ: 2013էն կ'աշխատակցի *Ջահակիր*ին, որուն խմբագրական խորհրդատուն է 2016էն: Հեղինակային իր վերջին գիրքերն են՝ *Մառի Պէյլէրեանի Եգիպտոսի տարիները (1896-1909) եւ ընկերվարական ֆեմինիզմը* (2022) եւ *Էդուին Ժերար Համամճեան՝ գաղափարապէս համակուած արուեստագէտը* (2022): Մասնակցած է Հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի կազմակերպած եւ այլ գիտաժողովներու: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Եուրի Աւետիսեան **yuriavetisyan@ysu.am**

Ծնած է 1961ին, Արտաշատ: 2002ին պաշտպանած է դոկտորականը՝ «Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն» նիւթով: 1988–2002՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի դասախօս, 2008էն՝ նոյն ամբիոնի փրոֆեսոր, 2015-9՝ ԵՊՀ սփիւռքագիտութեան ամբիոնի հիմնադիր-վարիչ, 2013էն՝ ԵՊՀ հայոց լեզուի ամբիոնի վարիչ: 2011էն անդամ է *Բանբեր Երեւանի համալսարանի*, իսկ 2013էն՝ *Հայագիտութեան հարցեր* պարբերականներու խմբագրական խորհուրդներուն: 2009–14՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան ատեանի անդամ: Պարգեւատրուած է ԹՄՄ «Հայկաշէն Ուզունեան» ամէ-

նամեայ մրցանակ-պատուոգիրով (2003), ԵՊՀ ոսկեայ մետալով (2015) եւն.: Համահեղինակ է գիրքերու, հեղինակ՝ դասագիրքերու, մենագրութիւններու, որոնց վերջինը՝ *Հայագիտութեան զուգահեռականներում* (2021):
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն լեզուի կանոնակարգման հարցերը, հայոց լեզուն եւ խօսքի մշակոյթը, արեւմտահայերէնը, ձեւաբանութիւնը, արեւմտահայ բանաստեղծութեան լեզուն, արեւելահայերէնի եւ արեւմտահայերէնի զուգադրական քերականութիւնը, լեզուի զարգացումը, պաշտօնական լեզուն եւն.: 2011էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Մերի Աւետիսեան **meryavetisyan@1984gmail.com**

Ծնած է 1984ին, Մեղրի, Սիւնիքի մարզ: 2019ին պաշտպանած է մագիստրականը՝ ԵՊՀ հնագիտութեան եւ ազգագրութեան ամբիոնը՝ «Արեւմտեան որոշ շրջանների պատմազգագրական բնութագիրը ըստ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի արխիւի նիւթերի» նիւթով: Ներկայիս աւագ գիտաշխատող է Սարդարապատի հերոսամարտի յուշահամալիրի Հայոց ազգագրութեան եւ ազա-տագրական պայքարի պատմութեան ազգային թանգարանի նիւթական մշակոյթի բաժնին:
Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սպասքի կիրառական եւ ծիսապաշտամունքային գործառոյթները: 2021էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արտակ Ասատրեան **sardarapatasatryan@gmail.com**

Ծնած է 1978ին, Արմաւիրի մարզի Արաքս գիւղը: 2006ին աւարտած է ԽԱՀՊՄՀը: 2006-16՝ Սարդարապատի հայոց ազգագրութեան թանգարանի ազգագրութեան բաժնի գիտաշխատող, 2020-21՝ Զուարթնոց պատմամշակութային թանգարանի գիտաշխատող: 2021էն՝ վարիչ Հայաստանի պատմութեան թանգարանի ազգագրութեան բաժնի:
Հրատարակած վերջին յօդուածն է՝ «Կարինում 1785 թուականին պատրաստուած եւ Հայաստանի պատմութեան թանգարանում պահուող N 3579 Սինին»: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ԺԹ. դարավերջ–Ի. դարասկիզբի պղնձագործութիւնը (պղնձագործական արհեստ եւ արտադրանք) եւ արծաթագործութիւնը (արծաթագործական արհեստ եւ արտադրանք): 2016էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արծուի Բախչինեան **artsvi@yahoo.com**

Ծնած է 1971ին, Երեւան: 1996ին պաշտպանած է թեկնածուական «Վահան Տէր-Եեանի ստեղծագործական աշխատանոցը» նիւթով: 2009էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի հայ գաղթավայրերի եւ Սփիւռքի բաժնին մէջ: Հեղինակ է բազմաթիւ ուսումնասիրական հատորներու, յօդուածներու, թարգմանութիւններու, որոնց վերջինը՝ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shemakha"* (համահեղինակ՝ Վարդան Մատթէոսեան, 2022): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն սփիւռքահայ համայնքներու պատմութիւնն ու պատմամշակութային առնչութիւնները, հայ շարժանկարի, պարարուեստի պատմութիւնը, նոր շրջանի պատմա-բանասիրական նիւթերը, երեւելի հայազգիներ...:
1998էն կ'աշխատակցի ՀՀՀին: 2001-21՝ ՀՀՀ ներկայացուցիչն էր Երեւանի մէջ:

Յասմիկ Գալստեան **hasmikgalstyan1979@gmail.com**

Ծնած է 1979ին, ՀՀ Շիրակի մարզի Վահրամաբերդ գիւղը: 2021ին պաշտպանած է թեկնածուական՝ ԳԱԱ Մ. Աբեղեանի գրականութեան հիմնարկին մէջ՝ «Չար ոգիները հայ ժողովրդական զրոյցներում. տեսակների դասակարգումն ըստ գործառոյթների» նիւթով: Ներկայիս ԳԱԱ ՀԱԻի բանահիւսութեան տեքստաբանութեան բաժնի գիտաշխատող է, հեղինակ՝ գիտական յօդուածներու: Գիտական հետաքրք-

րութիւնները կ'ընդգրկեն հայ բանագիտութիւնը, առասպելաբանութիւնը, մասնաւորապէս՝ հայ ստորին առասպելաբանութիւնը:

Մարէք Եանտաք **Marek.Jandak@ff.cuni.cz**

Ծնած է Քոլին, Չեխիա: 2016ին պաշտպանած է մագիստրականը պատմութեան գծով՝ Փրակի Charles Universityի արուեստից բաժինէն, նիւթ ունենալով «Բրտութեան գործադրումը Հայոց Ցեղասպանութեան ընթացքին կամ մէջ. ազգային խումբի մը քանդումը՝ Խարբերդ եւ Մեզրէ գաւառական քաղաքներուն մէջ»: Ներկայիս կ'աշխատի դոկտորականին վրայ, նոյն համալսարանին մէջ, միաժամանակ ժամանակակից պատմութեան մասնագէտ է Չեխիոյ գիտութիւններու ակադեմիային մէջ: Հեղինակ է *Arménská Genocida: Příčiny, průběha a osobní svědectví [The Armenian Genocide: Causes, course of events and personal testimonies] (1915–1922)* հատորին (Փրակա 2018) ունի նաեւ գիտական յօդուածներ:

Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ Հայոց Ցեղասպանութիւնը, օտար ականատեսներ եւ փրկարարներ Արեւելեան Անատոլուի Խարբերդ եւ Մեզրէ քաղաքներուն մէջ, 1915-22ի Էլազիկի շրջանը, մարդասիրական առաքելութեանց պատմութիւն, ազգապետութեան համակարգը:

Արմենակ Եղիայեան **armenag@gmail.com**

Ծնած է 1939ին, Պուրճ Համուտ, Լիբանան: 1964ին աւարտած է Սէն Ժոզէֆ համալսարանի ֆրանսական գրականութեան եւ լեզուի (Ecole des Lettres), իսկ 1970ին՝ ատամնաբուժութեան բաժանմունքները: Խմբագրած եւ թարգմանած է բազմաթիւ հատորներ, կատարած արեւելահայերէնէ արեւմտահայերէնի փոխադրումներ: Հեղինակ է *Մեսրոպեան տառերու ակունքները* (2005) մենագրութեան եւ նախակրթարանի *Միածան* դասագիրքերու (5 հատոր ընթերցարան, 5 հատոր քերականութիւն, 10 հատոր ուղեցոյց) (1991-95):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայոց լեզուի կառոյցն ու շարահիւսութիւնը: 2014էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Ճան Էրզուրումլուօղլու **canerzurumluoglu@hotmail.com**

Ծնած է 1980ին, Պոլիս: 2017ին պաշտպանած է մագիստրոսականը՝ «Une Comparaison Critique de la Conception de L'espace Chez Leibniz et Chez Kant» նիւթով: 2001-10՝ իբրեւ ուսուցիչ պաշտօնավարած է պոլսահայ վարժարաններու մէջ, իսկ 2015էն՝ ուսողութեան դասախօս է Նիշանթաշը համալսարանին մէջ:

Արթօ Թաւուքճեան **arto@designshiva.com**

Ծնած է Մոնթրէալ, 1958ին: 1982ին աւարտած է Քոնքորտիա համալսարանի Communication Studies բաժինը պսակաւոր արուեստից վկայականով:

Ան ինքզինք կը նկարագրէ իբրեւ «որսորդ մը արուեստի արժէքաւոր գործերու, որոնք լքուեցան, երբ հայեր ստիպուեցան փախչիլ Օսմանեան Կայսրութենէն՝ 1915ին»: Հետաքրքրութիւններուն ծիրը կ'ընդգրկէ հայ արուեստն ու հայոց պատմութիւնը: Հաստատած է հայ արուեստին նուիրուած www.hyeantiques.com կայքը:

Սեւանա Թոփալեան **sevana.topalian@gmail.com**

2022ին մագիստրականով վկայուած Հայկազեան համալսարանի հիւանդասենեակային հոգեբանութեան մասնագիտութեամբ: Ներկայիս կը պաշտօնավարէ Լիբանանի հանրային առողջապահութեան նախարարութեան ծիրին մէջ գործող առաջնային առողջապահական կեդրոնին մէջ, Պէյրութ: Միաժամանակ մասնակի ժամանակով կը վերահսկէ Embrace զգացական օգնութեան եւ անձնասպանութեան կանխման կեդրոնին մէջ:

Լեւոն Լաճիկեան **levon.lachikyan55@gmail.com**

Ծնած է 1955ին, Գիւմրի: 1980ին աւարտած է ԵՊՀ բանասիրական հիմնարկի թեկնածուականը: 2012էն դասախօս է ԵՊՀի մէջ: 2021էն *Շիրակ* եւ *Մաշտոց* գրական-գեղարուեստական հանդէսներու գեղարուեստական խմբագիր:

1995-2011՝ Ամերիկայի հայ օգնութեան ֆոնտի (ՀՕՖ) մամլոյ քարտուղար, 2012ին՝ ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ամերիկայի հայ համայնքներու վարչութեան պետ, 1999էն անդամ է ՀՀ նկարիչներու միութեան, իսկ 2005էն՝ ՀՀ լրագրողներու միութեան: 2010ին արժանացած է ՀՀ մշակոյթի նախարարութեան, իսկ 2019ին՝ ԵՊՀ ոսկէ մետալներուն: 2021ին մրցանակակիրն է ԱՊՀ երկիրներու «Գրքարուեստ» XVIII միջազգային մրցոյթին: Հեղինակած է շարք մը գիրքեր, որոնց վերջինը՝ *Հայկական եկեղեցիներ* պատկերագիրքը (2021): 2010էն տուած է անհատական շարք մը ցուցահանդէսներ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը կ'ընդգրկէ ուշ միջնադարի հայ գեղագիտական միտքը, Մխիթարեան միաբանութեան սկզբնաւորման շրջանը, արդի հայ կերպարուեստը:

Լալիկ Խաչատրեան **lingualal51@mail.ru**

Ծնած է 1952ին, Կամօ քաղաքը (այժմ՝ Գաւառ): 1973ին աւարտած է ԽԱՀՊՄՀի բանասիրական ֆակուլտէտը: 1997ին պաշտպանած է դոկտորական, 2003ին ստացած է փրոֆեսորի կոչում: 1997-2003՝ գրաբար եւ հայ հին գրականութիւն դասաւանդած է Հալէպի մէջ: 2001-13 եւ 2015-16՝ ԽԱՀՊՄՀ հայոց լեզուի եւ անոր դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հին հայերէնը, բառակապակցական իմաստաբանութիւնը, բառարանագրութիւնը, հայոց լեզուի տեսութիւնը, ընդհանուր լեզուաբանութիւնը եւ փոխառութիւնները: Հեղինակ է բազմաթիւ գիտական յօդուածներու: 2019էն վարիչն է ԽԱՀՊՄՀ լեզուաբանական հետազօտութիւններու գիտական աշխատանոցին:

Յակոբ Կիւլլիւճեան **koulou@humnet.ucla.edu**

Մասնագիտացած է տնտեսագիտութեան (MBA) եւ գրականութեան մէջ՝ Նարեկացիի քերթողականին շուրջ դոկտորականով: Ուսումնասիրած եւ հրատարակած է սփիւռքահայ բանաստեղծութեան, ինչպէս նաեւ ժառանգական լեզուի, մշակոյթի, սփիւռքներու եւ կարողականութեան (virtuality) փոխազդեցութեանց մասին: Ունի խորհրդատուական լայն փորձառութիւն, արհեստագիտութեան վերաբերող քաղաքականութեան շուրջ օժանդակած ըլլալով ձեռնարկութիւններու եւ պետական մարմիններու:

2010ականներուն յատկապէս գործօն գտնուած է արեւմտահայերէնի շուրջ հետազօտութեամբ ու ծրագիրերով՝ սկսելով UNESCOի կողմէ արեւմտահայերէնի վտանգուածութիւնը հիմնաւորող տեղեկագրէն, մինչեւ լեզուի կենսունակութեան մասին նոր տեսութեանց առաջադրումը եւ գործնական կիրառումներու փորձարկումը UCLAի մէջ: Ասոնց կարգին են «ժամանակայնօրէն պայմանաւորուած խորշաւորում»ի յղացքը, սպառող ու արտադրող վճռական զանգուածի ապահովման կեդրոնական կարեւորութիւնը, եւ ատոր համար լեզուն «ապախորշաւորելու» եւ ստեղծագործ գրաճանաչութիւն տարածելու եղանակը: Ներկայիս UCLAի հայ լեզուի եւ մշակոյթի Խաչիկեան դասախօսական ամբիոնի վարիչն է: 1999էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Զաւէն Կնեազեան **zavenkniasian@yahoo.com.ar**

Ծնած է 1959ին, Պուենոս Այրէս: Հետեւած է Պուենոս Այրէսի պետական համալսարանի ճարտարագիտութեան դասընթացքներուն:

1992էն հայ մշակոյթ կը դասաւանդէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ կրթական հաստատութեան մէջ: Անդամ է Արժանթինի երաժշտագիտութեան ընկերակցութեան: Հրատարակած է գիտական ու հանրամատչելի յօդուածներ հայերէն ու սպաներէն: Վերջին հրատարակութիւնն է *La Historia Armenia a Través de un Traje* (Հայոց պատմութիւնը տարազի մը ընդմէջէն, 2018): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական երաժշտական գործիքները, դրօշակներն ու զինանշանները, պարագիտութիւնն ու ազգագրութիւնը, պատմաբանասիրական խնդիրները: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արտաշէս Ղազարեան **artashes.ghazaryan@rambler.ru**

Ծնած է Երեւան, 1963ին: 1995ին պաշտպանած է թեկնածուական ՀՀԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկին մէջ «Դաւանական պայքարը եւ քաղաքական կողմնորոշման հարցը քրիստոնեայ Արեւելքում եւ Հայ Եկեղեցին (Դ-Զ դարեր)» նիւթով: 2007ին ԵՊՀն իրեն շնորհուած է դոցենտի կոչում: 2002էն ՀՀ Կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութեան բարձրագոյն որակաւորման կոմիտէի գլխաւոր մասնագէտ է: 2003էն կը դասախօսէ ԵՊՀի մէջ, իսկ 2009էն՝ ՀՀ ԳԱԱ միջազգային գիտակրթական կենտրոնի մագիստրականի: Վարած է խմբագրական պաշտօններ *Հայկական հանրագիտարանի* եւ *Քրիստոնեայ Հայաստան* հանրագիտարանի մէջ, 2000-2՝ ՀՀ կառավարութեան առընթեր կրօնի գործերու պետական խորհուրդի բաժնի պետ:

Համահեղինակ է Հայաստանեայց աւետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), (1999, պատ. Ռընէ Լեւոնեանի հետ), հեղինակ է աւելի քան 40 գիտական յօդուածներու: Գիտաական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայ առաքելական եկեղեցիի վաղ միջնադարի պատմութիւնը, Հայ աւետարանական եկեղեցիի եւ աւետարանական համայնքներու պատմութիւնը, Միջին դարերու պատմութիւնը, քաղաքակրթութիւններու տեսութիւն եւ պատմութիւնը:

Արման Մալոյեան **armanmaloyan1976@gmail.com**

Ծնած է 1976ին, Երեւան: 1996ին աւարտած է ԽԱՀՊՄՀի պատմութիւն եւ մանկավարժութիւն բաժինը: 2011ին պաշտպանած է թեկնածուական՝ «Արեւմտեան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրութիւնը XVIII դարի երկրորդ կէսին» նիւթով:

2007-19՝ պաշտօնավարած է ՀՀ կրթութեան եւ գիտութեան նախարարութեան մէջ, իբրեւ հայագիտական եւ ընկերամշակութային դասանիւթերու բաժնի գլխաւոր մասնագէտ: 2014-19՝ պատասխանատու քարտուղար *Հայագիտութիւնը դպրոցում* ամսագրին: 2021էն կը պաշտօնավարէ ՀՀ ԿԳՄՍ նախարարութեան «Կրթութեան զարգացման եւ նորարարութիւնների ազգային կենտրոն» հիմնադրամին մէջ, իբրեւ վերապատրաստման ծրագրերու մշակման եւ վերապատրաստումներու արդիւնաւէտութեան գնահատման բաժնի պետ: 2011ին հեղինակած է «Բագրատունեաց Հայաստանի Պետական Կարգը» պաստառը: Հեղինակ է շարք մը գիտական յօդուածներու, նուիրուած՝ ԺԸ.–ԺԹ. դարերու Արեւմտեան Հայաստանի վարչատարածքային բաժանումին, առեւտուրին, քաղաքական իրավիճակին, ԺԸ. դարու Կ.Պոլիսին, Ուրֆային, Էրզրումին, Կարսին, Տրապիզոնին, Մարտինին:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայաստանի ԺԸ.–ԺԹ. դարերու պատմութեան աղբիւրագիտութիւնը, պատմագրութիւնը, պատմութեան դասաւանդման խնդիրները, հայ մշակոյթի եւ դպրոցի պատմութիւնը, հայ գաղթավայրերու պատմութիւնը, Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը եւ տեղագրութիւնը: 2016էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Թաթուլ Մանասէրեան **tatoulm@gmail.com**

Ծնած է 1960ին, Երեւան: 2001ին պաշտպանած է դոկտորականը՝ «Միջազգային նոր տնտեսակարգի հիմնախնդիրները» նիւթով: ԵՊՀ դասախօս-փրոֆեսոր է 1998էն: 1991էն կը ղեկավարէ Այլընտրանք հետազօտական կեդրոնը, գլխաւոր խմբագիրն է *Այլընտրանք* գիտական հանդէսին: Գիտական խորհրդատուութիւն կատարած է Շանհայի, Փեքինի, Էնթուլրփի, Քենզըսի, Սան Ֆրանսիսքոյի, Սալենթոյի, Լոնտոնի, Պանքոքի, Սթենֆորտի, Քալիֆորնիոյ համալսարաններուն մէջ: 2009-11՝ ՀՀ ազգային ժողովի նախագահի խորհրդական, 2003–7՝ ազգային ժողովի պատգամաւոր, 2001–2՝ Ռազմավարական եւ ազգային հետազօտութիւնների կեդրոնի գիտական ղեկավար, 2000–1՝ ՀՀ արտաքին գործոց նախարարութեան նախարարի խորհրդական, 1998–9՝ ՀՀ նախագահին կից քաղաքական խորհուրդի տնտեսական ենթայանձնախումբի նախագահ, 1997–8՝ ՀՀ արդիւնաբերութեան եւ առեւտուրի փոխնախարարի պաշտօնատար:

Հեղինակ է յօդուածներու եւ գիրքերու՝ տնտեսական անվտանգութեան, միջազգային նոր տնտեսակարգի, ֆինանսական շուկաներու, պատերազմի տնտեսագիտութեան եւ ռազմարդիւնաբերական համալիրի եւ տնտեսական բնոյթի հիմնախնդիրներու մասին: 2019էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վարդան Մատթէոսեան **varny1@yahoo.com**

Ծնած է 1964ին, Մոնթէվիտէօ: 2005ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Հայերը Արժանթինի մէջ՝ սկիզբէն մինչեւ 1950» նիւթով ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի մէջ: 2019էն կը վարէ Նիւ Եորքի հայց. առաքելական եկեղեցւոյ արեւելեան թեմի (կիլիկեան աթոռ) դիւանապետի պաշտօնը:

Հեղինակ է հայերէն, սպաներէն ու անգլերէն հատորներու, բազմաթիւ գիտական յօդուածներու, խմբագրած ու թարգմանած է բազմաթիւ հատորներ՝ հայերէն, սպաներէն ու անգլերէն: Վերջին հրատարակուած հատորներն են *The Politics of Naming the Armenian Genocide: Language, History, and "Medz Yeghern,"* 2022ին, եւ *A Woman of the World: Armen Ohanian, the "Dancer of Shamakha",* 2022ին (Արծուի Բախչինեանի հետ): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սփիւռքը, հայոց հնագոյն եւ նոր պատմութիւնը, հայ նոր եւ նորագոյն գրականութիւնը, պատմաբանասիրական խնդիրներ: 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Թեհմինէ Մարտոյեան **tehminemartoyan@gmail.com**

Ծնած է Երեւան, 1977ին: 2007ին պաշտպանած է թեկնածուական՝ ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան հիմնարկի, Իրանի բաժնին մէջ՝ «Կարմէլեանների տարեգրութիւնը՝ որպէս Իրանի 17-18րդ դարերի պատմագիտական աղբիւր» նիւթով: 2012էն դասախօս է Երեւանի տնտեսահրաւագիտական համալսարանին մէջ, 2015էն նախագահն է «Լազարեան ինստիտուտ» գիտակրթական հիմնարկին: 2019էն Հայոց Ցեղասպանութեան զոհերի ու վերապրողների փաստագրման եւ ուսումնասիրութեան բաժնի աւագ գիտաշխատող է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտին մէջ:

Հրատարակած է ուսումնասիրութիւններ ջուղահայերու, Շահ Աբասի, Զմիւռնիոյ աղէտին, հայոց Ցեղասպանութեան հաւաքական յիշողութեան, սուրիահայերու Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններ համարկումի նիւթերով: Համահեղինակ է եւ թարգմանիչ: Հեղինակն է *Կարմէլեանների տարեգրութիւնը՝ որպէս Իրանի 17-18րդ դարերի պատմագիտական աղբիւր* (2011) գիրքին: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Միհրան Մինասեան **mihran.min@gmail.com**

Ծնած է Հալէպ: Երկրորդական ուսումը ստացած է Ազգային Քարէն Եփփէ ճեմարանը: Համահեղինակութեամբ հրատարակած է *Հալէպցիներու ապստամբութիւնը օսմանցի կուսակալ Խորշիտ Փաշայի դէմ (1819-1820) - Աբրահամ արք. Քիւբէլեանի օրագրութիւնը* արաբերէն հատորը 2008ին: Կ'աշխատակցի *Հասկ հայագիտական տարեգիրքի*ն, *Բագին*ի*ն*, *Ցեղասպանագիտական հանդէս*ի*ն*, *Բանբեր մատենադարանի*ի*ն* եւ այլ հանդէսներու եւ յօդուածներու ժողովածու գիրքերու՝ պատմաբանասիրական ուսումնասիրութիւններով, նուիրուած հայ հնատիպ գիրքին, հայ պարբերական մամուլի մատենագիտութեան, հայերէն ձեռագիրերու, Հայոց Ցեղասպանութեան պատմութեան, հայ լուսանկարչութեան եւն.:

Զբաղած է նաեւ բանահաւաքչութեամբ: Հայոց Ցեղասպանութենէն հարիւրաւոր վերապրողներէ գրի առած է վկայութիւններ եւ ազգագրական-բանահիւսական հսկայ նիւթ: 2012էն կ'ապրի Երեւան ու կը պաշտօնավարէ Մեսրոպ Մաշտոցի անուան հին ձեռագրերու ինստիտուտ-Մատենադարանի եւ ՀՀ Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի մէջ: 1981էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Արմէն Միքայէլեան **armen_michaelian@yahoo.com**

Ծնած է Երեւան, 1960ին: 1982ին աւարտած է ԵՊՀ պատմութեան բաժանմունքը, 1982-91՝ աշխատած է Հայաստանի ԳԱ պատմութեան հիմնարկը, 1993ին աւարտած է Փրանսայի գործարարներու եւրոպական ուսումնավայրի դասընթացքը: Հրատարակած է գիտական եւ հրապարակախօսական յօդուածներ, հեղինակ է ապագայագիտական, գիտափիլիսոփայական եւ լեզուաբանական աշխատութիւններու: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Աշոտ Մկրեան **ashot.mkrian@outlook.com**

Ծնած է 1999ին, Երեւան: 2021ին աւարտած է ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտէտը պսակաւոր արուեստից վկայականով: Ներկայիս մագիստրական ուսման կը հետեւի ընդհանուր լեզուաբանութեան մէջ՝ նոյն համալսարանէն ներս:

2018էն անդամ է ԵՊՀ հայ բանասիրութեան ֆակուլտէտի գիտական խորհուրդին: 2021էն խմբագիր է Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտ հիմնադրամին մէջ, միաժամանակ 2022էն կը դասախօսէ Երեւանի Կոմիտասի անուան պետական կոնսերվատորիային մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայագիտութեան եւ ընդհանուր լեզուաբանութեան հարցերը, թարգմանագիտութիւնը, բառարանագրութիւնը:

Զաւէն Մսըրլեան

Ծնած է 1938ին, Պէյրութ: 1963ին՝ պաշտպանած է մագիստրականը: 2003ին ՀՀ ԳԱԱն իրեն շնորհած է պատուոյ դոկտորայի կոչում, իսկ 2014ին ընտրուած է ՀՀԳԱԱ արտասահմանեան անդամ:

Ասպարէզով կրթական մշակ է: 1967-2017՝ եղած է Պէյրութի հայ աւետ. գոլէճի տնօրէնը: Հեղինակ է մօտ 100 պատմական ուսումնասիրութիւններու, բազմաթիւ գիրքերու, որոնց վերջինը՝ *Հայերը համաշխարհային Բ. պատերազմին* (2020): 1971էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Գայիանէ Յակոբեան **gayik20@gmail.com**

Ծնած է 1981ին, Արթիկ, Շիրակի մարզ: 2019ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Սիրիահայերի սոցիալ-մշակութային ադապտացիայի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետութիւնում» նիւթով: 2014էն գիտաշխատող է ՀՀ ԳԱԱ ՀԱԻի մէջ:

Հրատարակած է հայաստանաբանակ սուրիահայերու մասին ուսումնասիրութիւններ: Գիտական հետաքրքրութիւններու ծիրը էթնիկ խումբերու ընկերամշակութային հիմնախնդիրներն են: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Շուշանիկ Յովհաննիսեան **shushanikhovhannisyan3@gmail.com**

Ծնած է Արմաւիր 1993ին: 2016ին աւարտած է ԽԱՀՊՄՀի գեղարուեստական կրթութեան ֆակուլտէտի մագիստրականը, նիւթ ունենալով «Հայկական ժողովրդական խաղեր» թեման: 2014-22՝ գիտաշխատող է Սարդարապատի հայոց ազգագրութեան եւ ազատագրական պայքարի պատմութեան թանգարանը: Ներկայիս կ'աշխատի ՀՀ կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութեան մէջ:

Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայկական ժողովրդական խաղերու պատմութիւնը, ընկերային խաղերու տեսութիւնը:

Հայկ Նազարեան **nazaryan_h90.90@mail.ru**

Ծնած է Երեւան, 1990ին: 2008-10՝ ծառայած է հայկական բանակին: 2015ին աւարտած է ԽԱՀՊՄՀի պատմութեան եւ իրաւագիտութեան ֆակուլտէտի մագիստրականը: 2018ին պաշտպանած է ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտի թեկնածուականը՝ «Մեծն Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914-1918 թթ.)» նիւթով: 2015-21՝ աշխատած է Հայաստանի ազգային արխիւին մէջ: 2022էն աւագ գիտաշխատող է Հայաստանի պատմութեան թանգարանի նոր եւ նորագոյն պատմութեան բաժնին մէջ:

Մասնակցած է շարք մը հանրապետական եւ միջազգային գիտաժողովներու: Հեղինակ է *Մեծ Բրիտանիայի աշխարհառազմավարական շահերը Հայաստանում եւ Այսրկովկասում (1914-1920 թթ.),* (2020) հատորին եւ շարք մը գիտական յօդուածներու՝ լոյս տեսած *Բանբեր Հայաստանի արխիւների, Էջմիածին, Լրաբեր, Հայկական բանակ ռազմագիտական հանդէս, Պատմաբանասիրական հանդէս* պարբերաթերթերու եւ գիտական ժողովածուներու մէջ: Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ռազմական պատմութիւն, ռազմական արդիւնաբերութիւն, աշխարհառազմավարութիւնն (Geostrategy):

Սօնա Ներսիսեան **sona.nersisyan2016@gmail.com**

Ծնած է 1989ին, Մեծամօր: 2012ին պաշտպանած է մագիստրականը՝ ԽԱՀՊՄՀի կրթութիւն եւ ընկերաբանութեան բաժինին մէջ, «Սոցիալական ցանցերի դերը սոցիոլոգիայում» նիւթով: 2019ին պաշտպանած է թեկնածուականը՝ «Սոցիալական ցանցերի դերը սփիւռքում» նիւթով: 2012էն կը գործէ ՀՀ ԳԱԱ ՀԱԻի, Սփիւռքի հետազօտութիւններու բաժնին մէջ, իբրեւ աւագ գիտաշխատող:

Հեղինակ է ուսունասիրութիւններու, նուիրուած՝ սփիւռքահայ ներդրումներու, հայկական տարբեր շրջանակներու ցանցային յարաբերութիւններու, ՀՀ ներգաղթած սուրիահայերու համարկումին, հայօճախներու ինքնակազմակերպման խնդիրներու, ընկերային ցանցերու, նորգաղթականութեան եւ նորՍփիւռքի հարցերու: 2018էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Վահրամ Շեմմասեան **vahram.shemmassian@csun.edu**

Ծնած է 1951ին, Թրիփոլի, Լիբանան: 1996ին պաշտպանած է դոկտորականը՝ “The Armenian Villagers of Musa Dagh: A Historical-Ethnographic Study, 1840-1915” նիւթով: 2006էն տնօրէնն է California State University, Northridgeի ժամանակակից եւ դասական լեզուներու եւ գրականութեան բաժանմունքի հայագիտութեան բաժնին: Ունի

բազմաթիւ յօդուածներ եւ Մուսա Լեռան բնակչութեան նուիրուած մենագրութիւններ, որոնց երկրորդը՝ *The Armenians of Musa Dagh: From Obscurity to Genocide Resistance and Fame (1840-1915)* (2020): Պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան Ուիլիըմ Սարոյեան շքանշանով՝ Սփիւռքի մէջ հայագիտութեան եւ հայ մշակոյթին զարգացման իր բերած նպաստին համար (2010): Արժանացած է Ծիծեռնակաբերդի Հայոց Ցեղասպանութեան թանգարան-ինստիտուտի Փրանց Վերֆէլ պատուանշանին՝ առ ի գնահատանք Մուսա Լեռան մասին իր գիտաշխատութիւններուն (2015): 1996էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Յակոբ Չոլաքեան **hagopcholakian@hotmail.com**

Ծնած է Գարատուրան, Սուրիա: 2016ին ստացած է պատմական գիտութիւններու դոկտորի աստիճան, պաշտպանելով «Քեսապ (պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն)» աւարտաճառը: 2014էն ՀՀ ԳԱԱ ՀԱԻի գլխաւոր գիտաշխատող է: 54 տարի աշխատած է իբրեւ հայերէնի ուսուցիչ եւ դասախօս:

Հեղինակ է հայերէնի դասագիրքերու, գիտական յօդուածներու եւ ազգագրական, բանագիտական, պատմագիտական եւ լեզուաբանական հատորներու, որոնց վերջինը՝ *Սուրիահայ դպրոցի պատմութիւն* (2 հատոր, 2021): Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Անտիոքի շրջանի հայոց պատմութիւնը, ազգագրութիւնը, բանահիւսութիւնը, բարբառը, արեւմտահայերէնը, Սփիւռքի կրթական վիճակը: 1982էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Սամուէլ Պօղոսեան **poghosyansamvel@yahoo.com**

Ծնած է 1977ին, Երեւան: 2003ին պաշտպանած է թեկնածուական՝ «Պօղոս Նուպար. հասարակական-քաղաքական գործունէութիւնը», 2016ին՝ դոկտորականը՝ «Կիլիկիան հայ հասարակական-քաղաքական շրջանակների եւ Անտանտի երկրների ծրագրերում (1914-1918)» նիւթով: 2018ին ստացած է փրոֆեսորի կոչում: Հայաստանի պատմագէտների ընկերակցութեան անդամ է: 2015-18՝ *Պատմութիւն եւ հասարակագիտութիւն* տարեգիրքի պատասխանատու քարտուղար: 2019էն՝ *Մեսրոպ Մաշտոց համալսարանի Լրատու* հանդէսի խմբագրակազմի անդամ: 2022էն՝ *Բանբեր Հայաստանի արխիւների* հանդէսի գլխաւոր խմբագիր: 2003էն կը դասաւանդէ ԽԱՀՊՄՀին մէջ: 2015էն՝ փոխվարիչն է նոյն համալսարանի պատմութեան եւ հասարակագիտութեան ֆակուլտէտին: Հեղինակած վերջին հատորն է՝ *Հայաստանի ինքնավարութեան ծրագրերը 1878 թ.* (2018), համահեղինակ է գիրքերու, բուհական դասագիրքերու, գիտական յօդուածներու:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Հայկական Հարցի եւ միջազգային դիւանագիտութեան, Հայոց Ցեղասպանութեան, Կիլիկիոյ 1914-1921ի պատմութիւնը, Հայկական լեգէոնը, Պօղոս Նուպարի կեանքն ու գործունէութիւնը:

Տիրուհի Սիրեկանեան **tiruhi.sirekanyan@list.ru**

Ծնած է 1993ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Մարտունի տարածաշրջանի Աստղաձոր գիւղը: 2022ին աւարտած է ԽԱՀՊՄՀի հայոց պատմութեան ամբիոնի թեկնածուականը: 2018էն պատմութեան եւ հասարակագիտութեան ուսուցիչ է Աստղաձոր գիւղի միջնակարգ դպրոցին մէջ: Աշխատակցած է *Էջմիածին* ամսագրին եւ *Մխիթար Գօշ*, ու ԽԱՀՊՄՀի հայագիտական հանդէսներուն:

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն հայ գրքի տպագրութեան խնդիրները, հայերէն ինատիպ գրքերու յիշատակագրութիւնները:

Գէորգ Ստեփանեան sasun-07@mail.ru

Ծնած է 1966ին, Սիսիան: 1996ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի եւ Արէշ գաւառներում 1918-1920 թթ.» նիւթով: 2009ին պաշտպանած է դոկտորական՝ «Բաքուի նահանգի հայութիւնը XIX դարի երկրորդ կէսին եւ XX դարի սկզբներին (պատմաժողովրդագրական ուսումնասիրութիւն)» նիւթով: 2008ին ստացած է դոցենտի եւ 2013ին՝ փրոֆեսորի կոչում: 2008էն կ'աշխատի ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի «Հայ գաղթօջախների եւ Սփիւռքի պատմութեան» բաժնին մէջ, 2016 Դեկտեմբերէն՝ նոյն բաժնի վարիչն է: Հեղինակ է շարք մը հատորներու, որոնց վերջինը՝ *Համազասպ Սրվանձտեանց* (2016):

Գիտական ուսումնասիրութիւնները կ'ընդգրկեն Բաքուի եւ Գանձակ-Ելիզաւետպոլի նահանգներու հայութեան պատմաժողովրդագրական հարցերը, Օսմանեան Կայսրութեան եւ մուսաւաթական Ադրբեջանի կազմակերպած կոտորածները, Բաքուի նահանգի հայութեան հասարակական-քաղաքական, հոգեւոր-մշակութային կեանքը: 2020էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Լիլիկ Ստեփանեան **lilikstep@gmail.com**

Ծնած է 1960ին, Արտաշատ: 1978-81՝ ուսանած է ԵՊՀ բանասիրութեան ֆակուլտէտը, իսկ 1981-84՝ Մոսկուայի Լոմոնոսովի անուան պետհամալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտէտի հեռուստալրագրութեան բաժինը: 2008ին պաշտպանած է թեկնածուական՝ «Հեռուստատեսային ռեպորտաժ. Զարգացման արդի միտումները» նիւթով:

2012էն սկսեալ աւագ դասախօս է Երեւանի Վ. Բրիւսովի անուան պետական համալսարանի լրագրութեան գիտաուսումնական կեդրոնին մէջ: Միաժամանակ դասաւանդած է ԽԱՀՊՄՀի, ԵՊՀի մէջ: Երկար տարիներ պաշտօնավարած է Հայաստանի պետական հեռատեսիլի թէ այլ կայաններու մէջ (Շողակաթ, Սիւիլնէթ, Շանթ), մասնակցած, խմբագրած, յաճախ հեղինակած է հեռատեսիլային ուշագրաւ յայտագրեր, հաղորդաշարեր, ինչպէս՝ «Երեւանը եւ երեւանցիները», «Ստորակէտ», «Թաքնուած Երեւան», «Թաքնուած Հայաստան» եւն.: Ունի մասնագիտական յօդուածներ, հեղինակն է *Հեռուստատեսային ռեպորտաժ* (2009) հատորին:

Անդրանիկ Տագէսեան **adakessian@haigazian.edu.lb**

Ծնած է 1960ին, Պէյրութ: 2011ին պաշտպանած է դոկտորականը՝ "Democracy and integration in multicommunal polities: the Armenians and the Kurds in Lebanon" նիւթով: 1993-2018՝ պատասխանատու քարտուղար, իսկ 2018էն պատասխանատու խմբագիրն է ՀՀՀին: Անդամ է *Հայագիտական հարցեր* (2014), *Ցեղասպանագիտական հանդէս* (2018), *Բազմավէպ* (2019) պարբերականներու խմբագրակազմերուն: 2011էն տնօրէնն է Հայկազեան համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնին: Խմբագրած է գիրքեր, վերջինը՝ *Եգիպտոսի, Սուդանի եւ Եթովպիոյ հայերը/1 գիտաժողովի նիւթեր* (2022), կազմած է գիրքեր, վերջինը՝ *ՀԲԸՄ Հաճընի որբանոցը* (1919-1920) (2021), ունի մենագրութիւններ, վերջինը՝ *Լիբանանի հայօճախը, գիրք Ա., համարկումին խաչուղիները (1920-2005)* (2015):

Գիտական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն ժողովրդավարացումը, մարդկային իրաւանց, ինքնութեան, համարկումի, Սփիւռքի մշակոյթի եւ պահպանման, Միջին Արեւելքի հայօճախներու պատմութեան հարցերը: 1993էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Անի Ֆիշենկճեան **fishenkjianani@hotmail.com**

Ծնած է 1961ին, Հալէպ: 2004ին պաշտպանած է թեկնածուականը ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտին մէջ՝ «Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը 1946-1971թթ.»

նիւթով: 2016էն ՀՀ ԳԱԱ Հրաչեայ Աճառեանի անուան լեզուի ինստիտուտի արեւմտահայերէնի բաժինի գիտաշխատող է, իսկ 2017էն՝ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի Սփիւռքի եւ հայկական գաղթավայրերու պատմութեան բաժինի գիտաշխատող: 2014էն արեւմտահերէնի դասախօս է Սեւանի Վազգէնեան հոգեւոր դպրանոցին: 2010ին եւ 2018ին պարգեւատրուած է ՀՀ Սփիւռքի նախարարութեան կողմէ:

Հեղինակ է շարք մը գիրքերու, վերջինը՝ *Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը (1946-1970 թթ.)* (2018): Մասնակցած է Հայկազեան համալսարանի հայկական Սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոնի Սուրիոյ հայօճախին նուիրուած գիտաժողովին**:** Գիտաուսումնասիրական հետաքրքրութիւնները կ'ընդգրկեն Սուրիոյ հայ համայնքի պատմութիւնը, Քուէյթի հայօճախը: 2017էն կ'աշխատակցի ՀՀՀին:

Աշխատակիցներու Ուշադրութեան

Հայկազեան հայագիտական հանդէս (*ՀՀՀ*) տարեգիրքը լոյս կ'ընծայուի 1970էն իվեր, Հայկազեան համալսարանի հայագիտական ամբիոնին կողմէ: 2022էն սկսեալ՝ վեցամսեայ դրութեամբ:

Ան կ'ընդգրկէ Հայաստանի եւ հայութեան ազգագրական, աշխարհագրական, բանասիրական, գրական, իմաստասիրական, իրաւագիտական, լեզուագիտական, կրօնական, հնագիտական, մշակութային (կրթութեան, թատրոնի, սինեմարուեստի, երաժշտութեան, պարարուեստի, ճարտարապետութեան, կերպարուեստի, մամուլի, եւն.), պատմական, տնտեսագիտական, բնական, քաղաքական եւ ընկերային գիտութիւններու բնոյթի անցեալի եւ ժամանակակից նիւթեր:

*ՀՀՀ*ն կը հրատարակէ հայերէն, անգլերէն, արաբերէն, ֆրանսերէն անտիպ գիտական յօդուածներ, ուսումնասիրութիւններ, հետազօտութիւններ, վերլուծումներ, հրապարակումներ, քննարկումներ, յուշագրութիւններ, գրախօսականներ, հաղորդումներ, վիճակագրական-մատենագիտական ցանկեր, մահագրականներ, հրատարակուած նիւթերու տարակարծիք ուսումնասիրութիւններ: Բացառիկ պարագաներու *ՀՀՀ*ի խմբագրութիւնը իր հայեցողութեամբ նկատի կ'առնէ այլ բնոյթի նիւթեր եւս:

Ներկայացուած յօդուած-ուսումնասիրութիւնները եւ հրապարակումները պարտին ըլլալ նախընտրաբար՝ առաւելագոյնը շուրջ 10,000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), քննարկումները՝ առաւելագոյնը շուրջ 5000 բառ (ծանօթագրութիւններուն հետ), հաղորդումները՝ առաւելագոյնը 4000 բառ, գրախօսականները՝ 2000 բառ, մահագրականները՝ մինչեւ 1000 բառ, բոլորը՝ համակարգիչի ARMENIAN UNICODE ծրագրի շարուածքով:

Աշխատակցութիւնները պարտին ունենալ.- մուտք/ներածական, բուն նիւթը (ենթավերնագրերով մասնատուած) եւ եզրակացութիւն կառոյցը:

Ծանօթագրութիւնները պարտին ըլլալ հետեւեալ կերպ.-

Մամուլի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն», *մամուլի անուն* եւ տպագրութեան վայր, յօդուածի տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Յօդուածներու ժողովածուի պարագային՝ հեղինակ, «յօդուածի անուն»՝ *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Գիրքի պարագային՝ հեղինակ, *գիրքի անուն եւ հատոր*, խմբագիր/կազմող, հրատարակիչ/մատենաշար, տպագրութեան վայր եւ տպարան, տպագրութեան թուական եւ էջաթիւ:

Արխիւային փաստաթուղթերու պարագային՝ փաստաթուղթի հեղինակը, խորագիրը, գտնուած վայրը, թիւը:

Հարցազրոյցներու պարագային՝ մասնակիցներուն անունները, հարցազրոյցին թուականը:

Կայքէջի պարագային՝ լրիւ հասցէն եւ մատչումի թուականը:

Աշխատակցութիւնը պարտի ունենալ նաեւ անգլերէն կամ հայերէն հակիրճ ամփոփում մը, շուրջ 150 բառ: Նիւթին պէտք է կցուած ըլլան նաեւ հեղինակային համառօտ ինքնակենսագրականը (ծննդեան թուական, ծննդավայր, բարձրագոյն ուսում, պաշտպանած գիտական բարձրագոյն աստիճանը եւ թեզին նիւթը, հրատարակած գիրքերու եւ նիւթերու ծիրը, վերջին երկու գիրքերուն անունները (թուական-հրատարակչատուն, վայր), ներկայ պաշտօնը, նկար մը եւ ելեկտրոնային հասցէն առ ի հրատարակութիւն:

Հրատարակելի աշխատակցութիւնները, ըստ կարիքի, կ'ենթարկուին լեզուական խմբագրումի: Այլ փոփոխութիւններ կը համաձայնեցուին հեղինակին հետ: Հայագիր յօդուածները կը հրատարակուին դասական ուղղագրութեամբ: Աշխատակցութիւններուն կրնան կցուիլ նաեւ լաւորակ պատկերներ, փաստաթուղթեր եւ քարտէզներ, որոնց աղբիւրը եւ հրատարակման արտօնութիւնը ապահովելու է հեղինակը:

Աշխատակցութիւնները կը ներկայացնեն հեղինակներուն տեսակէտը:

Աշխատակցութեան, թղթակցութեան, բաժանորդագրութեան, հատորներու ստացումի, հրատարակութիւններու փոխանակման եւ այլ հարցերով հաղորդակցիլ հետեւեալ կերպ.-

Dr. Antranik Dakessian
Haigazian Armenological Review
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb

Իւրաքանչիւր աշխատակցութեան ստացումը անմիջապէս կ'իմացուի հեղինակին, իսկ հրատարակման որոշումը՝ աշխատակցութեան ստացումէն առաւելագոյնը երեք ամիս ետք:

Հատորի մը գրախօսուիլը փափաքողներ, խմբագրութեան սկզբունքային համաձայնութենէն ետք պարտին ՀՀՀի խմբագրութեան յղել այդ գիրքէն 2 օրինակ:

ՀՀՀի մէջ հրատարակուած նիւթերէն կարելի է մէջբերել: Հրատարակուած նիւթին հեղինակը կը ստանայ ՀՀՀի տուեալ հատորէն 1 օրինակ:

ՀՀՀի հատորները մատչելի են հետեւեալ կայքերուն վրայ.-

http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .

http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .

https://www.flib.sci.am/ .

Notes to Contributors

Haigazian Armenological Review (*HAR*) has been published annually since 1970 by the Department of Armenian Studies at Haigazian University. Since 2022 it is being published twice a year.

The *Review* is devoted to studies concerning Armenia and the Armenians. These may include works dealing with archaeology, culture (education, theatre, cinema, music, dance, architecture, plastic arts, mass media, etc.), economics, ethnography, geography, history, linguistics, literature, philology, philosophy, politics, religion, legal, natural, and social sciences, previously unpublished documents, memoirs, investigative articles, reviews, briefings, bibliographical lists and necrologies in Armenian, Arabic, English and French. Other sorts of materials might be published at the discretion of the Editorial Board.

Articles submitted to *HAR* should preferably be not more than 10,000 words (including the footnotes), for investigative articles and briefings not more than 4000 words, for book reviews not more than 2000 words and for obituaries not more than 1000 words. They will be considered on the understanding that they are not being offered for publication elsewhere, and have not been published in any language. It is preferred that manuscripts submitted for consideration are on CD with a hard copy.

Manuscripts should have an introduction, the body (with subtitles) and a conclusion. Footnotes should have the following details.-

In case of newspapers/periodicals: author, "title of the article", *name of the newspaper*, place of publication, date and page number.

In case of an article from a book: author, "title of the article", *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of books: author, *name of the book and volume*, editor, publisher/series, place of publication, date and page number.

In case of archival materials: author of the document, "title of the document", name of the document file, place reserved, number, date.

In case of interviews: names of the interviewer and interviewee, date and place.

In case of websites: the title, the address and date accessed.

Submitted manuscripts must include a150 word summary in Armenian or English and a short biography of the author (birthplace and birth date, higher education, degree, title of the thesis defended, the scope of the books published, the titles of the last two books published – with date and publisher

– current position, and a passport size photo).

The editors reserve the right to edit manuscripts to conform to the *HAR*'s style and format. Authors will be informed before publication in case of more substantial editing. Spelling in articles published in Armenian will be edited to conform to the rules of classical Armenian orthography.

Authors may submit with their contributions printable photographs, tables, figures, and maps on condition that they mention their sources and take responsibility for obtaining permission to publish any such material under copyright.

All opinions expressed (except those in the Editorial) are those of the individual authors and not necessarily of *HAR* or Haigazian University.

Manuscripts, correspondence, subscription queries, and inquiries regarding back issues should be addressed to:

Haigazian Armenological Review
P.O.Box111748, Beirut Lebanon.
Fax: (01)341230/31 or (03)712058
Email: adakessian@haigazian.edu.lb

All submissions received will be acknowledged immediately. Decisions concerning publication will be conveyed to the authors within three months of the date of receipt of the submitted contributions. Manuscripts not accepted for publication will be returned to their authors.

Authors or publishers who wish to have their titles considered for review should send two copies of the said publication to the Editor. One copy will be passed on to the reviewer, while the second will be deposited in the Derian Armenological Library of Haigazian University and become available to the general public.

Quotations can be made from contributions published in *HAR*. The Editorial Board likes to be kept informed in this regard.

Authors are entitled to one copy of the volume in which their contribution is published.

The *Haigazian Armenological Review* volumes are accessible on the following websites:
http://www.haigazian.edu.lb/Publications/Pages/HaigazianArmenologicalReview.aspx .
http://tert.nla.am/mamul/HAIGAZIAN/Table.html .
https://www.flib.sci.am/ .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ/TABLE OF CONTENTS

Հայկազեան հայագիտական հանդէս	Առաքելութիւն եւ տեսլական	2
Haigazian Armenological Review	Mission Statement	
Եուրի Աւետիսեան, Արմենակ Եղիայեան, Յակոբ Կիւլլիւճեան, Յակոբ Չոլաքեան	Հարց-պատասխան՝ Արեւելահայերէն-արեւմտահայերէն մերձեցումի հարցեր	3 8 12 17
Yuri Avetisyan, Armenag Yeghiayan, Hagop Gulludjian, Hagop Cholakian	Interview on Issues Related to Reducing the Gap Between Eastern and Western Armenian Languages	3 8 12 17

ՅՕԴՈՒԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ARTICLES

Պատմութիւն-Հնագիտութիւն History-Archeology

Zaven Messerlian	Letters to Dignitaries and Publications on the Armenian Genocide Issue and their Responses (Part II)	23
Զաւէն Մսըրլեան	Հայոց Ցեղասպանութեան առնչութեամբ նամակներ՝ բարձրաստիճան անձնաւորութեանց եւ հրատարակչատուներու եւ անոնց պատասխանները	
Հայկ Նազարեան	Հայկական հակօդային պաշտպանութեան (ՀՕՊ) զօրքերի կազմաւորումը արցախեան Ա. պատերազմի տարիներին	57
Hayk Nazaryan	The Formation of the Armenian Air Defence Forces During the First Artsakh War	
Vahram L. Shemmassian	The Armenian Protestant Church in Musa Dagh 1919-1939	73
Վահրամ Լ. Շեմմասեան	Մուսա Տաղի Հայ Աւետարանական Եկեղեցին, 1919-1939	
Վարդան Մատթէոսեան	Աւետիք Իսահակեանին ուղղուած երկու նամակներու հետքերով	97
Vartan Matiossian	On the Trail of Two Letters Addressed to Avetik Isahakian	

Արտաշէս Ղազարեան	Հայ աւետարանական համայնքների գործունէութիւնը Խորհրդային Հայաստանում 1920ականներին	115
Artashes Ghazaryan	The Armenian Evangelical Communities in Soviet Armenia in the 1920s	
Սամուէլ Պօղոսեան	Լիբանանի ու Սուրիայի ազատագրումը թուրքերից 1918ին եւ Հայկական լեգէոնը	135
Samvel Poghosyan	The Liberation of Lebanon and Syria from the Ottoman Turks in 1918 and the Armenian Legion	
	Գրականութիւն Literature	
Քնարիկ Աբրահամեան	Գրական եւ տեսաբանական հայեացքների մեկնութեան փորձ. (Թումանեանի նամակների հետքերով)	151
Knarik Abrahamyan	An Essay on Literary and Theoretical Interpretation (Based on Hovhanness Toumanyan's Letters)	
	Լեզու Linguistics	
Արմէն Միքայէլեան	Օտար յատուկ անունների տառադարձութեան սկզբունքները, Մասն Է.– ռուսերէն (համեմատութեամբ սլաւոնական այլ լեզուների)	169
Armen Michaelian	The Principles of Transliterating (Trascribing) Foreign Proper Names into Armenian, Part VII- Russian (Compared to Other Slav(on)ic Languages)	
Աշոտ Մկրեան	Դերբայ, բա՞ռ, թէ՞ բառաձեւ	199
Ashot Mkrian	Participle: Word or Word-Form?	
Լալիկ Խաչատրեան	Դերանուան թուի քերականական կարգի տիպաբանութիւնը հին հայերէնում	211
Lalik Khachatryan	The Typology of the Grammatical Category of a Number of Pronouns in Old Armenian	
	Ընկերաբանութիւն Sociology	
Sevana Topalian,	Self- and Group-Affirmation as Means for Reducing Defensiveness Among the Armenian Community and Facilitating Contact With Out-Group Members	227
Սեւանա Թոփալեան	Լիբանահայերու հաւաքական եւ անհատական ինքնահաստատումը միջոց՝ նուազեցնելու ինքնապաշտպանական վերաբերմունքը եւ դիւրացնելու յարաբերութիւնը այլ խումբերու անդամներու հետ	

Սօնա Ներսիսեան — Հայրենիքի վերստեղծումը Սփիւռքում. Լոս Անճելըսի հայ համայնքի օրինակը — 253
Sona Nersisyan — Reconstructing Fatherland in the Diaspora: The Case of the Los Angeles Armenian Community

Արուեստ եւ Արհեստ Arts and Crafts

Լեւոն Լաճիկեան — Գիւմրի. դասական քաղաքի արդի մշակութային կեանքի ուրուագիծ — 267
Levon Lachikyan — A Brief Overview of Gumri's Current Cultural Life

Զաւէն Կնեազեան — Հին հայ մատենագրութեան «փող» եւ «պատերազմական փող» նուագարանները — 289
Zaven Kniazian — Military Hardware "փող- p'ogh" and "պատերազմական փող- paterazmakan p'ogh" in Ancient Armenian Literature

Arto Tavukciyan — Armenians and Oriental Carpets in the Late Ottoman Empire (1890s–1910s) — 317
Արթօ Թաւուքճեան — Հայերը եւ արեւելեան գորգագործութիւնը Օսմանեան կայսրութեան մէջ, 1890–1910ականներուն

Տնտեսութիւն Economy

Գէորգ Ստեփանեան — Արցախահայերը Բաքուի նաֆթարդիւնաբերութեան հիմնադիրներ եւ բարեգործներ (ԺԹ. դարի երկրորդ կէս-Ի. դարասկիզբ) — 329
Gevorg Stepanian — Artsakh Armenians as Benefactors and Founders of Oil Production in Baku (2nd half of te 19th C.– Beginning of the 20th century)

Նորայր եւ Թաթուլ Մանասէրեան — Հայկական գիւղը. Հայաստանի գիւղատնտեսութիւնը եւ հողային քաղաքականութեան արդի հիմնախնդիրները — 367
Norayr and Tatoul Manaserian — The Armenian Village: Current Challenges of the Armenian Agroeconomy and Land Policy

Բանահիւսութիւն-Ազգագրութիւն Folklore-Ethnography

Շուշանիկ Յովհաննիսեան — Տօնածիսական շրջայց-խաղերի գաղափարական հիմքն ու ընդհանրութիւնները — 389
Shushanik Hovhannisyan — The Ideological Basis and Commonalities of Festive Traveling Games

Յասմիկ Գալստեան — Ջրի ոգիների տիպաբանական եւ գործառութային քննութիւն (ըստ հայ ժողովրդական զրոյցների) — 401
Hasmik Galstyan — An Examination of the Typology and Function of Mermaids (Based on Armenian Folk Tales)

Մերի Աւետիսեան — Հայոց ազգագրութեան թանգարանի Սիւնիքի սպասքի հաւաքածուի տիպաբանական բնութագիր (ակնարկ) — 411
Mary Avetisyan — Typological Characteristics of the Collection of Syunik Utensils of the Ethnographic Museum of Armenia

Յակոբ Չոլաքեան — Սուրիոյ հիւսիսարեւմտեան շրջաններու բնիկ հայոց ուխտավայրերը — 421
Hagop Cholakian — Native Armenian Pilgrim Sites in Northwestern Syria

Եկեղեցի, Կրօնք, Փիլիսոփայութիւն

Ճան Էրզրումլուօղլու — Դրապաշտ գաղափարները Գրիգոր Մսերեանի *Մէտէօրա* հանդէսին մէջ — 439
Can Erzurumluoglu — Positivism in Krikor Mserian's *Meteora* Periodical

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ INVESTIGATIVE ARTICLES

Գայիանէ Յակոբեան — Կրթութեան դերը հայաստանաբնակ սուրիահայերի համարկման գործընթացում — 455
Gayane Hakobyan — The Role of Education in Integrating Syrian Armenians in the Armenian Polity of the Republic of Armenia

Տիրուհի Սիրեկանեան — Միքայէլ վրդ. Չամչեանի *Քերականութիւն հայկազեան լեզուի* գրքի Թիֆլիսի Ներսիսեան հոգեւոր դպրոցի տպագրութիւնը — 467
Tiruhi Sirekanyan — Did Father Mikayel Chamchian's *Grammar of the Armenian Language* Have More than One Printing in Tbilisi in 1826?

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ UNPUBLISHED ARTICLES

Միհրան Մինասեան — Վիճակագրական անտիպ տեղեկագիր Ատափազարի եւ մօտակայ հայաբնակ երեք գիւղերու մասին (1871) — 475
Mihran Minasian — An Unpublished Statistical Report of 1871 on Adapazar and Its Three Adjacent Armenian-Inhabited Villages

Հայկ Աւագեան — Տիգրան Զէյթունցեանի, Արշակ Չօպանեանի, Արմենակ Շահմուրատեանի, Աշոտ Պատմագրեանի եւ Արսէն Երկաթի անտիպ նամակները Ղազարոս Ղազարոսեանին — 491
Haig Avakian — Letters from Dikran Zeytuntsian, Arshag Chobanian, Armenag Sahmuradian, Ashod Badmakerian and Arsen Yergat to Ghazaros Ghazarosian

Marek Jandák — Testimony of the Czech Traveller Karel Hansa on the Condition ofArmenian Refugees in Lebanon in Autumn 1922 — 509
Մարէք Եանտաք — Լիբանահայ գաղթականները 1922ի աշնան. չէխ ճանապարհորդ Քարէլ Հանսայի վկայութիւնները

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ BRIEFINGS

Անդրանիկ Տագէսեան — Հայկական պղնձեղէնի Սարգիս Զամպաքճեանի հաւաքածոն — 525
Antranik Dakessian — Armenian Copper Utensils: The Collection of Sarkis Zambakdjian

Արտակ Ասատրեան — Հայոց ազգագրութեան թանգարանի քարտէզների հաւաքածուն — 551
Artak Asatryan — The Map Collection of the Armenian Ethnographic Museum

Artsvi Bakhchinyan — John Updike (1932-2009) and the Armenians — 569
Արծուի Բախչինեան — Ճոն Ափտայքը (1932–2009) եւ հայերը

Արման Մալոյեան — Հայաստանի Հանրապետութեան Վայոց Ձորի մարզի նորակառոյց եկեղեցիները (2000-21) — 575
Arman Maloyan — The Churches Built in the Vayots Dzor Region between 2000 and 2021

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ BOOK REVIEWS

Անի Ֆիշենկճեան — Սեդա Տ. Օհանեան, *Միջագետք (Իրաք)ի հայ գաղթօճախը վաղնջական ժամանակներէն մինչեւ XX դար* — 593
Ani Fishenkjian — Seda Ohanian, *Mesopotamia (Iraq), the Armenian Colony from the Remote Past to the 20th Century*

ՄԱՀԱԳՐԱԿԱՆՆԵՐ OBITUARIES

Լիլիկ Ստեփանեան	Թանգարանի զինուորը՝ Շահէն Խաչատրեան (1934-2021)	599
Lilig Sdepatyan	The Museum Soldier: Shahen Khatchadrian (1934-2021)	

Աշոտ Աբրահամեան/Ashot Abrahamyan (1954–2021), Ֆրինա Բաբայեան/Frina Babayan (1935–2021), Գրիգոր Բրուտեան/Grigor Brutyan (1955–2021), Վլադիմիր Գրիգորեանց/Vladimir Grigoryants (1946–2021), Մարգարիտա Դարբինեան-Մելիքեան/Margarita Darbinyan-Melikyan (1920–2021), Վլադիմիր Զախարով/Vladimir Zakharov (1946–2021), Ալեքսանդր Թոփչեան/Alexander Topchyan (1939–2021), Ստեփան Թոփչեան/Stepan Topchyan (1937–2021), Վարդան Խաչատրեան/Vardan Khachatryan (1932–2021), Վլադիմիր Կիրակոսեան/Vladimir Kirakosyan (1936-2021), Գէորգի Կուբատեան/Georgi Gubatyan (1946–2021), Ռոլֆ Հոսֆելդ/Rolf Hosfeld (1948–2021), Վարդան Ղազարեան/Vardan Ghazaryan (1958–2021), Արշակ Մադոյեան/Arshak Madoyan (1938--2021), Հայրապետ Մարգարեան/Hayrapet Margaryan (1950-2021), Րոնըլտ Մարշէզ/Ronald Marchaise (1947-2021), Մորենօ Մորանի/Moreno Morani (1947–2021), Լիանա Յովսէփեան/Lian Hovsepyan (1941–2021), Մուշեղ Յովսէփեան/Mushegh Hovsepyan (1961–2021), Ռիմա Շալունց/Rima Shalunts (1937–2021), Ճորճ Պուռնութեան/George Bournoutian (1943–2021), Էդուարդ Պողոսեան/Edward Poghossyan (1954-2020), Հենրիկ Սվազեան/Henrik Sevazyan (1938–2021), Քնարիկ Տէրդաւթեան/Knarik Terdavtyan (1926–2021), Կարպիս Տէրեղիայեան/Garbis Deryeghiayan (1949--2021), Լիւսի Տէրմանուէլեան/Lucy Dermanuelian (1928–2021), Արմէն Տէրստեփանեան/Armen Terstepanyan (1946–2021), Գասպար Տէրտէրեան/Kasbar Derderian (1934–2021) | 605

Համառօտ կենսագրութիւն հատորին աշխատակիցներուն
Brief Biography of the Contributors | 634

Աշխատակիցներու ուշադրութեան | 645

Note to Contributors | 647

Բովանդակութիւն
Table of Contents | 649

Յիշատակարան
Colophon | 655

Յիշատակարան

Հայկազեան Հայագիտական Հանդէսի 2022 տարուան երկոքերէնը կամքագրման ե- հրատարակման միամեայ աշխատանքները ընդհատեցին ականատես ե- ականջալուր եղանէ համաշխարհային ե- հայկական քաղաքական իրատարչո-րի-անները-, աննախընթաց դէպքերու-:

Ընդարձ-, աշխարհը դիմագրա-ես ո-ո-ո-վրանական պարբերապաշտը, Լիբանան շարո-նակես տո-այրիլ ընկերային-տնտեսական և վաղավական ճգնաժամին մէջ: Հայկական աո-ո-մով, Ընդանիք հարցի լո-ձո-մը մնաց անորոշ և հայաշխարհը ցնցո-եցաւ Հայաստանի վրայ ապերնական յարձակո-մներով ու- Հայ ո-ապահովինները- ճակատագրով:

Սակայն, ի հետո-կո գործնապաշտ իրատարչո-րի-անները-, արչանագրո-եցան նաե- Հայրապետ-ին աննախընթաց իրագործո-մներ ու- նո-աճո-մներ ամենապարբեր մարզերու- մէջ: Թ-ափով ակառ Հայկական յեո-ագրերու- ե- մինչե- ժ֊Թ. դարավերջի ամբողջական Հայ մամո-լի մասնագիտական ըո-այնացման աշխատանքները, նշո-եցաւ Հայ Ե-եկեղեցական-ին 175ամեակը: Գիքո-րեան քնագա-աո-ին մէջ Ընդեմ Փաշինո-րեան արժանացաւ քաշխո-րեան նոպէլեան մրցանակի, դէպի փիեզերք արչակո-եցաւ Հայկական աո-աջին արբանեակը, Երե-ան մէջ կայացաւ Աշխարհա-ա փիեզերագիտական համաշխարհային գիտաժողովը:

Հ֊Հ֊ի համագրակալա շնորհակալո-րի-ն կը յայտնէ Հանդէսի 2022 տարուան վոյգ գերերու- աշխատակիցներու-ն, ու- կը մաղթէ որ Հայագիտո-րեան մշակները շարո-նակեն իրենց ապտարո-ը Հայագիտո-րեան:

Հայկազեան հայագիտական հանդէս, հտր. 42/2. տպաքանակ՝ 125
Գին՝ Լիբանան 100,000Լ. ոսկի, արտասահման 30 տոլար
Տպագրութիւն՝ Rouhana Chemaly, Daroun s.a.l.
Haigazian Armenological Review, Vol. 42/2
P.O.Box 111748 Beirut Lebanon
Fax: 01349230/1, 03712058
Email: adakessian@Haigazian.edu.lb